ՀԱԿՈԲ ՄԱՆԱՆԴՅԱՆ

Բ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ИСТОРИИ

ЯКОВ МАНАНДЯН

ТРУДЫ

II

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1978

9(47.925)

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

760

ՀԱԿՈԲ ՄԱՆԱՆԴՅԱՆ

ԵՐԿԵՐ

Բ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1978

ԳՐԱԴԱՐԱՆ
БИБЛИОТЕКА

9(с 43)
Մ 24

Խմբագրական հանձնաժողով

ԲԱՐԲԱՅԱՆ Լ. Հ., ԵՐԵՄՅԱՆ Ա. Տ.,
ՀԱԿՈԲՅԱՆ Վ. Ա., ՍԱՐԳՍՅԱՆ Գ. Խ.

Հատորը հրատարակության պատրաստեց

Լ. Հ. ԲԱՐԲԱՅԱՆԸ

Մ 10601/28—75 703(02)—75

© Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1978.

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ

Ակադեմիկոս Հ. Մանանդյանի երկերի ժողովածուի երկրորդ հատորում տեղադրված են «Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության» Բ հատորի Ա մասը, «Մեսրոպ Մաշտոցը և հայ ժողովրդի պայքարը մշակութային ինքնուրույնության համար», «Հայ գրերի գյուտի տարեթվի հարցի շուրջը», «Արաբական արշավանքները Հայաստանում» և «Ժողովրդական ապստամբություններ Հայաստանում արաբական տիրապետության դեմ» աշխատությունները:

«Քննական տեսություն...» Բ հատորն ընդգրկում է Արշակունիների թագավորության ժամանակաշրջանի պատմությունը սկզբից (66 թ.) մինչև նրա անկումը (428 թ.) և մարզպանության հաստատումը Հայաստանում:

«Մեսրոպ Մաշտոցը և հայ ժողովրդի պայքարը մշակութային ինքնուրույնության համար» աշխատությունը առաջին անգամ հրատարակվել է ռուսերեն՝ Երևանում, 1941 թ., նրա հայերեն ամբողջական թարգմանությունը տպված է Մեսրոպ Մաշտոցին նվիրված հոդվածների ժողովածուում (Երևան, 1962 թ.),

Այս աշխատությունը որոշ մշակմամբ և կրճատումներով մտավ «Քննական տեսություն...» Բ հատորի Ա մասի մեջ և կազմեց աշխատության 13-րդ գլուխը:

«Հայ գրերի գյուտի տարեթվի հարցի շուրջը» հոդվածը Հ. Մանանդյանը գրել է 1951 թ., սակայն նրա մահվան պատճառով այն թերի է մնացել և այդ վիճակում էլ հեղինակի մահից հետո տպագրվել է ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.) 1952 թ., № 7-ում:

«Արաբական արշավանքները Հայաստանում» աշխատությունը առաջին անգամ հրատարակվել է հեղինակի «Մանր հետազոտություններ»-ում, «Ժողովրդական ապստամբությունները Հայաստանում արաբական տիրապետության դեմ» առաջին անգամ հրատարակվել է 1939 թ. «Սասունցի Դավիթ» էպոսի հազարամյակի առթիվ:

ՔՆՆԱԿԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ

Բ ՀԱՏՈՐ Ա ՄԱՍ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՏՐԴԱՏ Ա-Ը ԵՎ ՆՐԱ ՀԱՋՈՐԴՆԵՐԸ

1. Արշակունյաց թագավորության սխալ բնութագրումը:— 2. Արշակունիների թագավորության տևողությունը Հայաստանում:— 3. Տրդատ Ա.— Հռոմի պաշտպանողական միջոցառումները իր արևելյան սահմաններում.— Հռոմում նախապատրաստվող Կովկասյան արշավանքը:— Հինամյա խաղաղությունը Արևելքում:— 5. Վեսպասիանոսի ձեռք առած նախազգուշական միջոցները:— 6. Ալանների 72 թվի արշավանքը.— Հովսեպոս Փլավիոսի վկայության սխալ մեկնությունը:— 7. Ալանների 75 թվի նոր արշավանքը և պատերազմի վտանգը Հռոմի հետ:— 8. Խորենացու վկայությունները ալանների հարձակման մասին Հայաստանի վրա:— 9. Ենթադրություններ Տրդատ Ա-ի պետական վերանորոգչական գործունեության մասին:— 10. Սանատրուկ.— Մծուրք քաղաքի հիմնումը.— նրա կարևոր ստրատեգիական դիրքը.— Սանատրուկի ամրապինդ շիրիմ-հուշարձանը.— Խորենացու վկայությունը Օսրոյեն-Եդեսիայի նվաճման մասին:— 11. Աշխադար:— 12. Տրդատ Ա-ի թագավորության ժառանգական լինելու խնդիրը:— 13. Աշխադար.— հայկական հին ավանդությունը Շիդար թագավորի մասին:

Արշակունիների թագավորությունը Հայաստանում հայ պատմագրության մեջ սովորաբար համարվում է հայ ժողովրդի պատմական անցյալի ամենափառահեղ շրջանը։ Սակայն այս կարծիքը, որ հիմնված է Մովսես Խորենացու Հայոց Պատմության ավանդական տեսակետի վրա, ինչպես ցույց են տալիս նորագույն ուսումնասիրությունները, պարզապես սխալ է։

Սույն «Քննական տեսության» առաջին հատորում մենք արդեն տեսանք, որ Հայաստանն աշխարհակալ մեծ պետություն էր դառնել և քաղաքական իր հզորության ու փառքի գագաթնակետին էր հասել Արտաշեսյանների և, հատկապես, Տիգրան Մեծի ժամանակ։ Հայաստանի կուլտուրական զարգացումը ևս, ինչպես հայտնի է, առավել բարձր աստիճանի վրա էր գտնվում ո՛չ թե Արշակունի հայ թագավորների իշխանության ժամանակ, այլ գրերի գյուտից հետո՝ մարզպանական և հետագա շրջաններում։ Պարզ է, ուրեմն, որ ավանդական վերոհիշյալ կարծիքը միանգամայն անհիմն է։

Արշակունիների թագավորությունը Հայաստանում իբրև ինքնուրույն պետություն գոյություն ունեցավ ավելի քան երեք դար՝ մինչև Հայաստանի բաժանումը Սասանյան Պարսկաստանի և Բյուզանդական կայսրության միջև (66 թվից մինչև 384—387 թթ.): Նա ավելի երկար ապրեց քան Պարթևական Արշակունիների թագավորությունը, որի բարձումը տեղի ունեցավ 227 թվին: Հայաստանի բաժանումից հետո ևս Արշակունիները շարունակեցին թագավորել Հայաստանի պարսկական մասում մոտ կես դար՝ 387 թվից մինչև 428 թիվը: Այսպիսով՝ ընդհանուր տևողությունն այդ թագավորության հաշվում են 362 տարի (66 թվից մինչև 428 թ.):

Տրդատ Ա.-ի մասին, որը հիմնադիրն եղավ Հայաստանի Արշակունիների դինաստիայի՝ մեր ունեցած տեղեկությունները խիստ աղքատիկ են: Ուշագրավ է նախ և առաջ, որ Տրդատ Ա.-ի թագավորության հենց առաջին տարիներում Ներոնը և նրա հաջորդը, Վեսպասիանոսը, միջոցներ էին ձեռք առնել ամրացնելու կայսրության արևելյան սահմանները: Եվ այդ շատ լավ հասկանալի է: Արշակունիների թագավորության հիմնումը Հայաստանում մի զիջում էր Հռոմի կողմից, որ հետևանք էր, ինչպես տեսանք, նրա ռազմական թուլության և պարտության:

Հռոմեա-պարթևական 54—63 թվերի պատերազմից հետո՝ պարթևները, հասնելով իրենց ցանկացած նպատակին՝ Հայաստանը դարձրել էին Պարթև Արշակունիների երկրորդ թագավորություն: Հռոմեական քաղաքագետները գիտակցում էին, իհարկե, որ խնդրի այս լուծումը ժամանակավոր է և անբավարար: Հռոմեական աղբյուրների վկայություններից երևում է, որ դեռևս 64 թվին, երբ Հռոմը խաղաղության բանակցություններ էր վարում պարթևների հետ՝ Ներոնի կառավարությունը ամեն կերպ աշխատել էր ուժեղացնել իր ազդեցությունը և իշխանությունը Հայաստանի սահմանամերձ երկրներում:

Հենց նույն 64 թվին Պոլեմոն Բ-ի Պոնտական թագավորությունը, որի մեջ էր գտնվում նաև ամբողջ Կողքիսը՝ միացվել էր կայսրությանը իբրև հռոմեական նահանգ: Այս միացումը Հռոմի համար խիստ կարևոր էր, որովհետև Պոնտոսի սևծովյան ծովեզրը ուներ ստրատեգիական մեծ նշանակություն՝ իբրև պարեն հայթայթող թիկունք և անհրաժեշտ բազա պատերազմի դեպքում: Միացված նոր նահանգում ուժեղացնում էին հռոմեական կայազորները և անց էին կացնում ռազմական ճանապարհներ:

Ուշագրավ է, որ մոտավորապես նույն այս ժամանակ, 66 թվին, Ներոնը պատերազմական պատրաստություններ էր տեսնում

և ուզում էր ինքը անձամբ ռազմերթի ելնել ալանների դեմ Կովկասում: Այս արշավանքը տեղի չունեցավ, որովհետև 68 թվին, պրետորյանների ապստամբության պատճառով, Ներոնը ստիպված եղավ փախչել Հռոմից և ճանապարհին ինքնասպանություն գործեց:

Նախապատրաստվող արշավանքի նպատակի մասին պատմագիտության մեջ տարբեր կարծիքներ են հայտնված: Գերմանական պատմաբան Վ. Շուրը կարծում է, որ Ներոնը նախապատրաստում էր պատժական արշավանք ապստամբած աղվանների դեմ: Բացի այդ, նա նպատակ էր դրել՝ ա) շրջափակել հյուսիսից Արշակունյաց Հայաստանը, ուր զորեղացել էր պարթևական ազդեցությունը, բ) հաստատել մոտիկ հարաբերություն դաշնակից Հյուրկանիայի հետ և գ) զարգացնել առևտրական հարաբերությունները Բակտրիայի հետ Կասպից ծովի վրայով[1]: Ընդհակառակը, Մոմզենը, որի կարծիքն այժմ տիրող է հանդիսանում, ենթադրում է, որ Ներոնի ծրագրած արշավանքը ձեռնարկված էր ո՛չ թե աղվանների դեմ դեպի Դերբենդի կիրճը, այլ ալանների դեմ Դարյալի կիրճի ուղղությամբ: Ներոնի նպատակն էր, Մոմզենի կարծիքով, ջախջախել սարմատական ալաններին, որոնք ասպատակում էին Հռոմեական կայսրության արևելյան սահմանները և ավերիչ արշավանքներ էին սփռում նաև Հայաստանում և Մեդիայում[2]:

Վերոհիշյալ երկու կարծիքն էլ մանրամասն քննության են ենթարկված վերջերս լույս տեսած ռուսերեն իմ հոդվածում[3]: Այս ուսումնասիրության մեջ ես հանգել էի այն եզրակացության, որ Ներոնի ծրագրած կովկասյան արշավանքը սերտ կապ ունենալու էր Հռոմի սևծովյան քաղաքականության հետ: Սկզբնաղբյուրներում հիշատակված Կասպիական լեռնային նեղուցները կամ կապանը (claustra Caspiarum կամ Caspiae portae), որ նկատի էին առնըված իբրև հավաքատեղի հռոմեական զորքերի համար՝ Պևտինգերյան քարտեզում հիշատակված Caspiae կայարանի մոտ եղած լեռնային նեղուցներն են, որոնք գտնվում էին այժմյան Խոսպիայի և Ախալքալաքի մոտերքում: Այստեղից Ներոնը պետք է առաջնորդեր հռոմեական զորքերը այժմյան Ախալցխայի և Արսաթումանի վրայով և Մեսխո-Կողքիսյան ճանապարհով (Caspia via) դեպի Հյուսիսային Կովկաս, ուր Հռոմի դաշնակից հենիոքների կողքին ապ-

---

[1] Տե՛ս Դր. Վեռներ Շուր, Ներոն կայսեր արևելյան քաղաքականությունը, Թարգմանեց Մեսրոպ Հաբոզյան, Վիեննա, 1930, էջ 96—112:

[2] *Mommsen Th.*, Römische Geschichte, Bd. V, Berlin, 1886, էջ 393—394:

[3] Տե՛ս *Манандян Я. А.*, Цель и направление потготовлявшегося Нероном кавказского похода, „Вопросы истории", 1946, № 7, էջ 66—74:

րում էին ալանները։ Ըստ իմ առաջարկած լուսաբանության՝ Ներոնի վերոհիշյալ արշավանքը սերտ կերպով կապակցված էր հռոմեական իշխանության սևծովյան քաղաքականության հետ և նպատակ ուներ ալանների ասպատակություններից ապահովելու Մեոտիս-Կողքիսյան հին ճանապարհը, որն ուներ առևտրական միջազգային նշանակություն։

Ներոնի մահից հետո՝ Փլավիանների դինաստիայի կայսրերի ժամանակ (69—96) ու նաև մինչև 114 թիվը՝ խաղաղությունն Արևելքում մնաց անխախտ։ Ներոնի խաղաղասեր արևելյան քաղաքականությունը հիմք էր դառել Արշակունիների բարեկամական հարաբերությունների կայսրության հետ և Վաղարշ Ա-ը պաշտոնապես դիմել էր Հռոմի ծերակույտին ու խնդրել, որ Ներոնի հիշատակը հարգվի։ Հարաբերությունները լավ էին Հռոմի հետ նաև Վեսպասիանոսի ժամանակ, և երբ վերջինս 69 թվին ընտրվել էր կայսր՝ Տրդատ Ա-ը, ինչպես կարելի է կռահել Տակիտոսի վկայություններից, տվել էր նրան հպատակության երդում[1]։

Չնայած, սակայն, հռոմեա-պարթևական հարաբերությունների խաղաղ կարգավորման՝ Վեսպասիանոս կայսրը (69—79), իր իշխանության առաջին հենց տարում, անհրաժեշտ համարեց Հռոմի արևելյան սահմաններում ուժեղացնել մնայուն զորքի քանակը։ Լեգեոնների թիվը, որ այստեղ ընդամենը չորս էր՝ նա ավելացրեց և դարձրեց յոթ։ Այդ լեգեոններից երկուսին, որ գտնվում էին Մելիտենեում և Սատաղում, հանձնարարված էր Հայաստանի սահմանների վերահսկողությունը։

Հետաքրքիր է նաև, որ դարձյալ Վեսպասիանոսի կարգադրությամբ Կոմագենի թագավորությունը 72 թվին միացվեց կայսրության իբրև հռոմեական նահանգ։ Նույն այս թվին տեղի ունեցավ և Փոքր Հայքի կցումը Հռոմին։

Ինչպես տեսնում ենք, Վեսպասիանոսն առանձին վստահություն չէ ունեցել դեպի դաշնագիր արևելյան պետությունները և նրա վերոհիշյալ կարգադրությունները պարզապես նկատի են ունեցել կայսրության պաշտպանությունը այդ հարևաններից։

Վաղարշ Ա-ը ո՛չ միայն հանդուրժեց հռոմեական զորքերի ավելացումը Կոմագենում, Կապադովկիայում և Փոքր Հայքում, այլև աշխատեց ամրացնել բարեկամական կապերը կայսրության հետ և իր շնորհավորանքը հայտնեց Հռոմին հրեական ապստամբության ճնշման առթիվ։

[1] *Tacitus*, Hist., II, 81—82.

Տրդատ Ա-ի թագավորության առաջին իսկ տարիներում, մեր թվականության 72 թվին, Հայաստանի խաղաղությունը վրդովվեց, և ալանները, որոնք այժմյան օսերի նախնիներն էին, ասպատակեցին և ավերեցին Ատրպատականն ու Հայաստանը։ Ալանները, ինչպես մատնանշում է Մ. Ռոստովցևը, մեր թվականության առաջին դարում հիմնել էին Հյուսիսային Կովկասում մեծ և հզոր մի թագավորություն[1]։

Ալանների այս 72 թվի արշավանքը, որ մանրամասն նկարագրված է ներքև մեջ բերված Հովսեպոս Փլավիոսի կարևոր մի վկայության մեջ, ինչպես ցույց եմ տվել իմ հոդվածներից մեկում[2], կարոտ է առանձին քննության և լուսաբանության, որովհետև սխալ ու խառնաշփոթ է մեկնված պատմագիտական նախորդ երկերում։

> «Բայց որ ալան ժողովուրդը,—պատմում է Հովսեպոս Փլավիոսը,—որը բնակում է Տանաիսի և Մեոտիդյան ծովի շուրջը, սկյութներ են՝ այդ մենք հայտնել ենք հենց առաջ։ Սակայն նրանք, մտադիր լինելով այդ ժամանակ ներխուժել ավարառության նպատակով Մեդիա և ավելի հեռավոր տեղեր՝ խոսքը մեկ արին հյուրկանների թագավորի հետ։ Սա էր տերը անցքի, որը Աղեքսանդր թագավորը փակել էր երկաթե դռներով։ Արդ՝ երբ վերջինս նրանց տրամադրության տակ դրեց անցքը՝ նրանք հանկարծ միահամուռ հարձակվեցին մեդացիների վրա, ավարի առան բազմամարդ երկիրը, որ լի էր ամեն տեսակ անասուններով. և ոչ ոք չհամարձակվեց նրանց դիմադրել, որովհետև այս երկրի Բակուր թագավորը սարսափած փախել էր դժվարամատույց տեղեր, թողնելով բոլոր մյուսներին բախտի քմահաճույքին։ Հաղիվհազ նա կարողացավ ազատել նրանց ձեռից կնոջը և հարճերին, որ գերի էին ընկած, վճարելով հարյուր տաղանդ։
>
> Ալանները մեծ հեշտությամբ ու առանց կռվի կողոպուտի մատնեցին երկիրը մինչև Հայաստան և հեռացան, վերցնելով իրենց հետ ամբողջ ավարը։ Հայաստանում թագավորում էր Տրդատը, որը, ռազմերթի ելնելով նրանց դեմ, ճակատամարտ տվեց և քիչ էր մնում, որ կռվի ընթացքում նրանց ձեռքը գերի ընկներ կենդանի։ Ալաններից մեկը հեռվից պարան ձգեց նրա

[1] *Տե՛ս* The Cambridge Ancient History, vol. XI, chap. III, *էջ 111* (Cambridge, 1936)։

[2] *Տե՛ս* *Манандян Я. А.*, О местонахождении Caspia via и Caspiae Portae, „Исторические записки“, вып. 25, *էջ 69—70*։

վրա և նրան արդեն բռնելու էր, սակայն Տրդատն իսկույն իր սրով պարանը կտրեց և շտապ փախավ»[1]:

Գերմանական գիտնական Գուտշմիդը ու նաև Խալաթյանցը, որն օգտվել է նրա աշխատությունից, կարծում են, որ ալանները Հյուրկանիայի թագավորի աջակցությամբ ներխուժել էին Մեդիա Դերբենտի կիրճով[2]: Սակայն նրանց այս կարծիքը չէ կարող, իհարկե, ճիշտ լինել, որովհետև Հյուրկանիան գտնվում էր Կասպից ծովի հարավ-արևելյան ափերի մոտ, իսկ Դերբենտը՝ նույն ծովի արևմտակողմում:

Մեջ բերված վկայության խառնաշփոթ և հակասական լինելը նկատել էր Մոմզենը: Նա կարծում է, որ այդ վկայության մեջ նկատի է առնված ո՛չ թե Դերբենտի, այլ հին Ռագայի (այժմյան Ռեյի) մոտ գտնվող լեռնանցքը, որն անվանվել է, ինչպես և Դերբենտի անցքը, Կասպից դուռ[3]:

Շատ պարզ է, որ նաև Մոմզենի այս բացատրությունը դժվար է բավարար համարել, որովհետև ալանները, որոնք ապրում էին Կովկասյան լեռների հյուսիս-արևմտյան ստորոտներում, չէին կարող Մեդիա եկած լինել Ռեյի մոտ գտնվող լեռնանցքով:

Ըստ իս Հովսեպոս Փլավիոսի անհասկանալի վկայությունը կարելի է մեկնել այլ կերպ:

Հայտնի է, որ հունա-հռոմեական աղբյուրներում Hyrcanē կամ Hyrcania (=հայ. Վիրք) անվանվել է երբեմն Իբերիա—Վրաստանը[4]: Միանգամայն պարզ է, ուրեմն, որ Հովսեպոս Փլավիոսի օգտագործած սկզբնաղբյուրը, հաղորդելով ալանների համաձայնության մասին հյուրկանների թագավորի հետ՝ նկատի է ունեցել ո՛չ թե Հյուրկանիայի կամ Վրկանի, այլ Իբերիայի կամ Վիրքի թագավորին: Կարելի է ըստ այսմ նաև ենթադրել, որ ալանները 72 թվին ներխուժել էին Անդրկովկաս և Մեդիա ո՛չ թե Դերբենտի կամ Ռեյի մոտ եղած Կասպյան դռներով, այլ Caspiae-ի մոտ գտնվող լեռնանցքով և Caspia via ճանապարհով, որ վերև մատնացույց էին արված[5]:

---

[1] *Jos. Flav.*, Bel. Jud., VII, 7, 4 (244—246).

[2] Տե՛ս *Gutschmid*, Geschichte Irans, Tübingen, 1888, էջ 133: *Халатьянц*, Армянский Эпос в Истории Армении Моисея Хоренского, 1896, էջ 243—244. Նույնի, Очерк истории Армении, М., 1910, էջ 295:

[3] Տե՛ս *Mommsen*, Römische Geschichte, V Band, Berlin, 1886, էջ 394, ծան. 1:

[4] Տե՛ս *Markwart*, Beiträge zur Geschichte und Sage von Eran, ZDMG, XLIX, 1895, էջ 633 և նույնի, Eranschahr, Berlin, 1901, էջ 101:

[5] Համեմատե՛ նաև Մանանդյան Հ., Քննական տեսություն, հատ. Ա, էջ 315:

Ալանների արշավանքը կրկնվեց, ինչպես վկայում են Սվետոնիուսը և Կասսիուս Դիոնը, նաև 75 թվին[1]: Այս անգամ Պարթևաց թագավոր Վաղարշ Ա-ը և նրա Բակուր ու Տրդատ Ա եղբայրները դիմեցին Վեսպասիանոսին և խնդրեցին օգնություն ուղարկել կայսերական արքայազններից որևէ մեկի առաջնորդությամբ: Սակայն Վեսպասիանոսը մերժեց միջամտել, ուստի և այնուհետև հարաբերությունները այս երկու պետությունների միջև խիստ սրվեցին:

«Այնուամենայնիվ,—պատմում է Սվետոնիուսը,—երբ Պարթևաց Վաղարշ թագավորը աղերսալից խնդրեց ալանների դեմ օգնություն ու նաև մի հրամանատար ևս Վեսպասիանոսի որդիներից՝ նա [Դոմետիանոսը] ամեն կերպ աշխատեց, որ ինքն ուղարկվի, և որովհետև այդ բանը գլուխ չեկավ՝ նա նվերներով ու խոստումներով փորձեց դրդել Արևելքի նաև մյուս թագավորներին, որ նրանք ևս նույնը պահանջեն»[2]:

Ուշագրավ է, որ հենց 75 թվի երկրորդ կեսում, ինչպես վկայում է Մցխեթի մոտ գտնված հունարեն արձանագրությունը, Վեսպասիանոս կայսրը և նրա կառավարչակիցները, Տիտոսը և Դոմետիանոսը, «կայսեր և հռոմայեցիների բարեկամ» Իբերիայի Միհրդատ թագավորի և նրա եղբայր Համազասպի համար կառուցել էին ամրություններ Մցխեթ-Հարմոզիկայում: Իբերիայի մայրաքաղաքի ամրացումը, ինչպես կարծում է Գուտշմիդը, կարևոր էր համարվել բարբարոս ալանների ավերիչ արշավանքների վտանգի պատճառով[3]: Այս ենթադրությունը, որ ընդունելի է համարվում, ինձ թվում է, որ այնքան էլ հաստատուն չէ:

Մենք արդեն մատնանշեցինք, որ ալանների 72 թվի ներխուժումն Անդրկովկաս և Մեդիա տեղի էր ունեցել, ինչպես և 35 թվին[4],

---

[1] Գարագաշյանը, Ասատուրյանը և Սանտալճյանը կարծում են, որ Սվետոնիուսի և Դիոնի վկայությունները վերաբերում են նույն արշավանքին, որը մանրամասն նկարագրված է Հովսեպոս Փլավիոսի մոտ: Ասատուրյանն այդ արշավանքը ենթադրում է 75 թվին, իսկ Սանտալճյանը՝ 73—74 թվերին. տե՛ս Գարագաշյան, Քննական պատմութիւն, մասն Բ, Թիֆլիս, 1895, էջ 241. Ասատուրյան, Քաղաքական վերաբերութիւններ ընդմէջ Հայաստանի և Հռովմայ, Վենետիկ, 1912, էջ 190—191. *Sandalgian*, Histoire documentaire de l'Arménie, Rome, 1917, էջ 537:

[2] Տե՛ս *Suetonius*, Domitianus, 2: Համեմատե՛ նաև Cass. Dio. LXVI, 15, 3 (75 թ.):

[3] *Gutschmid*, Geschichte Irans, էջ 133: Համեմատե՛ նաև Mommsen, Römische Geschichte, V, էջ 396. Ասատուրյան, Քաղաքական վերաբերութիւններ, էջ 191 և ուրիշ.:

[4] Տե՛ս Մանանդյան Հ., Քննական տեսություն, հատ. Ա, էջ 313—315:

Հռոմի դաշնակից իբերների թագավորի հավանությամբ և աջակցությամբ։ Ուստի անհավանական չի լինի ենթադրել, որ վերոհիշյալ ամրությունների կառուցողները կարող էին նկատի ունեցած լինել Հռոմի դաշնակից Իբերիայի պաշտպանությունը, որը դառել էր հյուսիսում հռոմեական ամրացրած շրջան, ո՛չ թե ալանների, այլ Հայաստանի և Պարթևստանի հարձակումներից[1]։ Եվ, իրավի, հենց 75 թվից անմիջապես հետո պարթևներն անչափ գրգռվել էին Հռոմի դեմ, և Արևելքում ստեղծվել էր պատերազմի մոտալուտ վտանգ, որը, սակայն, հնարավոր եղավ հանգցնել։

Հավանորեն, ալանների վերոհիշյալ արշավանքներին և Տրդատ Ա-ին են վերաբերում, ինչպես մատնացույց է արել Գարագաշյանը[2], Խորենացու հաղորդած տեղեկությունները ալանների Հայաստանի վրա հարձակման մասին ու նաև նրանց խնամիության մասին Արտաշես թագավորի հետ, որ հայտնի են եղել Խորենացուն, ինչպես ինքն է հայտնում, վիպասանություններից, որ պատմվում էին Գողթանում։

«Այս ժամանակները,—պատմում է Խորենացին,—ալանները, բոլոր լեռնականների հետ միաբանելով և Վրաց աշխարհի կեսն իրենց կողմը ձգելով՝ մեծ բազմությամբ գալիս սփռվում են մեր աշխարհում։ Արտաշեսն էլ ժողովում է իր զորքերի բազմությունը, և տեղի է ունենում պատերազմ երկու քաջ և աղեղնավոր ժողովուրդների միջև։ Ալանների ցեղը փոքր-ինչ ետ է նահանջում և, մեծ Կուր գետն անցնելով՝ բանակ է դնում գետի ափին հյուսիսային կողմում։ Արտաշեսն էլ գալիս բանակում է գետի հարավային կողմում. գետը բաժանում է երկուսին։

Բայց որովհետև հայոց զորքերն ալանների թագավորի որդուն բռնում և Արտաշեսի մոտ են բերում՝ ալանների թագավորը հաշտություն է խնդրում, խոստանում է տալ Արտաշեսին՝ ինչ որ նա ուզե, և առաջարկում է երդումով մշտական դաշինք կնքել, որպեսզի ալանների երիտասարդներն այնուհետև չասպատակեն Հայոց աշխարհը։ Երբ Արտաշեսը չի համաձայնում պատանուն ետ տալ՝ պատանու քույրը գալիս է գետի ափը մի մեծ բարձրավանդակ տեղ և թարգմանների միջոցով ձայն է տալիս Արտաշեսի բանակը.

«Քեզ եմ ասում, քաջ տղամարդ Արտաշես,
Որ հաղթեցիր ալանների քաջ ցեղին,
Ե՛կ լսի՛ր ալանների գեղաչյա դստերս խոսքերին
Եվ տուր պատանին։
Որովհետև օրենք չէ, որ քինի համար դյուցազունները
Ուրիշ դյուցազուն զարմերի կենդանությունը ջնջեն
Կամ իբրև ծառա ստրուկների կարգում պահեն,
Եվ երկու քաջ ժողովուրդների մեջ
Մշտնջենավոր թշնամություն հաստատեն»։

Արտաշեսն այս իմաստուն խոսքերը լսելով՝ գնաց գետի ափը և, տեսնելով գեղեցիկ կույսին ու լսելով նրանից իմաստուն խոսքեր՝ նրան ցանկացավ։ Նա կանչում է իր դայակ Սմբատին և բաց է անում, որ իր սրտի փափագն է՝ կին առնել ալանների արքայազն օրիորդին, դաշինք և ուխտ դնել քաջերի ազգի հետ և պատանուն խաղաղությամբ արձակել։ Սմբատը հավանություն է տալիս և մարդ է ուղարկում ալանների թագավորի մոտ, որ ալանների արքայազն օրիորդ Սաթենիկին կնության տա Արտաշեսին։ Ալանների թագավորն ասում է.

«Եվ ո՞րտեղից քաջ Արտաշեսը պիտի տա
Հազար հազարներ և բյուր բյուրեր
Քաջերի սերունդ այս կույսի՝
Ալանների արքայազն օրիորդի համար»։

Վիպասաններն երգելիս այս տեղն առասպելաբանում են ասելով.

«Հեծավ արի Արտաշես արքան գեղեցիկ սև ձին,
Եվ հանելով ոսկեօղ շիկափոկ պարանը,
Եվ անցնելով գետն իբրև սրաթև արծիվ,
Եվ նետելով ոսկեօղ շիկափոկ պարանը,
Զգեց մեջքը ալանաց օրիորդի,
Եվ շատ ցավեցրեց փափուկ օրիորդի մեջքը,
Արագաբար իր բանակը հասցնելով»[1]։

Մեջ բերված այս վիպական բնույթ ունեցող քաղվածքում կարող է պատմական հիշողություն լինել ո՛չ միայն Տրդատ Ա-ի և ալանների պատերազմը Կուր գետի ափին, այլև վիպասանքից առնված տեղեկությունն այն մասին, որ ալաններն արշավել էին Հայաստան՝ լեռնականների և Վրաստանի կես մասի հետ միաբա-

---

[1] Տե՛ս *Амиранашвили А.*, Иберия и римская экспансия в Азии, „Вестник древней истории“, 1938, № 4(5), էջ 171—172։

[2] Տե՛ս «Քննական պատմություն Հայոց», Բ, էջ 242—244։

[1] Տե՛ս Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, թարգմ. Ս. Մալխասյանցի, Երևան, 1940, էջ 118—119 (Բ, 50)։

ԳՐԱԴԱՐԱՆ БИБЛИОТЕКА

նած: Այս փաստական տեղեկությունը կարևոր է ու հետաքրքիր, որովհետև, հիմնվելով Հովսեփոս Փլավիոսի վերոհիշյալ վկայության վրա, մենք վերև հավանական էինք համարել, որ ալանների ներխուժումը Հայաստան և Մեդիա տեղի էր ունեցել իբերների թագավորի (հավանորեն, Փարսման Ա-ի որդի Միհրդատի) գործակցությամբ:

Հայ պատմագրական մի քանի երկերում ենթադրում են, որ Տրդատ Ա-ի ժամանակ որոշ պետական բարենորոգումներ էին կատարվել և հիմնադրվել կամ կարգավորվել էին հայ նախարարությունները[1]: Այս ենթադրության միակ հիմքը Խորենացու վկայություններն են Վաղարշակ թագավորի պետական վերանորոգչական գործունեության մասին, որ մանրամասն մեջ են բերված նրա Պատմության երկրորդ գրքի Զ և Է գլուխներում: Վաղարշակի այդ գործունեությունը վերագրվել է Տրդատ Ա-ին, որովհետև ենթադրվել է, որ Խորենացու Վաղարշակը, որ Արշակունիների դինաստիայի հիմնադիրն էր, իրականում Տրդատ Ա-ն է[2]:

Իհարկե, հնարավոր և հավանական է, որ Տրդատ Ա-ը կարող էր բարեփոխած լինել իր թագավորության ներքին կարգերը, սակայն այդ մասին մենք ստույգ և արժանահավատ տեղեկություններ չունենք:

Որքան ժամանակ է թագավորել Տրդատ Ա-ը ալանների 72--75 թվերի արշավանքներից հետո՝ այդ ևս մեզ հայտնի չէ: Միանգամայն հավանական կարելի է համարել, որ նրան հաջորդած պիտի լիներ (75-ի և 110 թթ. միջև) Սանատրուկ թագավորը, որի թագավորության ժամանակաշրջանը պատմագետների մեծագույն մասը թյուրիմացաբար տարել է երկրորդ դարի վերջերը:

Որ Սանատրուկը, իրապես, Հայաստանի թագավոր է եղել վերոհիշյալ ժամանակամիջոցում՝ այդ մատնացույց էր արել իր ուշագրավ հոդվածում[3] ու նաև իր Դիոնի հրատարակության մեջ

[1] Տե՛ս Լեո, Հայոց պատմութիւն, Ա, Թիֆլիս, 1917, էջ 470—471. Խ. Սամվելյան և այլք, Հայ ժողովրդի պատմություն, Երևան, 1943, էջ 74 և ուրիշ.:

[2] Տե՛ս Խ. Սամվելյան, Հին հայ իրավունքի պատմություն, հատոր Ա, Երևան, 1939, էջ 181, 264, 328. Կ. Բասմաջյան, Իսկական պատմութիւն Հայոց, Պոլիս, 1914, էջ 100 և ուրիշ.:

[3] Տե՛ս *U. Boissevain*, Ein verschobenes Fragment des Casstus Dio, Hermes, Bd. 25, 1890, էջ 329—339: Նույն այս խնդիրը մանրամասն լուսաբանված է Մարկվարտի ուսումնասիրության մեջ՝ Untersuchungen zur Geschichte von Eran, II, Leipzig, 1905 (տե՛ս նաև Philologus, Supplementband X, Heft 1): Համեմատե՛ «Հանդէս Ամսօրեայ», 1906, փետրվար—«էջ մը հայ Արշակունեաց հնագոյն պատմութենէն», էջ 33—34:

(հատ. Գ, էջ 218/19 ծան.) Boissevain-ը, որն ապացուցել էր, որ Կասսիուս Դիոնի հատվածը, որի մեջ հիշատակված են Սանատրուկը և նրա որդին, Վաղարշը, ո՛չ թե Սեպտիմոս Սեվերոս կայսեր (193—211) ժամանակին է վերաբերում, ինչպես պատմագիտության մեջ ենթադրվում էր, այլ Տրայանոս կայսեր (98—117) վերջին տարիներին և, հավանորեն, 116 թվականին:

Սանատրուկ թագավորի մասին մի քանի հետաքրքիր ու կարևոր տեղեկություններ հաղորդում են հունա-հռոմեական և հին հայկական աղբյուրները:

Ուշագրավ է, նախ և առաջ, Սանատրուկի հիշատակությունը Սուիդասի Բառգրքում, որ քաղված է ակներևաբար Արրիանի Պարթևականք գրքից:

«Հայոց թագավոր Սանատրուկը,—վկայում է Արրիանը,— ուներ միջակ հասակ, բայց հակում ուներ դեպի ամեն մի մեծ բան և, մանավանդ, դեպի պատերազմական գործերը: Նա հավատարիմ պահապան էր արդարադատության և իր կենցաղավարության մեջ զուսպ էր, նաև չափավոր ու ողջամիտ էր, ինչպես լավագույնները հույների և հռոմայեցիների մեջ»[1]:

Նույն այս Սանատրուկին է վերաբերում Կասսիուս Դիոնի վերոհիշյալ հատվածը, որի ժամանակը, ինչպես վերև ասացինք, լուսաբանել ու որոշել է Boissevain-ը:

«Երբ Վաղարշը, Սանատրուկի որդին,—պատմում է Դիոնը,—պատրաստվել էր ճակատամարտ տալու Սեվերոսին և կռիվն սկսելուց առաջ խնդրել էր և կնքել էր հաշտություն՝ [Տրայանոսը] ուղարկեց նրա մոտ պատգամավորներ և խաղաղության հաստատման համար շնորհեց նրան Հայաստանի մի մասը»[2]:

Այս վկայությունից, որ քննելու ենք ներքև Վաղարշի մասին խոսելիս, մենք իմանում ենք, որ Հայաստանում երկրորդ դարի առաջին կեսում թագավորել էր Սանատրուկի որդին՝ Վաղարշը:

Դիոնի վկայության վերոհիշյալ նոր լուսաբանության շնորհիվ ճշտվում են ժամանակագրական տեսակետից և իմաստ են ստանում Սանատրուկի մասին այն աղոտ հիշողությունները, որ պահպանված են հայ մատենագրական երկերում:

Բացառիկ կարևորություն ունի Սանատրուկ թագավորի մասին Փավստոսի վկայությունը, որը նրան վերագրում է Մծուրն քաղաքի

[1] Տե՛ս *Suidas*, ed. Bernhardy, II, col. 668.

[2] *Cass. Dio*, LXXV, 9, 6.

շինությունը։ Փավստոսը պատմում է, որ Հայր մարդպետը, սուրբ տեղերը, Աշտիշատում, այցելելուց հետո, գնում է այնտեղից Եփրատ-Արածանի գետի մոտերքը, ուր միախառնվում էր սրա հետ մի այլ գետ և այնտեղ սպանվում է մի ավերված քաղաքավայրի մոտ, որն անվանվում էր Մծուրք։

«Այնուհետև Հայր մարդպետը,—վկայում է Փավստոսը,—գնաց սուրբ տեղերից և իջավ Եփրատ գետի հոսանաց ափը, խիտ անտառի հովիտները երկու գետերի միախառնման տեղում՝ եղեգնուտ տեղերի և վայրի ծառերի խիտ մասում, ուր հին ժամանակներում կառուցված էր մի ինչ-որ քաղաք, որը շինել էր Սանատրուկ թագավորը. և այդ տեղի անունն էր Մծուրք»։

[«Ապա գնայր մարդպետն Հայր ի սուրբ տեղեացն, և էջ յափն գետոյն հոսանացն Եփրատու, հովիտսն թանձրախուռն անտառին, ի գետախառնումսն երկուց գետոցն, ի թաւութ խարձիցն մամխեացն, որ ի տեղւոջն ի հնոցն իմն շինած քաղաք՝ զոր շինեալ Սանատրուկ արքայի, որում անուն տեղւոյն Մծուրք կոչի»][1]։

Սանատրուկի հիմնած այս Մծուրք քաղաքը, ինչպես երևում է Փավստոսի վկայությունից, հիմնահատակ ավերված է եղել դեռևս հինգերորդ դարից առաջ։ Ուշագրավ է, որ Մովսես Խորենացին, որին հայտնի չէ եղել Մծուրք քաղաքի գոյությունը Հայաստանում, Սանատրուկ թագավորին վերագրել է ո՛չ թե այդ քաղաքի, այլ Մծբին քաղաքի շինությունը[2]։ Խորենացու այս սխալը հեշտությամբ բացատրելի է։ Նրա օգտագործած աղբյուրի մեջ, հավանորեն, տեղեկություն է հաղորդված եղել Սանատրուկի հիմնած Մծուրք կամ Մծուրն քաղաքի մասին, իսկ Խորենացին, շփոթելով իրեն անհայտ Մծուրնը Հյուսիսային Միջագետքի Մծուին կամ Մծբին քաղաքի հետ՝ թյուրիմացաբար համարել է Սանատրուկին շինող ո՛չ թե Մծուրնի, այլ Մծբինի։

Սանատրուկի հիմնած Մծուրք քաղաքի մասին կա կարևոր մի վկայություն նաև «Մարաբայ փիլիսոփայ Մծուրնացւոյ» գրքից քաղված Սեբեոսի Պատմության առաջին գլխում։ Այդ վկայությունից մեզ հայտնի է, որ Մծուրն քաղաքում (Սեբեոսի տպագիր բնագիրն ունի «ի Մծբին քաղաքի», որ պետք է ուղղել և կարդալ «ի

[1] Տե՛ս «Փաւստոսի Բիւզանդացւոյ, Պատմութիւն Հայոց», Վենետիկ, 1832, էջ 118 (IV, 14)։

[2] Տե՛ս «Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց», Տփղիս, 1913, II, 36, էջ 160։

Մծուրն քաղաքի»), Սանատրուկ թագավորի ապարանքի ավերակների մեջ, արքայական պալատի դռան դիմաց, գտել էին քարի վրա դրոշմված հունարեն մի արձանագրություն, որ պարունակում էր ժամանակագրական տեղեկություններ Արշակունի, հայ և պարթև, առաջին հինգ թագավորների մասին[1]։ Սեբեոսի Պատմության այս վկայությունը հիմք է տալիս ենթադրելու, որ Մծուրքը եղել է Սանատրուկ թագավորի աթոռանիստ քաղաքը։

Մծուրք քաղաքի տեղը, ինչպես մատնանշել է Մարկվարտը, պետք է ենթադրել Արածանի և Մեղ (այժմ Կարասու) գետերի միախառնման մոտ, Մշո դաշտի արևմտակողմում[2]։ Այս նոր քաղաքը, ասում է Մարկվարտը, շատ կարևոր դիրք ուներ ռազմագիտական տեսակետից։ Նա իշխում էր հաղորդակցության ճանապարհների վրա և կապված էր Բալուի ու Խարբերդի վրայով Մելիտենեի հետ, Խնուսի վրայով՝ Հասանղալայի և Էրզրումի հետ, Տավրոսյան լեռների ու Բասմանսուի հովիտների վրայով՝ Տիգրանակերտի հետ և Մանազկերտի ու Բագավանի վրայով՝ Արտաշատի հետ[3]։ Մծուրք քաղաքի մոտով էր անցնում, ինչպես մանրամասն ցույց է տրված իմ «Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները» աշխատության մեջ[4], Արտաշատից Տիգրանակերտ տանող առևտրական և ռազմական մեծ ճանապարհը։

Փավստոսը իր Պատմության մեջ տալիս է տեղեկություն Սանատրուկ թագավորի գերեզմանի մասին, որը գտնվում էր Դարանաղի գավառի Անի բերդում։ Երբ 359 թվին Պարսից թագավոր Շապուհի զորքերը առել էին Անի բերդը՝ նրանք կողոպտել էին այստեղ թագավորական գանձերը և մինչև իսկ գերեզմաններից հանել էին Արշակունի հայ թագավորների ոսկորները, որ գերի տանեն Պարսկաստան։ Բայց նրանք, ինչպես վկայում է Փավստոսը, չէին կարողացել քանդել Սանատրուկ թագավորի շիրիմը, որը հնկայաշեն էր, ամրապինդ և գեղեցիկ շինված։

«Շատ բերդեր,—պատմում է Փավստոսը,—նրանք թողնում ու անցնում էին, որովհետև այդ ամրությունների դեմ չէին կարող մարտնչել։ Բայց նրանց ձեռքն ընկավ միայն Անին Դարանաղի գավառում, որովհետև չարագործ Մերուժանը հնարամը-

[1] Տե՛ս «Սեբէոսի եպիսկոպոսի Պատմութիւն», հրատ. Ս. Մալխասյանցի, Երևան, 1939, էջ 1—2 (գլ. Ա)։

[2] Տե՛ս «Էջ մը հայ Արշակունեաց հնագոյն պատմութենէն», «Հանդ. Ամս.», 1906, փետր., էջ 43։

[3] Նույնը, էջ 43։

[4] Երևան, 1936, էջ 17—114։

տությամբ զարանի մեջ էր ձգել ամուր այդ բերդը։ Ապա նրանք վեր ելան, քանդեցին նրա պարիսպը և բերդից իջուցին անթիվ գանձեր։ Եվ նրանք բաց արին հայ առաջին թագավորների, քաջ Արշակունիների, գերեզմանները և թագավորների ոսկորները տարան գերի։ Բայց միայն Սանատրուկ արքայի շիրիմի գերեզմանը նրանք չէին կարողացել բանալ, որովհետև խիստ հրակայաշեն, հաստապինդ ու ճարտարագործ կառուցվածք էր»։

[«Եւ զբազում բերդօք զանց առնէին, զի ոչ կարէին մարտնչել ընդ ամուրսն, բայց միայն մատնեցաւ ի ձեռս նոցա ամուր բերդն Անի ի Դարանաղեաց գաւառին անդ. զի չարագործն Մերուժանն հնարաւորութեամբ մերենայէր ամուր բերդին այնմիկ։ Ելանէին ի վեր, և կործանէին զպարիսպ նորա և իջուցանէին անթիւ գանձս ի բերդէն։ Եւ բանային զգերեզմանս զառաջին թագաւորացն Հայոց զարանց քաջաց զԱրշակունեաց, և խաղացուցանէին ի գերութիւն զոսկերս թագաւորացըն։ Բայց միայն զգերեզման շիրմին Սանատրկոյ արքային ոչ կարացին բանալ վասն անհեդեդ սկայագործ հաստաշինած ճարտարագործ արարածոցն»][1]։

Բացի Սանատրուկի մասին վերև բերված տեղեկություններից, որ պատմական են ու արժանահավատ, նրա մասին հայկական աղբյուրները տալիս են մի քանի նաև այլ վկայություններ, որ համարվում են վիճելի ու անվստահելի։

Օրինակ, «Վկայաբանութիւն սրբոյն Թադէոսի առաքելոյն և Սանդխտոյ կուսին» անվավեր, բայց բավական հին, գրվածքի մեջ հիշատակված է նույն այս Սանատրուկ թագավորը, իբրև սպանող իր դուստր Սանդուխտի և Թադեոս առաքյալի[2]։ Առասպելային այս հին ավանդությունը հետաքրքիր է այն տեսակետից, որ այստեղ ևս, ինչպես և հունա-հռոմեական աղբյուրներում, Սանատրուկ թագավորի ժամանակը դրվում է մեր թվականության առաջին դարի երկրորդ կեսում։

Խիստ հետաքրքրական է, որ Մովսես Խորենացին և նրան հետևող հայ պատմագետները մատնացույց են անում, որ Սանատրուկ թագավորը նվաճել և միացրել էր Հայաստանին Օսրոյեն-Եդեսիայի թագավորությունը[3]։ Գուտշմիդը իր «Ուսումնասիրութիւնք Օսրոյենայ թագաւորութեան պատմութեան» աշխատության մեջ, հենվելով Խորենացու վկայության վրա և նկատի առնելով, որ Եդեսիայի թագավորների շարքի մեջ 18 տարվա ընդհատություն կա, այն է՝ 91 թվից մինչև 109 թիվը՝ ենթադրում է, որ հենց այս թվերին (91—109) կարող էր եղած լինել Եդեսիայի թագավոր Խորենացու հիշատակած Սանատրուկը, որին նա, անծանոթ լինելով Boissevain-*ի և Մարկվարտի ժամանակագրական դիտողություններին, թյուրիմացաբար թագավոր է կարծում ո՛չ թե Հայաստանի, այլ Ադիաբենի[1]։*

Այս խնդիրը դեռ պարզ չէ և կարոտ է հատուկ քննության։ Սակայն, եթե Խորենացու վերոհիշյալ վկայությունը հնարավոր լինի հաստատել փաստական նոր տվյալների օգնությամբ, այդ դեպքում հասկանալի կլինի, թե ինչո՛ւ Արրիանը Սանատրուկին մեծ է համարում պատերազմական գործերի մեջ։

Որքան ժամանակ էր թագավորել Սանատրուկը և ե՛րբ էր նա վախճանվել՝ այդ հաստատապես մեզ հայտնի չէ։ Աստուրյանը, որը համաձայն Գուտշմիդի ընդունում է Սանատրուկի Եդեսիայի թագավոր լինելը մինչև 109 թիվը, կարծում է, որ նա կարող էր վախճանված լինել հենց այդ թվականին, և նրա անմիջական հաջորդն է համարում Աշխադարին, որի թագավորության սկիզբը ենթադրում է 110 թվին[2]։

Հ. Գաթրճյանն իր «Տիեզերական պատմության» մեջ կարծում է, որ այս Աշխադարը Տրդատ Ա-ի որդին էր, իսկ Գարագաշյանը, հիմնվելով Խորենացու վկայությունների վրա (II, 61), Աշխադարին համարում է Տրդատ Ա-ի (Արտաշես Բ-ի) թոռը և ենթադրում է, որ նա թագավորում էր Հայաստանում իր հոր՝ Արտավազդից հետո[3]։

Այս կահումները, որ հարկավ սխալ են, բացատրվում են նրանով, որ Գաթրճյանն ու Գարագաշյանը կարծել են, որ Տրդատ Ա-ի մահից հետո հայկական թագավորությունը ժառանգաբար անցել էր նրա որդիներին։ Սակայն, իրապես, ամեն անգամ, երբ թագավորական գահը թափուր էր լինում, Պարթև Արշակունիների թագավորական տոհմից ներկայացվելու էր Հռոմեական կայսրության ի հաստատություն հարմար ու ընդունելի թեկնածու։

Ինձ թվում է, այդ է հենց պատճառը, որ Տրդատ Ա-ից հետո մինչև գրեթե երրորդ դարը Հայաստանում թագավորող Արշակունիները, լինելով խորթ ու օտար հայ ժողովրդին՝ չեն վայելել ժողո-

[1] Տե՛ս Փավստոս, IV, 24, էջ 146 (1889)։

[2] Տե՛ս «Սոփերք Հայկականք», Ը, Վենետիկ, 1853։

[3] Խորենացի, II, 35։

[1] Տե՛ս *Gutschmid A.*, Untersuchungen über die Geschichte des Königreichs Osroëne, St.-Pétersbourg, 1887, էջ 27—28 և 49։

[2] Տե՛ս Աստուրյան, *Քաղաքական վերաբերութիւններ*, էջ 198—200։

[3] Տե՛ս Հ. Գաթրճյան, *Տիեզերական պատմութիւն*, հատ. Բ, Վիեննա, 1852, էջ 152. Ա. Մ. Գարագաշյան, *Քննական պատմութիւն*, Թիֆլիս, 1895, էջ 253։

վրդականություն և նյութ չեն ծառայել վիպասանքի և վիպական երգ ու զրույցի:

Աշխադարը (110—113), ինչպես հայտնի է մեզ այժմ հունա-հռոմեական աղբյուրներից, որդին էր ո՛չ թե Տրդատ Ա.-ի կամ Արտավազդի, այլ պարթևական Բակուր Բ թագավորի (77—110): Նա ստացել էր Հայաստանի գահը Հռոմի համաձայնությամբ, սակայն նրա թագավորությունը երկար չտևեց:

Բակուր Բ-ի հաջորդը, Խոսրովը (110—130?), գտնելով Աշխադարին անհամապատասխան նրա ստանձնած բարձր պաշտոնին՝ ինքնագլուխ, առանց Տրայանոս կայսեր համաձայնության, նրան գահընկեց արեց և Հայաստանի թագավոր կարգեց Բակուր Բ-ի մյուս որդուն, Պարթամասիրին (113 թ.): Այս անցքերի մասին հունա-հռոմեական աղբյուրներում պահպանվել են միայն մի քանի պատահական և կցկտուր տեղեկություններ[1]*:*

Խոսրով թագավորի վերոհիշյալ որոշման բուն դրդապատճառները հայտնի չեն: Տրայանոսի հետ ունեցած բանակցությունների ժամանակ նա հայտնել էր նրան, որ Աշխադարից գոհ չէին կարող լինել ո՛չ միայն պարթևները, այլև հռոմայեցիները: Ըստ երևույթին, Աշխադարը անընդունակ է եղել կառավարելու իր թագավորությունը, ինչպես այդ մասին ուշագրավ մի հիշողություն պահպանվել է հայ մատենագրության մեջ: Ն. Անդրիկյանը մատնանշել է[2]*, որ, հավանորեն, հենց այս Աշխադար թագավորին է վերաբերում հայկական հին ավանդությունը Արտավազդի որդու՝ Շիդար թագավորի մասին, որին հայրը չէր տվել Հայոց թագավորությունը, որովհետև նա խելագար էր*[3]*:*

---

[1] *Տե՛ս Cass. Dio,* Fragm. LXVIII, *16 և 17, նաև Արրիանի Պարթևականք գրքից քաղվածքներ Սուիդասի Բառգրքում* (ἀμφίλογον *և* γνῶσις *բառերի տակ. տե՛ս նույնը C. Müller,* Fragm. hist. graec., III, 589. 16):

[2] *«Բազմավէպ», 1906, էջ 56—59:*

[3] *Այս ավանդությունը մանրամասն մեջ է բերված Հայսմավուրքում, հիշատակված է նաև Ոսկեփորիկում և Գրիգոր Դարանաղցու ժամանակագրության մեջ (Երուսաղեմ, 1915, էջ 208):*

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՏՐԱՅԱՆՈՍԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԵՎ ՊԱՐԹԵՎԱԿԱՆ ԱՐՇԱՎԱՆՔՆԵՐԸ ԵՎ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՌՈՄԱՅԵՑԻՆԵՐԻ ԴԵՄ

1. Պարթամասիր.— Հռոմեա-պարթևական հարաբերությունների սրումը.— Տրայանոսի նոր քաղաքականությունը:— 2. Խոսրովի և Պարթամասիրի բանակցությունները Տրայանոսի հետ:— 3. Տրայանոսի 114 թվի արշավանքը.— Տրայանոսը Սատաղում.—Տրայանոսի և Պարթամասիրի տեսակցությունը Էլեգեյայում.— Պարթամասիրի սպանությունը:— 4. Հայաստանի նվաճման առթիվ Տրայանոսի դրամները և հաղթական կոթողը:— 5. Կորդուքի և մարդերի երկրի գրավումը.— Հռոմեական Մեսոպոտամիա և Ասիրիա նոր նահանգները.— Բաբելոնիայի և Մեսենեի գրավումը և Տիզբոնի առումը:— 6. Ապստամբությունները Տրայանոսի թիկունքում.— ապստամբությունների ճնշումը:— 7. Տրայանոսի վերադարձը Ասորիք և մահը:— 8. Վաղարշի հաշտությունը հռոմայեցիների հետ.— Դիոնի հատվածի հավանական մեկնությունը:

Աշխադարի գահընկեցությունը և Պարթամասիրի նշանակումը Հայաստանի թագավոր, որ խախտումն էր 64—66 թթ. հռոմեա-պարթևական համաձայնության, անշուշտ, դրգիչ մի ոտնձգություն էր և ոտնահարում Հռոմեական կայսրության իրավունքների, որ չէր կարող անպատասխան մնալ:

Պետք է ասել, որ Արշակունիների և Հռոմի քաղաքական հարաբերությունները սկսել էին սրվել դեռևս Բակուր Բ-ի ժամանակ: Պարթևների դեմ Տրայանոսը խիստ գրգռված էր, որովհետև Բակուր Բ-ը հաստատել էր բարեկամական կապեր Հռոմի թշնամի դակերի Դեկեբալ թագավորի հետ[1]*: Իսկ այժմ, Խոսրովի ինքնագլուխ միջամտությունը Հայաստանի գործերին, որ արդեն դանակը ոսկրին*

---

[1] *Տե՛ս Plinii Secundi,* Epistolae, *74. Համեմատե՛* Плиний Младший, Переписка с Траяном, „Вестник древней истории", 1946, № 2, *էջ 247, տե՛ս նաև Սուիդասի Բառգրքում Արրիանի Պարթևականքից քաղված* ἐπίκλημα *բառը:*

էր հասցնում, առիթ տվեց Տրայանոսին տակնուվրա անելու ամբողջ Արևելքը:

Ներոնի արևելյան քաղաքականությունը և Հայաստանում քաղաքական դրության կարգավորումն ի նպաստ Պարթև Արշակունիների, անշուշտ, ժամանակավոր միայն լուծումն էր հայկական խնդրի, որ Հռոմը չէր կարող հարկավ բավարար համարել:

Տրայանոս կայսրը, որի ժամանակ Հռոմեական կայսրությունը խիստ ուժեղացել էր, հրաժարվեց իր նախորդների քաղաքականությունից և ուզեց, Կրասսոսի և Անտոնիոսի նման, նվաճել ու միացնել Հռոմին թե Հայաստանը և թե Պարթևստանը: Հռոմի ագրեսիվ քաղաքականությունը, ինչպես հայտնի է, արդեն որոշ հաջողություններ էր ունեցել Արևմուտքում և 107 թվին, երկու արյունահեղ և հաղթական կռիվներից հետո, միացվել էր կայսրությանը Դանուբի հյուսիսակողմում գտնվող դակերի երկիրը:

Հոկտեմբերի 27-ին, 113 թվին[1], Տրայանոս կայսրը մեկնեց Հռոմից և ուղղվեց դեպի արևելք, մտադիր լինելով նվաճել ամբողջ Առաջավոր Ասիան:

Երբ Տրայանոսն Աթենք էր հասել՝ նրան ներկայացան Խոսրովի դեսպանները, խնդրեցին հաշտություն և, հայտնելով որ Աշխադարը չէր կարող հարմար լինել ո՛չ պարթևների և ո՛չ էլ հռոմայեցիների համար՝ առաջարկեցին, որ հայկական գահը տրվի նրա եղբորը՝ Պարթամասիրին: Կայսրը մերժեց նրանց առաջարկը և չընդունեց նաև Խոսրովի ուղարկած նվերները: Աթենքից Տրայանոսը Փոքր Ասիայի և Կիլիկիայի վրայով եկավ Ասորիք և ձմեռն անցկացրեց Անտիոք քաղաքում:

Այս բոլոր անցքերը և Տրայանոսի գալը Ասորիք մանրամասն նկարագրված են Կասսիուս Դիոնի հետևյալ վկայության մեջ.

«Այնուհետև,—պատմում է Դիոնը,—նա [Տրայանոսը] ռազմերթի ելավ հայերի և պարթևների դեմ այն պատրվակով, որ Հայոց թագավորն իր թագը իրենից չէր ստացել, այլ Պարթևաց թագավորից. բայց, իրապես, նա տոգորված էր խիստ փառամոլությամբ: Իր արշավանքի ժամանակ պարթևների դեմ՝ երբ հասել էր Տրայանոսը Աթենք՝ եկան այնտեղ նրա մոտ Խոսրովի ուղարկած դեսպանները, որոնք եկել էին խաղաղություն

[1] Տրայանոսի պարթևական պատերազմի ժամանակագրությունը դեռ մինչև այժմ համարվում է վիճելի: Ըստ իս հավանական են ժամանակագրական տվյալները և դիտողությունները ո՛չ թե Մոմզենի, այլ Գուտշմիդի և Լոնգդենի. տե՛ս այդ մասին Լոնգդենի նկատողությունները Cambridge Ancient History աշխատության XI հատորի վերջում, էջ 858—859:

խնդրելու և բերել էին նվերներ: Արդ՝ որովհետև Խոսրովին հայտնի էր, որ նա հարձակվելու է և պատրաստ է սպառնալիքներն իրագործել՝ խիստ վախեցել էր, և, իր հպարտությունը չափավորելով՝ ուղարկել էր, որպեսզի աղաչեն նրան, որ պատերազմ չսկսի. նաև խնդրում էր նրան, որ Հայաստանը տրվի Բակուրի Պարթամասիր որդուն, ու թախանձագին խնդրում էր նույնպես, որ սրան ուղարկվի թագը: Նա ասում էր, որ Աշխադարին, որը հարմար չէր ո՛չ հռոմայեցիների և ո՛չ էլ պարթևների համար՝ ինքը գահընկեց էր արել:

Իսկ սա [Տրայանոսը] նրա նվերները չընդունեց և նրան ոչ որևէ բանավոր պատասխան տվեց, ոչ էլ նամակ ուղարկեց, այլ հայտնեց միայն, որ բարեկամությունը հայտնի է լինում գործերից և ոչ խոսքերից, ուստի և, երբ ինքը կգա Ասորիք՝ կանե այն ամենը, ինչ որ պատշաճ է: Եվ այսպիսի խոհեր ունենալով՝ նա գնաց Ասիայի, Լյուկիայի և սահմանակից երկրների վրայով Սելևկիա»[1]:

Երբ Տրայանոսը գտնվում էր արդեն Ասորիքում՝ Պարթամասիրը ևս՝ իբրև Հայաստանի թագավոր՝ ուղարկել էր նրան նամակ: Սակայն կայսրն այդ նամակին պատասխան չէր ուղարկել: Այնուհետև Պարթամասիրը երկրորդ անգամ գրել էր նամակ, որի մեջ իրեն չէր անվանել Հայաստանի թագավոր[2]: Ի պատասխան այս երկրորդ նամակի Պարթամասիրին առաջարկ էր արվել, որ նա ներկայանա Տրայանոսին անձամբ:

114 թվի գարնանը Տրայանոսը Ասորիքից շարժվեց դեպի Հայաստան, նպատակ ունենալով իրականացնելու իր աշխարհակալական ծրագիրները: Անտիոքից նա եկավ նախ Մելիտենե քաղաքը (այժմյան Մալաթիա):

Ինչպես հայտնի է, այստեղից դեպի Հայաստան գոյություն ունեին երկու հին ճանապարհներ, մեկը՝ Սատաղի վրայով դեպի Բարձր Հայք, իսկ մյուսը՝ այժմյան Խարբերդի դաշտի միջով դեպի Տիգրանակերտ ու Հարավային Հայաստան: Տրայանոսը, որը որոշել էր մտնել Հայաստանի հյուսիսային ճանապարհով ու Սատաղի վրայով՝ աշխատեց ապահովել իր թիկունքը հարավակողմից և ուղարկեց Մելիտենեից մի զորաբանակ Խարբերդի կողմերը: Այս զորամասը գրավեց այնտեղ առանց ճակատամարտի Բալուից հարավ-

[1] Տե՛ս Cass. Dio, LXVIII, 17, 1—3: Համեմատե՛ Fronto, Ad Verum imper., ed. A. Mai, էջ 321:

[2] Նույնը, LXVIII, 19, 1:

արևմուտք գտնվող Արշամաշատ քաղաքը[1]: Վերջինս ստրատեգիական և պաշտպանողական խիստ կարևոր դիրք էր Մելիտենեի թիկունքում և իշխում էր ռազմական մեծ ճանապարհի վրա, որը գալիս էր Տիգրանակերտից և Ամիդ-Դիարբեքիրից ու Տավրոսյան լեռների վրայով իջնում էր Խարբերդի դաշտը և ապա Մելիտենե:

Մելիտենեից Տրայանոսն առաջ շարժվեց դեպի Սատաղ, ըստ երևույթին, Melitena—Zimara—Satala հին ճանապարհով: Սատաղում նրան ներկայացան կովկասյան երկրների թագավորները և իշխանները: Տրայանոսը առատապես պարգևատրեց Հենիոխների Անքիալոս թագավորին, հավանորեն, նրա մատուցած ծառայությունների համար հարևան լազերի դեմ տեղի ունեցած կռիվներում:

Ընդառաջ եկած մյուս թագավորները հավատարմության խոստում տվին կայսրին և հաստատվեցին իրենց թագավորություններում: Ոմանք նրանցից, հատկապես, Իբերիայի, Կոլքիսի, Բոսփորականների և Սավրոմատների պետերը, ստացան Տրայանոսից առանձին հրահանգներ[2]:

Այնուհետև Տրայանոսը և նրա զորաբանակը ճանապարհ ընկան և Պևտինգերյան քարտեզի Satala—Artaxata ճանապարհով մտան Հայաստան: Այստեղ Էլեգեյայում (Էրզրումի մոտ գտնվող այժմյան Իլիջայում) Տրայանոսին ներկայացավ Հայաստանի Պարթամասիր թագավորը: Կայսրը հանդիսավոր կերպով ընդունեց նրան իր զորքի ներկայությամբ: Պարթամասիրը, Տրդատ Ա.-ի օրինակին հետևելով, արքայական թագը հանեց գլխից և դրեց Տրայանոսի ոտքերի մոտ, հուսալով, որ իր թագը ետ կստանա և կճանաչվի Հայաստանի թագավոր: Սակայն Տրայանոսը մերժեց նրան տալ Հայաստանի գահը և հայտնեց, որ ինքն արդեն վճռել է Հայաստանը դարձնել հռոմեական նահանգ:

Պարթամասիրի ընդունելությունն Էլեգեյայում, որ մանրամասն

---

[1] *Տե՛ս Cass. Dio*, LXVIII, *19, 2: Դիոնն ունի Տամշատ, որ պետք է ուղղել, ինչպես մատնացույց է արել Գուտշմիդը* (Geschichte Irans, *էջ 141*), *Արշամաշատ: Մոմզենը* (Römische Geschichte, V, *էջ 399, ծան. 1*), *Ասատրյանը («Քաղաքական վերաբերությունները», էջ 202) և ուրիշները կարծում են, որ հռոմեական զորքերը գրավել էին Կոմագենում Տամշատը: Այդ ենթադրությունը միանգամայն անհավանական է, որովհետև Տամշատ քաղաքը գտնվում էր այդ ժամանակ ո՛չ թե պարթևների, այլ հռոմայեցիների ձեռին:*

[2] *Տե՛ս R. P. Longden*, The wars of Trajan, Cambridge Ancient History, XI, chapter VI, *էջ 242—243, համեմատե՛ նաև R. P. Longden*, Notes of the Parthian campaigns of Trajan, Journal of Roman Studies, XXI, 1931.

նկարագրված է Կասսիուս Դիոնի մոտ, ավելորդ չեմ համարում թարգմանաբար մեջ բերել մանրամասն կերպով:

> «Հայաստանի մեջ Էլեգեյայում,— պատմում է Դիոնը,— Տրայանոսն ընդունեց Պարթամասիրին: Կայսրը նստած էր բարձր տեղում պատնեշի ծայրին: Պարթամասիրը, ողջունելով նրան, թագը գլխից հանեց, դրեց նրա ոտքերի մոտ և լուռ կանգնեց, սպասելով որ նա թագը կվերցնի:
>
> Արդ՝ երբ զինվորները մեծ աղաղակ բարձրացրին և Տրայանոսին, իբր ինչ որ հաղթություն տանելու համար որ անարյուն էր՝ կոչեցին իմպերատոր—որովհետև նրանք տեսան, որ Արշակունի թագավորը՝ Բակուրի որդին, Խոսրովի եղբորորդին՝ կայսեր առջև կանգնած է առանց թագի՝ որպես գերի—Պարթամասիրը սարսափեց և կարծեց, որ ինքը ծաղրուծանակի է ենթարկվում ու մատնվելու է կորստի: Նա շուռ եկավ և ուզեց փախչել, բայց, տեսնելով, որ ինքը շրջապատված է՝ խնդրեց շնորհ անել, որ ամբոխի մեջ չխոսի: Եվ այնուհետև, երբ նա ներս տարվեց վրանը՝ դարձյալ չհաջողվեց անել այն, ինչ որ ցանկանում էր: Երբ նա բարկացած դուրս եկավ՝ Տրայանոսը նրան կանչեց դարձյալ նույն տեղը, բանակը, և, բարձրանալով նորից բեմ՝ հրամայեց, որ նա ասե բոլորի ներկայությամբ այն, ինչ որ կամենում է, որպեսզի մարդիկ, անգետ լինելով իրենց երկուսի մեն-մենակ խոսակցությանը՝ այդ մասին չտան զանազան հնարովի տեղեկություններ:
>
> Երբ Պարթամասիրն այս լսեց՝ այլևս չլռեց, այլ խոսեց մեծ համարձակությամբ և ասաց, ի միջի այլոց, որ նա ո՛չ պատերազմի մեջ է հաղթվել, ո՛չ էլ գերի է վերցվել, այլ եկել է կամավոր կերպով, հավատացած լինելով, թե իրեն որևէ վիրավորանք չեն հասցնի և թե ինքը կստանա իր թագավորությունը, ինչպես որ Տրդատը ստացել էր Ներոնից:
>
> Տրայանոսը նրա բոլոր ասածներին պատշաճ կերպով պատասխան տվեց և ասաց, որ Հայաստանը նա ոչ ոքին չէ տալու և որ այդ երկիրը պատկանում է հռոմայեցիներին ու ունենալու է հռոմեական կուսակալ: Իսկ իրեն նա թույլ կտա, որ գնա՝ ուր որ կամենում է:
>
> Տրայանոսը Պարթամասիրին և նրա հետ եկած պարթևներին բաց թողեց, տալով նրանց ձիավոր ուղեկիցներ, որպեսզի ոչ ոքի հետ չբանակցեն և որևէ թշնամություն չանեն: Իսկ բոլոր հայերին, որ եկել էին Պարթամասիրի հետ՝ հրամայեց

մնալ իրենց երկրում, որովհետև նրանք այժմ իր հպատակներն էին»[1]:

Հայաստանից հեռանալիս, ինչպես վկայում են սկզբնաղբյուրները, Պարթամասիրն ուզեցել էր փախչել և ապստամբել: Բայց ընդհարման ժամանակ հռոմեական հեծելազորքի հետ բանվել էր և Տրայանոսի հրամանով գլխատվել էր: Ըստ այլ տեղեկությունների՝ նա սպանվել էր կռվում, որ տեղի էր ունեցել իրեն ուղեկցող հռոմեական և պարթևական զորագնդերի միջև[2]:

Անգլիական պատմագետ Ռոուլինսոնը, որը մանրամասն կերպով քննության է առել Պարթամասիրի սպանության մասին բոլոր վկայությունները՝ կարծում է, որ Տրայանոսը, Պարթամասիրին համարելով վտանգավոր հակառակորդ՝ նրան առաջուց որոշած է եղել սպանել[3]:

Այսպիսով Հայաստանը դառավ 114 թվին հռոմեական նահանգ[4], և նրա մեջ հարմար վայրերում, ինչպես վկայում է Դիոնը[5], Տրայանոսը տեղավորեց պահապան զորքեր: Հայաստանի միացումը կայսրության պատճառ դառավ, որ Կապադովկիան և Փոքր Հայքը անջատվեցին Գալատիայից և Մեծ Հայաստանի հետ միասին կազմեցին մեկ նահանգ: Լոնգդենը մատնացույց է անում, որ միացյալ այս նահանգի կառավարումը հանձնվել էր Լ. Կատիլիուս Սևերոսին, որը կոնսուլ էր դեռևս 110 թվին[6]:

Տրայանոսի հաջողությունը Հայաստանում, որ ձեռք էր բերվել առանց կռվի, մեծ տպավորություն էր թողել Հռոմում: 114 թվի նրա

[1] Տե՛ս *Cass. Dio*, LXVIII, 19, 3—5. 20, 1—4.

[2] Տե՛ս *Fronto*, Principia historiae, ed Naber, էջ 209. *Suidas*, γνῶσις և παραβαλών. *Eutropius*, VIII, 3, 1.

[3] *G. Rawlinson*, The sixth great oriental monarchy, London, 1873, էջ 304—305. տե՛ս Աստուրյան, Քաղաքական վերաբերությունները, էջ 204, ծան. 1:

[4] Պատմական մի քանի երկերում (Աստուրյան, Քաղաքական վերաբերություններ, էջ 204, Լեո, Հայոց պատմություն, Ա, 473 և ուրիշ.) մատնացույց է արվում, որ Տրայանոսը նվաճել էր Հայաստանի միայն մի մասը, իսկ հյուսիսային մասն ազատ էր մնացել: Այս խնդիրը հարկավ դեռ կարոտ է հատուկ քննության:

[5] *Cass. Dio*, LXVIII, 21, 1.

[6] Տե՛ս Cambridge Ancient History, XI, chap. V և VI, էջ 220 և 243. նաև *H. Dessau*, Inscriptiones latinae selectae, 1041 և 1338: Աստուրյանը («Քաղաքական վերաբերությունները», էջ 205), հիմնվելով այլ աղբյուրների (Corpus inscriptionum latinarum, Berlin, 1863, X, 8291) և գիտական հնագույն ուսումնասիրությունների վրա՝ ենթադրում է, որ Արմենիա նահանգի կուսակալ էր նշանակվել Գ. Ատիլիոս Յուլիանոս Կլավդիոս Ռոփինոսը:

այս հաղթանակի առթիվ հռոմեական ծերակույտի կարգադրությամբ կտրված են և պահպանվել են մինչև այժմ դրամներ, որոնց վրա մի կողմում դրոշմված է Տրայանոսի պատկերը, իսկ մյուս կողմում քանդակված են զանազան խորհրդանիշներ. օրինակ՝ ինքը՝ Տրայանոսը կանգնած նիզակը ձեռին Տիգրիս և Եփրատ գետերի մեջտեղում, իսկ նրա ոտքի տակ՝ կապված ու վայր ընկած մի կին, որ ներկայացնում է Հայաստանը: Բացի այդ, հավերժացնելու համար Տրայանոսի հաղթանակը՝ Հռոմում կառուցել էին հատուկ մի կոթող, որի վրա քանդակված էին հռոմեական զորքը, ինքը՝ Տրայանոսը և նաև Պարթամասիրը մորուքով, որը կանգնած է Տրայանոսի առջև և զորքի դիմաց[1]: Այս կոթողը, որ այժմ Կոստանդիանոս Մեծի հաղթական կամարի մի մասն է կազմում, կարելի է հիմա էլ տեսնել Հռոմում:

Հայաստանի նվաճումից հետո՝ Տրայանոսն արշավանքի ելավ պարթևների դեմ և Բարձր Հայքից իջավ Միջագետք: Հռոմեական զորքի այս ճանապարհը, որ դեռևս լուսաբանված չէ, հավանական է ենթադրել Էլեգեյայից Խնուսի և Մանազկերտի վրայով դեպի Մշո դաշտը և այնտեղից Տիգրանակերտի վրայով դեպի Մծբին:

Հայաստանի հարավում, Կորդուքի Մանիսար իշխանը, որը Պարթամասիրի ողբերգական մահից ու Հայկական թագավորության վերացումից հետո տիրապետել էր Հայաստանի և Միջագետքի որոշ մասերին՝ անկարող էր, իհարկե, դիմադրություն ցույց տալ հռոմեական զորքերին, ուստի և Տրայանոսն անարգել կերպով գրավեց նրա ամբողջ երկիրը:

Տրայանոսի մեծ զորավարներից մեկը, Լուսիոս Կուիետոսը, ներխուժեց այստեղից Վանա լճի արևելյան կողմերը և նվաճեց այնտեղ Մարաստանի սահմանում ապրող մեդական մարդերի քրդական ցեղը, որը հռոմեական աղբյուրներում սխալմամբ անվանված է Marcomedi (=Mardomedi)[2]:

Իր 114 թվի արշավանքի ընթացքում Տրայանոսը, առանց մեծ ընդդիմության հանդիպելու, հաղթական կերպով առաջ էր շարժվում, որովհետև Պարթևական թագավորության մեջ հենց այս ժամանակ խիստ սաստկացել էին ներքին երկպառակությունները: Հռոմեական

[1] Տե՛ս Գաբրեյան Հ., Տիեզերական պատմություն, հատ. Բ, էջ 174:

[2] Տե՛ս *Eutropius*, VIII, 3, 1. *Rufus Festus*, 20, 2. Նաև *Markwart J.*, Die Entstehung und Wiederherstellung der armenischen Nation, Potsdam, 1919, էջ 24 և Հ. Մանանդյան, Պատմական-աշխարհագրական մանր հետազոտություններ, Երևան, 1945, էջ 35—36: Համեմատե՛ նաև *Themistius*, Orat., ed. Dindorf, XVI, էջ 250 և Սուիդասի բառգրքում ἀμφίβολοι:

զորքերը Տրայանոսի առաջնորդությամբ Կորդուքից իջան Միջագետք, որի մեծագույն մասը Պարթև Արշակունիների վասալ Ադիաբենի Մեբարսապես թագավորի երկիրն էր։ Այստեղ նրանք գրավեցին առանց կռվի Մծբին և Սինգարա քաղաքները և շարժվեցին դեպի Եդեսիա, որի Աբգար թագավորը նրանց ընդառաջ եկավ և, հպատակվելով Տրայանոսին՝ ճանաչվեց իբրև Օսրոյենի թագավոր։

Հռոմեական կայսրությանը միացվեցին 114 թվին Տիգրիս ու Եփրատ գետերի միջև գտնվող նվաճված շրջանները, որոնք վերածվեցին, ինչպես և Հայաստանը, հռոմեական նահանգի Մեսոպոտամիա կամ Միջագետք անունով։

Այս մեծ հաջողություններից հետո, 114 թվի վերջերը, Տրայանոսը վերադարձավ Անտիոք և ձմեռեց Ասորիքի այս կենտրոնավայրում։

115 թվի գարնան սկզբներին Տրայանոսը նորից եկավ Մծբին և ռազմական գործողությունները պարթևների դեմ վերսկսեց ավելի մեծ թափով։ Հռոմեական զորքերն անցան Կորդվաց լեռների հարավկողմում Տիգրիս գետը և գրավեցին ամբողջ Ադիաբենը, որը նույնպես հայտարարվեց հռոմեական նահանգ Ասորիա անունով։

Այնուհետև Տրայանոսն իր զորքերն առաջնորդեց Տիգրիսի հովտով դեպի հարավ և, մտնելով Բաբելոնիա, գրավեց պարթևների մայրաքաղաքը, Տիզբոնը։ Այստեղ հռոմեացիների ձեռքն ընկան Խոսրովի դուստրը և նրա ոսկե գահը, իսկ ինքը՝ Խոսրովը փախել էր հյուսիսարևելյան Հայաստան, որը դեռևս հաստատուն կերպով չէր միացված կայսրության։

Այնուհետև, 116 թվին, Տրայանոսը շարունակեց իր արշավանքը դեպի հարավ և նվաճեց ամբողջ Մեսենեն, հասնելով մինչև Խարաքս Սպասինու առևտրական մեծ քաղաքը, որը գտնվում էր Տիգրիսի գետաբերանում ու Պարսից ծոցի ափում։

Հռոմեական կայսրության ձեռքումն էր գտնվում այժմ միջազգային առևտրի ամբողջ հարավային գիծը, որով փոխադրվում էին Արևմուտք Հնդկաստանի թանկարժեք ապրանքները։ Տրայանոսը, անշուշտ, օրորվում էր արդեն երազներով, որ իրեն էր վիճակվել իրագործելու Հռոմի վաղեմի հույսերը և վերականգնելու Աղեքսանդր Մակեդոնացու մեծ աշխարհակալությունը։ Սակայն նրա ուրախությունը երկար չտևեց։

Իր առաջխաղացման ժամանակ լուրջ բախում թշնամու հետ Տրայանոսը գրեթե չէր ունեցել։ Գահակալության առթիվ խռովությունների պատճառով պարթևների դիմադրական կարողությունը անչափ ջլատված էր։ Սակայն այժմ, որովհետև արտաքին վտանգը

մահ էր սպառնում Պարթևական թագավորությանը՝ իրար դեմ կռվող Արշակունիները ներքին պառակտումները դադարեցրին և իրենց զենքը դարձրին հռոմայեցիների դեմ։

Շուտով Տրայանոսի թիկունքում սկսվեցին ուժեղ ապստամբություններ և՛ Ադիաբենում, և՛ Միջագետքում, և՛ Հայաստանում։ Հռոմեական պահապան զորքերը շատ տեղերում կամ ջարդվեցին և կամ վտարվեցին։ Ապստամբության գլուխ էր կանգնել պարթևական թագի թեկնածուներից մեկը, Միհրդատ Դ-ը, որը Խոսրով թագավորի եղբայրն էր։ Սա վերագրավեց ամբողջ Միջագետքը և արշավեց մինչև Կոմագեն, սակայն այս արշավանքի ժամանակ ձիուց վայր ընկավ և մեռավ (116 թվին)։

Միհրդատ Դ-ին հաջորդեց իր որդին Սանատրուկը, որին օգնության հասավ Հայաստանից ուղարկված զորքը Խոսրովի որդու, Պարթամասպատի, առաջնորդությամբ[1]։ Այս երկու Արշակունիները կռվում էին հռոմայեցիների դեմ մեծ հաջողությամբ։ Տրայանոսը Բաբելոնիայից ուղարկեց նրանց դեմ Ապպիոս Մաքսիմոս և Լուսիոս Կուիետոս զորավարներին։ Սրանցից առաջինը չարաչար կերպով պարտվեց և ճակատամարտում սպանվեց։ Բայց Լուսիոսը, խոստանալով Պարթամասպատին պարթևական գահը, կարողացավ նրան իր կողմը գրավել, ուստի և Սանատրուկը, մենակ մնալով, հաղթվեց և փախչելիս սպանվեց։

Ապստամբությունն այնուհետև ճնշվեց դաժան կերպով, և հռոմայեցիները պաշարեցին և վերցրին Մծբինը, Եդեսիան և Տիգրիս գետի ափին գտնվող Սելևկիան, որոնք ապստամբության գլխավոր բներն էին։ Վերջին երկու քաղաքներն ավերվեցին ու այրվեցին։

Տրայանոսը համոզվեց սակայն, որ Պարթևական թագավորությունն անհնարին է վերացնել, և որոշեց հյուսիսային Միջագետքը և Հայաստանը պահել իբրև կայսրության կցված նոր նահանգներ, իսկ պարթևական մյուս երկրները դարձնել Հռոմի ենթակա վասալական թագավորություն։

Միջագետքի միացումը կայսրության ուներ տնտեսական մեծ

---

[1] Անգլիական պատմաբան Լոնգդենը (տե՛ս Cambridge Ancient History, XI, էջ 248), հիմնվելով Մաղաղասի ժամանակագրության խառնաշփոթ վկայությունների վրա (Malalas, XI, էջ 270—274, հրատ. Դինդորֆի), ենթադրում է, որ Պարթամասպատը որդին էր ո՛չ թե Խոսրովի, այլ Սանատրուկի, որը, նրա կարծիքով, հավանորեն, Հայոց թագավոր Պարթամասիրի եղբայրն էր։ Իսկ Գաթրճյանը (Տիեզ. պատմ., Բ, էջ 174) և Գարագաշյանը (Քննակ. պատմ., Բ, էջ 258) կարծում են, որ Պարթամասպատը եղբայրն էր հայոց Աշխադար թագավորի։ Մեջբերված այս կռահումները համարվում են անհավանական։

կարևորություն: Հռոմեական մաքսային սահմաններն Ասորիքում, որ արաբական անապատների մոտ էին՝ վերահսկողության տեսակետից շատ անհարմար էին, ուստի և սահմանների փոխադրումը Եփրատ ու Տիգրիս գետերի կողմերը Հռոմի համար խիստ շահավետ էր, որովհետև Ասորիքի առևտրական մեծ կենտրոնների միջազգային հաղորդակցությունները ամբողջովին կլինեին նրա հսկողության տակ: Ուշագրավ է այդ տեսակետից, որ Տրայանոսն առանձին կարևորություն էր տվել այս հարցին և կարգադրել էր ապրանքների փոխադրության մաքսերի գանձումը կազմակերպել Եփրատ ու Տիգրիս գետերի մոտ[1]:

116 թվի վերջերին կամ 117 թվի սկզբներին Տիզբոնի մեջ, հռոմեական և պարթևական զորքերի ներկայությամբ, Տրայանոսը Պարթևաց թագավոր պսակեց Խոսրովի Պարթամասպատ որդուն: Այնուհետև նա վերադարձավ Միջագետք և պաշարեց ապստամբած Հատրա քաղաքը, բայց չկարողացավ առնել և գնաց Ասորիք: Նա մտադիր էր հետևյալ տարին վերսկսել կռիվը, սակայն ծանր հիվանդացավ և, Հռոմ վերադառնալիս՝ վախճանվեց Կիլիկիայի Սելինում քաղաքում[2] 117 թվի օգոստոսի 7-ին կամ 8-ին:

Տրայանոսի մահից հետո դրությունն Արևելքում սկսեց փոխվել: Հռոմայեցիների հեռանալուց հետո հարավային Միջագետքից՝ Պարթամասպատը, Հռոմի դրածոն, չկարողացավ իր հորը դիմադրել, և Խոսրովը հեշտությամբ տեր դառավ իր գահին և վերականգնեց իր թագավորության նախկին անկախությունը:

Պատմագետներից շատերը ենթադրում են, որ Պարթամասպատն իր հորից, Խոսրովից, 116 թվին ստացել էր Հայաստանի գահը[3]: Սակայն այդ կռահումը, ինչպես այժմ պարզված է, ավելի քան անհավանական է[4]:

Կասսիուս Դիոնի վերոհիշյալ հատվածից, որը, ինչպես տեսանք, միանգամայն ճիշտ մեկնել է Boissevain-ը, պարզ երևում է, որ 116 թվին՝ Միջագետքում, Ասորեստանում ու Հայաստանում ծագած ապստամբությունների ժամանակ՝ Հայաստանը վերագրված է եղել Սանատրուկի որդին՝ Վաղարշը:

[1] *Fronto*, Princ. hist., էջ 209 (հրատ. Naber-ի), տե՛ս նաև *Mommsen*, Römische Geschichte, V, էջ 402։

[2] *Cass. Dio*, LXVIII, 33, 3.

[3] Տե՛ս *Халатьянц*, Очерк истории Армении, М., 1910, էջ 304, Բասմաջյան Կ. Յ., Իսկական պատմութիւն Հայոց, Կ. Պոլիս, 1914, էջ 192 և ուրիշ։

[4] Տե՛ս Աստուրյան, Քաղաքական վերաբերութիւններ, էջ 209, ծան. 1։

«Որովհետև Վաղարշը, Սանատրուկի որդին,—վկայում է Դիոնը,—Սևերոսի բանակի դեմ մարտի պատրաստվելիս՝ ընդհարումից առաջ զինադադար էր խնդրել և կնքել՝ (Տրայանոս կայսրը) նրա մոտ պատգամավորներ ուղարկեց և Հայաստանի մեկ մասը շնորհեց նրան հաշտության պատճառով»[1]:

Այս վկայության մեջ մատնանշված Սևերոսը, ինչպես դժվար չէ որոշել, վերոհիշյալ Լ. Կատիլիուս Սևերոսն է, որը 114 թվին կառավարիչ էր նշանակված Կապադովկիայի, Փոքր Հայքի և Մեծ Հայաստանի: Բնական է, իհարկե, որ Հայաստանում բռնկված ապստամբությունը նա պետք է ճնշեր:

Դիոնի՝ վերև բերված հատվածի ուղիղ մեկնությունը տվել են Մարկվարտը և Աստուրյանը: Սակայն, թվում է ինձ, որ նրանց բացատրությունների մեջ մի քանի կետեր վիճելի և կասկածելի են: Մենք տեսանք վերև, որ Տրայանոսի ժամանակ, 116 թվի ապստամբությունների ճնշումից հետո, հյուսիսային Միջագետքը և Հայաստանը մնացել էին իբրև հռոմեական նահանգներ: Ըստ այսմ հասկանալի է դառնում, թե ինչու Վաղարշին տրվեց միայն Հայաստանի մի մասը:

Այդ մի մասը, հավանորեն, ո՛չ թե «Ծոփաց և Կորդվաց նախկին թագավորությունները» էին, ինչպես կարծում է Մարկվարտը[2], այլ, ինչպես հավանական է ենթադրել, հյուսիս-արևելյան Հայաստանն էր, որին հռոմայեցիները չէին կարողացել հաստատուն կերպով տիրապետել: Դժվար կլինի, անշուշտ, կարծել, որ Տրայանոսը կարող էր զիջել Վաղարշին «Արմենիա» և «Մեսոպոտամիա» նահանգների միջև գտնվող և ստրատեգիական կարևորություն ունեցող Կորդուքն ու Ծոփքը:

Անհավանական է նաև Աստուրյանի կարծիքը[3], որը ենթադրում է, որ Վաղարշի մոտ պատգամավորներ էր ուղարկել ու նրան շնորհել էր Հայաստանի մի մասը Տրայանոսի հաջորդը Հադրիանոս կայսրը: Այդ ճիշտ լինել չէ կարող, որովհետև, ինչպես ներքև կտեսնենք, Հադրիանոսը հրաժարվել էր Տրայանոսի գրաված երկրներից և հայերին վերադարձրել էր ո՛չ թե Հայաստանի միայն մի մասը, այլ ամբողջ Հայաստանը:

[1] *Cass. Dio*, LXXV, 9, 6.

[2] Տե՛ս «էջ մը Արշակունեաց հնագոյն պատմութենէն», «Հանդէս Ամսօրեայ», 1906, № 2, էջ 33։

[3] «Քաղաքական վերաբերութիւններ», էջ 211—212։

Տրայանոսի աշխարհակալական նոր քաղաքականությունը, որ կրկնողությունն էր Կրասսոսի և Անտոնիոսի ագրեսիվ ու նվաճողական արևելյան քաղաքականության, չուներ դրական հետևանքներ։ Հռոմեական 114—117 թվերի հաղթական արշավանքները, փաստորեն, ուժերի ու նյութական միջոցների զուր ու անօգուտ վատնումն էին։ Հադրիանոսի ժամանակ, ինչպես կտեսնենք, Հռոմեական կայսրության սահմանն արևելքում նորից դառավ, ինչպես և առաջ, Եփրատ գետը։

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՎԱՂԱՐՇ Ա, ՍՈՀԵՄՈՍ, ԲԱԿՈՒՐ ԵՎ ՀՌՈՄԵԱ-ՊԱՐԹԵՎԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ՄԱՐԿՈՍ ԱՎՐԵԼԻՈՍԻ ԺԱՄԱՆԱԿ

1. Քաղաքական ընդհանուր դրությունը Հադրիանոսի ժամանակ։— 2. Պատմագետների սխալ կարծիքը Պարթամասպատի Հայոց թագավոր կարգվելու մասին։— 3. Հայաստանը նորից Հռոմի ենթակա վասալական թագավորություն։— 4. Երկարատև խաղաղությունն Արևելքում։— 5. Վաղարշ Ա.— Վաղարշապատ քաղաքի հիմնումը.— ալանների արշավանքը։— 6. Դրամներ Հայաստանում նոր թագավորի նշանակման մասին.— Սոհեմոս։— 7. Մարկվարտի կարծիքը Ծոփքի և Կորդուքի անջատման մասին Հայաստանից։— 8. Պարթևների դժգոհությունը.— նրանց արշավանքը Հայաստան և Բակուրի կարճատև թագավորությունը Հայաստանում։— 9. Հայկական պատերազմը և Արտաշատի առումը։— 10. Պարթևական պատերազմը և Սելևկիայի ու Տիզբոնի կործանումը։— 11. Սոհեմոսի վերստին թագավորությունը Հայաստանում.— ապստամբության ճնշումը։— 12. Հաղթությունների առթիվ Ավրելիոսի կոթողը և հռոմեական դրամները։— 13. Բակուրի արձանագրությունը։— 14. Հիշողություններ Սոհեմոսի մասին Խորենացու Պատմության մեջ։— 15. 175 և 185 թվերի լատիներեն արձանագրությունները։

Հռոմեական պատմիչները, Եվտրոպիոսը և Ֆեստուս Ռուփուսը, մատնանշում են, որ Հադրիանոսը, նախանձելով Տրայանոսի փառքին՝ հրամայեց, որ հռոմեական զորքերը ետ նահանջեն, և դատարկելով Հայաստանը, Միջագետքը և Ասորեստանը՝ հռոմայեցիների ու պարթևների սահմանը նորից դարձրեց Եփրատ գետը[1]։ Իրապես, Հադրիանոսի քաղաքական գործունեության անաչառ քննությունը ցույց է տալիս, որ նա իր նախորդի գրաված երկրներից հրաժարվել էր ո՛չ թե նախանձից դրդված, այլ, որովհետև գիտակցում էր, որ այդ երկրները, որ թշնամաբար էին տրամադրված դեպի հռոմայեցիները, միացնելը կայսրության նպատակահարմար չէր՝—

[1] *Տե՛ս Eutropius,* Breviarium, VIII, 6. *Festus Rufus,* Breviarium XX.

անհրաժեշտ էր այնտեղ պահապան ուժեղ զորամասեր պահել ու մեծ ծախսեր անել, որ ձեռնտու չէին:

Տրայանոսի հաղթությունները ցույց տվին Պարթևական թագավորության թուլությունը և Հռոմի համար ունեցան այն դրական հետևանքը, որ բարձրացրին նրա վարկը կայսրության սահմանակից արևելյան ժողովուրդների ու վասալ տերությունների աչքում: Վերջիններիս կախումը Հռոմից այնուհետև ավելի մեծ եղավ ու իրական, քան առաջ:

Արդեն իր իշխանության առաջին տարիներում Հադրիանոսը (117—138) տվեց Պարթամասպատին, որը զրկված էր արդեն, Օսրոյեն-Եդեսիայի թագավորությունը: Գուտշմիդի կարծիքով, այս Պարթամասպատին է վերաբերում Սպարտիանոսի հաղորդած հետևյալ տեղեկությունը.

«Պարթամասպատին [բնագրում սխալմամբ՝ Part<h> a-masirin*],—վկայում է Սպարտիանոսը*[1]*,—որին Տրայանոսը պարթևների թագավոր էր արել, որովհետև նա, ինչպես պարզվել էր, պարթևների մոտ մեծ համարում չուներ՝ [Հադրիանոսը] տվել էր իբրև թագավոր մոտակա ժողովուրդներին»:*

Պետք է ասել, որ պատմագետներից շատերը, հիմնվելով Սպարտիանոսի այս վկայության վրա՝ թյուրիմացաբար ենթադրել են, որ Պարթամասպատը նշանակված է եղել Հայաստանի թագավոր և Հայաստանում թագավորել է 117 թվից մինչև 135 կամ 140 թիվը[2]*: Իսկ, իրապես, կարելի է միանգամայն հավանական համարել, որ Հադրիանոսը համայն Հայաստանի թագավոր էր ճանաչել Վաղարշին (117—140/3), որը, ինչպես տեսանք, դեռևս 116 թվին ստացել էր Տրայանոսից Հայաստանի մի մասը:*

Որ Հադրիանոսի ժամանակ Հայաստանն առաջվա նման գտնվել էր Հռոմի հպատակ վասալական թագավորություն՝ այդ երևում է Սպարտիանոսի հետևյալ վկայությունից.

«[Հադրիանոսը] թույլ տվեց, որ հայերն ունենան թագավոր, մինչդեռ Տրայանոսի ժամանակ նրանք ունեցել էին տեղակալ (լեգատ, legatus*)»*[3]*:*

---

[1] Scriptores historiae Augustae, ed. E. Hohl, vol. I, Lipsiae. 1927, էջ 7 (Hadr. V, 4).

[2] *Տե՛ս* Գաթրճյան, *Տիեզ. պատմ., Բ, էջ 174.* Գարագաշյան. *Քննակ. պատմ. Հայոց, Բ, էջ 259.* Դոլենս-Խաչ, *Պատմ. հին հայերի, թարգմ. Քաջբերունու, Գ, էջ 181. Kévork Aslan.* Études historiques sur le peuple arménien, Paris. 1909, էջ 128. *Sandalgian,* Histoire documentaire de l'Arménie, II, էջ 549—551 և ուրիշ.:

[3] Scriptores historiae Augustae, vol. I, էջ 23 (Hadr. XXI, 11):

Նույն այս ժամանակ, ինչպես հաղորդում են հույն-հռոմեական աղբյուրները, վասալական կախում ունեին Հռոմից նաև Ալբանիայի ու Իբերիայի թագավորները և բազմաթիվ ցեղերի իշխանավորները Սև ծովի հարավ-արևելյան ափերի կողմերում[1]*:*

Որքան մեծ է եղել Հայաստանի կախումը Հռոմից՝ այդ երևում է Փլավիոս Արրիանոսի ուշագրավ մի հաղորդումից, որը վկայում է, որ Կապադովկիայի կուսակալի զորքի մեջ եղել է Հադրիանոսի ժամանակ հատուկ հայ զորամաս[2]*:*

Հադրիանոսի կայսրության սկզբնական շրջանում պարթևների հետ հարաբերությունները սկսել էին սրվել, որովհետև Պարթամասպատը, որպես Օսրոյեն-Եդեսիայի թագավոր, պարթևական գահի համար վտանգավոր թեկնածու էր և ախոյան: Սակայն 123 թվին կայսեր հետ բանակցությամբ խաղաղությունն ապահովվեց: Պարթամասպատը հեռացվեց իր նոր թագավորությունից ևս և Օսրոյեն-Եդեսիայի գահը տրվեց նախկին դինաստիային:

130 թվին Հադրիանոսը ետ դարձրեց Խոսրովին նրա գերի ընկած աղջկանը, և այսպիսով խաղաղությունը պահպանվեց Արևելքում ինչպես Հադրիանոսի (117—138), նույնպես և Անտոնինոս Պիոսի (138—161) ժամանակ: Երկարատև խաղաղությունը, որ հաստատվել էր Արևելքում թե Ներոնի ու նրա հաջորդների և թե երկու այս կայսրերի ժամանակ, մեծապես նպաստավոր եղավ Մերձավոր Արևելքի տնտեսական ու կուլտուրական զարգացման և, մանավանդ, միջազգային առևտրի բարգավաճման համար:

Սանատրուկի որդին, Վաղարշ Ա-ը, թագավորեց Հայաստանում մոտ քսանհինգ տարի (117—140/3): Նրա թագավորության ընթացքում տեղի ունեցած մի քանի կարևոր անցքեր հիշատակված են հույն-հռոմեական աղբյուրներում և Մովսես Խորենացու պատմական երկում:

Հայաստանի առևտրի ու քաղաքների մասին ռուսերեն իմ աշխատության մեջ մանրամասն բացատրված է[3]*, որ հենց այս Վաղարշ Ա թագավորն է հիմնադիրը Վաղարշապատ քաղաքի*[4]*, որը հին աղբյուրների մեջ անվանված է նաև «Նոր քաղաք»* (Καινὴ πόλις)*:*

---

[1] *Տե՛ս Cass. Dio,* LXVIII, 18, 3. *Arriani,* Perip. Pont., 15 են.:

[2] *Տե՛ս Arriani,* Alan., 29.

[3] *Տե՛ս Я. А. Манандян,* О торговле и городах Армении, Ереван, 1930, էջ 91—94:

[4] *Տե՛ս Markwart,* Untersuchungen zur Geschichte von Eran, Philologus, Supplementband, X, erstes Heft, էջ 227. Աստուրյան, *Քաղաքական վերաբերությունները, էջ 214:*

Ուշագրավ տեղեկություն տալիս է մեզ այդ մասին Խորենացին իր հետևյալ վկայության մեջ.

«Սա [Վաղարշը],—պատմում է Խորենացին,—պարսպով պատեց նաև Վարդգեսի հզոր ավանը, որի մասին առասպելներն ասում են.

«Գաղթական գնաց Վարդգես մանուկը
Տուհաց գավառից, Քասաղ գետի մոտ,
Եկավ ու նստավ Շրեշ բլրի մոտ,
Արտիմեդ քաղքի, Քասաղ գետի մոտ,
Երվանդ արքայի դուռը թակելու»:

Այս Երվանդը առաջինն է, Սակավակյացը, Հայկազուններից, որի քրոջը Վարդգեսը կին առնելով՝ այս ավանը շինեց, որտեղ և Արշակունի Տիգրան Միջինը նստեցրեց հրեա գերիների կեսը, որ և վաճառաշատ քաղաքագյուղ դարձավ: Այժմ Վաղարշը պատեց նրան պարսպով և ամուր պատվարով և կոչեց Վաղարշապատ, որ (կոչվում է նաև) Նոր քաղաք»[1]:

[«Սա պատեաց պարսպաւ և հզօր աւանն Վարդգէսի, որ ի վերայ Քասաղ գետոյ. զորմէ յառասպելսն ասեն. «Հասուած գնացեալ Վարդգէս մանուկն, ի Տուհաց գաւառէն, զՔասաղ գետով, եկեալ նստաւ զՇրէշ բլրով, զԱրտիմէդ քաղաքաւ, զՔասաղ գետով, կռել կոփել զդուռն Երուանդայ արքայի»: Այս Երուանդ՝ առաջինն է, Սակաւակեացն, որ ի Հայկազանց, զորոյ զքոյրն կին առեալ Վարդգէսի՝ շինեաց զաւանս զայս. յորում և Տիգրան Միջին յԱրշակունեաց նստոյց զհասարակ առաջնոյ գերութեանն հրէից, որ եղև քաղաքագիւղ վաճառօք: Այժմ այս Վաղարշ պատեաց պարսպաւ և հզօր պատուարաւ, և անուանեաց Վաղարշապատ, որ և Նոր քաղաք»][2]:

Պատմական Վաղարշապատի հիմնման ժամանակի մասին բոլորովին այլ կարծիք է հայտնել Մոմզենը: Հիմնվելով Կասսիոս Դիոնի մի հատվածի վրա, որը պահպանվել է Սուիդասի Բառարանում (Μαρτιος բառի տակ)՝ Կայնեպոլիս—Նոր քաղաքի հիմնումը նա վերագրել է հռոմեական զորավար Ստատիոս Պրիսկոսին, որը 163 թվին, պատերազմի ժամանակ պարթևների ու հայերի դեմ, գրավել էր և կործանել Արտաշատ քաղաքը[3]: Մոմզենի այս կարծի-

[1] Տե՛ս Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, թարգմ. Ստ. Մալխասյանցի, Երևան, 1940, էջ 134 (II, ԿԵ):

[2] Մովսես Խորենացի, Տփղիս, 1913, էջ 199—200 (II, ԿԵ):

[3] *Mommsen*, Römische Geschichte, V, էջ 407, ծան. 1:

քը, որ ընդունելի է համարվել, մեջ է բերվում նաև բազմաթիվ հայագիտական երկերում[1]:

Ընդհանուր ընդունված այդ կարծիքը, ինչպես այժմ պարզված է, ճիշտ չէ: Ասատուրյանը շատ ուղիղ մատնանշել է, որ Կասսիոս Դիոնի հատվածում, որի վրա հիմնվել է Մոմզենը, ոչինչ չի ասված Ստատիոս Պրիսկոսի մասնակցության մասին Կայնեպոլիսի հիմնարկմանը[2]: Այդ հատվածում, ինչպես դժվար չէ համոզվել, հիշված է միայն, որ Մարտիոս Վերոսը, հայերի ապստամբությունը ճնշելուց հետո, Կայնեպոլիսը հայտարարել էր իբրև Հայաստանի մայրաքաղաք:

Վաղարշ Ա-ի թագավորության ժամանակ, 134 թվին, ինչպես հաղորդում են Կասսիոս Դիոնը և Փլավիոս Արրիանոսը[3], որն այդ ժամանակ Կապադովկիայի կուսակալ էր, ալանները նորից ներխուժեցին հարավային երկրները Իբերիայի Փարասման Բ թագավորի աջակցությամբ: Նրանք ավերեցին Հայաստանը, Աղվանքը և Ատրպատականը ու Հայաստանի վրայով անցան նաև Կապադովկիայի կողմերը: Բայց, ընծաներ ստանալով Վաղարշ Ա-ից[4] և տեղեկություն ստանալով, որ Կապադովկիայի կուսակալ Փլավիոս Արրիանոսը իրենց դեմ զորական մեծ ուժեր է ռազմի պատրաստել, ետ քաշվեցին Հյուսիսային Կովկաս:

Վաղարշ Ա-ը դեսպաններ ուղարկեց Հռոմ և գանգատվեց Փարասման Բ-ի դեմ, որն անձամբ Հռոմ եկավ և ո՛չ միայն կարողացավ կայսեր բարկությունը մեղմացնել, այլև մեծարվեց և ստացավ մեծ նվերներ ու նույնիսկ նոր երկրամասեր[5]:

Վաղարշ Ա-ը թագավորել է Հայաստանում մինչև 140—143 թթ.: Թեև այդ մասին հույն-հռոմեական աղբյուրները տեղեկություններ չունեն, սակայն այդ պարզորոշ հայտնի է, որովհետև Հայաստանում 140—143 թվերին նոր թագավոր նշանակվելու մասին պահ-

[1] Տե՛ս *Халатьянц*, Очерк истории Армении, էջ 311. *Sandalgian*, Histoire documentaire de l'Arménie, II, էջ 558. *Tournebize*, Histoire politique et réligieuse de l'Arménie, էջ 411. *Hübschmann*, Die altarmenischen Ortsnamen և ուրիշ.:

[2] Ասատուրյան, Քաղաքական վերաբերություններ, էջ 214, ծան. 1:

[3] Տե՛ս *Cass. Dio*, LXIX, 15, 1—2. *Arrianus*, Alan. (Scripta minora):

[4] Պատմագետներից շատերը ենթադրում են, որ Դիոնի հիշատակած Վաղարշը պարթևների թագավոր Վաղարշ Բ-ն է (130—148), սակայն Գուտշմիդը մատնանշում է, որ այդ Վաղարշը Հայաստանի Վաղարշ թագավորն էր. տե՛ս *Gutschmid*, Geschichte Irans, էջ 147:

[5] Տե՛ս *Cass. Dio*, LXIX, 15, 3. Scriptores historiae Augustae, Vita Hadriani, XIII, 9. XVII, 11—12. Anton. Pius, IX. 6.

պանվել են այդ թվականների միջոցում կտրված դրամներ, որոնց մի կողմում դրոշմված է Անտոնինոս Պիոսի գլուխը, որի շուրջը գրված է «Անտոնինոս կոնսուլ երրորդ անգամ Օգոստոս» (Antonius Cos. III. Augustus), իսկ մյուս կողմում՝ կայսերական վերարկու հագած Պիոս կայսրը պսակ է դնում Հայոց թագավորի գլխին, որը կրում է հռոմեական տարազ, իսկ շուրջը գրված է՝ «տրվեց թագավոր հայերին հրամանով Ծերակույտին» (Rex Armeniis datus S. C.)[1]:

Պատմագետներից ոմանք կարծում են, որ Անտոնինոս Պիոսը (138—161) նոր թագավոր էր տվել Հայաստանին նախորդ թագավորի մահվան պատճառով[2]: Սակայն այլ կարծիք է հայտնել այս խնդրի մասին Ասատուրյանը: Համաձայն նրա ենթադրության՝ դեպի Հայաստանի թագավոր Վաղարշ Ա-ը Հադրիանոսի հաջորդ Անտոնինոս Պիոսի վերաբերմունքը եղել է թշնամական: Ասատուրյանը կարծում է, որ Վաղարշ Ա-ի դեմ Պիոսին կարող էր գրգռած լինել Հռոմի մոտ բարեկամ Իբերիայի թագավոր Փարասման Բ-ը: Նրա կարծիքով, 140—143 թվերին Վաղարշ Ա-ը դեռևս վախճանված չէր, այլ նրան մեզ անհայտ պատճառով գահընկեց էր արել Անտոնինոս Պիոսը[3]:

Ըստ իս՝ թեև Ասատուրյանի այս կռահումները հնարավոր են, բայց չեն կարող հաստատուն համարվել, մինչև որ չապացուցվեն նոր ու համոզիչ փաստերով:

Վաղարշ Ա-ին, հավանաբար, հաջորդել էր Սոհեմոսը (140/3—161), որ Եմեսայի (այժմ Հոմս) իշխանական տոհմից էր և, ըստ երևույթին, իր երակների մեջ ուներ Արշակունյան արյուն և ազգական էր նաև Կոմագենեի թագավորների, որոնք իրենց վերագրում էին Աքեմենյան ծագում: Բայց նա միևնույն ժամանակ հռոմեական հպատակ էր և հռոմեական ծերակույտի անդամ:

Սոհեմոսի մասին խիստ կարևոր մի վկայություն պահպանված է Փոտիոսի Bibliotheca աշխատության մեջ, ուր նա, խոսելով Յամբլիկոսի Բաբելոնականք վեպի մասին, նրան հիշատակում է հետևյալ հատվածում.

«Իր մասին մատենագիրը ասում է, որ բաբելոնացի էր... և ծաղկում էր Աքեմենյան Արշակունյան Սոհեմոսի ժամանակ,

[1] Տե՛ս Գաբրճյան, Տիեզերական պատմություն, Բ, էջ 174, ծան. Ե. Գարագաշյան, Քննական պատմություն Հայոց, Բ, էջ 259—260 և ուրիշները:

[2] Տե՛ս *Sandalgian*, Histoire documentaire, էջ 551. Հ. Տաշյան, Արշակունի դրամներ, Վիեննա, 1919, էջ 126 և ուրիշները:

[3] Տե՛ս Ասատուրյան, Քաղաքական վերաբերություններ, էջ 214:

որը թագավոր էր և հաջորդել էր իր նախնիքներին, որոնք նույնպես եղել էին թագավորներ: Բայց նա նաև Հռոմի ծերակույտի անդամ եղավ ու նաև հյուպատոս և հետո կրկին անգամ դառավ թագավոր Մեծ Հայաստանի: Արդ՝ ինքը [Յամբլիկոսը] ծաղկում էր, ինչպես ասում է նա, հենց սրա օրով[1]: Իսկ Հռոմայեցոց թագավորությունը ժառանգեց Անտոնինոսը»[2]:

Պատմագիտական նորագույն ուսումնասիրություններում, օրինակ՝ Խալաթյանցի, Մարկվարտի և Ասատուրյանի երկերում՝ Յամբլիկոսի այս վկայությունը մեկնվում է այն իմաստով, որ Սոհեմոսը թագավոր էր դրվել Հայաստանում երկու անգամ. առաջին անգամ՝ Անտոնինոս Պիոսի ձեռքով 140—143 թվականների ժամանակամիջոցում, իսկ երկրորդ անգամ՝ Մարկոս Ավրելիոս Անտոնինոսի կարգադրությամբ 164 թվին[3]:

Մարկվարտը կարծում է, որ Տրայանոսից հետո, երբ Մեծ Հայաստանի գահը տրվել էր Վաղարշ Ա-ին՝ Հադրիանոսը քաղաքականապես անջատել էր Մեծ Հայաստանից Ծոփքն ու Կորդուքը և նրանց իշխանությունը հանձնել էր վերոհիշյալ Սոհեմոսին (117 թվին): Բայց հետո, երբ այս Սոհեմոսը կարգվել էր Մեծ Հայաստանի թագավոր (140/3 թ.)՝ այդ երկրները հռոմեական վարչության տակ էին առնվել և միացվել էին Կապադովկիային[4]:

Իմ կարծիքով, Մարկվարտի այս ենթադրությունները չհիմնավորված կռահումներ են, որ չեն հաստատվում փաստական վկայություններով:

[1] Մոմզենը (Römische Geschichte, V, էջ 407, ծան. 2) և Մարկվարտը («էջ մը հայ Արշակունեաց հնագոյն պատմութենէն», ՀԱ., 1906, № 2, էջ 37): Յամբլիկոսի այս խոսքերից եզրակացնում են, որ նա իր վեպը գրել էր Սոհեմոսի թագավորության ժամանակ Արտաշատում կամ Վաղարշապատում:

[2] Տե՛ս *Sandalgian*, Histoire documentaire, էջ 552 և Մարկվարտ, ՀԱ., № 2, էջ 37: Համեմատե՛ Photii Bibliotheca, 94.

[3] Տե՛ս *Халатьянц*, Очерк истории Армении, էջ 309 և 311. *Markwart*, Untersuchungen zur Geschichte von Eran, II, Leipzig, 1905, էջ 222. Ասատուրյան, Քաղաքական վերաբերություններ, էջ 210 և 215 և ուրիշները: Գաբրճյանը (Տիեզ. պատմ., Բ, էջ 175), Գարագաշյանը (Քննակ. պատմ., Բ, էջ 159), Սանդալճյանը (Histoire documentaire, էջ 552) և ուրիշները, Յամբլիկոսի վկայության սխալ թարգմանության պատճառով (փխ. «Աքեմենյան Արշակունյան Սոհեմոսի ժամանակ»՝ «Արշակունի Աքեմենիդեսի որդու՝ Սոհեմոսի ժամանակ»), Վաղարշ Ա-ի հաջորդ թյուրիմացաբար համարում են Աքեմենիդեսին, ենթադրելով, որ նա Սոհեմոսի հայրն էր և թագավորել էր Հայաստանում 140 թվից մինչև 159-ը կամ 162 թիվը:

[4] Տե՛ս «էջ մը հայ Արշակունեաց հնագոյն պատմութենէն», «Հանդէս Ամսօրեայ», 1906, թ. 2, էջ 35—36:

Հայաստանի թագավորության հանձնումը Սոհեմոսին, որը Պարթև Արշակունիների տոհմից չէր և որը թագավոր էր կարգվել առանց արքայից արքա Վաղարշ Բ-ի հավանության, չէր կարող, իհարկե, հանդուրժելի լինել պարթևներին։ Նրանք պատրաստվում էին պատերազմ սկսելու և գրավելու Հայաստանը, սակայն Անտոնինոս Պիոսը, ինչպես հաղորդում է Յուլիուս Կապիտոլինուսը, կարողացավ սոսկ նամակներով ետ կանգնեցնել նրանց այդ մտադրությունից[1]։

Դրությունը նորից սրվեց Վաղարշ Բ-ի հաջորդ Վաղարշ Գ-ի (148—191) ժամանակ։ Սրա ավելի քան քառասուն տարվա իշխանության ընթացքում ներքին խռովությունները Պարթևների երկրում բոլորովին դադարել էին և Պարթևական թագավորությունը կարող էր նրա ժամանակ իր ոտնահարված իրավունքները պաշտպանել ավելի վճռականորեն, քան առաջ։

Վաղարշ Գ-ը արդեն 154/5 թվին ուզում էր արշավել Հայաստան, բայց այս անգամ ևս, պատերազմը դեռ չսկսված, խաղաղությունը պահպանվեց շնորհիվ Անտոնինոս Պիոսի ջանքերին, որը Եփրատ գետի մոտ անձամբ տեսակցություն ունեցավ Պարթևաց թագավորի հետ[2]։

Շուտով սակայն, Անտոնինոս Պիոսի մահից (+161) անմիջապես հետո, պարթևական զորքերը Վաղարշ Գ-ի հրամանով և Խոսրով զորավարի առաջնորդությամբ մտան Հայաստան և Սոհեմոսի փոխարեն, որը փախավ Հռոմ, թագավոր դրին Արշակունի Բակուրին (161—163)։

Կապադովկիայի կուսակալ Էլիոս Սևերիանոսը, որն օգնության էր եկել, հասավ Էլեգյա (այժմյան Իլիջա, Էրզրումի մոտ) և այստեղ, Եփրատ գետի ակունքների մոտ, ծանր պարտություն կրեց Վաղարշ Գ-ի Խոսրով զորավարից։ Հռոմեական զորքն իսպառ ջընջվեց և ինքը Սևերիանոսը անձնասպան եղավ, ընկնելով իր սրի վրա[3] (161 թ.)։

Այնուհետև պարթևներն անցան Եփրատ գետը և ներխուժեցին Կապադովկիա և Ասորիք, որի Ատտիդիոս Կոռնելիանոս զորավարը նույնպես չարաչար պարտվեց և ստիպված եղավ փախչել։

Սակայն կարճ ժամանակից հետո կռվի բախտը փոխվեց։ Պարթևների հաջողությունների առաջն առնելու համար Մարկոս

[1] Տե՛ս Scriptores historiae Augustae, vita Antonini Pii, IX, 6.

[2] Տե՛ս *Aristides*, Orat. sacra 1, էջ 453—454 (հրատ. Dindorf-ի)։

[3] Տե՛ս *Lucianus*, De historia recte scribenda, 18, 19, 21, 25, 26. Նաև *Cass. Dio*, LXXI, 2, 1.

Ավրելիոսը (161—180) ուղարկեց Արևելք իր հոգեզավակ գահակից եղբորը, Լուկիոս Վերոս կայսրին (161—169), որը ժամանեց Անտիոք 163 թվի գարնանը։ Նա իր հետ բերել էր նոր ռազմական ուժեր, որոնց հրամանատարությունը հանձնված էր ընդունակ զորավարների՝ Ավիդիոս Կասսիոսին, Ստատիոս Պրիսկոսին և Մարտիոս Վերոսին։

163 թվի ամառը հռոմեական զորքերը իրենք անցան հարձակողական գործողությունների թե Հայաստանում և թե Ասորիքում ու Միջագետքում։ Այս պատերազմը, որ պաշտոնապես կոչվում էր «հայկական և պարթևական», մղվում էր երկու ուղղությամբ՝ Արտաշատի և Տիզբոնի։

Հայաստան ուղարկվեց Կապադովկիայի վրայով հատուկ մի զորաբանակ Ստատիոս Պրիսկոսի առաջնորդությամբ, որը Կապադովկիայի կուսակալն էր։ Սա կարողացավ նվաճել Հայաստանը միայն համառ կռիվներից հետո։ 163 թվի վերջերին հռոմեական զորքերը պաշարումով ու գրոհով վերցրին Արտաշատ մայրաքաղաքը, որը ենթարկվեց կողոպուտի ու ավերմունքի։

Նույն այս ժամանակ հռոմեական մի ուրիշ զորաբանակ, որը Ավիդիոս Կասսիոսի առաջնորդությամբ գործում էր Ասորիքում և Միջագետքում, հաղթեց Վաղարշ Գ-ին Եվրոպոս քաղաքի մոտ Զևգմայի հարավակողմում։ Այնուհետև Կասսիոսը մտավ հյուսիսային Միջագետք, ուր մեծ կռիվներից հետո առավ Եդեսիան և Մծբինը։

Վաղարշ Գ-ը ստիպված եղավ թողնել Միջագետքը և անցնել Տիգրիսի մյուս կողմը։ Կասսիոսը, հալածելով նրան՝ հասավ Բաբելոնիա։ Սելևկիա վիթխարի քաղաքը, հելլենական քաղաքակրթության արևելյան պատվարը, որը հոժարակամ անձնատուր էր եղել, հռոմեական զինվորները անխնա կերպով ավարի ու հրդեհի մատնեցին։ Ավերածության ենթարկվեց նաև Տիզբոն մայրաքաղաքը, ուր արքունի դղյակը հողին հավասարեցվեց (164 թվին)։

Վաղարշ Գ-ը հարկադրված եղավ փախչել իր երկրի խորքերը։ Իսկ Կասսիոսը վերադարձավ Ասորիք (165 թվին), որովհետև Սելևկիայի կործանումից հետո Պարթևստանում բռնկվել էր ժանտախտի համաճարակ, որից մահանում էին հռոմեական զինվորները։

Հայկական և պարթևական վերոհիշյալ պատերազմները, որ հիշատակված են հունա-հռոմեական բազմաթիվ աղբյուրներում, բավական ընդարձակ նկարագրված են Յուլիուս Կապիտոլինուսի և Կասսիուս Դիոնի վկայություններում, որ ավելորդ չեմ համարում մեջ բերել բառացի թարգմանությամբ լատիներենից և հունարենից։

1. Յուլ. Կապիտ., Կենսագրութ. Մարկոս Ավրելիոսի, գլ. Ը և Թ՝

«Այդ ժամանակ տեղի ունեցավ նաև պարթևական պատերազմը, որը Վաղարշը նախապատրաստել էր դեռևս Պիոսի ժամանակ, բայց հայտարարել էր Մարկոս Ավրելիոսի և Վերոսի ժամանակ՝ Ատտիդիոս Կոռնելիանոսին փախցնելուց հետո, որն այդ ժամանակ Ասորիքի կառավարիչն էր։ ...Արդ՝ պարթևական պատերազմն առաջնորդելու համար ծերակույտի հավանությամբ ուղարկվեց Վերոս եղբայրը, իսկ ինքը [Մարկոս Ավրելիոսը] մնաց Հռոմում, որովհետև քաղաքական գործերը պահանջում էին, որ կայսրը ներկա լիներ։ ...Եվ արդ Վերոսը, երբ հասավ Ասորիք, ուրախ կյանք վարեց Անտիոքի և Դափնեի մոտ և զբաղված էր զինավարժությամբ և գլադիատորական ու գազանամարտ խաղերով։ Թեև պարթևական պատերազմը նա վարում էր զորավարների միջոցով՝ ստացավ ինքը իմպերատոր անունը. ...Հայաստանում պատերազմական գործողությունները հաջող կերպով վարում էր Ստատիոս Պրիսկոսը, որը վերցրեց Արտաշատը, ուստի երկու կայսրերը ընդունեցին «Հայկական» անունը։ ...Իսկ երբ պարթևական պատերազմը ևս հաջողությամբ գլուխ բերվեց՝ երկուսն էլ ստացան նաև «Պարթևական» անունը»[1]։

2. Կասսիուս Դիոն, Հռոմեական պատմություն, LXXI, 1, 3 և 2, 1—4՝

«Լուկիոսը [Վերոսը] ուժեղ ու ավելի երիտասարդ էր և պատերազմական գործերին ավելի համամետ էր։ Եվ այդ պատճառով Մարկոս Ավրելիոսը նրան ամուսնացրեց իր դստեր՝ Լուկիլլայի հետ և ուղարկեց պատերազմի պարթևների դեմ։ Վաղարշն արդեն պատերազմը սկսել էր և նա, շրջապատելով չորս կողմից մի ամբողջ հռոմեական զորաբանակ զորավարների հետ միասին, որ գտնվում էր Էլեգեյայում, մի ինչ-որ Հայաստանի վայրում, Սեվերիանոսի հրամանատարության տակ՝ նետահար էր արել նրանց և ոչնչացրել։ Նաև Ասորիքի քաղաքների վրա նա շատ անգամ հարձակվել էր ու ահաբեկել։ Արդ՝ Լուկիոսը, գալով Անտիոք, հավաքեց մեծ զորք և ուներ իր իշխանության տակ լավագույն զորավարներ. և ինքը հաստատվեց քաղաքում, կարգավորեց ամեն ինչ, հոգալով պատերազմի կարիքները, և

[1] Տե՛ս Scriptores historiae Augustae, ed. E. Hohl, vol. I, Lipsiae, 1927, էջ 54—55։

զորքը հանձնեց Կասսիոսին։ Սա քաջությամբ դիմադրեց Վաղարշին, որ ներս էր խուժել, և վերջ ի վերջո, որովհետև դաշնակիցները նրան լքել էին՝ նահանջման ժամանակ հալածեց և ետ վանեց մինչև Սելևկիա ու Տիզբոն։ Սելևկիան նա հրդեհեց և ոչնչացրեց ու հիմնահատակ արեց Վաղարշի ապարանքը Տիզբոնում։ Իսկ վերադարձի ժամանակ նա կորցրեց իր զինվորների մեծագույն մասը սովի ու հիվանդության պատճառով, բայց ետ եկավ Ասորիք իր զորաբանակի մնացորդների հետ»[1]։

Հայաստանի նվաճումից և Արտաշատի առումից հետո հռոմեական Մարտիոս Վերոս զորավարը, որ հաջորդել էր Ստատիոս Պրիսկոսին, գահընկեց արված Բակուրի փոխարեն նորից թագավոր դրեց Սոհեմոսին, որին Մարտիոսի հանձնարարությամբ Հայաստան առաջնորդեց Թուկիդիդեսը (164 թվին)։

Ֆրոնտոյի ուշագրավ մի վկայությունից երևում է, որ հայկական գահի համար այդ ժամանակ կային երեք թեկնածուներ՝ Սոհեմոսին հաջորդած Բակուրը, նախկին թագավոր Սոհեմոսը և Վաղարշը, որը, Մարկվարտի կարծիքով[2], կարող էր թերևս լինել Պարթևաց Վաղարշ Գ-ի համանուն որդին և հետագա հաջորդը։

Ֆրոնտոյի ասելով՝ Սոհեմոսի հայկական գահի վրա հաստատումը ոմանց կողմից Հռոմում քննադատության էր ենթարկվել՝— թե ինչու գերադասելի է համարվել Հայոց թագավորությունը տալ Սոհեմոսին և ո՛չ Վաղարշին, կամ թե ինչ պատճառով գահից զրկվել է Բակուրը[3]։

Սոհեմոսը, որը հռոմեական ծերակույտի անդամ էր՝ ավելի շատ հռոմեական պաշտոնյա էր, քան ինքնուրույն թագավոր։ Նա չէր կարող հարկավ հաճելի լինել հայ մեծամեծներին։ Կասսիուս Դիոնին վերագրված մի հատվածից, որը մեջ է բերված Սուիդասի Բառգրքում (Μάρτιος բառի տակ)՝ երևում է, որ Հայաստանում բռնկվել էր մեծ ապստամբություն, որն իր մեղմ վարմունքով կարողացել էր հանդարտեցնել Մարտիոս Վերոսը։ Իր վկայության

[1] Համեմատե՛ նաև Eutropii, Breviarium, VIII, 10, 2, Juli Capitolini, Verus, VII—VIII (Scriptores historiae Augustae, Lipsiae, 1927, vol. I, էջ 79—81). Vulcacii Gallicani, Avidius Cassius, VI (Scrip. hist. Aug., 1927, vol. I, էջ 90). Fronto, Princ. hist. (հրատ. Mai-ի), էջ 318. Նույնի, Ad Verum, էջ 167. Lucianus, De historia recte scribenda, 20, 24, 28, 30.

[2] Տե՛ս «էջ մը հայ Արշակունեաց հնագոյն պատմութենէն», ՀԱ, 1906, թ. 2, էջ 38, ծան. 3։

[3] Fronto, Ad Verum (հրատ. Naber-ի), էջ 127։ Համեմատե՛ Mommsen, Römische Geschichte, V, էջ 407, ծան. 2։

մեջ, որ ավելորդ չեմ համարում մեջ բերել ընդարձակ բովանդակությամբ, Կասսիուս Դիոնը հաղորդում է՝

«որ Մարտիոս Վերոսն ուղարկել էր Թուկիդիդեսին, որպեսզի նա Սոհեմոսին վերստին բերե Հայաստան: Սա զենքի ահի ազդեցությամբ ու նաև բոլոր իրեն հանդիպողների վերաբերմամբ ցուցաբերած բարեմտության շնորհիվ հաստատուն կերպով առաջանում էր: Իսկ Մարտիոսն ընդունակ անձնավորություն էր և ո՛չ միայն զենքերով էր զսպում ընդդիմադրողներին կամ կանխում էր վտանգը արագ գործողությամբ և կամ խաբում էր խորամանկությամբ, որ հատուկ պաշտպանության միջոց էր զորավարների՝ այլև հավանեցնում էր համոզիչ խոսքերով և բարեկամություն էր շահում վեհապանծ պարգևներով կամ հրապուրում էր բարի հուսադրմամբ: ...Արդ՝ գալով Նոր քաղաքը, որը Պրիսկոսի դրած հռոմեական կայազորն էր իր ձեռքում պահում, և ապստամբության փորձ անողներին խոսքով ու գործով հնազանդեցնելուց հետո՝ նա հայտարարեց, որ Նոր քաղաքը կլինի Հայաստանի գլխավոր քաղաքը»[1]:

Ուշագրավ է նաև Կասսիուս Դիոնի մի այլ հատվածը, որի մեջ նա վկայում է, որ Հայաստանում գլխավոր ապստամբներից մեկն էր Տրդատ անունով մի նախարար, որին Մարկոս Ավրելիոսը աքսոր էր ուղարկել Բրիտանիա:

«Եվ Տրդատ սատրապին,—ասում է Դիոնը,—որը Հայաստանում խռովություններ էր առաջ բերել և սպանել էր հենիոքների թագավորին ու նաև սուրը հանել էր, սպառնալով Վերոսին, որն այդ բաների համար նրան հանդիմանել էր՝—Մարկոս Ավրելիոսը փոխանակ սպանել տալու աքսորեց Բրիտանիա»[2]:

Հայկական պատերազմը վերջանալուց հետո հռոմեական զորքերը, ըստ երևույթին, Մարտիոս Վերոսի առաջնորդությամբ մտան Մեդիա-Ատրպատական ու այստեղ ևս հաջողություն ունեցան (165 թվին). ուստի և երկու կայսրերն ընդունեցին նաև «Մեդական» տիտղոսը[3]: Գուտշմիդն այս առթիվ իրավացի կերպով

---

[1] Տե՛ս Cass. Dio, LXXI, 2, 3 (հրատ. Դինդորֆի, հատ. IV, 1864, էջ 171):

[2] Cass. Dio, LXXI, 14, 2.

[3] Հոմոն կարծում է, որ Ատրպատական ներխուժել էր 166 թվին Ավիդիոս Կասսիոսը և ոչ Մարտիոս Վերոսը. տե՛ս Histoire générale Գլոցի, հատ. III, Le Haut-Empire, Paris, 1933, էջ 562: Համեմատե՛ նաև Mommsen, Römische Geschichte, V, էջ 468:

մատնանշում է, որ Ատրպատականն այդ ժամանակ, հավանորեն, ինքնուրույն պետություն էր[1]:

Վերջապես, ավելի քան չորս տարվա պատերազմից հետո, 165 թվի վերջերին, պարթևների հետ կնքվեց խաղաղության դաշինք: Պարթևները հարկադրված եղան զիջել հռոմայեցիներին Միջագետքի արևմտյան մասը մինչև Խաբուր գետը, և Օսրոյեն-Եդեսիայի թագավորությունը դառավ Հռոմեական կայսրության վասալ, իսկ Խառան քաղաքը, որը հելլենիստական բնակչություն ուներ՝ հայտարարվեց ազատ քաղաք հռոմեական հովանավորության տակ:

166 թվին Լուկիոս Վերոսը վերադարձավ Հռոմ, և երկու կայսրերը իրենց հաղթությունները տոնեցին փառահեղ կերպով, և Հռոմում կատարվեց մեծ հաղթահանդես (166 թվի օգոստոսի 23-ին): Ի հիշատակ հայկական, պարթևական և գերմանական պատերազմների Հռոմում կառուցվեց Մարկոս Ավրելիոսի հրամանով հոյակապ մի կոթող, որի վրա քանդակված էին վերոհիշյալ անցքերը[2]: Այդ կոթողը, որ գտնվում է այժմ Հռոմում, ունի հետևյալ արձանագրությունը.

«Ավրելիոս կայսրը՝ հայերին, պարթևներին և գերմանացիներին մեծ պատերազմում հաղթելուց հետո՝ հաղթանակի այս կոթողը, իբրև կատարված գործերի հիշատակ, նվիրել է իր հորը՝ Անտոնինոս Պիոս կայսրին»:

Այս ժամանակաշրջանի պատմությանն է վերաբերում նաև մի ուրիշ կարևոր հուշարձան, որ գտնվում է նույնպես Հռոմում: Հայաստանի Բակուր թագավորը (161—163), որը գահընկեց էր արվել և տարվել Հռոմ ու այնտեղ ընդունվել կայսերական Ավրելյան ազգակնության (gens) մեջ, իր եղբոր՝ Միհրդատի համար կառուցել էր Հռոմում դամբարան, որի արձանագրությունը պահպանվել է մինչև մեր օրերը և ունի հետևյալ բովանդակությունը.

«Անդրերկրյա աստվածներին՝ Ավրելիոս Բակուր, թագավոր Մեծ Հայաստանի, գնեցի դամբանը իմ ամենաքաղցր եղբոր՝ Ավրելիոս Միհրդատի համար, որն ինձ հետ ապրեց հիսունեվեց տարի և երկու ամիս»[3]:

163—165 թվերի վերոհիշյալ հաղթանակների առթիվ Հռոմում կտրված են եղել մեծ քանակությամբ ոսկե, արծաթե և պղնձե դրամներ, որոնք պահպանվել են մինչև մեր օրերը: Այդ դրամների

---

[1] Gutschmid, Geschichte Irans, էջ 149:

[2] Տե՛ս Sandalgian, Histoire documentaire, էջ 554:

[3] Տե՛ս М. Ростовцев, Апаранская греческая надпись царя Тиридата, СПб., 1911, էջ 16: Համեմատե՛ Corpus inscrip. graec. 6559.

վրա դրոշմված են մի կողմում Մարկոս Ավրելիոսի և Լուկիոս Վերոսի գլուխները, իսկ մյուս կողմում քանդակված են այլևայլ պատկերներ, որոնք Հայաստանի խորհրդանիշներն են. օրինակ՝ հռոմեական դրոշի առջև տխուր ու տրտում նստած է մի կին, որի ներքև կա գրություն Armenia. *երբեմն Հայաստանը ներկայացված է իբրև հայ մարդ, որին սպառնում է կայսրը նիզակը ձեռին։ Ուշագրավ են Լուկիոս Վերոսի 164 և 165 թվերի ոսկի ու արծաթ դրամները. սրանց վրա Լուկիոս Վերոս կայսրը նստած է գահի վրա, հռոմեական զինվորներով շրջապատված, և պսակ է դնում Հայոց թագավորի գլխին. պատկերի շուրջը գրված է՝ «տրվեց հայերին թագավոր»* (rex Armeniis datus)[1]։

Խիստ հետաքրքրական է, որ Վաղարշ Գ-ի և Մարկոս Ավրելիոսի ժամանակաշրջանի վերոհիշյալ անցքերի մասին որոշ հիշողություններ պահպանվել են Մովսես Խորենացու Պատմության մեջ։ Մ. Չամչյանը և Կ. Կոստանյանցը շատ ճիշտ նկատել են, որ Խորենացու մոտ Սոհեմոս թագավորին համապատասխանում է Տիգրան Վերջինը[2]*։ Կարելի է ենթադրել, որ Սոհեմոս թագավորի օտարոտի անունը Հայաստանում փոխված է եղել, և նա հայ անունով կոչվել է Տիգրան։*

Խորենացու համապատասխան վկայությունները Սոհեմոս-Տիգրանի մասին կարևոր եմ համարում մեջ բերել գրեթե առանց կրճատումների։

> *«Տիրանին հաջորդեց,—պատմում է Խորենացին,—նրա եղբայրը, Տիգրան Վերջինը, որը Հայոց վրա թագավորեց Պարսից Պերոզ թագավորի [քսանև]չորրորդ տարում։ Սա մնաց քառասուն և երկու տարի թագավորելուց հետո. հիշատակի արժանի ոչ մի արության գործ ցույց չտվեց, բայց միայն թե մի հույն աղջկանից բանտարկվեց ճիշտ այն ժամանակ, երբ վախճանվել էր հռոմայեցիների Տիտոս Երկրորդ թագավորը, որն անվանվեց Անտոնինոս Օգոստոս, նաև երբ Պարսից Պերոզ թագավորը հռոմայեցիների տերության վրա արշավեց և այդ պատճառով Պերոզ կոչվեց, որ նշանակում է հաղթող. որովհետև նա առաջ հունարեն կոչվում էր Վաղեգեսոս, բայց թե պարսկերեն նրան ինչ անուն էին տալիս՝ չգիտեմ։*

[1] *Տե՛ս* Գարեգյան, *Տիեզերական պատմություն, Բ, էջ 176։*

[2] *Տե՛ս* Չամչյան, *Պատմութիւն Հայոց, հատոր Ա, Վենետիկ, 1784, էջ* 355—357. *К. Костанянц,* История Армении (краткий очерк), М., 1911, էջ 42։

Արդ՝ երբ Պերոզն Ասորիքի վրայով պաղեստինացիների կողմերն արշավեց՝ Տիգրանը ևս, նրա հրամանով ու նրան օգնելու համար, ասպատակեց Միջերկրայքը, ուր և գերի բռնվեց մի աղջկանից, որն իշխում էր այդ կողմերում, մինչ Լուկիանոս կեսարը Աթենքում շինում էր մեհյանը։ Սա Պերոզի մեռնելուց հետո մեծ զորքով Միջերկրայք գալով՝ նվաճեց Հայաստանը և ազատեց Տիգրանին։ Կեսարը կին տվեց նրան իր ազգական Ռոփի օրիորդին, որին Տիգրանը Հայաստան վերադառնալուց հետո բաց թողեց և նրանից ծնված չորս պատանիներին առանձին տոհմ դարձրեց ու իրենց Ռոփի մոր անունով Ռոփսյան կոչեց։ Իսկ նրանցից առաջինին նշանակեց գլուխ և նահապետ և դասեց մյուս նախարարների շարքում, որպեսզի Արշակունի չանվանվեն։

Իսկ կրտսեր նախարարական տոհմերը՝ թե այստեղ և թե Կորճայքի կողմերում՝ հաստատել է այս Տիգրանը. սրանք միանգամայն ցած ազգ մարդիկ էին և հեծելազորով աննշան, բայց անձամբ երևելի էին և Տիգրանին փրկելու համար պատերազմել էին հույների հետ»[1]*։*

[«Փոխանորդէ զՏիրան եղբայր իւր Տիգրան Վերջին, թագաւորեալ Հայոց ի քսաներորդի և ի չորրորդի ամի Պերոզի Պարսից արքայի. և երկայնակեաց եղեալ ամս քառասուն և երկու՝ մեռանի, ոչ ինչ գործ արութեան արժանի յիշատակի ցուցեալ, այլ ի յաղջկանէ միոջէ յունէ ի կալանս ըմբռնեալ, ի ժամանակին յորում վախճանեցաւ Տիտոս երկրորդ թագաւոր Հռոմայեցւոց, որ անուանեցաւ Անտոնինոս Աւգոստոս։ Եւ Պերոզ արքայ Պարսից ի Հռոմայեցւոց իշխանութիւնն արշաւեաց, ուստի և Պերոզ անուանեցաւ, որ է յաղթող. քանզի յառաջ անուանէր Վաղեգեսոս ի յունաց լեզուն. բայց թէ Պարսք զի՛նչ կոչեն զնա՝ ոչ գիտեմ։

Արդ՝ յասպատակելն Պերոզի ընդ Ասորիս ի կողմանս Պաղեստինացւոց, վասն նորա և հրամանաւ նորին՝ և մերն Տիգրան ի Միջերկրեայս ասպատակեալ և ի կալանս ըմբռնեալ յաղջկանէ միոջէ իշխելոյ կողմանցն այնոցիկ, մինչ դեռ Ղուկիանոս կեսար յԱթէնս զմեհեանն շինէր, որոյ և անցեալ զօրօք բազմօք ի Միջերկրեայսն յետ մեռանելոյն Պերոզի նուաճեաց զՀայս, և արձակեաց զՏիգրան։ Եւ զՌոփի զկոյս, զմերձաւոր իւր, նմա կնութեան. զոր եկեալ ի Հայս ի բաց

[1] *Տե՛ս* Խորենացի, *Հայոց պատմություն, 1940, II գլ., էջ 132—133։*

թողու, և ըլեալ ի նմանէ պատանիս չորս՝ ազգ սերէ յանուն մօրն իւրեանց Ռոփեայ՝ Ռոփսեան. և զառաջին մանկանցն՝ զլուխ նահապետ կացուցանէ, և կարգէ ընդ այլ նախարարութիւնս, զի մի՛ անուանեսցին Արշակունիք:

Եւ այլ որ ինչ կրտսերագոյն ազգք, եթէ աստ և եթէ զկողմամբք Կորճէից, հաստատէ այս Տիգրան. որք միանգամ անազգիք էին ի վաշտս և անձամբ երևելիք, և վասն նորա փրկութեան պատերազմեալ ընդ Յոյնս»][1]:

Տիգրան Վերջինի այս պատմության համար, ինչպես մատնանշում է ինքը՝ Խորենացին, իրեն աղբյուր է ծառայել, գլխավորապես, Եդեսացի Բարդածանի[2] (154—222) պատմական երկը: Այս տեղեկությունը բացառիկ կերպով կարևոր է ու հետաքրքիր: Խալաթյանցը, որն այս ցուցումը համարում է կեղծիք, ուշադրության չէ առել, որ վերև բերված տեքստի մեջ, բացի Եվսեբիոսի ժամանակագրությունից քաղված վկայություններից, կան նաև այնպիսի տեղեկություններ, որոնք Խորենացին կարող էր քաղած լինել միմիայն հին աղբյուրից, ինչպիսին էր Բարդածանի երկը[3]:

Խորենացու վկայությունների մեջ ճիշտ չեն, անշուշտ, նրա հաղորդագրությունները, որ Տիգրան Վերջինը Պերոզի հրամանով ապստամբել էր Միջերկրյայքը ու այնտեղ գերի էր բռնվել, և որ Լուկիոս կայսրը մեհյան էր շինել Աթենքում: Սակայն Խորենացին միայն հին արժանահավատ աղբյուրից կարող էր իմանալ, որ Պերոզ-Վաղարշ Գ-ը (148—191), որին նա թյուրիմացաբար նույնացրել է Վաղարշ Բ-ի հետ (130—148)՝ արշավել էր հռոմեական երկիրը ճիշտ այն թվին, երբ վախճանվել էր Անտոնինոս Պիոսը, այսինքն՝ 161 թվին:

Ըստ երևույթին, նույն կարևոր աղբյուրից նրան հայտնի է եղել և այն, որ Տիգրան Վերջինը վերադարձել ու վերստին թագավորել էր Հայաստանում Լուկիոս Վերոս կայսեր ժամանակ և վերջինիս օժանդակությամբ:

Մինչև երբ է թագավորել Սոհեմոս-Տիգրանը Հայաստանում՝ այդ մասին մենք ոչ մի տեղեկություն չունենք: Պատմագիտական երկերում, առանց որևէ լուրջ հիմքի, Սոհեմոսի թագավորության վերջին տարին ենթադրում են 169 կամ 178 և կամ 185 թվին:

1 *Տե՛ս* Խորենացի, *II, գլ. ԿԴ:*

2 *Տե՛ս A. Baumstark*, Geschichte der syrischen Literatur, Bonn, 1922, *էջ 12—14:*

3 *Տե՛ս Г. Халатьянц*, Армянские Аршакиды в „Истории Армении" Моисея Хоренского, М., 1903, *էջ 108—111:*

Ուշադրության արժանի է, որ ըստ Խորենացու վկայության, Տիգրան Վերջինը թագավորել էր Հայաստանում քառասուներկու տարի և մեռել էր իր բնական մահով: Ըստ այս վկայության, Սոհեմոս-Տիգրանը թագավորած պիտի լիներ Հայաստանում մոտավորապես մինչև 185 թիվը (140/3—161 և 164—185?):

166 թվից հետո մինչև Սեպտիմիոս Սևերոս կայսրը (193—211) Հայաստանում տեղի ունեցած պատմական անցքերի մասին մենք գրեթե տեղեկություն չունենք:

Այս անհայտ ժամանակաշրջանին են վերաբերում Վաղարշապատում գտնված 175 և 185 թվերի լատիներեն արձանագրությունները, որոնցից հայտնի է մեզ, որ Հայաստանի այդ մայրաքաղաքի մոտ, կամ թերևս հենց իր մեջ, գտնվել է այդ ժամանակ 15-րդ Ապոլլոնյան լեգեոնի մի զորամասը (vexillatio), *որը եղել է զինվորական տրիբունի հրամանատարության տակ[1]: Այդ երկու արձանագրությունները մանրամասն լուսաբանել է Մ. Ռոստովցևը[2]:*

1 *Տե՛ս Dessau*. Inscriptiones latinae selectae 9117 *և* Corpus inscriptionum latinarum, III, 6052.

2 *Տե՛ս М. И. Ростовцев*, Изв. Арх. Комм., вып. 33, 1909, *էջ 1 են.:*

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՍԵՊՏԻՄԻՈՍ ՍԵՎԵՐՈՍԻ ԵՎ ԱՆՏՈՆԻՆՈՍ ԿԱՐԱԿԱԼԼԱՅԻ ԱՐՇԱՎԱՆՔՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ

1. Հայաստանի մոտ հարյուր տարվա պատմության խառնաշփոթ լուսաբանումները։— 2. Վաղարշ Բ.— գահակալական կռիվները Հռոմում և Հայաստանի չեզոքությունը.— հայերի հաշտությունը Սևերոսի հետ։— 3. Սևերոսի արշավանքները Արևելքում։— 4. Միջագետքի և Հայաստանի քաղաքական դրության կարգավորումը։— 5. Խորենացու կարևոր տեղեկությունները Վաղարշ Բ-ի և Խոսրով Ա-ի մասին.— այդ տեղեկությունները էությամբ պատմական են։— 6. Վաղարշ Բ-ը հիմնադիր Արշակունիների դինաստիայի Հայաստանում։— 7. Խոսրով Ա։— 8. Կարակալլայի արշավանքը.— Խոսրով Ա-ի բանտարկումը։— 9. Թեոկրիտոս զորավարի պարտությունը Հայաստանում։— 10. Կարակալլայի պարթևական արշավանքը։— 11. Պարթևների հաշտությունը Մակրինոսի հետ և Տրդատ Բ-ի գահակալությունը։

Հայաստանի մոտ հարյուր տարվա պատմությունը, սկսած երկրորդ դարի վերջերից մինչև երրորդ դարի վերջերը՝ համարվում է հայ ժողովրդի պատմական անցյալի ամենամութ շրջանը։ Մ. Աբեղյանը, քննության առնելով Խալաթյանցի, Սանդալճյանի, Ասատուրյանի, Տաշյանի, Գևորգ Ասլանի, Մորգանի և Գարագաշյանի այս ժամանակաշրջանի վերաբերյալ գրածները՝ մատնանշում է, որ այս յոթ հեղինակները յոթ տեսակ պատմություն են գրել, որ չհիմնավորված ենթադրություններ են[1]*։*

Այս դատավճիռն այնքան էլ ճիշտ չէ։ Աբեղյանի մատնանշած խառնաշփոթումները, որ հիմնված են, մեծ մասամբ, Կասսիուս Դիոնի վերոհիշյալ սխալ հասկացված վկայության վրա Սանատրուկի որդի Վաղարշի մասին, միանգամայն հասկանալի են և ներելի։ Պետք է ասել, որ ինքը՝ Աբեղյանը ևս, աշխատելով ուղղել նրանց սխալները, արել է մի նոր՝ նույնպես անհաջող ենթադրություն։ Նա թյուրիմացաբար եզրակացրել է, որ Մեծն Խոսրով անունով հայ թագավոր երրորդ դարում գոյություն չէ ունեցել և որ հայկական աղբյուրներում հիշատակված Խոսրով Մեծը վիպական անձ է։

Ճիշտ է, իհարկե, որ հույն-հռոմեական հեղինակները, որ հայոց հին պատմության հիմնական աղբյուրներն են, պատմական այս շրջանի մասին տալիս են սակավաթիվ ու կցկտուր տեղեկություններ։ Սակայն, ինչպես կտեսնենք, զուգակցելով և բաղդատելով այդ տեղեկությունները հայկական աղբյուրների պատմական-վիպական վկայությունների հետ՝ հնարավոր է տալ այս ժամանակաշրջանի քաղաքական պատմությունը և լուսաբանել Հայոց թագավորների հաջորդական կարգը ավելի ճշգրիտ և ավելի հիմնավոր կերպով, քան այդ արված է պատմագիտական նախկին աշխատություններում։

Սոհեմոս-Տիգրանից հետո Հայաստանում թագավորել են ո՛չ թե Սանատրուկը և ապա նրա որդին՝ Վաղարշը, ինչպես թյուրիմացաբար մատնանշվում է Գաթրճյանի, Գարագաշյանի, Գևորգ Ասլանի, Խալաթյանցի, Լեոյի, Սանդալճյանի և ուրիշների պատմական երկերում[1]*, այլ, ինչպես շատ ճիշտ վկայում է Մովսես Խորենացին, հիմնվելով Բարդածանի և Փիրմիլիանոսի վկայությունների վրա՝ նախ Վաղարշը, որ Վաղարշ Բ-ն է (գահակալել է երկրորդ դարի 80-ական թվականներին, կամ 90-ական թվականների սկզբներին) և ապա՝ նրա որդին, Խոսրովը, որ Խոսրով Ա-ն է (+216 թ.)։*

Վաղարշ Բ-ը, որը, Գ. Ասլանի կարծիքով[2]*, կարող էր լինել պարթևական Վաղարշ Դ թագավորի (191—208) եղբայրը կամ եղբորորդին, ըստ երևույթին, կարողացել էր Հայաստանի գահը գրավել Կոմմոդոս կայսեր (180—192) իշխանության խառնակ շրջանում և կամ գահակալական կռիվների ժամանակ, որ ծագել էին Հռոմեական կայսրության մեջ Կոմմոդոսի սպանությունից հետո, 193—194 թվերին։*

Ինչպես հայտնի է, երբ Կոմմոդոսի սպանությունից հետո պրետորիանները սպանեցին նաև Պերտինաքս և Դիդիոս Յուլիանոս կայսրերին (193 թվին)՝ Հռոմեական կայսրության զանազան կող-

[1] *Տե՛ս* Մ. Աբեղյան. *Հայոց հին գրականության պատմություն, I, Երևան, 1944, էջ 591—603։*

[1] *Տե՛ս* Գաթրճյան, *Տիեզերական պատմություն, Բ, էջ 176—177.* Գարագաշյան, *Քննական պատմություն Հայոց, Բ, էջ 262—264. Aslan K.*, Études historiques sur le peuple arménien, Paris, 1909, *էջ 131—134. Халатьянц,* Очерк истории Армении, *էջ 314—318.* Լեո, *Հայոց պատմություն, Ա, էջ 476—477. Sandalgian*, Histoire documentaire, *էջ 556—559 և ուրիշները։*

[2] *Aslan K.*, Études historiques, *էջ 133։*

մերում հայտնվեցին կայսերական գահի երեք նոր թեկնածուներ՝ Նիգերը Ասորիքում, Սեպտիմիոս Սևերոսը Իլլիրիայում և Ալբինոսը Բրիտանիայում:

Գահակալական կռիվների ժամանակ Պեսկեննիոս Նիգերը, որին ճանաչել էին իբրև հռոմեական կայսր Պարթևաց թագավոր Վաղարշ Դ-ը և արևելյան վասալ հռոմեական պետությունները՝ խնդրեց սրանցից ռազմական օգնություն: Այդ օգնությունը նրան ուղարկեցին Օսրոյեն-Եդեսիայի թագավոր Աբգար Թ-ը և Հատրայի իշխան Բարսեմիոսը: Սակայն Հայաստանի Վաղարշ Բ թագավորը մնաց չեզոք և հրաժարվեց օգնել Նիգերին:

Հայաստանի չեզոքության մասին մանրամասն տեղեկություն է տալիս երրորդ դարի առաջին կեսի պատմիչ Հերոդիանոսը:

«Նիգերը,—վկայում է այս հեղինակը,—մարդ ուղարկեց Պարթևաց, Հայոց և Հատրացոց թագավորների մոտ խնդրելու նրանցից օգնություն: Արդ՝ Հայոց թագավորը պատասխանեց, որ նա ոչ ոքին չէ օգնելու, սակայն եթե Սևերոսն իր վրա հարձակվելու լինի՝ ինքը պատրաստ է իր երկիրը պաշտպանել: Իսկ Պարթևաց թագավորն ասաց, որ կկարգադրի իր կուսակալներին զորք գումարել. այսպես էին նրանք սովորաբար անում, երբ հարկավոր էր զորք հավաքել, որովհետև չունեին վարձկան զորք և մնայուն զինապարտներ: Հատրացոց թագավորն ուղարկեց օգնության Նիգերին աղեղնավորների մի գունդ»[1]:

194 թվի աշնան սկզբներին Նիգերը վերջնականապես պարտվեց Կիլիկիայում Իսոսի մոտ և փախուստի ժամանակ սպանվեց: Այնուհետև Սեպտիմիոս Սևերոսը եկավ Միջագետք, որպեսզի հաշիվ տեսնի Նիգերի դաշնակիցների հետ: Հայոց թագավոր Վաղարշ Բ-ը, որ չեզոքություն էր պահպանել՝ կարողացավ հաշտություն կնքել նրա հետ, ուղարկելով նրան հարուստ նվերներ և պատանդներ:

«Արդ՝ պատրվակ բռնելով,—վկայում է դարձյալ Հերոդիանոսը,—որ Հատրացոց Բարսեմիոս թագավորը դաշնակից է եղել Նիգերի՝ նա [Սևերոսը] արշավեց Արևելք: Գալով այստեղ՝ նա ուզեց ներխուժել Հայաստան: Բայց Հայոց թագավորը շտապեց թախանձանքով կանխել այդ և ուղարկեց նրան փող, նվերներ ու պատանդներ, խոստանալով նրան զինակցություն ու բարեկամություն: Եվ Սևերոսը, երբ հայկական գործերը հաջողվեցին ըստ իր ցանկության՝ առաջ շարժվեց Հատրացոց դեմ»[1]:

[1] Տե՛ս *Herodianus*, Ab excessu D. Marci libri VII, ed. K. Stavenhagen, Lipsiae, 1922, III, 1. 2.

Հռոմեական ներքին խռովությունների ժամանակ խորապես խառնակվել էր նաև Մերձավոր Արևելքը: Նիգերի նախկին դաշնակիցները՝ ադիաբենցիներն ու հատրացիները, որոնք բռնի կերպով գրավել էին Միջագետքի հռոմեական ամրությունները՝ պահանջում էին, որ հռոմեական զորքերը ետ քաշվեն և այդ երկրամասերը վերադարձվեն իրենց: 195 թվին Սեպտիմիոս Սևերոսը մտավ Միջագետք և ո՛չ միայն ապստամբներին դուրս վտարեց այստեղից, այլև նվաճեց նոր երկրամասեր: Շուտով սակայն, երբ Սևերոսի և Ալբինոսի միջև գահակալության նոր պատերազմ ծագեց, պարթևները վերագրավեցին Միջագետքը և պաշարեցին Մծբին քաղաքը (196 թվին):

Սևերոսը Ալբինոսին հաղթելուց հետո եկավ 197 թվին Ասորիք և նորից արշավեց Միջագետք: Նրան ընդառաջ եկավ ապստամբության մասնակից Օսրոյեն-Եդեսիայի թագավոր Աբգար Թ-ը, որը նրան վերստին հպատակություն հայտնեց և ճանաչվեց նորից իբրև վասալ թագավոր: Պարթևների թագավոր Վաղարշ Դ-ը Մծբինի պաշարումը վերացրեց և ետ քաշվեց:

198 թվին հռոմեական զորքերը Սևերոսի առաջնորդությամբ իջան Եփրատ գետի երկարությամբ Բաբելոնիա և, նավարկելի դարձնելով Եփրատը Տիգրիսի հետ միացնող հին ջրանցքը՝ ուղղվեցին դեպի Տիգրիս գետը, ուր հանկարծակի բերին պարթևական զորքը և մատնեցին ծանր պարտության: Նրանք վերցրին այստեղ Բաբելոն և Սելևկիա քաղաքները, որոնք պարթևների կարգադրությամբ արդեն ավերված ու դատարկված էին: Տիզբոն քաղաքը, որ անձնատուր էր եղել, մատնվեց կողոպուտի ու կոտորածի:

Պարթևական այս արշավանքը մանրամասն հիշատակված է Կասսիոս Դիոնի հետևյալ հատվածում.

«Այնուհետև,—պատմում է Դիոնը,—Սևերոսը ռազմի ելավ պարթևների դեմ, որովհետև՝ երբ նա քաղաքացիական կռվով էր զբաղված՝ նրանք, վախ չունենալով, տիրել էին Միջագետքին և արշավել էին այնտեղ մեծ բազմությամբ: Նրանք քիչ էր մնացել, որ վերցնեին նաև Մծբինը, բայց Լետոսը փրկեց քաղաքը, որի մեջ ինքը պաշարված էր: Եվ այս քաղաքի

[1] Տե՛ս *Herodianus*, Ab excessu D. Marci libri VII, ed. K. Stavenhagen, Lipsiae, 1922, III, 9. 2.

պատճառով սա, Լետոսը, ավելի ևս հռչակվեց, թեև նա գերազանց էր և այլ գործերում՝ թե մասնավոր և թե հասարակական, ինչպես պատերազմների ընթացքում, նույնպես և խաղաղ ժամանակ։ ...Իսկ պարթևները չմնացին մինչև Սևերոսի գալը, այլ ետ քաշվեցին իրենց երկիրը։ Նրանց առաջնորդն էր Վաղարշը, որի եղբայրը [Տրդատը] ուղեկցում էր Սևերոսին։

Արդ՝ Սևերոսը, պատրաստելով նավեր Եփրատ գետի վրա և նավելով ու հետիոտն չվելով նրա երկարությամբ ...արագ կերպով առավ Սելևկիան ու Բաբելոնը, որոնք դատարկված էին։ Այնուհետև, վերցնելով նաև Տիզբոնը՝ թույլ տվեց, որ ամբողջ այդ քաղաքը կողոպտեն զինվորները. և մարդկանց մեծ կոտորած նա գործեց, իսկ կենդանի մնացածներին՝ մոտ 100.000 մարդ գերեց։ Սակայն Վաղարշին նա չհալածեց և Տիզբոնում չմնաց, այլ՝ իբր այդ արշավանքը միայն այն նպատակով էր, որպեսզի կողոպտի քաղաքը՝ ետ եկավ, որովհետև ծանոթ չէր տեղերին ու նաև պարենի պակասության պատճառով»[1]։

Սեպտիմիոս Սևերոսի հաղթական այս արշավանքի հետևանքն այն եղավ, որ Հռոմեական կայսրության արևելյան սահմանն առաջ տարվեց մինչև Տիգրիս գետը։ Կայսրությանը միացված հյուսիս-արևմտյան Միջագետքի ռազմական կենտրոնը դառավ Մծբինը, մինչդեռ Օսրոյեն-Եդեսիան, ինչպես վերև տեսանք, մնաց իբրև Հռոմին ենթակա վասալ թագավորություն։

Ուշագրավ է խիստ, որ Հայաստանը, որի կախումը Հռոմից Սոհեմոս-Տիգրանի ժամանակ շատ մեծ եղած չէր՝ Սեպտիմիոս Սևերոսի ժամանակ ձեռք բերեց կարևոր արտոնություններ։ Հռոմեական կայազորը, որ գտնվում էր Վաղարշապատում, դուրս տարվեց Հայաստանից և Հայոց թագավորին թույլ տրվեց ունենալ հայկական զորքեր, որի պահպանության համար կայսրությունը համաձայնել էր վճարել յուրաքանչյուր տարի որոշ դրամական նպաստ[2]։

Մարկվարտի կարծիքով, այդ նպաստը տրվում էր հայ թագավորներին Կովկասյան անցքերին վերահսկելու համար, որպեսզի

[1] Տե՛ս *Cass. Dio*, LXXV, 9, 1—4 Համեմատե՛ նաև Aeli Spartiani, Severus, XV—XVI (Scriptores historiae Aug., ed. Hohl, vol. 1, Lipsiae, 1927, էջ *147—148*). Amm. Marc. XXIV, 6, 1.

[2] Տե՛ս *Mommsen*, Römische Geschichte, V, էջ *411*. *Халатьянц*, Очерк истории Армении, էջ *319*. *Tournebize*, Histoire politique et religieuse de l'Arménie, էջ *798* և ուրիշները։

հյուսիսային բարբարոս ցեղերը չասպատակեն Հայաստանը և հռոմեական երկրները[1]։

Վաղարշ Բ-ի և նրա որդի Խոսրով Ա-ի մասին կարևոր են ու հետաքրքիր նաև այն տեղեկությունները, որոնք մեջ են բերված Խորենացու Պատմության երկրորդ գրքի ԿԵ և ՀԵ գլուխներում։ Թեև Խորենացու այդ գլուխներում մանրամասնությունները իր՝ Խորենացու հնարումներն ու հավելվածներն են, սակայն նրա հաղորդած տեղեկությունների իրական հենքը, որին աղբյուր են ծառայել Բարդածանի և Փիրմիլիանոսի վկայությունները, ըստ էության պատմական է։

Խորենացու Պատմության այդ տեղեկությունները մեջ ենք բերում մանրամասն կերպով։

1. Խորենացի, գիրք Բ, գլուխ ԿԵ՝

«Տիգրանի մահից հետո թագավորում է նրա որդին, Վաղարշը, իր հոմանուն Վաղարշի, Պարսից թագավորի, երեսուներորդ տարում։ Սա մի մեծ ավան է շինում իր ծննդյան տեղում, ուր նրա մայրը, Այրարատ ձմեռանոցը գնալու ժամանակ, հանկարծ երկունքից բռնվելով, նրան ծնեց ճանապարհի վրա՝ Բասեն գավառի այն տեղում, որտեղ իրար են խառնվում Մուրց և Երասխ գետերը։ Վաղարշն այստեղ ավան շինեց և իր անունով կոչեց Վաղարշավան։ Սա պարսպով պատեց նաև Վարդգեսի հզոր ավանը, որը գտնվում է Քասաղ գետի վրա։ ...Սա, քսան տարի թագավորելով՝ մեռավ։ Թեև ուրիշները ևս սոսկ ապրել են, բայց սրա մասին կասեմ, որ սա մահից հետո ևս շարունակում է ապրել իր բարի անվան պատճառով՝ ավելի քան թուլագույնները թագավորներից։ Որովհետև սրա օրով հյուսիսականների, այսինքն՝ խազիրների և բասիլների, միաբանած բազմությունը Ճորա դռնից դուրս եկավ, իրեն առաջնորդ և թագավոր ունենալով Վնասեպ ոմն Սուրհապին, և, անցնելով Կուր գետը՝ խուժեց այս կողմը։ Նրանց դեմ դուրս եկավ մեծ բազմությամբ և կռվող մարդկանցով Վաղարշը, որը ցրեց, դաշտի երեսը փըռեց բազմությունը և, երկար տեղ նրանց հետապնդելով՝ անցավ Ճորա կապանով։ Այստեղ թշնամիները նորից միացան և ճակատամարտ տվին, իսկ Հայոց քաջերը թեև նրանց հաղթեցին և ի փախուստ դարձրին, սակայն Վաղարշը մեռավ կորովի աղեղնավորների ձեռքից։

Եվ թագավորությունն առավ նրա Խոսրով որդին Պարսից Արտավան թագավորի երրորդ տարում։ Նա իսկույն Հայոց զոր-

[1] *Markwart*, Eranschahr, էջ *102*։ Համեմատե՛ Cass. Dio, LXXVIII, 27, 4.

քերը հավաքեց և անցավ մեծ լեռը, որպեսզի իր հոր մահվան վրեժն առնի. Նա սրով և տեգով դուրս վանեց այդ հզոր ազգերին, յուրաքանչյուր հարյուր պիտանի մարդկանցից մեկը պատանդ առավ և իբրև իր իշխանության նշան մի արձան կանգնեցրեց հունարեն գրով, որպեսզի հայտնի լինի, որ ինքը հպատակվել է հռոմայեցիներին»:

[«Յետ մահուան Տիգրանայ թագաւորէ Վաղարշ որդի նորին յերեսներորդի և երկրորդի ամի հռոմանուանն խորոյ Վաղարշայ Պարսից արքայի: Սա շինէ աւան մեծ զտեղի ծննդեան իւրոյ ի վերայ ճանապարհին. ուր ի գնալ մօր իւրոյ ի ձմերոց յԱյրարատ, յանկարծակի պատահեալ երկանց ի գնացան՝ ծնաւ ի վերայ ճանապարհին, ի գաւառին Բասենոյ, ի տեղւոջն, ուր խառնին Մուրց ու Երասխ. զոր շինեաց յիւր անուն և կոչեաց Վաղարշաւան: Սա պատեաց պարսպաւ և զհզօր աւանն Վարդգէսի...: Սա, թագաւորեալ ամս քսան՝ մեռաւ: Թէ լոկ և այլքն կեցին, բայց ասեմ զսա և յետ մահուանն կեալ, յաղագ բարի անուանն քան զթուլագոյնս ի թագաւորացն: Վասն զի ի սորա աւուրս միաբանեալ ամբոխութիւն հիւսիսականաց, զխազրաց ասեմ և զԲասլաց, արտաքս քան զդուռն Ճորայ եկանեն, առաջնորդ և թագաւոր ունելով ինքեանց զՎնասեպ ումն Սուրհապ. որք անցեալ վտարին այսր զԿուր գետով: Որոց պատահեալ Վաղարշ ամբոխիւ մեծաւ և արամբք մարտիկօք՝ ցիր զիաթաւալ կացուցանէ զամբոխն ընդ երեսս դաշտին, և ձիգ զհետ եղեալ՝ անցանէ ընդ կապանն Ճորայ: Ուր միւսանգամ միաբանեալ թշնամեացն՝ յօրինեցին ճակատ. զորս թէպէտ և վանեալ քաջացն Հայոց՝ փախստականս առնէին, սակայն Վաղարշ մեռանի ի ձեռաց կորովեաց աղեղնաւորաց:

Եւ առնու զթագաւորութիւնն Խոսրով որդի նորին յերրորդ ամի Արտաւանայ Պարսից արքայի: Եւ նոյն հետայն միաբանեալ զզօրս Հայոց, անցանէ ընդ լեառնն մեծ, վրէժս պահանջելով զմահուան հօրն. և վանեալ սրով և գեղարդեամբ զհզօր ազգսն պայծառ, մի ի հարիւրոց յամենեցունց պատանեացն առնու պատանդս. և զիւրոյ տէրութեանն նշանակ՝ արձան հաստատէ հելլենացի գրով, որպէս զի յայտ լիցի ընդ հնազանդութեամբ լինել Հռոմայեցւոց»]:

2. Խորենացի, գիրք Բ, գլուխ ՀԵ՝

«Նա [Փիրմիլիանոսը] գրում է, որ շատերը նահատակվեցին Խոսրովից նաև մեր աշխարհում և ապա նրանից հետո ուրիշները ուրիշներից: Բայց որովհետև հավաստի և կարգին չէ

պատմում և չէ նշանակում անունները կամ նահատակության տեղերը՝ ուստի և մենք հարկավոր չհամարեցինք կրկնել: Նմանապես և Սեվերոսի որդու Անտոնինոսի մասին ասում է, որ նա պատերազմել է Պարսից Վաղարշ թագավորի դեմ Միջագետքում և մեռել է Եդեսիայի և Խառանի միջև, իսկ մեր Խոսրովը ոչ մեկի կողմը չէ անցել»:

[«Գրէ զբազումս վկայեալս ի Խոսրովայ, ի մերում աշխարհիս, համայն և յետ նորա օտարք յօտարաց: Բայց զի ոչ ճշմարտութեամբ և ոճով պատմէ, և ոչ զանուանսն նշանակէ կամ զտեղիս կատարմանցն՝ ոչինչ կարևորագոյն համարեցաք երկրորդել: Նոյնպէս և զԱնտոնինէ որդւոյ Սևերեայ ասէ՝ պատերազմեալ ընդ Վաղարշայ Պարսից արքայի ի Միջագետս, և մեռանել ի մէջ Եդեսիայ և Խառանու, և մերոյն Խոսրովու ոչ յոք հակամիտեալ»]:

Խորենացու այս վկայությունների մեջ անհավաստի է, հարկավ, նրա հաղորդագրությունը, որ իբր թե Խոսրովի հայր Վաղարշն էր «պատել պարսպով և հզոր պատվարով» Արտիմեդ քաղաքը, որն իր անունով անվանել էր Վաղարշապատ: Իսկ, իրապես, ինչպես մենք վերև տեսանք, այդ արել էր ո՛չ թե այս Վաղարշը, այլ Սանատրուկի որդի Վաղարշ Ա-ը: Ավելի քան հավանական է, որ Վաղարշապատը, որը 164 թվին հայտարարվել էր Հայաստանի գլխավոր քաղաք, ունեցած պիտի լիներ և՛ պարիսպ, և՛ պատվար Վաղարշ Բ-ից առաջ: Խորենացու սխալ ենթադրությունը ծագել է նրանից, որ նրան հայտնի է եղել միմիայն մեկ Վաղարշ, որը Խոսրով Ա-ի հայրն էր:

Տարակուսելի է, իհարկե, Խորենացու հեքիաթային պատմությունը նաև Վաղարշավանի մասին: Սակայն մեջ բերված վկայությունների մյուս մասերում իրենց հիմքում հավաստի են ու պատմական հյուսիսականների արշավանքը Հայաստան, Վաղարշի ըսպանությունը, Խոսրովի վրեժխնդրությունը և հունարեն գրով արձանի մասին տեղեկությունը:

Հասկանալի է ըստ ինքյան, որ Խորենացին, օգտվելով իր Պատմության այս մասում Բարդածանի աշխատությունից, սրա վկայությունները, ըստ իր սովորության, մշակել և ընդարձակել էր և շատ բան իրենից էր ավելացրել: Նրա սեփական ենթադրությունն է, ըստ երևույթին, այն, որ արշավող հյուսիսականները խազիրներն էին ու բասիլները, որոնք ներխուժել էին Հայաստան Ճորա պահակի, այսինքն՝ Դերբենտի կողմով:

Հյուսիսականների արշավանքը, որի ընթացքում սպանվել էր Վաղարշ Բ-ը, Մարկվարտը ենթադրում է 198 թվին, իսկ Խալաթ-

յանցը, որն արշավողներին համարում է ալաններ, 196 թվին[1]: Նրանց այս ենթադրությունները, որ սոսկ կռահումներ են, չեն կարող ընդունելի համարվել: Հավանական է, սակայն, որ աշխարհավեր այս արշավանքի պատճառով էր, որ Հռոմեական կայսրությունը Սեպտիմիոս Սեվերոսի ժամանակ որոշել էր դրամական նպաստ տալ Հայոց թագավորներին Կասպյան անցքի պաշտպանությունը հոգալու համար:

Վերոհիշյալ մեր դիտողությունները Վաղարշ Բ-ի և Խոսրով Ա-ի մասին, եթե նրանք ընդունելի համարվեն, կունենան մեծ կարևորություն: Ինչպես հայտնի է, Տրդատ Ա-ի և նրա հաջորդների ժամանակ Հայոց թագավորությունը չդառավ ժառանգական նրանց շառավիղների գծով: Արշակունյաց հարստության հաստատումը Հայաստանում, այսինքն՝ նրանց թագավորումը որդեցորդի, ինչպես այդ մատնանշել է Գևորգ Ասլանը[2], սկսվել էր միմիայն երկրորդ դարի վերջերում, և Հայ Արշակունիների դինաստիայի հիմնադիրն է Վաղարշ Բ-ը: Կարելի է, ուրեմն, ենթադրել, որ Խորենացու Պատմության Վաղարշակը, որը Հայ Արշակունիների նախահայրն էր, հիշողությունն է ո՛չ թե Տրդատ Ա-ի կամ պարթևական թագավոր Վաղարշ Ա-ի, ինչպես այդ ընդունում են հայագետներից ոմանք[3], այլ Խոսրով Ա-ի հայր Վաղարշ Բ-ի:

Վաղարշ Բ-ին հաջորդել էր նրա որդին՝ Խոսրով Ա-ը: Ենթադրում են, որ Եգիպտոսում Թեբե քաղաքում գտնված հունարեն արձանագրությունը՝ «Խոսրով հայ տեսեալ զարմացայ»՝ վերաբերում է այս Խոսրով Ա. թագավորին[4]: Այս ենթադրությունը կարող է, իհարկե, վիճելի համարվել: Սակայն, անկախ այս արձանագրությունից, Խոսրով Ա. թագավորի գոյությունը Սեպտիմիոս Սեվերոսի (193—211) և Անտոնինոս Կարակալլայի (211—217) ժամանակ միանգամայն անտարակուսելի է, որովհետև նա հիշատակված է

1 Տե՛ս *Markwart*, Eranschahr, էջ 102, ծան. 4. *Халатьянц*, Очерк истории Армении, էջ 318:

2 Տե՛ս *K. Aslan*, Etudes historiques sur le peuple arménien, էջ 135:

3 Տե՛ս «Հայկական աշխատասիրութիւնք հայագէտ Պ. Ֆէթթէրի», թարգմ. Տաշյանի, Վիեննա, 1895, էջ 124. Աբեղյան Մ., Հայ ժողովրդական առասպելները, Վաղարշապատ, 1901, էջ 489, ծան. 1. *Адонц*, Армения в эпоху Юстиниана, СПб., 1908, էջ 432. Բասմաջյան Կ., Իսկական պատմութիւն Հայոց, Կ. Պոլիս, 1914, էջ 101 և ուրիշները:

4 Տե՛ս Corpus inscr. graec. 4821. Նաև *Gutschmid*, Agathangelos, Zeit der Deut. Morg. Gesell., XXXI (1877), էջ 49. Տաշյան, Ագաթանգեղոս առ Գէորգայ ասորի եպիսկոպոսին և ուսումնասիրութիւն Ագաթանգեղեայ գրոց, Վիեննա, 1891, էջ 108 և ուրիշները:

Խորենացու վերև բերված վկայություններում, որոնց աղբյուր են ծառայել երրորդ դարի առաջին կեսի հեղինակների, Բարդածանի և Փիրմիլիանոսի գրվածքները:

Խոսրով Ա-ը, ինչպես վերոհիշյալ իր առաջին վկայության մեջ հաղորդում է Խորենացին, կռվել էր հյուսիսային ազգերի դեմ իր հոր, Վաղարշի, վրեժն առնելու համար: Նա գլխովին ջարդել էր նրանց, հարյուրից մեկին պատանդ էր արել և ի հիշատակ իր հաղթության, իբրև Հռոմեական կայսրության հպատակ ու վասալ, կանգնեցրել էր արձան հունարեն գրով: Վերև մենք արդեն տեսանք, որ հենց երկրորդ դարի վերջերում և, հավանորեն, առաջին անգամ Վաղարշ Բ-ի կամ Խոսրով Ա-ի թագավորության ժամանակ, Հայաստանը դրամական նպաստ էր ստացել հռոմայեցիներից հյուսիսական բարբարոսներին դիմակայելու համար:

208 թվին վախճանվեց Վաղարշ Դ-ը, և պարթևական գահը ժառանգեց նրա որդին, Վաղարշ Ե-ը, իսկ 211 թվին Սեպտիմիոս Սեվերոսին հաջորդեց Անտոնինոս Կարակալլան (211—217): Այս վերջինը, իր հոր, Սեպտիմիոս Սեվերոսի, հաջողություններից քաջալերված, երազում էր Աղեքսանդր Մակեդոնացու նման, որն իր ամենասիրելի հերոսն էր, նվաճել ամբողջությամբ Առաջավոր Ասիան:

215 թվին Կարակալլան մեծ զորքով եկավ Անտիոք և ուզեց պատերազմի պատրվակ դարձնել այն, որ կիլիկեցի Անտիոքոս Փիլիսոփան և Տրդատ Արշակունին[1], որը, հավանորեն, Վաղարշ Ե-ի հորեղբայրն էր, դավաճանելով իրեն, փախել էին պարթևական թագավորի մոտ: Սակայն Վաղարշ Ե-ը, որովհետև գահակալական ներքին կռիվներ էին սկսվել իր և եղբոր, Արտավան Ե-ի միջև, հպատակվեց Կարակալլայի պահանջին և փախստականներին հանձնեց հռոմայեցիներին:

Այսպիսով, 215 թվին պատերազմի վտանգը կանխվեց: 216 թվի սկզբներին, երբ Կարակալլան Անտիոքում էր գտնվում՝ նա, խարդախ միջոցների դիմելով, ուզեց Հռոմեական կայսրությանը միացնել Օսրոյեն-Եդեսիան ու Հայաստանը և այս երկու վասալ թագավորությունները դարձնել հռոմեական նահանգներ: Անտիոք հրա-

1 Այս Տրդատ Արշակունուն Մոմզենը ու նաև հայ պատմագետներից շատերը՝ Խալաթյանցը, Լեոն, Սանտալճյանը և ուրիշները, նույնացրել են Խոսրով Ա-ի որդու՝ Տրդատ Բ-ի հետ, որ անապացույց և անհավանական մի ենթադրություն է. տե՛ս *Mommsen*, Römische Geschichte, V, էջ 418. *Халатьянц*, Очерк истории Армении, էջ 323—324. Լեո, Հայոց պատմություն, Ա., էջ 479. *Sandalgian*, Histoire documentaire, էջ 560:

վիրվեց Օսրոյեն-Եդեսիայի Աբգար Ժ թագավորը, որն իսկույն կալանավորվեց և ուղարկվեց Հռոմ: Այնուհետև Կարակալլայից սիրալիր նամակներ ստացավ նաև Հայաստանի Խոսրով Ա թագավորը: Կայսրը նրան ևս հրավիրեց իր մոտ, հայտնելով, որ ցանկանում է նրան հաշտեցնել որդիների հետ, որոնց հետ նա վեճի մեջ էր: Կարակալլայի մոտ միամտաբար գնաց նաև Խոսրով Ա-ը և իսկույն բանտարկվեց:

Հայերը, վրդովված Կարակալլայի ստոր վարմունքից, զենքի դիմեցին, և Թեոկրիտոս զորավարը, որն ուղարկվեց ապստամբությունը ճնշելու, չարաչար հաղթվեց և դուրս շպրտվեց հայկական սահմաններից (216 թվին):

216 թվի այս անցքերի մասին մանրամասն տեղեկություններ հաղորդում է Կասսիուս Դիոնը, որ ավելորդ չեմ համարում թարգմանաբար մեջ բերել առանց կրճատումների:

1. Կասսիուս Դիոն, LXXVII, 1—3՝

«Արդ՝ խաբելով Օսրոյենի Աբգար թագավորին, որ իր մոտ գա իբրև բարեկամ՝ նրան բռնեց և կալանավորեց, և այսպիսով տիրեց Օսրոյենին, որն անտերունչ էր մնացել: Իսկ Հայոց թագավորին, որը վեճի մեջ էր իր որդիների հետ՝ բարեկամական նամակներով նույնպես կանչեց, իբրև թե համոզելու որ նրանք խաղաղությամբ ապրեն. և սրանց հետ ևս վարվեց այնպես, ինչպես Աբգարի հետ: Սակայն հայերը չհպատակվեցին նրան և դիմեցին զենքի. և նրանցից այլևս ոչ ոք և բնավ ոչ մի բանում նրան չէր հավատում, այնպես որ նա փորձով սովորեց, թե որքան վնասակար է ինքնակալ մարդուն խարդախորեն վարվել բարեկամների հետ»:

2. Նույնը, LXXVII, 21, 1՝

«Արդ՝ Թեոկրիտոսը, որին զորքով ուղարկել էր հայերի դեմ՝ մեծ դժբախտության մեջ էր ընկել և նրանց կողմից ծանր պարտության էր մատնվել»:

Հենց նույն այս ժամանակ խիստ ուժեղացել էր հակարքա Արտավան Ե-ը, որը գրավել էր պետության մայրաքաղաք Տիզբոնը: Անտոնինոս Կարակալլան, որ առիթ էր որոնում Պարթևական թագավորությունը նվաճելու՝ խնդրեց Արտավանից տալ աղջկանը իրեն կին: Ինչպես վկայում է Կասսիուս Դիոնը[1], կայսեր դիտավորությունն էր դառնալ պարթևական գահի ժառանգ և տիրել այնուհետև Պարթևական թագավորության:

1 *Cass. Dio*, LXXVIII, i, 1.

Մերժում ստանալով Արտավանից՝ Կարակալլան նրան պատերազմ հայտարարեց և արշավեց Պարթևաց երկիրը: Անցնելով Տիգրիս գետը՝ նա ավերեց ամբողջ երկիրը, որ գտնվում էր Մեդիայի շուրջը, առավ Ադիաբենի Արբելա քաղաքը և այնտեղ քանդել տվեց թագավորների գերեզմանները և նրանց աճյունը կարգադրեց ցրիվ տալ: Պարթևները նրան դիմադրություն ցույց չտվին և հետ քաշվեցին ու աշխատեցին պատրաստել մի ուժեղ զորաբանակ:

216 թվի վերջերին Կարակալլան վերադարձավ Եդեսիա և ձմեռը անցկացրեց այնտեղ: 217 թվի գարնանը նա նորից արշավանքի ելավ պարթևների դեմ, բայց ապրիլի 8-ին սպանվեց իր զինվորականներից մեկի ձեռքով Եդեսիայի ու Խառանի միջև[1]:

Կարակալլայի հաջորդ Մակրինոսը (217 թ.), երկու անգամ պարտություն կրելով պարթևներից Մծբինի մոտ՝ ստիպված եղավ նահանջել Ասորիք և Արտավան Ե-ի հետ կնքեց խաղաղություն հետևյալ պայմաններով՝ Միջագետքը տրվեց Հռոմին, և Օսրոյեն-Եդեսիան ճանաչվեց իբրև կայսրության ենթակա վասալ թագավորություն, սակայն Մակրինոսը պարտավորվեց վճարել պարթևներին, ի հատուցումն նրանց վնասների, 50 միլիոն դենար[2] (մոտավորապես 50 միլիոն ոսկի ֆրանկ):

Հենց այդ ժամանակ բանտում մեռել էր Հայաստանի թագավոր Խոսրով Ա-ը, ուստի և Մակրինոսը ոսկե թագ ուղարկեց նրա որդուն, Տրդատ Բ-ին, որն արդեն թագավորում էր Հայաստանում: Մակրինոսն ազատեց և հետ դարձրեց Հայաստան Տրդատ Բ-ի մորը, որը 11 ամիս բանտումն էր եղել, վերադարձրեց նաև հայերից առնված ավարը և հետ տվեց Տրդատ Բ-ին հայրենի կալվածքները Կապադովկիայում: Հայոց թագավորը հույս ուներ նույնպես, որ հռոմայեցիներից կստանա տարեկան այն նպաստը, որ տրվում էր իր հորը:

217 թվի այս անցքերը ևս մանրամասն հիշատակված են Կասսիուս Դիոնի մոտ:

1. Կասսիուս Դիոն, LXXVIII, 26, 1—3՝

«Մակրինոսը, տեսնելով որ Արտավանը կրած այս չարիքների պատճառով խիստ զայրացած է և մեծ զորքով ներխուժել է Միջագետք՝ նախ նրան կամովին ուղարկեց գերիներին բարեկամական առաջարկներով հանդերձ և խաղաղության կոչ արեց, վերագրելով պատահած անցքերի պատճառը Կարակալ-

1 Տե՛ս *Aeli Spart.*, Antoninus Caracallus, 6, 6 (Scriptores historiae Augustae, հրատ. Hohl-ի, 1927, էջ 188):

2 Տե՛ս *Zonaras*, 12, 13.

լային: Իսկ նա, չընդունելով այդ՝ հրամայեց որ, բացի այդ, Մակրինոսը վերակառուցե քանդված ամրոցներն ու քաղաքները, հրաժարվի բոլորովին Միջագետքից և տա հատուցումն ինչպես մյուս բոլոր վնասների, նույնպես և թագավորական գերեզմանների պղծման համար»:

2. Նույնը, LXXVIII, 27, 4՝

«Եվ, հարկավ, նա [Մակրինոսը], ինչպես ասացի, դադարեցրեց թշնամությունը Հայաստանի նկատմամբ, և Տրդատն ընդունեց թագը, որը նրան ուղարկված էր Մակրինոսի կողմից, նաև իր մորը, որին Կարակալլան տասնմեկ ամիս բանտում էր պահել, ստացավ նաև ավարը, որ տարված էր Հայաստանից, և կալվածքները, որ նրա հայրն ուներ Կապադովկիայում. իսկ փողը, որը ստացվում էր հռոմայեցիներից յուրաքանչյուր տարի՝ նա հույս ուներ, որ կստանա»:

217 թվի Արտավան Ե-ի հաղթությունները Պարթևական թագավորության վերջին հաջողություններն էին: Շուտով Արևելքում տեղի ունեցան քաղաքական մեծ փոփոխություններ: Պարթև Արշակունիները, որոնք ներքին անվերջ կռիվների պատճառով խիստ թուլացել էին, չկարողացան թագավորական իշխանությունը պահել իրենց ձեռքում, և նրանց փոխարեն պետության գլուխն անցան Սասանյան տոհմի թագավորները:

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՍԱՍԱՆՅԱՆ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ ՍՏԵՂԾՎԱԾ ՆՈՐ ԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

1. Մի քանի կարծիքներ Պարթև Արշակունիների անկման պատճառների մասին.— Պարթև Արշակունիները նույնքան հավատարիմ էին Իրանի ավանդներին ու կրոնին, ինչպես և Սասանյանները:— 2. Պարթև Արշակունիների պետության թուլացող ու ապակենտրոնացած ներքին կազմակերպությունը.— 3. Ժողովրդի զրգված տրամադրությունը:— 4. Սասանյանների դինաստիան.— Պապակի որդու, Արտաշիրի, նվաճումները.— Արտաշիր Ա-ը Սասանյան նոր դինաստիայի հիմնադիր Իրանում:— 5. Սասանյանների ագրեսիվ արտաքին քաղաքականությունը:— 6. Պետության կենտրոնացումը.— զրադաշտական եկեղեցու մեծ դերը:— 7. Սասանյան ժամանակաշրջանի դրամները և նոր լեզուն:— 8. Հայ Արշակունիների մերձեցումը Հռոմին.— Բրյուսովի դիտողությունը հայերի կողմնորոշման մասին պարթևական և սասանյան ժամանակաշրջաններում.— Բրյուսովի դիտողության անհավանականությունը:

Պատմագիտական երկերում սովորաբար ենթադրում են, որ դինաստիական փոփոխությունը, որը տեղի ունեցավ Պարթևական թագավորության մեջ Արտավան Ե-ի իշխանության ժամանակ, մի խոր հեղաշրջում էր՝ ժողովրդական բուռն մի հակաշարժում, որի նշանաբանն էր վերականգնումը իրանական տրադիցիաների և զրադաշտական կրոնի: Մոմզենը, օրինակ, իր «Հռոմեական պատմության» մեջ քաղաքական այդ փոփոխությունը բնորոշել է իբրև «ազգային ու կրոնական» վերանորոգում:

«Սեվերոսի մահից (+211) քիչ տարիներ հետո,— ասում է Մոմզենը,— Իրանում տեղի ունեցավ մի հեղաշրջում, որը ո՛չ միայն նախկին շատ ճգնաժամերի նման վեհապետին տապալեց ու նաև խորտակվող Արշակունիների տեղ իշխանության գլուխ դրեց նոր դինաստիա, այլև, հրահրելով ազգային և կրոնական տարրերը հզոր հեղաշարժման՝ հաստատեց Պարթևական պետության հելլենականությամբ հագեցված խառնածին

քաղաքակրթության (Bastardcivilisation) փոխարեն պետական կարգ, հավատք, բարոյական վարք և այն երկրամասի իշխանավորներին, որը ստեղծել էր հին պարսիկների տերությունը»[1]։ Նման կարծիքներ են հայտնել նաև Մորգանը, Խալաթյանցը և ուրիշները[2]։ Իմ կարծիքով, ընդհանրացված այս ենթադրությունները ո՛չ միայն վիճելի են, այլև պարզապես անհավանական։

«Բնական տեսության» առաջին հատորում (էջ 305) ես արդեն մատնանշել էի, որ առաջին դարի սկզբներում պարթևական գահը ստացել էր Արտավան Գ-ը (11—40 մեր թվ. հ.), որը, հիմնադիր դառնալով պարթևական թագավորական դինաստիայի նոր գծի՝ մեծ թափով զարգացնում էր և՛ իրանական կուլտուրան, և՛ զրադաշտական կրոնը։ Պետության իրանացումը և հելլենիզմի տեղատվությունը ու թուլացումը անընդհատ շարունակվել էին նաև Արտավան Գ-ի հաջորդների ժամանակ։ Ուստի բոլորովին զուրկ է հիմքից Մոմզենի և նրա հետևորդների պնդումը, որ իբր թե Պարթև Արշակունիների անկման պատճառն այն է եղել, որ նրանք հավատարիմ չէին մնացել իրանական ավանդներին և կրոնին։ Հայտնի է նաև, որ հենց այս հետին շրջանի բարեպաշտ պարթևական թագավորների ժամանակ, հավանորեն, Վաղարշ Ա-ի (51—75/81) կամ Վաղարշ Գ-ի (148—191) հրամանով, սկսել էին հավաքել և խմբագրել Ավեստայի սրբազան տեքստերը։

Հավանական է, ինչպես դժվար չէ համոզվել, ո՛չ թե Մոմզենի վերոհիշյալ կարծիքը, այլ Յուստիի ենթադրությունը, որը Պարթևական թագավորության անկման պատճառ համարում է Արշակունյաց պետության թուլահող ու ապակենտրոնացած ներքին կազմակերպությունը[3]։ Նրանց թագավորական իշխանության այս տկարությունը ու նաև անվերջ կրկնվող ներքին երկպառակություններին պետք է վերագրել, որ երբ Պարսքում սկսվեց Արշակունյաց դինաստիայի դեմ շարժում՝ սրանք չկարողացան իրենց հակառակորդին ցույց տալ պատշաճ դիմադրություն։

Եվ, իրավի, ինչպես հայտնի է, Պարթև Արշակունիներին չէր հաջողվել ստեղծել կենտրոնաձիգ ու սերտ համախմբված միացյալ պետություն։ Պարթևական բուն պետությունը, ինչպես հաղորդում է Պլինիոսը, ուներ իր կազմի մեջ 18 առանձին թագավորություն-

1 *Mommsen*, Römische Geschichte, V, էջ 411։

2 Տե՛ս *Morgan*, Histoire du peuple arménien, էջ 97. *Халатьянц*, Очерк истории Армении, էջ 332 և ուրիշները։

3 Տե՛ս *Justi F*., Geschichte Irans, Grundriss der Iranischen Philologie, II Band, 5 Lieferung, Strassburg, 1903, էջ 511։

ներ[1]։ 18 այս երկրների իշխանները, թեև վասալներն էին Պարթևաց թագավորի, սակայն գրեթե անկախ էին և կրում էին «թագավոր» կամ «շահ» տիտղոսը, մինչդեռ իրենց սյուզերենի պաշտոնական տիտղոսն էր «թագավոր թագավորաց», այսինքն՝ «շահնշահ»։

Ենթադրում են, որ այդ 18 թագավորությունները Իսիդորոս Խարաքսեցու մոտ հիշատակված այն երկրներն են, որոնք ձգված էին առևտրական ու ռազմական մեծ ճանապարհի երկարությամբ՝ սկսած Եփրատ գետից մինչև Սելևկիա, այնտեղից մինչև Էկբատանա-Համադան ու ապա բուն Պարթևստանի և Հերատի վրայով մինչև Արախոսիա։

Ադոնցի կարծիքով, հույների ժամանակ Սելևկյանների դեմ հիշյալ երկրներն անջատվել էին և դառել անկախ թագավորություններ՝ ոմանք պարթևների հետ միաժամանակ և ոմանք նույնիսկ ավելի առաջ։ Իբրև արդեն կազմակերպված ինքնակա թագավորություններ՝ նրանք հետագայում մտել էին Պարթևական պետության կազմի մեջ։ Այս վերջինը, ուրեմն, մի սերտ միանականություն չէր, այլ մի բազմություն էր մանր երկրների, որոնցից յուրաքանչյուրն օժտված էր պետական կարգի իրավունքներով։ Սրանց կապը և կախումը Պարթևական թագավորությունից կայանում էին, Ադոնցի ասելով, նրանում, որ նրանք պարտավոր էին Արշակունիներին վճարել որոշ տուրք և տրամադրելու էին նրանց զինվորական ուժեր[2]։

Պարթևական թագավորության անկման պատճառները լուսաբանելիս՝ պետք է, բացի այդ, հատկապես նկատի ունենալ ժողովրդի գրգռված տրամադրությունը Արշակունիների դինաստիայի հանդեպ։ Ինչպես վերև տեսանք, երկրորդ դարի ընթացքում, Պարթևական թագավորության անկումից մի փոքր առաջ, հռոմեական զորքերը Տրայանոսի, Ավիդիոս Կասսիոսի և Սեպտիմիոս Սևերոսի առաջնորդությամբ երեք անգամ (115, 164 և 198 թվերին) ներխուժել էին Պարթևական պետության արևմտյան ու կենտրոնական երկրները և անպատիժ կերպով ավերել էին Միջագետքը, Ադիաբենը և Բաբելոնիան՝ Արշակունյաց թագավորների ապիկարության և նրանց միջև պարբերաբար կրկնվող խռովահույզ պառակտումների պատճառով։ Բնական է, իհարկե, որ վերոհիշյալ երկրների սրի ու կողոպուտի մատնված բնակչությունը պետք է ծայր աստիճան թշնամական վերաբերմունք ունենար դեպի իշխող դինաստիան։

1 Տե՛ս *Plinius*, Nat. Hist., VI, 26.

2 Տե՛ս *Адонц*, Армения в эпоху Юстиниана, էջ 387։

Ինչպես հայտնի է, 224 թվին Պարթև Արշակունիներին փոխարինեց Սասանյանների նոր դինաստիան, որի հիմնադիրը եղավ Արտաշիրը (224—241), որ Պարսի Ստահր քաղաքի Անահիտի տաճարի վերակացու Սասանի թոռն էր:

Պարսը, որը Աքեմենյան դինաստիայի թագավորների հայրենիքն էր, թեև Արշակունյաց թագավորների գերիշխանության տակն էր գտնվում, սակայն երրորդ դարի սկզբներում գրեթե անկախ էր: Նա բաժանված էր այդ ժամանակ մի շարք տեղական մանր իշխանությունների, և ամեն մի փոքր ի շատե նշանավոր քաղաք ուներ իր սեփական արքան: Տեղական այդ իշխաններից ամենից հայտնիներն էին արքայիկները Ստահր քաղաքի, որը Պարսի հին թագավորների մայրաքաղաքն էր և գտնվում էր Պերսեպոլիսի ավերակների մոտ:

Արտաշիրի պապը, Սասանը, ամուսնացել էր Ստահրի արքունի տոհմից մի աղջկա հետ, և այդ ամուսնությունից ծնվել էր Պապակը, որը հաջորդեց Սասանին: Օգտագործելով իր ազգակցական կապերը` Պապակը հաջողեցրեց, որ իր կրտսեր որդիներից մեկը, Արտաշիրը, ստանա Դարաբկերտ քաղաքում արգապետության բարձր զինվորական պաշտոնը: Շուտով Արտաշիրը տիրեց այդտեղ բազմաթիվ քաղաքների, իսկ Պապակը ևս ապստամբեց Ստահրի արքայիկի դեմ, նրան սպանեց և նրա տեղ ինքը դառավ այդ քաղաքի իշխան:

Պապակի մահից հետո Ստահրում թագավորեց նրա մեծ որդի Շապուհը: Սակայն Արտաշիրը, որն ինքն էր ուզում դառնալ Պարսի թագավոր` ապստամբեց իր եղբոր դեմ: Շուտով Շապուհը մահացավ կասկածելի պատահական մահով, և Արտաշիրը միահեծան տերը դառավ Ստահրի (208 թվին)[1] և ապա նաև ամբողջ Պարսի:

Այնուհետև նա տիրեց Պարսի արևելակողմում գտնվող Կրմանին և ենթարկեց իր իշխանությանը նաև Պարսի հյուսիս-արևմտակողմում գտնվող Շոշաստանը (Սուզիանան), Իսպահանը և Մեսենեն:

Հաղթական Արտաշիրի դեմ ռազմի ելավ այնուհետև ինքը` Արտավան Ե-ը: Վճռական ճակատամարտը տեղի ունեցավ 224 թվի ապրիլի 28-ին Հորմիզդան դաշտում, որի տեղը դեռևս որոշված չէ: Նյոլդեկեի կարծիքով, այդ դաշտը, հավանորեն, գտնվել է Շոշաստանում կամ Բաբելոնիայում[2]: Արտավան Ե-ը այս ճակատամարտում հաղթվեց և սպանվեց: Այնուհետև Արտաշիրը մտավ Տիզբոն, և ապա 226 թվին կատարվեց նրա թագադրության հանդեսը, և նա հայտարարվեց «արքայից արքա (շահանշահ) Իրանի»:

Թագադրությունից հետո սասանյան Արտաշիր Ա թագավորը (224—241) հարձակվեց Միջագետքում Հատրա քաղաքի վրա, բայց չկարողացավ առնել: Նա նվաճեց Մեդիան ու Համադան քաղաքը և ապա ուզեց գրավել նաև Ատրպատականն ու Հայաստանը, սակայն այստեղ նա հաջողություն չունեցավ:

Այն անցքերը, որ տեղի էին ունեցել Արևմուտքում, հիշատակված են Կասսիոս Դիոնի (+ մոտավ. 235 թ.) և Հերոդիանոսի (+ մոտավ. 240 թ.) մոտ: Սրանց վկայությունները խիստ կարևոր են, որովհետև այս երկու հեղինակն էլ ժամանակակից էին վերահիշյալ անցքերին:

«Բազմաթիվ ապստամբություններ ծագեցին [Ալեքսանդր Սևերոսի ժամանակ],—պատմում է Կասսիոս Դիոնը,—զանազան կողմերում. և մի քանիսը թեև խիստ ահեղ էին, սակայն ճնշվեցին: Այլ այն անցքերը, որոնք տեղի ունեցան Միջագետքում, ավելի ահավոր էին, և իսկապես որ սարսափ էին գցել բոլորի վրա` ո՛չ միայն Հռոմի բնակիչների, այլև մյուս տեղերի: Եվ իրոք` մի ոմն պարսիկ Արտաշես, պարթևներին երեք ճակատամարտում հաղթելուց և նրանց Արտավան թագավորին սպանելուց հետո` ռազմի ելավ Հատրայի դեմ, որպեսզի այդ քաղաքն իրենց համար հենարան դարձնե ընդդեմ հռոմեացիների: Նա կործանեց պարիսպը, բայց, կորցնելով իր զինվորներից շատերին, որոնք դարանի մեջ էին ընկել` ետ քաշվեց Մեդիա և, գրավելով այս երկրում, ինչպես և Պարթևաստանում, մասամբ բռնությամբ, մասամբ էլ ահաբեկմամբ, մի շարք շրջաններ` դիմեց դեպի Հայաստան: Բայց այստեղ նրան դուրս վանեցին երկրի բնակիչները և մեդացիներից ոմանք ու նաև Արտավանի որդիները, և նա, ինչպես ոմանք ասում են, փախավ: Իսկ ուրիշներն էլ ասում են, որ ետ քաշվեց, որպեսզի պատրաստե ավելի մեծ զորք: Արդ` նա մեզ համար խիստ ահավոր եղավ, որովհետև դարանակալ էր եղել, սպառնալով ո՛չ միայն Միջագետքին, այլև Ասորիքին: Եվ նա սպառնում էր, որ վերստին ձեռք է բերելու ամեն ինչ, որպես նախնիքներից իրենց հասանելիք ժառանգություն, այն բոլորը, ինչ որ մի ժամանակ ունեին հին պարսիկները մինչև Հելլենական ծովը»[1]:

---

[1] Տե՛ս A. Christensen. L'Iran sous les Sassanides. Copenhague, 1944, էջ 87:

[2] Տե՛ս Th. Nöldeke, Aufsätze zur persischen Geschichte, Leipzig, 1887, էջ 89.

[1] Տե՛ս Cass. Dio, LXXX, 3, 1—3 և 4, 1. Համեմատե՛ նաև Herodianus, VI, 2, 1—7 և Zonaras, XII, 15.

Դինոնի այս վկայությունը հետաքրքիր է հատկապես այն տե-
սակետից, որ նրա մեջ մատնանշված է Սասանյանների արտաքին
քաղաքականության նոր ուղղությունը: Սասանյանները, ինչպես
երևում է այս վկայությունից, իրենց հաջորդներ են համարում
Աքեմենյանների և իրենց նպատակ էին դրել վերականգնել հին
պարսկական մեծ աշխարհակալությունը, որ գոյություն ուներ
Ալեքսանդր Մակեդոնացուց առաջ:
Մինչդեռ Արշակունիների քաղաքականությունը Հռոմի հանդեպ
ուներ ընդհանուր առմամբ պաշտպանողական բնույթ, Սասանյան-
ները, ընդհակառակը, ինչպես վկայում է Դինոնը, ձգտում էին վե-
րականգնել Կյուրոս Մեծի և Դարեհ Ա.-ի ընդարձակ պետությունը և
դառնում էին, հետևաբար, Հռոմեական կայսրության վտանգավոր
ախոյանները:
Պետք է ասել նաև, որ սասանյան միշակույթը, լինելով շարու-
նակությունը Արշակունյաց շրջանի կուլտուրայի, ուներ մի քանի
բնորոշ ու ուշագրավ առանձնահատկություններ:
Ամենահիմնական փոփոխությունն այն էր, որ Սասանյանների
ժամանակ Իրանական պետությունը հետզհետե դառնում էր կենտ-
րոնացած ու միացած թագավորություն: Իրանի երկրամասերի
պետերը, որոնք Արշակունիների ժամանակ գրեթե անկախ արքա-
ներ էին, թեև պահպանեցին իրենց բարձր տիտղոսները, սակայն,
իրականորեն, Սասանյան Պարսկաստանի բարձր պաշտոնյաներ
էին և համարվում էին «արքայից արքաների» «գործակալներ»:
Արշակունյաց շրջանի նախարարական կազմակերպությունը
մնաց անխախտ նաև Արտաշիր Ա.-ի և նրա հաջորդների ժամանակ:
Բայց Սասանյանները, հետևելով, ըստ երևույթին, Աքեմենյանների
հին տրադիցիաներին, ստեղծեցին ֆեոդալական զորեղ մի միա-
պետություն:
Սասանյան պետության երկրորդ բնորոշ առանձնահատկու-
թյունն էր բացառիկ մեծ դերը մազդայական պրոպագանդական կրոնի
և ազդեցիկ ու մոլեռանդ հոգևորականության: Լինելով սերունդ
մազդայական բարձր հոգևորականության՝ Սասանյանները, բնա-
կանաբար, ամեն կերպ հովանավորեցին իրենց նախնիքների կրո-
նը ու պաշտամունքը:
Մազդայական կրոնը, որը ժողովրդական կրոնն էր Իրանում
ու նաև Պարսքում, դավանում էին, հարկավ. և Արշակունիները:
Սակայն Արտաշիր Ա.-ի թագավորության ընթացքում մի նոր դա-
րաշրջան սկսվեց պրոպագանդական վարդապետության և եկեղեցու
աննախընթաց զարգացման համար:

Ուշագրավ մի վկայություն ունի այդ մասին բյուզանդական
հեղինակ Ագաթիասը:
«Արտավանը ինքը,—ասում է Ագաթիասը,—հաղորդակից էր
մոգերի սրբազան ուսման և նա ինքը ես կատարում էր նրանց
խորհրդածեսերը: Սրա ժամանակից սկսած մոգական կղերա-
կանները դառել էին հզոր և բարձրամիտ, ինչպես որ նրանք
էին և առաջ. և իրենց անունը ես պահպանել էին հնուց, բայց
նրանք առաջ այդքան չէին բարձրացել պաշտոնների ու արտո-
նությունների մեջ: Իսկ այժմ բոլորը նրանց պատվում են ու
անչափ մեծարում են և պետությունը կառավարվում է նրանց
խորհրդով ու նրանց հրամաններով: Նույնպես նաև մասնավոր
կյանքում, երբ խնդիրը իրավունքի հարցերի մասին է, խոսքը
նրանց է պատկանում և նրանք են որոշում, թե ինչ պետք է
անել, և վճիռ են կայացնում: Եվ ընդհանրապես՝ պարսիկների
մոտ ոչ մի բան չի համարվում օրինավոր և իրավացի, եթե
մոգերի կողմից չէ գտել հավանություն»[1]:
Հետաքրքիր է խիստ և Արտաշիր Ա.-ի տված հետևյալ խորհուր-
դըն՝ իր որդի Շապուհին, որը մեջ է բերված արաբական պատմա-
գիր և աշխարհագիր Մասուդիի մոտ.
«Իմացի՛ր, իմ որդի, որ կրոնը և թագավորությունը երկու
քույրեր են, որոնցից և ոչ մեկը չէ կարող գոյություն ունենալ
առանց մյուսի. որովհետև կրոնը թագավորության հիմքն է,
իսկ թագավորությունը կրոնի պաշտպանն է»[2]:
Համաձայն պրոպագանդական տրադիցիայի, Արտաշիր Ա.-ի
հանձնարարությամբ կազմվել էր Ավեստայի ցիրուցան եղած տե-
քստերի կանոնական պաշտոնական ժողովածուն:
Արտաշիր Ա.-ի կրոնական ջերմեռանդության մի ցուցանիշը
նաև այն է, որ նրա կտրած դրամների վրա մի կողմում դրոշմված
է թագավորի պատկերը, իսկ հակառակ կողմում՝ զոհասեղանը,
որը պրոպագանդական կրակապաշտության խորհրդանիշն է:
Հատկանշական է նույնպես, որ Արտաշիր Ա.-ը, հետևելով
Աքեմենյանների օրինակին, սկսել էր կտրել ոսկի դրամներ, մինչ-
դեռ Պարթև Արշակունիների ժամանակ գոյություն ունեին միմիայն
արծաթի և պղնձի դրամներ: Մոմզենի կարծիքով, այս ակներև մի

[1] Տե՛ս H. Gelzer, Eznik und die Entwicklung des persischen Religions-
system, Zeitschrift für armenische Philologie, I, Marburg. 1903, էջ 156:
Համեմատե՛ Agathias, II, 26 (հրատ. Niebuhr-ի, էջ 122):
[2] Տե՛ս Masoudi, Les prairies d'or, Paris, 1861—1877, II, XXIV, էջ 162:

նշան էր, որ Սասանյաններն իրենց հավասարազոր էին կարծում հռոմայեցիներին և իրենց գերիշխանությունը համարում էին բարձրակ ու անսահման[1]։

Պետք է նաև մատնանշել, որ Սասանյանների ժամանակ փոփոխության ենթարկվեց պետական լեզուն։ Պարթև Արշակունիների պաշտոնական լեզուն Արշակունյան կամ հին պարթևական պահլավերենն էր, մինչդեռ Սասանյանների ժամանակ հետզհետե ուժեղացավ և առաջացավ նոր կամ Սասանյան պահլավերենը, որը, ինչպես մատնանշում է խրիստենսենը, շատ բանի փոխ էր առել Արշակունյան պահլավերենից[2]։

Սասանյանների իշխանության հաստատումը Իրանում քաղաքական տեսակետից մի խոշոր անցք էր, որ մեծ նշանակություն ունեցավ և Հայաստանի համար։

Արտաշիր Ա.-ի վերաբերմունքը դեպի Հայաստանը չէր կարող իհարկե, թշնամական չլինել, որովհետև Հայաստանն Արշակունիների երկրորդ թագավորությունն էր (Secundogenitur) և այստեղ էին ապավինել Արտավան Ե-ի որդիները և Սասանյան դինաստիայի հակառակորդները։

Հայ Արշակունիները, որոնք սերտ կապված էին պարթևական Իրանի հետ, որովհետև իրենց վտանգ էր սպառնում Սասանյանների կողմից, աշխատեցին այնուհետև մերձենալ ու բարեկամանալ Հռոմեական կայսրության հետ։ Նրանց արևմտյան այս կողմնորոշումը, ինչպես կտեսնենք, Հայաստանի համար ունեցավ ո՛չ միայն քաղաքական, այլև կուլտուրական մեծ հետևանքներ։

Այդ մասին Վ. Բրյուսովը իր «Հայ ժողովրդի պատմական բախտի տարեգրության» մեջ արել է մի քանի հետաքրքիր դիտողություններ, որ ավելորդ չենք համարում թարգմանաբար մեջ բերել մանրամասն կերպով։

«Հռոմայեցիները,—ասում է Բրյուսովը,—[Հայաստանում] հաջողություն էին ձեռք բերում կամ զինվորական ուժով և կամ նենգությամբ, իսկ պարթևները՝ ավելի խոր ազդեցությամբ, որը հիմնված էր երկու ժողովուրդների մշակույթների և սովորույթների մերձակցության վրա։ Հայերի համար հռոմայեցիները երկար ժամանակ խորթ ժողովուրդ էին և արտաքին ուժ էին, որին հարկադրված էին հպատակվել։ Իսկ պարթևները հարևա-

¹ Տե՛ս *Th. Mommsen*, Römische Geschichte, V, էջ 417։

² *Christensen Ar.*, L'Iran sous les Sassanides, Copenhague, 1944, էջ 46 և 94։

վաններ էին և բարեկամներ, ուստի և պարթևական կուսակցու-
թյունը համարվում էր Հայաստանում ազգային։ Բայց, որովհե-
տև հայերը ըստ իրենց քաղաքականության ընդհանուր ուղղու-
թյան Հռոմի թշնամի էին մեծ մասամբ այն դարերում, երբ
Հռոմեական կայսրությունն ամենահզոր պետությունն էր աշ-
խարհում՝ նրանք դրանով հենց իրենց ուժերը սպառեցին
ապարդյուն կռվում։ Երրորդ դարի կեսերում Հայաստանը դա-
ռել էր երկրորդական արևելյան պետություն և կորցրել էր այն
բոլորը, ինչ որ ձեռք էր բերել ավելի բախտավոր ժամանակնե-
րում։ Սակայն երբ երրորդ դարի կեսում հայերը փոխեցին
իրենց քաղաքականությունը և սերտ բարեկամություն հաստա-
տեցին Հռոմի հետ՝ հանգամանքներն արդեն փոխված էին. այդ
արդեն մի շրջան էր, երբ կայսրության ուժը սկսել էր նվազել և,
ընդհակառակը, Առաջավոր Ասիայում գերակշռող նշանակու-
թյուն էր ստացել արևելյան պետությունը նոր պարսիկների,
որոնց հետ հայերի հարաբերությունները դառել էին նույնպես
թշնամական։ Այս ճակատագրական կապը՝ նախ կործանման
դատապարտված Պարթևստանի հետ ընդդեմ ուժեղացող Հռոմի
և ապա տկարացող կայսրության հետ ընդդեմ զորեղացող
Պարսկաստանի—գլխավոր պատճառներից մեկն էր Հայաստա-
նի զրկման իր անկախությունից»[1]։

Բրյուսովի այս ընդհանրացումը, որ հավանական է համար-
վում, իմ կարծիքով համոզիչ չէ։

«Քննական տեսության» առաջին հատորում ես մատնանշել էի,
որ հայերի պարթևական կողմնորոշումը համապատասխանում էր
երկրի շահերին, որովհետև պարթևները վտանգավոր չէին Հայաս-
տանի անկախության համար, մինչդեռ հռոմեական «բարեկամու-
թյունը» կործում էր սպառնում Հայաստանի ո՛չ միայն քաղաքա-
կան, այլ նաև կուլտուրական ինքնուրույնությանը[2]։ Վիճելի է, բա-
ցի այդ, Բրյուսովի պնդումը, որ իբր թե Հայ Արշակունիները իրենց
սխալ կողմնորոշման պատճառով պարթևական ժամանակաշըր-
ջանում (66—226) Հայաստանի ուժերը սպառել էին ապարդյուն
կռիվների մեջ։ Իրապես, ինչպես վերև տեսանք, Հայ Արշակունի-
ները, մեծ մասամբ, աշխատել էին այդ ժամանակ չեզոքություն

¹ Տե՛ս *В. Брюсов*, Летопись исторических судеб армянского народа, Ереван, 1940, էջ 42—43։

² Տե՛ս «Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության», I, էջ 279—280 և 293։

պահպանել. օրինակ՝ 116 թվին Կատիլիուս Սևերոսի դեմ կռվի ժամանակ ու նաև 194—8 և 216 թվերին Սեպտիմիոս Սևերոսի և Անտոնինոս Կարակալլայի արշավանքների ընթացքում: Եթե պարթևական ժամանակաշրջանում Հայ Արշակունիները, հակառակ հայ ժողովրդի կենսական շահերին, մասնակից էին դառնում հաճախ հռոմեա-պարթևական պատերազմներին՝ այդ, իհարկե, անխուսափելի էր շնորհիվ Հայաստանի բուֆերական կացության և հռոմայեցիների ագրեսիային:

Ճիշտ է՝ 226—387 թվերին Հայ Արշակունիների քաղաքականությունը Սասանյան Պարսկաստանի հանդեպ բավարարաչափ ճկուն ու հեռատես չէր, սակայն պետք է նկատի ունենալ, որ նրանց հակապարսկական կողմնորոշման շնորհիվ էր, որ Հայաստանը կարողացավ պահպանել իր կուլտուրական ինքնուրույնությունը:

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

ՏՐԴԱՏ Բ-Ը ԵՎ ՆՐԱ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀՌՈՄԵԱԿԱՆ-ՍԱՍԱՆՅԱՆ ԿՌԻՎՆԵՐԻՆ

1. Պատմագետների սխալ կարծիքը Տրդատ Բ-ի հաջորդ՝ Արտավան Ե-ի եղբայր Խոսրովի մասին:— 2. Ագաթանգեղոսի, Զենոբի և Պրոկոպիոսի համապատասխան վկայությունները և նրանց սխալ բացատրությունները:— 3. Տրդատ Բ-ի երկարատև թագավորությունը:— 4. Արտաշիր Ա-ի ներխուժումը Միջագետք և Աղեքսանդր Սեվերոսի արշավանքը.— հակասական կարծիքներ այս արշավանքի հաջողության մասին:— 5. Հայ աղեղնաձիգ զնդեր Մաքսիմինոս Թրակացու՝ գերմանացիների դեմ կռվող բանակում:— 6. Արտաշիր Ա-ի և Շապուհ Ա-ի նոր արշավանքներն արևմուտքում.— Հայաստանն այդ արշավանքների ժամանակ նվաճված չէր:— 7. Գորդիանոս Գ-ի հաղթական արշավանքը և Միջագետքի վերագրավումը:— 8. Փիլիպպոս Արաբացու դաշնագրությունը Շապուհ Ա-ի հետ.— տարբեր կարծիքներ այդ դաշնագրի մասին:— 9. Հայաստանի հպատակումը Սասանյան Պարսկաստանին և Տրդատ Բ-ի փախուստը:— 10. Հայկական ավանդությունը Տրդատ Բ-ի հաղթական պատերազմների մասին.— այդ ավանդության պատմականությունը:—

11. Մամիկոնյանների և Կամսարականների գալը Հայաստան:

Ինչպես հայտնի է, երրորդ դարի առաջին կեսի պատմական անցքերը, որ տեղի էին ունեցել Հայաստանում, բանասիրական և պատմագիտական գրեթե բոլոր նոր երկերում խճճված են և սխալ են լուսաբանված: Նրանց մեջ Ագաթանգեղոսի Պատմության՝ Խոսրով Մեծի մասին վիպական-բանաստեղծական պատմությունները համարվել են ստույգ և արժանահավատ, ուստի և բոլոր այդ երկերի հեղինակները ենթադրել են, որ Տրդատ Բ-ը, որը 217 թվին ստացել էր Թագ Մակրինոս կայսրից (217—218), թագավորել է Հայաստանում միայն մինչև 221 կամ 222 թիվը: Իսկ նրան հաջորդել է Խոսրով Մեծը, որ Պարթևաց թագավոր Արտավան Ե-ի եղբայրն էր[1]:

[1] Բացի Տաշյանից, Խալաթյանից, Լեոյից, Ասատուրյանից, Սանտալճյանից և ուրիշ հայ բանասերներից, այս ենթադրությունը հավանական են համարել նաև եվրոպական գիտնականներից շատերը. օրինակ՝ Գուտշմիդը, Յուստին,

Արտավանի մահից հետո, ինչպես վկայում է հայկական վի-
Արտավանի մահից հետո, ինչպես վկայում է հայկական վի-
պական ավանդությունը, Հայոց Խոսրով թագավորը, իր եղբոր
վրեժն առնելու համար, ավելի քան տասը տարի կռվում է Արտա-
շիրի դեմ: Սա, չկարողանալով հաղթել հայերին զենքի ուժով՝ խա-
բեությամբ սպանել է տալիս Խոսրովին և, արշավելով Հայաստան,
տիրում է նրա երկրին:

Որ Խոսրով Մեծը եղբայրն է եղել Արտավան Ե-ի և թագավո-
րել է Հայաստանում Ալեքսանդր Սեվերոսի (222—235) իշխանու-
թյան առաջին տարում՝ այդ, ինչպես կարծում են, մատնանշված է
ո՛չ միայն հայկական աղբյուրներում, այլև վեցերորդ դարի բյու-
զանդական պատմագիր Պրոկոպիոսի մի վկայության մեջ:
Նկատի ունենալով այս խնդրի առանձին կարևորությունը՝
ավելորդ չենք համարում մեջ բերել բոլոր այդ վկայությունները
մանրամասն կերպով:

1. Agathangelus (հունարեն թարգմանությունը), հրատ. de
Lagarde, Göttingen, 1887, էջ 8՝

«Արդ՝ երբ Արտավանի մահից հետո, որին սպանել էր Սա-
սանի Արտաշիր որդին՝ այդ գույժը հասավ Հայաստանի թա-
գավոր Խոսրովին, Արտավանի եղբորը, որը երկրորդն էր Պար-
թևական պետության,—որովհետև նա որ Հայոց թագավորն
էր՝ Պարթևաց պետության երկրորդն էր,—և թեպետ վաղուց
արդեն լսել էր այդ տխուր լուրը, սակայն չկարողացավ նա-
խորոք բանակ կազմել և ճիշտ ժամանակին զորք տալ հակա-
տամարտի համար»:

2. Զենոբ Գլակ, տե՛ս «Յովհան Մամիկոնեան, Պատմութիւն
Տարօնոյ», հրատ. Ա. Աբրահամյանի, Երևան, 1941, էջ 66—67՝
«Վաղարշի որդին, Խոսրովը, վրեժխնդիր եղավ իր թագա-
վորության ժամանակ իր եղբոր Արտեանի համար, և երբ
երկու թագավորները, Հայոց և Պարսից արքաները, իրար դեմ
կովի էին ելել՝ պատերազմը պարսիկների դեմ սաստկացավ
և Հայոց թագավորը զորացավ ու սկսեց ավերել Պարսից եր-
կիրը տասը տարի շարունակ և աշխատեց հիմնահատակ անել
սպանմամբ և գերությամբ»:

Մարկվարտը և Խրիստենսենը. տե՛ս *Gutschmid A.*, Agathangelos, ZDMG, XXXI 1877. *Justi F.*, Geschichte Irans, Grundriss der Iranischen Philologie, II, 5, Strassburg, 1903. *Markwart*, Beiträge zur Geschichte und Sage von Eran, ZDMG, XLIX, 1895. *Christensen*, Sassanid Parsia, Cambridge Ancient History, vol. XII, cap. IV (1939).

3. Procopii Caesarensis, De aedificiis գիրք III, գլ. I, 4—7՝
«Մի ժամանակ Հայոց թագավորը նույն իրենց ցեղից էր,
ինչպես այդ պատմում են նրանք, որ գրել են նրանց հնագույն
պատմությունը: Բայց երբ Ալեքսանդր Մակեդոնացին իշխա-
նությունից զրկեց Պարսից թագավորին՝ պարսիկները հնազանդ-
վեցին նրան և մնացին հանգիստ: Իսկ պարթևները ապստամ-
բեցին մակեդոնացիների դեմ, հաղթեցին պատերազմում, նր-
րանց այնտեղից դուրս վտարեցին և երկիրը գրավեցին մինչև
Տիգրիս գետը: Այնուհետև Պարսից պետությունը մոտ 500 տա-
րի մնաց նրանց իշխանության տակ՝ մինչև այն ժամանակը,
երբ Մամեայի որդի Ալեքսանդրը [=Ալեքսանդր Սեվերոս,
222—235] թագավոր դառավ հռոմայեցիների: Եվ այն ժամա-
նակ Պարթևաց թագավորներից մեկն իր եղբորը, որի անունն
էր Արշակ, կարգեց թագավոր Հայոց, ինչպես այդ ասում է Հա-
յոց պատմությունը: Թող չկարծե մեկը, որ Արշակունիները ծա-
գումով հայ են: Ազգականության պատճառով նրանք հինգ
հարյուր տարի պահպանել էին իրար հետ խաղաղությունը»:

Մեջ բերված այս վկայությունները, ինչպես այժմ պարզված է,
բնավ չէին կարող կռվան ծառայել պատմագետների վերոհիշյալ
ենթակացություններին: Ագաթանգեղոսի և Զենոբ Գլակի վերև բեր-
ված վկայությունների մեջ «եղբայր» բառը գործածված է, ինչպես
շատ ճիշտ մատնանշել է Աբեղյանը, ոչ իր իսկական իմաստով,
այլ «ազգական, ազգակից» նշանակությամբ[1]: Մենք վերև տեսանք,
որ Հայոց Խոսրով Ա. թագավորը, իսկապես, մոտ ազգական էր
Պարթևաց Վաղարշ Դ թագավորի (191—208), ուրեմն՝ և Արտավան
Ե-ի, որը Վաղարշ Դ-ի եղբայրն էր:
Պրոկոպիոսի վկայությունը ևս բոլորովին պարզ է[2]: Արշակ
թագավորի իշխանությունը Հայաստանում նա դնում է պարզապես
Պարթևական թագավորության սկզբներում, ուստի և իր վկայու-
թյան վերջում ասում է, որ իրենց ազգականության պատճառով
Պարթև և Հայ Արշակունիները հինգ հարյուր տարի պահպանել էին

[1] Տե՛ս Մ. Աբեղյան, Հայոց հին գրականության պատմություն, I, էջ 597:
Համեմատե՛ Փավստոս, I, գլ. Է՝ «Եւ խօսս ետ թագաւորն Հայոց Խոսրով յիրմէ
եղբարցն, նոյն ի Սանէսանայ յարքայէն Մազքթաց»...: «Իբրև ետես [Խոսրով]
ալ սկսավ. ասէ՝ եղբայր իմ էր, ազգաւ Արշակունի»:
Ագաթանգեղոս, Վիեննա, 1891, էջ 103—104. Адонц, Начальная история Армении у Себеоса, „Византийский Временник", том VIII, № 1—2, 1901, էջ 292—294:
[2] Պրոկոպիոսի վկայության ուղիղ մեկնությունը տվել են Տաշյանը և Ադոնցը. տե՛ս Հ. Տաշյան,

իրար հետ խաղաղություն: Պրոկոպիոսի վկայությունից, ինչպես-տեսնում ենք, բնավ չի հետևում, որ իբր թե պարթևների թագավորն իր եղբայր Արշակին կարգել էր Հայոց թագավոր Աղեքսանդր Սեվերոսի ժամանակ:

Ներքև մենք կտեսնենք, որ Ագաթանգեղոսի Պատմության մեջ, որին աղբյուր է ծառայել հայ ժողովրդական վեպը, կարևոր հիշողություններ են պահպանվել երրորդ դարի պատմական անցքերի մասին: Սակայն միանգամայն ակներև է, որ նրա մեջ, ինչպես ցույց է տվել Աբեղյանը[1], մեծ տեղ է բռնում վիպական տարրը և տեղ-տեղ պատահում են նաև անունների ու դեպքերի շփոթումներ:

Իմ նախորդ աշխատություններից մեկում ես առանձնապես մատնանշել էի, որ Ագաթանգեղոսը, Սեբեոսը և Խորենացին երրորդ դարում հիշատակում են միայն երկու հայ թագավոր՝ Խոսրով Մեծ և Տրդատ Մեծ, մինչդեռ այդ դարում Հայաստանում իշխել են, իրապես, հինգ թագավոր հետևյալ հաջորդականությամբ՝ Խոսրով Ա, Տրդատ Բ, Արտավազդ, Խոսրով Բ և Տրդատ Գ[2]: Միանգամայն բնական է, ուրեմն, որ հիշյալ պատմագիրների մոտ սովորական են և՛ ժամանակագրական, և՛ այլ շփոթումներ: Հատկապես Ագաթանգեղոսի Պատմության մեջ, ինչպես այժմ հունա-հռոմեական աղբյուրների օգնությամբ պարզված է[3], Տրդատ Գ-ի հոր, Խոսրովին են վերագրված այն բոլոր դեպքերը, որ, իրապես, տեղի էին ունեցել Տրդատ Բ-ի ժամանակ, որը Հայաստանում թագավորել էր 216-ից մինչև 252 թիվը:

Երրորդ դարի պատմական անցքերը ներքև մենք տալու ենք համաձայն հունա-հռոմեական աղբյուրների, որոնց օգնությամբ, ինչպես կտեսնենք, նաև որոշվում են Ագաթանգեղոսի վիպական ավանդության մեջ եղած իրական պատմական հիշողությունները:

228 թվին, ինչպես վերև ասացինք, Սասանյան Արտաշիր Ա-ը, իր իշխանությունը Մեդիայի ու Ադիաբենի որոշ շրջանների վրա տարածելուց հետո, հարձակվել էր նաև Հայաստանի վրա: Սակայն այստեղ նրան հաղթական դիմադրություն էր ցույց տվել ո՛չ թե

[1] Տե՛ս «Հայոց հին գրականության պատմություն», I, էջ 165—166 և 591—605:

[2] Տե՛ս Հ. Մանանդյան, Գառնիի հունարեն արձանագրությունը և Գառնիի հեթանոսական տաճարի կառուցման ժամանակը, Երևան, 1946, էջ 12—13:

[3] Տե՛ս Գարագաշյան, Քննական պատմություն, Բ, էջ 268 և Գ, էջ 302, 306. *K. Aslan*, Études historiques sur le peuple arménien, էջ 141—143. *А. Аннинский*, Армянские историки как исторические источники, Одесса, 1899, էջ 43 և ուրիշները:

Խոսրովը, ինչպես սովորաբար ենթադրվում է, այլ Խոսրով Ա-ի որդի Տրդատ Բ-ը:

Այս անհաջողությունից մեկ տարի հետո, 230 թվին, Արտաշիր Ա-ը սկսեց մի նոր մեծ արշավանք՝ այս անգամ հռոմեական Միջագետքի ուղղությամբ: Նա պահանջեց հռոմայեցիներից, որ վերադարձնեն իրեն բոլոր այն երկրները, որոնք հին ժամանակներում պատկանել են Աքեմենյան Պարսկաստանին, այն է՝ ամբողջ Առաջավոր Ասիան:

230 թվին պարսկական զորքերն անցան Եփրատ գետը, գրավեցին Միջագետքը և պաշարեցին Մծբինը. պարսկական հեծելազորքի ասպատակություններին ենթարկվեցին նաև Միջագետքի հարևան երկրները՝ Ասորիքը և Կապադովկիան:

Հռոմի կողմից խաղաղության պահպանման ջանքերը մնացին անհետևանք, և Աղեքսանդր Սեվերոս կայսրը մի մեծ բանակով եկավ Արևելք՝ Անտիոք քաղաքը: Պատերազմական գործողությունները Սասանյան Պարսկաստանի դեմ սկսվեցին 232 թվին:

Հռոմեական բանակը, բաժանված երեք մասի, թշնամու վրա հարձակվելու էր երեք ուղղությամբ: Առաջին զորամասը, հյուսիսայինը, միանալով դաշնակից հայերի հետ, արշավելու էր Հայաստանի վրայով Մեդիա, ըստ երևույթին, Յունիուս Պալմատուսի առաջնորդությամբ[1]: Երկրորդ զորամասը պետք է գնար դեպի Տիգրոն հարավային ուղղությամբ և Եփրատ գետի երկարությամբ: Իսկ երրորդ զորամասը, կենտրոնականը, պետք է առաջ շարժվեր Աղեքսանդր Սեվերոսի առաջնորդությամբ հյուսիսային Միջագետքի կողմով:

Այս երեք զորամասերից հաջողությամբ կատարեց իրեն տրված առաջադրանքը միմիայն առաջինը, որը ներխուժեց Մեդիա և այնտեղ ավերածության մատնեց քաղաքներն ու գյուղերը: Կենտրոնական գլխավոր զորամասը Աղեքսանդր Սեվերոսի անվճռականության պատճառով շատ քիչ առաջ շարժվեց: Իսկ հարավայինը, որի վրա հարձակվել էր ինքը՝ Արտաշիրը, ծանր պարտություն կրեց:

Այնուհետև Աղեքսանդր Սեվերոս կայսրը, որի եվրոպական զինվորները չէին դիմանում Միջագետքի կլիմային, կարգադրեց զորամասերին նահանջել Անտիոք, և հռոմեական հյուսիսային զորամասը իր վերադարձի ժամանակ բավական կորուստներ ունեցավ Հայաստանում այնտեղի ձմեռվա ցրտերի պատճառով (233 թ.):

[1] Տե՛ս *Aeli Lampridii*, Alexander Severus, 58, 1 (Scriptores historiae Augustae, ed. Hohl, vol. I, Lipsiae, 1927, էջ 297):

Այս պատերազմի ընթացքում, ըստ երևույթին, մեծ կորուստներ էր ունեցել և նա էր նահանջել նաև Արտաշիր Ա-ը։ Դրանով հենց, հավանորեն, պետք է բացատրել, որ պատերազմն անորոշ ելք ունեցավ, և Միջագետքը մնաց հռոմեացիների ձեռքին։

Պետք է ասել, որ Ալեքսանդր Սեվերոսի այս արշավանքի մասին հունա-հռոմեական աղբյուրները հայտնում են հակասական կարծիքներ։ Բուն հռոմեական հեղինակները, օրինակ՝ Լամպրիդիոսը, Սեվերոսի արշավանքը համարում են հաղթական և փայլուն, սակայն հունական պատմիչները, օրինակ՝ Հերոդիանոսը և Զոնարասը, հռոմայեցիներին համարում են պարտված։

1. Aeli Lampridii, Alexander Severus, 55, 1—3 *և* 56, 1

«Արդ՝ այնուհետև նա [Ալեքսանդր Սեվերոսը] մեծ պատրաստությամբ արշավեց պարսիկների դեմ և հաղթեց նրանց հզոր թագավոր Արտաշիրին։ Նա հենց ինքը շրջանցում էր իր զորքի թևը, քաջալերում զինվորներին և ման էր գալիս, թեև դեռևս խնամակալության տակ էր։ Նա հանդես էր բերում մեծ ուժ և առանձին զինվորներին հորդորում էր խոսքով՝ սխրագործություններ անել։ Հաղթելուց և փախցնելուց հետո այդ թագավորին, որ ռազմի էր ելել, բերելով իր հետ յոթ հարյուր փիղ, հազար և ութ հարյուր գերանդավոր կառք և բազմահազար հեծելազոր՝ Ալեքսանդրը իսկույն վերադարձավ Անտիոք և իր զորքը հարստացրեց ավարի շնորհիվ, որ առել էր պարսիկներից. նա հրամայեց, որ զորավարները, գլխավորները ու նաև իրենք զինվորները վերցնեն իրենց, ինչ որ հափշտակել են գյուղերում։ ...Այնուհետև նա եկավ Հռոմ, ուր մեծ շուքով կատարեց հաղթահանդես»[1]։

2. Herodianus, Ab excessu divi Marci libri octo, VI, 5—6՝

«Երբ այդ գործերը կարգավորվեցին՝ նա [Ալեքսանդր Սեվերոսը] բազմաթիվ զորք հավաքեց և, հենց որ համոզվեց, որ իր զորքերն ուժեղ են և համապատասխանում են բարբարոսների մեծ թվին՝ խորհրդակցեց իր բարեկամների հետ և բաժանեց զորքը երեք մասի։ Նա հրամայեց, որ մի մասը գնա հյուսիսային կողմերը և, անցնելով Հայաստանի վրայով, որը համարվում էր հռոմայեցիների բարեկամ, արշավե մեդացիների երկիրը։ Մյուս մասը զորքի նա ուղարկեց, որպեսզի սա շրջագիտե բարբարոսների արևելյան կողմերը, ուր, ինչպես ասում են,

1 *Տե՛ս* Scriptores historiae Augustae, ed. E. Hohl, vol. I, Lipsiae, 1927, *էջ 295*։

խառնվելով իրար հետ Տիգրիսը և Եփրատը՝ կազմում են ընդարձակ ճահճային ծովեզրք և դրա համար էլ այդ առանձին գետերի բերաններն անհետ կորչում են։ Երրորդ մասը զորքի, ամենաընտիրը, որն ինքն էր առաջնորդում՝ նա հույս ուներ, որ կտանե բարբարոսների դեմ միջին ճանապարհով։ ...Արդ՝ թեև Ալեքսանդրը կարծում էր, որ ամենալավ որոշումն է կայացրել, բայց նրա ծրագիրը բախտը անհաջողության մատնեց. Հայաստանի միջով ուղարկված զորամասը (թեպետև ամառ էր, և հազիվ-հազ և դժվարությամբ ճանապարհը տանելի էր), անցնելով երկրի ամենա-անհարթ ու զառիթափ լեռների վրայով՝ ներխուժել էր մեդացիների աշխարհը, ավերել էր երկիրը, այրել էր շատ գյուղեր և ավարը վերցրել տարել էր...։

Այպա Պարսից թագավորի մոտ եկան մի քանի սուրհանդակներ և հայտնեցին, որ արդեն երևացել է հռոմայեցիների մյուս զորքը Պարթևստանի արևելյան կողմերում և ավերում է դաշտային շրջանները։ Ուստի և թագավորը, վախենալով, որ նրանք պարթևական երկիրն ավերելուց հետո, հեշտությամբ կներխուժեն Պարսք՝ թողեց որոշ ուժեր, որոնք, նրա կարծիքով, բավական էին Մեդիան փրկելու համար՝ և ինքն իր ամբողջ զորքով գնաց արևելյան կողմերը։ ...Եվ պարսից թագավորը հռոմեական զորքի համար անսպասելի կերպով եկավ իր բոլոր ուժերով և, շրջանցելով ու շատերին շրջապատելով և չորս կողմից նետահար անելով՝ հռոմեացիների զորքը կոտորեց...։ Եվ նա [Ալեքսանդր Սեվերոսը] մարդ ուղարկեց ու հրամայեց, որ Մեդիայում եղած զորքը ետ դառնա։ Եվ այդ զորքի մեծագույն մասը վերադարձի ժամանակ փչացավ լեռներում, իսկ բավական մասը ոչնչացավ այդ երկրի ծանր ձմեռվա պատճառով, այնպես որ վերադարձավ բոլոր զորքից միայն ամենափոքր մասը»[1]։

3. Zonaras, Epitome historiarum, XII, cap. XV՝

«Իսկ ինքը [Ալեքսանդր Սեվերոսը], սեփական զորքերը երեք մասի բաժանելով՝ հարձակվեց պարսիկների վրա։ Եվ մեծ կորուստ ունեցան պարսիկները, բայց ոչնչացան շատ շատերը նաև հռոմայեցիներից՝ ոչ այնքան թշնամիներից, որքան Հայաստանի լեռների միջով անցնելու ժամանակ։ Որովհետև այդ լեռներում խիստ ծանր ձմեռ էր՝ փչացան ցրտից, սևացան ու

1 *Տե՛ս հրատարակություն* K.Stavenhagen-*ի*, Lipsiae, 1922, *էջ 165 են.*։

ընդարմացան արշավողների ոտքերը, ոմանց էլ նաև ձեռքերը։ Ուստի և այդ բանում մեղավոր ճանաչվեց Ալեքսանդրը»[1]։

233 թվի ամառը Ալեքսանդր Սևերոսը վերադարձավ Հռոմ և 234 թվին նոր արշավանք սկսեց գերմանացիների դեմ։ 235 թվի մարտ ամսին նա սպանվեց Մայնցի մոտ և նրան հաջորդեց Մաքսիմինոս Թրակացին։

Որ հայերը դաշնակից էին հռոմայեցիներին ո՛չ միայն 232—233 թվերի պատերազմի ժամանակ, այլև դրանից հետո՝ այդ պարզ կերպով վկայում են դարձյալ Լամպրիդիոսը և Հերոդիանոսը, որոնք մատնանշում են, որ Մաքսիմինոս Թրակացու զորաբանակի մեջ, որը հաղթական կերպով պատերազմել էր գերմանացիների դեմ՝ կային դաշնակից հայերի աղեղնաձիգ գնդեր։

1. Aeli Lampridii, Alexander Severus, 61, 8՝

«Իսկ բոլոր բանակը, որը հետագայում Մաքսիմինոսը տարավ Գերմանիա՝ Ալեքսանդրինն էր և ամենազորեղն էր իրոք, որովհետև նրա մեջ կային հայեր, օսրոյենցիներ ու պարթևներ և ամեն ցեղի մարդիկ»[2]։

2. Herodianus, Ab excessu divi Marci libri octo, VII, 2՝

«Արդ՝ կարգավորելով վերոհիշյալը՝ նա [Մաքսիմինոսը] վերցրեց ամբողջ զորքը և, անվեհեր կերպով անցնելով կամուրջը, գնաց պատերազմի գերմանացիների դեմ։ Զորքի բազմությունը մեծ էր՝ նա տարել էր այնտեղ գրեթե ամբողջ հռոմեական զորքը, մավրուսացոց նետաձիգներ ամենամեծ թվով ու նաև աղեղնաձիգներ օսրոյենցի և հայ, որոնցից մի մասը հպատակներ էին, մի մասն էլ բարեկամներ էին ու դաշնակիցներ, իսկ ոմանք էլ պարթևներ էին, որոնք կամ փողով վարձվածներ էին և փախստականներ և կամ բռնված գերիներ էին, որ ծառայում էին հռոմայեցիների մոտ։ Զորքի այդ մեծ բազմությունը հավաքել էր դեռ առաջ Ալեքսանդրը, իսկ ավելի ուժեղացրել էր և միացրել ու վարժեցրել էր կռվի համար Մաքսիմինոսը»[3]։

Գերմանիա տարված հայ աղեղնաձիգների մասին առանձնապես ուշագրավ է նաև հռոմեական հեղինակ Տրեբելլիոս Պոլլիոնի վկայությունը, որը հաղորդում է, որ ներքին մեծ խառնակությունների ժամանակ Հռոմում հայ աղեղնաձիգները կայսր էին հայտարարել Տիտոսին։

1 Տե՛ս հրատարակություն L. Dindorf-ի, vol. III, Lipsiae, 1870, էջ 122։

2 Տե՛ս Scriptores historiae Augustae, ed. Hohl, vol. I, Lipsiae, 1927, էջ 300։

3 Տե՛ս հրատարակություն Stavenhage..-ի, Lipsiae, 1922, էջ 180։

«Ոմանք ասում են,—վկայում է նա,—որ նրան [Տիտոսին] կայսր էին ընտրել հայ աղեղնաձիգները, որոնց Մաքսիմինոսն ատում էր և նեղում իբրև Ալեքսանդրի կողմնակիցների»[1]։

Պարսկական-հռոմեական պատերազմի դադարումը 233 թվին և հաջորդ տարիներին Խրիստենսենը բացատրում է նրանով, որ այդ տարիների ընթացքում Արտաշիր Ա-ը նվաճումներ էր անում արևելյան շրջաններում[2]։ Սակայն չորս տարուց հետո, 237—238 թվերին, Արտաշիր Ա-ը նորից եկավ արևմուտք. նա մտավ Միջագետք և վերագրավեց Մծբինն ու Խառանը[3]։

Մաքսիմինոս Թրակացուն և երկու Գորդիանոսներին (237) հաջորդեց 238 թվին Գորդիանոս Գ-ը (238—244), իսկ Արտաշիր Ա-ին հաջորդեց 241 թվին նրա որդին, Շապուհ Ա-ը (241—272)։ Օգտվելով Հռոմեական կայսրության մեջ շարունակվող ներքին խառնակություններից՝ Շապուհ Ա-ը, հետևելով հռոմայեցիների հանդեպ իր հոր թշնամական քաղաքականությանը՝ 242 թվին առաջ շարժվեց մինչև Անտիոք քաղաքը, իսկ պարսկական հեծելազորն սկսեց նորից ասպատակել Կապադովկիան և Կիլիկիան։ Ըստ երևույթին, հենց այս արշավանքների ժամանակ նվաճված է եղել նաև Օսրոյեն-Եդեսիայի թագավորությունը։

Գարագաշյանը կարծում է[4], որ նույն այս ժամանակ պարսկական զորքերը գրավել էին նաև Հայաստանը և նրանց ձեռքն էր ընկել նույնիսկ Արտաշատ քաղաքը։ Սակայն, ինչպես շատ ճիշտ մատնանշել է Սանդալճյանը[5], Գարագաշյանի այդ կարծիքը, որ հիմնված է Յուլիոս Կապիտոլինոսի սխալ կարդացված մի վկայության վրա՝ արդյունք է ակներև թյուրիմացության։

«Այնտեղ,—պատմում է Յուլիոս Կապիտոլինոսը,—նա [Գորդիանոս Գ-ը] հաճախակի պատերազմ մղեց և հաղթեց ու մինչև իսկ, դուրս վարելով Պարսից թագավոր Շապուհին, որը թագավորում էր Արտաշիրից հետո, վերագրավեց Ան-

1 Տե՛ս „Trebelli Pollionis", Tyranni triginta, 32, 3 (Scriptores historiae Augustae, ed. Hohl, vol. II, Lipsiae, 1927, էջ 132)։

2 Տե՛ս Cambridge Ancient History, vol. XII, էջ 130։

3 Տե՛ս *Zonaras*, XII, 18. *Georgios Synkellos*, Բոննի հրատ., էջ 683. Նաև *Jul. Capit.*, Gord., 26, 5—6.

4 Տե՛ս Գարագաշյան, Քննական պատմություն Հայոց, Բ., էջ 272—274։ Համեմատե՛ նաև Աբեղյան, Հայոց հին գրականության պատմություն, I, էջ 593 և ուրիշները։

5 *Sandalgian*, Histoire documentaire, II, էջ 565։

տիրքը, Խառանը և Մծբինը, որոնք բոլորն էլ գտնվում էին պարսիկների իշխանության տակ»[1]:

Այս վկայության մեջ «որը թագավորում էր Արտաշիրից հետո»[2] խոսքերի փոխարեն սխալմամբ կարդացել են «Արտաշատից հետո և Անտիոքը... վերագրավեց»[3]:

242 թվին, երբ ներքին գրությունը Հռոմեական կայսրության բավական խաղաղվել էր, հռոմեական կայսր Գորդիանոս Գ-ը, որը գրեթե դեռ երեխա էր, հանդիսավոր կերպով հայտարարեց Շապուհ Ա-ին պատերազմ և իր աներոջ՝ պրետորյանների պրեֆեկտ Տիմեսիթեոսի, ուղեկցությամբ ու մեծ զորքով եկավ Արևելք:

243 թվին հռոմեական զորքերը հաղթական կերպով մտան Միջագետք, վերագրավեցին Խառանը, հաղթեցին պարսիկներին Ռեշայնայի մոտ, գրավեցին Մծբինը ու ամբողջ Միջագետքը և վերականգնեցին Օսրոյեն-Եդեսիայում Աբգար ԺԱ-ի թագավորական իշխանությունը[4]:

Հռոմայեցիներն արդեն պատրաստվում էին իջնել Եփրատ գետի երկարությամբ Բաբելոնիա և նվաճել Տիզբոն մայրաքաղաքը, բայց հանկարծակի 243 թվի վերջերը հիվանդացավ և վախճանվեց Տիմեսիթեոսը, որը հռոմեական զորքի իրական առաջնորդն էր:

Տիմեսիթեոսին հաջորդեց պրետորյանների պրեֆեկտի պաշտոնում Փիլիպպոս Արաբացին, որն ինքն էր ուզում դառնալ կայսր: 244 թվի գարնան սկզբներին Գորդիանոս Գ-ը սպանվեց Զաիթայի մոտ՝ Կիրկեսիումի և Դուրա-Եվրոպոսի միջև, և հայտարարվեց կայսր Փիլիպպոս Արաբացին (244—249): Եվ որովհետև հռոմեական զորքի մի մասը չէր ուզում շարունակել կռիվը՝ Փիլիպպոսը կնքեց Շապուհ Ա-ի հետ խաղաղության դաշնագիր և շտապեց վերադառնալ Հռոմ (245 թվին):

Այդ դաշնագրության մասին, որի մեջ հիշատակված է նաև Հայաստանը, տեղեկություն են տալիս բյուզանդական պատմագիրներ Զոնարասը, Զոսիմոսը և Եվագրիոսը[5], որոնց վկայությունները թարգմանաբար մեջ ենք բերում:

1 Տե՛ս *Juli Capitolini*, Gordiani tres, 26, 5—6 (Scriptores historiae Augustae, ed. Hohl, Lipsiae, 1927, II, էջ 49).

2 „qui“ post Artaxerxen „regnabat“.

3 Համեմատե՛ *Gutschmid A.*, Untersuchungen über die Geschichte des Königreichs Osroëne. St.-Pétersbourg, 1887, էջ 44, ծան. 1:

4 Տե՛ս *Juli Capitolini*, Gordiani tres, 26—27 (Scriptores historiae Augustae, ed. Hohl, II, էջ 49—50). *Zonaras*, I, 18. *Aurelius Victor*, Caesares 27, 8. *Eutropius*, IX, 2.

5 Այս պատմագիրները, ինչպես ենթադրում են, ուղղակի կամ անուղղակի կերպով օգտվել են Դեքսիպպոսի պատմական երկից:

1. Zonaras, XII, 19՝

«Սպա հաջորդեց Փիլիպպոսը, որը տեր դառավ Հռոմեական կայսրության: ...Նա հաշտություն կնքելով Պարսից թագավոր Շապուհի հետ՝ դադարեցրեց պատերազմը պարսիկների հետ և զիջեց նրանց Միջագետքը և Հայաստանը: Բայց երբ նա տեսավ, որ հռոմայեցիները վշտացած են այդ երկրների կորստի պատճառով՝ մի փոքր հետո դաշնագիրն անվավեր համարեց և երկրները ետ վերցրեց»[1]:

2. Zosimos, III, 32, 4՝

«Շատ ժամանակ անցնելուց հետո՝ Գորդիանոսը պատերազմեց Պարսից թագավորի դեմ և պատերազմի ընթացքում սպանվեց. սակայն նաև այս հաղթությունից հետո պարսիկները ոչ մի բան չգրավեցին հռոմայեցիների հպատակության տակ եղողներից: Բայց երբ Փիլիպպոսն իշխանության գլուխ անցավ՝ նա պարսիկների հետ կնքեց ամենաամոթալի հաշտությունը»[2]:

3. Evagrios, Historia ecclesiastica, V, 7՝

«Մեծ Հայաստանն առաջ հռոմայեցիների հպատակն էր. բայց Փիլիպպոսը, հաջորդելով Գորդիանոսին՝ տվեց այն Շապուհին, որով Փոքր Հայքը հռոմայեցիների ձեռքը մնաց, իսկ մյուս բոլոր մնացածը՝ պարսիկներին»[3]:

Այս վկայություններից պատմագիրների մեծագույն մասը՝ Մոմզենը, Նյոլդեկեն, Խալաթյանցը և ուրիշները՝ այն հետևությունն են հանել, որ Միջագետքը ու նաև Մեծ Հայաստանը, որը Հռոմի դաշնակիցն էր և վասալը, թեև դաշնագրությամբ տրվել էին Շապուհ Ա-ին, սակայն դաշնագիրը չէր իրականացվել, և հռոմեական զորքերը շարունակել էին մնալ այդ երկրներում[4]: Մարկվարտը, որ ընդունում է նույնպես, որ խաղաղության պայմանները մնացել էին թղթի վրա, ուշադրության առնելով հատկապես Եվագրիոսի վկայությունը՝ ենթադրում է, որ համաձայն դաշնագրի Մեծ Հայաստանի հարավային երկրները, Ծոփքը և Կորդուքը, որոնք Եվագրիոսի մոտ անվանված են «Փոքր Հայք», պետք է մնային հռոմայեցիների ձեռքը, իսկ Մեծ Հայաստանի մնացած մասը տրվելու էր պարսիկներին[5]:

1 Տե՛ս հրատարակություն Dindorf-ի, Lipsiae, 1870, vol. III, էջ 130:

2 Տե՛ս հրատարակություն L. Mendelssohn-ի, Lipsiae, 1887, էջ 154:

3 Տե՛ս editio H. Valesii, էջ 426:

4 Տե՛ս *Mommsen*, Römische Geschichte, V, էջ 422. *Nöldeke*, Aufsätze zur persischen Geschichte, Leipzig, 1887, էջ 93. *Халатьянц*, Очерк истории Армении, էջ 338 և ուրիշները:

5 Տե՛ս *Markwart*, Untersuchungen zur Geschichte von Eran, zweites

Այլ լուսաբանություն են տալիս հաշտության նույն դաշնագրին Cambridge Ancient History-ի մեջ լույս ընծայած իրենց հոդվածներում էնսլինը և Խրիստեննսենը[1]: Առաջինը սրանցից, ժխտելով Զոնարասի վկայության ճշտությունը, կարծում է, որ համաձայն 244 թվի դաշնագրի Միջագետքը և Փոքր Հայքը տրվել էին, իրապես, Հռոմեական կայսրությանը, և այնտեղ կուսակալ էր դրվել Փիլիպպոս Արաբացու եղբայրը՝ Պրիսկուսը: Իսկ Խրիստեննսենը ենթադրում է նույնպես, որ ըստ դաշնագրի՝ Հռոմեական կայսրությունը պահպանել էր իր ձեռքում Միջագետքը և Հայաստանը (այսինքն՝ Փոքր Հայքը), իսկ Հայկական թագավորությունը, որ ինքնուրույն պետություն էր, չէր կարող, հարկավ, զիջված լինել Սասանյան Պարսկաստանին և հիշատակված լինել պայմանագրի որևէ կետում:

Ինչպես տեսնում ենք, այս խնդիրը դեռ վերջնականապես չէ մեկնված և բավական մութն է: Աղբյուրների վկայություններից պարզ երևում է, սակայն, որ Հայաստանը չէր նվաճված Սասանյան Պարսկաստանի կողմից ո՛չ Փիլիպպոս Արաբացու և ո՛չ էլ նրա հաջորդի՝ Դեկոսի, ժամանակ (249—251): Նա իր անկախությունը պահպանել էր մինչև Գալլոս կայսեր (251—253) ժամանակը:

Երրորդ դարի կեսերին Հռոմեական կայսրության դրությունը, ինչպես հայտնի է, նորից խիստ կերպով ծանրացել էր թե ներքին խռովությունների և թե գոթերի աշխարհավեր հարձակումների պատճառով: Հատկապես Գալլոս կայսեր իշխանության ժամանակ նա այլևս չէր կարող ո՛չ միայն օգնել դաշնակից Հայաստանին, այլև պաշտպանել իր արևելյան սահմանները:

Օգտվելով այս բարեհաջող հանգամանքից՝ Շապուհ Ա-ը կարողացավ հաշիվ տեսնել Տրդատ Բ-ի հետ, որը մոտ 25 տարի հաջողությամբ պաշտպանել էր իր երկիրը պարսկական հարձակումներից, և 252/3 թվին գրավեց Հայաստանը: Տրդատ Բ-ը ստիպված եղավ փախչել և պատսպարվել հռոմայեցիների մոտ, իսկ նրա որդիները մնացին Հայաստանում և հնազանդվեցին Սասանյան Պարսկաստանին:

Հայաստանի հպատակումը Շապուհ Ա-ին և Տրդատ Բ-ի փախուստը պարզ ու որոշ հիշատակված են Զոնարասի հետևյալ վկայության մեջ.

«Նորից սրա [Գալլոսի] ժամանակ սկսվեցին պարսիկների խլրտումները և նրանք նվաճեցին Հայաստանը. այս երկրի

Heft, Leipzig, 1905, էջ 218—220, ծան. 2 [„Philologus", Supplementband, X, Heft 1].

[1] Cambridge Ancient History, vol. XII, 1939, էջ 88 և 131:

Տրդատ թագավորը փախավ, իսկ նրա որդիները մեկնեցին պարսից կողմերը»[1]:

Զոնարասի այս վկայության մեջ հիշատակված Տրդատը, ինչպես այժմ պատմագետներն ընդունում են, նույն անձն է, որը 217 թվին թագ էր ստացել Մակրինոս կայսրից: Ինչպես տեսնում ենք, նա թագավորել էր Հայաստանում 36 կամ 37 տարի (216—252/3):

Շատ պարզ է ըստ այսմ, որ հայ պատմիչների մոտ վիպական Խոսրովին վերագրված պարսիկների դեմ պատերազմները հիշողություն են, իրապես, այն երկարատև ու համառ կռիվների, որ պատմական այս Տրդատ Բ-ը, իբրև հռոմայեցիների դաշնակից ու վասալ, վարել էր Արտաշիր Ա-ի և Շապուհ Ա-ի դեմ:

Հայկական ավանդությունը վերոհիշյալ պատերազմների մասին, թեև ենթարկվել է վիպական-բանաստեղծական մշակման, սակայն, այնուամենայնիվ, ունի պատմական արժեք: Այդ ավանդությունը, որ պահպանվել է Ագաթանգեղոսի պատմական երկում, կարևոր եմ համարում մեջ բերել աննշան կրճատումներով:

«Արդ՝ նաև մյուս տարվա վերջում,—պատմում է Ագաթանգեղոսը,—Հայոց Խոսրով թագավորը սկսեց գունդ կազմել և զորք ժողովել, նաև հավաքեց Աղվանից ու Վրաց զորքերը և բացեց Ալանաց ու Ճորա պահակի դռները, դուրս բերեց հոների զորքերը, որպեսզի ասպատակեն Պարսից շրջանները և արշավեն Ասորեստանի կողմերը մինչև Տիզբոնի դռները:

Ավարի առնելով ամբողջ երկիրը՝ նա ավերածության մատնեց բաղձալի քաղաքների ու ավանների շեն տեղերը և ամբողջ շեն երկիրը դատարկ ու ավերակ դարձրեց: Նա աշխատեց այդ երկիրը վերացնել միջատեղից, բոլորովին կործանել, քանդել ու արմատախիլ անել. և մտածում էր նաև վերացնել Պարսից տերության օրենքները: Նա հաստատապես ուխտել էր մեծ ոխով վրեժ առնել իրենց տերության անկման համար. և աշխատում էր լիովին վրեժ առնել, նախանձաբեկ լինելով իր մեծ քենի պատճառով: Մեծապես խրոխտում էր նա, ապավինելով զորքերի բազմությանը և հույսը դնելով նրանց քաջության վրա:

Նրան շուտով օգնության հասան ժիր ու քաջ մարդկանց ու ձիերի մեծ բազմությամբ աղվանները, լփինները, ճիղպերը, կասպերը և ուրիշները ևս, որ այն կողմերից էին, որպեսզի վրեժ առնեն Արտավանի սպանման համար:

Թեպետև նա ինքը մեծ տրտմության մեջ էր ազգականների,

[1] Տե՛ս Zonaras, XII, 21 (ed. Dindorf, vol. III. Lipsiae, 1870, էջ 137):

եղբայրների վարքի պատճառով, որովհետև նրանք հնազանդվել էին և ծառա էին դառել Սասանյանց բարձրացող թագավորությանը և նրան համակերպվել էին, ու թեպետև Խոսրովը դեսպան էր ուղարկել, որպեսզի տոհմայիններն իրեն օգնության հասնեն, նրանց դիմադրեն իր թագավորության հետ միասին և աջակցեն այնտեղից, Քուշանների կողմերից, օգնության հասնեն այն մարդից, իրենց բուն աշխարհից՝ բաց ժողովուրդների ու մարտիկ զորքերի երկրից, սակայն պարթևների տոհմերը և ցեղապետները, նախարարները և նահապետները իրեն չէին լսել: Նրանք համաձայնել էին, հավանել էին և հպատակվել էին առավել Արտաշիրի տերության, քան իրենց ազգատոհմի և եղբայրների իշխանության:

Արդ՝ Խոսրովը վերցրեց իր զորքերի բազմությունը ու նաև նրանց, որոնք եկել էին զանազան կողմերից և օգնության էին հասել, իբրև պատերազմական գործի զինակիցներ: Իսկ Պարսից թագավորը, երբ տեսավ մեծ բազմությունը զորքի, որը մեծ ուժով առաջացել էր և եկել էր նրա դեմ՝ ինքը ևս ընդառաջ ելավ և պատրաստվեց պատերազմի: Սակայն նա չկարողացավ Խոսրովին դիմադրել և նրանց առջևից փախուստի դիմեց. Հետամտելով նրանց՝ սրանք Պարսից ամբողջ զորքը կոտորեցին. ցրեցին, գետին փռեցին դաշտերում և ճանապարհներում, չարաչար ոչնչացրին և սաստիկ հարված հասցրին նրանց:

Եվ Հայոց թագավորը վերադարձավ մեծ կոտորածից մեծ հաղթությամբ, շատ ավարով ու ցնծալից ուրախությամբ. նա վերադարձավ Հայաստանի կողմերը, Այրարատ գավառը, Վաղարշապատ քաղաքը. եկավ մեծ ուրախությամբ, բարի անունով և շատ ավարով:

. . . .

Իսկ երբ վրա հասավ մյուս տարին՝ նա հավաքեց խիստ մեծ զորք, կանչեց առաջվա զորքը և ավելի ևս շատ ասպատակություններ արեց Ասորեստանի կողմերում, քան առաջ, մանավանդ որ նրան օգնության էին եկել նաև տաճիկների զորքերը: Նրանք ավարի առան ամբողջ երկիրը և քաջությամբ վերադարձան իրենց տեղերը:

Եվ տասնմեկ տարի շուտ շուտ այսպես ավարի ենթարկելով՝ նրանք ավերեցին ամբողջ սահմանամերձ երկիրը, որը Պարսից թագավորության և իշխանության տակ էր»:

[«Արդ՝ ի միւս ևս ի գլուխ տարւոյն սկսանէր Խոսրով թագաւորն Հայոց գունդ կազմել և զօր բովանդակել, գումարել զզօրս

Աղուանից և Վրաց, և բանալ զդրունս Ալանաց և զճորայ պահակին, հանել զզօրս Հոնաց, ասպատակ դնել ի կողմանս Պարսից, արշաւել ի կողմանս Ասորեստանի, մինչև ի դրունս Տիզբոնի:

Աւար առեալ զերկիրն ամենայն՝ յապականութիւն դարձուցանէր զշինանիստ քաղաքացն և ամանացն ցանկալեաց. զշէն երկիրն ամենայն թափուր և աւերակ թողոյր. ջնջել ի միջոյ ի բաց կորուսանել, խլել բարձել, հիմն ի վեր ջանայր առնել, համարէր բառնալ զօրէնս տէրութեանն Պարսից: Ոխս եդեալ միանգամայն՝ զվրէժ խնդրել մեծաւ քինութեամբ զանկանելն իւրեանց ի տէրութենէն. սպառ սպուռ ջանայր զվրէժ խնդրել, մեծաւ քինու նախանձաբեկ լինելով. մեծամեծս փքայր՝ ի բազմութիւն զօրացն ապաստան եղեալ, և ի քաջութիւն զօրացն յուսացեալ: Վաղվաղակի ի թիկունս հասանէին մեծաւ բազմութեամբ ժիր և քաջ առն և ձիոյ և բուռն կազմութեամբ աղուանք, լփինք և ճիղպք, կասպք և այլ ևս որ ի սմին կողմանց, գի զվրէժ արեան Արտեանայ խնդրեսցեն:

Զի թէպէտ և էր ինքն ի մեծի տրտմութեան վասն բնութեան եղբայրութեան ազգատոհմին, զի հնազանդեցան և ի ծառայութիւն մտին համբարձելոյ թագաւորութեան Սասանայցւոյն, և ընդ նմին միամտեցան. զի թէպէտ և էր Խոսրովու և դեսպան արարեալ, զի իւրեանց տոհմայինքն ի թիկունս եկեսցեն և նոցա ընդդէմ կայցեն ընդ նորա թագաւորութեանն, անտի սմա ձեռն տուեալ ի կողմանց Քուշանաց, և յայնմ մարդէ և յիւրեանց ի բնուն աշխարհէն և ի բաց ազգաց և ի մարտիկ զօրացն զի ի թիկունս հասցեն. սակայն տոհմքն և ազգապետքն և նախարարքն և նահապետքն Պարթևաց ոչ լինէին ունկնդիր. զի միամտեալ և հաւանեալ և նուաճեալ էին ի տէրութիւնն Արտաշրի, քան ընդ տէրութիւն իւրեանց ազգատոհմին և եղբայրութեանն:

Սակայն առեալ Խոսրովու զբազմութիւն զօրաց իւրոց, և որ ուստեք ուստեք եկեալ հասեալ էին ի թիկունս օգնականութեան նիզակակիցք գործոյն պատերազմի: Իսկ իբրև ետես թագաւորն Պարսից զայն ամբոխ բազմութեան գնդի, զի մեծաւ ուժով դիմեալ եկեալ հասեալ էին ի վերայ նորա՝ եւ և նա ընդ առաջ ելեալ հասեալ էին ի վերայ նորա՝ նա ընդ առաջ գնացեալ պատերազմի: Բայց սակայն ոչ կարացեալ ունել զդէմ նորա, փախստեայ լինէր առաջի նոցա. զհետ մտեալ կոտորէին զամենայն զօրսն Պարսից, և դաշտացն և ճանապարհացն ցիր դիաթաւալ կացուցանէին և չարախառն վատ վատնէին և անհնարին հարուածս ի վերայ հասուցանէին:

Եւ թագաւորն Հայոց դառնայր ի մեծ կոտորածէն մեծաւ յաղթութեամբ և բազում աւարաւ և ցնծալից ուրախութեամբ ի կողմանս Հայոց յԱյրարատ գաւառ, ի Վաղարշապատ քաղաք, մեծաւ ուրախութեամբ և բարի անուամբ և բազում աւարաւ:...

. . . .

Բ. Իսկ ի գալուստ ամին միւոյ զօր բազում կուտէր յոյժ, զումարտակ առնէր, զնոյն զօր կոչէր. և ևս բազում քան զնոյն ասպատակ սփռեալ զկողմամբքն Ասորեստանի. մանաւանդ զի և զօրք տաճկաց ի թիկունս եկեալ էին. աւար առեալ զերկիրն զամենայն՝ քաջութեամբ դառնային յիւրաքանչիւր տեղիս:

Եւ ամս մետասան ստէպ ստէպ զայս օրինակ աւար առեալ՝ աւերէին զամենայն երկիր սահմանացն, որ ընդ Պարսից թագաւորութեամբն և ընդ իշխանութեամբն էր»][1]:

Պատմագետներից շատերը աշխատել են որոշել, թե երբ էին տեղի ունեցել տասնմեկամյա վերոհիշյալ կռիվները: Գուտշմիդը և ուրիշ շատերը Խոսրովի այդ արշավանքների ժամանակը ենթադրում են Արտաշիր Ա-ի առաջին արշավանքից հետո՝ 228—238 թվերին, Տաշյանը և Ասատուրյանը՝ 238—248 թվերին, իսկ Քրիստենսենը և ուրիշները՝ 242—252 թվերին[2]:

Պատմագետների այս ժամանակագրական ճշտումները, իհարկե, վիճելի կռահումներ են: Իրապես, հայ ժողովրդական էպոսի մեջ նկարագրված կռիվները տեղի էին ունեցել Արտաշիր Ա-ի ու նաև Շապուհ Ա-ի դեմ ո՛չ թե Խոսրով թագավորի, այլ Տրդատ Բ-ի թագավորության ընթացքում՝ 228 և 252/3 թվականների ժամանակամիջոցում:

Այդ կռիվների տեղը, ինչպես կարելի է եզրակացնել նաև հունա-հռոմեական աղբյուրների վկայություններից, եղել է, գլխավորապես, Մեդիան ու նրա հարևան Ադիաբենը, որը հայկական ավանդության մեջ անվանված է Ասորեստան:

Տաշյանը շատ ճիշտ մատնանշել է, որ վերև բերված Ագաթանգեղոսի պատմվածքները, թեև «ճիշտ և պատմական են», բայց «մթին և հարևանցի» են և նրա մեջ «շատ դեպքեր ի մի են ձուլ-

1 Տե՛ս «Ագաթանգեղեայ Պատմութիւն Հայոց», աշխ. Գ. Տեր-Մկրտչյանի և Ստ. Կանայանցի, Տփղիս, 1909, էջ 16—19 (Ա—Բ):

2 Տե՛ս *Gutschmid*, Agathangelos, ZDMG, XXXI, 1877, էջ 48. Տաշյան, Ագաթանգեղոս, էջ 100—101. Ասատուրյան, Քաղաքական վերաբերութիւններ, էջ 242, ծան. 1. *Christensen*, Cambridge Ancient History, v. XII, էջ 131 և ուրիշները:

ված»[1]: Այդ, հարկավ, այլ կերպ և չէր կարող լինել, որովհետև Ագաթանգեղոսի Պատմության սկզբի մասը ծագում է, ինչպես ասացինք, ժողովրդական վեպից, որը, փաստորեն, կիսապատմական բանահյուսական ստեղծագործություն էր:

Դինաստիական մեծ հեղաշրջման ու խլրտումների ժամանակ Իրանում, ինչպես երևում է Կասսիոս Դիոնի և Մովսես Խորենացու վկայություններից[2], Հայաստան էին եկել Տրդատ Բ-ի մոտ իրենց զորքերով ու կուսակիցներով Արտավան Ե-ի որդիները և նոր դինաստիայի հակառակորդ պարթև ազնվականությունը:

Այս գաղթականության կապակցությամբ, ինձ թվում է, կարելի է միանգամայն հավանական համարել Գ. Ասլանի ենթադրությունը, որը Մամիկոնյանների և Կամսարականների գաղթը Հայաստան գնում է Տրդատ Բ-ի (216—252/3) ժամանակ[3]: Սակայն այդ գաղթը, ինչպես միանգամայն ճիշտ մատնանշել է Կոգյանը, պետք է ենթադրել ո՛չ թե Պարթև Արշակունիների անկումից առաջ, ինչպես այդ ընդունում է Ասլանը, այլ նրանց անկումից, այսինքն՝ 224 թվից հետո[4]:

Որ նորագույն այս ենթադրությունը, հատկապես Մամիկոնյանների վերաբերմամբ, ավելի քան հավանական է՝ այդ կարելի է հետևցնել Մար-Աբասյան աղբյուրից քաղված Սեբեոսի Պատմության հայտնի հատվածից, որը պարզ վկայում է, որ Մամիկոնյանների նախնիքը, Մամիկն ու Կոնակը, գաղթել էին Հայաստան Ճենաստանից, այսինքն՝ Անդրկասպյան երկրի արևելյան շրջաններից, «յամս Արտաւանայ արքայի Պարթևաց և Մեծին մատնանշված է եղել նույնպես երրորդ դարի առաջին կեսում, Դժվար չէ նաև կռահել, որ Խորենացու օգտագործած աղբյուրի մեջ ևս Մամիկոնյանների նախնու, Մամկոնի, գաղթը Հայաստան մատնանշված է եղել նույնպես երրորդ դարի առաջին կեսում՝ Շապուհ Ա-ի (241—272) և Տրդատ Բ-ի (216—252/3) ժամանակ: Սակայն Խորենացին[6] հասկանալի պատճառով այդ Տրդատ Բ-ին

1 Տե՛ս Տաշյան, Ագաթանգեղոս, էջ 92:

2 *Cass. Dio.* LXXX, 3—4. Խորենացի, II, 73 («սիրելեօք յարեցելովք»):

3 *K. Aslan,* Études historiques sur le peuple arménien, Paris, 1909, էջ 139:

4 Ս. Կոգյան, Կամսարականները «տեարք Շիրակայ և Արշարունեաց», Վիեննա, 1926, էջ 13—14:

5 Տե՛ս «Սեբէոսի եպիսկոպոսի Պատմութիւն», հրատ. Ստ. Մալխասյանցի, Երևան, 1939, էջ 12 (գլ. Գ):

6 Տե՛ս Խորենացի, II, գլ. ՁԱ:

դարձրել է Տրդատ Մեծ, որովհետև նրա Պատմության մեջ Հայաստանի երեք Տրդատ թագավորները՝ Տրդատ Ա-ը, Տրդատ Բ-ը և Տրդատ Գ-ը՝ վերածվել են մեկ Տրդատի:

Ադոնցի կարծիքը, որ Մամիկոնյանները Տայքի արևմտակողմում ապրող ճաններից են ծագում՝ միանգամայն անընդունելի մի կռահում է, որից նա հրաժարվել է և ինքը իր վերջին աշխատություններից մեկում[1]:

Որ Կամսարականները ևս նույն այդ ժամանակ են գաղթել՝ այդ նույնպես երևում է նրանց ծագման մասին Խորենացու մոտ պահպանված ավանդությունից: Կամսարականների նախահայրն էր, ըստ Խորենացու Պատմության, Արշակունյաց Կարենյան ճյուղի շառավիղ Կամսարը, որը, չկամենալով հնազանդվել Պարսից Շապուհ Ա թագավորին (241—272), իր ամբողջ ընտանիքով գաղթել էր և ապաստանել Հայոց Տրդատ թագավորի մոտ[2]:

Խորենացու հիշատակած այս Տրդատը, ինչպես մանրամասն ցույց է տվել Կոգյանը[3], ո՛չ թե Տրդատ Մեծն էր, այլ Տրդատ Բ-ը (216—252/3): Ուրեմն՝ Կամսարականների գաղթը ևս կարելի է ենթադրել երրորդ դարի առաջին կեսում Պարթև Արշակունիների անկումից հետո:

Տրդատ Բ-ի փախուստից հետո հռոմայեցիների մոտ (252/3)՝ Հայաստանը, ինչպես կտեսնենք, դարձավ Սասանյան Պարսկաստանի հպատակ ու վասալ պետություն:

---

[1] Տե՛ս *Адонц*, Армения в эпоху Юстиниана, էջ 403—404. Նաև նույնի Histoire d'Arménie. Les origines, du Xe au VIe (av. J. C.), Paris, 1946.

[2] Խորենացի, II, գլ. Ձէ:

[3] Ս. Կոգյան, Կամսարականները, էջ 1—14:

ԳԼՈՒԽ ՅՈԹԵՐՈՐԴ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՏՐԴԱՏ Բ-ԻՑ ՀԵՏՈ ՄԻՆՉԵՎ ՏՐԴԱՏ Գ-Ի ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆԸ

1. Քաղաքական ընդհանուր դրությունը Հայաստանի նվաճումից հետո.— Շապուհ Ա-ի հաղթական արշավանքները.— Վալերիանոսի պարտությունը.— Արտավազդ Ե.— Արտավազդ Ե-ի նամակը Շապուհ Ա-ին.— Շապուհ Ա-ի արշավանքներն Արևելքում և նրա պարտությունը:— 2. Պալմիրայի քաղաքական մեծ դերը Ոդենատոսի ժամանակ.— Հայաստանի քաղաքական կացությունը.— Զենոբիա և Վաբալլաթ և Պալմիրայի անկումը.— Հայերի գործակցությունը Պալմիրայի հետ:— 3. Հայաստանի հռոմեական կողմնորոշումը 272 թվից հետո.— Խոսրով Բ Քաղաքական անհաստատ ու հեղհեղուկ դրությունն Արևելքում:— 4. Կարոսի հաղթական արշավանքը և Հռոմի գերիշխանության վերահաստատումը Հայաստանում.— Խոսրով Բ-ի սպանությունը.— սպանության տարեթիվն ըստ Սեբեոսի.— Տրդատ արքայորդու փախուստը:— 5. Պարսից Ներսեհ թագավորի հաղթական արշավանքը:— 6. Գալերիոս Մաքսիմիանոսի մեծ հաղթությունը.— այդ հաղթության մասին Փավստոսի վկայությունը:— 7. 298 թվի խաղաղության դաշնադրությունը.— Հայաստանի հարավ-արևելյան սահմանը:— 8. Անդրտիգրիսյան երկրների իրավական դրությունը:— 9. Տրդատ Գ-ի գահակալության մասին հայկական աղբյուրների վկայությունները.— Տրդատ Գ-ի գահակալության ստույգ տարեթիվը:

Երրորդ դարի երկրորդ կեսը շատ մութ շրջան է ո՛չ միայն Հայաստանի, այլև Հռոմեական կայսրության քաղաքական պատմության մեջ: Այս ժամանակաշրջանի գլխավոր հին աղբյուրներն են Հռոմեական կայսրերի կենսագրությունները (Scriptores historiae Augustae), որոնց արժանահավատությունը դեռ մինչև այժմ վեճի առարկա է և, ընդհանուր առմամբ, համարվում է կասկածելի[1]: Աղքատիկ են և կցկտուր նաև այս ժամանակաշրջանին վերաբերող չորրորդ դարի հռոմեական պատմության համառոտագրությունների և բյուզանդական ավելի ուշ շրջանի ժամանակագրությունների վկայությունները:

---

[1] Տե՛ս *M. Rostovzeff*, Gesellschaft und Wirtschaft im römischen Kaiserreich, Bd. II, übersetzt von L. Wickert, Leipzig, էջ 143—149:

Երրորդ դարի հռոմեական թվականներին, ինչպես երևում է այդ աղբյուրների վկայություններից, քաղաքական դրությունը Փոքր Ասիայում բացառիկ կերպով նպաստավոր էր Շապուհ Ա-ի իշխանության ծավալման համար Առաջավոր Ասիայի արևմտյան երկրներում: Այդ ժամանակ հռոմեական արևելյան նահանգները ենթարկվել էին հարձակումների միաժամանակ թե գոթերի ու բորանների կողմից, որոնք եկել էին հյուսիսից ծովային ճանապարհով և կողոպտում ու ավերում էին Կողքիսի և Փոքր Ասիայի ծովափնյա քաղաքներն ու շրջանները (253—255/6 թվերին), և թե պարսիկների կողմից, որոնք Հայաստանը նվաճելուց հետո ապահովել էին իրենց թիկունքը հյուսիսից և համարձակ կերպով ասպատակում էին և ավարառության մատնում Միջագետքն ու Ասորիքը: Շապուհ Ա-ը կարողացել էր նվաճել այստեղ Մծբինը, Խառանը ու Անտիոքը և հարձակումներ էր գործում մինչև իսկ Կիլիկիայի ու Կապադովկիայի վրա:

Պատմագետներից ոմանք կարծում են, որ գոթերի ու պարսիկների այդ արշավանքները կապ ունեին իրար հետ և պարսիկների նպատակն էր միանալ Փոքր Ասիայում գոթերի հետ[1]:

Շապուհ Ա-ի հաջողությունները թե այստեղ՝ արևմուտքում և թե արևելքում այնքան մեծ էին, որ նրան այլևս չէր բավարարում իր հոր «շահանշահ Իրանի» բարձր տիտղոսը, և նա իր արձանագրությունների մեջ անվանում էր իրեն «շահանշահ Իրանի և Անիրանի», այսինքն՝ «արքայից արքա արիների և ոչ-արիների»:

Պարսիկների հաղթական արշավանքներն արևմուտքում պարբերաբար կրկնվում էին: Սակայն շուտով, 256 թվին[2], արևելք եկավ հռոմեական կայսր Վալերիանոսը (253—260) ուղեկցությամբ պրետորիանների պրեֆեկտ Բալլիստայի ու Մարկիանոսի, և պարսիկները հարկադրված եղան մաքրել Անտիոքը:

Վալերիանոսը, Անտիոք ժամանելուց հետո, իր զորքը նախ առաջնորդեց Կապադովկիա և խանգարեց պարսիկներին միանալ գոթերի հետ: Այնուհետև նա, չնայած որ հռոմեական զորքի մեջ

[1] Տե՛ս M. Rostovzeff, Gesellschaft und Wirtschaft im römischen Kaiserreich, Bd. II, übersetzt von L. Wickert, Leipzig, էջ 152:

[2] Բուդապեշտի համալսարանի պրոֆեսոր Ալֆյոլդին (Alföldi), հիմնվելով հյուսիսային Ասորիքում վերջերս գտնված դրամների վկայությունների վրա, ենթադրում է, որ Վալերիանոսն Անտիոք էր եկել 253/4 թ. ձմեռը, և որ պարսիկներն Անտիոք քաղաքը գրավել էին երեք անգամ՝ 253, 258/9 և 260 թվերին. տե՛ս Cambridge Ancient History, vol. XII (1939), էջ 136, ծան. 3 և 170—172:

ավերածություններ էր գործում ժանտախտ հիվանդությունը, շտապեց գնալ Միջագետք և օգնության հասնել Եդեսիային, որը պաշարել էին թշնամու զորքերը: Սակայն Եդեսիայի մոտ Վալերիանոսը չարաչար պարտվեց և գերի ընկավ Շապուհ Ա-ի ձեռքը (260 թ.):

Սկզբնաղբյուրների վկայություններից երևում է, որ պարսկահռոմեական այս կռիվներին մասնակցել էին և հայերը՝ այժմ իբրև դաշնակիցներ պարսիկների ընդդեմ հռոմայեցիների:

252/3 թվին Հայաստանը, ինչպես վերև տեսանք, գրավել էին պարսիկները: Եվ հենց այս թվին, ինչպես հավանական է համարվում, Շապուհ Ա-ը թագավոր էր կարգել այնտեղ մի ոմն Արտավազդի, որի ծագման մասին հայտնված են զանազան հակասական կարծիքներ: Ալիշանը, օրինակ, սրան նույնացրել է Խորենացու մոտ հիշատակված Արտավազդ Մանդակունու հետ, Գ. Ասլանը ենթադրում է սրան Ատրպատականի թագավորների սերունդից, Աստուրյանը նույնացրել է նրան Արտավազդ Մամիկոնյանի հետ, իսկ Աննինսկին համարում է նրան Տրդատ Բ-ի որդի[1]: Այս կարծիքներից և ոչ մեկը հիմնավորված ու հաստատուն չէ: Կարելի է միայն հավանական համարել, որ այս Արտավազդ թագավորը, որը Սասանյան Պարսկաստանի կողմնակից էր և բարեկամ, Հայ Արշակունիների տոհմից չէր:

Տրդատ Բ-ի այս հաջորդը հիշատակված է Վալերիանոս կայսեր կենսագիր Տրեբելլիոս Պոլլիոնի մոտ, որը հաղորդում է, որ Արտավազդը նամակ էր գրել Շապուհ Ա-ին Վալերիանոսի գերումից հետո և խորհուրդ էր տվել նրան ազատություն շնորհել դժբախտ կայսրին: Հետաքրքիր այդ վկայությունը, որի մեջ Արտավազդն անվանված է Հայոց թագավոր, մեջ ենք բերում ամբողջությամբ:

«Արտավազդը, Հայոց թագավորը,— ասում է Տրեբելլիոսը,— ուղարկեց Շապուհին հետևյալ նամակը.— «Համակիր եմ քո փառքին, բայց երկյուղ եմ կրում, որ դու ոչ այնքան հաղթել ես, որքան հրահրել ես մոլեգին կռիվը: Վալերիանոսին այժմ պահանջում են ազատ արձակել և՛ նրա որդին, և՛ թոռը, և՛ հռոմեական զորավարները, և՛ ամբողջ Գալլիան, ամբողջ Աֆրիկան, ամբողջ Սպանիան, ամբողջ Իտալիան, ու նաև բոլոր ժողովուրդները, որոնք ապրում են Իլլիրիկումում, նաև արևելքում ու Պոնտոսում, և որոնք կողմնակից են հռոմայեցիներին

[1] Տե՛ս Ալիշան, Այրարատ, 1890, էջ 374. K. Aslan, Études historiques, էջ 143. Աստուրյան, Քաղաքական վերաբերություններ, էջ 245—246. А. Аннинский, Древние армянские историки, էջ 44:

կամ նրանց հպատակն են: Դու վերցրիր գերի միայն մի ծերունու, իսկ քեզ դեմ խիստ թշնամացրիր երկրագնդի բոլոր ժողովուրդներին. գուցե նաև մեզ դեմ, որ ուղարկել էինք քեզ օգնական զորքեր. մենք որ քո հարևաններն ենք՝ միշտ ծանր դրության մեջ ենք ընկնում, երբ դուք իրար հետ կռվում եք»[1]:

Վալերիանոս կայսրին գերելուց հետո Շապուհ Ա-ը վերանվաճեց Անտիոք քաղաքը, և պարսկական զորքերը, առաջ շարժվելով դեպի Փոքր Ասիա՝ գրավեցին Կիլիկիայում Տարսոս քաղաքը ու Կապադովկիայում՝ Կեսարիա-Մաժաքը և վերցրին ամենուրեք հարուստ ավար և անթիվ քանակությամբ գերիներ:

Շուտով սակայն սրանց առաջխաղացումը կանգ առավ: Սոլի-Պոմպեյոպոլիս քաղաքի մոտ՝ Կիլիկիայում, նրանց հուժկու հարված հասցրին և ետ մղեցին հռոմեական զորավարներ Մակրիանոսը և Բալլիստան: Այնուհետև ևս, երբ նրանք ետ էին դառնում իրենց երկիրը և անցնում էին Եփրատ գետը՝ նրանց պարտության մատնեց նաև Պալմիրայի արաբ իշխան Սեպտիմիոս Ոդենատոսը, որը նրանց ձեռքից խլեց ավարը և գերիներին (261 թ.): Հետագայում այս իշխանն առաջնակարգ դեր խաղաց ամբողջ Արևմտյան Ասիայում:

Պալմիրան (կամ ասորերեն Թադմորը), ինչպես հայտնի է, առևտրական մեծ քաղաք էր արաբական անապատում՝ Դամասկոսի ու Եփրատ գետի միջև: Նա հարստացել էր և բարգավաճում էր, որովհետև այս քաղաքի մոտով էր անցնում միջազգային մեծ առևտրի հարավային ճանապարհներից մեկը: Պալմիրան մեծ չափով ենթարկվել էր հելլենական և հռոմեական մշակույթների ազդեցության, և նրա մեջ կառուցվել էին գեղեցիկ ու հոյակապ շենքեր:

261 թվին Պալմիրայի Ոդենատոս իշխանը, որը, պարսկական զորքերը Եփրատի մոտ պարտելուց հետո, իրեն հայտարարել էր Պալմիրայի թագավոր, վերջ դրեց Մակրիանոսի որդու, Կվիետոս կայսրի իշխանությանը Հռոմեական արևելքում և նվաճեց հյուսիսային ամբողջ Ասորիքը: Գալլիենոս կայսրը (260—268) նրան ճանաչեց իբրև կուսակալ Ասորիքի և շնորհեց նրան «դուքս», «իմպերատոր» և «վերականգնող Արևելքի» (corrector Orientis) տիտղոսները:

Հաջորդ տարիների ընթացքում, 262—264 թվերին, Ոդենատոսը, իբրև հավատարիմ վասալ Հռոմեական կայսրության, հաջողությամբ վերսկսեց պատերազմը պարսիկների դեմ: Նա ազատեց պաշարված Եդեսիան, նվաճեց Մծբինը և Խառանը, վերագրավեց հռո-

[1] Տե՛ս Trebellius Pollio, Valerianus pater et filius, 6 (Scriptores historiae Augustae, edid. Hohl, v. II).

մեական ամբողջ Միջագետքը և, հաղթական կերպով առաջ շարժվելով՝ հասավ մինչև Տիզբոն: 266 թվին նա ռազմի ելավ գոթերի դեմ, որոնք եկել էին ծովով Հերակլեա, և ստիպեց նրանց ետ դառնալ: Նրա իշխանության տակ էին գտնվում այդ ժամանակ Ասորիքը և սրա շրջակա երկրները՝ Արաբիան, Պաղեստինը, Կիլիկիան և, հավանորեն, նաև Կապադովկիան:

Ոդենատոսի զորեղացման այս ժամանակաշրջանում, ինչպես ենթադրում են Մոմզենը, Խալաթյանցը, Գ. Ասլանը, Սանդալճյանը և ուրիշ շատ պատմագետներ, Հայաստանը ևս ճանաչել էր վերստին Հռոմի գերիշխանությունը[1]: Սակայն այդ մասին մենք հաստատուն տեղեկություններ չունենք: Ընդհակառակը, «Կայսրերի կենսագրությունների» (Historiae Augustae) մեջ հայերն այս ժամանակ հիշատակված են այն ժողովուրդների շարքում, որոնք անկախ էին Հռոմից[2]: Ուստի և ինձ ավելի հավանական է թվում Գաբրճյանի, Գարագաշյանի և Աննինսկու կարծիքը, որոնք մատնանշում են, որ հայերն այդ ժամանակ շարունակում էին մնալ Պարսից գերիշխանության տակ և Հայաստանում, ինչպես ենթադրում են Ադոնցը և Աննինսկին, դեռ թագավորում էր Արտավազդ Ե-ը (252/3 թվից մինչև, հավանորեն, 272/3 թիվը)[3]:

Ոդենատոսին, որը սպանվեց 266/7 թվին, հաջորդեց նրա որդին Վաբալլաթը (266/7—273), սակայն փաստորեն իշխեց նրա մայրը՝ Զենոբիան, որի գեղեցկությունը և քաջարիությունը գովաբանում են հռոմեական աղբյուրները:

Սրանց իշխանության սկզբում Հռոմի և Պալմիրայի հարաբերությունները բավական վատթարացան, որովհետև Գալլիենոս կայսրը ուզեց վերագրավել Հռոմեական արևելքը և, պարսիկների դեմ պատերազմելու պատրվակով, ուղարկեց Արևելք մի մեծ զորաբանակ: Սակայն Զենոբիան հռոմեական այդ զորքը ներս չթողեց Ասորիք: Եվ ուշագրավ է, որ այս դեպքը, կայսրության ծանր քաղաքական դրության պատճառով, հետևանք չունեցավ, ու շու-

[1] Տե՛ս Mommsen, Römische Geschichte, V, էջ 435. Халатьянц, Очерк истории Армении, էջ 342. K. Aslan, Études historiques, էջ 144. Sandalgian, Histoire documentaire, էջ 580 և ուրիշները:

[2] Տե՛ս Trebellius Pollio, Valerianus, 6. Նույնի, Tyranni triginta, 30, 7, 18. Vopiscus, Avrelianus, 11, 27, 28, 41 (Scriptores historiae Augustae, edid. Hohl, vol. II, Lipsiae, 1927).

[3] Տե՛ս Գաբրճյան, Տիեզեր. պատմութ., Բ, էջ 462. Գարագաշյան, Քննական պատմութիւն, Բ, էջ 274. Аннинский, Древние армянские историки, էջ 44. Адонц, Армения в эпоху Юстиниана, էջ 428:

տով վերականգնվեցին նախկին հարաբերությունները, և Պալմի-րան շարունակեց մնալ իբրև վասալ Հռոմի:

Կայսրության խառնակ վիճակը Գալլիենոսի հաջորդ Կլավդիոս Բ-ի ժամանակ (268—270) հնարավորություն տվեց Զենոբիային ավելի ընդարձակելու իր երկրի սահմանները: Պալմիրայի Զաբդաս զորավարը տիրեց և՛ Եգիպտոսին, և՛ գրեթե ամբողջ Փոքր Ասիային:

Հռոմի հանդեպ այս, իհարկե, մի նոր ոտնձգություն էր, և Զենոբիան, գիտակցելով այդ՝ իր որդուն, Վաբալլաթին, հայտարարեց «Օգոստոս» (Augustus), այսինքն՝ Պալմիրայի անկախ թագավոր, և բարեկամություն հաստատեց Սասանյան Պարսկաստանի հետ (271 թվին):

Հռոմում այդ ժամանակ Կլավդիոս Բ-ին հաջորդել էր Ավրելիանոսը (270—275), որը, իհարկե, չէր կարող հանդուրժել Հռոմեական արևելքի անջատումը կայսրությունից: 271 թվի ամառը հռոմեական կայսրը մեծ զորքով եկավ Իտալիայից Ասորիք: Երկու մեծ ճակատամարտում Անտիոքի և Եմեսայի (այժմյան Հոմսի) մոտ նա ծանր պարտության մատնեց Պալմիրայի զորքերը, գերի վերցրեց Զենոբիային ու Վաբալլաթին և կարճատև պաշարումից հետո գրավեց Պալմիրան (272 թվին):

Կայսեր հեռանալուց հետո Պալմիրայի բնակչությունը ապըստամբեց հռոմայեցիների դեմ, ուստի և Ավրելիանոսը շտապ կերպով վերադարձավ Ասորիք և այդ հարուստ առևտրական քաղաքն անխնա կերպով մատնեց սրի, կողոպուտի և ավերածության (273 թվին):

Հռոմեական աղբյուրների վկայություններից մեզ հայտնի է, որ Զենոբիայի դաշնակիցներն էին հռոմայեցիների դեմ պարսիկները և հայերը: Տրեբելլիոս Պոլլիոնի մոտ բերված է Ավրելիանոսի գրած նամակը հռոմեական ծերակույտին, որի մեջ մատնանշված է, թե որպիսի մեծ երկյուղ էր ներշնչել Զենոբիան արևելցիներին և, մասնավորապես, նաև հայերին:

«Կարող եմ ասել,—գրում է Ավրելիանոսը,—որ սրան [Զենոբիային] պետք է վերագրել, որ Ոդենատոսը հաղթեց պարսիկներին և, փախուստի մատնելով Շապուհին՝ հասավ մինչև Տիզբոն: Ես կարող եմ հավաստիացնել, որ այդ կնոջից այնքան էին ակնածում արևելյան և եգիպտական ժողովուրդները, որ ո՛չ արաբները, ո՛չ սարակինոսները, ո՛չ էլ հայերը չէին համարձակվում ժաժ գալ»[1]:

[1] Տե՛ս *Trebellius Pollio*, Triginta tyranni, 30 (Scriptores historiae Augustae, edid. Hohl, vol. II).

Եմեսայի մոտ տեղի ունեցած կռվից հետո, ինչպես հաղորդում է Փլավիոս Վոպիսկոսը, Ավրելիանոսը նամակ էր գրել Զենոբիային և առաջարկել էր անձնատուր լինել: Ուշագրավ է, որ այդ նամակի պատասխանի մեջ, որ գրել էր Զենոբիան, իբրև Պալմիրայի դաշնակիցներ հիշատակված են նաև հայերը: Զենոբիայի այդ նամակը ես կարևոր եմ համարում մեջ բերել ամբողջությամբ:

«Զենոբիա թագուհի Արևելքի Ավրելիանոս Օգոստոսին: Ոչ ոք մինչև այժմ բացի քեզանից չէր խնդրել նամակով այն, ինչ որ դու ես պահանջում: Ելքը պատերազմական գործողությունների լուծվելու է քաջության միջոցով: Խնդրում ես, որ անձնատուր լինեմ, որպես թե չգիտես, որ Կլեոպատրա թագուհին ուզեցել էր ավելի շուտ մեռնել, քան ապրել որևէ կերպ անարժանավորապես: Մեզ չեն պակասում օգնական զորքեր պարսիկների կողմից, որոնց արդեն մենք սպասում ենք: Մեր կողմն են սարակինոսները, մեզ կողմնակից են հայերը: Ասորի ավազակները քո զորքը հարվածել են: Ի՞նչ կլինի, եթե գա այն օգնությունը, որն ամեն տեղից սպասվում է: Մի կողմ կթողնես, իհարկե, քո բարձրահոնությունը, որի պատճառով այժմ հրամայում ես անձնատուր լինել, կարծելով՝ իբր ամենուրեք հաղթող ես»[1]: Փլավիոս Վոպիսկոսը մի փոքր ներքև հաղորդում է նաև, որ Ավրելիանոսը

«բռնել էր այն օգնական ուժերը, որ ուղարկված էին պարսիկների կողմից, իսկ սարակինոսների և հայերի դաշնակից ջոկատները կաշառել էր, նաև իր կողմն էր անցկացրել կամ բռնությամբ, կամ հնարամտությամբ: Վերջապես, նա մեծ զորքով հզորագույն կնոջը հաղթեց: Արդ՝ երբ հաղթված Զենոբիան փախչում էր ուղտերով, որ անվանվում են արվայիկներ [միասապատ ուղտեր], և գնում էր Պարսկաստան՝ բռնվեց հեծելազորի կողմից և հանձնվեց Ավրելիանոսի ձեռքը:

Այսպիսով Ավրելիանոսը հաղթող եղավ ու նաև ամբողջ Արևելքի տեր, որովհետև նա Զենոբիային կալանավորել էր և պարսիկների, հայերի ու սարակինոսների հետ[2] ավելի բարձ-

[1] Տե՛ս *Flavius Vopiscus*, Avrelianus, 27 (Scriptores historiae Augustae, edid. Hohl, vol. II).

[2] Տաշյանի մոտ («Ագաթանգեղոս», էջ 117, ծան. 4) թարգմանված է՝ «իբրև ի շղթայս էր Զենոբիա և ընդ նմա (էին) պարսիկք, հայք և սարակինոսք», սակայն Ասատրյանը («Քաղաքական վերաբերությունները», էջ 248) իրավացի կերպով մատնանշել է, որ Ավրելիանոսը ո՛չ թե գերի էր բռնել հայերին, այլ նրանց հետ համաձայնության էր եկել:

բամտորեն ու ավելի հպարտ կերպով էր հարգարում, ինչ որ պահանջում էր ժամանակի շահը»[1]:

Հայերն ու հայ զորքը հիշատակված են նաև Վոպիսկոսի հետևյալ հատվածներում.

1. Վոպիսկոս, Ավրելիանոս, 11՝

«Քո [Ավրելիանոսի] ձեռքումն է լինելու զորքի առաջնորդի պաշտոնը: Դու ունես նետաձիգներ՝ 300 իտուրիկեցիներ, 600 հայեր [ըստ երևույթին, Փոքր Հայքի], 150 արաբներ, 200 սարակինոսներ և 400 օգնական զորք Միջագետքի»:

2. Նույնը, 30՝

«Այդ [Կարրիական] մականունը [Ավրելիանոսի] համարվեց պակասավոր, որովհետև նա անվանվեց նաև Գոթական, Սարմատական, Հայական, Պարթևական և Ադիաբենական»:

3. Նույնը, 41՝

«Նա [Ավրելիանոսը] պարսիկներին, որոնք մինչև այդ ժամանակ ամբարտավանացել էին Վալերիանոսի կործանման պատճառով, ցաքուցրիվ արեց, ի փախուստ դարձրեց և պարտության մատնեց: Նրան սարակինոսները... իբերները, ալվանները, հայերը, նաև Հնդկաստանի ժողովուրդները, մեծարում են գրեթե իբրև աստծու»:

Ուշադիր կերպով քննելով մեջ բերված այս վկայությունները, ինձ թվում է, կարելի է հավանական համարել, որ Հայաստանը ինչպես Օդենատոսի, նույնպես և Զենոբիայի ժամանակ ենթարկված չէ եղել Պալմիրայի իշխանությանը, այլ գտնվել է Սասանյան Պարսկաստանի գերիշխանության տակ և վերջինիս հետ միասին դաշնակից է եղել Զենոբիային:

Բացի այդ, ինչպես մատնանշում են Տուրնեբիզը, Սանտալճյանը և Մորգանը[2], կարելի է ենթադրել, որ Զենոբիայի պարտությունից հետո Հայաստանը, հակառակ Մոմզենի, Խալաթյանցի, Լեոյի և ուրիշների կարծիքի[3], ընկել էր նորից կայսրության ազդեցության շրջանակի մեջ և ճանաչել էր վերստին Հռոմի գերիշխանությունը: Սրա ապացույց կարող է ծառայել ո՛չ միայն Ավրելիանոսի «Հայկան» տիտղոսը, այլև այն, որ վերև բերված վկայություններից մե-

---

1 *Flavius Vopiscus*. Avrelianus, 28.

2 Տե՛ս *Tournebize*. Histoire politique et religieuse de l'Arménie, էջ 432. *Sandalgian*. Histoire documentaire, էջ 581: *Morgan*. Histoire du peuple arménien, էջ 110:

3 *Mommsen*. Römische Geschichte, V, էջ 442: *Халатьянц*. Очерк истории Армении, էջ 344. Լեո, Հայոց պատմութիւն, Ա, էջ 539 և ուրիշները:

կում նա անվանված է «ամբողջ Արևելքի տեր»: Եվ, իրոք, Զոսիմոսի մի վկայությունից մեզ հայտնի է, որ 272 թվի իր հաղթություններից հետո Ավրելիանոսը միացրել է Հռոմին Միջագետքը[1]:

Ուշագրավ է նաև, որ Ավրելիանոսի հաղթահանդեսին մասնակցած ժողովուրդների այն շարքում, որ անկախ էին Հռոմից, չեն հիշատակված հայերը[2]: Այդ, ինչպես կարծում են, կարող է դարձյալ մի նշան համարվել, որ Հայաստանն այդ ժամանակ գտնվում էր Հռոմի հովանավորության տակ[3]:

Կարծում են, որ Հայաստանի ազատագրումը Պարսից գերիշխանությունից քաղաքական բարդություններ առաջ չէր բերել, որովհետև Սասանյան Պարսկաստանն այդ ժամանակ բավական թույլ էր և զբաղված էր իր ներքին գործերով: 272 թվին մեռել էր Շապուհ Ա-ը, որից հետո թագավորել էին Պարսկաստանում, արագ արագ իրար հաջորդելով, նրա որդիները՝ Հորմիզդ Ա-ը (272—273) և Վահրամ Ա-ը (273—276):

Փոփոխությունը Հայաստանում, հավանորեն, տեղի էր ունեցել Շապուհ Ա-ի մահից անմիջապես հետո, և կարելի է ենթադրել, որ հեղաշրջման ժամանակ Հայաստանի գահի վրա նորից վերահաստատվել էր Հռոմի բարեկամ Արշակունիների դինաստիան: Արշակունի հայ թագավորը, որը հաջորդել էր Արտավազդ Ե-ին, ըստ երևույթին, Տրդատ Մեծի հայր Խոսրով Բ-ն էր (272/3 մինչև, հավանորեն, 287 թիվը):

Այդ մասին հիշողություններ պահպանված են հայկական աղբյուրներում, գլխավորապես՝ Սեբեոսի և Մովսես Խորենացու մոտ, որոնք պարզ ու որոշ վկայում են, որ Տրդատ Մեծից առաջ, որը Դիոկղետիանոս կայսեր ժամանակ Հայաստանի թագավոր էր դրվել (284—305), Հայաստանում իշխել էր նրա հայրը՝ Խոսրովը:

Գ. Ասլանը կարծում է, որ այս Խոսրովը Տրդատ Բ-ի կրտսեր եղբայրն էր[4]: Սակայն, եթե նկատի ունենանք, որ հայ Արշակունի թագավորներն իրենց որդիներին անվանում էին պապերի անուններով՝ կարող ենք ավելի քան հավանական համարել, որ այս Խոսրով Բ-ը Խոսրով Ա-ի թոռն էր և Տրդատ Բ-ի ո՛չ թե եղբայրն էր, այլ որդին:

Ուշադրության արժանի է այս Խոսրով Բ-ի մասին Անանինկու

---

1 *Zosimos*. 60, 1.

2 *Vopiscus*. Avrelianus, 33.

3 Տե՛ս Ասատուրյան, Քաղաքական վերաբերութիւններ, էջ 249:

4 Տե՛ս *K. Aslan*. Études historiques, էջ 144:

հետաքրքիր մի նոր գիտողություն: Նրա կարծիքով, Տրդատ Մեծի որդի Խոսրով Կոտակի գահակալության վերաբերյալ Խորենացու ժամանակագրական վկայությունը, իրապես, վերաբերում է Տրդատ Մեծի հոր Խոսրով Բ-ին: Ըստ Խորենացու վկայության՝ Խոսրով Կոտակը գահ էր բարձրացել Պարսից Հորմիզդ թագավորի երկրորդ և Կոստանդիոսի իշխանության (337—361) ութերորդ տարում[1]: Ժամանակավրիպումը այս վկայության մեջ ակներև է, որովհետև Կոստանդիոսին ժամանակակից էր ո՛չ թե Հորմիզդը, այլ Շապուհ Բ-ը (310—379): Որովհետև Խորենացին Հորմիզդին համարում է Շապուհ Ա-ի (241—272) հաջորդ, ուստի և նրա վկայության մեջ, ինչպես շատ ճիշտ մատնանշում է Աննինսկին, վերոհիշյալ Հորմիզդը պարզապես Հորմիզդ Ա-ն է (272—273), որի երկրորդ տարում Հայաստանում գահ էր բարձրացել ո՛չ թե Խոսրով Կոտակը, ինչպես թյուրիմացաբար մատնանշում է Խորենացին, այլ Տրդատ Մեծի հայր Խոսրով Բ-ը (272/3 մինչև, հավանորեն, 287 թ.)[2]:

Խոսրով Բ-ի թագավորության ժամանակ քաղաքական դրությունն Արևելքում խիստ անկայուն էր և փոփոխական: Սասանյան Պարսկաստանը չէր կարող, իհարկե, հանդուրժելի համարել Հռոմի ազդեցության ու իշխանության վերահաստատումը Հայաստանում և Միջագետքում, ուստի և պարսկա-հռոմեական կռիվները պարբերաբար շարունակվեցին նաև երրորդ դարի վերջին քառորդում:

Պատմական այդ անցքերը, ինչպես և քաղաքական իրադրության տատանումները Հայաստանում, դժբախտաբար, մինչև այժմ դեռ բավարար կերպով պարզված չեն աղբյուրների ու նյութերի աղքատության և անբավարարության պատճառով:

Հավանորեն, դեռևս Ավրելիանոսի մահից անմիջապես առաջ Հռոմեական արևելքում տեղի էին ունեցել ինչ-որ փոփոխություններ: Վոպիսկոսի վկայությունից երևում է, որ Ավրելիանոսը 275 թվին մեծ զորք էր հավաքել և պատրաստվել էր պատերազմելու Սասանյան Պարսկաստանի դեմ, բայց Արևելք գալու ժամանակ ճանապարհին սպանվել էր[3]: Ուշագրավ է նաև, որ Զոսիմոսը, որի մոտ 272—3 թվերին Միջագետքը հիշատակված է իբրև հռոմեական երկիր, 276 թվի համար տալիս է տարբեր տեղեկություն, վկայելով, որ այդ ժամանակ Պրոբոս կայսեր (276—282) իշխանության տակ են եղել Արևելքում՝ Ասորիքը, Փյունիկիան, Պաղես-

¹ Խորենացի, III, գլ. Ը:

² Տե՛ս А. Аннинский, Древние армянские историки, էջ 54—55:

³ Vopiscus, Avrelianus, 35.

տինը և Եգիպտոսը[1]: Նրա վկայության մեջ Միջագետքը և Հայաստանը չեն հիշատակված:

Հունա-հռոմեական աղբյուրները հաղորդում են նաև, որ Պրոբոս կայսրը 279 թվին հաշտություն էր կնքել Պարսից թագավոր Վահրամ Բ-ի (276—293) հետ:

Այս հաղորդումը, ինչպես մատնանշել է Մոմզենը, կասկածելի է և անհավաստի[2]: Հավանական է միայն այն, որ Պրոբոսը ևս Ավրելիանոսի նման, երբ ռազմի էր գալիս Սասանյան Պարսկաստանի դեմ՝ ճանապարհին սպանվել էր (282 թ.):

Հայաստանի քաղաքական կացության մասին այս ժամանակներում մենք ոչ մի տեղեկություն չունենք: Ասատուրյանը ենթադրում է, որ Հռոմեական կայսրության թուլացման այս շրջանում Հայաստանը բավական անկախ դիրք էր ստացել և այնտեղ, հավանորեն, մեծ չէր ո՛չ միայն հռոմեական, այլև պարսկական ազդեցությունը[3]:

Հռոմայեցիները, իրենց խախտված իրավունքներն Արևելքում վերականգնելու համար, կարողացան պատերազմ սկսել պարսիկների դեմ միայն Կարոս կայսեր ժամանակ (282—283): Սա ուզեց նաև Հայաստանում վերահաստատել Հռոմի գերիշխանությունը, և մեծ զորքով եկավ Արևելք (282 թվի վերջերին): Նա մտավ նախ Հայաստան, և Խոսրով Բ-ը, ըստ երևույթին, վերստին ճանաչեց Հռոմի գերիշխանությունը:

Պարսից թագավոր Վահրամ Բ-ը շտապեց դեսպաններ ուղարկել և խնդրեց խաղաղություն կնքել, սակայն Կարոսը ետ ուղարկեց դեսպաններին և իր արշավանքը շարունակեց: Նա հեշտությամբ վերագրավեց Միջագետքը, հասավ մինչև Տիզբոն և տիրեց Սելևկիային, բայց 283 թվին Տիգրիսի ափերի մոտ հանկարծամահ եղավ[4]:

Կարոսի որդին, Նումերիանոսը, որ կայսր էր հայտարարվել, վերադարձի ժամանակ սպանվեց Նիկոմեդիայի մոտերքում: 284 թվին նրան հաջորդեց Դիոկղետիանոսը (284—305), որը դարձավ բացարձակ միապետ Հռոմեական կայսրության:

¹ Zosimos, I, 64.

² Տե՛ս Mommsen, Römische Geschichte, V, էջ 442, ծան. 1: Խառնաշփոթ տեղեկություններ խաղաղության կնքման մասին տալիս են՝ Vopiscus, Probus, 17 և Synesius. De regno, c. 18.

³ Ասատուրյան, Քաղաքական վերաբերությունները, էջ 247 և 249:

⁴ Vopiscus, Carus, 8. Zonaras, XII, 30. Eutropius, IX, 18. Aurelius Victor, Caes., XXXVIII. Տե՛ս Synesius. De regno, c. 18. Համեմատե՛ք նաև Խորենացի (II, գլ. ՀԹ), որի մոտ դեպքերը խիստ շփոթված են:

Պատմագիտական ուսումնասիրություններում, օրինակ, Մոմզենի, Տաշյանի, Խալաթյանցի և ուրիշների երկերում, մատնանշվում է, որ 283—286 տարիներում խաղաղության դաշն էր կնքված Վահրամ Բ-ի հետ և ըստ այդ դաշնագրության Հայաստանը տրվել էր Հռոմեական կայսրությանը[1]: Սակայն այդ պնդումները, որ հիմնված են Դիոկլետիանոսին վերաբերող ներբողական ճառերի կցկտուր ու մութ վկայությունների վրա[2], վիճելի են և դժվար ընդունելի:

Ավելի հավանական կարելի է համարել Ասատուրյանի և Աննինսկու կարծիքը, որոնք ենթադրում են, որ վերոհիշյալ թվերին օրինավոր դաշինք կնքված չէ եղել[3]: Ըստ երևույթին, մինչև երրորդ դարի վերջերը թե Հայաստանը և թե Միջագետքը տարտամ և անորոշ դրության մեջ են եղել և անցել են ձեռքից ձեռք: Հայաստանում այս խառնակ ժամանակաշրջանում, ինչպես վերև ասացինք, թագավորում էր Տրդատ Մեծի հայրը, Խոսրով Բ-ը:

Աննինսկին ենթադրում է, որ այս Խոսրով Բ-ն էր մասնակցել Կարոսի վերոհիշյալ արշավանքին և հասել էր մինչև Տիզբոն, ինչպես այդ մատնանշում է Ագաթանգեղոսը[4]: Հայկական ավանդությունը սրա սպանության մասին Սասանյան Պարսկաստանի թելադրանքով, որ մանրամասն մեջ է բերված Ագաթանգեղոսի Պատմության մեջ, թեպետև ունի իր մեջ վիպական-առեղծվածային մանրամասնություններ, սակայն ըստ էության կարող է լինել պատմական հիշողություն: Միանգամայն բնական է և հնարավոր, որ Խոսրով Բ-ի հակապարսկական վարքագիծը առաջ էր բերելու նրա դեմ կատաղի թշնամություն, ուստի և հավանական է, որ նրանից կարող է վրեժ առած լինել Պարսից թագավորը:

Խոսրով Բ-ի սպանության տարեթվի մասին ուշադրության արժանի է Աննինսկու կարևոր ցուցումը: Նրա կարծիքով, Սեբեոսի Պատմության մեջ ճիշտ են ցույց տրված թե Խոսրով Բ-ի սպանության և թե Տրդատ Գ-ի ու Կոստանդիանոսի գահակալության տարեթվերը: Եվ, հիրավի, Սեբեոսի հանուն, աղավաղումներով լի

1 *Mommsen*, Römische Geschichte, V, էջ 443. Տաշյան, Ագաթանգեղոս էջ 125. *Халатьянц*, Очерк истории Армении, էջ 345 և ուրիշները:

2 Տե՛ս Panegyrici latini XII՝ II (289 թ.), III (290 թ.), V (297 թ.) և XII (289 թ.): Համեմատե՛ Ասատուրյան, Քաղաքական վերաբերութիւններ, էջ 253, ծան. 1:

3 Տե՛ս Ասատուրյան, Քաղաքական վերաբերութիւններ, էջ 253 և *Аннинский*, Древние армянские историки, էջ 45:

4 Տե՛ս Ագաթանգեղոս, գլ. Ա, 19 (Տփղիս, 1909, էջ 16): Համեմատե՛ նաև «Սեբէոսի եպիսկոպոսի Պատմութիւն», հրատ. Ստ. Մալխասյանցի, Երևան, 1939, էջ 14—15 (գլ. Գ):

ցանկը, որ պարունակում է բազմաթիվ ժամանակագրական և սինխրոնիկական կոպիտ սխալներ, հատկապես այս մասում տալիս է պատմական ճիշտ թվեր, որոնք կատարելապես համապատասխանում են պատմագիտական նոր ուսումնասիրությունների տվյալներին: Ինչպես վկայում է Սեբեոսը՝

«Արտաշիր Պարսից թագավորի քսանմեկերորդ և Դիոկլետիանոս կայսեր չորրորդ տարում մեռել էր Խոսրով Քաջը վատանում Անակի ձեռքով: Եվ Հայոց աշխարհի վրա իշխում էր Պարսից Արտաշիր արքան 11 տարի: Դիոկլետիանոս՝ չորրորդ [տարին]:

Արտաշիրի երեսներորդ, Դիոկլետիանոսի տասնհինգերորդ տարում Տրդատիոսը կայսերական շքեղությամբ ելնում է իբրև ախոյան գոթերի թագավորի դեմ: Եվ իսկույն, ձերբակալելով ախոյանին, գոթերի վիթխարի թագավորին՝ բերում և ներկայացնում է Դիոկլետիանոս կայսրին: Եվ Դիոկլետիանոսը նույն այս թվին Տրդատին թագավոր է կարգում Հայոց աշխարհի վրա: Նա տալիս է սրա ձեռքը մեծ զորք և ուղարկում սեփական նրա իշխանությունը՝ Հայոց աշխարհը: Սա ամենայն քաջությամբ և բարեպաշտությամբ թագավորում է 70 տարի: Այսպես, ուրեմն, Արտաշիր՝ 32, Դիոկլետիանոս՝ 15, Տրդատես՝ առաջին [տարին]:

Հայոց Տրդատ արքայի իններորդ տարում թագավորում է Հունական աշխարհում Կոստանդիանոս, որը կառուցել է Բյուզանդիոն՝ 9 տարի»:

[«Յամի Ի-երորդի առաջներորդի Արտաշրի Պարսից արքային ի չորրորդում ամի Դիոկղետիանոսի կայսեր՝ մեռանի Քաջն Խոսրով ի վատանուն Անակայ: Եւ տիրէ ի վերայ աշխարհիս Հայոց Արտաշիր արքայ Պարսից ամս ԺԱ: Դիոկղետիանոսի՝ ղչորրորդն:

Յամին Լ-երորդի Արտաշրի, հնգետասաներորդի Դիոկղետիանոսի, կայսերական շքեղութեամբ Տրդատիոս ելանէ ախոյեան ընդդէմ արքայի գդաց: Եւ անդէն ձերբակալ արարեալ զախոյեանն անարի զթագաւորն գդաց՝ ածեալ կացուցանէ յանդիման կայսերն Դիոկղետիանոսի. և անդէն ի նմին ամի թագաւորեցուցանէ Դիոկղետիանոս զՏրդատ ի վերայ աշխարհիս Հայոց: Գումարէ ի ձեռս սորա զաւրս բազումս և արձակէ յիւրական իշխանութիւն յաշխարհին Հայոց: Որ տիրէ ամենայն քաջութեամբ և բարեպաշտութեամբ ամս Հ: Եւ է այսպէս. Արտաշիր՝ ԼԲ, Դիոկղետիանոս՝ ԺԵ, Տրդատէս՝ զառաջինն:

Յամին Թ-երորդի Տրդատայ արքային Հայոց թագաւորէ ի վերայ Յունաց աշխարհին Կոստանդիանոս, որ շինեաց զԲիւզանդիա՝ ամս Թ»][1]:

Սեբեոսի նռանուն ցանկի մեջ, ինչպես դժվար չէ համոզվել, միանգամայն սխալ է այն, որ իբր թե երրորդ դարում Հայաստանում թագավորել են միայն երկու թագավոր՝ Խոսրով Մեծը (51 տարի) և նրա որդի Տրդատ Մեծը (70 տարի), իսկ Պարսկաստանում՝ Սասանի որդի Արտաշիրը (50 տարի) և Արտաշիրի որդի Շապուհը (73 տարի):

Այս սխալն առաջացել է, ըստ երևույթին, նրանից, որ նռանուն ցանկի հեղինակը իր սինխրոնիկական հաշիվների համար հիմք է ընդունել Ագաթանգեղոսի մոտ բերված վիպական ավանդության անհավաստի ժամանակագրությունը: Իսկ Խոսրով Բ-ի սպանության և Տրդատ Գ-ի ու Կոստանդիանոսի գահակալության թվականները, հավանորեն, նրան հայտնի են եղել թանկարժեք մի այլ աղբյուրից, որի մեջ Խոսրով Բ-ի մահը մատնանշված է եղել Դիոկղետիանոսի չորրորդ տարում, այսինքն՝ 287 թվին, Տրդատ Գ-ի գահակալությունը՝ Դիոկղետիանոսի տասնհինգերորդ տարում, այսինքն՝ 298 թվին, և Կոստանդիանոսի գահակալությունն Արևմուտքում՝ Տրդատի իններորդ տարում, այսինքն՝ 306 թվին:

Այս երեք տարեթիվն էլ, որ տարբեր են մյուս հայ պատմագիրների ցուցումներից, ինչպես շատ ճիշտ նկատել է Աննինսկին[2], կարող են լինել պատմական և ճիշտ:

Թե ի՛նչ պարագաներում էր սպանված Խոսրով Բ-ը՝ այդ պարզ չէ, որովհետև այդ մասին մենք ունենք տարբեր ավանդություններ: Ըստ Ագաթանգեղոսի՝ նրան սպանել էր տվել դավով Արտաշիրը Անակ Պարթևի ձեռքով, և Խոսրովի որդիներից ազատվել էր միայն մանկիկ Տրդատը, որին դայակները փախցրել էին Հռոմեական երկիրը[3]: Իսկ Եղիշեի վկայությամբ՝ Տրդատին տղայության հասակում տարել էին Հռոմայեցոց երկիրը, ազատելով նրան «ի հայրասպան մարդախողխող հօրեղբարցն իւրոց»[4]: Եղիշեի այս վկայությունը, որ մեջ է բերված հայերի Թեոդոս կայսրին գրած նամակում, հավանորեն, ավելի մոտ է ճշմարտության, քան Ագաթանգեղոսի վիպական պատմվածքը: Ուստի և կարելի է թերևս ենթադրել, որ մանկիկ Տրդատի փախուստից հետո քաղաքական իշխանությունը Հայաստանում իրենց ձեռքն էին ձգել Խոսրով Բ-ի եղբայրները:

Ինչպես հայտնի է, պատմական այս անցքերը ժամանակագրական տեսակետից բոլորովին այլ կերպ են լուսաբանված Մովսես Խորենացու Պատմության մեջ: Խոսրով Մեծի մահը նրա մոտ ցույց է տրված Վալերիանոս կայսեր (253—260) ժամանակներում, իսկ Տրդատ Մեծի գահակալությունը՝ Դիոկղետիանոս կայսեր երրորդ տարում (286 թ.): Պետք է նկատի ունենալ սակայն, որ Խորենացու Պատմության այս մասում նրա արհեստական ժամանակագրական սխեման, որ կազմված է, գլխավորապես, Ագաթանգեղոսի վկայությունների և Սեբեոսի սխալաշատ ժամանակագրական ցանկերի հիման վրա՝ նրա պատմական երկի ամենաթույլ կողմն է: Ուստի և Խորենացու այդ տվյալները մենք կարող ենք անտեսել:

Պարսից Վահրամ Բ-ին 293 թվին հաջորդեց Շապուհ Ա-ի որդի Ներսեհը (293—302), որը, հետևելով իր հոր օրինակին, ուժեղ կերպով վերսկսեց պայքարը կայսրության դեմ: 295 կամ 296 թվին նա պատերազմ հայտարարեց Հռոմին և ուզեց իր իշխանությանը ենթարկել ո՛չ միայն Միջագետքն ու Հայաստանը, այլև ամբողջ Փոքր Ասիան: Ամմիանոսի վկայությամբ, նա վերագրավեց Հայաստանը, որն այդ ժամանակ գտնվում էր Հռոմի գերիշխանության տակ[1]: Նրա դեմ ռազմի ելավ Դիոկղետիանոսի զորավար Գալերիոս Մաքսիմիանոսը:

Գլխավոր ու վճռական ընդհարումը պարսիկների հետ տեղի ունեցավ Միջագետքում՝ Խառանի և Կալլինիկոմի միջև, մոտավորապես այն տեղերում, ուր հռոմեական զորքի 53 թվի (մեր թվականությունից առաջ) սոսկալի պարտությունից հետո սպանվել էր Կրասոսը: Այս ճակատամարտում Գալերիոս Մաքսիմիանոսը ծանըր պարտություն կրեց պարսկական հեծելազորից, որն իր թվով ու որակով ավելի ուժեղ էր, քան հռոմեականը (296 թ.): Հաղթված Գալերիոսը վերադարձավ Դիոկղետիանոսի մոտ Անտիոք, որը նրան խիստ կշտամբեց և, ի նշան արհամարհանքի, հրամայեց ամբողջ զորքի ներկայությամբ գնալ հետիոտն նրա առջևից:

Այս կռվին, հավանորեն, մասնակցել էր հռոմայեցիների մոտ ապաստանած Խոսրով Բ-ի որդին, Տրդատը, որն այնտեղ ապրել ու մեծացել էր Գալերիոս Մաքսիմիանոսի ընկերոջ՝ Լիկինիոս Լիկինիանոսի մոտ[2]: Ագաթանգեղոսի պատմելով, նա, ծանր վիրավոր-

---

1 «Սեբէոսի եպիսկոպոսի Պատմութիւն», հրատ. Ստ. Մալխասյանցի Երևան, 1939, էջ 15 (գլ. Գ):

2 *Аннинский*, Древние армянские историки, էջ 50—51:

3 Ագաթանգեղոս, գլ. Գ, 36 (Տփղիս, 1909, էջ 24):

4 Եղիշե, Գ, Վենետիկ, 1852, էջ 123:

1 *Amm. Marc.*, XXIII, 5, 11.

2 Այս Լիկինիոս Լիկինիանոսը, որը 307 թվին Գալերիոսի կողմից նշա-

ված լինելով կռվում, իր զենքերն ու ձիու սարքը մեջքին կապած՝ լողալով անցել էր իր ձիու հետ միասին լայն ու խոր Եփրատ գետը և անվնաս հասել էր Լիկինիանոսի մոտ[1]:

Պատերազմը պարսիկների հետ շարունակվեց նաև 297 թվին: Այս անգամ ևս հռոմեական զորքի առաջնորդն էր Գալերիոս Մաքսիմիանոսը: Սակայն նա այժմ պատերազմի վայր ընտրեց Հայաստանի լեռնային շրջանները, որոնք նպաստավոր չէին պարսկական հեծելազորի ռազմական գործողությունների համար: Հայաստանը շատ հարմար էր իբրև պատերազմի թատերավայր նաև այն տեսակետից, որ այնտեղ կարող էին իրեն օգնել Տրդատի կողմնակից հայերը:

Գալերիոսի այս հաշիվները շատ ճիշտ էին: Ներսեհի բանակը Հայաստանում գլխովին ջարդվեց (297 թ.): Գալերիոսի ձեռքն ընկան Պարսից թագավորի կանայք, քույրերն ու երեխաները, մեծամեծներից շատերը, նաև հարուստ ռազմական ավար: Սասանյան Պարսկաստանն այս անգամ բոլորովին հուսաբեկ եղավ, և Ներսեհ թագավորը շտապեց խաղաղության դաշն կնքել և հանձն առավ ամենածանր պայմանները:

Կնքված այդ խաղաղությունը տևեց քառասուն տարի, և Հայաստանն այդ ժամանակաշրջանում, գտնվելով Տրդատ Գ-ի և նրա որդի Խոսրով Գ-ի իշխանության տակ, խաղաղ կյանք ունենալով՝ առաջադիմեց կուլտուրապես և տնտեսապես:

Գալերիոս Մաքսիմիանոսի 297 թվի հաղթությունը, որ խիստ մեծ նշանակություն ունեցավ Հայաստանի համար , նկարագրել են և՛ հունա-հռոմեական, և՛ հայ պատմագիրները: Ավելորդ չեմ համարում այդ վկայություններից ամենակարևորները մեջ բերել ընդարձակ բովանդակությամբ:

1. Eutropius, Breviarium, IX, 24—25՝

«Բայց շուտով նա [Գալերիոսը] Իլլիրիկումի ու Միզիայի օժանդակությամբ զորք հավաքեց և նորից Մեծ Հայքում կռվի բռնվեց Հորմիզդի ու Շապուհի պապ Ներսեհի հետ ամենամեծ հնարամտությամբ և ոչ պակաս խորհրդածությամբ ու նաև քաջությամբ. նա մինչև իսկ կատարեց լրտեսի դեր երկու կամ երեք ձիավորի հետ միասին: Պարտության մատնելով Ներսե-

հին՝ նա կողոպտեց նրա բանակատեղը. վերցրեց նրա կանանց, քույրերին, երեխաներին և, բացի այդ, անթիվ քանակությամբ պարսիկ ազնվականներ ու պարսկական հարստագույն գանձեր: Իրեն [Ներսեհին] նա քշեց Պարսից թագավորության ամենահեռավոր ամայի տեղերը»:

2. Rufus Festus, Breviarium, գլ. XXV՝

«Երբ հրամանատարը [Գալերիոսը] երկու ձիավորի հետ լրտեսեց Մեծ Հայքում թշնամուն. և ապա, քսանհինգ հազար զորքով անսպասելիորեն հարձակվելով թշնամական բանակատեղերի վրա՝ նա իսկույն Պարսից անթիվ զորքերի վրա ընկավ և նրանց կատարյալ ջարդ տվեց: Պարսկաստանի թագավոր Ներսեհը փախավ. նրա կինը և աղջիկները գերի ընկան, բայց մեծագույն հսկողությամբ նրանց ողջախոհությունը պահպանեցին: Այդ բանի վրա զարմացած պարսիկները խոստովանում էին, որ հռոմայեցիներն իրենց գերազանցում են ո՛չ միայն զենքով, այլև բարքով: Եվ նրանք վերադարձրին Միջագետքը հինգ Անդրտիգրիսյան նահանգների հետ միասին: Խաղաղությունը կնքվեց և ի նպաստ կայսրության հարատևեց մինչև մեր օրերը»:

3. Aurelius Victor, Caesares, XXXIX՝

«Նախ նա [Գալերիոսը] ծանր պարտություն կրեց նրանցից, բայց իսկույն կազմակերպեց զորք վետերաններից ու նորակոչիկներից և դիմեց թշնամիների վրա Հայաստանի վրայով, որն ամուր հենարան է և հաղթության համար ավելի հեշտ ճանապարհ է: Վերջապես, նա այնտեղ իրեն հնազանդեցրեց Ներսեհ թագավորին, նաև միաժամանակ նրա զավակներին, կանանց և թագավորական արքունիքը: Հաղթությունն այնքան մեծ էր, որ եթե Վալերիոսը [այսինքն՝ Դիոկղետիանոսը][1], որի հրամանով ամեն ինչ կատարվում էր, մի ինչ-որ անհայտ պատճառով չհակառակեր, հռոմեական իշխանությունը կհաստատվեր նոր նահանգում»[2]:

Ներսեհի 297 թվի այս պարտությունը մանրամասն նկարագրված է նաև Փավստոսի Պատմության մեջ, որի մոտ, ինչպես ցույց է տվել Ադոնցը[3], Գալերիոս Մաքսիմիանոսի ժամանակ տեղի ունեցած անցքերը թյուրիմացաբար վերագրված են Հայոց Տիրան

նակվել էր Իլլիրիայի կուսակալ և անվանվել էր Կեսար, իսկ 313 թվին դառել էր Արևելքի միահեծան տիրակալ, ինչպես հաղորդում է Եվտրոպիոսը (X. 4), մասնակցել էր 296 և 297 թվերի պարսկա-հռոմեական կռիվներին:

[1] Տե՛ս Ագաթանգեղոս, գլ. ԺԹ (Տփղիս, 1909, էջ 108—109): Համեմատե՛ K. Aslan, Études historiques, էջ 147:

[1] Դիոկղետիանոսի անունն էր՝ Ավրելիոս Վալերիոս Դիոկղետիանոս:

[2] Համեմատե՛ նաև Orosios, VII, 25. 9 են.:

[3] Տե՛ս Адонц, Фауст Византийский как историк, Христианский Восток, 1917--1920, т. VI, вып. III, Петроград, 1922, էջ 247:

Թագավորի ժամանակներին։ Ինչպես հայտնի է, Փավստոսին աղբյուր է ծառայել այս մասում հայ ժողովրդական վեպը[1]։ Ուստի և միանգամայն բնական է, որ նրա մոտ պատմական իրադարձությունները այլափոխված են և նրանց ավելացվել են միֆոլոգիական-ստեղծական շինծու տարրեր։

Այնուամենայնիվ, Փավստոսի մոտ բերված ավանդությունն այնքան հետաքրքիր է, որ կարևոր ենք համարում մեջ բերել մանրամասն կերպով։

«Արդ՝ մինչ դեսպանները,—պատմում է Փավստոսը,—որոնք Հայոց երկրից կայսերական պալատն էին գնացել, դեռևս չէին վերադարձել իրենց երկիրը՝ արևելքի կողմից ճանապարհ ընկավ ու եկավ ինքը Պարսից Թագավոր Ներսեհը, որպեսզի գա, առնի, այրի ու ավերի, փչացնի և միանգամայն իրեն վերցնի Հայաստան երկիրն իր սահմաններով։ Նա եկավ հասավ Հայաստանի սահմանները իր ամբողջ զորքով, իր բուն աղխով, ամբողջ մեծ կարավանով, փղերի մեծ բազմությամբ, անթիվ ապրանքներով, բուն մաշկապաճյանով [Թագավորի կանանոցի վրանով], բոլոր կանանցով հանդերձ տիկնանց տիկնով. եկավ և լցրեց ու բռնեց ամբողջ երկիրը։

Այդ ժամանակ Հայոց նախարարների պատանդորդները վերցրին իրենց ընտանիքները, փախան գնացին Հունաց կողմերը և գույժը հայտնեցին կայսեր բազմազոր բանակի նախարարներին։ Այնուհետև, երբ Հունաց Թագավորն այս բոլորը լսեց՝ նույն ձևով նաև ինքը իր զորքը հավաքեց և շվեց ու եկավ հասավ Հայոց աշխարհը՝ Պարսից Թագավորի դեմ։ Նա իր բանակը թողեց Սատաղ քաղաքի մոտերքը և ընտրեց ինքը Հայաստանի բանակից երկու ականավոր ու իմաստուն մարդ, այն է՝ Արշավիրին և Անդովկին, որոնք մի փոքր առաջ եկել էին նրա մոտ իբրև դեսպաններ։ Եվ այսպիսով նրանց հետ միասին նաև ինքը կայսրը շինականի կերպարանքով, իբրև կաղամբ վաճառող, մտավ Պարսից բանակը։

Եվ նա [Պարսից Թագավորը] բանակել էր Բասեն գավառում՝ Ոսխա կոչվող գյուղում։ Նրանք եկան, մտան Պարսից Թագավորի բանակը, դիտեցին, քննեցին, իմացան թիվն ու ույժը նրանց զորքերի։ Եվ այստեղից նրանք վերադարձան իրենց բանակը, կազմակերպվեցին, պատրաստվեցին և եկան նորից ու գտան Պարսից Թագավորի բանակը, նույն տեղում, ուր բանակել էին անփույթ ու անհոգ, խաղաղ ու առանց կասկածանքի։ Արա
երբ լույսը բացվեց, նրանք հարձակվեցին Պարսից Թագավորի
վրա, որի անցկացրին ամբողջ բանակը և ոչ մեկին կենդանի
չթողին։ Եվ նրանք կողոպտեցին ու թալանեցին բանակը, վերցրին Թագավորի կանանց ու բամբիշին և նրանց հետ միասին
նաև տիկիններին, վերցրին նույնպես նրանց բոլոր գույքը և
ունեցվածքը. նրանք գերի տարան թե նրանց կանանց և թե
նրանց գանձերը, պաշարեղենը ու կահ-կարասիքը։
Բայց միայն Թագավորը հազիվհազ ազատվեց, նաև պզտիկ
ձիու վրա նստած մի սուրհանդակ առջևից. նա դուրս պրծավ,
փախավ և հազիվ կարողացավ հասնել ու ընկնել իր աշխարհը։
Իսկ կայսրը մեծ շքեղությամբ պերճացած երևելի եղավ բանակի մեջ։ Բոլոր չափահասներին նրանք կոտորեցին, իսկ
մյուս բոլորին գերի տարան Հունաց աշխարհը»։

[«Արդ մինչ դեռ դեսպանքն երթեալք յերկրէն Հայոց ի կայսերական պաղատն չև էին անդրէն յիւրեանց աշխարհն դարձեալ, ի կողմանց արևելից խաղաց գնաց ինքն Ներսեհ արքայն Պարսից, գալ առնուլ այրել և աւերել, կորուսանել և միահաղոյն իսկ յիւր վարել զսահմանս Հայաստան երկրին։ Եւ առեալ զամենայն զօրս իւր բնիւ աղխիւ և ամենայն մեծաւ կարաւանաւ, փղակոյտ բազմութեամբ հանդերձ, անթիւ վաճառօք և բնիւն մաշկապաճենօքն, և ամենայն կանանօքն, և հանդերձ տիկնանց տիկնաւն, եկն եհաս ի սահմանս Հայոց.
խճողեաց ելից զերկիրն առ հասարակ։
Յայնմ ժամանակի պատանդօրքն նախարարացն Հայոց առեալք զիւրաքանչիւր ընդանիս, լինէին փախստականք, ի կողմանս Յունաց անդանէին, գոյժ տային կայսերն բազմագունդ բանակին նախարարացն։ Ապա իբրև զայս ամենայն լսէր թագաւորն Յունաց, նոյնօրինակ և նա զիւր զօրսն գումարէր. և չու արարեալ գայր հասանէր յերկիրն Հայոց ընդդէմ թագաւորին Պարսից։ Եւ եթող զիւր բանակն զՍատաղ քաղաքաւ. և ինքն ընտրեաց իւր արս երկուս գլխաւորս, արս իմաստունս ի Հայաստան բանակէն, այս ինքն զԱրշաւիրն և զԱնդովկն. զի այս արք էին, որ շոգան առ նա դեսպանութեամբ յառաջնում
նուագին։ Եւ այսպէս հանդերձ նոքօք ինքն իսկ կայսրն ի շինականութեան կերպարանս, ի կաղամբավաճառի օրինի, մտանէր ի բանակն Պարսից։

[1] Համեմատե՛ Կ. Մելիք-Օհանջանյան, Տիրան-Տրդատի վեպը ըստ Փավըստոս Բուզանդի. «Տեղեկագիր», Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի, հաս. գիտ., 1947, № 6, էջ 59—74 և № 7, 59—77։

Իբրև էր նա բանակեալ ի գաւառին Բասենոյ, ի գեւղն՝ որ անուանեալ կոչի Ոսխայ, եկին մտին ի բանակն արքային Պարսից, գիտեցին քննեցին զչափ առին զնոցա զօրութիւն զօրացն: Եւ անտի դարձան յիւրեանց բանակն, կազմեցան պատրաստեցան. գային, հասանէին, գտանէին զբանակն արքային Պարսից ի նմին տեղւոջ բանակեալ ի պղերգութեան յանհօգութեան յանկարծակ խաղաղութեան:

Այպ հասեալ ի տուընջէն ժամուն, անկանէին ի վերայ թա-գաւորին Պարսից, ընդ սուր գամենայն բանակն հանէին, և ոչ զմի ոչ ապրեցուցանէին: Եւ առին զկապուտ զաւար բանակին, և զկանայս թագաւորին և զբամբիշն, և զբանսկան ընդ նոսին. և զինչս և զստացուածս նոցին ընդ նմին ի գերութիւն վարէին, զկանայս նոցա և զզանձս և զկեանս և զկազմած նոցա:

Բայց միայն թագաւորն ապրեալ մազապուր, պէշապիկ մի սուրհանդակ առաջի, ապրեալ ելանէր փախստական. հազիւ ուրեմն կարէր անկանել, հասանել յաշխարհ իւր: Իսկ կայսրն մեծաւ շքեղութեամբ անուանի պերճացեալ ի մէջ բանակին երևեալ. զայր ի չափ հասեալ առ հասարակ կոտորէին, և զա[մ]ենայն ի գերութիւն վարէին յերկիրն Յունաց»][1]:

Մեջ բերված Փավստոսի այս պատմվածքից երևում է, որ 297 թվին հռոմեական-հայկական զորքերը պարսիկների հետ ընդհարում և կռիվ չէին ունեցել, այլ նրանք վաղ առավոտյան հանկարծակի հարձակվել էին Ներսեհի բանակի վրա, երբ պարսիկները դեռևս անհոգաբար հանգստանում էին իրենց բանակատեղում, և անխնա կոտորել ու գերել էին նրանց ու մեծ ռազմական ավար էին վերցրել: Փավստոսի մոտ կարող է պատմական և ստույգ լինել նաև այն, որ այդ կոտորածը տեղի էր ունեցել Հայաստանի Բասեն գավառում:

Այս աղետալի պարտությունից հետո Պարսից Ներսեհ թագավորը դեսպաններ ուղարկեց Դիոկղետիանոս կայսեր մոտ և խնդրեց ազատել գերիներին, հանձն առնելով խաղաղության դաշն կնքել ծանր պայմաններով: Դիոկղետիանոսը Ներսեհի մոտ ուղարկեց հռոմեական բարձր պաշտոնյա (magister memoriae) Սիկորիոս Պրոբոսին, որը 298 թվին պարսիկների հետ կնքեց հաշտություն:

Ըստ այդ դաշնագրության Սասանյան Պարսկաստանը զիջեց Հռոմեական կայսրությանը ո՛չ միայն Միջագետքը, այլև Անդրտիգրիսյան երկրները (Regiones Transtigritanae)՝ Ծոփքը, Անգեղ տունը, Աղձնիքը, Կորդուքը, Մոկքը, Ծավդեքը և Ռեհիմենան[2]:

[1] Փավստոս, III, գլ. ԻԱ (Վենետիկ, 1889, էջ 55—56):

[2] Տե՛ս Կ. Գյուտերբոգ, Հռոմեական Հայաստան և հռոմեական սատրապությունները Դ—Զ դարերում, թարգմ. Մ. Նորշուանի, Վիեննա, 1914, էջ 7—8, Բ. Պիլեգիկճյան, Հ. Հյուբշման, Հին հայոց տեղւոյ անունները, թարգմ. Վիեննա, 1907, էջ 30—31, Адонц, Армения в эпоху Юстиниана, էջ 43 և

Հայաստանը ճանաչվեց իբրև Հռոմի վասալ պետություն, և նրա հարավ-արևելյան սահմանը Ատրպատական-Մարաստանի կողմից որոշվեց Զինթա ամրոցը:

Խաղաղության այս պայմանները հիշատակված են վեցերորդ դարի բյուզանդական պատմագիր Պետրոս Պատրիկիոսի պատմական երկում, որից պահպանվել են սակավաթիվ հատվածներ:

«Արդ՝ դեսպանության առաջադրած գլխավոր կետերը,— վկայում է Պետրոս Պատրիկիոսը,— հետևյալներն էին. արևելյան երկրամասում հռոմայեցիներին են պատկանելու Ինգիլենեն Ծոփքի, Աղձնիքի, Կորդուքի և Ծավդեքի հետ միասին. Արմենիա սահմանը լինելու է Զինթա ամրոցը, որը գտնվում է Մեդիայի սահմանում. Իբերիայի թագավորն իր թագավորական նշանները պետք է ստանա հռոմայեցիներից»[1]:

Մեջ բերված այս վկայության մեջ հիշատակված Զինթա ամրոցը, որ Հայաստանի սահմանն էր լինելու հարավ-արևելքում, ինչպես մանրամասն ցույց է տրված իմ աշխարհագրական աշխատությունններից մեկում, թե իր անունով և թե իր տեղագրությամբ կարող է համապատասխան լինել սորեստանյան արձանագրությունների Իզիրտուին կամ Զիրտային, որը գտնվում էր Ռեվանդուզից Ատրպատական-Մեդիա գնացող ճանապարհի վրա՝ Զագրոս լեռների կամ Զարասպի արևելակողմում[2]: Համաձայն իմ այս լուսաբանության՝ 298 թվի դաշնագրությունից հետո Արշակունյաց Հայաստանի հարավ-արևելյան սահմանը պետք է լիներ Զագրոս լեռների այն մասում, որը գտնվում էր Ուրմիա լճի հարավ-արևմուտքում:

Անդրտիգրիսյան վերոհիշյալ երկրները՝ Ծոփքը, Անգեղ տունը, Աղձնիքը, Մոկքը, Կորդուքը, Ծավդեքը և Ռեհիմենան, որ հռոմեական աղբյուրներում անվանվում են նաև սատրապություններ, թեև կախում ունեին Հռոմից, սակայն իրավական իրենց դրությամբ փաստորեն կիսանկախ դաշնակից երկրներ էին, որոնց մեջ շարունակում էին իշխել նախարարական հին տոհմերը: Ուշագրավ

[1] Տե՛ս Petr. Patric., fragm. 14 (Dindorf, Historici graeci minores, I, էջ 443), համեմատե՛ նաև Amm. Marc., XXV, 7, 9. Aurel. Victor, Caes., 39, 35—37 և ուրիշներ:

[2] Տե՛ս Հ. Մանանդյան, Պատմական-աշխարհագրական մանր հետազոտություններ, Երևան, 1945, էջ 15—18:

է նաև, որ նույն այս երկրները, ինչպես երևում է հայկական աղ-
բյուրների վկայություններից, լինելով քաղաքականապես գրեթե
անկախ իշխանություններ, 298 թվից հետո ևս, իբրև նախարարու-
թյուններ ու բդեշխություններ, սերտ կապված էին մնում Մեծ Հա-
յաստանի հետ, և, ըստ երևույթին, որոշ չափով գտնվում էին նաև
Հայ Արշակունիների գերիշխանության տակ:

Համաձայն 298 թվի խաղաղության դաշնագրի՝ Հայաստանն
ազատագրվեց Պարսից իշխանությունից և դառավ նորից վասա-
լական թագավորություն Հռոմեական կայսրության հովանավորու-
թյան տակ: Հայաստանի գահը տրվեց Խոսրով Բ-ի որդուն՝ Տրդատ
Գ-ին, որն անձամբ մասնակցել էր 296—297 թվերի կռիվներին և
հռոմեական բանակին մատուցել էր կարևոր ծառայություններ:

Տրդատ Գ-ի գահակալության մասին հայկական աղբյուրները
տալիս են մանրամասն տեղեկություններ, որոնք թեև համարվում
են խառնակ ու իրար հակասող, սակայն իրապես, ինչպես կտես-
նենք, հիմնականում իրար հետ գրեթե համերաշխ են:

1. Ագաթանգեղոս, գլ. Դ, 46—47՝

«Այն ժամանակ [գոթերի թագավորի հետ մենամարտից հե-
տո] թագավորը [Հունաց] խիստ մեծարեց Տրդատին և նրան
տվեց մեծամեծ պարգևներ: Նրա գլխին թագ կապեց և, ծիրա-
նի զգեստներ հագցնելով, նրան բարձրացրեց և, կայսերա-
կերպ զարդով շքեղացնելով՝ նրան մեծարեց. և հավաքեց ու
նրա ձեռքը տվեց մեծ զորք, որպեսզի նրան օգնեն, և արձա-
կեց սեփական աշխարհը՝ Հայաստան:

Այպ՝ հաղթական մարտում կատարած քաջություններից
հետո՝ Մեծ Հայքի թագավոր Տրդատը Հունաց կողմերից եա
դարձավ: Նա ճանապարհ ընկավ և գնաց Հայաստանի կողմե-
րը. եկավ ու գտավ այնտեղ պարսկական շատ զորքեր, որոնք
երկիրը գրավել էին և իրենց էին ծառայեցնում: Շատերին նա
կոտորեց, շատերին ի փախուստ դարձրեց և քշեց Պարսից
կողմերը. իրեն նվաճեց հայրենի տերությունը և տիրեց նրա
սահմաններին»:

[«Յայնժամ մեծացոյց յոյժ թագաւորն զՏրդատիոս, և մե-
ծամեծ պարգևս ետ նմա. թագ կապեաց ի գլուխ նորա և ծի-
րանեօք զարդարեալ մեծացոյց զնա, և կայսերակերպն զարդու
շքեղացուցեալ մեծայեաց զնա. և գումարեաց ի ձեռս նորա
զօրս բազումս յօգնականութիւն նմա, և արձակեաց յիւրական
աշխարհն Հայոց:

Եւ յետ մարտին յաղթութեան քաջութեանցն զոր արար՝ դար-

ձեալ լինէր ի կողմանցն Յունաց Տրդատ արքայ Հայոց Մե-
ծաց: Խաղաց գնաց թագաւորն ի կողմանս Հայոց, և եկն եգիտ
անդ զօրս բազումս Պարսից, գի զաշխարհն յինքեանս դրա-
ւեալ էին ի ծառայութիւն. զբազումս կոտորէր, և զբազումս
փախստական արարեալ ի կողմանս Պարսից արկանէր. և
զհայրենեացն տէրութիւն յինքն նուաճեաց, և զօրացաւ ի վե-
րայ սահմանաց նորա»][1]:

2. Մովսես Խորենացի, II, գլ. ՁԲ՝

«Որովհետև պատմությունն առանց ժամանակագրության
ստույգ չէ, ուստի և, մանրամասն քննելով՝ գտանք, որ Տրդատ
թագավորել է Դիոկղետիանոսի երրորդ տարում և եկել է այս
կողմերը մեծ զորքով»:

[«Քանզի ոչ է պատմութիւն ճշմարիտ առանց ժամանա-
կագրութեան, վասն որոյ և մանրախուզիւ քննեալ՝ գտաք
զթագաւորելն Տրդատայ յերրորդ ամի Դիոկղետիանոսի, և
գալ այսր հանդերձ մեծաւ զօրու»]:

3. Սեբեոս, գլ. Գ՝

«Արտաշիրի երեսներորդ, Դիոկղետիանոսի տասնհինգերորդ
տարում Տրդատիոսը կայսերակերպ շքեղությամբ ելնում է
Դիոկղետիանոսի գոթերի թագավորի դեմ: Եվ իսկույն, ձերբակա-
լելով ախոյանին՝ գոթերի վիթխարի թագավորին, բերում և
ներկայացնում է Դիոկղետիանոս կայսրին: Եվ Դիոկղետիա-
նոսը նույն այս թվին Տրդատին թագավոր է կարգում Հայոց
աշխարհի վրա»:

[«Յամին Լ-երորդի Արտաշրի, հնգետասաներորդի Դիոկղե-
տիանոսի, կայսերակերպ շքեղութեամբ Տրդատիոս ելանէ
ախոյեան ընդդէմ արքային գդաց: Եւ անդէն ձերբակալ արա-
րեալ զախոյեանն անարի զթագաւորն գդաց՝ ածեալ կացու-
ցանէ յանդիման կայսերն Դիոկղետիանոսի և անդէն ի նմին
ամի թագաւորեցուցանէ Դիոկղետիանոս զՏրդատ ի վերայ
աշխարհիս Հայոց»][2]:

4. Ուխտանես, I, ՀԶ՝

«Մեր պատմության մեջ մենք մի անգամ և կրկին անգամ
գրել ենք Տրդատի թագավոր դառնալու մասին, թե ե՛րբ և ո՛ր
ժամանակ այդ տեղի էր ունեցել: Սակայն այդ մասին իրար

[1] Տե՛ս «Ագաթանգեղեայ Պատմութիւն Հայոց», աշխատ. Գ. Տեր-Մկրտչյանի
և Ստ. Կանայանցի, Տփղիս, 1909, էջ 29:

[2] Տե՛ս «Սեբէոսի եպիսկոպոսի Պատմութիւն», հրատ. Ստ. Մալխասյանցի,
Երևան, 1939, էջ 15:

հետ համաձայն չէին Զենոբը և Մովսեսը. որովհետև Զենոբն ասում է, որ Տրդատին Պռոբոսն էր թագավոր դրել, երբ սա ձերբակալել էր գոթերի թագավորին, և նա երախտահատույց լինելով Տրդատին՝ թագ էր կապել և նրան թագավորեցրել էր ու ուղարկել էր իր զորքով Հայաստան: Իսկ Մովսեսն ասում է, որ նա թագավոր էր կարգվել Դիոկղետիանոսից և նույնը վկայում է նաև Կայսերաց գիրքը»:

[«Գրեցաք ի մերումս Պատմութեան միանգամ և երկիցս յաղագս Տրդատայ թագաւորելոյն, թե ե՞րբ և յորո՞ւմ ժամանակի եղև: Բայց ոչ միաբանէին ընդ միմեանս Զենոբ և Մովսէս վասն նորա. զի Զենոբ ի Պռոբայ ասէ թագաւորեալ Տրդատայ. և թագաւորեալ յորժամ զգթացն արար ձերբակալ զթագաւորն. և նա երախտահատոյց լեալ Տրդատայ՝ թագ եդեալ թագաւորեցոյց զնա, և առաքեաց զօրօք իւրովք ի Հայս: Իսկ Մովսէս ի Դիոկղետիանոսէ ասէ թագաւորեալ. վկայէ և այսմ գիրք Կայսերացն»][1]:

Ուխտանեսի այս վերջին կարծիքը Զենոբի ու Խորենացու վկայությունների անմիաբանության մասին, ինչպես այժմ պարզված է, արդյունք է ակներև թյուրիմացության: Աննինսկին միանգամայն ճիշտ մատնանշել է, որ Ուխտանեսի օգտագործած աղբյուրի մեջ հիշատակված Պռոբոսը, որ թագավոր էր պսակել Տրդատին և ուղարկել էր նրան զորքով Հայաստան, Պռոբոս կայսրը չէ, այլ Սիկորիոս Պռոբոսն է, որը Դիոկղետիանոսի կողմից ուղարկված էր Ներսեհի մոտ խաղաղության դաշն կնքելու և որին, ինչպես դժվար չէ կռահել, հանձնարարված է եղել նաև Հայաստանի գահը տալ Տրդատ Գ-ին[2] (298 թ.):

Տրդատ Գ-ի գահակալության ճիշտ տարեթիվը (298 թ.), որը համապատասխանում է հունա-հռոմեական աղբյուրների ցուցումներին, ինչպես վերև ասացինք, մատնացույց է արված Սեբեոսի վերև բերված վկայության մեջ: Նաև ըստ Ագաթանգեղոսի Պատմության՝ Տրդատը գահ էր բարձրացել Գալերիոս Մաքսիմիանոսի զորագլուխ Լիկինիոս Լիկինիանոսի ժամանակ, որը, ինչպես վկայում է Եվտրոպիոսը[3], 296—297 թվերի կռիվների ընթացքում մեծ ծառայություններ էր մատուցել և արել էր խիզախ սխրագործություններ:

[1] Տե՛ս Ուխտանէս եպիսկոպոս, Պատմութիւն Հայոց, Վաղարշապատ, 1871, էջ 111:

[2] Տե՛ս *Аннинский*, Древние армянские историки, էջ 60:

[3] *Eutropius*, X, 4.

Մովսես Խորենացին ևս, որն օգտվել էր վերոհիշյալ հայ աղբյուրներից, Տրդատ Գ-ի գահակալությունն ընդունում է նույնպես Դիոկղետիանոսի ժամանակ, սակայն նա, համաձայն իր սխալ ժամանակագրական սխեմայի, ենթադրում է, որ «Տրդատը թագավորել էր Դիոկղետիանոսի երրորդ տարում», այսինքն՝ 286 թվին: Աննինսկին կարծում է, որ այս վկայությունը ևս որոշ չափով ճիշտ է, բայց ոչ այն իմաստով, ինչպես այդ հասկացել է ինքը՝ Խորենացին: Խոսրով Բ-ի մահից (287 թ.) հետո նրա անմիջական հաջորդն էր լինելու, իրապես, Տրդատ Գ-ը, որը սակայն գահ էր բարձրացել ո՛չ թե այդ թվին, այլ ավելի ուշ՝ 298 թվին[1]:

Ինչպես տեսնում ենք, նորագույն պատմագիտական ուսումնասիրությունների շնորհիվ Հայ Արշակունիների երրորդ դարի պատմության խճճված ու մութ խնդիրները ստանում են բոլորովին նոր ու արժանահավատ լուսաբանություն:

[1] Տե՛ս *Аннинский*, Древние армянские историки, էջ 51:

ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ

ՏՐԴԱՏ Գ ԵՎ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

1. Տրդատ Գ-ի հաստատումը հայրենի գահի վրա.—Հայաստանը «դաստակերտ կայսերաց»:— 2. Տրդատ Գ-ի ժամանակաշրջանի պատմության հիմնական աղբյուրներն են Ագաթանգեղոսը և Մովսես Խորենացին.— Տրդատ Գ-ի անվանը կապակցվել են հիշողություններ, որ վերաբերում են Տրդատ Ա-ին և Տրդատ Բ-ին:— 3. Տրդատ Գ-ի կռիվները Պարսկաստանի կողմնակից հայ իշխանների դեմ:— 4. Նրա վերադարձի ու թագավորման մասին Յարկին-Տիգրանակերտի հունարեն արձանագրության վկայությունները.— Լեման-Հաուպտի սխալ ենթադրությունը այդ արձանագրության ժամանակի մասին:— 5. Արարանի 208 թվի հունարեն արձանագրությունը.— Նախարարական տոհմերի գահերեցության խնդիրը:— 6. Քրիստոնեության հաստատումը Հայաստանում.— Ագաթանգեղոսի վկայությունները.— Քրիստոնեության մուտքը Հայաստան Ասորիքի և Կապադովկիայի ու Փոքր Հայքի կողմերից:— 7. Հայերի քրիստոնեության դարձի թվականի ճշտումը.— Մաքսիմինոս Դայան պատերազմ էր մղել քրիստոնեության դեմ ո՛չ թե Մեծ Հայաստանի, այլ Հռոմեական Հայաստանի.— Հայերի դարձի մասին Սոզոմենոսի վկայությունը.— Քրիստոնեությունը Հայաստանում հաստատվել էր իբրև պետական կրոն. հավանորեն, 314—316 թվերին.— Նախնական քրիստոնեության կերպարանափոխումը 3-րդ և 4-րդ դարերում:— 8. Հայաստանի դաշնակցությունը Հռոմեական կայսրության հետ.— Դաշինքի կնքման ժամանակի և տեղի խնդիրը.— «Դաշանց թղթի» անվավերականությունը:— 9. Տրդատ Մեծի մասին առասպելական զրույցները:— 10. Գառնիի հունարեն արձանագրությունը.— Տրդատ Մեծի անունը և տիտղոսը ըստ այդ արձանագրության.— Խորենացու վկայությունն այդ արձանագրության մասին.— Տրդատ Մեծի քույրը, Խոսրովիդուխտը, պատմական անձ է.— Գառնիի արձանագրության ժամանակի խնդիրը: 11. Տրդատ Գ-ի սպանության մասին հայ աղբյուրների վկայությունները կասկածելի են:

298 թվի խաղաղության դաշինքից հետո, Հռոմի և Սասանյան Պարսկաստանի երկուստեք համաձայնությամբ՝ Տրդատ Գ-ը հաստատվեց իր հայրենի գահի վրա Հռոմեական կայսրության պաշտպանության և հովանավորության ներքո: Որ Հայաստանը 298 թվից հետո դարձել էր, իրոք, Հռոմին հպատակված վասալ պետություն՝ այդ երևում է այսպես կոչված Վերոնյան երկրացուցակի վկայու-

թյունից, որի մեջ իբրև Հռոմեական կայսրության Պոնտական շրջանի երկրամաս, բացի Փոքր Հայքից, հիշատակված է նաև Մեծ Հայաստանը՝ «Armenia minor, nunc et maior addita», *այսինքն՝ «Փոքր Հայք, այժմ նաև Մեծ Հայաստան ավելացած»*[1]:

Ուշագրավ է նմանապես, որ Պոլեմիոս Սիլվիոսը ևս իր երկրացանկի (Laterculus-*ի*) *մեջ Հռոմեական կայսրության պոնտական ութ երկրամասերի շարքում Փոքր Հայքից* (Armenia minor) *հետո մատնացույց է անում դարձյալ նաև Մեծ Հայաստանը* (Armenia maior)[2]:

Կ. Գյուտերբոկի և Ն. Ադոնցի կարծիքը, որ իբր թե վերոհիշյալ վկայությունների մեջ Փոքր ու Մեծ Հայքի տակ պետք է հասկանալ Հռոմեական կայսրության կազմի մեջ գտնվող Առաջին և Երկրորդ Հայքը[3], *ինչպես մատնացույց է արված իմ նախորդ աշխատություններից մեկում, բավարարաչափ հիմնավորված չէ և չէ կարող հարկավ համարվել համոզիչ*[4]:

Մեծ Հայաստանի անձուկ միացումը և վասալական սերտ կապը Հռոմեական կայսրության հետ առանձնապես շեշտված է նույնպես և Ագաթանգեղոսի պատմական երկում, որի մեջ Մեծ Հայաստանն անվանված է «դաստակերտ կայսերաց»:

«Քաջութիւն հասցէ ձեզ,—ասված է Տրդատ արքայի ազատներին ու շինականներին ուղղված հրամաններից մեկում,—ի քաջէն Վահագնէ ամենայն Հայոց աշխարհիս. իմաստութիւն հասցէ դաստակերտից կայսերաց, և ի մեր դիցա- Յունաց հասցէ այցելութիւն, ի փառաց թագաւորաց խառն Պարթևաց հասցէ ... և ի քաջ նախնեաց»[5]:

Հայաստանի սերտ միացումը և բախտակցությունը կայսրության հետ պետք է առանձնապես նկատի ունենալ, որովհետև, ինչպես ներքև կտեսնենք, քաղաքական այդ մերձեցման հետևանքով էր, որ Տրդատ Գ-ի ժամանակ Հայաստանում տեղի ունեցավ

[1] Տե՛ս Codex Veronensis, II. 8, Seeck-ի մոտ՝ Notitia dignitatum, 1872, էջ 248:

[2] Տե՛ս *Laterculus Polemii Silvii*, IX (Seeck, Notitia dignitatum, էջ 251 և հետ.):

[3] Տե՛ս Կ. Գյուտերբոկ, Հռոմեական Հայաստան և հռոմեական սատրապությունները Դ—Զ դարերում, թարգմ. Հ. Մկրտիչ. Վ. Նորշունյանի, Վիեննա, 1914, էջ 36—38 և *Адонц*, Армения в эпоху Юстиниана, էջ 87:

[4] Տե՛ս *Я. А. Манандян*, Месроп Маштоц и борьба армянского народа за культурную самобытность, Ереван, 1941, էջ 5:

[5] «Ագաթանգեղեայ Պատմութիւն Հայոց», 1909, էջ 73 (գլ. ԺԲ, 127):

մեծ Հեղաշրջում, և քրիստոնեությունն այնտեղ ճանաչվեց իբրև
պետական կրոն:

Տրդատ Գ-ի ժամանակաշրջանի պատմության համար (298—
շուրջ 330 թ.) հիմնական աղբյուր է համարվում Ագաթանգեղոսի
Հայոց Պատմությունը, որից մեծ չափով օգտվել էր Մովսես Խորե-
նացին: Ագաթանգեղոսի մոտ Տրդատ Գ-ի պատկերը ծագում է հին
հայ ժողովրդական վեպից և, անշուշտ, վեպի ազդեցությունը պետք
է վերագրել, որ հայկական հին պատմագրության մեջ Տրդատ Ա-ը,
Տրդատ Բ-ը և Տրդատ Գ-ը միաձուլվել և դառել են մի անձն՝ Տրդ-
դատ Մեծ, որի անվանը կապակցվել են պատմական հիշողություն-
ներ, որ վերաբերում են Տրդատ Ա-ին և Տրդատ Բ-ին:

Օրինակ, Ագաթանգեղոսի Պատմության 11-րդ գլխում ասված
է, որ Տրդատն իր թագավորության ընթացքում անընդհատ պատե-
րազմել էր պարսիկների դեմ և ավերել էր Պարսից երկիրը և Ասո-
րեստան աշխարհը[1]: Հայտնի է սակայն, որ 298 թվի դաշնագրից
հետո խաղաղությունն Արևելքում մնացել էր անխախտ ու տևել էր
մոտ քառասուն տարի (298—337), և Տրդատ Գ-ը խաղաղ թագավո-
րել էր Հայաստանում մինչև իր մահը (շուրջ 330 թ.): Ագաթանգե-
ղոսի վերոհիշյալ վկայությունը, ինչպես մատնանշել է Մ. Աբեղ-
յանը[2], հիշողություն է երկարատև պատերազմների ընդդեմ պար-
սիկների ո՛չ թե Տրդատ Գ-ի, այլ Տրդատ Բ-ի ժամանակ, որը, ինչ-
պես վերև տեսանք, մոտ 25 տարի, մինչև 252 թիվը, հաջողությամբ
պաշտպանել էր Հայաստանը պարսկական հարձակումներից:

Մի այլ օրինակ՝ Խորենացու երկրորդ գրքի 85-րդ գլխում նկա-
րագրված է Տրդատ Գ-ի կռիվը հյուսիսականների դեմ Աղվանքում,
ուր բասիլների թագավորը ձգում է իր «քեմխտապատ պարանը», որ
թագավորին բռնե, բայց Տրդատը կտրում է պարանը, իր սրի հար-
վածով երկու կտոր է անում նրան և, պարտության մատնելով նրա
զորքը, հալածում է մինչև Հոնաց աշխարհը: Գարագաշյանի կար-
ծիքով՝ Տրդատ Գ-ի մասին նաև այս վկայությունը, որ հին զրույց-
ներից է վերցված, հիշողություն է հյուսիսականների դեմ պատե-
րազմի ո՛չ թե Տրդատ Գ-ի, այլ Տրդատ Ա-ի, որը, ինչպես
պատմում է Հովսեպոս Փլավիոսը (տե՛ս վերև էջ 9—10), պատե-
րազմել էր ալանների դեմ, և երբ սրանք պարանը ձգել ու բռնել
էին նրան՝ կտրել էր պարանը և կարողացել էր փրկվել[3]:

1 «Ագարանգեղեայ Պատմութիւն Հայոց», 1909, գլ. ԺԱ, 123, էջ 71: Երևան
2 Մ. Աբեղյան, Հայոց հին գրականության պատմություն, Ա,
1944, էջ 605: Թիֆլիս,
3 Տե՛ս Գարագաշյան, Քննական պատմութիւն Հայոց, մասն Գ,

Ջանց առնելով Տրդատ Մեծի մասին նման անստույգ տեղեկու-
թյունները՝ մենք կբերենք ներքև նրա մասին հայկական աղբյուր-
ների միայն այն կարևոր վկայությունները, որոնց հավաստիությու-
նը հաստատվում է հունա-հռոմեական աղբյուրների օգնությամբ:

Տրդատ Գ-ի մասին Ագաթանգեղոսը հաղորդում է, որ նա, օգ-
նական զորք ստանալով հռոմեական կայսրից՝ գալիս է Հայաստա-
տան և, որովհետև իր երկիրը Պարսից տիրապետության տակ էր
գտնվում, հաղթում է նրանց և հաստատվում հայրենի գա-
հի վրա:

«Այն ժամանակ,—պատմում է Ագաթանգեղոսը,—թագավո-
րը [Հունաց] խիստ բարձրացրեց Տրդատիոսին և տվեց նրան
մեծամեծ պարգևներ. նա թագ դրեց նրա գլխին և, ծիրանե
զգեստով զարդարելով՝ բարձրացրեց նրան և, կայսերական
զարդերով շքեղցնելով՝ մեծարեց նրան: Հավաքեց ու նրա
ձեռքը հանձնեց մեծ զորք, որպեսզի նրան օգնեն, և արձակեց
Հայոց աշխարհը սեփական: Եվ հաղթության մարտի քաջու-
թյուններից հետո, որ արել էր՝ վերադարձավ Մեծ Հայաստանի
Տրդատ արքան Հունաց կողմերից. թագավորը ճանապարհ
ընկավ, գնաց Հայաստանի կողմերը և եկավ գտավ այնտեղ
Պարսից շատ զորքեր, որովհետև սրանք այն աշխարհը գրա-
վել էին ու հպատակեցրել էին իրենց: Նա կոտորեց շատերին,
շատերին էլ փախուստի մատնեց և քշեց Պարսից կողմերը.
և հայրենի տերությունը նա ինքը նվաճեց ու զորացավ նրա
սահմանների մեջ»:

[«Յայնժամ մեծացոյց յոյժ թագաւորն զՏրդատիոս, և մե-
ծամեծ պարգևս ետ նմա. թագ կապեաց ի գլուխ նորա և ծի-
րանեօք զարդարեալ մեծացոյց զնա, և կայսերակերպն զարդու
շքեղացուցեալ մեծարեաց զնա. և գումարեաց ի ձեռս նորա
զօրս բազումս յօգնականութիւն նմա, և արձակեաց յիւրական
աշխարհն Հայոց:
Եւ յետ մարտին յաղթութեան քաջութեանցն զոր արար՝
դարձեալ լինէր ի կողմանցն Յունաց Տրդատ արքայ Հայոց
Մեծաց: Խաղաց գնաց թագաւորն ի կողմանս Հայոց, և եկն
եգիտ անդ զօրս բազումս Պարսից, զի զաշխարհն յինքեանս
գրաւեալ էին ի ծառայութիւն. զբազումս կոտորէր, և զբա-
զումս փախստական արարեալ ի կողմանս Պարսից արկանէր.

1895, էջ 351: Համեմատե՛ նաև Մ. Աբեղյան, Հայոց հին գրականության պատ-
մություն, գիրք Ա, էջ 605:

և ղհայրենեացն տէրութիւն յինքն նուաճեաց, և զօրացաւ ի վերայ սահմանաց նորա»][1]:

Ագաթանգեղոսի այս վկայությունը, թեև ծագում է վիպական հայկական ավանդությունից, սակայն ըստ էության կարող է համարվել պատմական: Աննինսկին իր «Հին հայկական պատմիչները իբրև պատմական աղբյուր» աշխատության մեջ մատնանշում է, որ Տրդատ Գ-ը, իր գահի վրա հաստատվելուց առաջ, կռիվ էր մղել հռոմեական օգնական զորքի աջակցությամբ հայ ապստամբ նախարարների դեմ[2]: Նրա կարծիքով, այդ կռիվների պատճառով էր, որ Գալերիոսը, որը 297 թվի հաղթություններից հետո մնացել էր Արևելքում մինչև 302 թիվը, իր 311 թվի հրովարտակի մեջ անվանում է իրեն վեց անգամ հաղթող հայերի[3]:

Աննինսկու այս դիտողությունները, որ ուշադրության արժանի են, ինչպես տեսնում ենք, կարող են նույնպես ծառայել Ագաթանգեղոսի վերոհիշյալ վկայության հավաստիության: Այդ դիտողությունները, որ հավանական են, ցույց են տալիս, որ Տրդատ Գ-ը Հայաստանին տիրել էր, կռիվներ մղելով ո՛չ թե Պարսից զորքերի դեմ, ինչպես այդ վկայում է Ագաթանգեղոսը, այլ Պարսկաստանի կողմնակից հայ իշխանների դեմ: Հայտնի է մեզ, օրինակ, Պետրոս Պատրիկիոսի մի վկայությունից, որ Պարսկաստանի ջերմ կողմնակից է եղել այդ ժամանակ Սյունիքի Վարաղշապուհ իշխանը, որին Պարսից Ներսեհ թագավորը, Գալերիոսի 297 թվի հաղթությունից հետո, ուղարկել էր իբրև պատգամավոր խաղաղության դաշնագրի կնքման համար[4]:

Տրդատ Գ-ի վերադարձի ու թագավորման մասին Հայաստանում հայտնի է խիստ կարևոր մի նոր աղբյուր՝ Ցարկին-Տիգրանակերտ քաղաքի պարսպի վրա գտնված հունարեն արձանագրությունը:

Այս արձանագրությունը, որ 1899 թվին գտել էր Լեման-Հաուպտը, լրիվ չէ և, դժբախտաբար, դժվար է վերծանվում, որովհետև նրա ընդարձակ բնագրից պահպանվել են ընդհատումներով իրար անհարիր ու հատուկտոր հատվածներ միմիայն ութ քարի վրա[5]: Սակայն բովանդակությունը մոտավորապես որոշվում է:

---

1 Տե՛ս Ագաթանգեղոս, գլ. Դ, 46—47, էջ 29 (Տփղիս, 1909):

2 А. Аннинский, Древние армянские историки, Одесса, 1899, էջ 60—61.

3 Տե՛ս Եվսեբիոս, Պատմ. եկեղ., գիրք VIII, գլուխ 17:

4 Տե՛ս Տաշյան, Ագաթանգեղոս, Վիեննա, 1891, էջ 128—129:

5 Տե՛ս C. F. Lehmann-Haupt, Armenien einst und jetzt, Berlin, 1910 էջ 411—419:

Ցարկինի արձանագրությունը կարևոր մի հրաման է ու հայտարարություն՝ ուղղված Տիգրանակերտ քաղաքի բնակչության: Արձանագրության սկիզբը պակասում է, ուստի և նրա հեղինակը, որ պարզապես Հայ Արշակունի թագավորներից մեկն է, ճշտիվ որոշ չէ: Հայաստանի այդ թագավորը, ինչպես երևում է արձանագրության բովանդակությունից, բարեկամաբար էր տրամադրված թե դեպի հռոմայեցիները և թե դեպի Պարսից թագավորը, որին նա անվանում է «աստված թագավոր թագավորաց»: Նա հիշատակում է փաստաթղթեր ու նամակներ, որ ինքը ստացել է հռոմայեցիներից և Պարսից թագավորից:

«Ձեր քաղաքաբնակչությունը,—մատնանշված է արձանագրության մեջ,—ապստամբել էր և պարսիկների հետ միասին պատերազմ էր մղել մեր հոր դեմ»:

Արձանագրության վերջում ասված է՝

«և որպեսզի ամենքը ինձ ավելի լավ ճանաչեն, մենք հրամայեցինք, որ այս գրությունը զետեղվի դարբասի մոտ՝—և ինչպես որ փաստաթղթի մեջ է հայտնված՝ հենց այնպես էլ փորագրված է ու ամրացված: Մենք կարգադրել ենք նույնպես, որ գրությունը փորագրվի ու կցվի ամեն մի դարբասի մոտ նաև մյուս քաղաքների, որոնց իշխանությունը մենք ստանձնել ենք հաճությամբ և օգնությամբ աստվածների»:

Լեման-Հաուպտը, հիմնվելով արձանագրության հունարեն տառերի ձևերի և հունարեն լեզվի քերականական առանձնահատկությունների վրա՝ նրա ժամանակը ենթադրում է մեր թվականության երկրորդ դարից հետո, իսկ նկատի ունենալով նաև նրա վերոհիշյալ բովանդակությունը՝ վերագրում է արձանագրությունը Հայոց Պապ թագավորին (368—374):

Լեման-Հաուպտի վերջին այս եզրակացությունը, ինչպես մատնանշել է Մարկվարտը, միանգամայն անհավանական է ու անհամոզիչ, որովհետև Պապ թագավորը քրիստոնյա էր, իսկ արձանագրության մեջ ասված է, որ թագավորն իր իշխանությունը ստանձնել էր «աստվածների հաճությամբ ու օգնությամբ», նաև Պարսից թագավորն անվանված է «աստված թագավոր թագավորաց»[1]:

Ինձ թվում է, որ հիմնավոր է Մարկվարտի կարծիքը, որը արձանագրությունը վերագրում է ո՛չ թե չորրորդ, այլ երրորդ դարի Արշակունի հայ թագավորներից մեկին և ենթադրում է, որ արձանագրության մեջ ակնարկված հայ թագավորը Տրդատ Գ-ն է, որը

---

1 Տե՛ս J. Markwart, Südarmenien und die Tigrisquellen, էջ 134—135:

վերահաստատվել էր իր գահի վրա հռոմայեցիների և պարսիկների երկուստեք համաձայնությամբ:

Մարկվարտը ցույց է տվել նաև, որ Տրդատ Գ-ը վերանվաճել էր իր թագավորությունը, ինչպես մատնանշված է արձանագրության մեջ, հռոմեական օժանդակ զորամասի օգնությամբ, որի պահակային կայանը գտնվում էր Նեկրայում՝ այժմյան Մալաթիայի հարավ-արևմուտքում և Ալբիստանի արևելակողմում[1]:

Ցարկին-Տիգրանակերտի հունարեն արձանագրության ժամանակի խնդիրը, համաձայն նոր այս լուսաբանության, որոշվում է առանց դժվարության: Տրդատ Գ-ի այս արձանագրության ժամանակը պետք է ենթադրել երրորդ դարի վերջերում, հավանորեն 298 թվին:

Տրդատ Մեծի հունարեն մի ուրիշ արձանագրություն, որը գտնված է Ապարանում, կարդացել ու մեկնել է ռուս գիտնական Ռոստովցեը[2]: Այս արձանագրության բովանդակությունից մենք գիտենք, որ Տրդատ Գ-ը նվեր էր տվել Գնթունիների տոհմի իշխաններից մեկին կալվածքներ Նիգ գավառում, ամենայն հավանականությամբ Սելևկյան տոմարի 620 թվի փետրվար ամսին (620—312=308), այսինքն՝ 308 թվին (մեր թվ. հ.):

Ռոստովցեը կարծում է, որ Ապարանի արձանագրության վերագրումը Տրդատ Գ-ին հավանական է և այն պատճառով, որ ըստ հայկական ավանդության այս թագավորն էր վերաբաժանման ենթարկել իշխանական շրջանները նախարարական առանձին տոհմերի միջև, և նրա ժամանակ տեղի էր ունեցել տեղաշարժ նախարարական կալվածատիրության մեջ[3]:

Անհավանական չէ, բացի այդ, որ դեռևս Տրդատ Գ-ի ժամանակ որոշ փոփոխություն կարող էր կրած լինել նախարարական տոհմերի գահերեցությունը կամ բարձրերեցությունը նրանց հզորության կամ կարևորության համեմատ, ինչպես այդ վկայում են Թովմա Արծրունին և Ստեփանոս Օրբելյանը[4]:

Տրդատ Գ-ի թագավորությունը Հայաստանի կուլտուրական կյանքի համար ունեցավ հեղաշրջող նշանակություն: Նրա ժամա-

1 Տե՛ս J. Markwart, Südarmenien und die Tigrisquellen, էջ 124, 158 175 և 184:

2 M. Ростовцев, Апаранская греческая надпись царя Тиридата, СПб., 1911.

3 Նույնը, էջ 28:

4 Տե՛ս Թովմա Արծրունի, Պատմութիւն տանն Արծրունեաց, III, գլ. ԻԴ, էջ 384 (Թիֆլիս, 1917) և Ստեփանոս Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, գլ. Է, էջ 24 (Թիֆլիս, 1910):

նակ մերժվեց հեթանոսական նախկին կրոնը և իբրև պետական կրոն հաստատվեց քրիստոնեությունը:

Հայոց քրիստոնեության դարձի պատմության համար ամենակարևոր աղբյուրն է Ագաթանգեղոսի Պատմությունը, որը, ինչպես ասացինք, սկսվում է 224 թվից և բովանդակում է իր մեջ, գլխավորապես, Տրդատ Գ-ի ժամանակաշրջանի անցքերը: Այս երկի մեջ, ինչպես բանասիրական քննությունները ցույց են տվել, չափազանց մեծ տեղ են բռնում վկայաբանական-առասպելական և վիպական-բանաստեղծական տարրերը, իսկ հայերի դարձի իրական պատմության մասին նրա մեջ պահպանվել են պատմական աղոտ հիշողություններ, որոնց հիմք են ծառայել բանավոր հին ավանդությունները:

Ագաթանգեղոսի մոտ հայերի դարձի պատմության համառոտ բովանդակությունը հետևյալն է: Տրդատը, որ Հունաց կողմերում մեծամեծ քաջություններ էր գործել, պսակվում է այնտեղ արքայական թագով և վերադառնում է Հայաստան: Այստեղ Եկեղյաց գավառի Երիզա ավանում զոհեր են մատուցանում Անահիտ դիցուհուն, և Տրդատը հրամայում է Գրիգոր անունով իր սպասավորին, որը հավատարմությամբ ծառայում էր իրեն, որ նա նվեր տանի Անահիտի արձանին ծաղկե պսակներ և կանաչ ոստեր:

Գրիգորը հրաժարվում է այդ անել և հայտնում է, որ ինքը քրիստոնյա է: Տրդատը ենթարկում է նրան անտանելի տանջանքների, բայց սա տոկունությամբ կրում է այդ չարչարանքները և շարունակում է անարգել կուռքերին: Այդ միջոցին նախարարները հայտնում են Տրդատին, որ Գրիգորը նրա հորը՝ Խոսրով թագավորին սպանող պարթև Անակի որդին է: Տրդատը, այս լսելով, ավելի ևս զայրանում է և հրամայում է, որ Գրիգորին տանեն Արտաշատ և ձգեն մութ ու սողուններով լի բանտը, որ կոչվում էր Խոր-Վիրապ:

Այնուհետև Ագաթանգեղոսի Պատմության մեջ ընդարձակ կերպով պատմվում է Հռիփսիմյան կույսերի Հայաստան գալը և նահատակությունը, Տրդատի մոլեգին խելագարությունը, Գրիգորի Խոր-Վիրապից դուրս գալը տասնհինգ տարվա բանտարկությունից հետո և հայոց դարձն ի քրիստոնեություն:

Քննության առնելով Տրդատի ու Գրիգոր Լուսավորչի մասին Ագաթանգեղոսի վերոհիշյալ պատումները՝ բանասերները և պատմագետները հավաստի են համարում, գլխավորապես, այն, որ քրիստոնեությունն ընդունվել ու տարածվել էր Հայաստանում Տրդատ թագավորի ժամանակ (298—շուրջ 330) քարոզությամբ Գրիգոր Լուսավորչի: Իսկ Ագաթանգեղոսի հաղորդած առասպելա-

*խառն ու չափազանցված տեղեկությունները Գրիգոր Լուսավորչի
չարչարանքների, Հռիփսիմյան կույսերի նահատակության և Տրդ-
դատի հիվանդության մասին նրանք համարում են կասկածելի և
պատմական տեսակետից անվստահելի։*

*Ինչպես հայտնի է, քրիստոնեությունը սկսել էր մուտք գործել
Հայաստան դեռ Տրդատ Գ-ից և Գրիգոր Լուսավորչից առաջ Եդե-
սիայի և Մծբինի ու նաև Կապադովկիայի և Փոքր Հայքի կողմե-
րից։ Նա սկսել էր տարածվել Հարավային Հայաստանում և Տա-
րոնում, հավանորեն, երրորդ դարի սկզբներում կամ թերևս ար-
դեն երկրորդ դարի վերջերում։*

*Հենց երրորդ դարի սկզբներում, ինչպես հաղորդում է Մովսես
Խորենացին*[1]*, Հայաստան էր եկել քրիստոնեության տարածելու
նպատակով հռչակավոր գնոստիկյան ասորի գիտնական Բարդա-
ծանը։ Իսկ երրորդ դարի կեսերում, ինչպես վկայում է Եվսեբիոս
Կեսարացին*[2]*, Մեհրուժան եպիսկոպոսի հետ, որը, հավանորեն,
քարոզիչ էր Ծոփքում*[3]*, գրագրություն էր ունեցել Աղեքսանդրիայի
Դիոնիսիոս եպիսկոպոսը (248—265)։ Նույն այդ ժամանակներում
քրիստոնեությունը լայնորեն տարածվել էր նաև Կապադովկիա-
յում և Փոքր Հայքում, ուր քրիստոնեական նշանավոր կենտրոն-
ներ էին Կեսարիա և Մելիտենե քաղաքները։*

*Վերոհիշյալ տեղեկությունները ցույց են տալիս, որ քրիստո-
նեության տարածման համար որոշ չափով արդեն հող էր պատ-
րաստված դեռ երրորդ դարում։ Թե ո՛ր թվականին քրիստոնեու-
թյունը վերջնականապես հաստատվել էր Հայոց թագավորության
մեջ իբրև պաշտոնական կրոն՝ այդ հարցը մինչև այժմ բավարար
կերպով դեռ չէ որոշված և վեճի առարկա է։*

*Դեռևս Չամչյանի ժամանակներից սկսած այդ մասին գերիշ-
խող կարծիքն այն է եղել, որ Տրդատ Գ-ի և հայերի քրիստոնեու-
թյան դարձը տեղի էր ունեցել 301—304 թվականներին։ Բայց
կան նաև զանազան այլ ենթադրություններ։*

*Տուրնեբիզը, որը մանրամասն քննել է այս խնդիրը իր «Քա-
ղաքական և կրոնական պատմություն Հայաստանի» գրքի հատուկ
հավելվածում, բերում է հայերի դարձի մասին ականավոր եվրոպա-
ցի և հայ գիտնականների նաև այլ կարծիքները*[4]*։ Ըստ այդ ենթադ-*

1 Խորենացի, *գիրք II, գլ. ԿԶ, էջ 201 (Տփղիս, 1913)։*

2 Եվսեբիոս, *Պատմ. եկեղ., Զ, 46, 2։*

3 *Տե՛ս Адонц,* Армения в эпоху Юстиниана, *էջ 347։*

4 *Tournebize,* Histoire politique et réligieuse de l'Arménie, Appendice I, „Étude sur la conversion de l'Arménie au christianisme", *էջ 428—444։*

*րությունների քրիստոնեությունն ընդունվել էր Հայաստանում իբրև
պետական կրոն 276—311 թվականների միջև. օրինակ, ըստ Սեն-
Մարտենի՝ 276 թվին, ըստ Հարնակի՝ 285—290 թվերին, ըստ Տուր-
նեբիզի՝ 290—295 թվերին, ըստ Գաթրճյանի՝ 305—310 թվերին*[1]*։*

*Վերջերս լույս տեսավ նույն խնդրի մասին «Էջմիածին» ամ-
սագրում Ստ. Մալխասյանի հոդվածը։ Վերջինս, հիմք ընդունելով
Խորենացու Պատմության ժամանակագրական ցուցմունքները, որ
նա թյուրիմացաբար համարում է հայերի դարձի թվականի ճշտ-
ման միակ ապահով աղբյուրը, քրիստոնեության հաստատու-
Հայաստանում որոշել է 279 թվին*[2]*։*

*Վերոհիշյալ բոլոր կարծիքները հիմնված են, գլխավորապես,
Ագաթանգեղոսի, Խորենացու և պատմական մյուս հայ աղբյուրների
ժամանակագրական խառնաշփոթ տեղեկությունների վրա, որ վե-
րաբերում են երրորդ դարի պատմական անցքերին։ Բացի այդ,
պատմագետների և բանասերների մեծագույն մասը սխալ են հաս-
կացել Եվսեբիոս Կեսարացու հայտնի վկայությունը Մաքսիմինոս
Դայայի (305—313) արշավանքի մասին հայերի դեմ։
Եվսեբիոսի կարևոր այս վկայությունը հետևյալն է՝*

*«Բացի այդ,—ասում է Եվսեբիոսը,—բռնակալի [Մաքսիմի-
նոս Դայայի] ձեռով պատերազմ հարուցվեց արմենների դեմ՝
այն մարդկանց դեմ, որոնք հենց սկզբից բարեկամ էին ու
դաշնակից հռոմայեցիների. բայց որովհետև քրիստոնյա էին
նաև նրանք և եռանդով ու բարեպաշտությամբ երկրպագում
էին աստծուն՝ այս աստվածատյացը փորձեց նրանց ստիպել,
որ զոհ բերեն կուռքերին ու դևերին. ուստի և դարձրեց նրանց,
որ բարեկամ ու դաշնակից էին՝ թշնամի ու մարտնչող։ ...Արդ՝
նա հենց ինքը իր բանակի հետ՝ արմենների դեմ պատերազ-
մելիս ջախջախվեց»*[3]*։*

*Հիմնվելով Եվսեբիոսի այս վկայության վրա՝ պատմագետները
կարծում են, որ Մաքսիմինոս Կեսարը 311/312 թվին պատերազ-
մել էր քրիստոնեություն ընդունած Տրդատ Գ-ի դեմ և կամեցել էր
վերահաստատել Մեծ Հայաստանում հեթանոսությունը։*

1 *Տե՛ս Lebeau,* Histoire du Bas-Empire, t. I, *էջ 46 (Սեն-Մարտենի հա-
վելվածով). A. Harnack,* Mission und Ausbreitung des Christentums in den drei ersten Jahrhunderten, Leipzig, 1902. *Tournebize,* Histoire politique et réligieuse de l'Arménie, *էջ 428.* Գաթրճյան Հ., *Տիեզերական պատմութիւն, Բ, էջ 477։*

2 *Տե՛ս* Ստ. Մալխասյան, *«Ե՞րբ են հայերն ընդունել քրիստոնեությունն», «Էջմիածին», 1944, № 1, էջ 22—26։*

3 Եվսեբիոս, *Պատմութ. եկեղ., գիրք Թ, գլ. Ը։*

Սակայն, իրապես, ինչպես իրավացի կերպով ենթադրում են այժմ[1], *նա պատերազմ էր մղել ո՛չ թե քրիստոնեության դեմ Մեծ Հայաստանի, այլ Հռոմեական Հայաստանի, այսինքն՝ Անդրտիգրիսյան երկրներից մեկի դեմ, որ Դիոկղետիանոսի զորավար Գալերիոսի 297 թվի հաղթությունից հետո միացվել էին կայսրությանը։*

Միանգամայն պարզ է, հետևաբար, որ Եվսեբիոսի վերոհիշյալ վկայությունը չէ կարող կովան ծառայել Տրդատ Գ.-ի ու նրա երկրի քրիստոնեության դարձի թվականը որոշելու համար։

Ուշագրավ է ու կարևոր քրիստոնեության հաստատման մասին Մեծ Հայաստանում ո՛չ թե Եվսեբիոսի, այլ հինգերորդ դարի եկեղեցական պատմագիր Սոզոմենոսի հետևյալ վկայությունը.

> *«Ես տեղեկացա,—վկայում է Սոզոմենոսը,—որ հայերն ընդունել են քրիստոնեությունն ավելի առաջ [քան վրացիներն ու ուրիշները]։ Ասում են, որ Տրդատը, որն այս ժողովրդի առաջնորդն էր, մի ինչ-որ աստվածանշան հրաշքի պատճառով, որ նրա տան մեջ պատահել էր, իսկույն դառել էր ինքը քրիստոնյա ու նաև հրամայել էր, որ քարոզության միջոցով այդ կրոնն ընդունեն բոլոր իր հպատակները»*[2]*։*

Սոզոմենոսի այս կարևոր վկայությունը, որը կարծես թե արձագանք է Ագաթանգեղոսի Պատմության մեջ հաղորդված վերոհիշյալ տեղեկությունների, հետաքրքիր է այն տեսակետից, որ նա հայերի քրիստոնեության դարձը դնում է իբերներից առաջ, որոնք քրիստոնեություն էին ընդունել մոտավորապես 337 թվին[3]*։ Եվ այս կապակցությամբ ուշադրության արժանի է նաև այն, որ Եվսեբիոս Կեսարացու մոտ, որի «Եկեղեցական Պատմությունը» պարունակում է քրիստոնեական եկեղեցու պատմությունը սկզբից մինչև Լիկինիոսի վերջնական պարտությունը, այսինքն՝ մինչև 324 թիվը, չեն հիշատակված ո՛չ Տրդատ Գ.-ը և ո՛չ էլ Գրիգոր Լուսավորիչը։*

Իմ նախորդ աշխատությունների մեջ[4] *ես մատնանշել էի, որ Տրդատ Գ.-ի ժամանակ Մեծ Հայաստանը սերտ կերպով միացված էր*

[1] Տե՛ս *Duchesne L.*, Histoire ancienne de l'Église, vol. II, էջ 32, ծան. 2։ Համեմատե՛ նաև Tournebize, Histoire politique et rèligieuse de l'Arménie. էջ 443։

[2] *Sozom.*, Hist. Eccles., II, 8.

[3] Տե՛ս *Н. Бердзенишвили, И. Джавахишвили, С. Джанашиа,* История Грузии, часть I, Тбилиси, 1946, էջ 92 և 451։

[4] Տե՛ս *Манандян,* Краткий обзор истории древней Армении, М., 1943, էջ 20. նաև Հ. Մանանդյան, Գառնիի հունարեն արձանագրությունը և Գառնիի հեթանոսական տաճարի կառուցման ժամանակը, Երևան, 1946, էջ 15։

Հռոմեական կայսրությանը, ուստի շնորհիվ հենց այդ կապի՝ քրիստոնեությունը, որը կայսրության մեջ հայտարարվել էր իբրև թույլատրելի պետական կրոն՝ հաստատվել էր որպես պաշտոնական կրոն նաև Հայաստանում։ Ագաթանգեղոսի Պատմության վկայությունների ուշադիր քննությունը ցույց է տալիս, որ հալածանքները քրիստոնեության դեմ Մեծ Հայաստանում արձագանք էին հալածանքների, որ տեղի էին ունեցել Հռոմեական կայսրության մեջ Դիոկղետիանոս կայսեր ժամանակ (284—305)՝ նրա իշխանության վերջին տարիներում[1]*։ Վերաբերմունքը դեպի քրիստոնյաները Հայաստանում ևս, հավանաբար, փոխվել էր 313 թվից հետո, երբ համաձայն Միլանի հրովարտակի՝ քրիստոնեությունը ճանաչվել էր Հռոմեական պետության մեջ որպես ազատ և իրավահավասար կրոն։*

Պետք է ասել, որ Կոստանդիանոսի և Լիկինիոսի հրապարակած այդ հրովարտակից առաջ ևս, արդեն 311 թվին, հրատարակված էր կրոնական համբերատարության Գալերիոսի հրովարտակը, Ասիաակայն նույն այդ ժամանակ, ինչպես մենք վերև տեսանք, Ասիական արևելքում իշխում էր Մաքսիմինոս Դայան, որը թշնամի էր ու հալածիչ քրիստոնեության։

Որ Տրդատ Գ.-ի և հայերի քրիստոնեության դարձը պետք է ենթադրել 313 թվից հետո՝ այդ որոշ չափով հաստատվում է նաև նրանով, որ Գրիգոր Լուսավորչի եպիսկոպոսական ձեռնադրությունը Կեսարիայում և հայերի մկրտությունը Ագաթանգեղոսի մոտ մատնացույց են արված Կեսարիայի մետրոպոլիտ Ղեոնդիոսի ժամանակ, որը հիշատակված է իբրև Կեսարիայի արքեպիսկոպոս 314 և 325 թվերին։

Ըստ այս դիտողությունների կարող է թերևս ճիշտ լինել Խորենացու Պատմության մեջ պահպանված ավանդությունը[2]*, որ Գրիգոր Լուսավորիչը քահանայապետ էր կարգվել և Թադեոս առաքյալի աթոռն էր նստել Տրդատի թագավորության (298—շուրջ 330) տասնյոթերորդ տարում, այսինքն՝ ճիշտ և ճիշտ Միլանի հրովարտակից անմիջապես հետո [298+17] 314/315 թվին։ Նույն այս ավանդությունը պահպանվել է նաև «Պատմութիւն սրբոյն Ներսիսի Պարթևի» գրվածքում, որի մեջ Լուսավորչի քահանայապետ կարգվելը ցույց է տրված Տրդատ Գ.-ի թագավորության ո՛չ թե տասնյոթերորդ, այլ տասնևութերորդ տարում, այսինքն՝ [298+18] 315/316 թվին*[3]*։*

[1] Տե՛ս Ագարանգեղոս, Գ, 38, էջ 25. ԺԲ, 129, էջ 75. ԺԴ, 154, էջ 87 և ԺԵ, 161, էջ 90 (Տփղիս, 1909)։

[2] Տե՛ս Մովսես Խորենացի, գիրք II, գլ. ՂԱ, էջ 242 (Տփղիս, 1913)։

[3] Տե՛ս «Սոփերք Հայկականք», Զ, Վենետիկ, 1853, էջ 9։

Պատմագիտական նորագույն աշխատություններում արդեն պարզված է, որ Միլանի 313 թվի հրովարտակից հետո ո՛չ թե առաջնություն էր տրվել քրիստոնեական եկեղեցուն կայսրության մեջ, այլ քրիստոնեությունը ճանաչվել էր այնտեղ իբրև ազատ ու իրավունակ կրոն և իրավունք էր ստացել օրինականապես գործելու և բարգավաճելու: Նա գերիշխող ու պետական կրոն էր դառել Հռոմեական կայսրության մեջ միմիայն չորրորդ դարի վերջերում Թեոդոս Մեծի (379—395) ժամանակ[1]:

Ըստ այսմ զուրկ չէ հիմքից Սեն-Մարտենի, Գելցերի և ուրիշների կարծիքը, որ քրիստոնեությունն առաջին անգամ պետական կրոն էր հայտարարվել ո՛չ թե Արևմուտքում, այլ Հայաստանում[2]:

Քրիստոնեությունը, ինչպես հայտնի է, ծագել էր Հրեաստանում առաջին դարում, երբ Հռոմեական կայսրության դաժան կենում առաջին դարում, երբ Հռոմեական կայսրության դաժան կեղեքումների պատճառով հուսահատության էին հասցվել ամենուրեք ժողովրդական շահագործվող մասսայի ստորին խավերը: Ինչպես էնգելսը շատ ճիշտ մատնանշել է, ծագման իր առաջին շրջանում քրիստոնեությունը ճնշված դասակարգերի կրոնն էր՝ ստրուկների, ստրկությունից արձակվածների, աղքատների, իրավազուրկների և կամ նվաճված ու ճնշված ժողովուրդների[3]: Սկզբնական այս ժամանակ ժողովրդական այդ լայն խավերը, որոնք ո՛չ մի ելք չէին տեսնում իրենց ծանր դրությունից, սկսել էին հավատալ, որ իրենց կարող է փրկել միայն մեսիան, Հիսուս Քրիստոսը, որը կպատժե հարստահարողներին և կհաստատե աստծու արդար թագավորությունը:

Իր զարգացման ավելի ուշ շրջանում, 3-րդ և 4-րդ դարերում, քրիստոնեությունն արագ կերպով կերպարանափոխվեց: Նա հաշտվեց պետական իշխանության և իշխող դասակարգերի հետ, և քրիստոնեական եկեղեցին, որը եպիսկոպոսական իշխանության տակ կազմակերպվել էր որպես ուժեղ նվիրապետություն՝ կոչ էր անում քրիստոնյաներին հնազանդվել իրենց տերերին:

Հասկանալի է, որ հետագա շրջանի այս քրիստոնեությունը

1 Տե՛ս A. A. Vassiliev, Histoire de l'empire byzantin, I, Paris, 1932, էջ 52, 62, 63 և 70:

2 Տե՛ս Lebeau, Histoire du Bas-Empire, I, էջ 76—77. Հ. Գելցեր, Համառոտ պատմութիւն Հայոց, թարգմ. Գալեմքյարյանի, Վիեննա, 1897, էջ 37 և ուրիշները:

3 Տե՛ս Энгельс, К истории раннего христианства, նաև Бруно Бауэр и раннее христианство, Сочинения Маркса и Энгельса, т. XVI, ч. II, стр. 41 и т. XV, стр. 603—610.

կարող էին ընդունել հեշտությամբ իբրև թույլատրելի կամ պաշտոնական կրոն թե Հռոմեական կայսրությունը և թե Արշակունիների թագավորությունը:

Քրիստոնեության մուտքը Հայաստան իբրև պետական կրոն, անշուշտ, խիստ մեծ կարևորություն ունեցող մի փաստ է: Հայաստանն այնուհետև սերտ հարաբերությամբ կապվեց Հռոմեական կայսրության հետ ո՛չ միայն քաղաքականապես, այլև կուլտուրապես:

Հայաստանի դաշնակցությունը Հռոմեական կայսրության հետ, ըստ երևույթին, ձևակերպված է եղել հատուկ պայմանագրում, որ կնքված էր, ինչպես հաղորդում են հայ պատմագիրները, Կոստանդիանոս Մեծի և Տրդատ Գ-ի մեջ:

«Նույնպես և Տրդատ արքային,—վկայում է Ագաթանգեղոսը,—իբրև սիրելի եղբոր իր սերը հայտնեց [Կոստանդիանոս Մեծը] մեծ ուրախությամբ, մանավանդ նրա աստվածածանոթության պատճառով, ավելի ևս, նրա հետ դաշինք կնքեց, որ միջնորդ դարձնելով իրենց առ տեր Քրիստոս հավատքը, որպեսզի հաստատուն պահեն միշտ հավատարիմ բարեկամությունն իրենց թագավորությունների միջև»:

[«Սոյնպէս և արքային Տրդատայ, իբրև եղբօր սիրելւոյ, սէր ցուցեալ ուրախութեամբ մեծաւ, մանաւանդ վասն աստուածածանօթութեան նորա՝ առաւել դաշինս կռէր ընդ նմա, միջնորդ կալեալ զհաւատսն որ ի տէր Քրիստոս էր, զի անշուշտ մինչ ի բուն զհաւատարիմ սէրն ի մէջ թագաւորութեանցն պահեսցեն»][1]:

Փավստոսը ևս, մատնանշելով, որ հայ դեսպանություն էր եկել Կոստանդիոս (337—361) կայսեր մոտ և խնդրել էր, որ իրենց օգնե վրեժխնդիր լինելու Պարսից թագավորից, վկայում է, որ՝

«Կայսրը, բոլոր հանգամանքները լսելով՝ մեծ փութով ու պատրաստությամբ հանձն առավ նրանց խնդիրը կատարել, մանավանդ որ թիկունք և օգնական եղավ Հայոց աշխարհին, որ երդումով հաստատապես հիշում էր այն ուխտի դաշինքը, որ Կոստանդիանոս կայսրը Տրդատ թագավորի հետ կնքել էին միջնորդությամբ թագավորի հետ»[2]:

[«Զոր իբրև լուաւ կայսրն զիրսն զայնոսիկ, մեծաւ փութով և բազում պատրաստութեամբ ի խնդիր ելանէր իւրին հասելոյ

1 Տե՛ս Ագաթանգեղոս, գլ. ԾԺԹ, 877, էջ 462—463 (Տփղիս, 1909):

2 Տե՛ս Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, թարգմ. Ստ. Մալխասյանցի, Երևան, 1947, էջ 127:

և օգնական և թիկունք լինէր աշխարհին Հայոց: Մանաւանդ, զի զուխտն յիշեալ զզաշանցն կռեալ զերդմանցն հաստատութեան, միջնորդութեամբ ի մէջ կայսերն Կոստանդիանոսի և ի մէջ Թագաւորին Տրդատայ եղեալ էր»][1]:

Մեջ բերված այս վկայությունները, ինչպես իրավացի կերպով ընդունում են պատմագետները, կարելի է համարել պատմական և վավերական: Դաշնագրության ժամանակը Գաթրճյանը և Տաշյանը ենթադրում են 312 թվին, Մաքսիմինոս Դայայի հայերի դեմ պատերազմից անմիջապես հետո[2]: Գելցերը, հիմնվելով Թեոդոսյան օրենսգրքի մեջ պահված Կոստանդիանոսի հրովարտակի վրա, կարծում է, որ դաշնագիրը կապված էր, հավանորեն, 315 թվին Սարդիկիայում[3]: Իսկ Ասատուրյանը հավանական է համարում, որ այդ դաշինքը կարող էր կնքված լինել 324 թվին Արևելքում, երբ Կոստանդիանոս Մեծը լիակատար տեր էր դառել Արևմուտքի և Արևելքի[4]:

Պետք է ասել, որ այս կարծիքներից առաջինը թյուրիմացության արդյունք է, որովհետև, ինչպես վերև տեսանք, Մաքսիմինոս Դայան պատերազմ էր մղել քրիստոնյա հայերի դեմ ո՛չ թե Մեծ Հայաստանի, այլ Հռոմեական Հայաստանի: Անընդունելի է նույնպես Գելցերի ենթադրությունը, որովհետև Թեոդոսյան օրենսգրքի վերոհիշյալ վկայությունը, ինչպես միանգամայն ուղիղ մատնացույց է արել Գաթրճյանը[5], վերաբերում է Արշակ Բ-ին և ո՛չ Տրդատ Գ-ին: Դժվար է նույնպես ընդունել և Ասատուրյանի կարծիքը, որը սոսկ մի կռահումն է, զուրկ պատմական ու փաստական որևէ հիմքից:

Ինձ թվում է, հավանական է Տաշյանի մի ուրիշ ենթադրությունը: Ընդունելով, որ վերոհիշյալ դաշինքը, իրոք, գոյություն է ունեցել՝ Տաշյանը իրավացի կերպով նշում է[6], որ աղբյուրների վկայություններից չի երևում, որ Տրդատ Գ-ը անձամբ էր գնացել դաշինք կնքելու, այլ, ինչպես Փավստոսի վերև բերված վկայության մեջ ասված է, դաշնագիրը կնքել էր «միջնորդութեամբ», այսինքն՝ միջնորդների աջակցությամբ:

---

[1] Տե՛ս Փավստոս, III, գլ. 21, էջ 55, Վենետիկ, 1889: Համեմատե՛ «Եղիշէի վարդապետի, Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին», Վենետիկ, 1864 էջ 124, նաև Խորենացի, III, գլ. Ե, էջ 261 (Տփղիս, 1913):

[2] Տե՛ս Գաթրճյան, Տիեզերական պատմութիւն, Բ, էջ 479 և Տաշյան, Ագաթանգեղոս, էջ 146:

[3] *Gelzer H.*, Die Anfänge der armenischen Kirche, Sitzungsberichte der Kgl. Sächs. Gesellschaft der Wissenschaften, Leipzig, 1895, էջ 168—169:

[4] Ասատուրյան, Քաղաքական վերաբերութիւններ:

[5] Տե՛ս Գաթրճյան, Տիեզ. պատմ., Բ, էջ 490, ծան. 1:

[6] Տե՛ս Տաշյան, Ագաթանգեղոս, էջ 147:

Իմ այս «Քննական տեսության» առաջին հատորում ես ևս մատնացույց էի արել, որ Ագաթանգեղոսի Պատմության 126-րդ գլխում նկարագրված Տրդատ Գ-ի ճանապարհորդությունը Կոստանդիանոսի մոտ խառնաշփոթ ու անստույգ մի ավանդություն է և, ըստ երևույթին, արձագանք է ուղևորության Հռոմ Տրդատ Ա-ի[1]:

Պետք է առանձնապես նշել, որ Ագաթանգեղոսի անունով մեր ձեռքը հասել է «Դաշանց թուղթ» վերնագրով մի գրություն, որը իբր թե այն դաշինքն է, որ կնքված է եղել Տրդատ Գ-ի և Կոստանդիանոս Մեծի միջև: Այդ գրությունը, ինչպես պարզված է, տգետ գրչի մի կոպիտ կեղծիք է և շարադրված է 12—13-րդ դարում:

Ավելորդ է, իհարկե, կանգ առնել Տրդատ Գ-ի քաջագործությունների մասին Ագաթանգեղոսի և Խորենացու հաղորդագրությունների վրա, որ պարզապես ժողովրդական զրույցներ են: Ագաթանգեղոսի ասելով՝ Տրդատը բարձր էր ու լայն հասակով, հաղթ էր մարմնով և անսահման քաջ էր, ուժեղ էր ու պատերազմող:

Երբ Հռիփսիմեի և մյուս կույսերի նահատակման տեղերում վկայարաններ էին շինվում Վաղարշապատում՝ Տրդատը, ինչպես վկայում է Ագաթանգեղոսը, յոթ օրվա ճանապարհ է գնում, բարձրանում է Մասիս սարը և Հռիփսիմեի վկայարանի համար բերում է ութ ահռելի մեծության քարեր.

«քարեր կարծր՝ պինդ, անտաշ, չկոկած, ահագին, ծանր, երկայն, հաստ և մեծամեծ՝ որոնցից ոչ ոք չէր կարող որևէ մեկը շարժել, նույնիսկ եթե ձեռնամուխ լինեին շատ մարդիկ: Արդ՝ ուժեղ հսկան վերցրեց հայկաբար ութ մեծ քարերը, դրեց բոլորն իր մեջքի վրա և շալակած բերեց նահատակության տաճարավայրերը»[2]:

[«Եւ անտի ի գլխոյ լեռնէն առեալ վէմս արտաքոյ, անտաշս, անկոփս, յաղթս, ծանունս, երկայնս, ստուարս և մեծամեծս, որ զմի մի ոչ ումեք լինէր հնար, թէ և դիպելոյ բազմութեան ի մարդկանէ՝ զայն շարժել. արդ՝ առեալ սկայազօրն հայկաբար զութ արձանսն՝ ի վերայ իւրոյ թիկանցն զայն դնէր և ըստանձնեալ բերէր ի վկայարանս տաճարացն»]:

Տրդատի մասին թե այս և թե այլ նման առասպելական զրույցները, որ ունեն բանաստեղծական-վիպական բնույթ, հորինված են եղել, անշուշտ, ուշ ժամանակներում:

Տրդատ Գ-ին է վերագրվելու, բացի վերոհիշյալ Ցարկին-Տիգ-

---

[1] Տե՛ս Մանանդյան, Քննական տեսություն, հատ. Ա, էջ 354:

[2] Ագաթանգեղոս, գլ. ԾԶ, 767, էջ 398 (Տփղիս, 1909):

րանակերտի և Ապարանի հունարեն արձանագրություններից, նաև Գառնիի հունարեն արձանագրությունը, որն անակնկալ կերպով գտնվեց Գառնիում 1945 թվին։

Այս արձանագրությունը, որ բավական վնասված է և դժվար է կարդացվում, ունի մոտավորապես հետևյալ բովանդակությունը.

«Տիրան-Տրդատ Մեծը, իշխելով Մեծ Հայաստանին որպես գերագույն տեր՝ կառուցեց տաճար-մատուռը, անհաղթելին. իր քրոջ արքայազատեր համար՝ դուրս թագավորական մեծ ու-տանից։ Շենքի հովանու ներքո սպասավորողը թող մեծին.... նաև գոհություն ավետարանման համար»[1]։

Իմ «Գառնիի հունարեն արձանագրությունը և Գառնիի հեթանոսական տաճարի կառուցման ժամանակը» (Երևան, 1946) նախորդ աշխատության մեջ ես ենթադրել էի, որ արձանագրության առաջին տողի մեջ Հելիոս բառը, որ նշանակում է արև, կարող է նաև հասկացվել իբրև Էլիոս (Aelius) անձնական անուն։ Ես կարծում էի, որ այդ անունը Տրդատ Գ-ը կարող էր ստացած լինել հռոմայեցիների երկրում, ուր նա ապրել էր ու մեծացել։

Ինձ թվում է այժմ, որ այս խնդրին ավելի հավանական է տալ բոլորովին այլ մեկնություն։ Կ. Մելիք-Օհանջանյանը կարևոր իր «Տիրան-Տրդատի վեպը ըստ Փավստոս Բուզանդի»[2] հոդվածում՝ մատնանշել է, որ Տիրան թագավորը հայկական սովորության համաձայն իր պապի Տրդատ Գ-ի անունով կոչվել է Տրդատ և անվանվել Տիրան-Տրդատ[3]։ Իմ կարծիքով, կարելի է հավանական համարել, որ Տիրան-Տրդատ կրկնակի անուն կարող էր ունեցած լինել նաև ինքը՝ Տրդատ Գ-ը։

Ըստ այս ենթադրության՝ Գառնիի արձանագրության մեջ Հելիոսը պարզապես Տիրան անվան թարգմանությունն է։ Հայտնի է արդեն, որ հայերի Տիր աստվածը համապատասխանում էր Ապոլլոնին և Հելիոսին[4], ուստի և շատ լավ հասկանալի է, թե

1 Տե՛ս Я. А. Манандян, Новые заметки о греческой надписи и языческом храме Гарни, „Известия" Академии Наук Арм. ССР, 1951, № 4, էջ 18 և 21։

2 Տե՛ս «Տեղեկագիր» Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի, հաս. գիտ., 1947, № 6 և № 7։

3 Նույնը, № 7, էջ 60—61։ Երվանդ Տեր-Մինասյանը, ինչպես մատնանշում է Մելիք-Օհանջանյանը, հայտնել է իրեն, որ Եղիշեի մի քանի ձեռագրերի մեջ Տիրան թագավորն անվանված է «Տիրան-Տրդատ»։

4 Տե՛ս H. Gelzer, Zur armenischen Götterlehre, Sonderabdruck a. d. Berichten der Königl. Sächs. Gesellschaft der Wissenschaften, Sitzung vom 7 December, 1895, էջ 137, նաև իմ աշխատությունը՝ «Արմավիրի հունարեն արձանագրությունները նոր լուսաբանությամբ», Երևան, 1946, էջ 14—17։

ինչո՞ւ Տիրան-Տրդատ Գ-ը հունարեն արձանագրության մեջ անվանված է Հելիոս-Տիրիդատես։ Նոր այս բացատրությունն ուշագրավ մի ապացույց է, որ վերոհիշյալ արձանագրությունը չէ կարող վերագրվել Տրդատ Ա-ին, ինչպես այդ թյուրիմացաբար ենթադրում են հայագետներից շատերը։

Երկրորդ կարևոր փոփոխությունը, որ անհրաժեշտ էր մտցնել իմ 1946 թվի նախնական թարգմանության մեջ, վերաբերում է Տրդատ Գ-ի տիտղոսին[1]։ Նկատի առնելով տարածությունը մինչև առաջին տողի վերջը՝ ես կարծում եմ այժմ, որ Տրդատ Գ-ն արձանագրության մեջ անվանված է եղել ո՛չ թե «Տրդատ թագավոր», այլ «Տրդատ Մեծ»։

Խալաթյանցը իր «Հայոց պատմության ուրվագծի» մեջ ասում է, որ Տրդատ Գ-ին հին հայ պատմագիրներն անվանել են Մեծ, որովհետև նա ջերմ պաշտպան է եղել քրիստոնեության և աջակցել է Գրիգոր Լուսավորչին քրիստոնեությունը տարածելու Հայաստանում[2]։ Այս կարծիքը ավելի քան վիճելի է։ Տրդատ Գ-ը «Մեծ» է անվանված ո՛չ թե մեր հնագույն պատմագիրների երկերում, այլ առաջին անգամ Սեբեոսի Պատմության երկրորդ գլխում և Մովսես Խորենացու մոտ[3]։ Խորենացին, ինչպես մատնանշված է վերոհիշյալ իմ աշխատություններում, ինքը տեսել էր Գառնիի հունարեն արձանագրությունը, ուստի և անհավանական չէ, որ նա Տրդատ Գ-ին Մեծ է անվանում, նկատի ունենալով արձանագրության մեջ Տրդատի «Մեծն» (ὁ Μέγας) տիտղոսը։

Ուշագրավ է ու հետաքրքիր, որ նորագյուտ արձանագրության մեր լուսաբանությունը ճշտիվ համապատասխանում է Խորենացու ցուցմանը, որ Գառնիի հունարեն արձանագրությունը պատկանում է Տրդատ Մեծին։ Պատմահոր այդ կարևոր վկայությունը, որ կարոտ է քննության, մեջ եմ բերում աշխարհաբար թարգմանությամբ և գրաբար.

«Այս ժամանակ [Արիստակեսի Նիկիայից վերադառնալուց հետո] Տրդատը վերջացնում է Գառնիի ամրոցի շինությունը, որը որձաքար ու տաշած քարերից էր, որոնք իրար էին կըպ-

1 Այդ մասին ինձ մասնավոր նամակով (30 մարտի 1947 թվի) հայտնել էր Ա. Բ. Ռանովիչը։

2 Տե՛ս Халатьянц, Очерк истории Армении, М., 1910, էջ 349։

3 Խորենացի, գիրք II, գլ. Ա և գլ. ԽԲ։

ցրված երկաթե գամերով և կապարով: Նրա մեջ նա շինեց նաև տուն հովանոց, մահարձաններով, սքանչելի զրվագներով ու բարձրաքանդակներով՝ իր Խոսրովիդուխտ քրոջ համար, և նրա վրա գրեց իր հիշատակը հունարեն գրերով»:

[«Զայսու ժամանակաւ կատարէ Տրդատ զշինուած ամրոցին Գառնւոյ զոր որձաքար և կոփածոյ վիմօք, երկաթագամ և կապարով մածուցեալ, յորում շինեալ և տուն հովանոց, մահարձանօք, սքանչելի զրօշուածովք, բարձր քանդակաւ, ի համար քեռ իւրոյ Խոսրովիդխտոյ, և գրեալ ի նմա զյիշատակ իւր հելլենացի գրով»][1]:

Խորենացու այս վկայությունից, որի մեջ կարևոր ու ճշգրիտ տեղեկություններ են հաղորդված Գառնիի ամրոցի և նրա մեջ գտնըվող շենքի մասին՝ դժվար չէ կռահել, որ պատմահայրն ինքն անձամբ եղել է Գառնիում և տեսել ու կարդացել է հունարեն արձանագրությունը: Նա միանգամայն ճիշտ է որոշել, որ իր տեսած հունարեն արձանագրությունը, որը պարզապես այժմյան նորագյուտ արձանագրությունն է՝ պատկանում է Տրդատ Մեծի ժամանակին: Նա նմանապես նաև ուղիղ մատնանշել է, որ Տրդատը Գառնիի ամրոցը կառուցել էր իր քրոջ համար, որին ինքը, հավանական ենթադրություն անելով, նույնացրել է Ագաթանգեղոսի մոտ հիշատակված Խոսրովիդուխտի հետ:

Խորենացին Գառնիի տաճարը համարել է «Հովանոց», այսինքն՝ ամառանոց, որ Տրդատ Գ-ը կառուցել էր իր քրոջ՝ Խոսրովիդուխտի համար: Նորագյուտ հունարեն արձանագրության ընթերցումը այժմ մեզ ցույց է տալիս, որ այդ հուշարձանը չէ կարող համարվել Խոսրովիդուխտի «Հովանոց», ինչպես այդ ենթադրել է Խորենացին: Ճիշտ պետք է համարել, անշուշտ, այն գիտնականների և ճարտարապետների կարծիքը, որոնք այդ շենքը համարում են հեթանոսական տաճար, մեհյան:

Նորագյուտ արձանագրության մեջ հիշատակված է, համաձայն իմ առաջարկած ընթերցման, Տրդատ Մեծի քույրը: Դժվար չէ, ուրեմն, որոշել, որ սա Ագաթանգեղոսի մոտ հիշատակված «մեծ օրիորդ Խոսրովիդուխտն» է, որը Հայաստանում ականավոր դեր էր կատարել քրիստոնեության տարածման ընթացքում:

Տրդատ Մեծի քրոջ հիշատակությունը հունարեն արձանագրության մեջ՝ կարևոր մի մատնանշում է, անշուշտ, որը ցույց է տա-

[1] Խորենացի, գիրք II, գլ. Ղ, էջ 241—242 (Տփղիս, 1913):

լիս, որ Խոսրովիդուխտի մասին Ագաթանգեղոսի և Խորենացու վկայությունները, ըստ էության, պատմական են և ոչ վիպական:

Գառնիի հունարեն արձանագրությունը, որը վերագրվելու է Տրդատ Մեծին, ինչպես մանրամասն մատնանշված է այդ արձանագրության վերաբերյալ առաջին իմ աշխատության մեջ[1], գրված է, հավանորեն, Տրդատի թագավորության այն ժամանակաշրջանում, երբ Հայաստանում արդեն հաստատվել էր քրիստոնեությունը և ինքը՝ Տրդատն ընդունել էր նոր կրոնը: Արձանագրության ժամանակը որոշվում է 315—330 թվերի միջոցում, այսինքն՝ հայերի քրիստոնեության դարձից հետո և Տրդատ Մեծի մահից՝ մոտավորապես 330 թվից, առաջ:

Ուշագրավ է, որ նաև Մովսես Խորենացին վկայում է, որ Տրդատ Մեծի «հելլենացի գրով» արձանագրությունը գրված է մոտավորապես այն ժամանակներում, երբ Գրիգոր Լուսավորչի Արիստակես որդին վերադարձել էր Նիկիայի ժողովից, այսինքն՝ 325 թվից հետո:

Վերահիշյալ իմ աշխատությունների մեջ ես նաև կարծիք էի հայտնել, որ Գառնիի ամրոցը և, հավանորեն, նաև հեթանոսական տաճարը գոյություն են ունեցել, ինչպես վկայում է Տակիտոսը[2], Արշակունիների Հայաստանում հաստատվելուց առաջ և, ըստ երևույթին, Հայաստան մուտք գործած հելլենիստական կուլտուրայի մի մնացորդ են:

Տրդատ Գ-ը թագավորել է Հայաստանում ո՛չ թե 70 կամ 56 տարի, ինչպես մատնացույց են անում Սեբեոսը և Խորենացին[3], այլ մոտ 32 տարի (298—շուրջ 330) և վախճանվել է մոտավորապես 330 թվին:

Խորենացին իր Պատմության երկրորդ գրքի վերջին գլխում վկայում է, որ Տրդատ Մեծին թունավորել և սպանել էին հայ նախարարները: Մի անվավեր գրվածքի մեջ[4] մատնանշված է, որ Տա-

[1] Տե՛ս Հ. Մանանդյան, Գառնիի հունարեն արձանագրությունը և Գառնիի հեթանոսական տաճարի կառուցման ժամանակը, Երևան, 1946, էջ 13—16:

[2] Տե՛ս Tacitus. Annales, XII. 45.

[3] Սեբեոս, գլ. Գ, էջ 16 (Երևան, 1939) և Խորենացի, II, գլ. ՂԲ, էջ 250 (Տփղիս, 1913):

[4] Տե՛ս «Յաղագս մահուան Տրդատայ թագաւորի՝ հզօրի, քաջի և առաքինոյ», «Բազմավէպ», 1851, էջ 69—75 և Միաբան (Գ. Տեր-Մկրտչյան), Խորենացու պատմութեան ուսումնասիրութիւն, Վաղարշապատ, 1896, էջ 33—34:

պուհ Բ-ի (309/10—379) հրամանով Տրդատ Գ-ին նետով վիրավորել էին որսի ժամանակ Եկեղյաց գավառում Սյունիքի ազատները և, որովհետև վերքը վտանգավոր չէր՝ թագավորին թունավորել էր հետո նրա սենեկապետը:

Տրդատ Գ-ի սպանության մասին ոչինչ չգիտեն և չեն հաղորդում հայոց հին պատմիչները, ուստի և վերոհիշյալ տեղեկությունները, ինչպես շատ ճիշտ մատնանշել է Խալաթյանցը[1], կասկածելի են և, ըստ երևույթին, չունեն պատմական արժեք:

[1] Տե՛ս *Г. Халатьянц*, Армянские Аршакиды, Москва, 1903, էջ 180 ևն.

ԳԼՈՒԽ ԻՆՆԵՐՈՐԴ

ԽՈՍՐՈՎ Գ. ՏԻՐԱՆ ԵՎ ՊԱՐՍԿԱ-ՀՌՈՄԵԱԿԱՆ ԿՌԻՎՆԵՐԻ ՎԵՐՍԿՍՈՒՄԸ

1. Խոսրով Գ.— Հայաստանի խաղաղ դրությունը նրա թագավորության առաջին տարիներում.— «Տանար մայրի» և «Խոսրովակերտ» անտառների տնկումը:— 2. Պայքար ընդդեմ կենտրոնախույս նախարարությունների.— Մանավազյան և Որդունի նախարարությունների իսպառ բնաջնջումը.— «մարտ պատերազմի առանց հրամանց».— բնաջնջված նախարարությունների կալվածքների հանձնումը հոգեվորականությանը:— 3. Պարսկական հարձակումները հռոմեական Միջագետքի վրա:— 4. Մազքութների Սանեսան թագավորի արշավանքը Հայաստան.— Սանեսանի պարտությունը և սպանությունը:— 5. Կոստանդիանոս Մեծի խորթ եղբոր որդու, Աննիբալիանոսի, նշանակումը բարձրագույն իշխող հռոմեական վասալական երկրների Արևելքում.—Հունա-հռոմեական աղբյուրների վկայությունները նրա մասին:— 6. Բզնունյաց Դատաբեն նահապետի դավաճանությունը և Աղձնյաց Բակուր բդեշխի ապստամբությունը.— Դատաբենի քարկոծումը և Բակուր բդեշխի ու նրա տոհմի մահապատժումը.— Նախազգուշական միջոցներ մեծամեծ ավագանու նկատմամբ:— 7. Մծբինի պաշարումը և պարսկական զորքերի հարձակումը Հայաստանի վրա:— 8. Պարսկական կուսակցության իշխանությունը Հայաստանում:— 9. Տիրանի գահակալությունը Կոստանդիոս կայսեր աջակցությամբ:— 10. Տիրան թագավորի մասին Փավստոսի և Խորենացու կասկածելի վկայությունները.— հայերի և հռոմայեցիների բարեկամությունը Տիրան թագավորի ժամանակ:— 11. Հայկական ծանր զրահավոր հեծելազորի վճռական դերը Մուրայլի մոտ կռվում:— 12. Տիրանի պայքարը կենտրոնախույս նախարարությունների դեմ.— Արծրունիների և Ռշտունիների տոհմերի բնաջնջումը:

Տրդատ Գ-ին հաջորդում է նրա որդին՝ Խոսրով Գ-ը (շուրջ 330—338), որին անվանում են Կոտակ, այսինքն՝ փոքր կամ փոքրահասակ: Սրա թագավորության ժամանակաշրջանի համար կարևորագույն աղբյուրն է Փավստոս Բուզանդի Պատմությունը, որից կարելի է վստահությամբ օգտվել: Հարկավոր է, իհարկե, նախապես վերացնել սրա միտումնավոր գունավորումներն ու չափազանցությունները, ուղղել ժամանակավրիպումները և որոշել պատմական փաստերի կատարման ճիշտ ժամանակը, դիմելով, որքան այդ հնարավոր է, օտար աղբյուրների օգնության:

Խոսրով Գ-ի ժամանակ, ինչպես հաղորդում է Փավստոսը, հայ եկեղեցու եպիսկոպոսապետն էր Գրիգոր Լուսավորչի երեց որդի Վրթանեսը՝ Արիստակեսի եղբայրը: Պետք է ասել, որ թե Տրդատ Գ-ի և թե նրա հաջորդների ժամանակ քրիստոնեական եկեղեցին և նրա առաջնորդները մեծ դեր էին խաղում ո՛չ միայն երկրի կրոնական, այլև քաղաքական կյանքում:

Խոսրով Գ-ի թագավորության առաջին տարիներում Հայաստանը գտնվում էր անդորր ու բարգավաճ վիճակի մեջ շնորհիվ այն երկարատև խաղաղության, որ հաստատվել էր Արևելքում 298 թվի դաշնագրությունից հետո: Հայաստանի այդ խաղաղ ու բարեկեցիկ ներքին դրությունը մատնանշված է Փավստոսի ուշագրավ մի վկայության մեջ, որը պատմական ճիշտ հիշողություն է:

«Սրանից [Տրդատ Մեծից] հետո,—պատմում է Փավստոսը,—թագավորեց Խոսրով Կոտակը, [Մեծն] Խոսրովի թոռը, քաջ և առաքինի Տրդատ թագավորի որդին: Սրա ժամանակ քահանայապետ եղավ և իր հոր ու եղբոր աթոռը նստեց Վրրթանեսը, Գրիգորի երեց որդին: Սրանց տարիներում աճեցին ու բազմացան խաղաղություն և շինություն, մարդաշատություն և առողջություն, պտղաբերություն, առատություն և գործի հաջողություն, և աստվածային մեծ պաշտամունքը և աստվածային բարի վարքը: Սուրբ Վրթանեսը իր հոր ու եղբոր նման նրանց լուսավորում էր ու առաջնորդում: Այն դարում ծաղկած էին իրավունքն ու արդարությունը»[1]:

[«Ապա յետ այսորիկ թագաւորեաց Խոսրով Կոտակ, թոռն Խոսրովու, որդի քաջի և առաքինւոյն Տրդատայ արքայի: Յաւուրս սորա եկաց և եղև քահանայապետ յաթոռն հօրն, փոխանակ հօրն իւրոյ և եղբօրն իւրոյ, երէց որդին Գրիգորի Վրթանէս: Խաղաղութիւն և շինութիւն, մարդաշատութիւն և առողջութիւն, պտղաբերութիւն և ստացուածաշատութիւն և շահեկանութիւն, և մեծն աստուածասէր պաշտօն ի հաճոյակատարն բարութիւն յամս յաւուրս սոցա աճեալ բազմացաւ: Լուսաւորէր և առաջնորդէր նոցա սուրբն Վրթանէս իբրև զհայր իբրև զեղբայր իւր. իրաւունք և արդարութիւն ծաղկել էին ի դարուն յայնմ»][2]:

Խաղաղ այս ժամանակաշրջանի շինարարական կարևոր գործերից Փավստոսի մոտ առանձնապես հիշատակված են «Տաճար մայրի» և «Խոսրովակերտ» արհեստական անտառների տնկումը, որոնցից առաջինը տարածվում էր Գառնիից մինչև Դվին կոչված բլուրը, իսկ երկրորդը՝ այդ բլրից մինչև Արտաշատ քաղաքը և Արաքս գետը:

Այս անտառներում, որոնք թագավորի ու ազնվականության համար որսորդության վայր էին լինելու, կառուցվել էին արքունական ապարանքներ: Ինճիճյանի կարծիքով, Հայաստանում անտառները ո՛չ միայն որսի ու զվարճության համար էին կառուցվում, այլ, գլխավորապես, նաև ազնվական դասի զինվորական ուսուցման ու ռազմական պատրաստության համար[1]:

«Եվ թագավորը [Խոսրով Գ-ը],—պատմում է Փավստոսը,—հրաման տվեց իր զորավարին՝ հավաքել երկրից բազմաթիվ աշխատավոր մարդիկ, բերել անտառներից վայրի կաղնի և տնկել այդ Այրարատյան գավառում. և սկսած արքունի ամուր բերդից, որի անունն է Գառնի, մինչև Մեծամորի դաշտը և բլուրը, որը կոչվում է Դվին ու գտնվում է Արտաշատ մեծ քաղաքի հյուսիսակողմում՝ գետի ընթացքով տնկեցին կաղնին դեպի ներքև մինչև Տիկնունի ապարանքը. և այս անտառի անունը նա դրեց Տաճար մայրի:

Մի ուրիշ անտառ ևս տնկեցին սրանից դեպի հարավ, եղեգնուտի եղերքով, և դաշտը լցրին կաղնատու տնկերով, սրա անունն էլ դրին Խոսրովակերտ: Այստեղ ևս շինեցին արքունական ապարանքներ: Եվ երկու տեղերն էլ պարիսպներով պատեցին, բայց իրար չմիացրին, որովհետև այդտեղ էր գտնվում հաղորդակցության մեծ ճանապարհը: Այնուհետև անտառն աճեց ու բարձրացավ:

Ապա թագավորը հրամայեց հավաքել ամեն տեսակ էրեներ ու գազաններ և լցնել պարսպապատված տեղերը, որպեսզի սրանք իրենց համար լինեն նրա թագավորության որսի, զբվարճության ու ուրախության տեղեր: Եվ Վաչե զորավարը իսկույն կատարեց թագավորի ասածները»:

[«Եւ ետ հրաման թագաւորն զօրավարին իւրոյ՝ հանել խաշար յաշխարհէն բազում, և բերել զվայրենի կաղին մայրեաց, և տնկել զայն յԱյրարատեան գաւառին. և առեալ յամուր բերդէն արքունի, որում կոչեն Գառնի, մինչև ի դաշտն Մեծամօրի ի բլուրն՝ որ անուանեալ կոչի Դուին, որ կայ ի հիւսիսոյ կողմանէ քաղաքին մեծի Արտաշատու, զգետն խոնարհ մինչև

---

[1] Տե՛ս Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, թարգմ. Ստ. Մալխասյանցի, Երևան, 1947, էջ 87 (III, գլ. Գ):

[2] Փավստոս, Վենետիկ, 1889, էջ 6—7 (III, գլ. Գ)։

[1] Ղ. Ինճիճյան, Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի, հատ. Գ, Վենետիկ, 1835, էջ 137—139:

յապարանսն Տիկնունի՝ անկեցին գկազինն։ Եւ կոչեաց զանուն նորա Տաճար մայրի։

Եւ միւս ի մայրեացն յեղեգնաբերանին ի նմանէ ի հարաւակողմ լցին զդաշտն կաղնատուն անկով. և կոչեցին զանուն նորա Խոսրովակերտ։ Եւ անդ շինեցին զապարանսն արքունականս, գերկոսեան անտառսն պարսպեալ փակեցին. և ոչ կցեցին ի միմեանս վասն պողոտայի ճանապարհին։ Եւ աճեաց բարձրացաւ. և ապա զամենայն էրէս և զզազանս հրամայեաց ժողովել թագաւորն և լնուլ զքաղաքորմսն, զի լիցին նոցա անդէք որսոց զբօսանաց ուրախութեան թագաւորութեան նորա։ Եւ զօրավարն Վաչէ կատարէր վաղվաղակի զասացեալսն արքայի»[1]։

Խոսրով Գ-ի ժամանակ, ինչպես երևում է Փավստոսի վկայություններից, հին հեթանոսական կրոնը դեռ ուներ Հայաստանում բազմաթիվ հետևողներ։ Քրիստոնեության մուտքը Հայաստան այնպես արագ տեղի չէր ունեցել, ինչպես այդ նկարագրված է Ագաթանգեղոսի Պատմության մեջ։ Փավստոսը հաղորդում է, որ քրմական կուսակցությունը Տարոնում, Խոսրով Գ-ի կնոջ սադրանքով, ուզեցել էր սպանել Վրթանես քահանայապետին Աշտիշատի եկեղեցում։ Դավադրությանը, Փավստոսի ասելով, մասնակից են եղել մոտ երկու հազար մարդ։ Սակայն սպանության փորձը հաջողություն չէր ունեցել[2]։

Ավելի վտանգավոր էին Խոսրով Գ-ի ժամանակ նախարարական ապստամբությունները, որոնք վտանգավոր ու համառ բնույթ էին ստացել նրա թագավորության երկրորդ կեսում։

Ինչպես հայտնի է, Արշակունյաց Հայաստանի քաղաքական պատմության էական կողմերից մեկը կազմում էր կենտրոնական իշխանության արյունահեղ պայքարն ընդդեմ կենտրոնախույս ու ապստամբ նախարարությունների։

Ինքնըստինքյան հասկանալի է, որ Արշակունյաց Հայաստանում ևս, ինչպես և միջնադարյան Եվրոպայի ֆեոդալական միապետություններում, թագավորական իշխանության ու ֆեոդալական հզոր ու ինքնուրույն տերությունների քաղաքական ձգտումները հաճախ իրար ընդդեմ էին ու հակադիր։ Հայ Արշակունիները, որոնց գերիշխանության տակ գտնվում էին բդեշխությունները և մյուս նախարարությունները, պետք է, անշուշտ, ամեն կերպ ձգտեին ընդլայնելու իրենց թագավորական իշխանությունն ու իրավունքները և ստեղծելու կենտրոնացած ու զորեղ մի պետություն, իսկ ֆեոդալական իշխանությունները շահագրգռված էին, ընդհակառակը, ո՛չ միայն պահելու, այլև ընդարձակելու իրենց անջատ ու անկախ իրավունքները։

Հայաստանի սահմանակից մեծ պետություններն օգտվում էին, բնականաբար, Արշակունիների թագավորական իշխանության ու հայ նախարարությունների միջև եղած ներքին երկպառակություններից և աջակցում ու հովանավորում էին խռովարարներին։ Սասանյան Պարսկաստանը և Հռոմեական կայսրությունը չէին կարող, հարկավ, հանդուրժել Հայաստանի միացումն ու զորեղացումը, ուստի և իրենք էին հաճախ երկպառակում երկիրը և պաշտպանում իրենց քաղաքականության հլու ու հաճելի, խռովարար ու ըմբոստ իշխաններին։

Շատ պարզ է, որ Հայ Արշակունիներին դժվար պիտի լիներ քաղաքական այս պայմաններում ստեղծել զորեղ ու կենտրոնացած մի պետություն։

Առաջին երեք դարերում Քրիստոսից հետո Արշակունիների ու նախարարությունների փոխհարաբերությունները մեզ միանգամայն անհայտ են աղբյուրների բացակայության պատճառով։ Արշակունյաց հայ թագավորության քաղաքական ներքին անցքերը հայտնի են մեզ միայն Խոսրով Գ-ից սկսած։

Սրա թագավորության ժամանակ տեղի էր ունեցել, ինչպես վկայում է Փավստոսը, Մանավազյան և Որդունի նախարարությունների արյունահեղ կռիվը, որն ինքնին արդեն մի ապացույց է Խոսրով Գ-ի հեղինակության և թագավորական իշխանության թուլության։

«Եվ այն ժամանակները,—պատմում է Փավստոս Բուզանդը,—մեծ խռովություն ծագեց Հայոց աշխարհում, որովհետև երկու մեծ նախարարներ ու իշխաններ, գավառակալներ ու աշխարհատերեր, իրար հետ ընդհարվեցին, մեծ ոխակալությամբ կռիվ սկսեցին և իրար դեմ պատերազմ էին մղում առանց իրավունքի։ Հայոց մեծ աշխարհը պղտորում էին Մանավազյան տոհմի իշխանը և Որդունյաց տոհմի նահապետը։ Սրանք իրար դեմ մեծ պատերազմ վարեցին և շատ մարդիկ կոտորվեցին ու ոչնչացան։

Ապա Խոսրով թագավորը և Վրթանես մեծ եպիսկոպոսապետը նրանց մոտ ուղարկեցին պատվական մեծ եպիսկոպոս Աղբիանոսին, որպեսզի սա խոսե ու հաշտեցնե նրանց։ Եվ երանելի Աղբիանոսը եկավ նրանց մոտ, որ նրանց ուղղե ու

1 Փավստոս, *III, գլ. Ը, էջ 18 (Վենետիկ, 1889)։*

2 *Նույնը, III, գլ. Դ։*

հնազանդեցնել և իրար հետ հաշտեցնել: Բայց նրանք անարգեցին նրան և նրա միջնորդությանը ականջ չդրին: Նրանք արհամարհեցին նաև նրան ուղարկողներին ու եպիսկոպոսին արձակեցին մեծ թշնամանքով և արքունական երկիրը վերցրին ու ավերեցին»:

[«Եւ զայն ժամանակաւ յարեաւ խռովութիւն մեծ յաշխարհին Հայոց, զի մեծ նախարարք և իշխանք երկու, գաւառակալք աշխարհատեարք անկանէին ընդ միմեանս, մեծաւ ոխութեամբ յարուցին կռիւ և տային ընդ միմեանս մարտ պատերազմի առանց իրաւանց: Եւ պղտորէին զմեծ աշխարհն Հայոց իշխանն Մանաւազեան տոհմին և միւս ևս նահապետն Որդունեաց տոհմին: Կռուեցան ընդ միմեանս մեծաւ պատերազմաւ և բազում մարդկան լինէր ծախումն կոտորածոյ:

Ապա առաքեցին թագաւորն Խոսրով և մեծ եպիսկոպոսապետն Վրթանէս զպատուական զմեծ եպիսկոպոսն Ալբիանոս ի մէջ նոցա, խօսել ի հաշտութիւն խաղաղութեան: Երթեալ հասանէր ի մէջ նոցա երանելին Ալբիանոս, զնոսա ուղղել նուաճել՝ ընդ միմեանս հաշտեցուցանել: Անարգեցին զնա և ոչ լուան բարեխօսութեանն եկելոյն. անգոսնեցին զյղեալսն և մեծաւ թշնամանօք արձակեցին զեպիսկոպոսն, և առնուին աւերէին զտունն արքունի»][1]:

Փավստոսի պատմելով, նախարարական հին այդ տոհմերը թագավորի հրամանով սրի է անցկացրել և խայտառ բնաջինջ արել Մամիկոնյան Վաչե զորավարը:

«Եվ [թագավորը],—ասում է Փավստոսը,—տվեց Ալբիանոս եպիսկոպոսին եկեղեցու համար Մանավազյանների նահապետի ավանը և բուն աթոռանիստ գյուղը՝ Մանավազակերտն իր բոլոր սահմաններով ու նրանց շուրջը գտնվող գավառակով, որ Եփրատ գետի կողմերումն էր: Եվ Բասենի եպիսկոպոս Եվտաղիոսին [՞] տվին Որդունիների բուն գյուղը, որի անունն էր Որդորու, իր բոլոր սահմաններով, որ գտնվում է հենց Բասենի երկրում»:

[«Եւ ետ [Խոսրով] զաւանն և զբուն գահոյից գեւղն նահապետին Մանաւազենից եպիսկոպոսին Ալբիանոսի յեկեղեցի՝ զՄանաւազակերտ ամենայն սահմանօքն և գաւառակաւն հանդերձ, որ շուրջ զնովօք էր, որ կայ ի կողմանս գետոյն Եփրատայ: Եւ ետուն զբուն գեւղն Որդունեաց, որոյ անուն էր Որդորու, ուստի [Մարկվարտն ուղղել է «Եւտաղի» փխ. «ուստի»][1] եպիսկոպոս Բասենու ամենայն սահմանօքն հանդերձ, որ ինքն իսկ է յերկրին Բասենու»][2]:

Մանավազյանների և Որդունիների տոհմերի մասին Փավստոսի վկայությունից, ինչպես մատնանշված է «Ֆեոդալիզմը Հին Հայաստանում» իմ աշխատության մեջ[3], կարելի է կռահել, որ նախարարությունները, լինելով կենտրոնական իշխանությունից դրեթե անկախ, ըստ երևույթին, մասնավոր պատերազմների վարումը համարել են իրենց օրինական իրավունքը, իսկ թագավորական իշխանությունը համարել է այդ «մարտ պատերազմի առանց իրաւանց»: Մասնավոր կռվի հենց նույն իրավունքը, ինչպես հայտնի է, իրենց արտոնությունն են համարել ֆեոդալական իշխանությունները նաև միջնադարյան Եվրոպայում և Անգլիայում, և այստեղ ևս թագավորական իշխանությունը, իրեն զորեղ զգալով, չէ ճանաչել ֆեոդալների այդ իրավունքը:

Սկսած, հավանորեն, 335 թվից դրությունը Հայաստանում սկսեց խիստ ծանրանալ, որովհետև մոտավորապես այդ ժամանակներում Սասանյան Պարսկաստանը վերսկսեց թշնամական գործողությունները Հռոմեական կայսրության դեմ, նպատակ ունենալով վերանվաճել թե Անդրտիգրիսյան գավառները, որ Ներսեհը 298 թվին զիջել էր կայսրությանը, և թե նաև ամբողջ Հայաստանը:

Պատմագիտության մեջ ընդհանրացած է այն կարծիքը, որ իբր թե պարսկական առաջին հարձակումները Հռոմեական Միջագետքի վրա սկսվել էին 337 թվին: Ինձ ավելի հավանական է թվում Մարկվարտի նոր ենթադրությունը: Վերջինս, հենվելով Թեոփանեսի կարևոր մի վկայության վրա[4], մատնացույց է արել, որ Պարսից հարձակումը Ամիդ քաղաքի վրա տեղի էր ունեցել, հավանորեն, 335 թվին և որ նույն այս թվին Ամիդի ու Տիգրանակերտի միջև, Նարարրայում (Nararra), Կոստանդիանոս Մեծի որդի, Կեսար Կոստանդիանոսը, պարտություն էր մատնել արքայազն Ներսեհին, որը սպանվել էր[5]:

1 Փավստոս, III, գլ. Դ, էջ 9 (Վենետիկ, 1889):

1 Տե՛ս *Markwart*, Die Entstehung der armenischen Bistümer, Rom, 1932, էջ 165։

2 Փավստոս, III, գլ. Դ, էջ 10 (Վենետիկ, 1889):

3 Երևան, 1934, էջ 269:

4 *Theophanes*, p. 20, 21 ևն., ed. De Boor.

5 Տե՛ս *Markwart*, Südarmenien und die Tigrisquellen, Wien, 1930, էջ 265—268 և նույնի, Die Entstehung der armenischen Bistümer, էջ 96=Orientalia Christiana, vol. XXVII, 2, էջ 232:

Ուշագրավ է, որ, հավանորեն, նույնպես 335 թվին, ինչպես մատնացույց է արել դարձյալ Մարկվարտը, մազքութների Սանեսան թագավորի առաջնորդությամբ արշավել էին Հայաստան հյուսիսային լեռնականները։

«Այս ժամանակ,— պատմում է Փավստոսը,— մազքութների Սանեսան թագավորը, անհուն բարկությամբ լցված, թշնամացավ իր ազգակից՝ Հայոց Խոսրով թագավորի հետ, և հավաքեց ու գումարեց բոլոր զորքերը՝ հոներ, փոխեր, թավասպարներ, հեճմատակներ, իժմախներ, գաթեր, ղղվարներ, գուգարներ, շղբեր, ճղբեր, բաղասիճներ, եգերսվաններ և այլ խառնիճաղանջ թափառակյաց վաչկատուն ուժեր անթիվ բազմությամբ՝ այն մեծ զորքերը, որոնց հենց ինքն էր իշխում։ Եկավ իր սահմաններից դենը, անցավ մեծ Կուր գետը և սփռվեց ու լցրեց Հայոց աշխարհը։ Եվ թիվ չկար նրա հեծելազոր գնդերի բազմության և հաշիվ չկար նրա տիգավոր հետևակ զորքերի, ուստի և նրանք իրենք չէին կարող իրենց զորքը համարել...։ Նրանք եկան և լցին ու ծածկեցին Հայոց ամբողջ երկիրը՝ քանդեցին, գերեցին, խլլան ավերեցին. սփռվեցին, տարածվեցին նրա սահմանների չորս կողմը, ծայրե ի ծայր ցրիվ եկան մինչև Սատաղ փոքրիկ քաղաքը և մինչև Գանձակ սահմանն Ատրպատականի։ Բերին (ամեն ինչ) մեկ տեղ հավաքեցին, նախորոշված կողմերը Այրարատյան գավառում մեծ բանակ դցեցին»։

[«Յայնմ ժամանակի թագաւորն մազքթաց Սանէսան անհնարին նեղեալ զայրացեալ ոխութեան ընդ խրում ազգակցին Խոսրովու արքային Հայոց, և գումարեաց ժողովեաց զամենայն զօրս հոնաց և փոխաց, թաւասպարաց, հեճմատակաց, իժմախաց, գաթաց, և ղղուարաց, գուգարաց, շղբաց և ճղբաց, և բաղաճաց, և եգերսուանացն, և այլոց խառնաղանճ բազմութեամբք անթիւ անբնակն վաչկատուն զօրութեանց, որում միանգամ ինքն իշխէր զօրացն բազմաց։ Եկն անց ընդ իւր սահմանն ընդ գետն մեծ ընդ Կուր, և եկն տարածեցաւ ելից զերկիրն Հայոց աշխարհին։ Եւ չգոյր թիւ բազմութեան հեծելազօրգնդացն, և ոչ համար շերտաւոր հետևակ զօրուն. զի և ինքեանք զինքեանս զիւրեանց զօրսն թուել ոչ կարէին։ . . . . Եւ եկին լցին ծածկեցին զամենայն երկիրն Հայոց՝ քանդեցին, գերեցին, առ հասարակ աւերեցին. սփռեցան տարածեցան զսահմանօքն, լի և լի ծաւալեցան մինչև ի փոքր քաղաքին Սատաղու, և մինչև ի Գանձակ սահմանս Ատրպատական. խա-

ղացուցին ի մի վայր ժողովեցին, ի ժամադիր կողմանս յԱյրարատեան գաւառին բանակ մեծ լինէր»][1]։

Փավստոսի պատմելով՝ այս աշխարհավեր արշավանքի ժամանակ Խոսրով թագավորը և Վրթանես եպիսկոպոսապետը փախել էին և ապաստանել Կոգովիտ գավառի Դարոյնք բերդը, իսկ Մամիկոնյան Վաչե զորավարը գնացել էր այդ ժամանակ Հունաց կողմերը։ Մարկվարտը կարծում է, որ Վաչեն ուղարկված է եղել Հռոմայեցիների մոտ խնդրելու նրանցից օգնական զորք, և որ Հայաստանի ազատագրումը հյուսիսականներից տեղի էր ունեցել հռոմեական զորքի աջակցությամբ[2]։

Սանեսանը, որը Վաչեի հարձակման ժամանակ իր բանակով Վաղարշապատ քաղաքում, փախչում է Օշականի կողմերը։ Սակայն Վաչե Մամիկոնյանը և իր նիզակակիցները՝ Բագրատ Բագրատունին, Հունդակ ու Գարեգին Ռշտունիները, Մեհունդակ ու Գարեգին Ռշտունիները, Վահանը և Վարազ Կամսարականը՝ Ամատունյաց տոհմի նախարար Վահանը և Վարազ Կամսարականը՝ վրա հասնելով, կոտորում են թշնամու խաժամուժ զորքերը և սպանում են նաև իրեն՝ Սանեսանին[3] (336 թ.)։

Հյուսիսային ցեղերի այս արշավանքի մասին հույն-հռոմեական աղբյուրները ո՛չ մի տեղեկություն չեն տալիս։ Սակայն նրանց մեջ, ինչպես մատնանշել է Մարկվարտը[4], ուշագրավ վկայություններ կան այն մասին, որ 335 թվի աշնանը, այսինքն՝ Սանեսանի արշավանքի հենց ժամանակ, Կոստանդիանոս Մեծի խորթ եղբոր՝ Դալմատիոսի որդին, Աննիբալիանոսը, որին տրված է եղել «թագավորների թագավոր» տիտղոսը, ուղարկվել էր Կեսարիա իբրև պոնտական ժողովուրդների կառավարիչ։

Աննիբալիանոսը, ըստ երևույթին, համարվել է բարձրագույն տեր և իշխող հռոմեական վասալական շրջանների՝ Հայաստանի, Վրաստանի և Դիոկլետիանոսի ժամանակ կայսրությանը միացված Անդրտիգրիսյան երկրների։ Ինչպես ենթադրում է Մարկվարտը, նրան հանձնարարված է եղել այս բոլոր ծայրամասային մարզերի պաշտպանությունն ու վերահսկողությունը հենց կովկասյան լեռնաբնակների վտանգավոր առաջխաղացման կապակցությամբ։

Աննիբալիանոսի մասին հույն-հռոմեական աղբյուրների տեղեկությունները, որ խիստ կարևոր են ու հետաքրքիր, անհրաժեշտ

[1] Փավստոս, III, գլ. է, էջ 15—16 (Վենետիկ, 1889)։
[2] Տե՛ս *Markwart*, Die Entstehung der armenischen Bistümer, էջ 77։
[3] Փավստոս, III, գլ. է, էջ 16—17 (Վենետիկ, 1889)։
[4] Տե՛ս *Markwart*, Die Entstehung der armenischen Bistümer, էջ 77—78=Orientalia Christiana, XXVII, 2, էջ 213—214։

եմ համարում մեջ բերել բառացի թարգմանությամբ լատիներենից
և հունարենից:

1. Անոնիմուս Վալեզիանուս, «Կոստանդիանոս կայսեր ծա-
գումը», 6, 36[1].

«Դալմատիոսին, իր եղբոր՝ Դալմատիոսի որդուն, նա [Կոս-
տանդիանոս Մեծը] հայտարարեց Կեսար. նրա եղբորն Աննի-
բալիանոսին, ամուսնացնելով իր Կոնստանդինա աղջկա հետ՝
կարգեց թագավորների թագավոր ու պոնտական ժողովուրդ-
ների կառավարիչ»:

2. Ավրելիոս Վիկտորին վերագրված՝ «Քաղվածքներ Կեսար-
ների» մասին, գլ. 41, 20 (Epitome de Caesaribus).

«Այս թագավորներն էին կառավարելու այդ երկրամասերը՝
Աննիբալիանոսը, Դալմատիոս Կեսարի եղբայրը, Հայաստանը
և շրջակա դաշնակից ազգերը»:

3. «Զատկական ժամանակագրություն», I, 531, 16—532,
3 (335 թ.)[2].

«Եվ Դալմատիոսին, իր եղբոր՝ Դալմատիոսի որդուն, նա
[Կոստանդիանոս Մեծը] հայտարարեց Կեսար... և Աննիբա-
լիանոսին, ընտրելով թագավոր, հագցրեց ծիրանի վերնա-
զգեստ և ուղարկեց Կեսարիա Կապադովկիայի»[3]:
Կայսերական երկրի այս բաժանումը, ինչպես մատնանշում է
Մարկվարտը, տեղի էր ունեցել 335 թվի սեպտեմբերի 18-ին[4]:
Շապուհ Բ-ի թշնամական գործողությունները հռոմեական
Միջագետքում, որ սկսվել էին արդեն 335 թվին, հռոմայեցիները
չէին կարող, հարկավ, թողնել անպատասխան: Կոստանդիանոս
կայսրը պատրաստվում էր անձամբ գալ Արևելք, բայց 337 թվի
գարնանը, մայիսի 22-ին, վախճանվեց Նիկոմեդիայում:
Նրա երեք որդիները՝ Կոստանդիանոս Բ-ը, Կոստանդիոսը և
Կոստասը՝ բաժանեցին պետությունն իրար մեջ, և Կոստանդիանոս
Բ-ը ստացավ Գալլիայի կուսակալությունը (praefectura), Կոս-
տանդիոսը՝ Արևելքի և Կոստասը՝ Իլլիրիայի ու Իտալիայի:
Այնուհետև Կոստանդիոսը, իր եղբայրների հետ Պաննոնիա-
յում հանդիպելուց հետո՝ շտապեց գալ Մերձավոր Արևելք (338 թ.),

1 *Anonymus Valerianus*, 6. 36. տե՛ս Chron. min. I, p. 11, ed. Mommsen.
2 Chronicon Paschale, Corpus scriptorum historiae Byzantinae, Bonn,
1832.
3 Համեմատե՛ նաև Zosimos, II, 39, 2:
4 Տե՛ս *Markwart*, Die Entstehung der armenischen Bistümer, էջ 78:

ուր շարունակում էին հարձակումներ գործել Միջագետքի ու Հա-
յաստանի վրա պարսկական զորքերը:
Եվ ինձ թվում է, կարելի է միանգամայն հավանական հա-
մարել, որ Փավստոսի վկայությունները ներքին խռովությունների
ու ապստամբությունների մասին Հայաստանում, որ ծագել էին
Խոսրով Գ-ի դեմ Շապուհ Բ-ի դրդմամբ, վերաբերում են հենց
այս ժամանակներին:
Խոսրով Գ-ը, ինչպես դժվար չէ եզրակացնել Փավստոսի վկա-
յություններից, գտնվում էր Վրթանես եպիսկոպոսապետի, Մամի-
կոնյանների և նախարարական այն խմբի ազդեցության տակ, որ
համակրող էր ու կողմնակից Հռոմեական կայսրության: Սասանյան
Պարսկաստանը չէր կարող, իհարկե, հանդուրժել Հայաստանի քա-
ղաքականության այդ ուղղությունը: Եվ անշուշտ, հենց նրա դրդ-
մամբ տեղի էին ունեցել Բզնունյաց Դատաբեն նահապետի դավա-
ճանությունը և Աղձնյաց Բակուր բդեշխի ապստամբությունը, որ
մանրամասն հիշատակված են Փավստոսի Պատմության մեջ:
Այս դավաճանությունն ու ապստամբությունը, որ տեղի էին
ունեցել պարսկական արշավանքների հետ միաժամանակ, Խոսրով
Գ-ը կարողացել էր ճնշել, ինչպես վկայում է Փավստոսը, իր սե-
փական ուժերով: Փավստոսի համապատասխան վկայությունները,
որ ներքև մեջ եմ բերում, թեև խիստ գունավորված ու չափազանց-
ված են, բայց թվում են ըստ իրենց էության պատմական:
1. Փավստոս, III, գլ. Ը, էջ 19—20 (Վենետիկ, 1889)՝
«Եվ դրանից հետո [Խոսրով Գ-ը] շտապեց իր մոտ հավաքել
զորքերը, մոտ երեսուն հազար, Վաչե զորավարի հետ: Նա
գնաց թշնամուն ընդառաջ և մոտ հասավ իր բոլոր ավագա-
նու խումբ մեծամեծ նախարարների հետ միասին:
Եվ իրար հանդիպեցին Բզնունյաց ծովի ափին Առեստ ավա-
նում, փոքր գետի վրա արքունական ձուկ որսալու տեղում: Եվ
տեսան Պարսից զորքը, որն անթիվ էր իր բազմությամբ՝ ինչ-
պես երկնքի աստղերը և ինչպես ավազը ծովի ափին. եկել էին
նրանք անթիվ փղերով ու անհամար զորքով: Իսկ սրանք հա-
սան ու հարձակվեցին նրանց բանակի վրա, հույս դնելով աստ-
ծու վրա: Սրանք խփեցին, սպանեցին, կոտորեցին ու նրանցից
և ո՛չ մեկին չթողին կենդանի. մեծ ավար վերցրին ու նաև փղե-
րըն ու նրանց ամբողջ ուժն ու զորությունը: Դատաբենին
ձերբակալեցին Վաչե սպարապետը և քաջ Վահան Ամատու-
նին. նրան բերին Խոսրով մեծ թագավորի առաջ և քարկոծե-

ցին քարերով իբրև մի մարդու, որ դավաճանել էր իր տիրոջ
երկրին, գնդին ու զորքերին»։
[«Եւ յետ այսորիկ աճապարէր կուտէր զօրսն առ ինքն իբրև
երեսուն հազար հանդերձ զօրավարաւն Վաչէիւ. գայր հասանէր
ընդ առաջ նոցա ամենայն ուագախումբ մեծամեծ նախարա-
րօք իւրովք։
Եւ դիպեցան միմեանց առ ափն ծովուն Բզնունեաց, յԱռեստն
աւանի, ի ձկնատեսանսն արքունի ի վերայ գետակին։ Եւ տե-
սին զօրսն Պարսից, զի ոչ գոյր թիւ բազմութեանն. զի էին իբրև
զաստեղս երկնից, և իբրև զաւազ առ ափն ծովու. զի եկեալ
էին անթիւ փղօք և անչափ զօրօք։ Եւ սորա հասին անկան ի
վերա. բանակին, յուսացեալք առ աստուած. հարին, սատա-
կեցին, կոտորեցին և ոչ թողին ի նոցանէ և ոչ մի։ Եւ թափէին
աւար բազում, և զփիղսն և զամենայն ույժ զօրութեան նոցա։
Զերբակալ արարեալ զԴատաբէնն Վաչէ սպարապետն և քաջ
Վահան Ամատունի, ածէին գնա առաջի մեծի թագաւորին Խոս-
րովու, և քարկոծ առնէին գնա քարամբք իբրև զայր, որ աշ-
խարհի և գնդի և զօրաց տեառն իւրոյ դաւաճան լեալ իցէ»]։
2. Փավստոս, III, գլ. Թ, էջ 21 (Վենետիկ, 1889).
«Այդ ժամանակները ապստամբեց Հայոց թագավորից նրա
ծառաններից մեկը, Աղձնիքի մեծ իշխանը, որը բդեշխ էր կոչ-
վում և որը արքունի պալատի չորս բարձերեց ու գահերեց իշ-
խաններից մեկն էր։ Նա ձեռք մեկնեց Պարսից թագավորին և
մատնեց նրան արքունի երկիրը, որն իրեն կից էր։ Նա զորք
բերեց Պարսից թագավորից իրեն օգնության, անջատվեց Հա-
յոց երկրից ու իշխանությունից և պատերազմ մղեց Հայոց
թագավորի դեմ Պարսից թագավորության ուժերով. և պատե-
րազմն ու մարտը սաստկացավ։
Ապա Հայոց թագավորը նրա դեմ մեծ զորքով ուղարկեց իր
հավատարիմ ծառաներին՝ Կորդուքի Ջոն իշխանին, Մեծ Ծոփ-
քի Մար իշխանին, Տահեի Ծոփքի Ներսեհ իշխանին, Այունիք-
Վաղինակ իշխանին, Հաշտենքի Դատ իշխանին և Բասենի
Մանակ իշխանին։ Սրանք եկան հաղթեցին Պարսից զորքերին
և բոլորին առհասարակ սրի քաշեցին. սպանեցին նույնպես
բդեշխին իր եղբայրների ու որդիների հետ միասին»։
[«Զայնու ժամանակաւ ապստամբեաց յարքայէն Հայոց մի ի
ծառայից նորա մեծ իշխանն Աղձնեաց, որ անուանեալ կոչէր
բդեաշխն, որ էր մի ի չորից գահէրէց, բարձէրէց տաճարին

արքունի։ Եա ձեռս յարքայն Պարսից և մատնեաց զարքունի
տունն, որ յեց յինքն էր։ Եւ էած զօրս արքային Պարսից ի
թիկունս իւր, և հատաւ յերկրէն յիշխանութենէն Հայոց, և
տայր պատերազմ ընդ արքային Հայոց՝ ուժով Պարսից թա-
գաւորութեանն. և սաստկանայր մարտ պատերազմին։
Ապա առաքէր թագաւորն Հայոց զբարեկիր զծառայս իւր,
զիշխանն Կորդուաց զՋոնն, և զիշխանն Մեծի Ծոփաց զՄար, և
զիշխանն Ծոփաց Շահէի Ներսեհ, և զիշխանն Սիւնեաց զՎա-
զինակ, և զիշխանն Հաշտենից զԴատ, և զիշխանն Բասենոյ
զՄանակ, հանդերձ բազում զօրօք։ Ապա չոգան հաղթեցին
զօրացն Պարսից, և առ հասարակ ընդ սուր հանին զամենայն.
և սպանին զբդեաշխն եղբարբք և որդւովք իւրովք հանդերձ»։
Մարկվարտը Դատաբենի ու Բակուրի ապստամբությունների
ժամանակը ենթադրում է 335 թվին[1], սակայն հնարավոր է և մինչև
անգամ հավանական է, որ այդ անցքերը կարող էին տեղի ունե-
ցած լինել 336 կամ 337 թվերին։
Փավստոսի վկայությամբ՝ խոսրով Գ-ը, վախենալով որ նաև
մյուս մեծ նախարարությունները կարող են դավաճանություն գոր-
ծել կամ ապստամբել, հատուկ օրենք էր սահմանել, որ մեծամեծ
ավագանին, որոնց զինվորական ուժը 10.000-ի չափ էր կամ
1000-ից պակաս չէր, մնան ու շրջեն իր հետ և նրանցից ոչ ոք
չգնա արքունի զորքի հետ։
«Բայց դրանից հետո,—վկայում է Փավստոսը,—պարսիկնե-
րը չէին դադարում պատերազմ մղել Խոսրով թագավորի դեմ։
Նա օրենք սահմանեց, որ մեծամեծ ավագանին՝ աշխարհա-
կալ ու աշխարհատեր նախարարները, որոնք 10.000 կամ 1000
զինվորի տեր էին՝ մնան թագավորի մոտ և նրա հետ շրջեն, և
նրանցից ոչ մեկը չգնա արքունի զորքի հետ։ Որովհետև նա
երկյուղ էր կրում նրանց երկդիմությունից, միգուցե Դատա-
բենի նույն արարմունքը գործեն և իրենից ապստամբեն։ Բայց
նա վստահ էր ծերունի Վաչեի, Մեծ Հայքի բուն սպարապետի
ու զորավարի և քաջ Վահան Ամատունու վրա»։
[«Բայց յետ այսորիկ ոչ դադարէին Պարսք ի տալ պատե-
րազմ ընդ Խոսրովու արքային. և նա դնէր օրէնսն, զի մեծամեծ
աւագանին, նախարարքն աշխարհակալքն աշխարհատեարքն՝
որ էին բիւրաւորքն և հազարաւորքն, կայցեն առ արքային և
ընդ նմա շրջեսցին, և մի՛ ոք երթիցէ ի նոցանէ ընդ զօրս

[1] Տե՛ս Markwart. Die Entstehung der armenischen Bistümer, էջ 96։

արքունի։ Զի երկնչէր նա յերկմտութենէ նոցա, զի գուցէ գնոյն գործ Դատարենայն գործիցեն և ապստամբ լինիցին ի նմանէ։ Բայց վստահ լինէր ի ծերունին Վաչէ, ի քուն սպարապետն ի զօրավարն Հայոց Մեծաց և ի քաջ Վահան յԱմատունի»[1]։

Խոսրով Գ-ի այս կարգադրությունը, անշուշտ, մի ապացույց է նրա թագավորական իշխանության թուլության և նախարարու-թյունների կենտրոնախույս ու խռովարար տրամադրությունների։

338 թվի գարնանը, երբ Կոստանդիանոս Մեծի մահից հետո կայսրությունը դեռևս գտնվում էր տարտամ ու խառնակ դրության մեջ, Շապուհ Բ-ը պաշարել էր Մծբինը, բայց ապարդյուն։ Հավա-նորեն, նույն այս թվին պարսկական զորքերը նոր հարձակում էին գործել նաև Հայաստանի վրա, և այնտեղ տեղի էր ունեցել այն մեծ պատերազմը, որ հիշատակված է Փավստոսի մոտ։

«Այնուհետև,—պատմում է Փավստոսը,—նորից դաժան կերպով պատերազմ սկսվեց միմյանց դեմ պարսիկների ու հայերի միջև, որովհետև պարսիկները հավաքվեցին ու մեծ բազմությամբ եկան, որ գրավեն Հայաստան աշխարհի երկրե-ները։ Այստ Մեծ Հայքի սպարապետ և զորավար Վաչեն ժո-ղովեց նախարարական զորքերի ազատներից կազմված բա-նակը և եկավ պատերազմ տալու Պարսից զորքերին։ Երկու կողմից էլ սոսկալի կոտորած եղավ և մեծամեծ ավագանի-ներից շատերը կոտորվեցին ու ոչնչացան։ Այս պատերազմում սպանվեց նաև Վաչեն, Հայոց մեծ սպարապետը, և ամբողջ երկիրն անասելի սգի մեջ ընկավ, որովհետև նրա ձեռքով էր շատ անգամ աստված փրկել հայերին»։

[«Եւ յետ այսորիկ յաւել ևս լինել մարտ խստութեամբ պա-տերազմի ի մէջ Պարսից և Հայոց ընդ միմեանս. զի ժողովե-ցան հասին կուտեցան առնուլ զաշխարհն Հայաստան երկրին։ Ապա ժողովէր սպարապետն զօրավարն Հայոց Մեծաց Վաչէ զաղատախումբ բանակ նախարարակոյտ զօրացն։ Եւ եկանէր տայր ընդ զօրսն Պարսից պատերազմ, և լինէր անհնարին կոտորուած յերկոցունց կողմանցն, և բազում ծախ մեծամեծ աւագանւոյն կոտորելոցն։ Անկանէր ի պատերազմին յայնմիկ մեծ սպարապետն Հայոց Վաչէ. և լինէր ամենայն աշխարհին սուգ անհնարին, զի բազում անգամ էր տեառն փրկութիւն տուեալ Հայոց ի ձեռն նորա»][2]։

[1] Փավստոս, III, գլ. Ը, էջ 20 (Վենետիկ, 1889)։

[2] Նույնը, գլ. ԺԱ, էջ 26։

Այս պատերազմից հետո, հավանորեն, նույնպես 338 թվին[1], վախճանվել էր նաև Խոսրով Գ-ը, որին թաղել էին իր նախնիք-ների մոտ՝ Դարանաղի գավառի Անի ամրոցում։

338 թվին, ինչպես դժվար չէ եզրակացնել Փավստոսի վկայու-թյունից, հայերը ո՛չ միայն մեծ կորուստներ էին ունեցել, այլ պարզապես մատնվել էին ծանր պարտության։ Հայերի այս պար-տության դաժան հետևանքները, որ Փավստոսի աղբյուրը, վիպա-կան հայկական ավանդությունը, լռությամբ է տվել՝ մեզ հայտնի են ժամանակակից աղբյուրից. Կոստանդիանոս Մեծի եղբորորդու Հուլիանոսի, ճառից, որ նա արտասանել էր Կոստանդիոսի առջև։

Այդ ճառից մենք գիտենք, որ 338 թվի հայերի պարտությունից հետո Հայաստանում իշխանության գլուխ էր անցել պարսկական կուսակցությունը, իսկ Խոսրով Գ-ի որդի Տիրանը և հռոմեական կուսակցությունը ստիպված են եղել փախչել Հայաստանից և ապաստան էին գտել հռոմեական սահմաններում։

338 թվի աշնանը Կոստանդիոսը վերադարձել էր Պաննոնիայից Արևելք, և հենց նրա միջամտությամբ է, որ Հայաստանը վերստին խաղաղեցվել էր, և Տիրանը, հաջորդելով իր հորը, կարգվել էր Հայաստանի թագավոր (339—շուրջ 350 թ.)։

Հուլիանոսի կարևոր վկայությունը մեջ եմ բերում ներքև բա-ռացի թարգմանությամբ։

«Կոստանդիանոսի վախճանվելուց հետո,—ասում է Հուլիա-նոսը,—բյուրավոր այլևայլ անտեղիություններ ու դժբախտու-թյուններ, որ ամեն կողմից վրա հասան, պատերազմի վրա դրված հույսերը դժվարագույն էին դարձնում։ Ապստամբել էին հայերը, մեր վաղեմի դաշնակիցները, և բավական ստվար ամբողջ նրանց հարել էին պարսիկներին ու ավազակաբար աս-պատակում էին իրենց սահմանների մոտ գտնվող արվարձան-ները»։... [Սակայն Կոստանդիոսի Պաննոնիայից վերադառ-նալուց հետո] «հայերից նրանք, որոնք հարել էին պարսիկ-ներին, իսկույն ետ կեցան. իսկ դու դրանց, որ այն երկրի իշխանավորի փախուստի պատճառն էին, մեզ մոտ բերիր, և նրանց, որոնք փախել էին, հնարավորություն տվիր անվախ կերպով վերադառնալ իրենց սեփական երկիրը։ Եվ այսպիսով դու մարդասիրաբար վարվեցիր նրանց հետ, որոնք մի փոքր առաջ եկել էին մեզ մոտ, և հեզաբար վերաբերվեցիր նաև

[1] Տե՛ս Markwart, Die Entstehung der armenischen Bistümer, էջ 96։

նրանց, որոնք իշխանավորի հետ միասին փախուստի տեղերից վերադարձել էին:

Ոմանք նրանցից խիստ զղջացել էին, որ առաջ ապստամբել էին, ոմանք էլ այժմյան դրությունը նախամեծար էին համարում առաջվա իշխանությունից: Իսկ նրանք, որ առաջ փախել էին, ասում էին, որ իրենք գործնականապես սովորեցին զգաստ լինել, իսկ ուրիշներն էլ ասում էին, որ իրենք ապստամբության մասնակցելու համար արժանի վարձ էին ստացել:

Վերադարձողներին դու այնքան շատ նվերներ ու պատիվներ տվիր, որ նրանք չեն չարանենգում ու նախանձում նույնիսկ իրենց ամենամեծ թշնամիներին, որոնք բարեբախտ են ու արժանապես մեծարված են: Այս բոլորը կարգավորվեց կարճ ժամանակում»...[2]:

Տիրան թագավորի մասին թե Փավստոսի և թե Մովսես Խորենացու վկայությունները, մեծ մասամբ, վիպական-առեղծական պատմվածքներ են և չեն կարող հավաստի ու պատմական համարվել:

Պատմագիտական երկերում, հիմնվելով հենց այս պատմագիրների վկայությունների վրա՝ սովորաբար մատնանշում են, որ Տիրան թագավորը, փոխելով իր հոր ու պապի քաղաքականությունը, բարեկամություն էր հաստատել Շապուհ Բ-ի հետ[3]: Բայց այս կարծիքը, ակներևաբար, թյուրիմացության արդյունք է:

Ինչպես այժմ անժխտելի կերպով պարզված է, Փավստոսի Պատմության երրորդ դպրության վերջին երկու գլուխներում (Ի և ԻԱ) նկարագրված արտաքին քաղաքական անցքերը՝ Տիրանի բարեկամությունը Պարսից թագավորի հետ, նրա գերեվարությունն ու կուրացումը, հռոմայեցիների ու պարսիկների միջև պատերազմը և Պարսից Ներսեհ թագավորի աղետալի պարտությունը՝ մասամբ վիպական-առեղծական պատմվածքներ են, մասամբ էլ հիշողություններ են պատմական իրադարձությունների, որ տեղի էին ունեցել Մեծն Տրդատի գահակալության ժամանակ 297—298 թվերին[4]:

---

1 Ուշագրավ է, որ Հուլիանոսի ճառի մեջ Հայոց թագավորն անվանված է [illegible]՝ «իշխանավոր»:

2 Տե՛ս Julianus, Oratio I.

3 Տե՛ս Հ. Աստուրյան, Քաղաքական հարաբերությունները, էջ 276. Գարագաշյան, Քննական պատմություն, Գ, էջ 37. Լեո, Հայոց պատմություն, Ա, էջ 590. K. Aslan, Études historiques, էջ 189 և ուրիշները:

4 Տե՛ս Н. Адонц. Фауст Византийский как историк, „Христианский Восток", 1917—1920, т. VI, вып. III, Петроград, 1922, էջ 235—272:

Որ պատմագետների վերոհիշյալ ենթադրությունը ճիշտ չէ՝ այդ երևում է նաև Հուլիանոսի առաջին ճառի վերև բերված վկայությունից: Մենք վերև տեսանք, որ Հուլիանոսն իր այդ ճառի մեջ, որ գրված էր հավանորեն Տիրան թագավորի (339—շուրջ 350 թ.) մահից հետո, մատնանշում է հայերի և հռոմայեցիների բարեկամությունը 339 թվից հետո: Ավելի քան հավանական է, ուրեմն, որ Տիրանը ևս, ինչպես և նրա հայր Խոսրով Գ-ը, մինչև իր կյանքի վերջը հավատարիմ էր մնացել Հռոմեական կայսրությանը:

Հենց Տիրանի թագավորության ժամանակ Կոստանդիոս կայսերը կազմակերպել էր, ըստ երևույթին, դաշնակից հայերի օժանդակությամբ, ծանր զրահավոր հեծելազոր, որն ուժեղագույն մարտիկ զորամասն էր հռոմեական արևելյան բանակի: Հայտնի է նույնպես, որ 351 թվին, Մագնենտիոսի ապստամբությունը ճնշելիս, Կոստանդիոսը մեծ հաղթություն էր տարել Պաննոնիայում Մուրսայի մոտ, գլխավորապես, շնորհիվ հայկական հեծելազորի, որն այս ճակատամարտում գրեթե վճռական դեր էր կատարել[1]: Նույն այս հեծելազորը, ինչպես վկայում է Ամմիանոսը, անչափ մեծ տպավորություն էր թողել ժողովրդի վրա Հռոմում 357 թվին[2]:

Տիրանի հռոմեական կողմնորոշման անուղղակի մի ապացույց կարելի է համարել նաև այն, որ նրա հրամանով Վրթանեսի որդին՝ Հուսիկը, և ապա Փառեն Աշտիշատեցին ուղարկվել էին հայ նախարարների ուղեկցությամբ Կեսարիա և հանդիսավոր կերպով ձեռնադրվել էին այնտեղ կաթողիկոս: Հուսիկը, ինչպես վկայում է Փավստոսը, բրածեծ էր արվել և սպանվել Մեծ Ծոփք գավառի Բնաբեղ բերդում՝ թագավորին հանդիմանելու պատճառով[3]:

Տիրանի թագավորության առաջին իսկ տարիներում թե պարսկական և թե հռոմեական առանձին զորամասեր ժամանակ առ ժամանակ ավազակաբար ասպատակում էին սահմանամերձ շրջանները, սակայն Կոստանդիոսը խուսափում էր վճռական ընդհարումից: Բայց շուտով Շապուհ Բ-ը պատրաստվեց նորից պատերազմի և 345 թվին[4], անցնելով Տիգրիս գետը, բանակ դրեց Հիլեյայում

---

1 Տե՛ս Zosimos, II, 51, 4, 52, 1—2. Համեմատե՛ նաև Հուլիանոս, ճառ Ա և Բ:

2 Տե՛ս V. Chapot, La frontière de l'Euphrate de Pompée à la conquête arabe, Paris, 1907, էջ 139, ծան. 2: Համեմատե՛ Amm. Marc., XVI, 12, 22.

3 Փավստոս, III, գլ. ԺԲ, էջ 32 (Վենետիկ, 1889):

4 Ինչպես ցույց են տվել Բյուրին և Ադոնցը, Սինգարայի ճակատամարտը տեղի էր ունեցել ո՛չ թե 348 թվին, ինչպես առաջ ենթադրում էին, այլ 345 թվին. տե՛ս J. B. Bury, The date of the Battle of Singara, Byzantinische

Սինգարայի մոտ: Հենց այստեղ տեղի ունեցավ մեծ ճակատամարտ: Հռոմեական զորքը, որ սկզբում հաղթող էր հանդիսանում, ճակատամարտի վերջում, պարսիկների գիշերային կատաղի հարձակման ժամանակ, չարաչար պարտվեց:

Սինգարայի կռվին, հավանորեն, մասնակցել էր նաև Հռոմի դաշնակից Հայաստանը: Սակայն այդ մասին հաստատուն տեղեկություններ չկան:

Ադոնցը կարծում է, որ Տիրան թագավորը գերի էր ընկել պարսիկների ձեռքը նախքան այդ ճակատամարտը և իբր թե խաղաղություն կնքելուց հետո, 345 թվին, հաջորդել էր Տիրանին նրա որդին՝ Արշակը[1]: Ադոնցի այս կռահումը, որ բավարար կերպով փաստարկված ու հիմնավորված չէ, ըստ իս անհավանական է և անընդունելի:

Հայ Արշակունիների պայքարը կենտրոնախույս նախարարությունների դեմ շարունակվել էր նաև Տիրանի ժամանակ:

Տիրանի թագավորության շրջանում (339—շուրջ 350 թ.), որը եկեղեցու ու Մամիկոնյանների հանդեպ բռնել էր անկախ դիրք և աշխատում էր պահպանել թագավորական իշխանության հեղինակությունը, ներքին խռովություններն այնքան սաստկացել էին, որ երկիրը հետզհետե մատնվել էր ծանր դրության:

Փավստոսի մոտ, որ կուսակցական պատմիչն է Գրիգոր Լուսավորչի տոհմի և Մամիկոնյանների, պատմական այս շրջանի անցքերը ներկայացված են այլայլված ձևով, իսկ պատմական խոշոր դեմքերը, որ հակառակորդ էին այդ տոհմերի, նկարագրված են ամենամռայլ ու քստմնելի գույներով:

Տիրանի ժամանակ քաղաքական խոշոր դեր է կատարել, ինչպես երևում է Փավստոսի վկայություններից, «մարդպետության» մեծ իշխանը, որը վերակացու էր արքունիքի ու թագավորի կանանոցի և վերահսկող էր թագավորական ամրությունների ու բերդերի, նաև արքունի գանձերի ու կալվածքների: Փավստոսը շանթ ու թույն է թափում այս իշխանի վրա և, գլխավորապես, նրան է վերագրում թագավորության խանգարումը Տիրանի ժամանակ:

«Բայց այն անմիտ թագավորության ժամանակ,—պատմում է Փավստոսը,—սկսվել էին դավաճանություններ ու մատնություններ անել Հայոց երկրում ոչ միայն թշնամիները թշնամիների դեմ, այլ նաև բարեկամները բարեկամների և ընկերները ընկերների դեմ և անում էին անհաշիվ ու ամեն տեսակ թշնամություններ: Որովհետև տերը նրանց մեջ առաջացրեց խռովություն և հրահրեց դիվային պղծություն և ոգի մոլորություն, այդ պատճառով էլ նրանք, մեկը մյուսին խորտակելով, կործանվեցին իրենց անօրենության պատճառով:

Բայց գերազանցում էր մյուս բոլորին մի անօրեն ու դիվային մարդ, որը Տիրան թագավորին գրգռում էր, գլխավորապես. նախարարական տոհմերի դեմ: Սա այն մարդն էր, որն ուներ մեծ մարդպետության պատիվը. սա ներքինի էր՝ չարասիրտ, չարամիտ ու չարագործ մի մարդ էր, որին Հայր էին անվանում: Սա քսությամբ կոտորել տվեց շատ նախարարներ, որոնք վնաս չէին տվել, և խանգարեց այսպիսով մեծ թագավորության իշխանությունը:

Առավելապես նա իր չարախոսությամբ սրի անցկացնել տվեց ու բոլորովին անզավակ դարձրեց երկու ավագ տոհմեր՝ Ռշտունիների տոհմը և Արծրունիների տոհմը. սրանց բնաջինջ արին առանց որևէ մեղքի ու հանցանքի, կոտորեցին նույնիսկ էգերին»:

[«Բայց յայնմ յանմիտ թագաւորութեանն ժամանակի ոչ միայն թշնամիք թշնամեաց և բարեկամք բարեկամաց և ընկերք ընկերաց դաւաճանութիւնս մատնութիւնս սկսան յարուցանել ի մէջ Հայաստան երկրին, և բեւր ազգի թշնամութիւնս գործէին: Վասն զի անկաւ ի նոսա խռովութիւն ի տեառնէ, այս պղծութեան և ոգի մոլորութեան. զի նախ միմեամբք քանդեալք աւերեցան վասն անօրէնութեան իւրեանց:

Բայց քան զամենեսին աւելի այր մի անօրէն և այսամուտ, որ աւելի ընդ ազգս նախարարացն գրգռէր զթագաւորն Տիրան: Այս ինքն որ ունէր զպատիւն մեծի մարդպետութեանն, այր ներքինի՝ չարասիրտ, չարախորհուրդ, չարագործ, որում Հայր կոչէին: Զբազումս ի նախարարացն եա քսութեամբ առանց վնասու կոտորել, և խանգարեաց զմեծ տէրութիւն թագաւորութեանն:

Մանաւանդ աւելի զերկու տոհմսն զաւագս տայր իւրով չարախօսութեամբն հանել ընդ սուր, և անուանդ առնել միահաղոյն զտոհմսն Ռշտունեաց և զտոհմն Արծրունեաց. բառնային ի միջոյ առանց ամենայն վնասու և յանցման, մինչ անգամ և զէգսն կոտորեցին ազգացն»][1]:

Zeitschrift, V, 1896, էջ 302—305. *Адонц*, Фауст Византийский, „Христианский Восток", 1917—1920, VI, 3, էջ 254—255:

[1] *Адонц*, Фауст Византийский, էջ 255:

[1] Փավստոս, *III*, գլ. ԺԳ, էջ 46—47 (Վենետիկ, 1889):

Քննության առնելով «մարդպետության» մասին Փավստոսի թե այս և թե մյուս վկայությունները, Մարկվարտը միանգամայն ճիշտ ենթադրում է[1], *որ մարդպետները պետական նշանավոր անձնավորություններ էին, որոնք նպատակ էին դրել իրենց վերականգնել Արշակունիների թագավորության հին փայլը և թուլացնել բարձր ազնվականության ու եկեղեցու ուժը։ Իրենց այդ նպատակին հասնելու համար նրանք արքունիք էին գրավում նախարարական խոշոր կալվածքները և իրագործում այդ ամենադաժան վճռականությամբ։*

Արծրունիների ու Ռշտունիների տոհմերի բնաջնջումը, որ նկարագրված է Փավստոսի վկայության մեջ, Մարկվարտը բացատրում է նրանով, որ նախարարական այդ տոհմերի երկրները, գտնվելով Ատրպատականի, Աղիաբենի և Մոկքի սահմանների մոտ, ունեին ռազմական մեծ կարևորություն, ուստի և այդ շրջանները անհրաժեշտ է համարվել ենթարկել Արշակունիների անմիջական իշխանության[2]*։*

345 թվի Սինգարայի ճակատամարտից հետո մեծ կռիվներ Մերձավոր Արևելքում չեն հիշատակված մինչև 350 թիվը։ Հավանորեն, Հայաստանը ևս այդ ժամանակաշրջանում համեմատաբար խաղաղ վիճակի մեջ էր։

Տիրանը թագավոր էր Հայաստանում, ինչպես ենթադրվում է, մոտավորապես մինչև 350 թիվը[3]*։ Նրա գերեվարության ու կուրացման մասին հայկական ավանդությունը, ինչպես վերև ասացինք, վիպական-ստեղծական պատմվածք է, և մենք նրա մահվան մասին ևս չունենք ոչ մի տեղեկություն։*

---

[1] *Markwart,* Südarmenien und die Tigrisquellen, էջ 155—156 և 61*—62*։

[2] *Նույնը, 59*—60*։*

[3] *Տե՛ս* Լեո, *Հայոց պատմություն, Ա, էջ 588.* Ասդուրյան, *Քաղաքական վերաբերութիւններ, էջ 276. Morgan,* Histoire du peuple arménien, *էջ 110. K. Aslan,* Études, *էջ 189, 203 և ուրիշները։ Հայ Արշակունիների ժամանակագրության մասին ուշագրավ է և արժեքավոր Մ. Օրմանյանի կարևոր հոդվածը՝ «Տրդատէ Արտաշէս ժամանակագրական դիտողութիւններ», «Հանդէս Ամսօրեայ», 1909, № 7 և 8, էջ 197—201 և 241—246։*

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐՈՐԴ

ՊԱՐՍԿԱ-ՀՌՈՄԵԱԿԱՆ ԿՌԻՎՆԵՐՆ ԱՐՇԱԿ Բ-Ի ԺԱՄԱՆԱԿ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԾԱՆՐ ՊԱՐՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՎԵՐՈՒՄԸ

1. Պարսկա-հռոմեական կռիվները 350 թվին։ —2. Արշակ Բ.—Նրա գլխավոր գործակիցները՝ Ներսես կաթողիկոսը և Մամիկոնյան Վասակ սպարապետը։— 3. Հատուկ պատգամավորության ուղարկումը Կոստանդիոսի մոտ.— Օլիմպիայի առաքումը Հայաստան և Արշակի ամուսնությունը նրա հետ։— 4. Աշտիշատի ժողովը և բարեգործական հիմնարկների հաստատումը Հայաստանում։— 5. Արշակավան քաղաքի հիմնումը.— հայկական աղբյուրների վկայությունները Արշակավանի կործանման մասին.— Մարկվարտի ենթադրությունը։— 6. Գնելի սպանությունը և Արշակ Բ-ի ամուսնությունը Փառանձեմի հետ։—7. Կամսարականների տոհմի կոտորածը.— Մարդպետների պայքարը եկեղեցական կալվածատիրության դեմ։— 8. Պարսկա-հռոմեական պատերազմի վերսկսումը.— Հայաստանի կողմնորոշման մեծ նշանակությունը կռվող կողմերի համար.— Պարսկաստանի անհաջող ջանքերը Հայաստանը գրավելու իր կողմը։— 9. Շապուհ Բ-ի արշավանքը Միջագետք և Ամիդ քաղաքի գրավումն ու ավերումը։—10. Պարսկական զորքերի ավերածությունները Ծոփքում և Արևմտյան Հայաստանում.— Անգեղ բերդի պաշարումը.— Անի բերդի առումը Դարանաղի գավառում.— գերի վերցված և ազատված Արշակունի թագավորների ոսկորների թաղումը Աղձք գյուղում։— 11. Շապուհ Բ-ի 360 թվի արշավանքը և Սինգարա ու Բեզաբդե բերդերի գրավումը.— Արշակ Բ-ի և Կոստանդիոս կայսեր տեսակցությունը Կեսարիայում և նրանց դաշնակցության ամրապնդումը.— պատերազմի նախապատրաստությունները և Կոստանդիոսի մահը։— 12. Հուլիանոսը միահեծան տեր Հռոմեական կայսրության.— Օլիմպիայի սպանությունը.— Հուլիանոսի արշավանքը Պարսկաստան.— նրա նամակը Արշակ Բ-ին, որ կեղծ է։ —13. Հռոմեական ու դաշնակից զորքերի ներխուժումը Պարսկաստան երկու ուղղությամբ։— 14. Հուլիանոսի մահը և Հովիանոս նոր կայսեր Շապուհ Բ-ի հետ կնքած ամոթալի դաշինքը.— Անդրտիգրիսյան երկրների միացումը Պարսկաստանին.— դաշնադրության անազնիվ ու կործանարար կետը Հայաստանի նկատմամբ.— Խիլիոկոմի ավերումը։— 15. Արշակ Բ-ի չորս տարվա համառ դիմադրությունը Պարսկաստանին։— 16. Պարսկական կուսակցության զորեղացումը Հայաստանում.— Արշակ թագավորի և Վասակ սպարապետի անձնատուր լինելը պարսիկներին.— Արշակ Բ-ի բանտարկումը և ենթարկումը մահապատժի.— Վասակ սպարապետի տանջալից սպանությունը.— Արշակ թագավորի սպանության մասին հայկական ավանդության վիպական-ստեղծական մանրամասնությունները։— 17. Հայաստանի հարավային, արևելյան և հյուսիսային սահմանների անջատումը Արշակունյաց թագավորությունից։

350 թվին Շապուհ Բ-ը նորից մեծ զորքով արշավեց Միջագետք, ավերածության մատնեց այնտեղ մի շարք տեղեր և, առաջ շարժվելով, երրորդ անգամ պաշարեց Մծբին քաղաքը: Բայց Պարսից զորքերը, շնորհիվ կայազորի ու պաշարված բնակիչների համառ դիմադրության, այս անգամ ևս ստիպված եղան, մեծ կորուստներ կրելուց հետո, վերադառնալ Պարսկաստան:

Պետք է ասել, որ Կոստանդիոս կայսրը, որ թույլ էր ու անվճռական արտաքին թշնամու հանդեպ, ինքը ոչ մի հաջողություն չունեցավ նաև այս կռվի ընթացքում: Շապուհ Բ-ի առաջխաղացման ու վճռական հաջողության գլխավոր արգելակիչը սահմանային այն անառիկ բերդերն էին, որ պատշաճ կերպով ամրացրել էին Դիոկղետիանոսը և Կոստանդիանոս Մեծը:

Նույն այս 350 թվին վերսկսվել էին խլրտումները նաև Հռոմեական կայսրության մեջ: Դեռևս 340 թվին Կոստանդիանոս Մեծի կրտսեր որդին, Կոստասը, պարտության մատնելով իր մեծ եղբայր Կոստանդիանոս Բ-ին (+340), տեր էր դարձել Հռոմեական կայսրության արևմտյան բոլոր շրջաններին, սակայն 350 թվին նրան սպանել էր և Արևմուտքի կայսր էր իրեն հայտարարել նրա անձնապահանորդ զորքի առաջնորդ Մագնենտիոսը:

Կոստանդիոսը շտապ կերպով վրա խաղաց վտանգավոր այս ախոյանի դեմ, հաղթեց նրան Պաննոնիայում (351 թ.) և, Մագնենտիոսի ինքնասպանությունից հետո (353 թ.), դարձավ միահեծան ինքնակալ և տնօրեն ամբողջ Հռոմեական կայսրության:

Տիրանի որդի Արշակ Բ-ի գահակալության ժամանակը պատմագետների մեծագույն մասը ենթադրում է նույն այս ժամանակաշրջանում՝ մոտավորապես 350 թվին[1]: Սակայն այս թվականը, որ հավանական է համարվում, հաստատուն ու վերջնական չէ:

Արշակ Բ-ի թագավորության առաջին շրջանում, սկսած 351 թվից մինչև 359 թիվը, պատերազմական մեծ գործողությունները Հռոմի ու Պարսկաստանի միջև դադարել էին: Շապուհ Բ-ը

---

¹ Տե՛ս Լեո, Հայոց պատմություն, Ա., էջ 599. *Markwart*, Untersuchungen zur Geschichte von Eran, I, էջ 53. *Morgan*, Histoire du peuple arménien, էջ 110. Աստուրյան, Քաղաքական վերաբերություններ, էջ 282. *Aslan*, Études histoiques, 1928, էջ 203 և ուրիշները: Ադոնցն Արշակ Բ-ի թագավորության սկիզբը դնում է 345 թվին, իսկ Մարկվարտն իր նորագույն աշխատություններից մեկում՝ 356 թվին. տե՛ս „Христианский Восток", 1917—1920, էջ 255 և Entstehung der armenischen Bistümer, էջ 96:

այդ ժամանակ պատերազմ էր վարում Պարսկաստանի հյուսիսարևելյան կողմերում ընդդեմ խիոնիտների, քուշանների և այլ ցեղերի: Սակայն նույն այս ժամանակ պարսիկ զորավարները, որ գտնվում էին արևմուտքում, մերթ ընդ մերթ ասպատակում էին Միջագետքը, երբեմն նաև Հայաստանը, ավարակային թալանի ու կողոպուտի նպատակով[1]:

Հավանորեն, մեծ կռիվների ընդհատման այս ժամանակաշրջանին է վերաբերում Փավստոսի վկայությունը, որ Արշակ Բ-ի թագավորության սկզբներում Հայոց աշխարհը

«բարեկարգվեց, կազմակերպվեց, վերականգնվեց ու խաղաղացավ երկու թագավորների միջև, և այնուհետև բոլորը խաղաղ ապրում ու վայելում էին՝ յուրաքանչյուրն իր ունեցվածքը»:

[«Ապա կարգեցան կազմեցան յօրինեցան խաղաղացան աշխարհն Հայոց ի մէջ երկուց թագաւորացն. և յայնմ հետէ բնակեալք խաղաղութեամբ վայելեալք յիւրաքանչիւր յարարս իւրեանց»][2]:

Արշակ Բ-ի գլխավոր գործակիցներն են եղել նրա թագավորության ժամանակ Հուսիկ կաթողիկոսի թոռ Ներսես կաթողիկոսը և արքունի ու նախարարական զորքերի վերին հրամանատար Մամիկոնյան Վասակ սպարապետը: Երիտասարդ Ներսեսը, որը զինվորական էր ու Արշակ թագավորի սենեկապետն էր՝ մեծամեծ իշխանների ուղեկցությամբ ուղարկվեց Կեսարիա և ձեռնադրվեց այնտեղ Հայաստանի կաթողիկոս, հավանորեն, 353 թվին:

Նույն այս 353 թվին, ինչպես վերև տեսանք, Կոստանդիոսը, հաղթելով Մագնենտիոսին, միացրել էր իր իշխանության տակ ամբողջ Հռոմեական կայսրությունը: Եվ շատ պարզ է, որ Կոստանդիոսի փառքը և հեղինակությունն առանձնապես մեծ էին լինելու նրա այս հաղթանակից հետո: Ուստի և հավանական է, որ հենց այս ժամանակներում պետք է ենթադրել Ներսես կաթողիկոսի առաջնորդությամբ հատուկ պատգամավորության ուղարկումը Կոստանդիոսի մոտ, որի նպատակն էր, ինչպես վկայում է Փավստոսը[3], միաբանության դաշինքի ամրապնդումը Հայաստանի ու կայսրության մեջ:

Այս պատգամավորությունը, ինչպես ցույց է տալիս Փավստոսի վկայությունների ուշադիր քննությունը, կայսերական պալա-

---

¹ Տե՛ս *Ammianus Marcellinus*, XIV, 3. XV, 13 և XVI, 9.

² Փավստոս, IV, գլ. Ա, էջ 67 (Վենետիկ, 1889):

³ Նույնը, IV, գլ. Ե, էջ 81:

տում շատ լավ էին ընդունել։ Կոստանդիոս կայսրը թանկագին նվերներ էր ուղարկել Արշակ Բ-ին և ազատ էր արձակել Արշակունի պատանդներին, Տիրիթին ու Գնելին, որ Արշակ Բ-ի եղբորորդիներն էին[1]։ Մարկվարտը հավանական է համարում, որ հենց այս պատգամավորության խնդիրքով Կոստանդիոսը Հայաստան էր ուղարկել և տվել էր Արշակ Բ-ին իրեն ամուսին իր մեռած եղբոր՝ Կոստասի (337—350) նշանած Ոլիմպիային, որը պրետորյանների պրեֆեկտ Աբլաբիոսի դուստրն էր[2]։ Պատգամավորության առաքումը և վերադարձը Հայաստան, որ Մարկվարտը դնում է 357 թվին[3], ավելի ճիշտ կլինի ենթադրել 353 և 357 թվերի միջև։

Ներսես կաթողիկոսի ժամանակ սկսել էր մեծ չափով աճել քրիստոնեական եկեղեցու կուլտուրական ու քաղաքական հեղինակությունը։ Նրա նախագահությամբ տեղի ունեցավ Աշտիշատում առաջին եկեղեցական օրենսդիր ժողովը, որի կանոնական որոշումները վերաբերում էին ո՛չ միայն կրոնական-եկեղեցական խնդիրներին, այլև աշխարհական կյանքին ու հասարակական-ընտանեկան հարաբերություններին։

Համաձայն այս ժողովի որոշումներին, Հայաստանում բացվեցին ամենուրեք բարեգործական հիմնարկներ։ Բորոտների, ընկավորների ու ախտավորների համար կառուցվեցին հիվանդանոցներ և անկելանոցներ, հաշմանդամների, անաշխատունակների և աղքատների համար՝ աղքատանոցներ ու օտարանոցներ, Այս հաստատություններին կից հիմնվեցին նաև վանքեր, դպրոցներ ու իջևաններ։ Այս հաստատությունները պահվում էին եկեղեցական կալվածքների եկամուտներով ու նաև ժողովրդից գանձվող առանձին տուրքերով։

Սոզոմենոսի ուշագրավ մի վկայությունից հայտնի է[4], որ նույն այս ժամանակներում (մոտավորապես 356 թվին և 376 թվից հետո) վանքերի ու կուսակրոնության հիմնադիրն էր Փոքր Հայքում, Պոնտոսում և Պափլագոնիայում Սեբաստիայի Եվստա-

[1] Սուտ է և պատմական չէ Փավստոսի երկար ու ձիգ պատմությունը, որ իբր թե արիոսական աղանդին հետևող կայսրը հալածել էր Ներսեսին, աքսորել էր նրան մի անմարդաբնակ կղզի, և Արշակ թագավորը, կայսեր վրա զայրացած, վեց տարի շարունակ ավերել էր տվել Հռոմեական երկիրը։ Մարկվարտը համոզիչ կերպով ցույց է տվել, որ Փավստոսի մոտ Բարսեղ Կեսարացուն վերաբերող ավանդությունը վերագրվել է Ներսես Մեծին. տե՛ս Untersuchungen zur Geschichte von Eran, I, էջ 53—54 (221—222)։

[2] Տե՛ս Markwart, Die Entstehung der armenischen Bistümer, էջ 88 (224)։

[3] Նույնը, էջ 96—97 (232—233)։

[4] Sozom. Hist. Eccl., III, 14, 31.

թիոս եպիսկոպոսը, որը համարվում է նաև առաջին հիմնադիրներից մեկը բարեգործական հիվանդանոցների։ Մարկվարտը ենթադրում է, որ Ներսես կաթողիկոսը, որն իր կրթությունը ստացել էր Կապադովկիայի Կեսարիա քաղաքում[1], Հայաստանում վանքեր ու բարեգործական հիմնարկներ էր հաստատել, հետևելով Եվստաթիոս եպիսկոպոսի օրինակին[2]։

Արշակ Բ-ի թագավորության սկզբնական խաղաղ շրջանում, ինչպես վկայում են Փավստոսը (IV, գլ. ԺԲ) և Խորենացին (III, գլ. ԻԷ), թագավորի հրամանով հիմնվել էր Մասիսի հարավային ստորոտների կողմերում, Կոգովիտ գավառում, ըստ երևույթին, Արտաշատից Պարսկաստան գնացող առևտրական մեծ ճանապարհի մոտ, Արշակավան քաղաքը։

«Այդ ժամանակ [Ներսես կաթողիկոսի հռոմեական կայսեր մոտ գնալուց հետո],—պատմում է Փավստոսը,—թագավորն իր համար մի դաստակերտ շինեց հովիտ կոչվող տեղում Կոգ գավառի մեջ։ ...Իսկ այդ տեղը ավան դարձավ և այդ քաղաքը՝ մեծացավ, բազմամարդացավ ու ամբողջ հովիտը բռնեց։ Արշակ թագավորը այնուհետև հրաման տվեց այդ դաստակերտը կոչել իր անունով Արշակավան, և այնտեղ շինեցին նաև թագավորական պալատ»։

[«Զայնու ժամանակաւ շինեաց իւր արքայն դաստակերտ մի ի հովիտն անուանեալ ի Կոգ գաւառի։ ...Իսկ տեղին աւանաւոր, բազմամարդ. մեծացաւ բազմացաւ և ելից զհովիտն ամենայն։ Ապա տայր հրաման արքայն Արշակ դնել անուն դաստակերտին յիւրակից անունն Արշակաւան. և շինեցին և անդ ապարանս արքունի»][3]։

Փավստոսի և Խորենացու ասելով, որպեսզի քաղաքը բազմամարդ բնակչություն ունենա, Արշակ թագավորը հրաման էր տվել իր երկրի բոլոր տեղերում, որ գան այնտեղ ամեն տեսակ ոճրագործներ և հանցավորներ, որոնք ազատ կմնան դատից ու պատասխանատվությունից։

Գարագաշյանի և Սամվելյանի կարծիքով՝ այս օտարոտի ու անհասկանալի հրամանը մի ակնարկ է, որ հին Հայաստանում ևս

[1] Տե՛ս Փավստոս, IV, գլ. Գ, էջ 69։

[2] Տե՛ս Markwart, Südarmenien und die Tigrisquellen, էջ 130, ծան. 2 և էջ 149, ծան. 1 նաև Die Entstehung der armenischen Bistümer, էջ 93 և 96—97։

[3] Փավստոս, IV, գլ. ԺԲ, էջ 109—110։

գոյություն է ունեցել ապստամբի իրավունքը[1]: Ավելի հավանական
է սակայն, որ Փավստոսի և Խորենացու վկայությունները Արշակ
թագավորի հրամանի մասին խիստ ընդհանրացված են ու չափա-
զանցված: Լեոն և Մարկվարտը ենթադրում են, որ Արշակավան
էին փախել, հավանորեն ո՛չ միայն հանցագործները, այլև, գըլ-
խավորապես, ճորտ գյուղացիները, «շինական»-ները, որոնց այն-
տեղ տրվել էին որոշ արտոնություններ[2]: Ուշագրավ է այս տեսա-
կետից Խորենացու հետևյալ վկայությունը:
«Եվ Հայոց նախարարները,—ասում է Խորենացին,—ժողով-
վելով դիմեցին արքունական դաստակերտ Արշակավանի վրա
և սրի անցկացրին ադամարդկանց ու մինչև իսկ կանանց,
բացի ծծկեր երեխաներից. որովհետև նրանք բոլորը կախ-
ված էին իրենց ծառերի ու հանգավորների վրա»:
[«Եւ նախարարացն Հայոց ժողովեալ դիմեցին ի վերայ
արքունական ձեռակերտին Արշակաւանի, և հարին զնա սրով
սուսերի յառնէ մինչև ցկին, բաց ի աղայոց ստնդիացաց.
քանզի զամենեսեան էին խրաքանչիւր ի վերայ ծառայից
իւրեանց և յանցաւորաց»][3]:
Ուշագրավ է սակայն, որ բոլորովին այլ կերպ է նկարագրված
Արշակավանի կործանումը Փավստոսի մոտ: Ըստ այս պատմագրի
վկայության՝ Ներսես կաթողիկոսի անեծքի պատճառով Արշակավա-
նի ամբողջ բնակչությունը, «մոտ քսան հազար ընտանիք», կոտոր-
վել էին երեք օրվա ընթացքում ժանտախտ հիվանդությունից[4]:
Արշակավանի կործանման մասին հետաքրքիր մի ենթադրու-
թյուն է արել Մարկվարտը: Վերջինս, նկատի ունենալով 358 թվի
օգոստոսի 24-ի ահեղ երկրաշարժը Փոքր Ասիայում և Պոնտո-
սում[5], որը մեծ ավերածություններ էր արել բազմաթիվ քաղաք-
ներում և հիմնովին քանդել էր Նիկոմեդիա քաղաքը՝ հավանական
է համարում, որ Արշակավանը ևս կարող էր կործանված լինել
նույն այդ մեծ երկրաշարժի ժամանակ 358 թվին[6]:

[1] Գարագաշյան, Քննական պատմութիւն Հայոց, Բ, էջ 11—12. Խ. Սամ-
վելյան, Արեան վրէժ և փրկանք, տե՛ս «Ազգագրական Հանդէս», Թիֆլիս, 1903,
X, էջ 278—280:
[2] Տե՛ս Լեո, Հայոց պատմութիւն, Ա, էջ 623 և Markwart, Südarmenien
und die Tigrisquellen, էջ 62*:
[3] Մովսես Խորենացի, III, գլ. ԻԷ, էջ 289 (Տփղիս, 1913):
[4] Փավստոս, IV, գլ. ԺԳ, էջ 114—115:
[5] Տե՛ս Ammianus Marcel., XVII, 7.
[6] Տե՛ս Markwart, Die Entstehung der armenischen Bistümer, էջ 90
(226) և 97 (233):

Ներքին անդուլ խռովությունները ու պառակտումները մեծ
չափեր էին ընդունել Հայաստանում Արշակավանի կործանումից
հետո: Իր հիմքում, ինչպես ենթադրվում է, պատմական է հա-
մարվելու Փավստոսի վիպական-բանաստեղծական պատմությու-
նը Արշակ թագավորի եղբորորդի Գնելի սպանության մասին, որ
Մարկվարտը, հիմնվելով Փավստոսի վկայության ու տոմարագի-
տական իր դիտողությունների վրա, դնում է Նավասարդի տոնին՝
կիրակի 359 թվի օգոստոսի 29-ին[1]:
Փավստոսի պատմելով՝ Արշակ թագավորի եղբորորդի Տիրի-
թը սիրահարվել էր իր հորեղբորորդի Գնելի կնոջ, գեղեցկուհի
Փառանձեմի վրա, որը Սյունիքի Անդովկ նահապետի դուստրն
էր: Նա, որպեսզի Փառանձեմին ինքը առնի, նենգությամբ քսու-
թյուն էր անում ու գրգռում թագավորին, որ իբր թե Գնելը ուզում
է նրան սպանել և թագավորությունը հափշտակել:
Գնելը հրավեր է ստանում գալ Նավասարդի տոներին թագա-
վորի մոտ Շահապիվան, և այնտեղ Արշակ Բ-ը հրամայում է դա-
հճապետին նրան սպանել: Բայց հետո հայտնի է դառնում, որ ան-
մեղ Գնելի մահվան պատճառը Տիրիթն է, և թագավորը հրամայում
է սպանել նաև սրան[2]: Այնուհետև Արշակը Փառանձեմին առնում
է իրեն կին, կամ ավելի ճիշտ՝ իրեն հարճ, որովհետև, ինչպես
վերև տեսանք, նա արդեն ամուսնացած էր Ոլիմպիայի հետ:
Փավստոսը մանրամասն հաղորդում է, բացի այդ, որ նախա-
րարությունների ոչնչացման քաղաքականությունը վարել էր Հայր
մարդպետը նաև Արշակ Բ-ի թագավորության ժամանակ:
«Եվ Հայր մարդպետը,—պատմում է Փավստոսը,—չար էր
ու ժանտաբարո և ավելի անօրեն ու անիրավ էր, քան նախ-
կին Հայր կոչվող մարդպետները: Սա էր, որ Տիրանի թա-
գավորության ժամանակ կոտորել էր տվել բոլոր նախարա-
րական տոհմերը. նմանապես և Արշակի թագավորության
ժամանակ նա ավելի էր չարություններ գործել, քան առաջ
բոլոր մարդկանց նկատմամբ»:
[«Եւ էր մարդպետն Հայր այր չար և ժանտաբարոյիք անօ-
րէն և անիրաւ քան զառաջին Հայր անուն մարդպետսն: Սա
կոտորեաց զամենայն ազգս նախարարացն ի ժամանակս թա-
գաւորութեանն Տիրանայ արքային. և սոյնպէս առ թագաւո-

[1] Նույնը, էջ 95 և 97:
[2] Փավստոս, IV, գլ. ԺԵ, էջ 119—127:

րությամբն Արշակայ՝ եւ չար քան զառաջինն գործել չար առ ամենայն մարդ»]¹:

Հավանորեն, հենց նույն այս Հայր մարդպետի ներշնչումներին պետք է վերագրել նաև Կամսարականների տոհմի կոտորածը, որ հիշատակված է Փավստոսի հետևյալ վկայության մեջ:

«Իսկ հենց այն ժամանակ,—ասում է Փավստոսը,—երբ Ներսես սուրբ եպիսկոպոսապետը հեռացել էր արքունական բանակից և ոչ ոք չկար հակառակող թագավորին, որ նրան հանդիմաներ ու խրատեր՝ նա [Արշակը] այնուհետև սկսեց գործել ըստ իր չար կամքի՝—նախարարներից շատերին նա կոտորեց, շատերին նա ազգահատեց ու բնաջինջ արեց և շատերի կալվածքները արքունիք գրավեց: Իսկ Կամսարականների տոհմը, որոնք Շիրակի և Արշարունիքի տերերն էին՝ ազգահատեց և այդ գավառները միացրեց արքունի երկրին»:

[«Այլ ահա ի ժամանակին՝ յորժամ մերժեցաւ յարքունական բանակէն սուրբ եպիսկոպոսապետն Ներսէս, և ոչ որ գոյր ընդդիմացեալ թագաւորին, որ տայր նմա զյանդիմանութեան զխրատն, այնուհետև ըստ կամաց չարութեանն իւրոյ գնացեալ լինէր նա՝ և զբազումս ի նախարարացն կոտորեաց, զբազումս ազգատ արարեալ անճիտեաց, և զբազմաց տունս հատանէր յարքունիս: Բայց զտոհմս Կամսարականացն, որ էին գաւառաց տեարք, Շիրակայ և Արշարունեաց, ազգատ առնէր և զգաւառսն առնէր յոստան»]²:

Մարդպետները պայքար էին մղել, ինչպես երևում է Փավստոսի վկայություններից, նաև կաթողիկոսական իշխանության և եկեղեցական կալվածատիրության դեմ: Հայտնի է, օրինակ, որ Հայր մարդպետը սպառնացել էր Ներսես կաթողիկոսին, որ նա ամեն կերպ աշխատելու է արքունիք գրավել Աշտիշատը, որը եկեղեցական կալվածք էր³:

Մինչդեռ Հայաստանի մեջ այս դեպքերն էին տեղի ունենում՝ Հռոմեական կայսրության ու Պարսկաստանի միջև հարաբերությունները արդեն խիստ լարվել էին, և պատերազմը վերսկսվել էր ավելի մեծ կատաղությամբ, քան առաջ:

357 թվին պրետորյանների պրեֆեկտ Մուսոնիանոսը, իմանալով լրտեսների միջոցով, որ Շապուհ Բ-ը դժվարությամբ է արևել-

¹ Նույնը, գլ. ԺԴ, էջ 116—117:

² Փավստոս, IV, գլ. ԺԹ, էջ 133:

³ Նույնը, IV, գլ. ԺԴ, էջ 117—118:

քում կռիվ մղում թշնամի ցեղերի դեմ՝ ուզեց օգտվել նրա այդ նեղ դրությունից և նրան խաղաղության առաջարկ արեց միջնորդությամբ Դենշապուհի, որը պարսկական զորքերի առաջնորդն էր կայսրության սահմանամերձ երկրամասերում¹: Շապուհ Բ-ը, որը գտնվում էր այդ ժամանակ իր թագավորության ամենահեռավոր արևելյան շրջաններում, հռոմայեցիների առաջարկը ստացավ շատ ուշ, երբ արդեն նա խաղաղության դաշն էր կնքել խիոնիտների ու թշնամի մյուս ցեղերի հետ (358 թվի գարնանը):

Նա ուղարկեց Կոստանդիոսի մոտ հատուկ դեսպան և առաջարկեց նրան խաղաղության ամենածանր պայմաններ, պահանջելով, որ Պարսկաստանին վերադարձվեն Հայաստանն ու Միջագետքը, որոնք նենգությամբ խլված են եղել իր պապ Ներսեհից 298 թվին²: Նա սպառնաց նաև, որ իր առաջարկության մերժման դեպքում ինքը կվերսկսի պատերազմն իր բոլոր ուժերով:

Կոստանդիոսը, իհարկե, չէր կարող ընդունել վերոհիշյալ ամոթալի պայմանները և ամեն կերպ աշխատեց, որ կնքվի պատվավոր հաշտություն: Սակայն նրա ջանքերն ապարդյուն մնացին, և 359 թվին պատերազմը վերսկսվեց:

Այս պատերազմի ժամանակ Արշակունիների թագավորության բարեկամական կամ թշնամական դիրքը դեպի կռվող կողմերը ստանում էր բացառիկ մեծ կարևորություն: Հայաստանը, լինելով բուֆեր պետություն, թեև փոքր էր ու թույլ Սասանյան Պարսկաստանի և Հռոմեական կայսրության համեմատությամբ, սակայն զորական իր ուժերով և երկրի ռազմական դիրքերով մեծ նշանակություն ուներ պատերազմող կողմերի համար:

Աղբյուրների վկայություններից երևում է, որ 358—360 թվերին թե Պարսկաստանը և թե Հռոմեական կայսրությունն ամեն կերպ աշխատել էին գրավել Հայաստանն իրենց կողմը:

Փավստոսի վկայությունները Շապուհ Բ-ի բանակցությունների մասին Արշակ Բ-ի հետ՝ թեև իրենց մանրամասնություններով, մեծ մասամբ, վիպական-բանաստեղծական պատմվածքներ են և պատմական արժեք չունեն, սակայն, ինչպես վկայում է նաև Ամմիանոսը, Շապուհ Բ-ը, իրապես, մի քանի անգամ փորձեր էր արել գրավելու Արշակին իր կողմը, դիմելով «խաբեության, սպառնալիքների և նենգության» (fallaciis et minis et dolis)³:

¹ *Ammianus Marcel.* XVI, 9.

² *Ammianus Marcel.*, XVII, 5.

³ Նույնը, XX, 11, 2:

Հռոմեական կայսրությունը ևս իր հերթին ամեն կերպ ձգտել էր սիրաշահել Հայաստանի թագավորին և նրան հաճոյանալ: Մենք արդեն տեսանք վերև, որ Կոստանդիոսն Արշակին կին էր տվել Կոստաս եղբոր նշանածին՝ Ոլիմպիային: Ուշագրավ է նաև, որ 358 թվին, այսինքն՝ հենց Պարսկաստանի հետ խաղաղության բանակցությունների ժամանակ, հատուկ օրենքով Կոստանդիոս կայսրը հարկերից ազատել էր Արշակ թագավորի կալվածքները, որ գտնվում էին կայսրության սահմաններում[1]:

Փավստոսը մանրամասն պատմում է, թե ինչպես Արշակ թագավորը գնացել էր Շապուհի մոտ Տիզբոն և նրան հավատարմության երդում էր տվել, բայց հետո, երդման ուխտը ստելով՝ փախել էր: Փավստոսի այս վկայությունը[2] պարզապես վիպական-առեղծական բնույթ ունի և, ըստ երևույթին, հավաստի չէ: Ամմիանոսը, որ ինքը մասնակցել էր 359—363 թվերի պատերազմներին, ո՛չ միայն այդ մասին ոչինչ չգիտե, այլ, ընդհակառակը, Արշակին անվանում է հռոմեացիների «մշտական և հավատարիմ բարեկամ»[3]:

Հայաստանը, ինչպես վերև տեսանք, Տրդատ Մեծից սկսած կապված էր Հռոմեական կայսրության հետ և՛ քաղաքական, և՛ կրոնական կապերով: Եվ, իհարկե, միանգամայն հասկանալի է, որ Սասանյան Պարսկաստանի ջանքերը Հայաստանը գրավելու իր կողմը՝ վերջ ի վերջո հանդիպելու էին անհաջողության:

359 թվի գարնանը Շապուհ Բ-ը մեծ զորքով անցավ Նինվեի մոտ Տիգրիս գետը և մտավ Միջագետք: Նրա հետ էին իր դաշնակիցները՝ խիոնիտների Գրումբատես թագավորը ու նաև Ալվանքի թագավորը, հավանորեն՝ Ուռնայրը: Անտոնինոս անունով դասալիք հռոմեական մի սպա խորհուրդ էր տվել Շապուհին փոխանակ Միջագետքի քաղաքները պաշարելու արագ կերպով անցնել Եփրատը և արշավել Ասորիքի հարուստ ու պտղավետ շրջանները:

Պարսից զորքերը, համաձայն այդ ծրագրի, մի կողմ թողին Մծբինը և դիմեցին դեպի Եփրատ գետը, սակայն, տեղեկություն ստանալով, որ Եփրատը ներքևում անանցանելի է վարարման պատճառով՝ գնացին դեպի հյուսիս, մտադիր լինելով Եփրատն անցնել Ծոփքի կողմերում:

[1] Տե՛ս Աստուրյան, Քաղաքական վերաբերութիւններ, էջ 288, ծան. 2: Համեմատե՛ Codex Theodosianus, XI, 1. նաև Գաբրեյան, Տիեզերական պատմութիւն, Բ, էջ 490:

[2] Փավստոս, IV, գլ. ԺԶ, էջ 128—130:

[3] *Ammianus Marc*., XXV, 7, 12.

Ճանապարհին նրանք կանգ առան Ամիդ քաղաքի մոտ: Բայց այստեղ, երբ խիոնիտների թագավորն իր որդու ու հեծյալ ջոկատի հետ մոտեցել էին քաղաքի պարիսպներին և ուզում էին բանակցել քաղաքի անձնատվության մասին՝ բերդապահ զինվորներից մեկը, խախտելով պատերազմական ընդունված իրավունքը, նետ արձակեց և սպանեց Գրումբատեսի երիտասարդ որդուն: Զայրացած Շապուհը վճռեց վրեժխնդիր լինել և քաղաքը հիմնահատակ կործանել:

73 օրվա պաշարումից հետո պարսկական զորքերը գրավեցին Ամիդը 359 թվի հոկտեմբերի 6-ին: Նրանք իսպառ ավերեցին քաղաքը, իսկ բազմաթիվ բնակչությունը և հռոմեական կայազորը, որ բաղկացած էր ավելի քան վեց լեգեոնից՝ անխնա կոտորեցին: Ամմիանոս Մարկելլինոսը, որն իբրև ականատես նկարագրել է բոլոր վերոհիշյալ դեպքերը[1], մեծ դժվարությամբ կարողացել էր գիշերը քաղաքից փախչել և իր կյանքը հազիվհազ փրկել էր:

359 թվի աշնան վերջերին Շապուհ Բ-ը վերադառնում է Պարսկաստան, իր հետ տանելով հարուստ ավար ու բազմաթիվ գերիներ:

Գարագաշյանը, Տուրնեբիզը և Մարկվարտը[2], հիմնվելով Փավստոսի վկայությունների վրա (IV, գլ. Ի), ենթադրում են, որ այս պատերազմի ժամանակ Արշակ Բ-ը, դաշնակից լինելով պարսիկներին, օգնել էր Շապուհ Բ-ին: Նա մեծ զորքով ներխուժել էր Արվաստան մինչև Շապուհի Միջագետք գալը, հարձակվել էր հռոմեական զորքի վրա Մծբին քաղաքի կողմերում և մեծ հաղթություն էր տարել:

Ինձ թվում է, Փավստոսի հաղորդումների ուշադիր քննությունը ցույց է տալիս, որ այս դեպքը, եթե ունի պատմական որևէ հիմք, տեղի ունեցած պիտի լիներ պարսկա-հռոմեական պատերազմների նախորդ տարիներում: Հայտնի է, որ ինքը՝ Փավստոսը այս դեպքը դնում է պարսկա-հռոմեական «երեսնամյա» պատերազմների (338—368) սկզբներում և կամ «ութնամյա» զինադադարից (351—359) առաջ[3]:

359 թվի արշավանքի ժամանակ, ինչպես երևում է Ամմիանոս Մարկելլինոսի վկայություններից, պարսկական զորքերը գրավել ու

[1] *Ammianus Marc*., XIX, 1—9.

[2] Տե՛ս Գարագաշյան, Քննական պատմութիւն, Գ, էջ 75, 76. *Tournebize*, Histoire politique et réligieuse de l'Arménie, էջ 807. *Markwart*, Die Entstehung der armenischen Bistümer, էջ 94—95, ծան. 2 և էջ 97:

[3] Տե՛ս Փավստոս, IV, գլ. Ի, էջ 139 և IV, գլ. ԻԱ, էջ 140:

ոչնչացրել էին Հարավային Հայաստանում և Ծոփքում բացի Ամի-
դից նաև բազմաթիվ այլ ամրություններ, որոնց թվում և Զիատա
բերդը (ըստ Մարկվարտի՝ Ներքին Անձիտը, այժմյան Ամմաննն),
որը գտնվում էր Անգեղ բերդի (այժմյան Էգիլ) հարավ-արևելյան
կողմում՝ Արղանա-սուի և Դիբենե-Տիգրիսի միախառնման տեղում[1]:
«Հետևյալ օրը լուսաբացին,—պատմում է Ամմիանոսը,—
բերդի [Ամիդի] բարձունքից մենք տեսանք անթիվ ժողովուրդ,
որը Զիատա ամրոցի առումից հետո քարշ էր տրվում թշնամու
բանակատեղը. այս տեղը խիստ ընդարձակ էր ու ամրացված և
ունեի տասը ստադիոն երկարությամբ շրջապատ և հենց այդ-
տեղ էին փախցնում բերում խառնամբոխ բազմությունը: Նրանք
առել էին և այրել վերջին օրերը նաև այլ ամրություններ և
բոլոր տեղերից բյուրավոր մարդիկ դուրս էին հանված և տար-
վելու էին ստրկական ծառայության համար. սրանց մեջ կա-
յին շատ պառամյալ թույլ տղամարդիկ ու նաև խիստ ծեր
կանայք և, եթե սրանք այս կամ այն պատճառով հոգնած էին
մնում և ճանապարհի երկարությունից ուժասպառ լինում ու
ապրելու ցանկությունը կորցնում՝ նրանք կտրում էին դրանց
սրնքամսերը ու ռտակոճերը և թողնում էին վերընկած»[2]:
Մարկվարտը կարծում է, որ 359 թվի նույն այս ավերածու-
թյունների մասին Ծոփաց աշխարհում՝ որոշ հիշողություններ պահ-
պանվել են նաև Փավստոսի Պատմության հետևյալ հատվածներում:
1. Փավստոս, IV, գլ. ԻԴ՝
«Եվ մինչդեռ նա, Հայոց Արշակ թագավորը, իր զորքերով
Ատրպատականի սահմաններին էր հսկում, որովհետև այն-
տեղ էր սպասում Պարսից զորքերին՝ նրանք, առաջնորդ
վերցնելով Մերուժանին, Հայոց աշխարհն ասպատակեցին
ուրիշ ուղղությամբ:
Նրանք մտան Աղձնիքի միջով, Մեծ Ծոփքով, Անգեղտնով,
Անձիտ գավառով, Շահունի Ծոփքով, Մզուր գավառով, Դարա-
նաղիով, Եկեղիքով՝ Պարսից Շապուհ թագավորը եկավ աս-
պատակելու այդ գավառների կողմերը անթիվ զորքով, որը
ջրառատ հեղեղի նման տարածվեց մեծ բազմությամբ:
Նրանք կրակի ու ավերածության մատնեցին երկիրը և ան-
թիվ մարդիկ կոտորեցին իրենց սրերով, կանանց և երեխա-

1 Տե՛ս Markwart, Südarmenien und die Tigrisquellen, էջ 95—101. Ernst Honigmann, Die Ostgrenze des Byzantinischen Reiches, Bruxelles, 1935, էջ 35 և 37։

2 Տե՛ս Ammianus Marcel, XIX, 6, 1—2.

ներին սայլերի ցցերի վրա հանեցին, մի մասն էլ, կամերի
տակ ձգելով՝ կալսեցին. տղամարդկանց շառերին տրորեցին
փղերի ոտքերի տակ և անթիվ քանակությամբ փոքր երեխա-
ներ տարան գերի: Նրանք քանդեցին բազմաթիվ ամրոցներ
և ավերեցին շատ ամուր բերդեր:
Առան և ավերեցին Տիգրանակերտ մեծ քաղաքը, որ գըտ-
նըվում էր Աղձնիք գավառում բդեշխի իշխանության տակ.
այդտեղից անմիջապես գերի վերցրին քառասուն հազար երդ
և իրենք արշավեցին Մեծ Ծոփք: Այս տեղում մի մասը բեր-
դեր առան, բայց մի մասը չկարողացան առնել: Եկան պա-
շարեցին Անգեղ ամուր բերդը, որ գտնվում էր Անգեղտուն
գավառում. այնտեղ էին Հայոց շատ Արշակունի թագավոր-
ների գերեզման-դամբարանները. նույն տեղը հին ժամանակ-
ներից սկսած հավաքված էին նախնիքներից մնացած շատ
գանձեր: Նրանք գնացին պաշարեցին բերդը, բայց, որովհետև
տեղի ամրության պատճառով չկարողացան առնել՝ թողին ու
հեռացան: Նաև ուրիշ շատ բերդերի մոտով անցան, որովհե-
տև անկարող էին այդ ամրությունների դեմ մարտնչել: Բայց
նրանց ձեռքն անցավ միմիայն Անի ամուր բերդը Դարանաղի
գավառում, որովհետև չարագործ Մերուժանը հնարամտու-
թյուն գործադրեց այդ ամուր բերդի նկատմամբ: Նրանք վեր
բարձրացան, նրա պարիսպները կործանեցին և բերդից ցած
իջուցին անթիվ գանձեր: Այսպ բաց արին Հայոց նախկին
թագավորների, քաջ Արշակունիների, գերեզմանները և թա-
գավորների ոսկորները գերի տարան»:
[«Եւ մինչ նա դեռ զգուշացեալ Արշակ արքայն Հայոց
հանդերձ իւրովք զօրօքն զԱտրպատական սահմանօքն, զի
անդ սպասէր զօրացն Պարսից, նոցա առաջնորդ կալեալ
զՄերուժանն՝ ընդ այլ կածել ասպատակ յաշխարհն Հայոց
առնէին:
Զի ընդ Աղձնիս և ընդ Ծոփս Մեծ, ընդ Անգեղ տունն և
ընդ գաւառն Անձատայ, ընդ Ծոփս Շահունոյ, ընդ Մզուր
գաւառն և ընդ Դարանաղէ, ընդ Եկեղեաց, զկողմանս այնց
գաւառացն Շապուհ թագաւորն Պարսից հանդերձ անթիւ զօ-
րօքն ասպատակել հեղեալ ծաւալէր բազմութեամբ իբրև
զջուրս բազումս:
Այրացուեր առնէին, և զանթիւ մարդիկ արկանէին ի սուր
սուսերի իւրեանց. զկանայս և զմանկտի հանէին ընդ ցից

սայլից, զկէսս զոր ի ներքոյ կամացն արկեալ կասուին: Եւ
զարանց բազմութինս տային ի կոխումն փղաց. և զառանց
թուոյ զմատաղ մանկտոյն՝ զայն ի գերութին վարէին. և
զբազում ամուրս քանդէին և զբերդս աւերէին զամուրս:
Եւ առին աւերեցին զմեծ քաղաքն Տիգրանակերտ, որ էր ի
գաւառին Աղձնեաց յիշխանութեան բդեշխին. քառասուն հա-
զար երդ. զայն նոյնհետայն ի գերութին խաղացուցին. և
ինքեանք ի Ծոփս Մեծ արշաւեցին: Եւ անդ էին բերդք, զոր
առին. և էր, զոր ոչ կարացին առնուլ: Եւ գային պահ ար-
կանէին շուրջ զԱնգեղ զամուր բերդաւն, որ է յԱնգեղ տան
գաւառին. զի անդ էին բազում Հայոց թագաւորացն գերեզ-
մանք շիրմացն արացն Արշակունեաց. բազում գանձք մթե-
րեալ մնացեալ կային ի նախնեացն ի հնոց ժամանակաց
հետէ: Զուան պահ արկին զբերդաւն. այլ իբրև ոչ կարէին
առնուլ վասն ամրութեան տեղւոյն՝ թողուին և գնային:
Եւ զբազում բերդօք զանց առնէին, զի ոչ կարէին մատնչել
ընդ ամուրսն. բայց միայն մատնեցաւ ի ձեռս նոցա ամուր
բերդն Անի ի Դարանաղեաց գաւառին անդ, զի չարագործն Մե-
րուժանն հնարաւորութեամբ մերձեցաւ յամուր բերդին այնմիկ:
Ելանէին ի վեր, և կործանէին զպարիսպ նորա, և իջուցանէին
անթիւ գանձս ի բերդէն: Եւ բանային զգերեզմանս զառաջին
թագաւորացն Հայոց զարանց քաջաց զԱրշակունոյ, և խաղա-
ցուցանէին ի գերութին զոսկերս թագաւորացն»][1]:
2. Փավստոս, IV, գլ. ԻԴ՝
«Որովհետև նրանք ըստ իրենց հեթանոսական կրոնի
ասում էին՝—«Մենք նրա համար ենք առել Հայոց թագավոր-
ների ոսկորները և տանում ենք մեր աշխարհը, որպեսզի
թագավորների փառքը և այս աշխարհի բախտն ու քաջու-
թյունը գնան այստեղից և թագավորների ոսկորների հետ փո-
խադրվեն մեր աշխարհը»:
Ապա Վասակն ազատեց Հայաստան աշխարհի բոլոր գերի-
ներին, և Հայոց թագավորների ոսկորները, որ նա ազատել էր,
տարան թաղեցին Այրարատ գավառի մեջ Աղձք կոչվող ամուր
գյուղում, որը գտնվում է նեղ և դժվարամատույց խորշերում՝
գոգում ու ծոցում մեծ լեռան, որի անունն է Արագած»:
[«Զի ասէին ըստ իւրեանց հեթանոսութեանն ըստ օրի-
նացն, թէ վասն այսորիկ բարձեալ տանիմք զոսկերս թագա-
ւորացն Հայոց յաշխարհն մեր, զի փառք թագաւորացն և
բախտքն և քաջութին աշխարհիս աստի գնասցեն ընդ ոս-
կերս թագաւորացն յաշխարհն մեր եկեսցեն:
Ապա թափէր Վասակ զգերութինն ամենայն զՀայաստան
աշխարհին. և զոսկերս թագաւորացն Հայոց, զորս թափեաց
Վասակ, հանեալ թաղեցին յամուր ի գեւղն՝ որ Աղձքն անուա-
նին, յԱյրարատ գաւառին՝ որ կայն ի խինձս, ի գոգս, ի ծոցս
յանձուկս ի դժուարս լերինն մեծի, զոր Արագածն կոչեն»][1]:
Ինչպես շատ ճիշտ նկատել են Սեն-Մարտենը և Մարկվարտը,
Փավստոսի վերոհիշյալ վկայությունները կարող են վերաբերել
Ամմիանոսի նկարագրած 359 թվի Պարսից արշավանքներին[2]: Հու-
նա-հռոմեական աղբյուրներից հայտնի է մեզ, իրապես, որ մինչև
Հուլիանոս կայսեր հետ կնքված 363 թվի դաշնագիրը Սասանյան
Պարսկաստանի զորքերը կարողացել էին հասնել և ոտք կոխել
Անդրտիգրիսյան գավառների ու Հայաստանի արևմտյան շրջան-
ները միմիայն 359 թվին: Իսկ 363 թվից հետո, ինչպես իրավացի
կերպով մատնանշում է Մարկվարտը, Մեծ Ծոփքը, Անգեղտունը,
Անձիտը և հավանորեն, նաև Շահունոց Ծոփքը տրվել էին Հռոմա-
յեցիներին, և եթե Պարսկաստանը խախտած լիներ 363 թվի դաշ-
նագիրը և արշաված լիներ այդ շրջանները՝ այդ մասին կլինեին,
անշուշտ, հաղորդագրություններ Ամմիանոսի մոտ կամ ժամանա-
կակից այլ աղբյուրներում: Մարկվարտը մատնացույց է անում
նաև, որ այն դավաճանական դերը, որը Փավստոսը վերոհիշյալ
Պարսից արշավանքի ժամանակ վերագրել է դավաճան Մերուժան
Արծրունուն, 359 թվի արշավանքի ընթացքում կատարել էր, ըստ
Ամմիանոսի, հռոմեական դասալիք սպա Անտոնինոսը[3]:
360 թվին Շապուհ Բ-ը նորից մեծ զորքով արշավեց Միջա-
գետք և այս անգամ գրավեց այստեղ Սինգարան և ապա՝ Բեզաբ-
դեն[4], որն ամուր բերդ էր և գտնվում էր Ծովդեք երկրում (Կոր-
դուքի արևմտակողմում Տիգրիս գետի ափին): Այս ամուր բերդը
պաշտպանում էին Երկրորդ Փղավյան, Երկրորդ Հայկական, Երկ-

[1] Տե՛ս Վենետիկի 1889 թվի հրատարակությունը, էջ 145:

[1] Նույնը, էջ 148:

[2] Տե՛ս Markwart, Südarmenien und die Tigrisquellen, էջ 95—96: Պետք է ասել, որ դեռ Մարկվարտից առաջ Սեն-Մարտենը ևս ենթադրել էր, որ Փավստոսի վերև նկարագրված անցքերը, հավանորեն, տեղի էին ունեցել 358 թվին. տե՛ս Lebeau, Histoire du Bas-Empire, nouvelle édition par M. de Saint-Martin, t II, Paris, 1824, էջ 236—238:

[3] Տե՛ս Markwart, Südarmenien und die Tigrisquellen, էջ 115:

[4] Տե՛ս Ammianus Marc., XX, 6, 1—6 և 7, 1—16.

բորդ Պարթևական լեգեոնները և մի մեծ զորամաս Ծավդեքի աղեղնաձիգների, որոնք, մեծ մասամբ, գերի տարվեցին:

Ավելի առաջ շարժվելով, Շապուհի զորքերը պաշարեցին Վիրտա հին բերդը[1]: Այս անառիկ ամրությունը Հոնիգմանը նույնացնում է Պրոկոպիոսի մոտ հիշատակված Բիրթոնի հետ[2], որը գտնվում էր Բեզաբդեի ու Ամիդի միջև, հավանորեն, Բաաման-սուի և արևմտյան Տիգրիսի գետախառնուրդի դիմաց[3]: Պարսկական զորքերը չկարողացան առնել այս բերդը և, մեծ կորուստներ կրելուց հետո, ստիպված եղան ետ քաշվել Պարսկաստան:

Հռոմեական կայսրության քաղաքական ներքին դրությունն այս ժամանակ նորից խիստ ծանրացել էր: Դեռևս 359 թվի պարսկական արշավանքի ժամանակ հռոմեական զորքերն ունեցել էին, ինչպես վերև տեսանք, մարդկային մեծ կորուստներ: Այս կորուստները լրացնելու համար Կոստանդիոսը պահանջեց կեսար Հուլիանոսից, որն այդ ժամանակ հռոմեական զորքերի հրամանատարն էր Գալլիայում, ուղարկել օգնական զորամասեր: Սակայն զինվորները, որոնք չէին ուզում գնալ Մերձավոր Արևելք, ապստամբեցին և հայտարարեցին Հուլիանոսին Օգոստոս, այսինքն՝ անկախ ու ինքնակալ կայսր:

Կոստանդիոսը պետք է այժմ պատերազմեր և՛ Շապուհ Բ-ի, և՛ Հուլիանոսի դեմ: Պարսկական վտանգը, անշուշտ, ավելի մեծ էր: Ուստի Կոստանդիոսը վճռեց ուժեղացնել իր զորաբանակը և կռվել նախ Պարսկաստանի դեմ:

360 թվի գարնանը Կոստանդիոսը եկավ Մերձավոր Արևելք և այստեղ, Կապադովկիայի Կեսարիա քաղաքում, նախապատրաստում էր իր արևելյան երկրների ռազմական պաշտպանությունը: Հայաստանի բարեկամությունն ուներ Կոստանդիոսի համար, որը գտնվում էր այժմ երկու հզոր թշնամիների միջև, բացառիկ մեծ կարևորություն:

Հռոմեական կայսրը, ինչպես վկայում է Ամմիանոսը, իր մոտ հրավիրեց Կեսարիա Հայոց Արշակ թագավորին, ցույց տվեց նրան փառահեղ ընդունելություն և ամեն կերպ սիրաշահեց հարուստ ընծաներով ու խոստումներով: Արշակը, հրապուրված այս սիրալիրությամբ, խոսք տվեց, որ այսուհետև նա կլինի հավատարիմ դաշնակից հռոմայեցիների:

[1] Նույնը, XX, 7, 17:

[2] *Procop.*, De aedificiis, II, 4, 20.

[3] Տե՛ս *E. Honigmann*, Die Ostgrenze des byzantinischen Reiches, էջ 14, ծան. 2:

«Կոստանդիոսը,—պատմում է Ամմիանոսը,—իր մոտ կանչեց Հայոց Թագավոր Արշակին, ընդունեց նրան ամենամեծ սիրալիրությամբ և ամեն կերպ հորդորեց նրան, որ հավատարիմ բարեկամ մնա մեզ: Որովհետև նա լսել էր, որ Պարսից թագավորը բազմիցս փորձեր էր արել, դիմելով խաբեության, սպառնալիքների և նենգության, որպեսզի նրան հարկադրե հրաժարվել Հռոմի հետ դաշնակցությունից և սերտ կերպով կապե իրեն հետ:

Արշակը կրկին ու կրկին հավաստիացրեց, որ ավելի շուտ վերջ կտա իր կյանքին, քան կփոխե իր մտադրությունը: Եվ նա վերադարձավ իր երկիրը, ստացած լինելով իր շքախմբի հետ առատաձեռն ընծաներ, և այնուհետև չհամարձակվեց որևէ կերպ դրժել իր խոստումները: Չէ՞ որ Կոստանդիոսը նրան բազմազան շնորհումներ էր արել, որոնցից ամենամեծը, ի միջի այլոց, այն էր, որ կայսրը տվել էր նրան կին Ոլիմպիային, պրետորականների նախկին պրեֆեկտ Աբլաբիոսի աղջկան, որն առաջ նրա Կոստաս եղբոր նշանածն էր»[1]:

Արշակ թագավորի Հայաստան վերադառնալուց հետո՝ Կոստանդիոսը Կեսարիայից եկավ Եդեսա և այստեղից մեծ զորքով գնաց Բեզաբդե, բայց այս բերդը չկարողացավ ետ առնել և նահանջեց Անտիոք, ուր և անցկացրեց ձմեռը:

Հռոմայեցիները սպասում էին, որ 361 թվին Շապուհ Բ-ը կհարձակվի Միջագետքի վրա ավելի մեծ ուժերով, ուստի ձմեռվա ընթացքում Կոստանդիոսը եռանդուն կերպով պատրաստվում էր կռվի:

«Այս բոլորով հանդերձ,—պատմում է Ամմիանոսը,—[Անտիոքում] անարգել կերպով շարունակում էին զինվել ինչպես արտաքին, նույնպես և ներքին պատերազմի համար՝ ավելացնում էին քանակը ձիավոր զորամասերի և բուռն եռանդով լրացնում էին պակասը նաև լեգեոնների, հավաքելով գավառներից նորակոչիկներին. ծանր կերպով հարկվեցին բոլոր դասակարգերի և բոլոր զբաղմունքների մարդիկ՝ բոլորը պետք է հայթայթեին հանդերձանք, զենք, նույնպես ոսկի ու արծաթ և, բացի այդ, զանազան պարենեղենի պաշարներ ու ամեն տեսակ փոխադրական միջոցներ: Եվ որովհետև վախենում էին, որ Պարսից թագավորը, որը պատերազմական գործողությունները դադարեցրել էր միայն ձմեռվա

[1] *Ammianus Marc.*, XX, 11, 1—3.

12—340

դժվարությունների պատճառով, գարնան սկզբներին ահեղ հարձակում կգործե՝ ուղարկեցին անդրտիգրիսյան թագավորների ու սատրապների մոտ դեսպաններ հարուստ ընծաներով, որպեսզի սրանց հօգուտ մեզ տրամադրեն ու գրավեն և զգուշացնեն, որ մեզ չխաբեն ու ուխտադրուժ չլինեն:

Բայց ամենից առաջ նրանք աշխատեցին փառահեղ հագուստներով ու բազմազան ընծաներով գնել Հայաստանի ու Իբերիայի թագավորներին, Արշակին և Մերիբանեսին [Միրիան], որովհետև սրանք, անշուշտ, կարող էին վտանգավոր լինել հռոմայեցիների համար, եթե այդ ժամանակվա դժվարին պարագաներում անցնեին պարսիկների կողմը»[1]:

361 թվի գարնանը Կոստանդիոսը նորից եկավ Եդեսա, կարծելով, որ Շապուհն արշավելու է Միջագետք: Սակայն նա այստեղ իմացավ մեծ գոհունակությամբ, որ Շապուհ Բ-ն իր զորքերով ետ է քաշվել և մտադիր չէ պատերազմ մղել ներկա տարում:

Հնարավորություն ստանալով ուղղելու իր զենքը ներքին թշնամու դեմ՝ Կոստանդիոսը որոշեց գնալ Արևմուտք Հուլիանոսի դեմ, բայց ճանապարհին ծանր հիվանդացավ և 361 թվի նոյեմբերի 3-ին մեռավ Կիլիկիայի Մոպսուկրենե քաղաքում:

Կոստանդիոսի մահից հետո Հուլիանոսը (361—363), որը նրա հորեղբոր որդին էր, դառավ միահեծան տերը Հռոմեական ամբողջ կայսրության: Քրիստոնեական պատմական ավանդության մեջ այս կայսրն անվանվում է Հուլիանոս Ուրացող, որովհետև սա իրեն նպատակ էր դրել բարեփոխել հեթանոսությունը և վերականգնել նրա գերիշխող դիրքը:

Ամմիանոսի ասելով՝ Հուլիանոսի մասին բոլոր ժողովուրդների մեջ լուր էր տարածվել, որ նա արտակարգ կերպով քաջ է, զգաստ է, լավ գիտե ռազմական արվեստը և ունի նաև ուրիշ շատ արժանիքներ: Ուստի և ինչպես այլ ժողովուրդներից, նույնպես և Հայաստանից ու Անդրտիգրիսյան երկրներից պատգամավորություններ եկան նրա մոտ, որոնք շնորհավորեցին Հուլիանոսին և վերանորոգեցին իրենց բարեկամությունը կայսրության հետ[2]:

Հուլիանոսը, դառնալով կայսր, սկսեց բուռն թափով պատրաստություններ տեսնել մեծ արշավանքի և վճռեց պաշտպանողական

[1] Նույնը, XXI, 6, 5—8:

[2] *Ammianus Marc.*, XXII, 7, 9—10.

պատերազմ վարելու փոխարեն մղել Պարսկաստանի դեմ հարձակողական պատերազմ և առաջ շարժվել ու գրավել Տիզբոնը:

Մարկվարտը հավանական է համարում, որ այս մեծ պատերազմի նախօրյակին, 362 թվին, տեղի էր ունեցել Արշակ Բ-ի կին Ոլիմպիայի սպանությունը: Փառանձեմը, նախանձով ու չարությամբ լցված դեպի Ոլիմպիան՝ զզվելի կերպով սպանել էր տվել թագուհուն, թունավորելով նրան Մրջյունիկ անունով քահանայի ձեռքով հաղորդության ժամանակ: Մարկվարտն իրավացի կերպով մատնանշում է[1], որ այս ոճիրը չէր կարող կատարված լինել Կոստանդիոս կայսեր կենդանության ժամանակ՝ 360 կամ 361 թվերին և կամ առաջ:

363 թվի մարտի 5-ին Հուլիանոս կայսրը դուրս եկավ Անտիոքից և մեծ զորքով առաջ շարժվեց դեպի Միջագետք: Ամմիանոսի վկայությամբ՝ արշավանքի սկզբում նա պատվիրել էր Արշակ թագավորին, որ նա հավաքե իր զորքերը, պատրաստ լինի և սպասե իր հրամաններին, և որ ինքը կկարգադրե հետո՝ թե ո՛ւր պետք է նա գնա և ի՛նչ պետք է անե[2]:

Գաթրճյանի, Գարագաշյանի, Ադոնցի և մի քանի այլ պատմագետների երկերում մեջ է բերված Հուլիանոսի հետևյալ նամակը Արշակին, որը, ինչպես կարծում են, անվավեր է:

«Հայաստանի սատրապ Արշակին: Պատրաստվի՛ր, Արշակ,
անմիջապես կռվի թշնամիների դեմ, զենք ա՛ռ ձեռքդ Պար-
սից մոլեգնության դեմ: Մեր նախապատրաստության և ցան-
կության կետ նպատակն է երկուսից մեկը՝ կամ կատարել
մեր պարտքը և մեռնել պարթևների երկրում, գործելով մե-
ծամեծ սխրագործություններ և պատճառելով հակառակորդին
ամեն հնարավոր չարիքները, և կամ, նրանց պարտության
մատնելով աստվածների օգնությամբ, վերադառնալ տուն
փառքով պսակված և բերել թշնամուց ռազմական ավար:

Արդ՝ թոթափի՛ր քո անփութությունը, թո՛ղ քո խաբեու-
թյունները: Մոռացի՛ր այն երանելի հանգուցյալին, ինչպես
և բարեպղնիվ մարդկանց լիառատ հարստությունները՝ այն
որ առատորեն տալիս էր քեզ և քեզ նման բարբարոսներին
մեղկ ու շռայլ Կոստանդիոսը: Նկատի ունեցի՛ր, որ այժմ
գործ ունես Հուլիանոսի հետ՝ բարձրագույն քրմապետի, Կե-
սարի, Օգոստոսի, աստվածների ու Մարսի սպասավորի,

[1] *Markwart*, Die Entstehung der armenischen Bistümer, էջ 95 և 97:

[2] *Տե՛ս Ammianus Marc.*, XXIII, 2, 2.

ֆրանկների ու բարբարոսների կործանողի և գաղղիացիների ու իտալացիների ազատարարի:

Թեև դու որևէ ա՞յլ մտադրություն ունես՝ ես գիտեմ, որ դու ննջամիտ ես, անարի զինվոր ես և պարծենկոտ, ինչպես ինձ այդ ցույց են տալիս ներկա անցքերը, որովհետև դու փորձում ես թաքցնել ու պահել քո մոտ հասարակական օգուտի մի թշնամու և ուզում ես սպասել մինչև այն ժամանակ, երբ կպարզվի այս պատերազմի ելքը:

Աստվածների օգնությունը մեզ բավական է, որպեսզի ջախջախենք մեր թշնամիներին: Իսկ եթե ճակատագիրը, որի վճիռը աստվածների ցանկությունն է, այլ կերպ որոշի՝ ես կընդունեմ այդ անվեհեր ու արիաբար: Իսկ դու իմացի՛ր, որ պարսիկների ձեռքի զոհը կլինես և քեզ հետ միասին իսպառ կկործանվի նաև քո տունը և Հայաստանի թագավորությունը: Մծբին քաղաքը հաղորդակից կլինի նույնպես ձեր դժբախտությանը. վաղուց ի վեր երկնքի աստվածները մեզ այդ հայտնի են արել»[1]:

Այս նամակը, որ վավերական են համարել Սեն-Մարտենը և Գաթրճյանը[2], ինչպես շատ ճիշտ նկատել է Գարագաշյանը, պարզապես մի կեղծիք է, հավանորեն, մոլեռանդ քրիստոնյայի, և հորինված է ուրացող կայսրին նախատելու և վարկաբեկելու նպատակով[3]: Պարզ է, որ Հուլիանոսը չէր կարող գրած լինել իր դաշնակցին անվայել ու անքաղաքավարի ոճով այս նամակը: Ուշագրավ է, որ նամակի մեջ նախազուշակված են Արշակի գերի ընկնելը, Արշակունիների թագավորության կործանումը և Մծբինի վերադարձը պարսիկներին: Կեղծիքը, ըստ երևույթին, բավական հին է, որովհետև Հուլիանոսի Արշակին գրած նամակը հիշատակված է նաև Սոզոմենեսի մոտ[4], որն իր եկեղեցական պատմությունը գրել էր հինգերորդ դարում:

Հասնելով Խառան քաղաքը, որը գտնվում էր Եդեսայի հարավակողմում, Հուլիանոսը իր մեծ բանակը բաժանեց երկու մասի: Իր զորքի գրեթե կես մասը, մոտ 30.000 հոգի, նա հանձնեց Պրոկոպիոս

---

[1] Տե՛ս Juliani opera, vol. I, epistola 66, էջ 589—590: Համեմատե՛ Адонц, Фауст как историк, „Христианский Восток", том VI, вып. III, Петроград, 1922, էջ 269—270:

[2] Տե՛ս *Lebeau*, Histoire du Bas-Empire, t. III, էջ 40—41 և Գաթրճյան, Տիեզերական պատմություն, Բ, էջ 496:

[3] Գարագաշյան, Քննական պատմություն Հայոց, Գ, էջ 84:

[4] *Sozomenes*, Historia ecclesiastica, VI, 1.

և Սեբաստիանոս զորավարներին և ուղարկեց Տիգրիս գետի կողմերը, կարգադրելով, որ նրանք, եթե հնարավոր է, միանան Արշակ թագավորի հետ ու նրա հետ միասին, Կորդուքի և Մոկքի միջով անցնելով, ավերեն Մեդիայի Խիլիոկոմ պտղավետ երկրամասը և ուրիշ շրջանները և ապա գան ու միանան իր հետ Ասորեստանում[1]:

Բանակի երկրորդ՝ բուն մասը, որին ուղեկցում էր հռոմեական նավատորմիղը, Հուլիանոսի առաջնորդությամբ առաջ շարժվեց Խաբուրի ու Եփրատի գետախառնուրդի մոտ գտնվող Կիրկեսիումից Եփրատ գետի հոսանքով դեպի ցած: Ճանապարհին Հուլիանոսն ավերածության մատնեց պարսկական երկիրը, գրավեց շատ քաղաքներ և ապա Եփրատը Տիգրիսի հետ միացնող ջրանցքի հոսանքով եկավ Սելևկիա և Տիզբոն, որոնք գտնվում էին Տիգրիս գետի ափերին: Տիզբոն քաղաքի մոտ Հուլիանոսը պարտության մատնեց Պարսից զորքը, բայց տեսավ, որ հարձակվել ու առնել Տիզբոնը, որը խիստ ամրացված էր, գրեթե անհնարին է:

Նա վճռեց ետ նահանջել Տիգրիս գետի ձախ ափով Ադիաբենե ու ապա Կորդուք, հույս ունենալով, որ շուտով կգան ու կմիանան իր հետ Արշակ թագավորի և Պրոկոպիոսի զորքերը[2]: Սակայն այս հույսերը զուր էին: Շապուհ Բ-ը, որը, հավանորեն, իր զորքերի հետ սպասելիս է եղել Հուլիանոսին Տիգրիս գետի հյուսիսակողմում, Պարսկահայքի մոտերքում, ըստ երևույթին, կտրած է եղել Պրոկոպիոսի ու Արշակի զորքերի կապը գլխավոր բանակի հետ[3]:

Հռոմեական զորքերի նահանջի ժամանակ հյուսիսից հարավ եկավ մեծ բանակով ինքը՝ Շապուհը, որն աշխատեց դժվարացնել նրանց պարենավորումը և մերթ ընդ մերթ հարձակվում էր նրանց վրա ու վարում պարտիզանական փոքր պատերազմ: Հուլիանոսը կկարողանար, այնուամենայնիվ, առանց մեծ կորուստի իր զորքը ետ տանել հռոմեական շրջանները, սակայն նա անզգուշաբար, առանց զրահի, կռվի ելավ թշնամու դեմ զորքի առաջին շարքերում և, ծանր վերք ստանալով, մեռավ Սումերեի հարավարևելակողմում (26 հունիսի 363 թ.):

---

[1] Տե՛ս *Ammianus Marcel.*, XXIII, 3, 5. Համեմատե՛ Zosimi, Historia nova, III, 12, 3—5.

[2] Տե՛ս *Amm. Marc.*, XXIV, 8, 6.

[3] Այդ մասին կան ակնարկներ Մաղնոս Խառանցու և Եվտիկիանոս Կապադովկացու մոտ, որոնք Հուլիանոսի հետ մասնակցել էին այս պատերազմին. տե՛ս Աստուրյան, Քաղաքական վերաբերություններ, էջ 292, ծան. 4: Համեմատե՛ Fragm. hist. graec., ed. C. Müller, Paris, IV, 5—6.

Հուլիանոսի մահից հետո ընտրվեց կայսր Հովիանոսը (363—364): Հռոմեական զորքը գտնվում էր ծանր դրության մեջ սննդամթերքների պակասության պատճառով, բայց բարոյալքված էր և ուժասպառ էր եղած նաև պարսկական զորքը, որը կռիվների ընթացքում ունեցել էր մեծ կորուստներ:

Հովիանոսի կայսր ընտրվելուց մոտ մեկ շաբաթ հետո Շապուհ Բ-ը հռոմայեցիների մոտ ուղարկեց հատուկ դեսպանություն և առաջարկեց հաշտություն կնքել: Եվ Հովիանոսը, որը շտապում էր վերադառնալ Արևմուտք և ապահովել իր կայսերական իշխանությունը, ընդունեց խաղաղության այն ծանր ու ստորացուցիչ պայմանները, որ առաջարկել էր Շապուհ Բ-ը:

Համաձայն այդ պայմանագրի, որ Ամմիանոսն անվանում է «ամոթալի»[1], Անդրտիգրիսյան գավառներից հինգը՝ Աղձնիքը, Մոկքը, Ծավդեքը, Ռեհիմենեն և Կորդուքը տասնհինգ ամրոցների հետ, նաև Սինգարան, Մծբինը և Կաստրա-Մավրորումը (=մավրերի բանակատեղ), տրվեցին Սասանյան Պարսկաստանին: Մծբինի ու Սինգարայի բնակչությանը թույլ տրվեց, որ նրանք գաղթեն հռոմեական շրջանները:

Հայաստանի ու Արշակունիների թագավորության համար ծանր ու աղետալի էր դաշնագրության այն հատուկ կետը, որով կայսրությունը հրաժարվում էր օգնել ու պաշտպանել իր հավատարիմ դաշնակից Արշակ Բ-ին, եթե պարսիկները հարձակվեին նրա վրա: Ամոթալի այս դաշնագիրը, որ երեսուն տարի ժամանակով էր կնքված, երդումով հաստատվեց 363 թվի հուլիսի սկիզբներին:

Ամմիանոսի և Փավստոսի վկայություններն այս դաշնագրի մասին, որ բոլորովին իրար համաձայն են և իրար լրացնում են՝ ավելորդ չեմ համարում մեջ բերել ընդարձակ բովանդակությամբ:

1. Ամմիանոս, XXV, 7, 9—12՝

«Թագավորը [Շապուհ Բ-ը] համառորեն պահանջում էր, որ իրեն վերադարձվեն, ինչպես նա ասում էր, այն իր երկրները, որ իրենից խլել էր Մաքսիմիանոսը [=Գալերիոս Վալերիոս Մաքսիմիանոս], և պահանջում էր, ինչպես բանակցության ընթացքում իրոք պարզվեց, մեր ազատման համար Տիգրիսի մյուս կողմում՝ Աղիբբև փրկանք հինգ գավառներ Տիգրիսի մյուս կողմում՝ Աղձնիքը, Մոկքը, Ծավդեքը, նաև Ռեհիմենեն ու Կորդուքը հանդերձ 15 ամրոցներով, իսկ, բացի այդ, Մծբինը, Սինգարան

1 Տե՛ս Amm. Marc., XXV, 7, 13.

ու Կաստրա-Մավրորումը, որն իր դիրքի պատճառով խիստ
կարևոր ամրություն էր:
Ավելի լավ կլիներ տասն անգամ կռվել, քան հանձն առնել
այդ պահանջներից որևէ մեկը: Սակայն վեհերոտ կայսրի
վրա ազդեցություն ունեին քծնողների խումբը. սրանք տալիս
էին հարևանցիորեն Պրոկոպիոսի անունը, իբրև վտանգավոր
մարդու, որը, եթե կայսրը շուտ չվերադառնա, կարող կլինի,
անշուշտ՝ իմանալով Հուլիանոսի մահվան մասին, թարմ զո-
րամասերի օգնությամբ, որ իր հրամանատարության տակ են,
առանց դիմադրության հանդիպելու իրերի նոր դրություն
առաջացնել:
Այս վտանգավոր խոսակցություններն այնքան հաճախ էին
կրկնվում, որ նա առանց վարանման, դրանով դրդված, տվեց
ամեն բան, ինչ որ պահանջում էին պարսիկները, և դժվարու-
թյամբ միայն պայման կապվեց, որ գոնե Մծբինը և Սինգա-
րան պարսիկների իշխանության տակ անցնեն առանց բնակիչ-
ների և որ հռոմայեցիներին թույլ տրվի վիճված ամրություն-
ներից հետ քաշվել ու լինել մեր պաշտպանության տակ:
Բացի այդ, նաև կործանարար ու անօրինակ (exitiale et im-
pium) մի հավելում արվեց, որ այս կնքված համաձայնությու-
նից հետո այլևս չտրվի օգնություն մեր մշտական ու հավատա-
րիմ բարեկամ Արշակին Պարսից դեմ, եթե նա այդ մեղանից
խնդրելու լինի: Այստեղ կրկնակի դիտավորություն կար, նախ՝
պատժել սրան, որովհետև կայսրի հանձնարարությամբ ավե-
րել էր Խիլիոկոմը[1], և, բացի այդ, հարմար առիթի սպասել ու
անվախ կերպով հարձակում գործել Հայաստանի վրա:
Եվ հենց դրա հետևանքով էր, որ հետագայում այս Արշակը
կենդանի գերի վերցվեց և պարսիկները երկպառակությունների
ու խռովությունների ժամանակ Հայաստանից խլեցին ընդար-
ձակ երկրամաս, որ սահմանակից էր Մեդիային, ու նաև Ար-
տաշատ քաղաքը»:
2. Փավստոս, IV. գլ. ԻԱ՝
«Եվ երբ խաղաղություն հաստատվեց Հունաց թագավորների
և Պարսից թագավոր Շապուհի միջև՝ Հունաց թագավորը գա-
շինքի թուղթ գրեց ու կնքեց և տվեց Պարսից թագավորին: Եվ

1 Խիլիոկոմը, ինչպես երևում է Ամմիանոսի այլ վկայություններից (XXIII, 3, 5 և XXIV, 8, 4), Կորդուքի ու Մոկքի մոտակա շրջանն էր և գտնվում էր, հավանորեն, այդ երկրների արևելակողմում:

դաշինքի այդ թղթի մեջ գրված էր այսպես. «Ես քեզ տալիս եմ Մծբին քաղաքը, որը գտնվում է Արվաստանում, ու Ասորոց Միջագետքը, և Հայաստանի միջնաշխարհից էլ ձեռք եմ քաշում. եթե կարողանաս նրանց հաղթել ու քեզ հպատակեցնել՝ ես նրանց օգնություն չեմ գա:

Այսպիսով՝ որովհետև Հունաց թագավորը նեղն էր ընկել և ծանր ճգնաժամի մեջ էր՝ այդ բովանդակությամբ դաշնագիր էր կնքել և տվել էր Պարսից թագավորին ու այս կերպով ազատվել էր նրա ձեռքից»:

[«Այլ իբրև եղև խաղաղութիւն ի մէջ թագաւորացն Յունաց և ի մէջ թագաւորին Պարսից Շապհոյ, ուխտից նամակ գրեալ և կնքեալ տայր թագաւորն Յունաց թագաւորին Պարսից: Եւ գրեալ էր յուխտից նամակին այսպէս. Եսու քեզ, ասէ, ՆՄծբին քաղաք՝ որ է յԱրուեստանի, և Միջագետս Ասորոց, և միջաշխարհին Հայոց ձեռնթափ եմ, ասէ, թէ կարասցես յաղթել նոցա և արկանել ի ծառայութիւն, ես ի թիկունս ոչ եկից նոցա:

Արդ՝ ի նեղ ուրեմն անգեալ թագաւորն Յունաց, և ի նեղին վշտի՝ ղայս ձև օրինակի բանիցն կնքէր մուրհակ, և տայր թագաւորին Պարսից. և ապա ճողոպրէր ի նմանէ»][1]:

Խաղաղությունը կնքելուց հետո Հովիանոսը զորքի հետ վերադարձավ Հռոմեական Միջագետք և եկավ Անտիոք: Բայց նա երկար չապրեց: Երբ նա Անտիոքից գնում էր Պոլիս՝ ճանապարհին հանկարծամահ եղավ Բիթանիայի Դադաստանա քաղաքում (364 թվի փետրվարի 16-ին):

Հովիանոսին հաջորդեց Վալենտիանոս Ա-ը (364—375), որը Հռոմեական կայսրության արևելյան մասի կառավարությունը հանձնեց իր եղբայր Վաղեսին (364—378):

363 թվի դաշինքը Շապուհին հնարավորություն էր տալիս անարգել կերպով հաշիվ տեսնելու Արշակ Բ-ի հետ, և պարսիկներն արդեն 364 թվին պատերազմ սկսեցին Հայաստանի դեմ: Արշակ Բ-ը կարող էր այժմ հենվել միայն իր երկրի ներքին ուժերի վրա:

Արշակունյաց թագավորությունը համառ կերպով դիմադրեց հաղթական ու հզոր Պարսկաստանին չորս տարի: Սակայն պատերազմի բախտը կանխորոշված էր, որովհետև կռիվն անհավասար էր, և Շապուհ Բ-ը Հայաստանում հենված էր Պարսկաստանին կողմնակից հայկական ուժեղ նախարարությունների վրա:

[1] *Տե՛ս Վենետիկի 1889 թվի հրատարակությունը, էջ 140:*

Փավստոսի մոտ, որին աղբյուր էր ծառայել «Պարսից պատե-
Փավստոսի մոտ, որին աղբյուր էր ծառայել «Պարսից պատեհ-
րազմ» վեպը, 364—367/8 թվերի կռիվները նկարագրված են հե-
քիաթային ոճով ու չափազանցություններով և այնքան խառն ու
հախուռն, որ շատ դժվար է որոշել, թե նրա պատմած ո՞ր դեպքերը
կարող են համարվել հիշողություններ այս ժամանակվա անցքերի:

Մենք արդեն վերև տեսանք, որ Փավստոսի վկայությունները
(IV, գլ. ԻԴ) Պարսից ապստամբությունների մասին Աղձնիքում,
Մեծ Ծոփքում, Անգեղտնում, Անձիտում և հարևան այլ գավառ-
ներում հիշողություններ են ո՛չ թե այս ժամանակաշրջանի անց-
քերի, ինչպես այդ թյուրիմացաբար մատնանշվում է պատմագի-
տական երկերում, այլ Շապուհ Բ-ի 359 թվի մեծ արշավանքի:

Դժվար չէ նույնպես կռահել, որ Փավստոսի նաև հետևյալ
գլխի վկայությունները (IV, գլ. ԻԵ) Արշակ թագավորի արշավան-
քի մասին Թավրեզ ու Ատրպատական՝ չեն վերաբերում 364—
367/8 թվերի կռիվներին, այլ, հավանորեն, հիշողություն են Ամ-
միանոսի մատնանշած Արշակի 363 թվի արշավանքի Խիլիոկոմ[1]:
Ըստ իս միանգամայն անհավատալի է, որ Հովիանոսի դաշնագրից հետո հուսալքված հայերը Պարսկաստանի դեմ վարած լի-
նեին հարձակողական պատերազմ:

Փավստոսի մոտ պահպանված հայկական ավանդությունը,
որ կարող է կապ ունենալ Խիլիոկոմի (=«Հազարագյուղ») մասին
Ամմիանոսի վերոհիշյալ վկայությունների հետ, մեջ եմ բերում
ընդարձակ բովանդակությամբ:

«Այնուհետև,—պատմում է Փավստոսը,—Հայոց Արշակ
թագավորը զորք հավաքեց և իր մոտ քաշեց ավագի բազմությամբ մեծ զորք ու ռազմերթի ելավ Պարսից աշխարհի
դեմ: Այս և վասակը վերցրեց Հայոց զորքը, օգնության
կանչեց նաև հոներին ալանների հետ միասին և հասավ Հա-
յոց թագավորության օգնության պարսիկների դեմ: Բայց,
որովհետև նույն այդ ժամանակ Պարսից թագավորը ես, երթի
ելնելով, եկել էր Հայաստան աշխարհի վրա սրանց դեմ՝
ուստի և սրանք շտապ կերպով հասան Ատրպատական և
Պարսից թագավորի զորքը գտան բանակ դրած Թավրիզում:

[1] *Այս ճիշտ ենթադրությունն արել է Սեն-Մարտենը. տե՛ս Lebeau. Histoire du Bas-Empire, III, Paris, 1825, էջ 276—279: Սեն-Մարտենը, հենվելով Փավստոսի այս վկայության վրա՝ Խիլիոկոմի տեղը ենթադրում է Ուրմիա լճի արևելակողմում՝ Թավրիզի ու նրա մոտակա շրջաններում. տե՛ս Histoire du Bas-Empire, t. III, էջ 63, ծան. 4 և էջ 126, ծան. 2:*

Վասակ սպարապետը հասավ քսան բյուրով և հարձակվեց Պարսից բանակի վրա: Թագավորը մի ձիով փախավ ազատվեց և սրանք ավարի առան պարսիկների բոլոր կարավանը. Պարսից զորքերի ամբողջ բազմությունը կոտորեցին և բանակից ևս հաշվից դուրս շատ ավար առան: Սրանք ասպատակեցին ու առան ամբողջ Ատրպատական աշխարհը, քանդեցին, բրեցին երկիրը, հիմքից կործանեցին և երկրից գերիներ տարան աստղերի չափ շատ: Երկրի բոլոր տղամարդկանց սրի քաշեցին և իրենք իրենց երկրի սահմաններին հսկեցին և, պահակ կանգնելով, մեծ զգուշությամբ պահպանում էին»:

[«Ապա զօրաժողով լինէր Արշակ արքայ Հայոց, և կուտէր առ ինքն զօրս բազումս իբրև զաւազ բազմութեամբ, և խաղայր ի վերայ աշխարհին Պարսից: Ապա առնոյր Վասակ զգունդն Հայոց, և զհօնսն հանդերձ ալանօքն կոչել յօգնականութիւն, և հասանէր դիմէր յօգնականութիւն թագաւորութեանն Հայոց ի վերայ Պարսից: Այլ թագաւորն Պարսից հանդերձ ամենայն իւրովք զօրօքն ի ժամանակի անդ յայնմիկ. բանակեալ և նա խաղացեալ գայր ի վերայ Հայաստան երկրին ընդդէմ նոցա, ապա սորա փութացեալք հասանէին յԱտրպատական. և գտանէին զբանակն արքային Պարսից ի Թաւրէշ բանակեալ:

Հասանէր Վասակ սպարապետն հանդերձ քսան բիւրուքն, անկանէր ի վերայ բանակին Պարսից: Միայն ճողոպրեալ թագաւորն փախչէր, և առնուին յաւարի զամենայն կարաւանն Պարսից. և զամենայն զօրսն Պարսից բազմութեանն կոտորեցին, և առին աւար բազում ի բանակէն, զի ոչ գոյր նոցա թիւ: Ասպատակ տուեալ առնուին զամենայն Ատրպատական երկիրն. քանդեալ բրէին զերկիրն, մինչև ի հիմանց կործանէին. և խաղացուցանէին զգերութիւն երկրին քան զաստեղս բազմութեամբ: Եւ զամենայն զայր երկրին հանէին ընդ սուր. և ինքեանք զգուշացեալք սահմանօք երկրին իւրեանց, պահ արկեալ պահէին մեծաւ զգուշութեամբ»][1]:

363 թվի պայմանագիրը, որով կայսրությունը հրաժարվում էր օգնել ու պաշտպանել Արշակ Բ-ին և որով հայերը թողնվում էին իրենց բախտին, բնականաբար, Հայաստանում առաջ էր բերելու անսահման խոր հուզմունք: Շատ պարզ է, որ այդ մահացու հարված էր Արշակունյաց թագավորության համար և որ դա-

[1] Փավստոս, IV, գլ. ԻԵ, էջ 149:

շինքից հետո անխուսափելի էին Հայաստանի քաղաքական ու կուլտուրական արևմտյան կողմնորոշման վարկաբեկումը և հռոմեական կուսակցության հեղինակության անկումը:

Փավստոսի վկայություններից, իրոք, պարզ երևում է, որ 363 թվից հետո Հայաստանում մեծ դեր էր կատարում պարսկական կուսակցությունը, որի առաջնորդն էր Մերուժան Արծրունին՝ Մամիկոնյան Վասակ սպարապետի քրոջ որդին: Այս կուսակցությունը կռվում էր այժմ ո՛չ միայն Արշակունիների ու հռոմեական կուսակցության պաշտպանող նախարարությունների դեմ, այլև քրիստոնեական եկեղեցու ու կրոնի դեմ, նպատակ դնելով իրեն Սասանյան Պարսկաստանի հետ սերտ բարեկամություն հաստատել, տարածելով Հայաստանում Պարսից մազդեզական կրոնը և ուժեղացնելով իրանական արևելյան կուլտուրան:

Թե որքա՛ն զորեղ է եղել այս շարժումը՝ այդ երևում է նրանից, որ պարսկական կուսակցությանն էր հարել մինչև իսկ Վահան Մամիկոնյանը, Վասակ սպարապետի եղբայրը:

Շապուհ Բ-ը, հենվելով հայ ապստամբների վրա և դիմելով մերթ զենքի ուժի ու մերթ դիպլոմատիկական նենգ միջոցների, ինչպես վկայում են Ամմիանոսը և Փավստոսը, հաջողություն ունեցավ Հայաստանում, և Արշակ թագավորն ու Մամիկոնյան Վասակը անձնատուր եղան նրան, հավատալով թագավորական երդումին:

Փավստոսի հաղորդած տեղեկությունները 364—367/8 թվերի անցքերի մասին, թեև լի են վիպական-առեղծական մանրամասնություններով ու չափազանցություններով, բայց որոշ կետերում ճշտիվ համաձայնում են Ամմիանոսի վկայությունների հետ, ուստի և այս երկու հեղինակների համապատասխան հատվածները, որ պայծառ լույս են սփռում վերոհիշյալ չորս տարիների իրադարձությունների վրա, անհրաժեշտ եմ համարում մեջ բերել մանրամասն կերպով:

1. Ամմիանոս, XXVII, 12, 1—4՝

«Պարսից Շապուհ թագավորը, որն արդեն ծերացել էր և որն իր թագավորության սկզբից քաղցր հակում ուներ թալանի, թեև Հուլիանոսի մահից և ամոթալի դաշինքը կնքելուց հետո առժամանակ յուրայինների հետ մեր վերաբերմամբ պահում էր բարեկամություն, սակայն այժմ, ոտնատակ տալով Հովիանոսի հետ կնքած դաշնագրերի անձեռնմխելիությունը, ձեռքը երկարացրեց Հայաստանին, որպեսզի սրան—կարծես թե պայմանագրի ուժն արդեն վերացվել էր—ենթարկե իր իշխանությանը:

Սկզբում նա գործ դրեց ամեն տեսակ խաբեություններ, բայց, որովհետև ամբողջ ազգաբնակությունը դիմադրում էր, սկսեց նախ մի շարք թեթև ճնշումներ գործել և մեծամեծներից ու սատրապներից ոմանց հավատարմությունը խախտեց, իսկ ոմանց էլ հանկարծակի հարձակումներով նվաճեց: Այնուհետև նա իր ձեռքը ձգեց իրեն՝ Արշակ թագավորին, գործադրելով գայթակղության ամենաընտիր միջոցները երդմնազանցության հետ միասին. հրավիրելով սրան խնջույքի՝ հրամայեց նրան դուրս տանել ետևի թաքուն դռնով, հանել աչքերը, շղթայել արծաթյա շղթաներով—որ նրանց մոտ պատժի ժամանակ պատվավոր անձերի համար համարվում էր ունայն մի մխիթարություն—և աքսորեց Ագարանա անունով բերդը, ուր նա զանազան տանջանքներից հետո ենթարկվեց մահապատժի:

Հետո, որպեսզի իր երդմնազանցությունը լրիվ լինի, նա վանդեց Սավրոմակեսին, որը Հռոմի կողմից Իբերիայի պետ էր դրված, և նույն այս ժողովրդի ղեկավարությունը հանձնեց ոմն Ասպակուրասին, որին շնորհեց թագ, որպեսզի մեր հեղինակության կամայական այպանումն ավելի աչքի ընկնի»:

2. Փավստոս, IV, գլ. ԾԲ՝

«Ապա Պարսից Տաճատ թագավորը մեծ աղաչանքով, ընծաներով ու հրովարտակներով սիրալիր կերպով կանչեց Արշակ թագավորին իր մոտ, որպեսզի այնուհետև իրար մեջ սեր և խաղաղություն և մեծ բարեկամություն հաստատեն: Իսկ Արշակ թագավորը, թեև ուզում էր պատերազմել, սակայն Հայոց աշխարհի ամբողջ զորքը չկամեցավ այդ հանձն առնել: Ուստի և նա կամա-ակամա սիրտ արավ ու խոնարհությամբ հրովարտակ ուղարկեց Պարսից Տաճատ թագավորին, ինչպես վայել է ծառային տիրոջ նկատմամբ: Եվ նա նաև իր կողմից նրան հաշտության ընծաներ ուղարկեց»:

[«Ապա Տաճատ արքայ Պարսից մեծաւ աղաչանօք և պատարագօք և հրովարտակօք և սիրով զԱրշակ առ ինքն կոչէր, զի յայնմ հետէ արասցեն ի մէջ իւրեանց սէր և խաղաղութիւն և բարեկամութիւն մեծ: Իսկ Արշակ արքայ թէպէտ պատերազմ կամէր տալ, այլ ոչ կամէին յանձն առնուլ այսմիկ ամենայն զօրքն աշխարհին Հայոց: Ապա թէ կամաւ կամաւ՝ թէ ոչ կամաւ, սակայն եդ սիրտ՝ խոնարհութեամբ հրովարտակս առ Տաճատ արքայ Պարսից, որպէս վայելէ ծառայի առ տէր իւր, տալ: Եւ առաքէր յիւրմէ նմա պատարագս հաշտութեան»][1]:

3. Փավստոս, IV, գլ. ԾԴ՝

«Դրանից հետո Պարսից Տաճատ թագավորը նորից մարդ ուղարկեց Հայոց Արշակ թագավորի մոտ և ասաց. «Բայց եթե ես և դու իրար բարեհաճ ենք՝ եկ, միմյանց տեսություն անենք ու ապա միմյանց իբրև հայր ու որդի լինենք: Իսկ եթե դու չես գա ինձ տեսության, նշանակում է՝ պատերազմ ես ուզում իմ և քո մեջ»:

Արշակը նրանից խնդրեց ուխտի հավատարիմ երդում, որպեսզի դրանից հետո նրա մոտ գնա առանց կասկածանքի: Եվ սա Պարսից թագավորության վստահելի երդումների կարգով բերել տվեց աղ, կնքեց վարազագիր մատանիով և ուղարկեց, (հայտնելով), որ եթե այդ երդումից հետո ես չգա՝ ապա թող պատրաստ լինի պատերազմի իրար հետ:

Իսկ երբ Հայոց երկրի բոլոր մարդիկ այդ ես տեսան ու լսեցին՝ ստիպեցին ու հարկադրեցին իրենց Արշակ թագավորին և շտապեցրին նրան, որ վեր կենա գնա, ներկայանա Պարսից Տաճատ թագավորին: Այնուհետև Հայոց Արշակ թագավորը կամա-ակամա վեր կացավ, առավ իր հետ Հայոց սպարապետ զորավարին, որ իր գայակն էր, ճանապարհ ընկավ ու գնաց Հայոց երկրից Պարսից երկիրը՝ Պարսից Տաճատ թագավորի մոտ, և եկավ ներկայացավ Պարսից Տաճատ թագավորին:

Երբ սրանց տեսան՝ վերցրին երկուսին էլ, Արշակ թագավորին ու Վասակ սպարապետին, ու նրանց պահում էին արձակ ազատագունդ թիկնապահ զորքերի մեջ: Եվ Տաճատ թագավորը կանչեց Արշակ թագավորին և խիստ պատուհասեց նրան իբրև իր ծառային, իսկ սա իրեն նրա առաջ հանցավոր ու մահապարտ ճանաչեց: Այնուհետև Արշակ թագավորին նորից տվին նույն թիկնապահների գնդին, որ պահեն»:

[«Ապա յետ այսորիկ դարձեալ առաքեաց առ Արշակ արքայ Հայոց Տաճատ արքայ Պարսից և ասէ. Իսկ եթէ հաճ եմք ես և դու ընդ միմեանս, եկ տեսցուք զմիմեանս, և յայսմ հետէ, իբրև զհայր և զորդի լիցուք ընդ միմեանս: Ապա թէ ոչ տեսանես դու զիս, խնդրես զպատերազմ ի մէջ իմ և ի մէջ քո:

Իսկ Արշակ խնդրէր հաւատարիմ երդումն ուխտիւ ի նմա-

[1] Փավստոս, էջ 167:

նէն, զի յայսմ հետէ անկասկած երթիցէ առ նա։ Եւ նա եա բերել՝ ըստ օրինացն հաւատարիմ երդմանց թագաւորութեանն Պարսից՝ աղ, կնքել վարազ նկարագիր մատանեաւ, և յղեաց։ Զի թէ իցէ և զայն երդման ևս զհետ ոչ եկեսցէ, ապա կազմ լիցի տալ ճակատս պատերազմի ի մէջ իւրեանց։

Իսկ զայն ևս յորժամ տեսին և լուան ամենայն մարդիկն երկրին Հայոց, ստիպեցին բռնադբօսեցին զիւրեանց թագաւորն զԱրշակ և շտապեցին, զի յարիցէ գնասցէ երթիցէ յանդիման լիցի թագաւորին Պարսից Շապհոյ։ Յայնմ հետէ, թէ կամաւ կամաւ՝ և թէ ոչ կամաւ, յարեաւ թագաւորն Հայոց Արշակ, առ ընդ իւր զզօրավարն սպարապետն Հայոց զգայեակն իւր, խաղաց գնաց յերկրէն Հայոց յերկիրն Պարսից առ Շապուհ արքայ Պարսից. չոգաւ յանդիման եղև թագաւորին Պարսից Շապհոյ։

Իբրև տեսին զնոսա, արկին զերկոսեանն զարքայն Արշակ և զսպարապետն Վասակ, և պահէին զնոսա արձակ ի մէջ ապատագունդ փուշտիպան զօրացն։ Եւ կոչեաց արքայ Շապուհ զարքայ Արշակ, և իբրև զծառայ իւր պատուհասեաց զնա. և նա յանցաւոր և մահապարտ զանձն իւր առ նա համարեցաւ։ Դարձեալ անդրէն ի նոյն դունդ փուշտիպանաց եառն զԱրշակ արքայ ի պահեստ»][1]*։*

4. Նույնը, IV, գլ. ԾԴ՝

«Այս Պարսից Շապուհ թագավորը հրաման տվեց բերել շղթաներ և շղթայել Արշակի պարանոցը, ոտքերը և ձեռքերը երկաթով ու տանել նրան Անդմըշն, որն անվանում են Անհուշ բերդ, և նրան այնտեղ կապած պահել մինչև որ մեռնի։.....Այնուհետև Պարսից թագավորը հրամայեց մորթել Հայոց Վասակ զորավարին, մորթը հանել, լցնել խոտով և տանել նույն Անդմըշն բերդը, որ Անհուշ է կոչվում, որտեղ բանտարկել էին նույնպես և Արշակ թագավորին»։

[«Այս տայր հրաման Շապուհ արքայ Պարսից բերել շղթայս և արկանել ի պարանոցն Արշակայ և յոտս և ի ձեռս նորա երկաթս, և խաղացուցանել զնա ի յԱնդմըշն՝ զոր Անյուշ բերդն կոչեն, և պնդեալ զնա մինչև անդէն մեռցի։.... Ապա ետ հրաման թագաւորն Պարսից մորթել զզօրավարն Հայոց

[1] Փավստոս, *էջ 168—169*։

Վասակ, և զմորթն հանել և լնուլ խոտով, և տանել ընդ նոյն բերդ յԱնդմըշն՝ որ Անյուշն կոչեն, ուր արգելին իսկ զթագաւորն Արշակ»][1]*։*

Ամմիանոսի և Փավստոսի այս վկայությունները, ինչպես տեսնում ենք, ո՛չ միայն իրար չեն հակասում, այլ իրար լրացնում են։ Հիմնական տարբերությունն այդ երկու հաղորդագրությունների, գլխավորապես, այն է, որ Արշակ թագավորի մահը հայկական ավանդությունը զարդարել է վիպական-ստեղծական մանրամասնություններով[2]*, որ չեն կարող, հարկավ, պատմական լինել։*

Ըստ Փավստոսի՝ Արշակ Բ-ի Դրաստամատ անունով ներքինին, որը մեծ քաջագործություններ էր գործել պարսկական պատերազմում քուշանների դեմ, Շապուհից թույլտվություն էր ստացել մի օրով գնալ Խուժաստանի Անհուշ բերդը իր տիրոջ՝ Արշակի մոտ։ Դրաստամատը, մտնելով բերդը, արձակում է Արշակի կապանքները, լվանում է նրան, ագնիվ զգեստներ հագցնում և պատրաստում է նրա համար ճոխ սեղան։ Խնջույքի ժամանակ Արշակ Բ-ը, հիշելով առաջվա իր փառքը, վերցնում է սեղանի վրայից մրգի դանակը և վերջ է տալիս իր թշվառ կյանքին։ Այնուհետև նույն այդ դանակով իրեն սպանում է և նրա հավատարիմ ծառան՝ Դրաստամատը։

Արշակ թագավորի եղերական մահվան մասին հավանական է, անշուշտ, ժամանակակից պատմագիր Ամմիանոսի վերև բերված վկայությունը, համաձայն որի Արշակն Ագաբանա բերդում ենթարկվել էր մահապատժի։

Հայոց թագավորի պարսիկներին անձնատուր լինելու գլխավոր պատճառը Փավստոսը համարում է այն, որ 363 թվի դաշինքից ու երկար կռիվներից հետո Արշակունյաց թագավորությունը սկսել էր քայքայվել, որովհետև խախտվել էր նախարարական Հայաստանի քաղաքական միությունը, իսկ այդ, բնականաբար, վհատություն էր առաջ բերել զորքերի մեջ արքունի երկրում։ Ինչպես մանրամասն ու միանգամայն ճշգրիտ պատմում է Փավստոսը, Արշակունյաց ընդարձակ պետությունն այդ ժամանակ չափազանց փոքրացել էր, և հայերի թիվն էլ թագավորության մեջ խիստ պակասել էր[3]*։*

[1] Փավստոս, *էջ 172—174*։

[2] *Տե՛ս* Փավստոս, *V, գլ. Է*։

[3] *Տե՛ս* Փավստոս, *IV, գլ. Ծ*։

Փավստոսի վկայությամբ՝ այս աղետալի ժամանակաշրջանում Արշակունյաց թագավորությունից անջատվել էին և միացել հարևան պետություններին Հայաստանի հարավային, արևելյան և հյուսիսային բոլոր ծայրամասերը:

«Եվ սկսեցին,—վկայում է Փավստոսը,—անջատվել ու հեռանալ Հայոց թագավորի բանակից՝ թողին իրենց Արշակ արքային: Բայց այս հեռանալուն ամենից առաջ սկիզբ դրին մեծամեծ ավագանին: Նախ Աղձնիքի բդեշխը, և Նոշիրականի բդեշխը, և Մահկերտանը, և Նիհորականը, և Դասնտրեին, ու նաև Աղձնիքի բոլոր նախարարությունները: Աղձնիքի կողմերի տոհմի զորքն ու երկիրը ապստամբեցին Հայոց Արշակ թագավորից և գնացին անցան Պարսից Շապուհ թագավորի կողմը: Նրանք պարիսպ շինեցին Հայաստանի դիմաց, Զորա կոչված տեղում, դռներ դրին և իրենց աշխարհը Հայաստանից բաժանեցին:

Սրանից հետո Գուգարքի բդեշխը, իսկ հետո Զորա գավառի տերը, Կողբի գավառի տերը և նրանց հետ Գարդմանաձորի տերը: Եվ նրանք, որոնք մոտ էին նրանց ձեռին գտնվող կողմերին և նրանց շուրջն էին՝ ապստամբեցին միասին Հայոց Արշակ թագավորից և գնացին անցան Պարսից Շապուհ թագավորի կողմը: Ապստամբեցին, անջատվեցին Հայոց Արշակ թագավորից Հայոց ամուր գավառը Արցախի, ամուր գավառը Տմորիքի, ամուր գավառը Կորդիքի. այնուհետև նաև Կորդուք գավառի տերը գնաց անցավ Պարսից թագավորի կողմը:

Սրանից հետո անջատվեց Հայոց թագավորից նաև Հայոց թագավորի տան ձեռական իշխանությունից Ատրպատական աշխարհի մոտ գտնվող երկիրը, ետ կանգնեց Հայոց թագավորից ամուր աշխարհը Մարաց. ետ կանգնեց Հայոց թագավորից և Կաղբից աշխարհը. թողեց Հայոց թագավորին և անջատվեց Անձիտի տեր Սաղամուտը և նրա հետ Մեծ Ծոփքի իշխանը. նրանք անցան Հունաց թագավորի կողմը»:

[«Եւ սկսան սորսորել գնալ ի բանակէն Հայոց թագաւորին, թողին զիւրեանց արքայն Արշակ: Բայց նախ այսմ գնալոյ սկիզբն առնէին մեծամեծ աւագանին: Նախ բդեաշխն Աղձնեաց, և Նորշիրական բդեաշխն, և Մահկերտանն, և Նիհորականն, և Դասնտրէին, և ամենայն նախարարութիւն Աղձնեաց. և զօրն և տունն տոհմին Աղձնեաց կողմանն ապստամբեցին յարքայէն Հայոց Արշակայ և չոգան կացին առաջի

արքային պարսկաց Շապհոյ. և պարիսպ ածէին ի Հայոց կուսէ՝ որ Զորայն կոչեն, դրունս դնէին. և զատուցին զիւրեանց աշխարհն ի Հայոց:

Եւ յետ սորա Գուգարաց բդեաշխն, և յետ սորա Զորայ գաւառին տէրն, և Կողբայ գաւառին տէրն, և ընդ նոսա Գարդմանաձորոյ տէրն: Եւ որք մօտ էին ի նոսա կողմն այնր ձեռին, որ շուրջ էին զնոքօք, միահաղոյն ապստամբեցին ի թագաւորէն Հայոց Արշակայ. և չոգան գնացին առաջի կացին թագաւորին Պարսից Շապհոյ: Ապստամբեցին յԱրշակայ արքայէն Հայոց ամուր գաւառն Արձախայ, և ամուր գաւառն Տմորեաց, և ամուր աշխարհն Կորդեաց. ապա և տէր գաւառին Կորդուաց չոգաւ եկաց առաջի թագաւորին Պարսից:

Յետ այսորիկ ապստամբեաց ի թագաւորէն Հայոց և ձեռին իշխանութեանն տանն Հայոց թագաւորին, որ էր զԱտրպայական աշխարհաւն, յետս եկաց ի թագաւորէն Հայոց ամուր աշխարհն Մարաց. յետս եկաց յարքայէն Հայոց և աշխարհն Կաղբից. եթող զարքայն Հայոց և գնաց Սաղամուտ տէր Անձտեայ, և ընդ նմա իշխանն Մեծի Ծոփաց. և գնացին առ թագաւորն Յունաց»][1]:

Պատմական Հայաստանի ծայրամասերի այս անջատումը և նրա պետական նախկին հզորության քայքայումը Արշակունյաց թագավորությանը ծանր ու անբուժելի մի հարված հասցրին, որից հետո նա, ինչպես կտեսնենք, այլևս չկարողացավ ուշքի գալ և վերականգնել քաղաքական իր նախկին ազդեցիկ դրությունը:

[1] Փավստոս, IV, գլ. Ծ, էջ 162—163 (Վենետիկ, 1889):

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԴ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՊԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԵՎ ՆՐԱ ՎԱՐԱԾ ԱՐՏԱՔԻՆ ՈՒ ՆԵՐՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1. Հայաստանի առանձին շրջանների դիմադրությունը Պարսկաստանին Արշակ Բ-ի բանտարկությունից հետո:— 2. Արտագերք բերդի պաշարումը.— Գդակ ներքինու և Արտավանի բանակցությունները Փառանձեմ թագուհու հետ և Արտագերքը պաշարող պարսկական զորքերի կոտորածը.— թագաժառանգ Պապի փախուստը Արտագերքից:— 3. Հռոմեական կայսրության անհաստատուն քաղաքականությունն Արևելքում:— 4. Պապի վերադարձը և պարսիկների նոր ավերածությունները Հայաստանում.— Արտագերքի առումը և Փառանձեմ թագուհու բանտարկումը:— 5. Փավստոսի վկայությունների հակապատմական մանրամասնությունները:— 6. Մարկվարտի կարծիքով՝ սպարապետ Արտավանը, հավանորեն, Վասակ Մամիկոնյանի հաջորդն էր:— 7. Հեքիաթային, ստեղծական և խրատական տարրերը Փավստոսի վկայություններում:— 8. Արժեքավոր պատմական հիշողությունները Փավստոսի մոտ.— Զիկ և Կարեն.— Արտագերքի պաշարման 13 ամիս տևողությունը:— 9. Հայաստանի քաղաքների ավերումը և նրանց բնակչության բռնի գաղթեցումը Ասորեստան և Խուժաստան:— 10. Շապուհ Բ-ի միջամտությունը Վրաստանի գործերին:— 11. Հռոմեական զորքի առաքումը Հայաստան Արինթեոս կոմսի հրամանատարությամբ և Պապի թագավորեցումը.—Պապը, հավանորեն, որդին էր Գնելի և Փառանձեմի:—12 Պապի և Շապուհ Բ-ի բանակցությունները.— Գդակի ու Արտավանի սպանությունը.— պարսկական կայազորների վտարումը հայկական շրջաններից.—հռոմեական զինված ուժերի գործողությունները Վրաստանում:— 13. Պարսկական զորքերի վերստին ներխուժումը Հայաստան.— հռոմեական-հայկական միացյալ զորքերի հաղթությունը Բագավանի մոտերքում.— Մուշեղ Մամիկոնյանի հաղթական արշավանքները և Հայաստանի ծայրագավառների վերանվաճումը:— 14. Պապ թագավորի վերանորոգչական գործունեությունը.—պայքար անչափ զորեղացած եկեղեցականության դեմ.—տասանորդի և պտղի վերացումը.— գյուղական եկեղեցականությանը տրված յոթ հողաբաժիններից հինգի գրավումը հօգուտ արքունիքի.—երեցների և սարկավագների ընտանիքների անդամների զինվորական պարտադիր ծառայությունը:— 15. Հոգևորականության անհաշտ ատելությունը դեպի Պապը.— Պապի մասին հերյուրված անհեթեթ առասպելները.— Ներսես կաթողիկոսի թունավորման սուտ ամբաստանությունը:— 16. Հուսիկ-Շահակի նշանակումը կաթողիկոս և հայ եկեղեցու անկախությունը:— 17. Պապի ձերբակալությունը Տարսոնում.— նրա փախուստը և վերադարձը Հայաստան.— Ամմիանոսի հաղորդած հետաքրքիր տեղեկությունները այդ մասին:— 18. Պապի ձգտումը հաշտվելու Պարսկաստանի հետ:— 19. Նրա եղեռնական սպանությունը Վաղես կայսեր հրամանով:— 20. Հայ իշխանների մասնակցությունն այդ ծանր հանցագործությանը:— 21. Պապ թագավորի իշխանության տևողությունը:

Արշակ Բ-ի և Վասակ Մամիկոնյանի ձերբակալությունից հետո Շապուհ Բ-ը աշխատեց վերջնականապես տիրել Հայաստանին և այս երկիրը սերտ կերպով կապել Պարսկաստանի հետ: Բայց նվաճել Հայաստանը, ինչպես շատ ճիշտ մատնանշել է Նյոլդեկեն[1], հեշտ չէր: Շնորհիվ իր աշխարհագրական դիրքի նա բաժանված էր բազմաթիվ բնական ու անջատ մասերի, որոնց մեջ իշխում էին գրեթե անկախ առանձին նախարարությունները: Հայաստանի այս շըրջանների մի մասը նաև Արշակ Բ-ի բանտարկությունից հետո ցույց տվեց Պարսից զորքերին համառ դիմադրություն:

368 թվին Շապուհ Բ-ը Հայաստան ուղարկեց պարսկական զորքով երկու հայ իշխանների՝ Գդակ ներքինուն և Արտավան զորավարին, որոնք Մերուժան Արծրունու ու Վահան Մամիկոնյանի նման փախել էին և անցել Պարսկաստանի կողմը: Կարելի է ենթադրել, որ 368 թվի հենց այս արշավանքի ժամանակ պարսկական զորքերը գրավել էին արքունի երկրի հարավ-արևելյան շրջանները, ինչպես այդ վկայում է Ամմիանոսը[2]:

Նույն 368 թվի աշնանը պարսկական զորքերը Գդակի ու Արտավանի առաջնորդությամբ պաշարեցին Արտագերք բերդը, ուր ամրացել էին Փառանձեմ թագուհին և թագաժառանգ Պապը: Այս բերդը, որ գտնվում էր Արշարունիք գավառում (այժմյան Կաղզվանի կողմերում), դժվար էր վերցնել թե սրա բնական ամրությունների և թե ձմեռվա ցրտերի պատճառով: Գդակը և Արտավանը որոշեցին բանակցել Փառանձեմի հետ և համոզել նրան, որ անձնատուր լինի: Նրանք մոտեցան պարսպին և, ներս մտնելով բերդ իբրև պատգամավորներ, հորդորում էին թագուհուն դադարեցնել ապարդյուն դիմադրությունը և մեղմացնել դրանով Շապուհի բարկությունը: Բայց Փառանձեմի լաց ու կոծը և թշվառ վիճակը նրանց վրա այնպիսի խոր տպավորություն գործեցին, որ նրանք ամեն կերպ օգնեցին պաշարվածներին և, դավաճանելով Շապուհ Բ-ին, իրենք հենց կո-

[1] *Nöldeke*, Aufsätze zur persischen Geschichten, Leipzig, 1887, էջ 101:

[2] *Ammianus Marc.*, XXV, 7, 12.

տորել ավին պարսկական զորքերը գիշերվա ընթացքում, երբ սրանք
հանգիստ ու անզորր բնած էին:
Պարսկական կենդանի մնացած զորքերի փախուստից ու պա-
շարման վերացումից հետո՝ Փառանձեմ թագուհու խորհրդով թագա-
ժառանգ Պապն ուղարկվեց հռոմեական երկիրը: Վաղես կայսրը
նրան ընդունեց պատվով և բնակության տեղ հատկացրեց Պոնտոսի
Նեոկեսարիա քաղաքում, ուր նա ապրեց կայսերական ծախքով:
Գլակը և Արտավանը, որոնք այժմ Փառանձեմի գլխավոր խոր-
հրդատուներն էին, աշխատեցին հռոմեական օգնությամբ Արշա-
կունիների գահի վրա նստեցնել Փառանձեմի որդի Պապին: Լինելով
Հայոց թագավորության խնամակալների դերում՝ նրանք պատգա-
մավորություն ուղարկեցին Վաղեսի մոտ և խնդրեցին, որ նա թա-
գավորեցնեն Հայաստանում Պապին և տա օգնական զորք[1]:
Հռոմեական կայսրությունը չէր կարող, ինարկե,չգիտակցել, որ
Սասանյան Պարսկաստանի իշխանության հաստատումը Հայաստա-
նում ո՛չ միայն վարկաբեկիչ էր իր հեղինակության համար արևել-
յան երկրներում, այլև մշտական ու անհանդուրժելի մի վտանգ էր
Հայաստանին սահմանամերձ Հռոմեական Միջագետքի, Կապադով-
կիայի և Պոնտոսի համար: Կայսրության քաղաքական շահերի հենց
տեսակետից Վաղեսը, բնականաբար, պետք է աշխատեր վերա-
կանգնել այն քաղաքականությունը, որ Արշակունյաց թագավորու-
թյան հանդեպ վարել էին Կոստանդիանոս Մեծը և Կոստանդիոսը:
Պետք է ասել, որ դեռևս Արշակ Բ-ի թագավորության վերջին
տարիներում, 365 թվին, Վաղեսը Պոլսից եկել էր Բիթանիա և ար-
դեն գալիս էր Անտիոք, որովհետև որոշել էր անմիջական հսկողու-
թյուն ունենալ արևելյան գործերի վրա, բայց Պրոկոպիոսի ապըս-
տամբությունը և վեստգոթերի մեծ վտանգը հարկադրել էին նրան
վերադառնալ Արևմուտք: Այս կայսեր քաղաքականությունը Հայաս-
տանի նկատմամբ բավական տատանվող էր ու անհաստատուն, և
այդ բացատրվում է պարզապես նրանով, որ Հռոմեական կայսրու-
թյունն ինքը ևս այդ ժամանակ գտնվում էր ծանր ու դժվարին կա-
ցության մեջ և Վաղենտիանոսն ու Վաղեսը շարունակ զբաղված էին
Արևմուտքում, ուր նրանց գլխավոր նպատակն էր կայսրության
պահպանությունը ներխուժող բարբարոս ժողովուրդների հարձա-
կումներից:
369 թվի գարնանը Վաղեսը հրամայեց Տերենտիոս դքսին տանել
Պապին (368—374) Հայաստան և դնել նրան հայկական կառավա-

1 *Ammianus Marc.*, XXVII, 12, 9.

րության գլուխ առանց թագավորական տիտղոսի[1]: Այն դիտավորու-
թյամբ էր այդ արվում, որպեսզի Պարսկաստանը չմեղադրե հռո-
մայեցիներին դաշինքը խախտելու մեջ: Բացի այդ, համաձայն Հո-
վիանոսի դաշնագրի՝ Պապին չտրվեց զինվորական օգնություն:
Հռոմեական կայսրության այս զուսպ ու զգուշավոր միջամտու-
թյունը հայկական գործերին, որ միանգամայն անօգուտ էր ու ան-
բավարար Պապի համար, խիստ աղետալի հետևանքներ ունեցավ
Հայաստանի համար:
Շապուհ Բ-ը, տեղեկություն ստանալով այս միջամտության մա-
սին, ինչպես ասում է Ամմիանոսը, գազանի նման կատաղեց և,
հավաքելով մեծ զորք, մտավ Հայաստան և մտանեց երկիրը նոր
ավերածության: Սարսափահար եղած Պապը ու նաև նրա հետ Գղա-
կը և Արտավանը փախան Լազիկեի կողմերի լեռնային շրջանը, ուր
նրանք հինգ ամիս թաքնվեցին թավ անտառների ու լեռնային կիր-
ճերի մեջ[2]:
Պարսկական այս մեծ արշավանքի ժամանակ Շապուհի զորքե-
րը նորից պաշարեցին Արտագերքը, ուր ապաստանել էր և դեռ
մնում էր Փառանձեմը: Այս անգամ պաշարող բանակի առաջնորդ-
ներն էին, ինչպես երևում է Փավստոսի վկայություններից, Պարսից
զորավարներ Զիկը և Կարենը: Պարսիկներն ուժեղ պաշարումից հե-
տո, երբ բերդի կայազորը բոլորովին ուժասպառ էր եղել, կարողա-
ցան Արտագերքն առնել (հավանորեն, 369 թվի դեկտեմբեր ամ-
սին[3]): Նրանց ձեռքն ընկան այստեղ Արշակունիների գանձերը ու
նաև Փառանձեմ թագուհին, որը, եթե հավատանք Փավստոսի վկա-
յությանը (IV, գլ. ԾԵ), նախատալից կերպով մահապատժվեց Շա-
պուհի հրամանով:
Արտագերքի առումը և Փառանձեմի դերի բնույթը հանգամանո-
րեն նկարագրված են թե ժամանակակից Ամմիանոսի և թե Փավստո-
սի մոտ, բայց այդ դեպքերը նրանց մոտ տեղ-տեղ պատմված են
միանգամայն տարբեր կերպով: Տարբերությունները խիստ հետա-
քրքիր են և առանձնապես ուսանելի են, որովհետև պարզ ցույց են
տալիս, որ թեև Փավստոսի նկարագրությունները կարևոր պատմա-
կան հիշողություններ են, սակայն ենթարկվել են վիպական-բա-
նաստեղծական մշակության և ունեն շինծու և հակապատմա-
կան մանրամասնություններ ու նույնիսկ միտումնավոր աղավա-
ղումներ:

1 Նույնը, 12, 10:
2 *Ammianus Marc.*, XXVII, 12, 11.
3 *Տե՛ս Markwart*, Untersuchungen zur Geschichte von Eran, I, էջ 220:

Արտագերքի պաշարման ու առման մասին Ամմիանոսի և Փավստոսի վկայությունները, որոնցից հատկանշալի լինեն Փավստոսի Պատմության առանձնահատկությունները, մեջ ենք բերում թարգմանաբար ընդարձակ բովանդակությամբ:

1. Ամմիանոս, XXVI, 12, 5—8՝

«Նա [Շապուհ Բ-ը] հանձնեց Հայաստանը ներքինի Գղակին (Cylaces, Gylaces) և Արտավանին (Artabannes), որոնց առաջներում նա ընդունել էր իր մոտ իբրև փախստականների: Սրանցից մեկը, ինչպես ասում են, եղել էր առաջ ցեղի պետ (gentis preafectus), իսկ մյուսը՝ զորքերի առաջնորդ (magister armorum):

Նա հանձնարարեց սրանց, որ մեծ ջանք գործ դնեն և ոչնչացնեն Արտագերք բերդաքաղաքը, որն ամուր պարիսպ ուներ ու ռազմական հզոր ուժեր և ուր պահվում էին Արշակի գանձերը և գտնվում էին նրա կինը որդու հետ:

Համաձայն այդ կարգադրության առաջնորդները սկսեցին պաշարումը: Բայց, որովհետև չէր կարելի մոտենալ այդ ամրությանը, որ տեղավորված էր լեռան զառիվայրում, մանավանդ որ այդ ժամանակ գետինը ծածկված էր ձյունով ու սառույցով՝ ներքինի Գղակը, որն ընդունակություն ուներ կանանց փաղաքշանքով հրապուրելու՝ Արտավանի ուղեկցությամբ եկավ համարձակ բերդաքաղաքի պարսպի մոտ, ստացած լինելով երաշխավորություն իր անձի ապահովության համար: Եվ երբ նա համաձայն իր խնդրի թույլտվություն ստացավ ուղեկցի հետ ներս մտնելու բերդ՝ նա թագուհուն և կայազորին սպառնալից զգուշացումներ արեց, որպեսզի նրանք շուտ անձնատուր լինեն և դրանով մեղմացնեն Շապուհի հուզմունքը, որի վայրագությունն անսահման է:

Մինչդեռ նրանք երկար խոսում էին այդպես և թագուհին իր ամուսնու սոսկալի վիճակն էր ողբում՝ սրանք, բերդաքաղաքի անձնատրության ամենաբուռն ջատագովները, խղճահարվեցին և իրենց մտադրությունը փոխեցին: Հույս ունենալով, որ ապագայում առատ վարձատրություն կստանան [հռոմայեցիներից]՝ նրանք գաղտնի համաձայնության եկան, որ գիշերվա որոշ ժամին բերդաքաղաքի դռները հանկարծակի բաց արվեն և բավական ուժեղ մի զորամաս, մահաբեր զենքերը ձեռին, անսպասելի կերպով հարձակվի թշնամու բանակի վրա:

Սրանք հանձն էին առնում նպաստել իրենց մոտ դավաճանությանը և աշխատել, որ դավադրությունը գաղտնի մնա:

Համաձայնությունը երդումով հաստատելուց հետո՝ սրանք հեռացան բերդից և պաշարող զորքին հավատացրին, որ բերդաքաղաքի մեջ պաշարվածները խնդրել են իրենց տալ երկու օր խորհրդածելու ժամանակ, և այսպիսով առաջացրին կատարյալ անփութություն:

«Արդ՝ գիշերվա ժամին, երբ բոլորն անվրդով խոր քնի մեջ էին՝ բերդաքաղաքի դռները բացվեցին և իսկույն դուրս եկավ այնտեղից զորամասը. սրանք, սրերը հանած, գաղտագողի մոտեցան կամացուկ քայլերով, հարձակվեցին թշնամու բանակի վրա, որը վտանգը չէր զգում, և կոտորեցին, առանց դիմադրության հանդիպելու, քնած թշնամիների մի մեծ բազմություն»:

2. Նույնը, XXVII, 11—12՝

«Լուր ստանալով այս անցքերի մասին՝ Շապուհը գազանի նման կատաղեց, հավաքեց ավելի մեծ զորք և սկսեց Հայաստանը բացահայտ կերպով կողոպտել ու ավերել: ...Բայց երբ նա նկատեց, որ ձմեռվա ծանր եղանակների պատճառով իզուր աշխատանք է վատնելու՝ պտղատու ծառերը այրեց, ամրացրեց բերդերն ու ամրոցները, որ վերցրել էր ուժով կամ դավաճանության շնորհիվ, և այնուհետև իր զորքերի ամբողջ բազմությունը կենտրոնացրեց Արտագերքի շուրջը:

Եվ երբ մի շարք կռիվներից հետո պաշտպանվողներն ուժասպառ եղան՝ բաց անել տվեց դռները և բերդաքաղաքը ա-
բեց: Այդ տեղից դուրս հանվեց Արշակի կինը, որին նա տա-
բավ իր հետ գանձերի հետ միասին»:

3. Փավստոս, IV, գլ. ԾԵ՝

«Այնուհետև Պարսից թագավոր Շապուհը Հայոց աշխարհի դեմ ուղարկեց իր իշխաններից երկուսին՝ մեկի անունը Զիկ, մյուսինը Կարեն՝ հինգ հարյուր բյուր զորքով, որ գան և Հայոց աշխարհը քանդեն ու խորտակեն: Նրանք եկան հասան Հա-
յոց աշխարհը: Երբ Հայոց աշխարհի տիկինը, Հայոց Արշակ
թագավորի կին Փառանձեմը, տեսավ, որ Պարսից թագավորի զորքերը եկել լցվել էին Հայոց աշխարհը՝ վերցրեց իր հետ մոտ տասնմեկ հազար մարդ՝ ընտիր սպառազեն պատերազմող ազատներ և, Պարսից զորքերից խույս տալով, գնաց մտավ նրանց հետ միասին Արտագերք բերդը, որը գտնվում էր Արշարունիք երկրում:

Ապա Պարսից զորքերը եկան հասան, նստեցին բերդի շուրջը՝ պահակներ դրին, շրջապատեցին ու պաշարեցին: Նրանք

ամրացան ներսում, հույս դնելով տեղի ամրության վրա, իսկ սրանք բանակ դրին և նստան զուրսը ձորերի շուրջը. բայց բերդը չկարողացան առնել, որովհետև տեղը խիստ ամուր էր: Ամբողջ երկիրն ավերեցին, քանդեցին. դուրս էին գալիս և ամբողջ երկիրն ավարի էին առնում և, գերելով շրջակա գավառներից ու աշխարհներից մարդիկ ու անասուններ՝ բերում էին իրենց բանակատեղը: Կենսամթերք բերում էին ուրիշ տեղերից, ուտում էին և բերդը պաշարման մեջ էին պահում:

Իսկ Պապը, Արշակի որդին, այդ ժամանակ Հայոց աշխարհում չէր, որովհետև Հունաց թագավորի մոտ էր: Արդ՝ երբ Հայոց պատապզունդ բանակն այս ամենը լսեցին՝ գնացին խնդրելու իրենց համար թիկունք ու օգնություն. նրանց զորագլուխն էր Մուշեղը, Վասակ սպարապետի որդին: Նրանք գնացին իրենց արքայորդու մոտ և բանակցում էին Հունաց թագավորի հետ ու համոզում նրան, որ իրենց թիկունք լինի: Իսկ Հայոց երկիրը, Հայոց աշխարհի տիկնոջ Փառանձեմի մոտ, նրանք շարունակ ուղարկում էին դեսպաններ, որ նա դիմանա և բերդը պարսիկներին չտա: Եվ դեսպաններ էին գալիս շուտշուտ միմյանց հետևից, շաբթե շաբաթ, նրա Պապ որդու կողմից և գաղտնի կերպով գաղտնի դռնով մտնում էին բերդը մի ինչոր հնարքով ու քաջալերում էին տիկնոջը. և բերդի պաշարումը տևեց տասներեք ամիս: .... Եվ տասնչորսերորդ ամսվա հարվածներից հետո, բերդում եղած գաղթականների վրա հասան աստծուց՝ բերդում գտնվողների մեջ մահ տարածվեց, որն իբրև պատուհաս աստծուց էր գրկված: Նրանք, որոնք պատսպարված էին, Փառանձեմ տիկնոջ առաջ ուտում, խմում և ուրախանում էին՝ և հանկարծ մի ժամում մեռնում էին հարյուր մարդ, մյուս ժամում երկու հարյուր, և պատահում էր, որ հինգ հարյուր մարդ էին մեռնում հանգիստականներից սեղան նստած ժամանակ: Եվ այսպես օրեցօր կոտորվում էին: Մահը սկսվելուց մի ամիս չբաշեց, որ բոլորը կոտորվեցին, այն է՝ մոտ տասնմեկ հազար մարդ և մոտ վեց հազար կին. մի ամիս չանցավ, որ բերդում եղածները բոլորը կոտորվեցին:

Բայց բերդում մնաց Փառանձեմ տիկինը երկու նաժիշտով: Այսպ գաղտնի կերպով եկավ մտավ բերդը Հայր մարդպետ ներքինին և տիկնոջը խիստ նախատեց իբրև մի բոզի: Նա սկրսեց թշնամաբար անարգել Արշակունիների տոհմը, թե չարաշուք են ու վատթար, իրենց աշխարհն էլ կորցրին: Տեղն է,

ասում է, ինչ որ ձեզ պատահեց, ու նաև այն, ինչ որ ձեզ պատահելու է: Դուրս ելավ գաղտագողի և փախավ:

Իսկ տիկին Փառանձեմը, երբ տեսավ, որ մենակ է մնացել՝ բերդի դուռը բացեց և թողեց, որ Պարսից զորքը մտնի բերդ: Սրանք եկան, տիկնոջը բռնեցին ու բերդից իջուցին: Վեր ելան Հաբարձրացան բերդը Պարսից զորավարները, ավար առան Հայոց թագավորի գանձերը, որ գտնվում էին բերդում. և սկսեցին կրել ու ցած իջեցնել բոլոր գանձերը: Ինն օր ու ինը գիշեր անընդհատ իջեցնում էին՝ ինչ որ գտան Արտագերք բերդի մեջ, և տիկնոջ հետ միասին հետները տարան»:

[«Այսպ արձակեաց արքայն Պարսից Շապուհ ի վերայ աշխարհին Հայոց երկուս ոմանս յիշխանաց անուի իւրոց, միումն Զիկ անուն և միումն Կարէն, հինգ հարեւր բիւրով. զի եկեսցեն բրեսցեն քանդեսցեն զաշխարհն Հայոց: Եւ եկին հասին աշխարհին ի վերայ երկրին Հայոց: Այսպ իբրև եւես տիկին Հայոց կինն Արշակայ թագաւորին Հայոց Փառանձեմ հին Հայոց կինն Արշակայ թագաւորին Հայոց Փառանձեմ զզօրս թագաւորին Պարսից, եթէ եկին լցին զաշխարհս Հայոց, առեալ ընդ իւր մարդիկ իբրև մետասան հազար՝ ազատս ընտիրս սպառազէնս պատերազմողս, և հանդերձ նոքօք դիմեաց եմուտ ի բերդն Արտագերից, որ ի յերկրին Արշարունեաց՝ յերեսաց զօրացն Պարսից:

Այսպ եկին հասին ամենայն զօրքն Պարսից, շուրջ զբերդաւն նստէին, պահ արկանէին, պատեցին պաշարեցին: Իսկ նոքա ի ներքս ամրացեալք, յուսային ի տեղւոյն ամրութիւնն. և նոքա լակիշ ածեալ, նստէին արտաքուստ շուրջ զձորօքն: Եւ նստան շուրջ զբերդաւն ամիսք երեքտասան, և առնուլ զբերդն ոչ կարացին, զի կարի ամուր էր տեղին: Աւերեցին քանդեցին զերկիրն ամենայն. ելանէին առնուին աւար զերկիրն ամենայն, և յաշխարհացն ածէին զգերի մարդկանն շուրջ ի գաւառացն և յաշխարհացն ածէին զգերի մարդկանն շուրջ ի գաւառացն, այլուստ բերէին համբարս, և զանասնոյ ի լակիշն իւրեանց. այլուստ բերէին համբարս, և ուտէին. և զբերդն պաշարել պահէին:

Իսկ Պապ որդին Արշակայ ոչ դիպեցաւ անդ ի Հայոց աշխարհին, զի առ թագաւորն Յունաց դիպեցաւ: Զի թէպէտ և գայր ամենայն լուան պատապզունդ բանակն Հայոց, չոգան խնդրել թիկունս օգնականութեան. և էր նոցա զօրագլուխ Մուշեղ որդին Վասակայ սպարապետին: Եւ չոգան նոքա առ իւրեանց արքայորդին. մինչ դեռ նոքա ընդ թագաւորն Յունաց խօսէին, հաւանեցուցանէին զնոսա թիկունք լինել իւրեանց.

խուեանց: Իսկ յերկիրն Հայոց սակայ առաքէին զեսպանս առ տիկին աշխարհին առ Փառանձեմ, զի ժուժկալ լինիցի բերդին և մի՛ ձեռս տացէ ի պարսիկս: Եւ զեսպանս սակայ սակայ յորդւոյ նորա ի Պապայ զմիմեանց զկնի ի շաբաթու շաբաթու եկեալ հասանէին. և գաղտ ընդ գաղտնի դուռն ուրեմն մերձնաւորութեամբ ի բերդն մտանէին տային քաջալերս տիկնոջն. և յերկարեաց ի բերդին ամիսս երեքտասան պաշարումն: ......

Եւ եղև յետ չորեքտասաներորդ ամսեանն հարուածոյ, որ յԱստուծոյ հասին ի վերայ զաղթականին բերդնորդեացն. զի մահ անկաւ ի վերայ նոցա, որք ի բերդին էին, զի ի տեառնէ հասին պատուհասք: Առաջի տիկնոջն Փառանձեմայ ուտէին և ըմպէին և ուրախ լինէին որք էին ի տաճարին. յանկարծակի ի միում ժամու հարիւր այր, և ի միւսում երկերիւր, և էր՝ զի հինգ հարիւր այր մեռան ի բազմականին՝ յորժամ բազմեալ կային. և օր ըստ օրէ սատակէին: Յորժամ սկսան, զամիս մի ոչ յերկարեաց՝ զի սատակեցան առ հասարակ. զի էին արք իբրև մետասան հազար, և կանայք իբրև վեց հազար. զի ամիս մի ոչ կացին, զի ամենեքեան որ էին ի բերդին՝ առ հասարակ սատակեցան:

Բայց մնաց ի բերդին Փառանձեմ տիկին, երկու նաժշտօք: Ապա եկն եմուտ գաղտ ի ներս ի բերդն Հայր մարդպետ ներքինին, և թշնամանեաց զտիկինն մեծապէս իբրև զբոզ մի: Սկսաւ դնել թշնամանս ազգին Արշակունեաց, զի վատախորհուրդք են վատանշանք, կորուսին զաշխարհս ես. իրաւի անց ընդ ձեզ այդ, և այլ զի անցցէ: Ել գաղտուկ և փախեաւ:

Իսկ տիկինն Փառանձեմ իբրև ետես՝ եթէ միայն մնացի, երաց զդուռն բերդին, և թողացոյց զօրսն Պարսից մտանել ի բերդն: Եւ եկին կալան զտիկինն և իջուցին ի բերդէն: Ելանէին ի բերդն ի վեր զօրավարն Պարսից, գերէին զգանձս թագաւորին Հայոց, որ կային ի բերդին. և սկսան կրել իջուցանել զամենայն գանձսն, որ կայր ի բերդին: Զինն տիւ և զինն գիշեր համակ իջուցին զոր գտին յԱրտագերսն բերդին, հանդերձ տիկնաւն խաղացուցին][1]:

4. Փավստոս, IV, գլ. ԾԵ՝

«Եվ երբ նրանք գնացին տարան Փառանձեմ տիկնոջը Պարսից աշխարհը և Հայաստանի բոլոր գերիներին, գանձերն ու

[1] Տե՛ս Փավստոսի պատմություն Վենետիկի 1889 թվի հրատարակությունը, էջ 174—176:

Փառանձեմ տիկնոջը թագավորի առաջ բերին՝ Պարսից թագավորը մեծ շնորհակալություն հայտնեց իր զորավարներին: Եվ որովհետև Պարսից Շապուհ թագավորը ուզեց թշնամաբար անարգել Հայոց աշխարհի ազգն ու թագավորությունը՝ հրաման տվեց ժողովել իր բոլոր զորքերը, իր մեծամեծներին ու փոքրերին՝ բոլոր իր աշխարհի մարդկանց, որ իր իշխանության տակն էին, ու հրամայեց նաև բերել այս բազմության մեջ Հայաստանի Փառանձեմ տիկնոջը: Նա հրամայեց շինել հրապարակում տանջանքի գործիք, որը հրամայեց ձգել տիկնոջ վրա և ենթարկել Փառանձեմ տիկնոջը անասնական պղծության պոռնկական խառնակության: Այս կերպ սպանեցին Փառանձեմ տիկնոջը»:

[«Եւ եղև իբրև չոգան տարան զտիկինն Փառանձեմ յերկիրն Պարսից, և զայլ ամենայն գերութիւնն Հայոց և զգանձսն կալան առաջի թագաւորին և զտիկինն Փառանձեմ, շնորհ մեծ ունէր թագաւորն Պարսից իւրոց զօրավարացն: Եւ իբրև կամեցաւ թագաւորն Պարսից Շապուհ թշնամանս առնել ազգին աշխարհին Հայոց և թագաւորութեանն, ետ հրաման ժողովել զամենայն զզօրս իւր և զմեծամեծս իւր և զփոքունս և զամենայն մարդիկ աշխարհին իւրոյ, որ ինքն իշխէր, և ի մէջ ամբոխին ածել զտիկինն Հայոց զՓառանձեմն: Եւ հրամայեաց ի հրապարակին խոն առնել հրապոյրս մեքենայից, որով հրամայեաց զկինն արկանել, և արձակել տիկնոջն Փառանձեմայ ի խառնակութիւն պոռնկութեանն անասնական պղծութեանն: Այսպէս սատակեցին զտիկինն Փառանձեմ»][1]:

Արտագերքի պաշարումը և առումը և Փառանձեմ թագուհու գերի ընկնելը, ինչպես տեսնում ենք, Ամմիանոսի և Փավստոսի մոտ պատմված են տարբեր կերպով: Ամմիանոսի վկայությունից երևում է, որ Արտագերքը պաշարված է եղել երկու անգամ, իսկ Փավստոսի մոտ այդ երկու պաշարումը դառել է մի անընդհատ շարունակվող պաշարում, որը տևել է տասնչորս ամիս: Ճիշտը, իհարկե, Ամմիանոսի հաղորդած տեղեկությունն է:

Ուշագրավ է, որ Գնելի ու Արտավանի կարևոր դերն Արտագերքի առաջին պաշարման ժամանակ և այդ պաշարումից հետո Փավստոսի մոտ բոլորովին լռության է մատնված:

Մանրամասն այս խնդիրը քննության է առնված Մարկվարտի

[1] Տե՛ս Փավստոս, Վենետիկ, 1885, էջ 178:

աշխատություններում[1]: Ամմիանոսի մոտ հիշատակված Գղակը (Cylaces, Gylaces), ինչպես միանգամայն ճիշտ մատնանշել է Մարկվարտը, Փավստոսի մոտ հիշված Հայր մարդպետ Գղակն է (Վենետիկյան տպագրի մեջ «Դղակ» ընթերցվածը պետք է ուղղել և կարդալ «Գղակ»): Իսկ «զորքերի առաջնորդ» (magister armorum) կամ սպարապետ Արտավանը (Artabannes), որը Փավստոսի մոտ բնավ չէ հիշատակված, Մարկվարտի կարծիքով, հավանորեն, Պարսկաստանում մահապատժի ենթարկված սպարապետ Վասակ Մամիկոնյանի անմիջական հաջորդն էր, որն իր ազգական Վահան Մամիկոնյանի հետ անցել էր պարսիկների կողմը:

Մարկվարտի ենթադրությունը, որ այս Արտավանը կարող է թերևս նույնացվել Մամիկոնյան Վաչե սպարապետի որդի Արտավազդի կամ Մանուել Մամիկոնյանի հայր Արտաշինի հետ[2], իմ կարծիքով, վիճելի է և չէ կարող հաստատուն համարվել: Մարկվարտը մատնացույց է արել նաև, որ Արտավանի գործունեությունը և նրա ու Գղակի 369 թվի բանակցությունները Վաղեսի հետ Փավստոսի մոտ թյուրիմացաբար վերագրված են սպարապետ Մուշեղ Մամիկոնյանին[3]:

Առանձնապես ուշագրավ է այն, որ Փավստոսի Պատմության վերոհիշյալ վկայությունների մեջ, որոնց աղբյուրը վիպական-բանաստեղծական ավանդությունն էր, մեծ տեղ են բռնում հեքիաթային, առեղծական և խրատական տարրերը, որոնք ոչ մի առնչություն չունեն գիտական պատմության հետ: Օրինակ, միանգամայն հեքիաթային բնույթ ունի Արտագերքի անկումն իբրև հետևանք աստվածային պատուհասի, որի պատճառով բերդի բոլոր պաշտպաններն ու բնակիչները, թվով 17.000 հոգի, ամենակարճ ժամանակում կոտորվել էին և կենդանի էր մնացել միմիայն Փառանձեմ թագուհին երկու նաժիշտով: Առեղծական բնույթ ունի, անշուշտ, նաև ներքինի Հայր մարդպետի գաղտնի կերպով բերդ մտնելը ու թագուհուն հայհոյելը և Արշակունիներին նախատելը:

Ամմիանոսը, ինչպես տեսանք, վկայում է, ընդհակառակը, որ ներքինի Գղակը և Արտավանը, զգացվելով թագուհու ողբալի վիճակից, անցել էին նորից Արշակունիների կողմը: Թեև պատմական բոլոր հին և նոր երկերում հավանական է համարվել Փավստոսի վերոհիշյալ վկայությունը Փառանձեմ թագուհու նախատալից մահապաժման մասին Շապուհ Բ-ի հրամանով՝ այդ ևս դժվար է պատմական համարել: Փառանձեմի անարգ մահը, ըստ երևույթին, նույնպես վիպական-առեղծական պատմվածք է խրատական նպատակով: Ամմիանոսը, ինչպես տեսանք, այդ մասին ոչինչ չգիտե: Նա հաղորդում է միայն, որ Փառանձեմին գերի էին վերցրել և տարել Պարսկաստան:

Մեր այս դիտողությունները պարզ ցույց են տալիս, որ Փավստոսի Պատմությունը, որը, մեծ մասամբ, վիպական-բանաստեղծական գրվածք է, պետք է գործածել իբրև չորրորդ դարի պատմության աղբյուր ամենամեծ զգուշավորությամբ:

Արժեքավոր ու պատմական են համարվում Փավստոսի վերև բերված վկայություններից երկուսը: Համաձայն Փավստոսի վկայության՝ Արտագերքը պաշարող պարսկական զորքի առաջնորդներն էին ո՛չ թե Գղակը և Արտավանը, այլ Զիկը և Կարենը: Այս պարսիկ զորավարները, ինչպես վկայում է դարձյալ Փավստոսը[1], կառավարիչ էին կարգվել Հայոց աշխարհում Արտագերքի առումից հետո: Ուստի և Մարկվարտն իրավացի կերպով ենթադրում է, որ Զիկը և Կարենը պարսկական զորքի առաջնորդներն են եղել Արտագերքի երկրորդ պաշարման ժամանակ[2]:

Պատմական ճիշտ հիշողություն կարող է լինել, Մարկվարտի կարծիքով, նաև Արտագերքի պաշարման 13 ամիս տևողությունը և նրա անկումը տասնչորսերորդ ամսում: Բայց Փավստոսի այս վկայությունը վերաբերում է, հավանորեն, առաջին և երկրորդ պաշարումների ժամանակին՝ առաջին պաշարման սկզբից մինչև Արտագերքի անկումը (ըստ Մարկվարտի՝ հոկտ. 368 թ.—դեկտ. 369 թ.)[3]:

Պարսկական 368—369 թվերի արշավանքների ժամանակ, ինչպես երևում է Փավստոսի վկայություններից, բացի Արտագերքից, Հայաստանում ավերվել էին գրեթե բոլոր նշանավոր քաղաքները՝ Արտաշատը, Վաղարշապատը, Երվանդաշատը, Զարեհավանը, Զարիշատը, Վանը և Նախիջևանը: Փավստոսի մոտ մանրամասն մեջ են բերված այդ քաղաքներից գերի տարված «երդ»-երի թվերը. Արտաշատից՝ 9.000 երդ կամ տուն հրեա և 40.000 տուն հայ, Վաղարշապատից՝ 19.000 տուն, Երվանդաշատից՝ 30.000 տուն հրեա և 20.000 տուն հայ, Զարեհավանից՝ 8.000 տուն հրեա և 5.000 տուն հայ, Զարիշատից՝ 14.000 տուն հրեա և 10.000 տուն հայ, Վանից՝ 18.000

Footnotes (p. 204):

1 Տե՛ս *Markwart*, Untersuchungen zur Geschichte von Eran, I, էջ 212—214, նաև Südarmenien und die Tigrisquellen, 69, էջ 154—155:

2 Տե՛ս *Markwart*, Untersuchungen, I, էջ 213—214:

3 Նույնը, էջ 212:

Footnotes (p. 205):

1 Տե՛ս Փավստոս, IV, գլ. ԾԸ, էջ 182:

2 *Markwart*, Untersuchungen zur Geschichte von Eran, I, էջ 212:

3 Նույնը, էջ 220

տուն հրեա և 5.000 տուն հայ և Նախիջևանից՝ 16.000 տուն հրեա և 2.000 տուն հայ[1]: Այս թվերը, թեև Փավստոսի մոտ կարող են չափազանցված լինել, բայց, ինչպես մատնանշել եմ իմ նախորդ աշխատություններում[2], խիստ ուշագրավ են, որովհետև ցույց են տալիս, որ Հայաստանի քաղաքների բնակչության մեծագույն մասը կազմել են հրեաները:

Այս մեծ գաղթականությունը Շապուհ Բ-ը բնակեցրել էր մասամբ Ասորեստանի, մասամբ Խուժաստանի քաղաքներում. այս վերջինում, հավանորեն, Շոշ կամ Սուզա քաղաքում, որը, ապստամբած լինելով Շապուհ Բ-ի դեմ, մատնվել էր կատարածի ու ավերածության և վերականգնվել էր Էրան-Խվարեհ-Շապուհ նոր անունով: Խրիստենսենի ասելով՝ քաղաքների առման ժամանակ Պարսից թագավորները բնակչությունը, սովորաբար, չէին կոտորում, այլ որակյալ աշխատավորներին և արհեստավորներին գերի էին վերցնում և օգտագործում պարսկական արհեստների ու արդյունագործության զարգացման համար[3]:

Հայաստանի համար քաղաքային վերոհիշյալ կենտրոնավայրերի ամայացումը, անշուշտ, խիստ ծանր մի հարված էր, որով երկիրն իր տնտեսական առաջավոր դիրքերից շպրտվում էր դեպի ետ:

Չհանդիպելով լուրջ դիմադրության՝ Շապուհ Բ-ը նույն 369 թվին, չբավականանալով Հայաստանի ավերածությամբ՝ միջամտեց նաև Վրաստանի գործերին և, ոտնատակ տալով հռոմեացիների իրավունքները, որ որոշված էին երկուստեք համաձայնությամբ, գահընկեց արեց հռոմեական գերիշխանությանը ենթարկված Սավրմակին (Saurmakes) և նրա փոխարեն Վրաց թագավորության գահին նստեցրեց Վարազ-Բակուրին (Aspakuras):

Շապուհ Բ-ի 369 թվի գրգռիչ գործողություններն արդեն մի պարզ ոտնձգություն էին և խախտումն հռոմեական իրավունքների: 363 թվի դաշնագիրը Սասանյան Պարսկաստանը մեկնաբանում էր այն իմաստով, որ իբր թե նա իրավունք ունի տեր ու տնօրեն դառնալու Հայաստանի և նույնիսկ Վրաստանի: Այդ, ինհարկե, այդպես չէր:

Ճիշտ է, համաձայն դաշնագրի հռոմեացիները պարտավորվել էին չօգնել Արշակ Բ-ին, սակայն դաշնագրում չէր ասված, որ Հա-

---

1 Տե՛ս Փավստոս, IV, գլ. ԾԵ, էջ 176—178 (Վ. 1889):

2 „О торговле и городах Армении", էջ 95 և «Ֆեոդալիզմը հին Հայաստանում», էջ 218—219:

3 Տե՛ս Christensen, L'Iran sous les Sassanides, Copenhague, 1944, էջ 126—127 և 251:

յաստանը տրվում է Սասանյան Պարսկաստանին: Հռոմեական կայսրությունը դաշնագիրը մեկնում էր այլ կերպ: Պարսկաստանի ակնկալությունները Հայաստանի նկատմամբ նա համարում էր ապօրինի և պնդում էր, որ հայ ժողովուրդը պետք է լինի ինքնուրույն:

370 թվին Վաղես կայսրը, որն արդեն վերջացրել էր պատերազմը գոթերի դեմ, հնարավորություն ունեցավ միջամտելու հայկական գործերին ավելի բացահայտ համարձակ կերպով: Պարսկաստանի իշխանության հաստատումը Հայաստանում և Վրաստանում Հռոմեական կայսրության համար խիստ վտանգավոր էր և վարկաբեկիչ էր նաև նրա պրեստիժի համար:

Այս անգամ Վաղես կայսրը Արինթեոս կոմսի հրամանատարությամբ, որը Փավստոսի մոտ անվանված է «Ադէ» (ըստ Մարկվարտի՝ պետք է ուղղել «Արէ»[1]), ուղարկեց Հայաստան հռոմեական զորք և հրամայեց թագավորեցնել Պապին և պաշտպանել հայերին պարսիկների հարձակումներից[2]: Պապն այդ ժամանակ, 370 թվին, ինչպես կարելի է հետևցնել Ամմիանոսի կարևոր մի վկայությունից, անչափահաս պատանի էր[3]:

Պետք է ասել, որ Պապի տարիքի խնդիրը մինչև այժմ վեճի առարկա է և դեռևս վերջնական կերպով պարզված չէ: Միանգամայն սխալ պետք է համարել, իմ կարծիքով, Օրմանյանի ենթադրությունը, որը Պապին համարում է ո՛չ թե Փառանձեմի, այլ Օլիմպիայի որդի, ծնված 351 թվին[4]: Օրմանյանի պնդումը, որ արտաքին պատմիչները Պապին ճանաչում են իբրև հույն մոր զավակ, պարզապես թյուրիմացության արդյունք է: Այդ մասին ոչինչ չեն հաղորդում ո՛չ Ամմիանոսը, ո՛չ էլ մյուս օտար պատմիչները:

Պապը, ինչպես պարզ կերպով վկայում են Փավստոսը և Մովսես Խորենացին, Փառանձեմի որդին էր[5]: Մարկվարտը կարծում է նույնիսկ, որ Արշակ Բ-ն ամուսնացել էր Փառանձեմի հետ, որովհետև իր Օլիմպիա կնոջից զավակ չուներ[6]: Բոլորովին անընդունելի է, սակայն Մարկվարտի մի ուրիշ կարծիքը: Նա ենթադրում է, որ

---

1 Տե՛ս Markwart, Untersuchungen, I, էջ 214:

2 Տե՛ս Amm. Marc., XXVII, 12, 13 և Փավստոս, V, գլ. Ա:

3 Նույնը, XXX, 1, 2: Ամմիանոսի այս վկայությունից երևում է, որ Պապը 373 թվին արդեն չափահաս էր դառել (etiam tum adultum):

4 Տե՛ս Մ. Ա. Օ., «Տրդատ Արտաշէս ժամանակագրական դիտողութիւններ», «Հանդ. Ամս.», 1909, № 8, էջ 241 և 245:

5 Փավստոս, IV, գլ. ԺԵ և Խորենացի, III, գլ. ԻԴ:

6 Markwart, Die Entstehung der armenischen Bistümer, էջ 95:

Պապը ծնվել էր 360 թվին և, ուրեմն, թագավոր էր կարգվել տասը
տարեկան հասակում և սպանվել էր տասնչորս տարեկան հասա-
կում: Այս ենթադրությունը, անշուշտ, սխալ է և հակասում է ինչ-
պես Ամմիանոսի, նույնպես և հայ աղբյուրների վկայություններին:
Ինձ թվում է, որ այս մութ խնդիրը հավանական լուծում կա-
րող է ստանալ, եթե ենթադրենք, որ Պապը, լինելով Փառանձեմի
ու Գնելի որդին, Արշակ Բ-ի ո՛չ թե հարազատ, այլ խորթ որդին էր:
Ըստ երևույթին, Արինթեոս կոմսի Հայաստան ժամանելուց դեռ
առաջ Պապը բանակցություններ էր սկսել Շապուհ Բ-ի հետ, հույս
ունենալով, որ իր թագավորությունը կկարողանա ստանալ արքա-
ների արքայից: Շատ պարզ է, որ պատանի թագաժառանգը, որին
Վաղես Հայաստան էր ուղարկել առանց օգնական զորքի և որն
ամբողջ հինգ ամիս թափառել ու թաքնվել էր Լազիկեի մոտակա
լեռնային շրջաններում, այլևս չէր կարող հավատ ընծայել Հռոմեա-
կան կայսրության խոստումներին ու հավաստիացումներին:
Շապուհի ու Պապի բանակցությունների մասին ուշագրավ տե-
ղեկություն է տալիս Ամմիանոսը հետևյալ իր վկայության մեջ:
«Մինչ այդ,—ասում է Ամմիանոսը,—Շապուհը, որն անչափ
խորամանկ էր և որը, նայելով իր օգտին, կամ ստորաքարշ էր
և կամ ամբարտավան՝ ապագայում հաշտություն կնքելու պա-
տրվակով կշտամբում էր Պապին թաքուն լրաբերների միջո-
ցով, որ նա անփույթ է դեպի ինքը և թագավորական վեհու-
թյան քողի տակ ստրուկն է դառել Գղակի ու Արտավանի»[1]:
Շապուհ Բ-ի խոստումը բարեկամության դաշն կնքելու Պապի
հետ, բնականաբար, մեծ տպավորություն պիտի գործեին ո՛չ միայն
պատանի թագաժառանգի վրա, այլև նրան շրջապատող այն հա-
յերի վրա, որոնք գիտակցում էին, որ Հայաստանի դժբախտության
պատճառն ինքը՝ Հռոմեական կայսրությունն էր, որը 363 թվի խայ-
տառակ դաշնագրությամբ դավաճանել էր դաշնակից հայերին:
Դժվար չէր նաև հասկանալ, որ Սասանյան Պարսկաստանի հետ բա-
րեկամական մերձեցումը, որը Արշակունյաց թագավորության փըր-
կության համար մի մեծ երաշխիք էր, թերևս կարող էր գլուխ գալ
Գղակի ու Արտավանի զոհաբերությամբ, որոնք Արտագերքի պա-
շարման ժամանակ դավաճանել էին պարսիկներին:
Ինչպես վկայում է Ամմիանոսը, հրապուրվելով Շապուհ Բ-ի

1 *Ammianus Marc.*, XXVII, 12, 14.

2 *Նույն տեղում:*

գրավիչ խոստումներով՝ Պապը սպանել տվեց Գղակին ու Արտավա-
նին և նրանց գլուխներն ուղարկեց արքայից արքային ի նշան իր
հնազանդության Պարսկաստանին[1]: Այս սպանության լուրը, ասում
է Ամմիանոսը, լայնորեն տարածվեց և Հայոց երկիրը մեզ համար
կորած կլիներ, եթե պարսիկները Արինթեոսի ժամանման պատ-
ճառով չհետաձգեին իրենց ներխուժումը Հայաստան: Շապուհ Բ-ը
բավականացավ միայն նրանով, որ կայսեր մոտ դեսպանություն
ուղարկեց և պահանջեց, որ նա չպաշտպանե հայերին, ինչպես այդ
պայմանավորված էր Հովիանոսի դաշնագրով[2]:
Հայր մարդպետ Գղակի սպանությունը հիշատակված է նաև
Փավստոսի Պատմության մեջ, բայց սպանության պատճառը նրա
մոտ այլափոխված է և բոլորովին զուրկ է պատմական հիմքից: Ըստ
Փավստոսի՝ Պապը հրամայել էր մահապատժի ենթարկել Գղակին,
որովհետև նա թշնամանել ու անարգել էր Արտագերքում իր մորը և
անվանել էր Փառանձեմին բոզ: Պապի այս հրամանը, Փավստոսի
ասելով, ի կատար էին ածել Մուշեղ Մամիկոնյանի կարգադրու-
թյամբ սրա զորավարները Տարոն գավառի Ողական բերդում[3]:
Արինթեոս կոմսի և հռոմեական օժանդակ զորքի Հայաստան
ժամանելուց հետո՝ հետզհետե հայկական շրջաններից դուրս վտար-
վեցին պարսկական կայազորները և Պապը, համախմբելով իր շուր-
ջը ապստամբած հայերին՝ ձեռնամուխ եղավ նորոգելու և կազմա-
կերպելու իր ավերված թագավորությունը (370 թ.): Կաթողիկոսու-
թյան գլուխն անցավ դարձյալ Ներսեսը, իսկ սպարապետությունը
հանձնվեց Վասակ սպարապետի որդի Մուշեղ Մամիկոնյանին:
Արշակունյաց թագավորության ռազմական ուժը, ինչպես երև-
վում է Փավստոսի վկայությունից, վերջին յոթ տարիների աղետալի
անցքերից հետո (364—370 թ.) այնքան էր նվազել, որ Պապի թա-
գավորության սկզբնական շրջանում Մուշեղ Մամիկոնյանը կարո-
ղացել էր իր հրամանատարության տակ հավաքել ընդամենը մոտ
տասը հազար զորք[4]:
370 թվին Հռոմեական կայսրության և Սասանյան Պարսկա-
Պարսկաստանի հայ համախոհների դեմ:
ստանի միջև փաստորեն վերսկսվել է Հայաստանում պատերազմա-
կան դրությունը, որովհետև հռոմեական զորքերը հայերի հետ միա-
սին կռվում էին այստեղ պարսկական պահապան զորամասերի և

1 Ammianus Marcel,, XXVII, 12, 14.

2 *Նույնը*, XXVII, 12, 15: *Համեմատե՛ նաև* Themistii orationes, XI, 149 B (Paris, 1684):

3 Փավստոս, *V, գլ. Գ, էջ 195—196:*

4 *Նույնը*, *V, գլ. Ա, էջ 190:*

14—340

370 կամ 371 թվին Վաղես կայսեր կարգադրությամբ հռոմեական Տերենտիոս զորավարը տասներկու լեգեոններով մտավ Վրաստան, որպեսզի վերստին թագավորեցնե Սուրմակին, որը, ինչպես վերև տեսանք, գահընկեց էր արվել Շապուհ Բ-ի հրամանով։ Բայց շուտով այստեղ Վաղես կայսեր հավանությամբ գահաթեկնածուների Սուրմակի և նրա ազգական Վարազ-Բակուրի միջև համաձայնություն կայացավ և որոշվեց, որ Սուրմակը թագավոր լինի Վրաստանի հարավային ու արևմտյան շրջաններում, որոնք սահմանակից էին Հայաստանին և Լազիկեին, իսկ Վարազ-Բակուրը՝ հյուսիսային ու արևելյան շրջաններում, որոնք սահմանակից էին Աղվանքին և պարսկական երկրամասերին[1]։

Հռոմեական կայսրության զինված ուժերի թշնամական գործողությունները Հայաստանում և Վրաստանում, բնականաբար, մեծ զայրույթ առաջացրին Պարսկաստանում, և Շապուհ Բ-ը, որն անչափ վրդովված էր, աշխատեց օգնություն ստանալ հարևան ժողովուրդներից և նախապատրաստեց նաև իր զորքը արշավանքի, որպեսզի գարնանը մեծ ուժերով հարձակում սկսի հռոմայեցիների և հայերի դեմ[2] (371 կամ 372 թ.)։ Պատերազմի վտանգը Մերձավոր Արևելքում այնքան մեծ էր, որ արդեն 371 թվի մայիս ամսին ինքը՝ Վաղես կայսրը Պոլսից շտապել էր գալ Կապադովկիա և, միաժամանակ այստեղ մնալուց հետո, եկել էր Անտիոք (371 թվի նոյեմբերին կամ 372 թվի ապրիլին)[3]։

371 կամ 372 թվի գարնանը Շապուհ Բ-ը ռազմերթի ելավ Հռոմեական կայսրության դեմ, և պարսկական զորքերը ներխուժեցին Հայաստան։ Սրանց դեմ Վաղեսն ուղարկեց մի մեծ զորաբանակ Տրայանոս կոմսի և ալամանների իշխան Վադոմարի առաջնորդությամբ և հրաման տվեց վարել պարսիկների դեմ ո՛չ թե հարձակողական, այլ, գլխավորապես, պաշտպանողական պատերազմ։

Սակայն երբ հռոմեական այս զորքերը միացել էին Հայաստանում Մուշեղ սպարապետի զորքի հետ և հասել էին Բագավան՝ սրանք, Պարսից հեծելազորի բուռն գրոհի պատճառով, ստիպված եղան կռվի բռնվել թշնամու հետ։ Այս մեծ ընդհարման ժամա-

1 Տե՛ս Amm. Marc., XXVII, 12, 16—17.

2 Նույնը, XXVII, 12, 18։

3 Ըստ Մաղաղասի ժամանակագրության՝ Վաղեսն Անտիոք էր հասել նոյեմբերի 10-ին 14-րդ ինդիկտիոնի, այսինքն՝ 371 թվին։ Իսկ Սեն-Մարտենը, հենվելով այլ հաշիվների վրա՝ Վաղեսի ժամանումն Անտիոք մատնացույց է անում ապրիլի 13-ին 372 թվի. տե՛ս Lebeau, Histoire du Bas-Empire, nouvelle édition par M. de Saint-Martin, t. III, Paris, 1825, էջ 428, ծան. 1 և էջ 436, ծան. 3։

նակ հռոմեական-հայկական միացյալ զորքերը հաղթություն տարան, և պարսիկները կրեցին զգալի պարտություն։

Ճակատամարտը տեղի էր ունեցել ո՛չ թե Ձիրավ դաշտում, ինչպես հաղորդում է Մովսես Խորենացին[1], այլ Բագրևանդ գավառի Բագավան ավանի մոտերքում՝ Նպատ լեռան հյուսիսակողմում, ինչպես այդ որոշակի վկայում են Ամմիանոսը և Փավստոսը։

Որովհետև այս ճակատամարտի մասին Խորենացու Պատմության ազդեցությամբ, սխալ և խառնաշփոթ տեղեկություններ են հաղորդված պատմագիտական նորագույն երկերում՝ ավելորդ չեմ համարում թարգմանաբար մեջ բերել Ամմիանոսի և Փավստոսի համապատասխան վկայությունները, որոնք իրար համապատասխանում են և իրար լրացնում են։

1. Ամմիանոս, XXIX, 1, 1—3՝

«Ձմեռն անցնելուց հետո Պարսից թագավոր Շապուհը, որը չափազանց ամբարտավանացել էր նախկին կռիվներում իր ունեցած հաջողությունների պատճառով՝ իր զորքերը համալրեց, խիստ ուժեղացրեց և ուղարկեց, որպեսզի ներխուժեն մեր կողմերը, զրահավորված հեծելազորը ու նաև նետաձիգները և վարձկան զորքը։

Այս զորքերի դեմ խիստ ուժեղ զորաբանակով երթի ելան Տրայանոս կոմսը և ալամանների նախկին թագավոր Վադոմարը, բայց սրանք կայսրի հրամանով պարսիկների դեմ պետք է վարեին ավելի շուտ պաշտպանողական գործողություններ, քան հարձակողական։

Երբ սրանք հասան Բագավան (Vagabanta), որը հարմար էր լեգեոնների տեղավորման համար, մի քանի անգամ ենթարկվեցին թշնամու հեծելազորի ուժգին գրոհումներին։ Սակայն, չկամենալով ընդունել մարտը՝ սրանք արիաբար նրանց ետ մղեցին և նույնիսկ դիտավորյալ կերպով ետ քաշվեցին, որպեսզի իրենք առաջին հերթին թշնամուն վնաս չհասցնեն և հաշտության դաշինքի խախտման համար չամբաստանվեն։ Սակայն վերջ ի վերջո, ծայրահեղ անհրաժեշտության պատճառով, նրանք մարտի բռնվեցին և հաղթություն տարան և թշնամուց շատերին կոտորեցին։

2. Փավստոս, V, գլ. Դ՝

«Ապա այնուհետև Պարսից թագավորը նորից զորաժողով արեց բոլոր իր ուժով ու զորությամբ։ Նա ճանապարհ ընկավ

1 Տե՛ս Խորենացի, III, գլ. Լէ։

իր բոլոր զորքերով և գնաց հասավ Ատրպատական աշխարհը։ Ինքը քիչ զորքով մնաց այնտեղ, իսկ զորքերի ամբողջ բազմությունը պատերազմի ուղարկեց Պապ թագավորի դեմ։

Ապա Պարսից զորքը եկավ և ապատակեց մինչև իսկ Հայաստանի միջնաշխարհը։ Այնուհետև Հայոց Պապ թագավորը ևս հրամայեց զորաժողով անել Բագավանում։ Նաև Հունաց զորքերը, որոնք գտնվում էին Եռանդում ու Բախիշում, հավաքվեցին միևնույն տեղում Պապ թագավորի մոտ և իրենց բանակի շուրջը փոս փորեցին Նպատ լեռան դիմաց և Եփրատ գետի մոտ։ Նրանք կազմակերպվեցին և պատրաստվեցին ճակատամարտ տալու»։

[«Ապա յետ այսորիկ թագաւորն Պարսիցն կրկնէր լինէր զօրաժողով ամենայն ուժով և ամենայն զօրութեամբն իւրով. խաղայր գնայր ամենայն զօրօքն իւրովք հասանէր յաշխարհն Ատրպայականի։ Եւ ինքն անդր դադարէր սակաւուք, և զամենայն զօրացն զբազմութիւն առաքէր ի վերայ թագաւորին Պապայ ի պատերազմ։

Եւ եկեալ զօրքն Պարսից ասպատակ առնէին և ի միջնաշխարհն Հայոց. ապա և թագաւորն Հայոց Պապ զօրաժողով առնել հրամայէր ի Բագաւանն։ Եւ զօրքն Յունաց, որ էին յԵռանդին ի Բախշանն, ի մի վայր ժողովեցան առ թագաւորն Պապ, և ածին փոս զբանակաւն իւրեանց մօտ ի լեռան ի Նպատ մերձ ի գետն Եփրատ, և կազմեալ պատրաստեալ կային գործոյ ճակատուն»][1]։

3. Փավստոս, V, գլ. Դ՝

«Իսկ պատերազմի ընթացքում աստծու օգնությունը հասավ հույներին և հաղթող հանդիսացավ Հայոց գունդը։ Եվ Պարսից գունդը պարտության մատնվեց, փախուստի դիմեց և ցրվեց ու սփռվեց դաշտերում, լեռների բարձունքներում և խոր ձորերում։ Ապա նրանց հետապնդեցին Հունաց և Հայոց զորքերը, հետևներից հասան և թե մեծերին ու թե փոքրերին՝ բոլորին կոտորեցին։ Միայն շատերից քչերը, որոնք լավ ձիեր ունեին՝ կարողացան փախչել։

Այնուհետև ևս փախստականներին հետամուտ եղան Հայոց զորքերը և նրանք մինչև Գանձակ Ատրպատականը, Հայաստանի սահմանները, հալածեցին Պարսից զորքերին և փախստականներից շատերին ճանապարհին կոտորեցին»։

1 Տե՛ս Փավստոս, էջ 196։

[«Այլ ի պատերազմին օգնական աստուծոյ հասանէր ի վերայ Յունացն, և Հայաստան գնդին լինէր յաղթութիւն, և ի պարտութիւն մատնեցաւ գունդն Պարսից, դարձան ի փախուստ, ցրուեցան սփռեցան դաշտաց, լերանց բարձանց, խորոց ձորոց։ Ապա զհետ նոցա լինէին զօրքն Յունաց և Հայոց. հասանէին, զմեծ և զփոքր առ հասարակ սատակէին. բայց սակաւք ի բազմաց քաջաձիք փախստեայք լինէին։

Ապա զհետ լինէին փախստէիցն զօրքն Հայոց, և մինչև ի Գանձակ յԱտրպայական ի սահմանս Հայոց հալածէին զզօրսն Պարսից. ընդ փախուցեալսն զբազումս սատակէին զճանապարհայն»][1]։

Բագավանի մոտ տեղի ունեցած այս կռվից հետո, ինչպես վկայում է Ամմիանոսը, հռոմեական և պարսկական զորքերը խուսափում էին տալիս պատերազմական վճռական գործողություններից և միայն մի քանի անգամ իրար հետ բախումներ էին ունեցել տարբեր հաջողությամբ եւ էին նահանջել, թեև մնում էին իրար թշնամի[2]։ Բայց հետո փոխադարձ համաձայնությամբ զինադադար կնքվել, և կռվող զորքերի գերագույն հրամանատարները զանազան ուղղությամբ հետ էին նահանջել, թեև մնում էին իրար թշնամի[2]։

Հռոմեական-պարսկական վերոհիշյալ կռիվներից հետո, ինչպես մանրամասն պատմում է Փավստոս Բուզանդը, Մամիկոնյան Մուշեղ սպարապետը հետզհետե միացրել էր Հայաստանին, կռիվ մղելով ապստամբների դեմ, այն շրջանները, որոնք անջատվել էին Արշակունյաց թագավորությունից։ Փավստոսի ասելով՝ Մուշեղ սպարապետը վերադարձել էր հետևյալ երկրներն ու գավառները՝ Արշակունյաց Հայաստանի մաս կազմող Ատրպատականը, Նոշիրականը, Կորդուքը, Կորդիքը, Տմորիքը, Մարերի երկիրը, Արցախը, Ուտին, Շակաշենը, Գարդմանաձորը, Կողթը, Կասպից երկիրը, Գուգարքը, Աղձնիքը, Մեծ Ծոփքը, Անգեղտունը և Անձիտը[3]։

Վերանվաճված երկրների այս ցանկը, անշուշտ, շատ կասկածելի է ու անընդունելի։ Միանգամայն պարզ է, որ Մուշեղը չէր կարող նվաճած լինել Աղձնիքը և Կորդուքը, որոնք, համաձայն 363 թվի դաշինքի, տրվել էին Սասանյան Պարսկաստանին, և չէր կարող արշաված լինել նաև Մեծ Ծոփք, Անգեղտուն և Անձիտ, որոնք, ըստ նույն դաշինքի, միացվել էին Հռոմեական կայսրության։ Սակայն միանգամայն հավանական է, որ Փավստոսի վկայությունները Մուշեղ Մամիկոնյանի նվաճումների մասին իրենց հիմքում պատ-

1 Նույնը, էջ 202։
2 Տե՛ս Amm. Marc. XXIX, 1, 4.
3 Փավստոս, V, գլ. Ը—ԺԲ, էջ 213—217։

մական են, թեև մենք չենք կարող այժմ ճշտիվ որոշել ու թվարկել այն ծայրագավառները, որ վերստին միացվել էին Արշակունյաց Հայաստանին:

Հռոմեական կայսրության ու Սասանյան Պարսկաստանի միջև զինադադարի կնքումից հետո (371/2 թ.)՝ Հայաստանում ևս հաստատվեց խաղաղություն, և երիտասարդ Պապ թագավորը հնարավորություն ունեցավ զբաղվելու իր կիսավեր ու խախտված պետության ներքին գործերով:

Նա վճռական ու կտրուկ միջոցներ ձեռք առավ եկեղեցականության դեմ, որը քաղաքականապես և տնտեսապես անչափ զորեղացել էր Ներսես կաթողիկոսի ժամանակ: Վերջինիս հիմնած բարեգործական ու վանական անթիվ հաստատությունները, որոնց պահպանության համար հարկավոր էին նյութական միջոցներ, Պապի թագավորության ժամանակ ծանր բեռ էին դառել հայ ժողովրդի համար, որը երկարատև կռիվների ընթացքում տնտեսապես հյուծվել էր և խիստ աղքատացել: Պապը անհրաժեշտ էր համարել փակել այդ հաստատությունները:

Անհանդուրժելի էին համարվել սնանկացած երկրի համար նաև եկեղեցական աճող կալվածատիրությունը և պտղի, տասանորդի ու եկեղեցական մյուս եկամուտները:

«Նաև պտղի ու տասանորդների կարգը,—վկայում է Փավստոսը,—որ նախնյաց ժամանակներից սովորություն էր դարձած տալ եկեղեցուն՝ դրա մասին էլ հրաման տվեց երկրին, ոչ ոք չտա»:

[«Եւ զկարգս պտղոյն և տասանորդացն, որ ի նախնեացն կարգեալ սովորութիւն էր տալ յեկեղեցին, վասն այնորիկ հանէր հրաման ընդ աշխարհ՝ զի մի՛ ոք տացէ»][1]:

Ագաթանգեղոսի ուշագրավ մի վկայությունից մեզ հայտնի է[2], որ Տրդատ Մեծը, գյուղական հոգևորականությունը տնտեսապես ապահովելու համար, նրան հատկացրել էր ավաններում «եօթն հողս երդոյ», այսինքն՝ յոթ երդի կամ ծխի հողամասեր[3]: Պապ թագավորը, ինչպես վկայում է Փավստոսը, այդ յոթ հողաբաժիններից հինգը գրավել էր հօգուտ արքունիքի:

1 Տե՛ս Փավստոս, V, գլ. ԼԱ, էջ 235:

2 Ագաթանգեղոս, գլ. ՃԺԹ, 837, էջ 436 (Տփղիս, 1909):

3 Տե՛ս իմ աշխատությունները՝ «Դիտողություններ Հին Հայաստանի շինականների դրության մասին մարզպանության շրջանում», Երևան, 1925, էջ 13—17 և «Ֆեոդալիզմը Հին Հայաստանում», Երևան, 1934, էջ 133—135, 197, 277 և 313—314:

«Եվ, բացի այդ,—ասում է Փավստոսը,—Պապ թագավորը բռնագրավեց եկեղեցու հողերը, որ Մեծն Գրիգոր քահանայապետի ժամանակ Տրդատ թագավորը տվել էր եկեղեցուն Հայոց ամբողջ երկրում պաշտամունքի սպասավորության համար, որովհետև յոթ հողից հինգը գրավեց արքունիք և միայն երկու հող թողեց: Եվ հողի համեմատ յուրաքանչյուր գյուղում թողեց երկուական անձ՝ մի երեց և մի սարկավագ, իսկ մյուսներին՝ երեցների ու սարկավագների եղբայրներին ու որդիներին վերցրեց իրեն մոտ սպասակալական ծառայության համար»:

[«Եւ հատ ևս յարքունիս Պապ թագաւոր զհող եկեղեցւոյն, զոր տուեալ էր թագաւորին Տրդատայ առ Մեծաւն Գրիգորիւ ամենաքահանայապետիւ ի սպաս պաշտաման եկեղեցւոյն ընդ ամենայն երկիրն Հայոց: Զի յեւթն հողոյն զհինգն հատանէր յարքունիս, և զերկուսն միայն թողոյր երկուս հողս: Եւ ըստ հողոյն թողոյր երկուս-երկուս առ գիւղ մի երէց և սարկաւագ, և զայն ի սպասու կացուցանէր յիւր ի ծառայութեան զեղբարս և զորդիս երիցանցն և սարկաւագացն»][1]:

Համաձայն Պապ թագավորի այս կարգադրության, ո՛չ միայն բռնագրավվում էր գյուղական հոգևորականությանը տրված հողերի մեծագույն մասը, այլև, ինչպես շատ ճիշտ նկատել է Աննինսկին[2], սահմանափակվում էր նաև եկեղեցականների դասի ազատությունը և պահանջվում էր, որ երեցների ու սարկավագների եղբայրներն ու որդիները մտնեն արքունի ծառայության մեջ:

Պապի վերոհիշյալ կարգադրությունները, որ մեծ կարևորություն ունեին նրա քայքայված ու կողոպտված թագավորության վերականգնման ու ուժեղացման համար, ուղղված լինելով հոգևորականության դեմ՝ առաջացնելու էին, հարկավ, եկեղեցականների կատաղի ու անհաշտ ատելությունը դեպի Պապը: Այդ անսահման ատելությունը լիովին արտահայտված է Փավստոսի գրվածքում, որի մեջ Պապը ներկայացված է ամենամռայլ գույներով, իբրև զազրելի մի հրեշ:

Փավստոսը, ավելի ճիշտ՝ նրան հիմք ծառայած աղբյուրները, երիտասարդ թագավորին վերագրում են զգալի արատներ, շարունակ նրան զրպարտում են և մինչև իսկ նրա մասին հերյուրում են

1 Փավստոս, V, գլ. ԼԱ, էջ 237:

2 *Аннинский*, История армянской церкви, Кишинев, 1900, էջ 31:

անհեթեթ առասպելներ, որ իբր թե Փառանձեմը նորածին արքայորդուն նվիրել էր դևերին, որոնք օձերի կերպարանքով ապրում էին նրա ծոցում և վարում էին նրան ըստ իրենց կամքի[1]:

Միանգամայն պարզ է, որ Պապ թագավորի կերպարը հայկական ավանդության մեջ չարամիտ կերպով խեղաթյուրված է[2]: Ժամանակակից Ամմիանոս Մարկելլինոսի մոտ, որը երիտասարդ այս թագավորի մասին տալիս է մանրամասն ու վստահելի տեղեկություններ, ո՛չ միայն մատնանշված են Պապի ողջամտությունն ու խիզախ քաջությունը, այլև պարզ կերպով ցույց է տրված, որ նա զոհ էր եղել խարդավանքների ու սուտ դավերի[3]:

Փավստոսը խիստ պախարակում է Պապի նաև մի քանի այլ արարքները, որոնք, ըստ երևույթին, պետական միջոցառումներ էին նրա ամայացած և խռովալից երկրի խաղաղեցման ու բնակչության շատացման համար: Պապը, փակելով կուսանոցները, ինչպես կարելի է հետևցնել Փավստոսի վկայություններից, հրամայել էր, որ կույսերն ամուսնանան, թույլատրել էր ամուսնալուծությունը, չէր արգելել մեռելների վրա կոծ ու սուգ անելը, իսկ ամենագլխավոր նրա հանցանքն այն էր, որ հեթանոս հայերի նկատմամբ եղել էր հանդուրժամիտ[4]:

Ամենածանր զրպարտությունը Պապ թագավորի դեմ այն մեղադրանքն էր, որ իբր թե նա Ներսես կաթողիկոսին իր ապարանքն էր հրավիրել Եկեղյաց գավառի Խախ ավանում և ընթրիքի ժամանակ իր ձեռքով տվել էր նրան ըմպելիք և թունավորել էր[5]: Թունավորման այս ամբաստանությունը, ինչպես այժմ արդեն բավարարաչափ պարզված է, ո՛չ միայն կասկածելի է, այլև բոլորովին անհիմն է: Այս սուտ հերյուրանքը հերքված է թե նորագույն պատմագիտական երկերում և թե եկեղեցական պատմության մեջ[6]:

1 Տե՛ս Փավստոս, IV, գլ. ԽԴ և V, գլ. ԻԲ:

2 Համեմատե՛ Գարագաշյան, Քննական պատմություն Հայոց, Գ, էջ 124, 146 են. Լեո, Հայոց պատմություն, Ա, էջ 644—645. Ն. Մուրադյան. Քննական պատմութիւն Արշակ Երկրորդի և անոր Պապ որդւոյն, Աղեքսանդրիա, 1900, էջ 126—183 և ուրիշները:

3 Amm. Marc., XXX. 1, 1—23.

4 Տե՛ս Փավստոս, V, գլ. ԼԱ:

5 Նույնը, V, գլ. ԻԴ:

6 Տե՛ս Գարագաշյան, Քննական պատմություն Հայոց, Գ, էջ 144—145. K. Aslan, Etudes historiques, էջ 196. Ն. Մուրադյան, Քննական պատմութիւն Արշակ Բ-ի և անոր Պապ որդւոյն, էջ 143—147. Մ. Ա. Օրմանյան, Ազգապատում, Կ. Պոլիս, 1912, էջ 218 և ուրիշները:

Ինչպես շատ ճիշտ մատնանշել է նաև Մարկվարտը, Ներսես կաթողիկոսի թունավորման մասին տեղեկություն չէ ունեցել Ամմիանոսը, որը Պապ թագավորի միակ հանցանքը համարում է Գնելի և Արտավանի սպանությունը: Բացի այդ, եթե Պապը, իրապես, թունավորած լիներ Ներսեսին, Կեսարիայի մետրոպոլիտ Բարսեղն իրեն ենթակա քահանայապետի սպանության համար Հայոց թագավորին պատասխանատվության կհրավիրեր[1]:

Ներսեսի մահից հետո Պապը կաթողիկոս նշանակեց Մանազկերտի եպիսկոպոս Հուսիկ-Շահակին[2], որն Աղբիանոսի տոհմից էր: Ինչպես հայտնի է, Ներսեսի այս հաջորդը չէր ուղարկվել Կեսարիա ձեռնադրություն ստանալու Կեսարիայի մետրոպոլիտից: Շնորհիվ դրան հայկական եկեղեցին խզեց այնուհետև իր հարաբերությունները Կեսարիայի հունական եկեղեցու հետ և կարողացավ դառնալ անկախ եկեղեցի:

Եկեղեցականների ու հռոմեասեր կուսակցության թշնամությունը դեպի Պապը, որը բուռն կերպով արտահայտված է Փավստոսի պատմության մեջ, այնքան մեծ էր ու անհաշտ, որ վերջ ի վերջո երիտասարդ թագավորի կյանքի դեմ կազմվեց նողկալի դավադրություն, որի պարագլուխը դառավ հռոմեական զորավար Տերենտիոսը: Հայաստանում գտնվող հռոմեական զորքերի այս հրամանատարը, ինչպես վկայում է Ամմիանոսը, «թեև արտաքուստ խոնարհ էր երևում և միշտ լուրջ կերպարանք ուներ, սակայն իր ամբողջ կյանքի ընթացքում խանդավառությամբ զրգռել էր երկպառակություններ»[3]: Սա Վաղեսին գրած իր զեկույցների մեջ շարունակ հիշատակում էր Գնելի ու Արտավանի սպանությունը և առանձնապես շեշտում էր, որ երիտասարդ թագավորն ունի հակում դեպի ամբարտավան արարքներ և իր հպատակների վերաբերմամբ չափից դուրս անգութ է:

Այս գաղտնի զեկույցների պատճառով Պապը հրավիրվեց Վաղես կայսրի մոտ իբր թե կարևոր խորհրդակցության համար: Սա-

1 Markwart, Südarmenien und die Tigrisquellen, էջ 157:

2 Այս եպիսկոպոսը, ինչպես ենթադրում է Սեն-Մարտենը (տե՛ս Lebeau, Histoire du Bas-Emprie, III, էջ 444, ծան. 3), Մեծ Հայաստանի «Իսակոկիս» եպիսկոպոսն է, որը Սոկրատի եկեղեցական պատմության մեջ հիշատակված է 364 թվի Անտիոքի ժողովի մասնակիցների թվում (Socr., III, 25): Ինձ հավանական է թվում, որ Փավստոսի մոտ «Յուսիկ» անունը աղավաղված ընթերցված է փոխանակ «Իսահակ»-ի:

3 Տե՛ս Amm. Marc., XXX, 1, 2.

կայն Կիլիկիայի մայրաքաղաք Տարսոնում պատվո պահակի պա-
տրվակով նա փաստորեն կալանքի տակ առնվեց: Նա ո՛չ տեսակ-
ցություն կարողացավ ունենալ կայսրի հետ, ո՛չ էլ կարողացավ
իմանալ իր շտապ հրավիրման պատճառը: Բայց վերջապես նա ծա-
ծուկ տեղեկություն ստացավ, որ Տերենտիոսը նամակ էր գրել
կայսրին և խնդրել, որ նա անմիջապես Հայաստան ուղարկի մի
ուրիշ թագավոր:

Պապն իսկույն հասկացավ, որ իրեն մեծ վտանգ է սպառնում և
որոշեց առանց ժամանակ կորցնելու փախչել Հայաստան: Նա հա-
վաքեց իր շքախումբը, երեք հարյուր սպառազեն ձիավոր զորքը և
անվեհեր կերպով իրիկնապահին քաղաքից դուրս սլացավ, կազմե-
լով իր ջոկատը սեպի ձևով:

Երկրի հրամանատարը, հենց որ այս մասին լուր ստացավ
դարբասի մոտ պահակ կանգնած սպահից՝ նրա հետևից հասավ քա-
ղաքի արվարձանում և աղաչեց ետ դառնալ, բայց հազիվհազ կա-
րողացավ իր կյանքը փրկել: Այնուհետև իսկույն նրա հետևից
ուղարկվեց մի ամբողջ լեգեոն: Սակայն երբ սրանք մոտեցել էին
նրանց՝ Պապը ետ դարձավ և իր ամենաքաջ զինվորների հետ հար-
ձակվեց հռոմեական զորքի վրա, կայծակի պես նետեր տեղալով
այնպես, որ նրանց չդիպչեն. ուստի նաև այս զորքը սարսափած
փախավ ու վերադարձավ քաղաք:

Այնուհետև այլևս վտանգ չկար, և Պապը երկու օր ու գիշեր
ծանր երթից հետո հասավ Եփրատ գետի ափը: Չգտնելով այստեղ
նավեր՝ նրանք մեծ դժվարության մեջ ընկան, բայց շուտով միջոց
գտան դուրս գալու իրենց ծանր դրությունից: Թագավորն ու ավագ-
ները վերցրին գյուղերից գահավորակներ, ամրացրին տիկերի վրա
և, նստելով դրանց մեջ ու քաշելով իրենց հետևից ձիերին՝ անցան
մյուս ափը: Իսկ մյուսները ձի նստան և անցան գետը լողալով:

Հայոց թագավորի փախուստի մասին լուրը, ասում է Ամմիա-
նոսը, ապշեցրեց կայսրին և նա, վախենալով, որ Պապը կարող է
այժմ դրժել իր հավատարմության երդումը, ուղարկեց իսկույն հա-
զար թեթևազեն նետաձիգ հեծյալներ Դանիել կոմսի և Բարզիմեր
տրիբունի հրամանատարությամբ, որ հետապնդեն փախստական-
ներին ու ետ բերեն:

Սրանք երկրի այս տեղերին լավ ծանոթ լինելով՝ կարողացան
առաջ անցնել և գրավեցին երկու իրար մոտ գտնվող ճանապարհնե-
րը, որոնցով պետք է անցներ Պապը: Բայց նրանց այս ծրագիրը
չհաջողվեց բախտավոր մի դիպվածի պատճառով:

Հենց այդ ժամանակ մի ուղևոր էր գալիս, որը, տեսնելով, որ
երկու ճանապարհը գրավել են զինվորները, չուզեց նրանց հանդի-
պել և ծածուկ կերպով գնաց շրջանցիկ ճանապարհով, որը ծածկը-
ված էր մացառուտներով ու փշաթփերով, և դեմ դիպավ հոգնած
հայերին:

Ուղևորին տարան Պապի մոտ, և նա գաղտնի կերպով պատմեց,
ինչ որ տեսել էր: Թաքցնելով վտանգը, թագավորը իր ձիավորներից
մեկին ուղարկեց ծածուկ աջ ճանապարհով, որ նա նախապատրաս-
տի օթևան և ուտելիք: Սրա մեկնելուց հետո՝ նա ուղարկեց մի ուրիշ
ձիավոր էլ ձախ ճանապարհով նույն նպատակի համար:

Այս երկու ձիավորը, որ ուղարկված էին հռոմեական զորքը մո-
լորեցնելու համար, ձերբակալվեցին, և Դանիելն ու Բարզիմերն
ուրախ էին, որ Պապը շուտով կընկնի իրենց ձեռքը: Բայց մինչդեռ
նրանք սպասում էին այնտեղ՝ Պապն իր շքախմբի հետ գնաց ուղևո-
րի առաջնորդությամբ այն արահետով, որը ծածկված էր մացառնե-
րով ու որով դժվար էր անցկացնել բարձած ձիերը, և խույս տալով,
ազատվեց ու հասավ Հայաստան, ուր նրան երկրացիներն ընդու-
նեցին ցնծալից ուրախությամբ:

Դանիելն ու Բարզիմերը, որ խաբված էին, վերադարձան կայս-
րի մոտ և շարունակ ենթարկվում էին ծաղրի ու հեգնանքի իրենց
անշնորհքության ու անփութության համար: Եվ նրանք, որպեսզի
իրենց մեղքը թեթևացնեն, աշխատեցին սուտ մեղադրանքներ բար-
դել Պապի վրա և համոզել կայսրին, որը խիստ դյուրահավատ էր,
որ Պապը զարմանալի կերպով գիտե Կիրկեայի հմայությունների
միջոցով մարդկանց մարմինները կերպարանափոխել ու ուժից
գցել և որ նա կարողացել էր իրենց մշուշով պատել, իսկ իր ու իր
մարդկանց կերպարանքները փոխել: Ուստի եթե նա անպատիժ
մնա՝ կարող է պատճառել մեծ չարիքներ[1]:

Պապ թագավորի ձերբակալության ու փախուստի մասին Ամ-
միանոսի հաղորդած տեղեկությունները, որ վերև բերված են հա-
մառոտ բովանդակությամբ, հետաքրքիր են մի քանի տեսակետից:
Նրանք պատկերավոր կերպով ներկայացնում են մեզ Պապի ու նրա
հեծելազորի խիզախությունն ու անվեհերությունը, տալիս են կա-
րևոր ցուցումներ չորրորդ դարի կենցաղի մասին և պարզում են
նաև Պապի կախարդության ու դիվահարության մասին այն անհե-

[1] Տե՛ս Amm. Marc., XXX, 1, 3—17.

թեթ առասպելի ծագումը, որը, ինչպես վերև տեսանք, տարբեր բովանդակությամբ կրկնված է Փավստոսի Պատմության մեջ։

Մարկվարտը կարծում է, որ եթե հավանական համարվեն Փավստոսի հաղորդած տեղեկությունները Պապի երես դարձնելու մասին Հռոմեական կայսրությունից և նրա բարեկամության մասին Պարսկաստանի հետ՝ այդ անցքերը պետք է տեղի ունեցած լինեին, ինչպես այդ մատնանշված է Փավստոսի մոտ, Հայոց թագավորի Տարոնից վերադառնալուց հետո և նրա սպանությունից առաջ[1]։

Փավստոսի համապատասխան վկայությունները կարևոր եմ համարում մեջ բերել։

«Եվ Պապ թագավորը,—պատմում է Փավստոսը,—իր միտքը շուռ տվեց և իր սիրտը շեղեց Հունաց թագավորից և ուզեց սեր ու միաբանություն հաստատել Պարսից թագավորի հետ։ Նա սկսեց իրեն թիկունք դարձնել Պարսից թագավորին և ու-
ղարկեց այնուհետև պատգամավորներ միաբանություն հաս-
տատելու համար։ Պատգամավորներ ուղարկեց նա նաև Հունաց
թագավորի մոտ, թե «բացի Կեսարիայից տասը քաղաք ևս
մերն են՝ ետ տուր. նաև Ուռհա քաղաքը մեր նախնիքներն են
շինել, ուստի եթե չես ուզում որ խռովություն լինի՝ տուր մեզ.
եթե չտաս՝ մեր մեջ պատերազմ կծագի»։
Իսկ Մուշեղը և բոլոր Հայոց իշխանները շատ հորդորեցին
թագավորին, որ իր ուխտը Հունաց թագավորության ու երկրի
հետ չխզե, բայց նա չլսեց նրանց և երեսն հանեց իր թշնա-
մությունը, որ ուներ Հունաց թագավորի դեմ»։

[«Եւ շրջեաց զմիտս իւր թագաւորն Պապ և խոտորեաց
զսիրտ իւր ի թագաւորէն Յունաց, և կամեցաւ խառնել զսէր
իւր և առնել միաբանութիւն ընդ թագաւորին Պարսից։ Եւ
սկսաւ թիկունս իւր առնել զարքայն Պարսից, և արձակել
անդրէն հրեշտակս յաղագս միաբանութեան։ Եւ առաքէր հրեշ-
տակս առ թագաւորն Յունաց, եթէ Կեսարիաւ հետ և տասն
քաղաք մեր լեալ է, արդ ի բաց տուր. և զՈւռհա քաղաք շինե-
ալ է նախնեացն մերոց. արդ եթէ ոչ կամիս խանգար ինչ առ-
նել՝ տուր ի բաց. ապա թէ ոչ, կռուիմք մեծաւ պատերազմաւ։
Այլ Մուշեղ և ամենայն իշխանքն Հայոց շատ եգին ի մտի
արքային, զի մի՛ քակեսցէ զուխտ յերկրէն թագաւորութենէն

Յունաց. և ոչ անսաց նոցա, և յայտնեաց զթշնամութիւն իւր՝
զոր ունէր ընդ թագաւորին Յունաց»][1]։

Փավստոսի այս վկայությունների այն մասը, որ իբր թե Պապը Հռոմեական կայսրությունից ետ էր պահանջել Կեսարիան, Ուռհան և ուրիշ բազմաթիվ քաղաքներ, ինչպես դժվար չէ համոզվել, ան-
հեթեթ ու խիստ միամիտ ամբաստանություններ են։ Որ վիճելի և
կասկածելի է նաև Փավստոսի հաղորդած հիմնական տեղեկությու-
նը, որ իբր թե Պապը, երես դարձնելով Հռոմից, ուղեցել էր անցնել
Պարսկաստանի կողմը՝ այդ կարելի է հետևցնել Ամմիանոսի վկա-
յությունից, որը պարզ ու որոշ մատնանշում է, որ Պապը, Տարոնից Հայաստան վերադառնալուց հետո՝
«մեծ ուրախությամբ ընդունված լինելով իր հայրենակիցնե-
րից՝ անխախտելի կերպով հավատարիմ էր մնացել Հռոմին և
ոչ մի խոսք ոչ մեկին չէր ասել վիրավորանքների մասին, որ
ինքը կրել էր»[2]։

Միանգամայն հնարավոր է սակայն, ինչպես այդ կարելի է
կռահել Ամմիանոսի ուրիշ ակնարկներից[3], որ Պապը, հավատարիմ
լինելով Հռոմեական կայսրությանը, կարող էր, իր թագավորու-
թյունը փրկելու համար, աշխատած լինել լեզու գտնելու նաև Սա-
սանյան Պարսկաստանի հետ։

Պապի այս ձգտումը չէր կարող, իհարկե, ընդունելի լինել կայս-
րության համար, որը, ինչպես շատ ճիշտ մատնանշել է Նյոլդեկեն,
նպատակ էր դրել իրեն տիրապետելու Հայաստանին և Պապին իր
ձեռքին գործիք էր դարձրել իր այդ նպատակին հասնելու համար[4]։
Պապի փախուստը Տարոնից անհետևանք չմնաց։ Վաղես
կայսրը, որ չէր կարող ներել Պապին նրա հանդուգն ազատումը
ձերբակալությունից, գաղտնի հրաման ուղարկեց Հայաստանում
գտնվող հռոմեական զորքերի հրամանատար Տրայանոսին, որը
Տերենտիոսի հաջորդն էր, որ Հայոց թագավորին բռնությամբ կամ
նենգությամբ ենթարկե մահապատժի։

Պապի սպանությունը, որ կատարվեց հայկական հողի վրա և
հայ իշխանների ու մեծամեծների ներկայությամբ, ժամանակակից
պատմագիր Ամմիանոսն անվանում է «զարշելի ոճրագործություն»։
Հռոմայեցիների գործած այս ոճիրը, որ մանրամասն նկարագրված
է Ամմիանոսի և Փավստոսի պատմական երկերում, հարկ եմ հա-

[1] Տե՛ս Markwart, Südarmenien und die Tigrisquellen, էջ 152։

[1] Փավստոս, V, գլ. լԲ, էջ 237—238։
[2] Amm. Marc., XXX, 1, 15.
[3] Նույնը, XXX, 1, 11 և 2, 1։
[4] Տե՛ս Th. Nöldeke, Aufsätze zur persischen Geschichte, էջ 102։

մարում թարգմանաբար մեջ բերել ընդարձակ բովանդակությամբ:

1. Ամմիանոս, XXX, 1, 18—23՝

«Այսպիսով սաստկացավ կայսեր անհաշտ ատելությունը [դեպի Պապը] և օրավուր նոր նենգություններ էին գործվում, որպեսզի բռնությամբ կամ գաղտնի կերպով նրա կյանքը կարճվի: Այս բանը ծածուկ գրությամբ հանձնարարվեց Տրայանոսին, որն այդ ժամանակ պաշտոնյա էր Հայաստանում և ղեկավարում էր ռազմական գործերը:

Սա, աշխատելով թագավորին խաբել գայթակղիչ խարդավանքներով՝ մերթ նրան հանձնում էր Վաղեսի նամակներն ի նշան սրա բարեմիտ տրամադրության և մերթ ինքը նրա մոտ խնջույքի էր գալիս առանց հրավերի. վերջ ի վերջո, երբ դավադրությունն արդեն կազմված էր՝ խոնարհաբար նրան հրավիրեց ճաշի:

Եվ թագավորը, ոչ մի վտանգ չզգալով, գնաց աներկյուղ և նստեց իրեն տրամադրված պատվավոր տեղում: Երբ մատուցվեցին ընտիր քաղցրեղեններ և ընդարձակ դահլիճը դղրդվում էր լարավոր ու փողավոր գործիքների հնչյուններից ու նաև երգերից, և երբ գինին արդեն գլուխները տաքացրել էր՝ ճաշկերույթի հրավիրողը [Տրայանոսը] ինքը դուրս գնաց ինչ-որ բնական կարիք բավարարելու պատրվակով և ներս եկավ ահեղատես բարբարոսներից մեկը, որ կոչվում էին սուրբեր: Սուրը պատյանից հանած՝ նա իր շուրջն էր նայում դաժան ու վայրենի հայացքով, որպեսզի սպանե երիտասարդ թագավորին, որին նախապես բոլոր հնարավորություններից զրկել էին դուրս պրծնելու:

Թագավորը, որը հենց այդ ժամանակ իր բազմոցից մի փոքր կռացել էր դեպի մյուս կողմը, երբ նրան տեսավ, վեր կացավ և հանեց դաշույնը, որպեսզի իր կյանքը որքան հնարավոր է պաշտպանե, սակայն նա վայր ընկավ կրծքից խոցված, որպես ամոթալի մի զոհ, և նողկալի կերպով հոշոտվեց հաճախակի հարվածներով: Այսպիսի անարգ նենգությամբ դյուրահավատությունը խարդավանվեց. օտարականի արյունը փրփրելով թափվեց շքեղ սեղանածածկոցների վրա դեմ հանդիման հյուրասիրության աստուծո հյուրընկալության ժամանակ, որը նույնիսկ Եվքսինյան Պոնտոսի կողմերում խղճամիտ երկյուղածության է արժանանում, և այնուհետև ճաշկերույթի մասնակիցները, չափից դուրս հագեցված, բոլորովին սարսափահար եղան և փախան»:

2. Փավստոս, V, գլ. ԼԲ՝

«Իսկ Հունաց իշխանները և նրանց զորքը դեռևս Հայոց երկրումն էին. իշխաններից մեկի անունն էր Տերենտ, մյուսինը՝ Ադե: Եվ Հունաց թագավորը մի դեսպան ուղարկեց թաքուն կերպով իր զորքերի իշխանների մոտ Հայաստան ու հրաման տվեց Հայոց Պապ թագավորին սպանել:

Երբ Հայաստանում գտնվող Հունաց իշխանները թագավորի այդ հրամանը ստացան՝ հարմար մահացնելու դեպքի էին սպասում, որ Հայոց Պապ թագավորին սպանեն: Արդ՝ մի հարմար ժամանակ պատահեց, երբ Հունաց զորքերի զորավարները, Տերենտն ու Ադեն, իմացան, որ Հայոց թագավոր Պապը մենակ է, իսկ բոլոր մեծամեծները և Հայոց զորքն այնտեղ չեն. և Հայոց Պապ թագավորը բանակ էր դրել Բագրևանդ գավառի դաշտում, Խու կոչված տեղում, իսկ Հունաց զորքերի բանակը գտնվում էր նույնպես այնտեղ՝ Հայոց թագավորի բանակի մոտ: Ապա Հունաց զորավարները մեծ խնջույք սարքեցին և Հայոց մեծ թագավոր Պապին հրավիրեցին մեծ շքով ընթրիքի համաձայն նրա արժանավորության, ինչպես ընդունված էր հրավիրել հանդիսավոր խնջույքի թագավոր մարդկանց. և ամեն ինչ նրանք պատրաստել ու կազմել էին:

Պապ թագավորը եկավ ընթրիքի և մտավ ու նստավ կերուխում անելու: Եվ երբ թագավորը մտավ Հունաց Տերենտ զորավարի խորանը՝ լեգեոնական վահանակիր հետևակները, վահանները ձեռներին և սակրերը գոտիներում, կանգնեցին ներսում ու խորանի պատերի չորս կողմը շրջապատեցին. նույնպես կազմ ու պատրաստ կանգնեցին և դուրսը՝ ներսից լավ զինված և վրայից զրեր հագած:

Իսկ Պապ թագավորն այնպես էր կարծում, որ այդ անում են իրեն պատվելու համար: Եվ մինչդեռ նա ընթրիքի ժամանակ
ուտում էր, սակրավոր զորքը չորս կողմը հետևում շարված՝
նրան շրջապատել էին: Երբ սկսեցին գինի խմել՝ ուրախության
առաջին բաժակը հրամցրին Պապ թագավորին. և խսկույն նվա-
գեցին թմբկահարները, սրնգահարները, քնարահարները և
փողահարները՝ ամեն մեկն իր արվեստով ու զանազան ձայ-
ներով:

Վահանավոր զորքին հրաման տվին. և երբ Պապ թագավորն
ուրախության գինին ուներ իր ձեռքում և նայում էր գուսան-
ների զանազան խմբերին, երբ նա ձախ ձեռքի մեջ, որը հեն-
ված էր արմունկին, բռնած ուներ մատներում ոսկե թասը, իսկ

աչ ձեռքը դրել էր թրի կոթին, որ կապած ունէր աջ ազդրին,
և երբ նա բաժակը բերանին էր տարել, որ խմե, իսկ աչքերը
դեպի առաջ էր հառել և նայում էր գուսանների զանազան
խմբերին՝ Հունաց զորքերին հրաման տվեց աչքի ակնարկով։
Եվ լեգեոնական երկու սակրավորներ, որոնք սուսերաձև
վաղանները ձեռքերին հենած կանգնած էին իբրև սպասա-
վորներ՝ հանկարծ երկուսն էլ սակրերը բարձրացրին և հար-
վածեցին Պապ թագավորին. մեկը սակրով խփեց ուղիղ վզին,
իսկ մյուս սակրավորը՝ աջ ձեռքի թաթին, որ թրի կոթի վրա
էր դրված. կտրեց և գեն ձգեց։ Պապ թագավորն անմիջապես
ընկավ երեսը վար և թավալ գինին ու նրա հետ խառնված
վզի արյունն ընկան միասին բաժակակալ սկուտեղի վրա։
Պապ թագավորն անմիջապես մեռավ։

Երբ շփոթվեց տակնուվրա եղավ դահլիճը՝ Անձևացյաց
գավառի տեր Գնելը վեր կացավ իր բազմած տեղից, հանեց
իր սուրը և զարկեց ու սպանեց լեգեոնականներից մեկին,
որոնք խփել էին թագավորին։ Ապա Հունաց Տերենտ զորա-
վարը, հանելով իր սուրը, խփեց և Գնելի գլխից ցած գցեց
գանգը աչքերի վրա։ Եվ ուրիշ ոչ մեկը ոչինչ նրանց չհանդըգ-
նեց ասել և ոչ մի խոսք»։

[«Այլ իշխանքն Յունաց և զօրքն նոցին տակաւին էին յերկ-
րին Հայոց. և անուն իշխանացն՝ միումն Տէրէնտ, միւսումն
Ադէ։ Եւ յղեաց դեսպան մի գաղտուկ թագաւորն Յունաց առ
իշխանսն զօրացն իւրոց՝ որ էին յերկրին Հայոց, և հրաման
տայր սպանանել զթագաւորն Հայոց զՊապ։

Եւ եղև իբրև ընկալան զայս հրաման ի թագաւորէն Յունաց
իշխանքն իւր՝ որ էին ի Հայոց երկրին, սպասէին մահու ի դէպ՝
սպանանել զթագաւորն Հայոց զՊապ։ Եւ եղև ի դիպան ժամա-
նակի իբրև դիտացին Տէրէնտն և Ադէն զօրավարքն զօրացն
Յունաց՝ թէ միայն է թագաւորն Հայոց Պապ, և ամենայն մե-
ծամեծքն և զօրքն Հայոց չէին անդ, և էր թագաւորն Հայոց
Պապ բանակեալ ի դաշտին ի Բագրաւանդ գաւառի ի Խու ա-
նուն տեղւոջն, և բանակ զօրացն Յունաց բանակեալ էր անդէն
մօտ առ բանակին Հայոց արքային. ապա զօրավարն Յունաց
հաց մեծապէս գործեալ՝ յընթրիս հրաւիրեալ կոչեցին զմեծ
թագաւորն Հայոց զՊապ մեծապէս ըստ արժանաւորութեան
նորա, որպէս օրէն էր զայր թագաւոր ի հաց մեծ կոչել. և առ-
նէին կազմութիւն պատրաստութեան։

Եւ եկեալ թագաւորն Պապ յընթրիս, մտեալ բազմեցաւ յու-
տել և յըմպել։ Եւ իբրև մտանէր արքայն ի խորանն Տէրէնտի
զօրավարին Յունաց, և լէգէոն սպառակիր հետևակն վահան ի
ձեռն, սակուր զգօտւոյ, շուրջ ի ներքոյ զորմովք խորանին
պատեալ պահէին. սոյնպէս և արտաքոյ կողմէին ի ներքոյ
կուռ վառեալք, և ի վերոյ հանդերձք զգեցեալք պատրաս-
տէին։

Իսկ թագաւորն Պապ համարէր ի միտս իւր թէ ի պատիւ ինչ
նորա զայն առնիցեն։ Եւ մինչ դեռ յընթրիսն ուտէր, սակրաւոր
զօրքն ի թիկանց կուսէ նորա կարգեալք պսակեալք կային
շուրջ զնովաւ յամենայն կուսէ։ Իբրև ընդ գինիս մտին, որպէս
զառաջին ուրախութեանցն նուագն մատուցին արքային Պա-
պայ, և առ հասարակ թմբկահարք, և սրնգահարք, քնարա-
հարք և փողահարք իւրաքանչիւր արուեստօք պէսպէս ձայնիւք
բարբառեցան։

Եւ վահանաւոր լեգէոնին հրաման եառն. և մինչ դեռ թա-
գաւորն Պապ զուրախութեան գինին ունէր ի մատունս իւր, և
նայէր ընդ պէսպէս ամբոխս գուսանացն, աճեակ ձեռամբն
յարմուկն՝ յոր յեցեալ բազմեալ էր՝ ունէր տաշտ ոսկի ի
մատունս իւր, իսկ աջ ձեռնն եդեալ էր ի դաստապան նրանին՝
զոր կապեալն էր յաջու ազդերն իւրում, և մինչ դեռ բերանն
ի բաժակին էր յըմպելն, և աչօքն յառաջ կոյս պշուցեալ հայէր
ընդ պէսպէս ամբոխս գուսանացն, հրաման լինէր ակնարկե-
լով զօրացն Յունաց։

Եւ լեգէոն սակրաւորքն երկու ի թիկանց կուսէ կային ի
սպասու ունկիմբք վահանօքն՝ յանկարծօրէն կից ի վեր առե-
ալ զսակուրսն, զարկանէին թագաւորին Պապայ. մին կշիռ
զուլն հարկանէր սակրաւն, և միւսն եւս սակրաւորն զաջ թաթ
ձեռինն՝ որ կայր ի վերոյ դաստապանի նրանին՝ հարկանէր,
կտրէր և ի բաց ընկենոյր։ Անդէն ի բերանս տապալէր թագա-
ւորն Պապ. և գինին տաշտին և արիւնն պարանոցին նովաւ
հանդերձ ի վերայ բաժակալ սկրտեղն անկանէր առ հասարակ.
և անդէն սատակէր թագաւորն Պապ։

Ընդ շփոթելոյ տաճարին խռովութեան՝ Գնէլ տէր գաւառին
Անձևացեաց յոտն կացեալ յիւրմէ բազմականէն, հանեալ զիւր
սուսերն՝ հարկանէր զմի ի լեգէոնաց անդի սպանանէր, յայն-
ցանէ՝ որ հարին զթագաւորն։ Ապա Տէրէնտ զօրավարին Յու-
նաց զիւր սուսերն հանեալ ածէր, տարակաց ի գլխոյն Գնե-

լոյ զսկաւառակն գլխոյն ի վերայ աչացն ի բաց ընգենոյր: Եւ
այլ ինչ որ ոչ կարաց յանդըգնել առնել ինչ ընդ նոսա և ոչ ինչ»][1]:

Ինչպես տեսնում ենք, Փավստոսի մոտ Պապ թագավորի եղեռնական սպանության նկարագրությունը մոտավորապես նույնն է, ինչ որ Ամմիանոսի մոտ: Տեղ-տեղ հայկական ավանդությունն ունի նույնիսկ ուշագրավ մանրամասնություններ, որոնք, ըստ երևույթին, պատմական են: Սակայն, ինչպես վկայում է Ամմիանոսը, Պապի սպանությունը տեղի էր ունեցել ոչ թե Տերենտիոս զորավարի, այլ Տրայանոսի դավադրությամբ, որը այդ ժամանակ հռոմեական զորքերի հրամանատարն էր Հայաստանում և այդ պաշտոնում հաջորդել էր Տերենտիոսին:

Հռոմեական կայսրության թելադրանքով կատարված վերոհիշյալ ծանր հանցագործությունը, որ տեղի էր ունեցել 374 թվի երկրորդ կեսում, սաստիկ էին հանդիպացել և գործակից, ինչպես հաղորդում է Ամմիանոսը, Հայաստանի «տեղական բնակիչներից մի քանիսը»[2] և, հավանորեն, նաև Հայաստանի սպարապետ Մուշեղ Մամիկոնյանը, ինչպես այդ պարզ ակնարկված է Փավստոսի Պատմության մեջ[3]:

Որ Արշակունիների թագավորության վարկը և հեղինակությունը այդ ժամանակ խիստ թուլացել էին նախարարական Հայաստանի բարձր խավերում՝ այդ պարզ երևում է դարձյալ Փավստոսի վկայությունից հայ մեծամեծների ժողովի մասին Պապի սպանությունից հետո:

«Եվ Հայոց բոլոր մեծամեծ իշխանները,—պատմում է
Փավստոսը,—եկան հավաքվեցին միասին: Թե Մուշեղ սպա-
րապետը, թե Հայր մարդպետը և թե բոլոր իշխաններն ասում
էին՝ «Ի՞նչ անենք, ինչպե՞ս վարվենք, մեր թագավորի համար
վրեժխնդիր լինե՞նք թե ոչ»: Վերջը խորհրդի մեջ ընդունվեց
այս կարծիքը. «Մենք չենք կարող, ասացին, հեթանոս պար-
սիկների ծառայության տակ մտնել և Հունաց թագավորին
թշնամի անել, նաև չենք կարող երկուսին թշնամի դարձնել,
ո՛չ էլ կարող ենք ապրել առանց որևէ մեկի օգնության»:
Ապա խորհրդի մեջ որոշվեց այսպես. «Ինչ որ եղավ՝ եղավ.
ավելի լավ է, որ մենք Հունաց թագավորին ծառայենք և Հու-
նաց թագավորության իշխանությանը հնազանդինք. ինչպես

որ Հունաց թագավորության կամքն է, թող այնպես էլ մեզ հետ վարվի»: Այլևս չմտածեցին վրեժ խնդրել կամ ուրիշ որևէ բան անել, այլ լուռ մնացին և գնացին»:

[«Եւ ժողովեցան եկին ամենայն իշխանքն Հայոց մեծամեծք ի մի վայր ի միասին, և Մուշեղ սպարապետն, և Հայր մարդպետ, և ամենայն իշխանքն ասէին. «Զի՞նչ արասցուք կամ զի՞նչ գործեսցուք, խնդրեսցո՞ւք զվրէժ թագաւորին մերոյ, թէ ոչ»: Եւ ապա հաստատեցաւ այս բան ի խորհրդեանն, և ասեն. «Ոչ կարեմք հեթանոսաց ի պարսկաց ի ծառայութիւն մտանել և թշնամի առնել զթագաւորն Յունաց, և ոչ զերկոսեան թըշնամի առնել, և ոչ առանց միոյ թիկանց կարեմք կեալ»:

Ապա եկաց այս բան ի խորհրդին, թէ զինչ եղև՝ ահա եղև, թող ծառայեսցուք թագաւորին Յունաց, կացցուք ի հնազանդութեան իշխանութեան թագաւորութեանն Յունաց. զիարդ և կամք իցեն թագաւորութեան Յունաց, արասցեն մեզ: Եւ ոչ ինչ արկին ի միտ, կամ վրէժ խնդրել, կամ այլ ազգ ինչ իրս առնել. այլ անցին կացին լուռ»][1]:

Փավստոսի այս վկայությունից երևում է, որ Մուշեղ Մամիկոնյանը և մեծամեծ հայ իշխանները, որոնք լքել էին և չէին պաշտպանել Պապ թագավորին, այլևս չէին կարող հաստատուն նեցուկ համարվել Արշակունյաց թագավորության:

Պապը, ինչպես վերև տեսանք, թագավորել էր Հայաստանում ընդամենը հինգ տարի՝ 370—374 թ., սակայն եթե մենք նրան թագավորած համարենք Արշակ Բ-ից անմիջապես հետո՝ նրա թագավորության տևողությունը կարող ենք ընդունել յոթ տարի (367/8—374), ինչպես որ այդ մատնանշված է Խորենացու Պատմության մեջ:

Պապի անպատիժ սպանությունից հետո Արշակունյաց թագավորությունն արդեն մոտ էր իր մահվան ճգնաժամին և արագ կերպով գնում էր դեպի վերջնական կործանում:

[1] Փավստոս, V, գլ. ԼԹ, էջ 240:

[1] Տե՛ս Փավստոս, էջ 238—240:
[2] *Amm. Marc*., XXX, 1, 3.
[3] Փավստոս, V, գլ. Լ6:

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ

ՎԱՐԱԶԴԱՏ, ԱՐՇԱԿ Գ, ԽՈՍՐՈՎ Դ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱԺԱՆՈՒՄԸ

1. Վարազդատ:— 2. Բանակցությունները Պարսկաստանի և Հռոմեական կայսրության միջև Հայաստանի և Վրաստանի առթիվ:— 3. Ներքին խռովությունները Հայաստանում.— Մուշեղ Մամիկոնյանի և հռոմեական կուսակցության քաղաքական ծրագիրը.— մեղադրանքներ Մուշեղ Մամիկոնյանի դեմ.— Մուշեղի սպանությունը:—4. Հռոմեական կայսրության ծանր դրությունը վեստգոթերի ներխուժման պատճառով:—5. Պարսկաստանի հետ կնքված նոր դաշինքը, որ աննպաստ էր, Հայաստանի հռոմեասեր կուսակցության համար:— 6. Մանուել Մամիկոնյանի վերադարձը Հայաստան Շապուհ Բ-ի համաձայնությամբ.— Վարազդատի պարտությունը Կարինի դաշտում և փախուստը:—7. Արշակ Գ-ի թագավոր կարգվելը Մանուել Մամիկոնյանի խնամակալության տակ.— Հայաստանը Սասանյան Պարսկաստանի գերագույն իշխանության ներքո:—8. Մանուել Մամիկոնյանի մասին Փավստոսի Պատմության վիպական-ստեղծական վկայությունները:— 9. Հայաստանի խաղաղ վիճակը Պարսկաստանի ներքին խռովահույզ դրության պատճառով:— 10. Շապուհ Բ-ի բանակցությունները Թեոդոսիոս կայսեր հետ Հայաստանի բաժանման մասին:— 11. Հայաստանի բաժանումը:— 12. Խոսրով Դ.— Հայաստանի քաղաքական դրությունը 378 թվից մինչև 387 թիվը:— 13. Հայաստանը 387 թվի բաժանումից հետո.—Արշակ Գ և Խոսրով Դ՝ իբրև Հայաստանի անվանական թագավորներ:— 14. Հայաստանի բաժանման մասին Պրոկոպիոսի և Ղազար Փարպեցու վկայությունները:— 15. Արևմտյան կամ Հռոմեական Հայաստանի և Արևելյան կամ Պարսկական Հայաստանի սահմանները:— 16. Նորագույն պատմագետների կարծիքը Թեոդոսիոս Ա-ի արևելյան սխալ քաղաքականության մասին:— 17. Հայաստանի հետագա վիճակը:

Պապի սպանությունից հետո Վաղես կայսրը Հայաստանի թագավոր կարգեց պատանի Վարազդատին (374—378), որը հայ Արշակունիների տոհմից էր: Փավստոսը նրան համարում է Պապի եղբորորդի[1]: Վարազդատի թագավորության ժամանակ ևս Հայոց զորքերի սպարապետության պաշտոնը շարունակում էր վարել Մուշեղ Մամիկոնյանը:

[1] Փավստոս, *V, գլ. լէ, էջ 248:*

Ամմիանոսի պատմելով՝ երբ Շապուհ Բ-ը իմացավ Պապի մահվան մասին, որին նա ամեն կերպ աշխատել էր գրավել իր կողմը՝ սաստիկ վշտացավ: Նա խիստ վրդովված էր իր զորքերի պարտությունների և հռոմեական զորքի գործուն արիության պատճառով և, վախենալով, որ հետագայում դրությունն ավելի վատ կարող է լինել՝ ուղարկեց կայսեր մոտ դեսպան և հանձնարարեց համոզել Վաղեսին, որպեսզի Հայաստանը, որը մշտական աղետների պատճառ էր, բոլորովին վերացվի ու ոչնչացվի: Իսկ եթե այդ չընդունվեր՝ պետք է ուրիշ պահանջ դրվեր, այն է՝ վերացնել Իբերիայի երկու մասի բաժանումը, դուրս հանել այնտեղից հռոմեական մասի զորքերը և տալ թագավորական իշխանությունը միմիայն Վարազ-Բակուրին, որին Իբերիայի թագավոր էր նշանակել Շապուհ Բ-ը:

Վաղես կայսրը, ասում է Ամմիանոսը, պատասխան տվեց, որ նա չէ կարող որևէ փոփոխություն մտցնել դաշնագրերի մեջ, որոնք ընդունված են երկուստեք համաձայնությամբ, ուստի և ինքը այդ դաշնագրերը պաշտպանելու է մեծ ուշադրությամբ: Ի պատասխան կայսեր այս վճռին՝ Պարսից թագավորից ստացվեց նամակ ձմեռվա միայն վերջերին (376 թվի սկզբին), որը պարունակում էր մեծամիտ պահանջներ[1]:

Այնուհետև հարաբերությունները երկու պետությունների միջև սկսել էին դառնալ խիստ տագնապալի, ուստի և Վաղես կայսրը հրամայեց, որ անհապաղ Պարսկաստան գնան հեծելազորի առաջնորդ Վիկտորը և Միջագետքի դուքս Ուրբիկիոսը և հայտնեն Շապուհ Բ-ին կայսեր պարզ ու աներկդիմի վճիռը հետևյալ բովանդակությամբ՝

> *«որ եթե թագավորն արդարության կողմն է և բավականանում է իր ունեցածով, ինչպես այդ անընդհատ նա կրկնում է՝ այդ դեպքում նա հանցանք է գործում, աչք դնելով Հայաստանին, որի բնակչությանը թույլ է տրված ապրել ըստ իր բարեհաճության: Իսկ եթե, ինչպես այդ պայմանավորված է, հետևյալ տարվա սկզբին չվերադառնան անարգել Սուրմակին տրված օգնական զորքերը՝ նրան [թագավորին] կհարկադրեն կատարել այն, ինչ որ հրաժարվում է անել կամավոր կերպով»[2]:*

Դեսպանությունը, ինչպես վկայում է Ամմիանոսը, գործել է հաստատապես և համարձակ, բայց, առանց որևէ հանձնարարական ունենալու, Հայաստանի մասերից ընդունել էր մի քանի փոքր գավառներ, որ իրեն առաջարկել էին:

[1] Տե՛ս *Amm. Marc.*, XXX, 2. 1—3.

[2] *Նույնը, XXX, 2, 4:*

Երբ այս դեսպանությունը վերադարձավ՝ Վաղեսի մոտ եկավ Սուրենը, որն ըստ իր գրքի թագավորից հետո երկրորդ անձն էր Պարսից պետության մեջ: Սա առաջարկեց կայսրին նույն գավառները, որ ընդունել էին առանց երկար մտածելու հոռմեական դեսպանները: Թեև Սուրենին ընդունեցին սիրալիր կերպով և մեծ շքով, սակայն նա ուղարկեցին ձեռնունայն ու չտվին այն, ինչ որ պահանջում էր, և այնուհետև իսկույն սկսեցին մեծ պատրաստություններ տեսնել պատերազմական գործողությունների: Նրանք նկատի ունեին, որ գարնան սկզբներին Վաղես կայսրը ունենալով երեք զորաբանակ, կներխուժե Պարսկաստան, ուստի և շտապ կերպով վարձում էին սկյութական օժանդակ զորքեր[1]:

Երբ տեղի էին ունենում վերոհիշյալ բանակցությունները (375 և 376 թթ.), որոնց ընթացքում առաջին անգամ քննության էր դըրվել Հայոց թագավորության բաժանման խնդիրը՝ Հայաստանում վերսկսվել էին, ինչպես վկայում է Փավստոսը, ներքին խռովությունները, որոնց գլուխ եղավ սպարապետ Մուշեղ Մամիկոնյանը:

Սկսած արդեն Պապ թագավորից Հայ Արշակունիները, ինչպես տեսանք, անունով էին միայն թագավորներ, չունեին նախկին հզորությունն ու հեղինակությունը և պարզապես խաղալիք էին Հռոմեական կայսրության ձեռին:

Պատմագիտական նորագույն երկերում բավարարաչափ ուշադրության չեն առնվել այն նոր մտայնությունն ու ձգտումները, որ այդ ժամանակ ունեցել է Հայաստանում հռոմեասեր կուսակցությունը:

Մուշեղ Մամիկոնյանը, որը պարագլուխն էր այդ կուսակցության, ըստ երևույթին, այլևս վստահություն չուներ Արշակունյաց թագավորության կենսունակության վրա, ուստի և, Հայաստանը պարսկական տիրապետության վտանգից փրկելու համար, նպատակահարմար էր համարում նրա պաշտպանությունն ապահովել Հռոմեական կայսրության միջոցներով ու օգնությամբ, դարձնելով նրան ամրացված ու անմատչելի մի պատվար կայսրության թիկունքում:

Եթե այս ծրագիրը իրագործվեր, ավելի քան հավանական է, որ Մեծ Հայաստանը ևս կմիացվեր կայսրությանը գրեթե նույն հիմունքներով, ինչպես Անդրտիգրիսյան նախարարական երկըրները՝ Ծոփքը և Անգեղտունը, որոնք Հովիանոսի դաշնագրով տրվել էին կայսրությանը:

Մուշեղ Մամիկոնյանի և հռոմեասեր կուսակցության քաղաքական այս նոր կողմնորոշումը, որ արժանի է հատուկ ուշադրության, պարզ ու որոշ մատնացույց է արված Փավստոսի մոտ: Կարևոր նրա հատվածը անհրաժեշտ եմ համարում մեջ բերել ընդարձակ բովանդակությամբ:

«Հայոց Պապ թագավորի մահից հետո,—վկայում է Փավստոսը,—Հունաց թագավորը Հայոց աշխարհի վրա թագավորեցրեց Արշակունիների նույն տոհմից մի ոմն Վարազդատի: Սա մեծ շքով եկավ Հայոց երկիրը և թագավորեց Հայոց երկրում: Նա տարիքով մանուկ էր, լի արիությամբ, կորովի ձեռքերով, քաջ սրտով, բայց թեթև մտքի տեր էր, մանկաբարո, տղայահանձար ու մանկամիտ էր: Բայց և այնպես, երբ նրան տեսան, հավաքվեցին նրա մոտ բոլոր հայ տոհմերը՝ մեծամեծներն ու նախարարները, որոնք ընդունեցին նրան և ուրախացան, որ նա իրենց թագավորն է:

Իսկ Հայոց սպարապետ Մուշեղը հայերին առաջնորդում էր, լավ պահպանում էր Հայաստանի սահմանները, ինչպես որ մեծապես վարժ էր բարեկարգ պահել աշխարհը, և բարի խրատներ էր տալիս մանուկ Վարազդատ թագավորին: Նա միշտ հոգում էր Հայոց աշխարհի թագավորության համար, թե ի՛նչ եղանակով կամ ինչպե՛ս կարող կլինի երկիրը չեն- մնալ, և միշտ բարեմտորեն աշխատում էր, որպեսզի թագավորությունը կարողանա հաստատուն լինել:

Նա խորհրդակցում էր Հունաց իշխանների հետ և նրանց միջոցով նաև կայսեր հետ, թե անհրաժեշտ է շինել Հայոց երկրում, ամեն մի գավառում, ամուր պարիսպներով շըջապատված քաղաքներ՝ յուրաքանչյուր գավառի մեջ կամ մի-մի քաղաք, կամ երկ-երկու, և հարկավոր է դրանք հաստատել Հայոց ամրոց երկրում, իբրև զորանիստ կայաններ, մինչև Գանձակ սահմանային երկիրը, որը գտնվում է Պարսից կողմում ու Հայաստանի սահմանում. հարկավոր է նաև Հայոց բոլոր ազատներին դարձնել զինվոր կայսերական ծախքով, ինչպես և Հայոց աշխարհի զորքերը, որպեսզի այսպիսով բոլորովին ապահով լինեն իրենց թշնամիներից՝ Պարսից զորքերից:

Եվ Հունաց թագավորը մեծ ուրախությամբ հանձն առավ այդ անել, որպեսզի բոլոր այս միջոցառումներով աշխարհը հաստատուն մնա ու անխզելի կերպով ենթարկվի իրեն և որպեսզի Պարսից թագավորը չկարողանա Հայոց աշխարհն իրեն գրավել»:

[1] Տե՛ս Amm, Marc., XXX. 2. 5—6.

[«Եւ եղև յետ մահուն Պապայ թագաւորին Հայոց, թագաւորեցոյց թագաւորն Յունաց զՎարազդատ ոմն ի նմին տոհմէն Արշակունի ի վերայ աշխարհին Հայոց: Եկն բազում շքով եմուտ յերկիրն Հայոց, և թագաւորեաց յերկրին Հայոց: Եւ էր նա մանուկ յաւուրց, լի արութեամբ, կորովի ձեռօք, քաջ սըրտիւ, և ի մտաց թեթև, մանկաբարոյ, ողայահանճար, մանկամիտ: Բայց սակայն իբրև տեսին զնա ժողովեցան առ նա ամենայն ազգք Հայոց՝ մեծամեծք, նախարարք, և կամեցեալ խնդացին զթագաւորելն նորա ի վերայ իւրեանց:

Եւ սպարապետն Հայոց Մուշեղ առաջնորդէր Հայոց. և զգուշանայր զսահմանօքն Հայոց, որպէս սովոր էր կարգել զաշխարհ մեծապէս. և խրատ բարեաց թագաւորին մանկանն Վարազդատայ մատուցանէր: Եւ հոգայր հանապազ վասն թագաւորութեան աշխարհին Հայոց, և զիարդ կամ որպէս շէն լինել մարթասցէ. և հանապազ երկս արկանէր բարեխորհուրդն, զի հաստատուն կալ կարասցէ թագաւորութիւնն:

Խորհէր ևս ընդ իշխանսն Յունաց, և նոքօք ընդ կայսերն, թէ պարտ է նոցա քաղաք մի շինել յերկրին Հայոց. ի մի մի գաւառս, որ մին մի քաղաքս, որ երկուս երկուս ամուր պարըսպաւորս զօրանիստս հաստատել ընդ ամենայն երկիրն Հայոց, մինչև ի Գանձակ սահման երկիրն, որ Պարսից կուսէ էր, Հայոց սահման էր. և զամենայն ազատսն Հայոց կայսերական թոշակօքն զինուորել, սոյնպէս և զօրաց երկրին Հայոց, զի այսպէս ամենայն զգուշութիւն լիցի առ ի թշնամեաց իւրեանց ի զօրացն Պարսից:

Եւ թագաւորն Յունաց յանձին ունէր մեծաւ խնդութեամբ առնել զայս. զի այսու ամենայնիւ աշխարհն հաստատուն լիցի և անշարժ ի նմանէն, զի մի՛ կարասցէ թագաւորն Պարսից յիւր վարել զաշխարհն Հայոց»][1]:

Փավստոսի Պատմության այս հատվածը, թեև վիպական բընույթի պատմվածք է, սակայն իր հիմքում պատմական է և արժանահավատ: Հատվածի բովանդակությունից միանգամայն պարզ երևում է, որ Հայաստանի անկախության և Արշակունյաց թագավորության վերականգնման ու զորեղացման տեսակետից Մուշեղ Մամիկոնյանի և հռոմեական կուսակցության քաղաքական կողմնորոշումը նույնքան անբարենպաստ ու վտանգավոր է եղել, ինչպես Մերուժանի և պարսկական կուսակցության կողմնորոշումը: Այս

¹ Փավստոս, V, գլ. ԼԴ, էջ 240—241:

երկու կուսակցությունն էլ, զոհաբերելով Հայաստանի պետական ինքնակալությունը, տրամադիր են եղել հանձնել երկիրը հարևան հզոր պետություններին:

Իհարկե, իրենք՝ Արշակունիները, Պապը և Վարազդատը, որոնք ունեին մտերիմ կողմնակիցներ ու խորհրդատուներ, չէին կարող հանդուրժել իրենց թագավորական իշխանության նվաղեցումը կամ ոչնչացումը և ձգտելու էին վերականգնել Արշակունյաց թագավորության հին փարկը և փայլը: Հայոց թագավորության պահպանման ու ուժեղացման այս քաղաքականությունը, անշուշտ, ավելի էր համապատասխանում հայ երկրի իրական շահերին, քան քաղաքական վերոհիշյալ ընթացքը Մուշեղ Մամիկոնյանի:

Փավստոսի պատմելով՝ Սահառունյաց տոհմի Բատ նահապետը, որը Վարազդատի դաստիարակն էր, ամեն կերպ աշխատել էր գրգռել մանուկ թագավորին Մուշեղ Մամիկոնյանի դեմ: Նրա հարուցած մեղադրանքները Մուշեղի դեմ, ինչպես մատնանշել է Մարկվարտը, անհիմն չէին[1]:

Ամենածանր մեղադրանքն այն էր, որ երբ Մուշեղ սպարապետի դրդումով ու խորհրդով էին սպանել տվել Վաղես կայսրը և հռոմեական զորավարները Վարազդատի հորեղբորը, Պապ թագավորին: Բացի այդ, Բատ Սահառունին հասկացրել էր Վարազդատին, որ Մուշեղի ծրագրած կայսերական ծրագրով զինվորական վերակազմությունը և Հայոց երկրում քաղաք-ամրությունների կառուցումը, որոնք զորանիստներ էին լինելու հայկական ու հռոմեական զորքերի, կարող են ունենալ այն հետևանքը, որ Հայաստանը փաստորեն կդառնա առկցված ու անքակտելի մաս Հռոմեական կայսրության:

Վարազդատը, վրեժխնդիր լինելով իր հորեղբոր սպանության համար՝ դավադրություն կազմեց Մուշեղ Մամիկոնյանի կյանքի դեմ, և վերջինս սպանվեց ճշտիվ նույն եղանակով, ինչպես և Պապ թագավորը: Մուշեղ սպարապետը, հրավիրված լինելով Վարազդատի մոտ խնջույքի, սրախողխող արվեց կերուխումի և ուրախության ժամանակ[2]:

Հայաստանում տեղի ունեցած այս ծանր անցքից հետո քաղաքական դրությունն Արևելքում հիմնապես փոխվեց ի նպաստ Սասանյան Պարսկաստանի: Շապուհ Բ-ը, ինչպես վկայում է Ամմիանոսը[3], լուր առնելով, որ Վաղես կայսրը պատերազմի նախապատրաստություններ է տեսնում և մտադիր է արշավել Պարս-

¹ Տե՛ս *Markwart*, Südarmenien und die Tigrisquellen, էջ 69*—71*:

² Փավստոս, V, գլ. ԼԵ, էջ 242—244:

³ *Amm. Marc.*, XXX, 2, 7—8.

կատան՝ խիստ պայքարցավ և հրամայեց Սուրենին եա վերցնել այն գավառները, որ ընդունել էին Վիկտորը և Ուրբիկիոսը։ Այդ փոքր գավառները, որ 376 թվի բանակցությունների ժամանակ ստացել էր Հռոմեական կայսրությունը, ինչպես մատնանշել է Ադոնցը[1], հավանորեն, Հաշտյանքը և Բալահովիտն էին, որոնք գտնվում էին Տավրոսյան լեռների և Արածանի գետի հյուսիսակողմում։

Համաձայն Շապուհ Բ-ի հրամանի, Սուրենն այս գավառները եա վերցրեց առանց պատերազմի։ Հռոմեական կայսրությունը չկարողացավ հակահարված տալ և վրեժ առնել, որովհետև հենց նույն այս ժամանակ ապստամբել էին վեստգոթերը, որոնք ներխուժել էին Թրակիա և սպառնում էին կայսրության մայրաքաղաք Կոստանդնուպոլսին (377 թ.)։

Բարբարոսական ժողովուրդների հեղեղանման այդ առաջխաղացումը հարկադրեց Վաղեսին դուրս հանել Հայաստանից հռոմեական զորքերը և ուղարկել Թրակիա։ Նա նորից բանակցություններ սկսեց Շապուհ Բ-ի հետ և, ուղարկելով Պարսկաստան հեծելազորի հրամանատար Վիկտորին, հանձնարարեց նրան, ինչ գնով էլ լինի, համաձայնության գալ Հայաստանի խնդրում[2]։

Համաձայնությունը, ինչպես վկայում են Զոսիմոսը և Եվնապիոսը[3], կայացել էր, և խաղաղությունը պահպանվել էր, սակայն, դժբախտաբար, նրանք չեն հաղորդում այդ դաշինքի պայմանները։ Ենթադրում են, որ հռոմայեցիները, ընդունելով Պարսից դեսպան Սուրենի նախկին առաջարկը, հրաժարվել էին Հայաստանից և համաձայնել էին ստանալ վերոհիշյալ երկու գավառները՝ Հաշտյանքը և Բալահովիտը[4]։

378 թվի ապրիլ ամսին Վաղես կայսրն Անտիոքից գնաց մայրաքաղաք և մի քանի ամսից հետո Ադրիանուպոլիս քաղաքի մոտերքում ծանր պարտություն կրեց վեստգոթերից և սպանվեց (9 օգոստոսի 378 թ.)։

Վաղեսի մահից հետո Հռոմեական Արևմուտքի կայսր Գրատիանոսն իրեն կառավարչակից դարձրեց Թեոդոսիոսին (379—395), որը շարունակեց պատերազմը վեստգոթերի դեմ։ Կայսրության ճգնաժամային դրությունը տևեց մինչև 382 թիվը, և որովհետև

[1] Տե՛ս Адонц, Армения в эпоху Юстиниана, էջ 44—45։

[2] Amm. Marc., XXXI, 7, 1—2.

[3] Տե՛ս Zosimi, Historia nova, IV, 21 և Eunap., Exc. de leg., p. 21։

[4] Տե՛ս Адонц, Армения в эпоху Юстиниана, էջ 44. Գարբեյան, Տիեզերական պատմութիւն, Բ, էջ 514։

Թեոդոսիոսը հնարավորություն չուներ միջամտելու Մերձավոր Արևելքի գործերին՝ Հայոց թագավորությունը և Վարազդատը, բնականաբար, թողնվեցին բախտի քմահաճույքին։

Մուշեղ Մամիկոնյանի սպանությունից հետո Հայաստանի սպարապետ էր դառել Բատ Սահառունին, իսկ Մամիկոնյան տոհմի նահապետ՝ Վաչե Մամիկոնյանը։ Բայց նրանք իրենց այդ իշխանություններում երկար չմնացին։ Հռոմեական կայսրության և Սասանյան Պարսկաստանի միջև կայացած 377 թվի պայմանագրության համաձայն, որով որոշվել էր Հայաստանի քաղաքական ապագա վիճակը, Հայոց աշխարհի մեծագույն մասում նորից հաստատվեց պարսկական իշխանությունը։ Եվ այսպիսով, ինչպես տեսնում ենք, հռոմեասեր նախարարների ու եկեղեցականների բոլոր վերոհիշյալ հույսերն ի դերև ելան։

Քաղաքական դրության այս արմատական փոփոխման ժամանակ Պարսկաստանից Հայաստան եկավ, հավանորեն, Շապուհ Բ-ի համաձայնությամբ ու հանձնարարությամբ, Արտաշեն Մամիկոնյանի որդի Մանուել Մամիկոնյանը, որին գերի էին տարել Պարսից զորքերը։ Սա, լինելով Մամիկոնյան տոհմի ավագագույն անդամը՝ ստացավ Վաչեի համաձայնությամբ իր տոհմի նահապետության իշխանությունը և շուտով՝ նաև Հայաստանի սպարապետության պաշտոնը։

Փավստոսի պատմության մեջ Մանուել Մամիկոնյանին վերաբերյալ մասը եա[1], որ ունի վիպական-բանաստեղծական բնույթ, հիմնված է, մեծ մասամբ, պատմական հիշողությունների վրա։ Պատմական պետք է համարել այն, որ Մանուել հավանորեն, ժամանելով Հայաստան, առաջարկել էր Վարազ-Մամիկոնյանը?—

Արշակ Գ-ը (378—389), որին անվանական կերպով իշխանակից էր նրա փոքր եղբայր Վաղարշակը։

Մանուելի խնամակալության մասին կարևոր տեղեկություններ է հաղորդում Փավստոսը հետևյալ իր վկայության մեջ, որը համարվում է էապես ստույգ և պատմական։

«Իսկ Հայոց սպարապետ Մանուել զորավարը,—պատմում է Փավստոսը,—նվաճեց աշխարհը, ժողովեց իր շուրջը Հայոց բոլոր մեծամեծներին ու նախարարներին և դառավ նրանց առաջնորդն ու գլուխը։ Նա վարում էր իշխանությունը, հրամաններ էր տալիս աշխարհին թագավորի փոխարեն և պահում էր աշխարհը շեն վիճակում։

Եվ նա, վերցնելով Պապ թագավորի կին Զարմանդուխտ տիկնոջը և նրա Արշակունի որդիներին՝ պահում էր նրանց իբրև թագավոր և շրջեցնում էր պատվով։ Մեծ իմաստությամբ ու մեծ հաջողությամբ նա ղեկավարեց Հայոց աշխարհը ամբողջ իր կյանքի ընթացքում։ Արշակունի փոքր երեխաների անունները էին՝ մեծինն Արշակ և փոքրինը Վաղարշակ։ Մանուել սպարապետը նրանց պահում ու մեծացնում էր իբրև սաներ, իսկ նրանց Զարմանդուխտ մորը մեծ շքեղությամբ պահում ու պատվում էր իբրև տիկնոջ»։

[«Եւ սպարապետն զօրավարն Հայոց Մանուէլ նուաճեաց զաշխարհս, և զամենայն մեծամեծս և զնախարարսն Հայոց առ ինքն ժողովէր, և էր նա առաջնորդ և գլուխ նոցա. և վարէր զիւր իշխանութիւնն և տայր հրաման աշխարհի փոխանակ թագաւորի. և ունէր զաշխարհ ի շինութեան։

Եւ զկինն Պապայ արքայի զԶարմանդուխտ տիկին հանդերձ որդւովք Արշակունովք, առեալ զնոսա ի տեղի թագաւորի կալեալ ի պատիւ շրջեցուցանէր։ Մեծաւ իմաստութեամբ և բարւոք յաջողութեամբ աշխարհին Հայոց մեծապէս առաջնորդէր, որչափ եկաց ժամանակս։ Բայց անուանք պատանեկացն Արշակունեացն, անուն երիցուն՝ Արշակ, և կրտսերուն՝ Վաղարշակ։ Զնոսա առեալ Մանուէլն սպարապետն իբրև զսան սնուցանէր, և զմայրն նոցա զԶարմանդուխտ ի մեծի շքի տիկնութեան պատուէր»][1]։

Սկզբնաղբյուրների ուշադիր քննությունը ցույց է տալիս, որ իր իշխանության սկզբից (378 թ.) մինչև իր մահը (շուրջ 384/5 թ.) Մանուել Մամիկոնյանը խաղաղ կերպով կառավարել էր Հայաս-

1 Փավստոս, V, գլ. ԼԷ, էջ 251։

տանը, գտնվելով Սասանյան Պարսկաստանի գերագույն իշխանության ներքո։ Հայաստան էր եկել, ինչպես, հաստատելով Ամմիանոսի հաղորդած տեղեկությունը[1], վկայում է նաև Փավստոսը, Սուրեն մարզպանը տասը հազար պարսկական հեծելազորով։

«Հայոց աշխարհը,—ասում է Փավստոսը,—տվին Սուրենի ձեռքը և հնազանդ էին Պարսից թագավորի հրամաններին. և սահմանեցին Հայոց աշխարհից Պարսից թագավորին հարկեր, որոշելով տալ ընծաներ ու նվերներ։ Նույնպես և Սուրեն մարզպանին սահմանեցին տուրքեր, ընծաներ ու ապրուստի համար մթերքներ, այսպես և տասը հազար հեծելազորին՝ դարման և կերակուր, որքան պետք էր»։

[«Տային զաշխարհն Հայոց ի ձեռս Սուրենայ, և հնազանդէին հրամանաց թագաւորին Պարսից. և կարգէին թագաւորին Պարսից յաշխարհէն Հայոց հարկս՝ տալ ընծայս և պատարագս։ Սոյնպէս և մարզպանին Սուրենայ հասս և կօշիկս և պիտոյս զռճկացն. սոյնպէս և տասն հազարացն դարման և կերակուր ըստ պիտոյիցն»][2]։

Փավստոսի այս թանկարժեք վկայությունից պարզ երևում է, որ արդեն Մանուել Մամիկոնյանի խնամակալության ժամանակ Հայաստանը հարկատու երկիր էր դառել Պարսից թագավորության։

Պետք է մատնանշել սակայն, որ, հակառակ այս եզրակացությունների, պատմագետներից ոմանք ստույգ ու արժանահավատ են համարել Մանուելի մասին նաև Փավստոսի այն պատմվածքները, որոնք պարզապես վիպական ստեղծումներ են և հորինված են Մամիկոնյան Մանուելին փառաբանելու համար։

Փավստոսը պատմում է, որ Մանուելը, որը սկզբում բարեկամացել էր պարսիկների հետ՝ հետո, Մերուժան Արծրունու նենգամիտ դրդումով, նրանց թշնամացել էր և, հարձակվելով Սուրեն մարզպանի բանակի վրա՝ ամբողջ նրա զորքը կոտորել էր։ Այնուհետև մեծ պատերազմ էր սկսվել Պարսկաստանի հետ, և Մանուելը երեք մեծ ճակատամարտում հաղթել ու բնաջինջ էր արել իր դեմ ուղարկված պարսկական ահռելի բանակները, նաև կոտորել էր Մերուժանի ամբողջ զորքը և սպանել էր իրեն՝ Մերուժանին։ Փավըստոսի պատմելով՝ այս մեծ հաղթություններից հետո՝ Հայաստանը, թոթափած լինելով Պարսից լուծը, յոթ տարի ապրել էր խաղաղ ու անդորր Մանուելի իշխանության ներքո[3]։

1 *Amm. Marc.*, XXX, 2, 7—8.

2 Փավստոս, V, գլ. ԼԸ, էջ 253։

3 Նույնը, V, գլ. ԼԸ—ԽԳ։

Փավստոսի Պատմության վիպական-առեղծական այս հատվածները, որ պատմական են համարել հայ պատմագետներից շատերը[1], չեն ստուգվում հույն-հռոմեական աղբյուրների վկայություններով և ունեն հեքիաթային բնույթ: Շատ պարզ է, որ անդամատված և քայքայված Հայաստանը, որի ռազմական ուժն այդ ժամանակ շատ փոքր էր, չէր կարող պատերազմ վարած լինել հզոր Պարսկաստանի դեմ:

Կարելի է ճիշտ համարել միայն այն, որ Մանուել Մամիկոնյանի խնամակալության ժամանակ Պարսկաստանը վարել էր Հայաստանում զգուշավոր ու մեղմ քաղաքականություն, և հայ ժողովուրդը ազատ շունչ էր քաշել արտաքին ու ներքին կռիվների ծանր ցնցումներից հետո:

Մանուելի իշխանության հենց սկզբում, 379 թվին, Պարսկաստանում վախճանվել էր Շապուհ Բ-ը (309 կամ 310—379 թ.): Նրան հաջորդել էր ծերունի Արտաշիր Բ-ը (379—383/4), որին գահընկեց արին մեծամեծները: Այնուհետև թագավորեցին Շապուհ Բ-ի որդիները՝ Շապուհ Գ-ը (383/4—388/9) և Վռամ Դ-ը (388/9—399), որոնց երկուսին էլ սպանեցին ազնվականները:

Հավանորեն, Սասանյան Պարսկաստանի խառնակ ու խռովահույզ ներքին այս դրությունն էր գլխավոր պատճառներից մեկը, որ 379 թվից հետո հայ ժողովուրդը համեմատաբար խաղաղ կյանք ունեցավ, իսկ չորրորդ դարի վերջերում հայերեն նշանագրերի գյուտով հզոր մի զենք ձեռք բերեց իր ինքնապաշտպանության և ինքնուրույն կուլտուրական զարգացման համար:

382 թվին Թեոդոսիոս Ա-ը (379—395) պարտության մատնեց ապստամբած վեստգոթերին, որոնք այնուհետև հավատարիմ մնացին կայսրությանը մինչև Թեոդոսիոսի մահը: Շատ պարզ է, որ այս հաղթությունից հետո Հռոմեական կայսրությունն աշխատելու էր կարգավորել քաղաքական խճճված դրությունը նաև Մերձավոր Արևելքում: Եվ ուշագրավ է, որ արդեն 383 թվին հռչակավոր հույն ճարտասան ու փիլիսոփա Թեմիստիոսը Թեոդոսիոս կայսեր ներկայությամբ արտասանած իր ճառում ասել էր, որ հայերին, որոնք Թեոդոսիոսի իշխանության սկզբներին զենքը ձեռներին թշնամի են եղել Հռոմեական կայսրության՝ Թեոդոսիոս կայսրը, ինչպես հույս

[1] Տե՛ս Գարագաշյան, Քննական պատմություն Հայոց, Գ, էջ 172—179. Լեո, Հայոց պատմություն, Ա, էջ 663—666. K. Aslan, Études historiques sur le peuple arménien, էջ 198 և ուրիշները:

կա, կկարողանա, ինչպես նա սովոր է, քաղցրությամբ ու առանց արյունհեղության գրավել հռոմայեցիների կողմը[1]:

Եվ, իրավ, Հայաստանի խնդիրը լուծվեց առանց բարդությունների 384—387 թվերին:

Ինչպես հաղորդում են հույն-հռոմեական աղբյուրները, 384 թվին Կոստանդնուպոլիս եկավ Շապուհ Գ-ի ուղարկած դեսպանությունը, որն իր հետ բերել էր կայսեր համար հարուստ նվերներ՝ թանկագին քարեր, մետաքս ու նույնիսկ փղեր, և որը ծանուցել էր կայսրին, ինչպես այդ սովորություն էր երկու պետությունների մեջ, Շապուհ Գ-ի գահակալության մասին[2]: Ենթադրում են, որ այս դեսպանությունը նաև որոշ առաջարկություններ էր արել խաղաղության կնքման ու Հայաստանի բաժանման մասին:

Այնուհետև, 386 թվին Պոլիս եկավ պարսկական երկրորդ պատգամավորությունը, իսկ ապա, ինչպես հաղորդում է Կլավդիանոս բանաստեղծը, Թեոդոսիոս կայսրը Տիզբոն ուղարկեց իբրև դեսպան Ստիլիքոնին, որի միջնորդությամբ, ինչպես կարծում են, 387 թվին կնքվեց խաղաղության դաշինքը և համաձայնություն կայացավ Հայաստանի մասին[3]:

Պետք է ասել, որ Հայաստանի բաժանման տարեթվի մասին ուրիշ կարծիք ունեն Սեն-Մարտենը, Նյոլդեկեն, Մարկվարտը և ուրիշները, որոնք Հայաստանի վերջնական բաժանումը ենթադրում են 389 կամ 390 թվին[4]: Սակայն հավանական կարելի է համարել առաջին ենթադրությունը, որովհետև, ինչպես մանրամասն ցույց է տվել Գյուտերբոկը, այդ կարծիքը համապատասխանում է հայկական աղբյուրների և, գլխավորապես, Ղազար Փարպեցու ճշգրիտ վկայություններին[5]:

[1] Տե՛ս *Themistios*, Oratio XVI. Համեմատե՛ Գարբճյան, Տիեզերական պատմություն, Բ, էջ 519:

[2] Տե՛ս *Orosius*, VII, 34. *Socrates*, Eccles. hist., V, cap. XII (Oxford, 1893). *Marcellinus*, Chron. a. 384 և ուրիշ.:

[3] Տե՛ս Կ. Գյուտերբոկ, Հռովմեական Հայաստան և հռովմեական սատրապութիւններ Դ—Զ դարերում, թարգմ. Մ. Ներշուանի, Վիեննա, 1914, էջ 16—17. *Norman H. Baynes*, The Cambridge Medieval History, vol. I, 1936, էջ 240 Հ. Գելցեր, Համառոտ պատմութիւն Հայոց, թարգմ. Գր. Գալեմքյարյանի, Վիեննա, 1897, էջ 10. Հ. Հյուբշման, Հին Հայոց տեղւոյ անունները, թարգմ. Բ. Պիլեզիկճյանի, Վիեննա, 1907, էջ 34 և ուրիշները:

[4] Տե՛ս *Lebeau*, Histoire du Bas-Empire, t. IV, Paris, 1824, էջ 265. *Nöldeke*, Aufsätze zur persischen Geschichte, Leipzig, 1887, էջ 103. *Markwart*, Südarmenien und die Tigrisquellen, էջ 126 և ուրիշները:

[5] Տե՛ս Կ. Գյուտերբոկ, Հռովմեական Հայաստան, էջ 22—27:

Հայկական մատենագիրները, Փավստոսը և Ղազար Փարպեցին, նույն այս ժամանակաշրջանի պատմությունը տալիս են ընդարձակ ու հանգամանորեն։

Մանուել Մամիկոնյանը, որը վախճանվել է մոտավորապես 384/5 թվերին, ինչպես հաղորդում է Փավստոսը, իր մահից առաջ, Հայոց աշխարհի վրա թագավորեցրել էր Արշակ Գ-ին, որը դեռևս անչափահաս երեխա էր, և հատուկ գրությամբ Հայաստանը և Հայոց թագավորին «հանձնել էր» հռոմեական կայսրին[1]։

Մենք արդեն վերև մատնանշել էինք, որ Արշակ Գ-ի թագավորությունը Հայաստանում ավելի անվանական էր, քան իրական։ Եվ ուշագրավ է այս տեսակետից, որ «Նշանագիր կարգաց բանից Եղնկանն երիցու» յոթերորդ դարի հայանի գրվածքում Մանուել Մամիկոնյանի խնամակալության և Արշակ Գ-ի թագավորության ամբողջ ժամանակաշրջանը համարվում է Պարսից տիրապետության շրջան և անվանված է՝ «օտարակալութիւն»։

Ինչպես վկայում է Եղնիկը, Արշակ Բ-ից հետո Հայաստանում թագավորել էր նրա որդին Պապը, իսկ

> «յետ նորա Վարազդատ նմին թագաւորութեանն տոհմէ, որ ապա օտարակալութիւն։ Ապա Խոսրով ոմն ի նմին տոհմէ թագաւորացն Հայոց. առ սովաւ բաժանեցին զերկիրն Հայոց ընդ երկու՝ թագաւորն Յունաց և թագաւորն Պարսից. Պարսից կողմանն Խոսրով թագաւորէ, մասինն Յունաց աշխարհին՝ Արշակ ոմն ի նմին տոհմէ ի թագաւորէ, հրամանաւ Յունաց թագաւորին»[2]։

Մանուել Մամիկոնյանի մահից հետո (384/5), որը տեղի էր ունեցել պարսկական-հռոմեական վերոհիշյալ բանակցությունների ժամանակ, Սասանյան Պարսկաստանը նպատակահարմար համարեց Հայաստանի թագավորությունը տալ անվանական կերպով ո՛չ թե Արշակ Գ-ին, այլ պատանի Խոսրով Դ-ին (385—388), որն Արշակունիների հայ թագավորական տոհմիցն էր։

Այդ մասին ուշագրավ են ու հետաքրքիր Փավստոսի ու Փարպեցու վկայությունները, որոնցից դժվար չէ հետևցնել, որ Խոսրով Դ-ին Հայաստանի թագավոր էր կարգել Շապուհ Գ-ը (383/4—338/9) Մանուելի մահից անմիջապես հետո և պարզապես 387 թվի դաշնագրությունից առաջ։ Այդ վկայությունները, որ խիստ կարևոր են հայ վերջին Արշակունիների մութ ու խճճված ժամանակա-

[1] Փավստոս, V, գլ. ԽԴ, էջ 264։

[2] Տե՛ս «Սամուէլի քահանայի Անեցւոյ, Հաւաքմունք ի գրոց պատմագրաց», հրատ. Ա. Տեր-Միքելյանի, Վաղարշապատ, 1893, ծան. 22, էջ 267։

գրության ճշտման համար՝ անհրաժեշտ եմ համարում մեջ բերել ընդարձակ բովանդակությամբ։

1. Փավստոս, VI, գլ. Ա՝

«Ապա Հայոց Մանուել զորավարի մահից հետո՝ Արշակի
թագավորությունը ոչ մի կերպ չկարողացավ հաստատվել երկ-
րում, այլ Հայոց նախարարներից շատերը նրանից անջատվե-
ցին ու գնացին Պարսից թագավորի մոտ և Հայոց աշխարհը
հանձնեցին նրան ու խնդրեցին նրանից Արշակունի թագավոր։
Եվ նա մեծ ուրախությամբ հանձն առավ իր ձեռքով ու կար-
գադրությամբ տալ Հայոց թագավորության միևնույն տոհմից
Արշակունի թագավոր, որպեսզի Հայոց աշխարհը նրա միջո-
ցով ինքը գրավե։ Ապա նա գտավ նույն տոհմից Խոսրով ա-
նունով մի մանուկ, թագ դրեց նրա գլխին և նրան կին տվեց
իր Զրվանդուխտ քրոջը. նա ուղարկեց նրա հետ իրեն ենթա-
կա բոլոր զորքերը և Խոսրով թագավորին տվեց իբրև դաստիա-
րակ Զիկ նվիրակին։ Եվ նրանք եկան հասան Հայոց աշխարհը։
Երբ Արշակ թագավորը սրանց տեսավ՝ հեռացավ տեղի տը-
վեց և գնաց Հունաց սահմանները, որ թիկունք էին Հայոց Ար-
շակ թագավորին. իսկ Խոսրովին թիկունք էր Պարսից թա-
գավորը։
Այնուհետև Հունաց զորքերն օգնության եկան թագավորին
և Արշակ թագավորը Եկեղյաց գավառի կողմերումն էր. իսկ
Պարսից զորքը և Խոսրով թագավորն Այրարատ գավառումն
էին։ Ապա Հունաց և Պարսից երկու թագավորների դեսպան-
ներն ու պատգամավորները իրար մոտ երթևեկեցին ու այնու-
հետև Հունաց թագավորը և Պարսից թագավորը խորհուրդ
արին և իրար հետ համաձայնության եկան»։

[«Ապա յետ մահուն Մանուէլի զօրավարին Հայոց ոչ իմն
կարաց հաստատել ի վերայ աշխարհի թագաւորութեանն Ար-
շակայ. այլ բազումք ի Հայոց նախարարացն անտի ելին զա-
տեան գնացին առ թագաւորն Պարսից, և մատնեցին նմա
զաշխարհն Հայոց. և խնդրեցին ի նմանէ թագաւոր Արշակունի։
Եւ նորա յանձին կալեալ մեծաւ խնդութեամբ ընդ իւր ձեռն
տալ իւրով բանիւ ի նմին տոհմէ ի թագաւորութենէն Հայոց
Արշակունի, և նովաւ յինքն գրաւել զաշխարհն Հայոց։ Ապա
գտանէր ի նմին տոհմէ մանուկ մի անուն Խոսրով, և կապեաց
թագ ի գլուխ նորա. և ետ նմա կին զքոյր իւր զԶրուանդուխտ,
և արար ընդ նմա զամենայն զզօրս զօրութեան իւրոյ. և Զիկ

նուիրակ դաստիարակ եւ արքային Խոսրովայ. և եկին հասին յաշխարհն Հայոց: Իբրև եաես Արշակ արքայ զնոսա, մերժեցաւ տեղի եւ չոգաւ գնաց ի սահմանս Յունաց. և էին թիկունք Արշակայ թագաւորին Հայոց. և Խոսրովու՝ թագաւորն Պարսից:

Ապա եկին զօրքն Յունաց թագաւորին ի թիկունս. և թագաւորն Արշակ զԵկեղեաց գաւառաւ, և զօրքն Պարսից և արքայն Խոսրով յԱյրարատ գաւառին: Ապա դեսպանք և հրեշտակք երկուց թագաւորացն՝ Յունացն և Պարսից, միմեանց առ միմեանս երթեւեկէին: Եւ այնուհետև առնէ խորհուրդ միաբանութեան հաւանութեան ընդ միմեանս թագաւորն Յունաց և թագաւորն Պարսից»][1]:

2. Ղազար Փարպեցի, I, գլ. Զ՝

«Երբ Արշակունիների թագավորությունը բաժանվեց երկու մասի և Հայոց աշխարհի արևմտյան կողմը հնազանդեցվեց Հունաց թագավորին և դրվեց նրա տերության իշխանության տակ, իսկ արևելյան կողմը ենթարկվեց դառն ու բռնակալական ծառայությամբ Պարսից թագավորին՝ այնուհետև Պարսից թագավորին բաժին ընկած մասի Հայոց նախարարները գնացին և խնդրեցին իրենց թագավոր համաձայն բնիկ նախնի կարգի Արշակունիների ազգից:

Եվ Պարսից Շապուհ թագավորը, կատարելով նրանց խնդիրքը՝ տվեց Արշակունիների ազգից նրանց թագավոր, որի անունըն էր Խոսրով: Իսկ մինչ այդ նախկին Հայոց թագավոր Արշակը միահեծան թագավորում էր Հայոց ամբողջ աշխարհի վրա»:

[«Եւ ի բաժանելն զթագաւորութիւն Արշակունւոյն յերկուս, առ ի հնազանդեցուցանել զկողմն արևմտից աշխարհիս Հայոց՝ թագաւորին Յունաց ընդ իշխանութեամբ իւրոյ տէրութեանն, և զկողմն արևելից խոնարհեցուցանելով դառն և բռնաւոր ծառայութեամբ՝ արքային Պարսից՝ երթեալ այնուհետև նախարարքն Հայոց ի վիճակէ մասին արքային Պարսից՝ խնդրէին իւրեանց թագաւոր ըստ բնիկ նախնի կարգին յազգէն Արշակունեաց:

Եւ արքային Պարսից Շապհոյ կատարեալ զհայցուածս նոցա՝ շնորհէր նոցա թագաւոր Խոսրով անուն յազգէն Արշակունեաց: Քանզի նախգոյն թագաւորն Հայոց Արշակ ունէր միահեծան զթագաւորութիւնն ի վերայ ամենայն աշխարհիս Հայոց»][2]:

1 *Տե՛ս* Փավստոս, *էջ 269—270:*

2 *Տե՛ս* Ղազար Փարպեցի, *Տփղիս, 1904, էջ 8:*

Մեջ բերված այս երկու վկայություններից ավելի հավանական
է, իմ կարծիքով, առաջինը: Խոսրով Դ-ը թագավոր էր դրվել Հայոց
աշխարհի ո՛չ թե Հայաստանի վերջնական բաժանումից հետո, որը,
ինչպես տեսանք, տեղի էր ունեցել 387 թվին, այլ 384 թվի բանակ-
ցություններից և Մանուել Մամիկոնյանի մահից (384/5 թ.) հետո,
ինչպես այդ վկայում է Փավստոսը:
Սակայն Փարպեցու վկայությունը, որին հիմք է ծառայել մեզ
անհայտ մի հին աղբյուր, տալիս է մեզ երկու խիստ կարևոր տեղե-
կություններ: Ինչպես շատ ճիշտ մատնանշել է Գյուտերբոկը[1], Փար-
պեցու վերոհիշյալ վկայությունից մենք գիտենք այն Պարսից թա-
գավորի անունը, որի հետ կնքված է եղել Հայաստանի բաժանման
դաշինքը: Պարսից այդ թագավորը, ինչպես վկայում է Փարպեցին,
Շապուհ Գ-ն էր (383/4—388/9), իսկ դաշնագրի կնքումը, ինչպես
տեսանք, տեղի էր ունեցել 387 թվին:
Ոչ պակաս կարևոր է Փարպեցու հաղորդած նաև մի այլ տե-
ղեկությունը, որ բաժանումից առաջ Արշակ Գ-ը թագավոր է եղել
ամբողջ Հայաստանի: Նրա այդ վկայությունից երևում է, որ հռո-
մեական զորքերի ու Վարազդատի Հայաստանից հեռանալուց հե-
տո մինչև Հայաստանի բաժանումը, այսինքն՝ 378 թվից մինչև 387
թիվը, Հայոց ամբողջ երկիրը, բացի Ծոփքից, Հանձիթից և Անգեղ-
տուն գավառից, թերևս նաև Բալահովիտից ու Հաշտյանքից, որոնք
363 և 376 թվերին տրվել էին Հռոմեական կայսրությանը, եղել են
Պարսից տիրապետության տակ:
Հասկանալի է դառնում այսպիսով, թե ինչու 385 թվին, պարս-
կա-հռոմեական բանակցությունների ժամանակ, Արշակ Գ-ը, ինչ-
պես վկայում է Փավստոսը, գնացել էր ո՛չ թե Կարին, այլ «Հունաց
սահմանները» ու «Եկեղյաց գավառի կողմերը»:
Ինչպես տեսնում ենք, միանգամայն անընդունելի է Աստուրյա-
նի կարծիքը[2], որ իբր թե 378 թվին, համաձայն Վաղեսի ու Շապուհ
Բ-ի միջև կնքված դաշինքի, Հայաստանի արևմտյան շրջանները՝
Եկեղյաց գավառը, Դերջանը, Խորձյանը և Կարինը՝ տրվել էին
Հռոմեական կայսրությանը:

1 *Տե՛ս* Գյուտերբոկ, *Հռովմեական Հայաստան, էջ 22:*

2 *Տե՛ս* Աստուրյան, *Քաղաքական վերաբերութիւններ, էջ 313: Նման սխալ*
ենթադրություններ են արել Խորենացու ազդեցությամբ նաև՝ Գարրեյան, *Տիե-*
զերական պատմութիւն, Բ, էջ 519. Լեո, *Հայոց պատմութիւն Ա, էջ 668.*
K. Aslan, Études historiques sur le peuple arménien, *էջ 198 և ուրիշները:*

Հայաստանի բաժանման մասին ուշագրավ տեղեկություններ ու դիտողություններ, որ միանգամայն պատմական են ու արժանահավատ, մեջ են բերված նույնպես Փավստոսի վերոհիշյալ վկայության (VI, գլ. Ա) շարունակության մեջ:

«Եվ նրանք [Հունաց ու Պարսից թագավորները],—ասում է Փավստոսը,— լավ համարեցին ամենից առաջ Հայոց աշխարհը բաժանել իրենց մեջ երկու մասերի: Նրանք ասում էին՝ թե «Մեր միջև գտնվում է այս հզոր ու հարուստ թագավորությունը. լավ կլինի, որ այս միջոցով կարողանանք վերացնել ու խորտակել այս թագավորությունը. նախ երկու մասի բաժանենք այս երկու Արշակունի թագավորներով [Արշակ Գ և Խոսրով Դ թագավորներով], որոնց մենք թագավոր կարգեցինք, իսկ հետո կաշխատենք նրանցից ևս ազատվել՝ կաղքատացնենք և կենթարկենք ծառայության, որպեսզի չկարողանան մեր մեջ գլուխ բարձրացնել»:

Նրանք իրենց այս դիտավորությունը կատարեցին և աշխարհը բաժանեցին երկու մասի: Պարսից կողմի բաժինը մնաց Խոսրով թագավորին, իսկ Հունաց կողմի բաժինը՝ Արշակ թագավորին: Բայց դրանցից էլ շատ գավառներ այս ու այն կողմում գզվեցին ու պոկվեցին և երկուսի երկրներից մնաց երկու թագավորներին սակավ մասը:

Բայց երկու Հայոց թագավորները, Արշակը և Խոսրովը, Հայոց թագավորության ծայր գավառների երկու կողմում, որ մնացել էին իրենց միջև, սահմաններ որոշեցին երկու բաժինների միջև, և այնտեղ խաղաղությամբ հաստատվեցին երկու Արշակունի թագավորները: Եվ Հայոց աշխարհի երկու մասերը հնազանդվում էին երկու թագավորներին՝ յուրաքանչյուր բաժինն իր թագավորին. բայց Խոսրովի բաժինն ավելի մեծ էր, քան Արշակինը:

Եվ երկուսից էլ շատ գավառներ պոկվեցին, և այն ժամանակ ու այնուհետև Հայոց թագավորությունը նվազեց և, բաժան-բաժան ու ցիրուցան լինելով՝ իր նախկին մեծությունից ընկավ»:

[«Եւ լաւ համարեցան զաշխարհն Հայոց նախ ընդ երկուս ի մէջ իւրեանց բաժանել. զի ասէին՝ թէ ի միջի մերում բնակեալ է այս հզօր և հարուստ թագաւորութիւն, լաւ է զի այսու եղծանել և խանգարել կարասցուք զայս թագաւորութիւնս նախ ընդ երկու բաժանել երկու թագաւորօքս Արշակունօք՝ զորս կացուցաք, ապա և ընդ նոսա կրճել ջանասցուք, աղքատացուցանել, ի մէջ արկանել ի ծառայութիւն, զի մի՛ կարասցեն ի մէջ մեր ամբառնալ զգլուխս:

Եւ հաստատեցին զայս խորհուրդ. ընդ երկու զաշխարհն բաժանեցին: Բաժին կողմանն Պարսից էր թագաւորին Խոսրովու, և բաժին մասինն Յունաց էր թագաւորին Արշակայ: Բայց և ի նոցանէ բազում գաւառք կրճեալք հատեալք այսր անդր, և մնաց սակաւ մասն յաշխարհաց երկոցունց առ երկոսեան թագաւորսն:

Բայց սակայն երկոքեան թագաւորքն Հայոց՝ Արշակ և Խոսրով, որ սիւնքն գաւառքն մնացին թագաւորութեանն Հայոց երկոցուն կողմանց ի մէջ իւրեանց, և երկոքեան թագաւորքն Արշակունիքն ի մէջ երկու բաժնացն սահմանս արկեալ հաստատէին խաղաղութեամբ, և երկիրն Հայոց երկոքեան բաժինքն՝ երկուց թագաւորացն հնազանդէին իւրաքանչիւր բաժնի իւրաքանչիւր թագաւորի. բայց սակայն մեծ էր Խոսրովու բաժին նորա քան զԱրշակայ:

Եւ բազում գաւառք յերկոցունցն հատան. նուաղեաց բաժանեցաւ ցրուեցաւ թագաւորութիւնն Հայոց, պակասեաց յիւրմէ մեծութենէն յայն ժամանակն և յապայ»][1]:

Փավստոսը, ինչպես տեսնում ենք, պարզ ու որոշ վկայում է, որ Հայաստանի երկու մասի բաժանումից և այդ մասերի սահմանների որոշվելուց հետո՝ Արշակ Գ-ը և Խոսրով Դ-ը խաղաղությամբ հաստատվել էին իրենց մասերում:

Ինքնըստինքյան, իհարկե, հասկանալի է, որ այնուհետև այդ երկու թագավորները, որոնք գտնվում էին Հռոմեական կայսրության ու Սասանյան Պարսկաստանի իշխանության տակ, այլևս չէին կարող ինքնիշխանաբար պատերազմ վարել իրար դեմ, ինչպես այդ, հիմնվելով Խորենացու անստույգ ու անարժանահավատ վկայությունների վրա, մատնանշում են Տուռնեբիզը, Լեոն և ուրիշները[2]: Եվ ուշագրավ է, որ այդ պատերազմի մասին ոչինչ չգիտե Ղազար Փարպեցին, որը գրել է հայ ժողովրդի պատմությունը սկսած Հայաստանի բաժանումից մինչև 485 թիվը:

Փավստոսի վերև բերված վկայությունից երևում է նաև, որ 387 թվի Հայաստանի բաժանման ժամանակ Հայաստանից կտրվել էին ամբողջ գավառներ, որոնք կցվել էին Հռոմեական կայսրու-

[1] Փավստոս, VI, գլ. Ա, էջ 270—271:

[2] Տե՛ս *Tournebize*, Histoire politique et réligieuse de l'Arménie, էջ 69—70 և 500. Լեո, Հայոց պատմություն, Ա, էջ 671 և ուրիշները:

թյան ու Սասանյան Պարսկաստանի երկրամասերին: Թե որո՛նք էին այդ կարատված գավառները, դժբախտաբար, մեզ մանրամասն հայտնի չէ: Ավելի քան հավանական է, իմ կարծիքով, որ 387 թվին էին անջատվել արևմտյան ու արևելյան Հայաստանից Բալահովիտը, Հաշտյանքը, բատ Երևույթին, նաև Հեր և Զարևանդն ու արրանից հարևան մի քանի այլ շրջանները:

Հայաստանի 387 թվի բաժանումը հիշատակված է նաև Պրոկոպիոսի մոտ[1], որը վկայում է, որ Պարսկաստանը ստացել էր Հայաստանի մեծագույն մասը, մոտ $^{4}/_{5}$-ը, իսկ Հռոմեական կայսրությունը՝ փոքրագույն մասը, մոտ $^{1}/_{5}$-ը: Նույնպես և Ղազար Փարպեցին մատնանշում է, որ

> «Հայոց աշխարհի մեծ մասը՝ լավը, պիտանին և արգավանդը՝ բաժին էր ընկել Պարսից թագավորին: Որովհետև, թեև բազմաթիվ ուրիշ գավառներ իբրև ժառանգություն բաժին էին ընկել Հունաց թագավորին, դրանք համաչափ էին միմիայն Այրարատյան գավառին»:
>
> [«Եւ դարձեալ՝ զմեծ մասն, զլաւն և զպիտանին և զարգաւանդն աշխարհիս Հայոց ունել ի բաժին արքային Պարսից. քանզի թէպէտև հասեալ բազում գաւառք այլ ի ժառանգութիւն մասին թագաւորին Յունաց, սակայն համեմատէին այն միայն յԱյրարատեան գաւառին»][2]:

Հայաստանի թագավորության Հռոմեական կայսրությանը տրրված մասը հռոմեական աղբյուրներն անվանում են Մեծ կամ Ներքին Հայաստան: Արևմտյան կամ Հռոմեական այդ Հայաստանը, ինչպես պատմական-աշխարհագրական ուսումնասիրություններից հայտնի է[3], բաղկացած էր հետևյալ գավառներից՝ Կարին, Եկեղիք, Դերջան, Մանանաղի, Դարանաղի, Խորձյան, Մզուր ևն.:

Գյուտերբոկի կարծիքով՝ Հռոմեական Մեծ Հայաստանը Սև ծովից բաժանված էր Պոլեմոնյան Պոնտոս գավառով, Փոքր Հայքից Եփրատով, Պարսկական Հայաստանի կողմից՝ Երասխ գետի ջրաբաշխով, իսկ հարավից՝ Արածանի գետով և Ծոփք Շահունյաց, Բալահովիտ ու Հաշտյանք նախարարական երկրներով, որոնք կցված էին Հռոմեական կայսրությանը:

Արևելյան կամ Պարսկական Հայաստանի սահմաններն էին,

1 *Procopios*, De Aedificiis, III, 1.

2 Ղազար Փարպեցի, *I, գլ. Զ, էջ 8:*

3 *Տե՛ս* Գյուտերբոկ, *Հռոմեական Հայաստան, էջ 30 ևն, Адонц*, Армения в эпоху Юстиниана, *էջ 46 ևն.:*

ինչպես մանրամասն ցույց է տվել Ադոնցը[1], հյուսիսից՝ Կանգարք
գավառը՝ որը Գուգարքի մեջ էր, արևմուտքից՝ Տայքը, որն ամբող-
ջությամբ Արևելյան Հայաստանի մաս էր, Աղվանքի կողմից՝ Սև-
վանի լճի հյուսիս-արևելյան կողմի լեռները, արևելքից՝ Հեր և
Զարևանդ գավառները, որոնք կցված էին Սասանյան Պարսկաս-
տանին, հարավից՝ Աղբակը, Անձևացիքը և Մոկքը, որոնք Արևել-
յան Հայաստանի մեջ էին: Դուրս էին մնացել Արշակունյաց թագա-
վորության նախկին երկրամասերը՝ Աղձնիքը, Կորդուքը, Կորդիքը,
Տմորիքը, Նոշիրականը, Մահկերտունը, Նիհորականը, Դասնը,
Կորճեքը, Հյուսիսային Ատրպատականը, Գուգարքը, Ուտիքը, Ար-
ցախը, Փայտակարանը և թերևս նաև մի քանի այլ շրջաններ:
Թեոդոսիոս Ա-ի քաղաքականությունն Արշակունյաց թագավո-
րության վերաբերմամբ և նրա կնքած Հայաստանի բաժանման դա-
շինքը, ինչպես միանգամայն ճիշտ մատնանշել են նորագույն
պատմագետներից շատերը[2], խիստ ծանր սխալ էին և չէին համա-
պատասխանում կայսրության քաղաքական իրական շահերին:
Կնքված դաշնագրությունը բնավ չնպաստեց խաղաղության
պահպանմանը: Արշակունյաց մեծ թագավորությունը, որ նրանք հա-
մարում էին վեճերի ու կռիվների մշտական պատճառ, թեև մեջտե-
ղից վերացվեց, սակայն Հայաստանը դարձյալ մնաց երկու մեծ
պետությունների մեջ: Սասանյան Պարսկաստանի անմիջական
սահմանակցությունը կայսրության համար ավելի ևս վտանգավոր
դառավ, որովհետև տևական առիթ եղավ չարագետ շփումների ու
նկրտումների, բարդությունների ու պատերազմների:
Մրցությունը երկու մեծ պետությունների մեջ և ընդհարում-
ները ավելի հաճախակի դառան և վեցերորդ դարում ու յոթերորդ
դարի սկզբներում արյունահեղ պատերազմները ստացան կատա-
ղի բնույթ: Այդ կռիվներն այնքան ուժասպառ արին նրանց, որ
յոթերորդ դարի երկրորդ քառորդում ո՛չ Բյուզանդիան, ո՛չ էլ Սա-
սանյան Պարսկաստանը չկարողացան կասեցնել արաբական հաղ-
թական արշավանքները:
387 թվի դաշնագրությունից հետո Հայ Արշակունիները միաժամանակ անվանական կերպով շարունակեցին թագավորել անդա-

1 *Տե՛ս Абонц*, Армения в эпоху Юстиниана, *էջ 222—225:*
1 *Տե՛ս Адонц*, Армения в эпоху Юстиниана, *էջ 10. Նույնը*, Abriss
2 *Տե՛ս* Գելցեր, *Համառոտ պատմություն Հայոց, էջ 916 (տե՛ս K. Krumbacher*, Geschichte
der byzantinischen Geschichte, *էջ 19.* Լեո, *Հայոց պատմություն, Ա, էջ 672. K. Aslan*, Études
der byzantinischen Literatur, München, 1897). Գյուտերբոկ, *Հռոմեական*
Հայաստան, էջ 199 և ուրիշները:

մատված Հայաստանի երկու բաժիններում: Նրանք թագավորեցին Պարսկական Հայաստանում ավելի քան քառասուն տարի (387—429 թ.) սակայն Արշակ Գ-ի մահից հետո (շուրջ 389/390 թ.) Թեոդոսիոս կայսրը նրա տեղ այլևս նոր թագավոր չնշանակեց, այլ Հռոմեական Հայաստանն այնուհետև կառավարեցին կայսեր կողմից նշանակված կուսակալները, որոնք համարվում էին կայսերի փոխանորդներ և անվանվում էին կոմեսներ:

Արշակունյաց թագավորության անդամահատումից հետո, թեև Հայոց աշխարհի միությունն ու անկախությունը վերացվեց, սակայն Հայաստանի նախարարական կազմակերպությունը և նախարարական ներքին կարգերը մնացին անփոփոխ ինչպես Պարսկական, նույնպես և Հռոմեական Հայաստանում: Զգուշավոր ու մեղմ այս քաղաքականությունը նախարարությունների հանդեպ բացատրվում է նրանով, որ երկու պետություններն էլ նկատի էին ունեցել Հայաստանի ստրատեգիական ու ռազմական մեծ նշանակությունը և նպատակահարմար էին համարել, պահպանելով նախարարությունների իրավունքներն ու արտոնությունները, օգտագործել նրանց զինվորական ուժերն իրենց նոր սահմանների պաշտպանության համար:

Հռոմեական կայսրության ու Սասանյան Պարսկաստանի դարավոր պայքարը, ինչպես վերև ասացինք, հարկավ, չէր վերացվել Հայաստանի բաժանմամբ: Վերջինս ծառայելու էր դարձյալ իբրև ռազմադաշտ համառ ու երկարատև պատերազմների: Հայ ժողովրդի բախտը, նրա կուլտուրական ու տնտեսական զարգացումը դարձյալ մեծապես կախված էին արտաքին անցուդարձից՝ երկու մեծ պետությունների քաղաքական փոխհարաբերություններից:

Եվ այս ծանր պայմաններում՝ մասնատված ու իր քաղաքական անկախությունը կորցրած Հայաստանը, ինչպես կտեսնենք, համառ կերպով մաքառեց և աշխատեց պահպանել իր ներքին ինքնուրույնությունը և կուլտուրական անկախությունը:

Գ Լ Ո Ւ Խ Տ Ա Ս Ն Ե Ր Ե Ք Ե Ր Ո Ր Դ

ՎՌԱՄՇԱՊՈՒՀ ԵՎ ՀԱՅ ԳՐԵՐԻ ԳՅՈՒՏԸ

Խոսրով Դ-ի և Վռամշապուհի թագավորությունների թվականները.— Օրմանյանի կարծիքը:— Խաղաղությունն Արևելքում Վռամ Դ-ի և Հազկերտ Ա-ի ժամանակ:— Հայ գրերի գյուտը:— Մեսրոպ Մաշտոցի հանճարեղ գործի կուլտուրական և քաղաքական մեծ նշանակությունը:— Գրերի գյուտի մասին հիմնական հայ աղբյուրները:— Մեսրոպ Մաշտոցի կենսագրությունը:— Նրա սոցիալական ծագումը:— Նրա պաշտոնը Վաղարշապատի արքունի դիվանում:— Մարկվարտի սխալ կարծիքը Առավանի հազարապետության ժամանակի մասին:— Մաշտոցի քարոզչական գործունեությունը Գողթն գավառում:— Նրա վերադարձը Վաղարշապատ և խորհրդակցությունը Սահակ կաթողիկոսի հետ:— Դանիել ասորի եպիսկոպոսի նշանագրերը:—Մաշտոցի ուղևորությունը Ասորիք:—Այբուբենի գյուտը Եդեսիայում և նրա գծագրումը Սամոսատում:— Դանիելյան գրերի աղբյուրների տարբեր վկայությունները:— Դանիելյան տառերի մասին նորագույն կարծիքները:— Նախամաշտոցյան հայկական գրականության գոյության խնդիրը:— Դանիելյան այբուբենի անբավարարությունը:— Մաշտոցի այբուբենի կատարելությունը:—Գրերի գյուտի թվականն ըստ Կորյունի վերջաբանի:—Կորյունի բնագրի մեջ եղած հակասությունները:— Գ. Տեր-Մկրտչյանի բացատրությունը. այդ բացատրության անհավանականությունը:— Ն. Ադոնցի կարևոր նոր բացատրությունը:— Գրերի գյուտի տարեթիվը ըստ Ադոնցի:— Կորյունի և Ղազար Փարպեցու արժանահավատ ցուցումները:— Կորյունի վերջաբանն ընդմիջարկություն է:— Գրերի գյուտի հավանական թվականը:— Նշանագրերի հորինումը վրացերեն և աղվաներեն լեզուների համար:—Կորյունի և Խորենացու վկայությունները:— Այդ վկայությունների պատմական արժանահավատությունը:— Մաշտոցի լուսավորական լայն անդրկովկասյան գործունեության նպատակը:— Նորաստեղծ գրերի տարածումը Արևմտյան Հայաստանում:— Թեոդոսիոս Բ-ի հրամանը:—Խորենացու վկայություններն այդ մասին:— Թեոդոսիոս կայսեր բարեհաճ համաձայնության պատճառը:— Արևմտյան Հայաստանում մայրենի լեզվով դպրության հաստատման տարեթիվը:

Խոսրով Դ-ի և Վռամշապուհի թագավորությունների տարեթվերը, ինչպես և գրերի գյուտի ճշգրիտ թվականը հայ պատմագիտական ուսումնասիրություններում բոլորովին խճճված ու խեղաթյուրված են, գլխավորապես, Խորենացու ժամանակագրական սխալ տվյալների ազդեցությամբ:

Խոսրով Դ-ը (385—387/8 թ.) թագավորել է ո՛չ թե հինգ տարի, ինչպես մատնանշում է Խորենացին[1], այլ երեք տարի, ինչպես վկայում են Սեբեոսը, Ասողիկը[2] և ուրիշները:

Այս վերջին վկայությունները պետք է ճիշտ լինեն, որովհետև համապատասխանում են Փարպեցու Պատմության արժանահավատ ցուցումներին:

Ղազար Փարպեցին հաղորդում է, որ Պարսկական Հայաստանի հայ նախարարները, գնալով Շապուհ Գ-ի մոտ (383/4—388/9 թ.), ամբաստանել էին Խոսրով Դ-ին, որ նա գաղտնի կերպով բանակցություններ է վարում հռոմեական կայսրի հետ[3]: Խորենացին ևս վկայում է, որ Շապուհ Գ-ը նեղացած էր Խոսրով Դ-ի վրա, որովհետև նա անձնական բարեկամություն էր հաստատել հռոմեական կայսրի հետ և առանց իր հրամանի կաթողիկոս էր կարգել Սահակ Մեծին, որը Ներսես Մեծի որդին էր[4]: Ղազար Փարպեցու ու Խորենացու այս վկայություններից պարզ երևում է, որ Խոսրով Դ-ը Հայաստանում թագավորել էր Շապուհ Գ-ի (383/4—388/9 թ.) թագավորության սկզբի տարիներում (385—387/8 թ.), իսկ Վռամշապուհը Հայոց թագավոր էր նշանակվել Շապուհ Գ-ի կողմից սրա թագավորության վերջերում (387/8 թ.): Ուշագրավ է, որ ժամանակագրական այս հաշիվները կատարելապես համապատասխանում են Խորենացու ցուցումներին, որը Սահակ Մեծի կաթողիկոսության տևողության մասին իր ձեռքի տակ ունեցել է վավերական ու արժանահավատ տվյալներ: Ըստ Խորենացու՝ Սահակ Մեծը կաթողիկոս էր կարգվել Խոսրով Դ-ի թագավորության երրորդ տարում, այսինքն՝ 388 թվին և իր պաշտոնը վարել էր 51 տարի, այսինքն՝ 388 թվից մինչև 439 թիվը: Ըստ իս այս բոլոր թվերը մենք կարող ենք ճշտված ու հաստատուն համարել, որովհետև Դյուլորիեի տոմարագիտական ճշգրիտ հաշիվներից ևս մեզ հայտնի է, որ Սահակ Մեծը, վախճանվել էր 439 թվի սեպտեմբերի 7-ին[5]:

Ժամանակագրական այս դիտողություններից, որ հիմնված են Ղազար Փարպեցու արժանահավատ ցուցումների վրա՝ կարելի է վստահորեն հետևցնել, որ Վռամշապուհը հաջորդել էր իր եղբորը՝ Խոսրով Դ-ին, 387/8 թվին:

[1] Խորենացի, III, գլ. Ծ:

2 Սեբեոս, գլ. Գ, էջ 19 (Երևան, 1939) և Ասողիկ, II, գլ. Ա, էջ 73 (Ս.-Պետերբուրգ, 1885):

3 Փարպեցի, I գլ. Թ, էջ 12:

4 Խորենացի, III, գլ. Ծ:

5 Տե՛ս Ed. Dulaurier, Recherches sur la chronologie arménienne, Paris, 1859, էջ 135—136, ծանոթ. 40:

Պետք է ասել, որ Վռամշապուհի թագավորության սկիզբը բոլոր պատմագիտական երկերում, բացի Օրմանյանի և Լեոյի աշխատություններից[1], դրվում է կամ չորրորդ դարի իննսունական թվականներին և կամ հինգերորդ դարի սկզբներին:

Մենք կտեսնենք ներքև, որ սխալ այդ ժամանակագրությունը բացատրվում է, գլխավորապես, նրանով, որ Վռամշապուհի թագավորության տարիները պատմագիտական երկերում աշխատել են համաձայնեցնել ժամանակագրական տվյալների հետ Կորյունի վերջաբանում, որը պարզապես ընդմիջարկություն է ուշ ժամանակաշրջանի:

Օրմանյանը, իմ կարծիքով, ճիշտ է որոշել նաև Վռամշապուհի թագավորության տևողությունը (389—414 թ.): Նրա այս եզրակացությունը հիմք է ծառայել Ղազար Փարպեցու ցուցումը[2]: Վռամշապուհը, ինչպես վկայում է Փարպեցին, հասել էր խորին ծերության և գրերի գյուտից հետո, որ տեղի էր ունեցել, ինչպես կտեսնենք, մոտավորապես 393 թվին՝ ապրել էր քսան և մեկ տարի: Ըստ այդմ Վռամշապուհի թագավորության տևողությունը հավանական կլինի ենթադրել մոտ 26 տարի (387/8—շուրջ 413/4 թ.), և նրա մահը կարելի կլինի դնել մոտավորապես 414 թվին:

Վռամշապուհի ժամանակ, որը թագավորեց Հայաստանում բավական երկար, Մերձավոր Արևելքում տիրում էր կատարյալ խաղաղություն: Շապուհ Գ-ին հաջորդել էր Վռամ Դ Կրմանը (388/9—399 թ.), որը բարեկամական հարաբերություններ էր պահպանում կայսրության հետ և ուներ բարեհաճ վերաբերմունք նաև դեպի քրիստոնյաները: Նաև Վռամ Դ-ից հետո Պարսկաստանում թագավորում էր բարյացակամ Հազկերտ Ա-ը (399—420 թ.), որն անհաշտ պայքար էր մղում Պարսից բարձր ազնվականության ու կղերականության դեմ, իսկ քրիստոնյաների վերաբերմամբ համբերատար էր և բարեմիտ:

Ինքնըստինքյան հասկանալի է, որ խաղաղության հաստատման այս տարիները հայ երկրների համար, որոնք կորցրել էին իրենց անկախությունը, սգի ու հուսահատման ժամանակաշրջան էին: Թե Վռամշապուհը և թե Սահակ Մեծը, որոնք թագավոր ու կաթողիկոս էին դառել Արևելյան Հայաստանում Արշակունյաց թագա-

[1] Օրմանյանը, ինչպես և Լեոն Վռամշապուհի թագավորության սկիզբը համարում են 389 թվականը. տե՛ս Մ. Ա. Օ., «Տրդատ Արտաշէս ժամանակագրական դիտողութիւններ», «Հանդ. Ամս.», 1909, № 8, էջ 243—245. Լեո, Հայոց պատմութիւն, Ա, էջ 674, ծան. 3:

2 Փարպեցի. I, գլ. ԺԱ, էջ 18, ծանոթ. 10:

վորության 387 թվի բաժանումից մեկ տարի հետո՝ չէին կարող, իհարկե, չգիտակցել, որ իրենց վիճակվել է կառավարել Հայոց երկիրն ու եկեղեցին հայ ժողովրդի քաղաքական կյանքի ամենածանր ժամանակամիջոցում: Եվ խիստ ուշագրավ է, որ Հայաստանի բաժանումից անմիջապես հետո, երբ կազմալուծված ու ցաքուցրիվ արված հայությանը սպառնում էր հուսալքման ու այլասերման վտանգը՝ Սահակ կաթողիկոսը և Մեսրոպ Մաշտոց վարդապետը, Վռամշապուհ թագավորի աջակցությամբ, գտան հայ ժողովրդի պահպանման ու ինքնուրույն զարգացման համար հզոր ու անհաղթելի մի զենք և ստեղծեցին հայկական գիրն ու դպրությունը:

Հայ գրերի գյուտը անշուշտ, Հայաստանում ևս, ինչպես և գոթերի ու սլավոնների մոտ, ամենից առաջ նպատակ ուներ ստեղծելու քրիստոնեական գրականություն տեղական լեզվով: Այդ անհրաժեշտ էր, որովհետև հայ եկեղեցու լեզուն ասորերեն էր կամ հունարեն, որոնք հայ ժողովրդի լայն խավերի համար բոլորովին անհասկանալի էին: Ակներև է, սակայն, որ այդ գյուտն ունեցավ նաև քաղաքական մեծ նշանակություն, որովհետև սեփական հայ գրի ու գրականության ստեղծումը մտցրեց հայությունը հին կուլտուրական ժողովուրդների շարքը և, զարթեցնելով նրա ազգային ինքնագիտակցությունը՝ արգելք եղավ հայ ժողովրդի ապազգայնացման ու միաձուլման քաղաքականությանը, որ հինգերորդ ու վեցերորդ դարերում վարում էին Հայաստանում Սասանյան Պարսկաստանը և Բյուզանդական կայսրությունը:

Ինչպես հայտնի է, Մեսրոպ Մաշտոցի հանճարեղ գործը՝ նրա հայերեն գրերի գյուտը՝ շատ բարձր գնահատության է արժանացել պատմագիտական թե հայ և թե օտար երկրում: Գերմանական գիտնական Մարկվարտը, որն առանձին մի ուսումնասիրություն է գրել հայերեն նշանագրերի գյուտի մասին՝ հիացմունքով նշել է Մաշտոցի մեծ գործի արտասովոր վեհությունը: Եթե մենք, ասում է Մարկվարտը, նկատի առնենք պատմական այն բացառիկ ծանր իրադրությունը, որի մեջ Մաշտոցը կարողացավ զարթեցնել հայ ժողովրդի ազգային գիտակցությունը, և նրա այդ գործը համեմատենք Պիպինի և նրա զինակիր Վինֆրիդի գործունեության հետ՝ այս վերջինները «խեղճ թզուկներ կերևան» համեմատությամբ մեծի այդ հսկայի[1]:

Պետք է ասել, որ նույնիսկ ամենաէական խնդիրներից շատերը հայերեն գրերի գյուտի մասին, չնայած որ դրանց մասին գրված են բազմաթիվ ուսումնասիրություններ, մինչև այժմ դեռ պարզված չեն և մնում են վիճելի: Այդ խնդիրների լուսաբանության համար հիմնական աղբյուրներ են համարվում Կորյունի, Ղազար Փարպեցու և Մովսես Խորենացու պատմական աշխատությունները, որոնցից վերջին երկուսը հիմնվում են մեծ մասամբ Կորյունի վրա: Մի քանի մանրամասնություններ նույն այդ խնդիրների մասին կան և ուրիշ հեղինակների մոտ, որոնք օգտվել են ոչ միայն վերոհիշյալ երկերից, այլև մեզ անհայտ այլ աղբյուրներից:

Մեսրոպ Մաշտոցի աշակերտ Կորյունի փոքրածավալ աշխատությունը[1], որը գրված է հինգերորդ դարի կեսերին, գրերի գյուտի պատմության ամենագլխավոր աղբյուրն է: Սակայն այս ամենահին աղբյուրի մեջ անգամ, ինչպես մատնացույց են արել բանասերները, հաճախ պատահում են թերասություններ ու մինչև իսկ ակներև հակասություններ[2]: Ադոնցը միանգամայն ճիշտ դիտել է, որ մեր ձեռքը հասած Կորյունի աշխատության բնագիրը չի կարող համարվել նախնական, որովհետև հետագա դարերում այս երկը ենթարկվել է խմբագրական վերամշակման[3]: Եվ, իրոք, այս եզրակացությանը դժվար չէ հանգել, եթե նկատի ունենանք այն հատվածները, որոնք Ղազար Փարպեցին քաղել է Կորյունից: Փարպեցին, ըստ երևույթին, իր ձեռքի տակ ունեցել է Կորյունի աշխատությունը նախնական հին խմբագրությամբ:

Մեսրոպ Մաշտոցի մասին կենսագրական տեղեկություններ, դժբախտաբար՝ բավական աղքատիկ, տալիս է, գլխավորապես, Կորյունը, որի երկը՝ «Պատմութիւն վարուց և մահուան առն երանելւոյն սրբոյն Մաշտոցի վարդապետի, մերոյ թարգմանչի», ամբողջովին նվիրված է իր ուսուցչի կյանքին ու գործունեությանը:

Կորյունը, ինչպես և բոլոր հին հեղինակները, հայերեն գրերի հնարողին անվանում է Մաշտոց[4]: Սրա վիճելի Մեսրոպ անունն առաջին անգամ հանդիպում է ավելի ուշ շրջանի երկերում՝ «Պատ-

---

1 Տե՛ս Մարկվարտ. Պատմութիւն հայերէն նշանագրերու և վարուց ս. Մաշտոցի, թարգմ. Ա. Վարդանյանի, Վիեննա, 1913, էջ 8:

1 Այս աշխատության մեր ձեռքը հասած երկու խմբագրություններից հինը և խակականը ընդարձակ խմբագրությունն է. տե՛ս Նորայր Բյուզանդացի, Կորյուն վարդապետ և նորին թարգմանութիւնք, Տփղիս, 1900, էջ 12 և 397—401:

2 Տե՛ս Н. Марр, Тексты и разыскания по армяно-грузинской филологии, СПб. 1903, էջ 32 և Месроп Тер-Мовсесян, История перевода Библии армянский язык, СПб., 1902, էջ 1—27:

3 Адонц, Армения в эпоху Юстиниана, էջ 341:

4 Գրվում է նաև Մաշդոց, Մաշթոց, Մածդոց. տե՛ս Г. Халатьянц, Армянские Аршакиды, М., 1903, էջ 315:

մութին սրբոյն Ներսիսի Պարթևի» գրվածքում[1] և Խորենացու Պատմության մեջ։ Համաձայն Կորյունի վկայության՝ Մաշտոցը Տարոն գավառի Հացեկաց գյուղից էր և այդ գյուղի բնակիչ Վարդանի որդին էր։ Մ. Էմինը, նկատի ունենալով Մաշտոցի հոր Վարդան անունը և նրա ծննդավայր Տարոնը՝ կարծում է, որ Մաշտոցը ծագում էր Մամիկոնյանների նախարարական տոհմից[2]։ Ինչպես հայտնի է, մի շարք նորագույն ուսումնասիրություններում հատուկ մի ձգտում կա հայկական գրականության ու կուլտուրայի մշակներին համարել բարձր ազնվականության ներկայացուցիչներ։ Այդ ոչ միայն վիճելի է, այլև անպայմանորեն սխալ է։ Իմ նախորդ աշխատություններից մեկում ես արդեն պարզել էի, որ հայ պատմագիր Ղազար Փարպեցին, որին նույնպես համարել էին ազնվական և ազգական Մամիկոնյանների տոհմի, իրապես «անազատ» շինական էր Փարպի գյուղից[3]։ Թեպետև յոթերորդ դարի «Անանուն ժամանակագրության» մեջ ասված է, որ «Մեսրովբ Երանելի և Հացեկաց Տարաւնայ, յապատ տանէ»[4], սակայն այդ մասին տեղեկություններ չեն տալիս ո՛չ Կորյունը, ո՛չ էլ Փարպեցին։ Ուշագրավ է, որ Փավստոսի կարևոր մի վկայության մեջ Հացեկացն անվանված է «կարճազատների» գյուղ[5]։ Ինձ թվում է, որ այս վերջին վկայությունից կարելի է հետևցնել, որ Մաշտոցը ոչ թե մանր ազնվական «ազատ» էր, այլ արտոնյալ այն ազատ գյուղացիների դասից էր, որոնք պարտավոր էին ծառայել ռամիկ հեծելազորքի շարքերում[6]։

Բանասերները սովորաբար մատնանշում են, որ Մաշտոցն աշակերտել էր Ներսես կաթողիկոսին (+373 թ.)։ Այս տեղեկությունը, որ գտնվում է «Պատմութիւն սրբոյն Ներսիսի» երկում և Խորենացու Պատմության մեջ[7], ինչպես միանգամայն ճիշտ նկատել է Խալաթյանցը, չէ կարող ստույգ լինել, որովհետև այդ մասին ոչ հիշատակություն չունեն Կորյունը և Ղազար Փարպեցին[8]։ Այս

---

[1] Տե՛ս «Սոփերք Հայկականք», Զ, Վենետիկ, 1853, էջ 83 և 110։

[2] Տե՛ս „Исследования и статьи Н. О. Эмина", М., 1896, էջ 206։

[3] Տե՛ս իմ աշխատությունը՝ «Դիտողություններ Հին Հայաստանի շինականների դրության մասին մարզպանության շրջանում», Երևան, 1925, էջ 34։

[4] Տե՛ս Ա. Աբրահամյան, Անանիա Շիրակացու մատենագրությունը, Երևան, 1944, էջ 389։

[5] Փավստոս, III, գլ. ԺԹ։

[6] Տե՛ս իմ աշխատությունը՝ «Ֆեոդալիզմը Հին Հայաստանում», էջ 118—119։

[7] Տե՛ս «Սոփերք Հայկականք», Է Վենետիկ, 1853, էջ 28 և Խորենացի. IV, գլ. ԽԷ։

[8] Խалатьянц, Армянские Аршакиды, էջ 317։

վերջինները հաղորդում են միայն, որ մանկական հասակում Մաշ-
տոցը կրթություն էր ստացել հելլենական դպրությամբ։
Խոսրով Դ-ի թագավորության ժամանակ (385—387/8 թ.), ինչ-
պես վկայում են Կորյունը և Ղազար Փարպեցին, Մաշտոցը եկավ
Արշակունիների մայրաքաղաքը, Վաղարշապատ, և ծառայում էր
այստեղ արքունի դիվանում Առավան հազարապետի ձեռքի տակ[1]։
Կորյունի և Ղազար Փարպեցու համապատասխան վկայությունները,
որ ըստ իս սխալ են մեկնված պատմագիտական ու բանասիրական
երկերում, ավելորդ չեմ համարում թարգմանաբար մեջ բերել ման-
րամասն կերպով։

1. Կորյուն [Գ], էջ 36—37, հրատ. և թարգմ. Մ. Աբեղյա-
նի, (Երևան, 1941)՝
«Սա [Մաշտոցը] եկավ, հասավ Մեծ Հայաստանի Արշա-
կունի թագավորների արքունիքը, մնաց արքունի դիվանում և
եղավ արքայի տված հրամանների սպասարկող՝ Հայոց մեր
աշխարհում ոմն Առավանի հազարապետության ժամանակ։
Նա տեղյակ ու հմուտ դառավ աշխարհական կարգերի և իր
զինվորական արվեստով հաճելի եղավ իր զորականներին։ Եվ
այնտեղ ուշի-ուշով հետևեց աստվածային գրքերի ընթերցա-
նությանը, որով կարճ ժամանակում լուսավորվեց և համակ-
վեց, խորամուխ եղավ աստվածային հրամանների էությանը,
նաև ամեն նախապատրաստություններով զարդարեց իր
անձը և պաշտոնավարեց իշխանների մոտ»։
[«Եկեալ հասեալ ի դուռն Արշակունեաց թագաւորաց Հայոց
Մեծաց, կացեալ յարքունական դիւանին, լինել սպասաւոր ար-
քայատուր հրամանացն առ հազարապետութեամբն աշխարհիս
Հայոց՝ Առաւանայ ուրումն։ Տեղեկացեալ և հմուտ եղեալ աշ-
խարհական կարգաց, ցանկալի եղեալ զինուորական արուես-
տին իւրոց զօրականացն։ Եւ անդէն ուշ եդեալ փութով ըն-
թերցուածոց աստուածեղէն գրոց, որով առժամայն լուսաւո-
րեալ և թեւամուխ միջամուխ եղեալ յաստուածատուր հրամա-
նացն հանդամանս, և ամենայն պատրաստութեամբ զանձն
զարդարեալ, հարկանէր զիշխանացն սպասաւորութիւնսն»]։
2. Ղազար Փարպեցի, I, գլ. Ժ, էջ 13։
«Իր մանկության օրերում նա [Մաշտոցը] ուսում ստացավ
հույն դպրությամբ. նա զինվորություն արեց Հայոց Խոսրով

---

[1] Տե՛ս իմ աշխատությունը՝ „Месроп Маштоц и борьба армянского народа за культурную самобытность", Ереван, 1941, էջ 12։

թագավորի արքունիքում, կարգվելով արքունի գրագիր դպիրների խմբում. այդ ժամանակ արքունի դպիրները ասորի ու հույն գրով էին վարում Հայոց թագավորների գործերը՝ վճիռներն ու հրովարտակները»:

[«Ի տիւ մանկութեան իւրոյ ուսեալ դպրութիւն յոյն, զինուորեալ ի դուռն Հայոց արքային Խոսրովայ, կարգեալ յերամ մատենագիր արքունի դպրացն. վասն զի ասորի և յոյն գրով վարէին յայնժամ զգործ թագաւորացն Հայոց՝ արքունի դպիրքըն, զվճռոցն և զհրովարտակացն»]:

Ոմանք կարծում են, որ Կորյունի ու Ղազար Փարպեցու այս վկայություններում կա մի որոշ հակասություն: Ըստ Կորյունի՝ Մաշտոցը պաշտոն էր վարել արքունի դիվանում Առավանի հազարապետության ժամանակ, իսկ համաձայն Փարպեցու՝ Հայոց Խոսրով Դ թագավորի ժամանակ: Այս հակասությունը մատնանշել է Մարկվարտը և սխալ ենթադրություն է արել, որ իբր թե Խոսրով Դ-ից հետո և Վռամշապուհից առաջ Հայաստանում իշխել է հազարապետ Առավանը[1]: Մարկվարտի այս կարծիքը պարզապես թյուրիմացության արդյունք է: Առավանը, ինչպես դժվար չէ կռահել, Հայոց աշխարհի հազարապետ էր Խոսրով Դ-ի ժամանակ, ուստի և կարելի է վստահորեն ենթադրել, որ Կորյունի նախնական բնագրում, հավանորեն, մատնանշված է եղել, որ Մաշտոցը ծառայել էր Հայոց Խոսրով թագավորի արքունիքում Առավան հազարապետի ձեռքի տակ[2]:

Կորյունի և Ղազար Փարպեցու վերևում բերված վկայություններից երևում է նաև, որ Մաշտոցը, ընդունված լինելով «մատենագիր դպիր»-ների խմբի մեջ, ծառայել էր արքունի դիվանում իբրև զինվոր ու հասարակ գրագիր: Ինչպես հայտնի է, հայագետ գիտնականները[3], գրեթե բոլորն առանց բացառության, հիմնվելով Խորենացու սխալ վկայության վրա՝ կարծել են, որ Մաշտոցը թագավորական պալատում վարել էր դիվանապետի կամ քարտուղարի բարձր պաշտոնը: Այս պնդումը, որ հակասում է Կորյունի և Փարպեցու վկայություններին, ճիշտ չէ: Մաշտոցի պաշտոնը, ինչպես դժվար չէ համոզվել, համապատասխանում է այն զինվոր-գրագիրների պաշտոնին, որոնք ստորին ծառայողներ էին հռոմեական բարձր պաշտոնյաների դիվաններում և անվանվում էին «գրասենյակայիններ» (officiales կամ scrinarii)[1]: Այս զինվոր-գրագիրները, ինչպես մատնացույց է արել Ադոնցը, զինվորական շորերով էին և համարվում էին զինվորական ծառայության մեջ, թեև չէին կցված գործող զորաբանակին[2]: Ինքնըստինքյան հասկանալի է, որ Մեսրոպ Մաշտոցը, լինելով «կարճագաս» գյուղացի, պետք է վարած լիներ արքունիքում գործակալական ստորին պաշտոն[3]:

Մաշտոցի ծառայությունը Վաղարշապատում երկար չտևեց: Կարճ ժամանակից հետո նա դառավ կուսակրոն հոգևորական և իր աշակերտների հետ գնաց Գողթն գավառը և, զբաղվելով այնտեղ քարոզչական գործով՝ աշխատեց տարածել հեթանոս գողթնեցիների մեջ քրիստոնեական կրոնը: Իր այս քարոզչական գործունեության ժամանակ, ինչպես հաղորդում են վերոհիշյալ աղբյուրները, Մաշտոցը մեծ դժվարությունների հանդիպեց, որովհետև եկեղեցու պաշտամունքը կատարվում էր Հայաստանում հունարեն և ասորերեն լեզուներով և դեռևս չկային Աստվածաշնչի ու եկեղեցական գրքերի հայերեն թարգմանություններ: Համաձայն Փավստոսի վկայության՝ քրիստոնեական կրոնը Հայաստանում ընդունեցին

«Ոչ թե գիտակցաբար, հույսով կամ հավատով, ինչպես որ հարկավոր էր, այլ ընդունեցին քչերը, որոնք ծանոթ էին հունարեն կամ ասորերեն գրագիտական տարրերքին՝ միայն նրանք փոքր ի շատե հասկանում էին այդ կրոնը: Իսկ նախարարների և շինականների մյուս խառնաղանջ բազմությունը, որոնք այդ գրագիտության արվեստին ծանոթ չէին՝ եթե վարդապետները, գիշեր ու ցերեկ նստած, ամպերի նման այդ ուսմունքը նրանց վրա հոսեցնեին ինչպես հորդահեղեղ սաստիկ անձրև, նրանցից ոչ մեկը ոչնչից ոչինչ և ոչ մի խոսք, ոչ կես խոսք, ոչ չնչին մի բան և ոչ մի նշույլ իրենց լսածներից չէին կարող հասկանալ և մտքերը պահել»:

[«Ոչ եթէ որպէս պարտն էր գիտութեամբ յուսով կամ հաւատով, բայց միայն սակաւ ինչ որք զհանգամանս գիտէին հելլէն կամ ասորի դպրութեանց, որք էին հասու ինչ այնմ փոքր ի

---

[1] Տե՛ս Մարկվարտ, Պատմութիւն հայերէն նշանագրերու, թարգմ. Ա. Վարդանյանի, Վիեննա, 1913, էջ 12—13 և 58:

[2] Տե՛ս իմ աշխատությունը՝ „Месроп Маштоц", էջ 12:

[3] Տե՛ս „Исследования и статьи Н. О. Эмина". էջ 206. K. Aslan, Études historiques, էջ 212. Լեո, Հայոց պատմություն, Ա, էջ 679, Մ. Աբեղյան, Հայոց հին գրականության պատմություն, Երևան, 1944, Ա., էջ 72 և ուրիշները:

---

[1] Տե՛ս Պ. Վիլլեմս, Римское государственное право, перевод Бодянского, Киев. 1888, էջ 510, 663—667. E. Kuhn, Die städtische und bürgerliche Verfassung des Römischen Reichs, Erster Teil, Leipzig, 1864, էջ 156 և հետ.:

[2] Տե՛ս Адонц, Армения в эпоху Юстиниана, էջ 137:

[3] Տե՛ս իմ աշխատությունը՝ «Ֆեոդալիզմը Հին Հայաստանում», էջ 120—122:

շատ է։ Իսկ որք արտաքոյ քան զգիտութիւն արուեստին էին
այլ խառնաղանճ բազմութիւն մարդկան ժողովրդոց նախա-
րարացն և կամ շինականութեանն, եթէ զցայգ և զցերեկ նրա-
տեալ վարդապետացն և ըստ նմանութեան ամպոցն իբրև
պյորդահեղեղ ինչ անձրևաց սատկութիւն զվարդապետու-
թիւնն ի վերայ հոսէին, ոչ որ ի նոցանէն և ոչ մի ոչ, և ոչ մի
բան, և ոչ կէս բանի, և ոչ զոյգն յիշատակ ինչ, և ոչ նշմարանս
ինչ զոր լսէինն, և ոչ կարէին ինչ ունել ի մտի»]¹։
Ինչպես երևում է Կորյունի վկայություններից, հենց Գողթնում
եղած ժամանակ Մաշտոցը միտք հղացավ, որ հեթանոսության ու
մազդեականության դեմ կռվելու միակ հաստատուն միջոցն է
հայերեն դպրությունը և քրիստոնեական եկեղեցու պաշտամունքի
կատարումը հայերեն լեզվով։ Գողթնից Մաշտոցը վերադարձավ
Այրարատյան գավառը Սահակ կաթողիկոսի մոտ², որին նա պատ-
մեց իր մտածմունքին։ Երբ նրանք, հար-
ցուփորձ ու որոնումներ անելիս, այս մեծ խնդրի մասին տեղեկաց-
րին Վռամշապուհ թագավորին՝ սա պատմեց նրանց, որ հայոց լեզ-
վի նշանագրեր, ինչպես իրեն հայտնել են, պատահաբար գտել է
Դանիել անունով ասորի եպիսկոպոսը։ Սահակի և Մաշտոցի խըն-
դրքով թագավորն ուղարկեց Վահրիճ անունով մի պաշտոնյայի
Աբել քահանայի մոտ, որը Դանիել եպիսկոպոսի ազգականն էր։
Աբելը, ստանալով թագավորի հրովարտակը, գնաց Դանիելի
մոտ և, տեղեկանալով խնդրին, ուղարկեց նշանագրերը Հայոց թա-
գավորին ու կաթողիկոսին (ըստ Կորյունի՝ Վռամշապուհի թագա-
վորության հինգերորդ տարում)։
Սահակն ու Մաշտոցը, պատմում է Կորյունը, ստանալով պա-
տահական կերպով գտնված («դյանկարծագիտն») նշանագրերը՝
հավաքեցին թագավորի կարգադրությամբ մանկահասակ մանուկ-
ներ և մոտ երկու տարի նրանց սովորեցրին դրանցով գրագիտու-
թյուն։ Բայց շուտով համոզվեցին, որ Դանիելյան գրերը, ծագած
լինելով ուրիշ դպրություններից՝ չեն կարող ճշտությամբ արտա-
հայտել հայերեն լեզվի վանկերն ու կապող հնչյունները։ Ուստի և
Մաշտոցը, որն այդ ժամանակ ստացել էր վարդապետական աս-
տիճան, թագավորի հրամանով և Սահակ կաթողիկոսի համաձայ-
նությամբ գնաց մանուկների մի խմբի հետ Ասորիք (ըստ Կորյունի՝
դարձյալ Վռամշապուհի թագավորության հինգերորդ տարում)։

1 Փավստոս, III, գլ. ժԳ, էջ 33։
2 Ըստ Ղազար Փարպեցու վկայության՝ Մաշտոցը Գողթնում մնացել էր
մինչև Վռամշապուհի թագավորության հինգերորդ տարին (I, գլ. Ժ)։

Կորյունի վկայությունների մեջ, անշուշտ, ժամանակագրական
անճշտություն կա։ Կորյունի ասելով՝ Դանիելյան նշանագրերը Հա-
յաստան էին ուղարկվել Վռամշապուհի թագավորության հինգերորդ
տարում։ Այդ տառերով Մաշտոցն ու Սահակը մանուկներին
գրագիտություն էին սովորեցրել երկու տարի։ Իսկ այնուհետև
Վռամշապուհի դարձյալ հինգերորդ տարում Մաշտոցը գնացել էր
Ասորիք։
Կորյունի այս ակներև սխալն ուղղելու համար տարբեր ենթա-
դրություններ են արված։ Մարկվարտը կարծում է, որ Կորյունի
համաձայն՝ «Իբրև ամս երկու կարգեալ զվարդապետութիւն իւր»՝
հետևին սխալ լուսանցագրություն է¹։ Ոմանք «ամս երկու»-ն ուղ-
ղում և կարդում են «ամիս երկու»։ Իսկ Աճառյանը ենթադրում է,
որ Կորյունի մոտ առաջին «հինգերորդ»-ը պետք է կարդալ «եր-
րորդ»։ Նրա կարծիքով՝ Կորյունի ձեռագրում գրված է եղել «երդ»
պատվի նշանով, որը փոխանակ «երրորդ» կարդացվելու թյուրի-
մացաբար կարդացվել է «հինգերորդ»²։
Ըստ ոչ բոլոր այս ուղղումներն էլ հնարավոր են և միանգա-
մայն հավանական կարելի է համարել, որ վերոհիշյալ երկու «հին-
գերորդ»-ներից անփոփոխ պետք է պահել երկրորդը։
Գալով Ամիդ և Եդեսիա՝ Մաշտոցը ներկայացավ տեղական
Ակակիոս և Բաբիլաս եպիսկոպոսներին, որոնք նրան ընդունեցին
սիրով և մեծարանքով։ Իր հետ տարած աշակերտներին նա բաժա-
նեց երկու խմբի, որոնցից մեկը պետք է սովորեր Եդեսիայում
ասորական դպրություն, իսկ մյուսը Սամոսատում՝ հունական դըպ-
րություն։
Ինքը՝ Մաշտոցը, շարունակելով աշխատել հայերեն այբուբենի
վրա՝ վերջապես հնարեց հայոց լեզվի նշանագրերը։ Համաձայն
Կորյունի՝ նա այդ տառերին անուններ տվեց, դասավորեց որոշ
կարգով և հորինեց վանկերով ու կապերով կարդալու համար։
Այբուբենի գյուտը Եդեսիայում անելուց հետո՝ Մաշտոցը գնաց
Սամոսատ, որը գտնվում էր Եփրատ գետի ափին, և այնտեղ, Հռո-
փանոս հույն գեղագրի աջակցությամբ, ճշտորեն ու վերջնական
կերպով որոշեց նշանագրերի գծագրությունները։ Այնուհետև իր
աշակերտներ Հովհան Եկեղեցացու և Հովսեփ Պաղնացու հետ նա

1 Մարկվարտ, Պատմութիւն հայերէն նշանագրերու, թարգմ. Վարդանյանի,
էջ 26, ծան. 1։
2 Աճառյան, Երկու ուղղում Կորյունի մէջ, «Տեղեկագիր Արմֆանի», 1941,
№ 1 (6), էջ 169—170։

ձեռնարկեց Աստվածաշնչի թարգմանությանը, սկսելով Սողոմոնի
առակների գրքից, որն արտագրվեց Հովհաննեսի ձեռքով:
Վռամշապուհի թագավորության վեցերորդ տարում Մաշտոցն
իր աշակերտների հետ վերադարձավ Ասորիքից Վաղարշապատ, ուր
նրան մեծ ցնծությամբ ընդունեցին թագավորը, կաթողիկոսը և
նախարարների բազմությունը:
Այնուհետև Մաշտոցն իրեն ամբողջովին նվիրեց լուսավորա-
կան գործունեության: Սահակ կաթողիկոսի հետ նա բաց արեց
դպրոցներ, որոնց մեջ երեխաներին սովորեցնում էին հայերեն
այբուբենը: Միաժամանակ նա թարգմանում էր Աստվածաշնչի
գրքերը ու նաև ուրիշ երկեր:
Հայերեն նշանագրերի գյուտի մասին, բացի Կորյունի ու Ղա-
զար Փարպեցու աղքատիկ վկայություններից, կան մի քանի տեղե-
կություններ նաև Մովսես Խորենացու և ուշ ժամանակաշրջանի ուրիշ
հեղինակների գրվածքներում: Սակայն այդ տեղեկությունները,
դժբախտաբար, մեծ մասամբ կասկածելի են և քիչ հավանական:
Հայերեն այբուբենի խնդրի ուսումնասիրման ժամանակ, նախ
և առաջ, հարց է առաջանում նախամաշտոցյան գրերի մասին,
որոնք անվանվում են Դանիելյան, և ծագում է նույնպես ընդհանուր
մի խնդիր նախամաշտոցյան հայկական դրականության գոյության
մասին, որի համար օգտագործվել են այդ գրերը:
Այդ հարցերի մասին ինչպես հայտնի է, գրել են և գրում են
խիստ շատ, բայց, այնուամենայնիվ, դրանք դեռ մինչև այժմ վեճե-
րի ու հակաճառությունների առարկա են: Բացատրվում է այդ նրա-
նով, որ այս հարցերի մասին մեր ձեռքը հասել են կամ աղքատիկ
և կամ մութ ու անստույգ տեղեկություններ:
Անբավարար են, ամենից առաջ, աղբյուրների վկայությունները
այսպես կոչված Դանիելյան գրերի մասին: Մաշտոցի աշակերտ
Կորյունը Դանիելյան գրերն անվանում է «նշանագիրս ազափաբետաց
հայերէն լեզուի»: Իր աշխատության մի ուրիշ տեղում նա մատնա-
ցույց է անում, որ այդ գրերը երկար ժամանակ մոռացության են
եղել տրված և երևան են եկած պատահական կերպով,
«Երբ նրանք [Սահակը և Մաշտոցը],—ասում է Կորյունը,—
հասկացան, որ այդ նշանագրերը բավական չեն հայերեն
լեզվի վանկերն ու կապերն ամբողջությամբ արտահայտելու
համար,—մանավանդ որ, իրապես, նշանագրերը, որ ուրիշ
լեզվից էին առնված՝ անտեսված էին և պատահաբար նորից
էին գտնված»...
[«Իսկ իբրև ի վերայ հասեալ, թէ չեն բաւական նշանագիրքն

ողջ ածել զսիղոբայս և զկապս հայերէն լեզուին, մանաւանդ
զի և նշանագիրքն իսկ յայլոց դպրութեանց թաղեալք և յարու-
ցեալք գիւտեցան»][1]:
Ղազար Փարպեցին ևս վկայում է, ինչպես և Կորյունը, որ բա-
Ղազար Փարպեցին ևս վկայում է, ինչպես և Կորյունը, որ բա-
բեպաշտ այր Դանիել եպիսկոպոսի մոտ գտնվում էին «նշանագիրքն
հայերէն»[2], իսկ Մովսես Խորենացին մատնացույց է անում, որ թա-
գավորի պալատական Վահրիճ Հաբել քահանային հետն առած՝
միասին գնացին Դանիելի մոտ և նրանից տեղեկություն ստացան
«վաղընջուց գրված» նշանագիր տառերի մասին:
«Սահակը և Մաշտոցը,—ասում է Խորենացին,—ծանոթանա-
լով դրանց, մի քանի տարի սովորեցրին նրանցով տղաներին,
բայց տեղեկացան ու իմացան, որ այս նշանագրերը, մուրաց-
ված գծագրումները, բավական չեն և չեն կարող ճշգրիտ կեր-
պով արտահայտել առանձին առանձին հայերեն բառերի
հնչյունները»:
[«Որոց ուսեալ, և թեածելով ընդ նոսա ամայից զամս սա-
կաւս, տեղեկացեալ գիտացին՝ ոչ լինել բաւական այնու նշա-
նագրօք ատոյգ հոլովել զհեգենայ բառից հայկականաց հաց-
նագրօք առոյգ հոլովել զհեգենայ բառից հայկականաց հաց-
Հայ մյուս հեղինակները ո՛չ միայն մատնանշում են այդ այ-
բուբենի պակասավորությունը, այլև ճշտիվ որոշում են նրա տա-
ռերի թիվը: Օրինակ, Վարդան պատմագիրը, որ ապրում էր 13-րդ
դարում, հաղորդում է, որ
«Սրա [Վռամշապուհի] հինգերորդ տարում և Շապուհի որդի
Արտաշիրի առաջին տարում՝ սուրբ Մեսրոպը ստեղծեց հայե-
րեն դպրությունը՝ քսաներկու գիր, հին ժամանակներից մնա-
ցած, որ գտնված էին Դանիել Ասորու մոտ, իբրև մեր լեզվի
հնչյունների պարզաբանման համար անբավարար մեր նախ-
նիքներից անտեսվել էին. նրանք բավարարվել էին, գործածե-
լով հույն, ասորի և պարսիկ գրերը»:
[«Ի հինգերորդ ամին սորա և յառաջին ամին Արտաշրի
որդւոյ Շապհոյ՝ սուրբն Մեսրոպ յօրինէ դպրութիւն հայերէն.
քսան և երկու գիր առ Դանիէլի Ասորւոյ գտեալ ի հին ժամա-

---

[1] Տե՛ս Կորյուն, Վարք Մաշտոցի, հրատ. և թարգմ. Մ. Աբեղյանի, Երե-
վան, 1941, էջ 46:
[2] Փարպեցի I, գլ. Ժ, էջ 14:
[3] Խորենացի, III, գլ. ԾԲ:

նակաց, որ վասն ոչ պարզելոյն զընդարձակութիւն լեզուին, անհոգացեալ եղև յառաջնոցն, յոյն և ասորի և պարսիկ գրով շատացեալը»][1]:

Ուրիշ ավելի հին աղբյուրներում, «Անանուն ժամանակագրության» մեջ[2] և «Իմաստութիւն Դաւթի բերդողի» հատվածում[3], որը վերագրվելու է 7-րդ դարի մատենագիր Դավիթ Հարքացուն, մատնանշվում է, որ Դանիելյան այբուբենն ուներ 29 կամ 24 տառ:

Ինչպես տեսնում ենք, մեջ բերված այս աղբյուրների վկայությունները հաստատում են, որ դեռ Մեսրոպ Մաշտոցից առաջ գոյություն են ունեցել այսպես կոչված Դանիելյան նշանագրերը, որոնք, ըստ երևույթին, օգտագործել էր Մաշտոցը հայերեն լեզվի հնչյունական առանձնահատկություններին համապատասխանող իր լրիվ այբուբենը կազմելու ժամանակ: Աղբյուրների մեջ, թե հին և թե նոր, չկան ուղղակի ու ճշտորոշ ցուցումներ[4], որ իրը նախամաշտոցյան նշանագրեր հնարել է Դանիել ասորի եպիսկոպոսը, ինչպես այդ առանց բավարար հիմքի պնդում են գիտնականներից ոմանք[5]:

Եվ ինձ թվում է, որ կարող է իրավացի լինել Ն. Մառը, որը կարծում էր, թե Մաշտոցից դեռ առաջ հայերեն նշանագրերը հնարել էին անհայտ ասորի միսիոներները Հայաստանի հարավ-արևելքում[6]: Պետք է սակայն նաև մատնանշել, որ Հ. Աճառյանը «Էջմիածին» ամսագրում լույս տեսած իր հոդվածում Դանիելյան գրերի մասին հայտնել է ուշագրավ մի նոր կարծիք: Աճառյանը ենթադրում է, որ Դանիելյան տառերը «ուրիշ բան չէին, եթե ոչ ինչ որ արամեական հնացած տառեր», որոնք թյուրիմացաբար հայերեն տառեր էին համարվել «արամեական և արամյան (հայ) բառերի շփոթությունից»[7]:

Դանիելյան կոչված գրերի գոյության փաստի հետ սերտ կապ

---

1 Վարդան, Հաւաքումն պատմութեան, Վենետիկ, 1862, էջ 49 (գլ. ԻԵ):

2 Տե՛ս Ա. Աբրահամյան, Անանիա Շիրակացու մատենագրությունը, էջ 389:

3 Տե՛ս Գալուստ Տեր-Մկրտչյան, Դավիթ Հարքացի, Վաղարշապատ, 1903, էջ 30—31:

4 Բացառություն է կազմում վերոհիշյալ «Անանուն ժամանակագրութին»-ը, որի մեջ, հակառակ մյուս աղբյուրների, ասված է, որ Հայոց Սահակ հայրապետի ժամանակ «դպրութիւն հայերէն լեզուի քսան և ինն գրով ի Դանիէղէ փիլիսոփայէ Ասորւոց կարգեցաւ»: Տե՛ս Աբրահամյան, Անանիա Շիրակացու մատենագրությունը, էջ 389:

5 Տե՛ս *Адонц*, Армения в эпоху Юстиниана, էջ 351. Մարկվարտ, Պատմութիւն հայերէն նշանագրերու, էջ 43—46 և ուրիշ.:

6 *Марр*, Кавказский культурный мир и Армения, Петроград, 1915, էջ 34:

7 Տե՛ս Հ. Աճառյան, Երեք հարց Մեսրոպյան այբուբենի շուրջը, «Էջմիածին», 1946, օգոստոս—հոկտեմբեր, էջ 38—39:

ունի մի այլ կարևոր խնդիր. թե արդյոք գոյություն ունեցե՞լ է նաև նախամաշտոցյան հայ գրականություն, որն օգտվել է Դանիելյան այդ հին այբուբենից:

Ինչպես հայտնի է, գիտնականների մեծագույն մասն այս խնդիրը լուծել է այն իմաստով, որ Մեսրոպ Մաշտոցի գրերի գյուտից առաջ Դանիելյան կամ այլ նշանագրերով հայ դպրություն գոյություն չէ ունեցել: Նրանք, գլխավորապես, մատնանիշ են անում, որ այդ գրականությունից չէ պահպանվել և ոչ մի հետք և չկան այդ մասին նաև պարզորոշ գրավոր տեղեկություններ: Ընդհակառակը, աղբյուրները պարզ ու աներկմիտ ասում են, որ Մեսրոպյան այբուբենի գյուտից առաջ ժամասացությունը կատարվել է Հայաստանում օտար լեզուներով և հայ երիտասարդությունը ասորական կամ հունական դպրոցներում սովորել է ասորերեն կամ հունարեն լեզուները:

Սակայն, հակառակ այս գերիշխող կարծիքի, գիտնականներից ոմանք պնդում են[1], որ հայ գրականության գոյությունը մինչև հինգերորդ դարը, այսինքն՝ մինչև Մեսրոպյան գրերի գյուտը, ավելի քան հավանական է:

Հօգուտ այս ենթադրության ամենահամոզիչ ապացույցը նրանք համարում են այն, որ հինգերորդ դարի հայ գրական լեզուն և թարգմանական գրականությունն ունեն այնպիսի կատարելություն ու գեղեցկություն, որոնք, նրանց կարծիքով, չէին կարող ստեղծված լինել մի քանի տասնամյակների ընթացքում:

> «Հինգերորդ դարի սկզբում,—ասում է Մ. Տեր-Մովսեսյանը,—չկային հայ գրականություն ու հայերեն այբուբեն, գոյություն չուներ նաև Աստվածաշնչի ամբողջական կամ մասնակի թարգմանությունը. Հետևապես՝ չկար նաև մշակված լեզու, և հանկարծ, կարծես թե կախարդական ձեռքի շարժումով, միայն 20—30 տարվա ընթացքում՝ այդ բոլորն առաջանում է և հասնում է ամենաբարձր կատարելության:...... Մի՞թե կարող է այդ մեզ բավարարել»[2]:

Մեջ բերված այս նկատառումը, որ ամենալուրջ ապացույցն է համարվում հօգուտ հայ գրականության գոյության չորրորդ դարում

---

1 Տե՛ս Գարագաշյան, Քննական պատմութիւն Հայոց, Գ, էջ 39 և 69—71. М. *Тер-Мовсесян*, История перевода Библии на армянский язык, СПб., 1902, էջ 17—27. Ա. Աբրահամյան, Նախամեսրոպյան հայկական գրականության հարցը, Պետական Մատենադարանի գիտական նյութերի ժողովածու, № 1, Երևան, 1941, էջ 41—52 և ուրիշ.:

2 Տե՛ս *Месроп Тер-Мовсесян*, История перевода Библии на армянский язык, էջ 15:

կամ նաև առաջ՝ չի կարող ընդունվել իբրև անդրդվելի ու անվիճելի մի փաստարկ: Պետք է, ամենից առաջ, նկատի ունենալ, որ լեզուն ու կուլտուրան մարզպանական Հայաստանի, որը նախորդ յոթ դարերի ընթացքում ունեցել էր պետական ինքնուրույնություն և հասել էր տնտեսական ու սոցիալական զարգացման բավական բարձր աստիճանի, չէ կարելի, հարկավ, համեմատել լեզվի ու կուլտուրայի հետ նախնադարյան հետամնաց ժողովուրդների: Ինչպես հայտնի է, հայերը դեռ մինչև Մեսրոպյան այբուբենի գյուտը ունեցել են բերանացի հարուստ բանահյուսություն, որի լեզուն, ինչպես ընդունում են գրականագետները, բոլորովին նման է հինգերորդ դարի գրականության լեզվին: Այդ երկու լեզուների նույնությունը որոշել են բանասերները, որոնք ուսումնասիրել են Փավստոսի Պատմությունը, որի մեջ, ինչպես հայտնի է, լայն կերպով օգտագործվել էր պատմական բովանդակություն ունեցող ժողովրդական բանահյուսությունը[1]:

Ինչ վերաբերում է գիտնականների ցուցումներին հայերեն Աստվածաշնչի լեզվի մասին, որի մեջ, իբր, ճշտորեն ու լիապես վերարտադրված են ասորական կամ հունական բնագրերի նրբություններն ու առանձնահատկությունները՝ թարգմանական այդ լեզվի կատարելությունը, ինչպես դժվար չէ կռահել, բացատրվում է ո՛չ թե նրանով, որ գրականությունը գոյություն է ունեցել հինգերորդ դարի սկզբից շատ առաջ, այլ, ըստ երևույթին, նրանով, որ քրիստոնեությունը Հայաստանում հաստատվելուց հետո Աստվածաշնչի մասնակի թարգմանություններ գրեթե ամբողջ մեկ դարի ընթացքում գոյություն են ունեցել հայերի մոտ բերանացի հաղորդմամբ:

Ինձ թվում է, որ նախամեսրոպյան հայ գրականության օգտին արտահայտվող գիտնականները խիստ չափազանցնում են Դանիելյան այբուբենի դերն ու նշանակությունը: Նրանք բոլորովին աչքաթող են անում, որ այդ այբուբենը, ինչպես որոշակի մատնանշում են աղբյուրները, անբավարար էին և պիտանի չէին գրականությունը սպասարկելու համար:

Ավելի քան հավանական է, անշուշտ, որ քրիստոնեությունը Հայաստանում հաստատվելու ու տարածվելու հենց ընթացքում այնտեղ առաջանալու էր միաժամանակ հայերեն այբուբենի և քրիստոնեական պաշտամունքի գրքերի թարգմանման պահանջը: Եվ միանգամայն հավանական կարելի է համարել, որ քրիստոնեության սկզբից հենց, ինչպես այդ երևում է աղբյուրների որոշ ակնարկ-

[1] Տե՛ս Ստ. Մալխասյանց, *Ուսումնասիրություն Փավստոս Բուզանդի պատմության*, Վիեննա, 1896:

ներից, կարող էին փորձ արած լինել ստեղծելու հայերեն գրություն, գլխավորապես, սեմական լեզուների այբուբենների օգնությամբ հարավային Հայաստանում: Ասորական միսիոներների, կամ թերևս իր՝ Դանիելի, այս առաջին փորձը ո՛չ թե այն էր, որ նրանք այբուբեն էին հնարել հայերեն լեզվի հնչյունաբանությանը համապատասխանող, այլ միայն այն, որ նրանք օտար լեզվի նշանագրերն աշխատել էին կիրառել հայերեն լեզվի համար:

Նրանց կազմած այբուբենը, որը թերակատար էր և անգործածելի, չէ կարելի, իհարկե, իբրև համարժեք գործ համեմատել Մեսրոպ Մաշտոցի գյուտի հետ, որն առաջին անգամն էր պարզաբանել հայկական հնչյունաբանության դժվարին ու բարդ առանձնահատկությունները: Որոշած լինելով հայերեն լեզվի բոլոր ձայնավոր ու բաղաձայն հնչյունները՝ հայ ֆոնետիկայի այս հանճարեղ հիմնադիրը ստեղծել է ո՛չ թե մեռելածին, այլ կենսական ու անմահ այբուբեն, որը պիտանի էր գրականությունը սպասարկելու համար:

Եվ միանգամայն ակներև է, որ հենց շնորհիվ Մաշտոցի մեծ գյուտին հնարավոր եղավ ստեղծել և լայնորեն զարգացնել հայ գրականությունը և գիտությունը:

Մեսրոպ Մաշտոցի այբուբենի գյուտի ժամանակի մասին սկզբնաղբյուրների հաղորդած ժամանակագրական տեղեկությունները, ինչպես հայտնի է, խիստ հակասական են ու խճճված:

Սկսած դեռ Չամչյանից, որն իր եռահատոր պատմությունը գրել է 18-րդ դարում, այս հարցը բազում անգամ ենթարկվել է հատուկ քննության, սակայն մինչև այժմ վերջնական կերպով լուծված չէ:

Պետք է ասել, որ ընդհուպ մինչև վերջին ժամանակները գիտնականների մեծագույն մասը միանգամայն անտարակուսելի էին համարում, որ Մեսրոպյան այբուբենի գյուտի ժամանակը ճշտիվ որոշվում է հինգերորդ դարի սկզբում՝ 404—406 թվերին: Այս թվականը ստացվում է, իրոք, ժամանակագրական այն ցուցումների հիման վրա, որոնք գտնվում են Կորյունի պատմական երկի վերջում: Կորյունի այս վկայությունը մեջ եմ բերում ամբողջությամբ:

> «Եվ արդ,—ասված է Կորյունի պատմության վերջաբանում,— Երանելիի հավատքի տարիների հաշիվը լինում է քառասունհինգ տարի, և Հայոց դպրությունից մինչև սրբի վախճանը՝ երեսունհինգ տարի, որ այսպես են համարվում. Պարսից արքա Կրմանը թագավորել է վեց տարի և Հազկերտը՝ քսանմեկ տարի [և Վռամը տասնութ տարի], և Վռամի որդի երկրորդ Հազկերտի առաջին տարում վախճանվեց Երանելին:

Եվ արդ՝ սուրբ հավատքի տարիների հաշիվն սկսվում է Կըր-
ման արքայի չորրորդ տարուց մինչև Վռամի որդի երկրորդ
Հազկերտի առաջին տարին, և Հայոց դպրությունն սկսվել է
Հազկերտի ութերորդ տարուց»։

[«Եւ արդ լինի համար ամաց հաւատոյ երանելւոյն ամք
քառասուն և հինգ, և ի դպրութենէն Հայոց մինչև ցվախճան
սորայն՝ ամք երեսուն և հինգ, որք համարին այսպէս. Թագա-
ւորեալ Կրմանայ Պարսից արքայի ամս վեց, և Յազկերտի
ամս քսան և մի [և Վռամայ ութ և տասն] և յառաջնումն ամի
երկրորդ Յազկերտի որդւոյ Վռամայ վախճանեցաւ երանելին։
Եւ արդ առնու համար ամաց սրբոց հաւատոյ ի չորրորդում
ամէն Կրմանայ արքայի մինչև ցառաջին ամն երկրորդ Յազ-
կերտի որդւոյ Վռամայ, և դպրութեանն Հայոց յութերորդ
ամէ Յազկերտի առեալ սկիզբն»][1]։

Կորյունի պատմության այս վերջաբանում հայ դպրության
սկիզբը, ինչպես տեսնում ենք, ցույց է տրված Հազկերտ Ա.-ի (399.—
420) ութերորդ տարում և 35 տարի Մաշտոցի մահից առաջ, որը,
ինչպես հայտնի է[2], վախճանվել է հայոց մեհեկան ամսի տասներե-
քին՝ Սահակ կաթողիկոսի մահից վեց ամիս հետո։ Հայ և օտար
պատմագետներն ու բանասերները կարծում են, որ Կորյունի վեր-
ջաբանի ժամանակագրական այս տվյալների հիման վրա Մեսրոպ
Մաշտոցի գյուտի թվականը որոշվում է լիակատար ճշտությամբ։

Հիմնվելով տոմարական անվիճելի հաշիվների վրա՝ Մեսրոպ
Մաշտոցի, ինչպես և Սահակ կաթողիկոսի, մահվան տարեթիվը,
ամսաթիվը և օրը ճշտիվ որոշել է ֆրանսիական գիտնական Դյուլո-
րիեն։ Մեսրոպ Մաշտոցը, ինչպես նա պարզել է, վախճանվել է 440
թվի փետրվարի 17-ին, շաբաթ, իսկ Սահակ կաթողիկոսը՝ 439 թվի
սեպտեմբերի 7-ին, հինգշաբթի[3]։ Այսպիսով, հայերեն այբուբենի
գյուտը, որ Կորյունի վերջաբանում մատնացույց է արված Մեսրոպ
Մաշտոցի մահվանից 35 տարի առաջ՝ պետք է ենթադրել 406 թվին։
Այս թվականի ճշտությունը հաստատվում է նաև նրանով, որ նույն
տարեթիվը ստացվում է Կորյունի վերջաբանի նաև ըստ մի ուրիշ
վկայության, որը հայոց դպրության սկիզբը մատնանշում է Հազ-

[1] Տե՛ս Կորյուն, Վարք Մաշտոցի, հրատ. և թարգմ. Մ. Աբեղյանի, էջ 98—101։

[2] Տե՛ս նույնը, էջ 82։

[3] Տե՛ս Édouard Dulaurier, Recherches sur la chronologie armenienne, Paris, 1859, էջ 135—136, ծան. 40։

կերտ Ա.-ի թագավորության (399—420 թ.) ութերորդ տարում, այ-
սինքն՝ դարձյալ 406 թվին[1]։

Հայկական գրերի գյուտի այս տարեթիվը, որ հիմնված է Կոր-
յունի վերջաբանի սինխրոնիզմների վրա, ինչպես հայտնի է, գրե-
թե բոլոր գիտնականները համարում են նաև այժմ հաստատուն և
անդրդվելի։ Սակայն Ղազար Փարպեցու ժամանակագրական ցու-
ցումները, ինչպես և իր՝ Կորյունի հաղորդած տեղեկությունները
իր աշխատության մյուս հատվածներում, ինչպես դժվար չէ համոզ-
վել, ուշադիր կերպով քննելով բոլոր այդ վկայությունները, անհաշ-
տելի կերպով հակասում են վերոհիշյալ վերջաբանի տվյալներին։

Կարևոր այս փաստը, որ անտարակուսելի է, պարզ ցույց է
տալիս, որ գրերի գյուտի տարեթվի խնդիրը կարոտ է վերստուգման
ու նոր ուշադիր քննության։

Կորյունի պատմության բնագրի մեջ եղած կարևոր մի քանի
հակասությունները մատնանշված են Գ. Տեր-Մկրտչյանի և Ն.
Ադոնցի հոդվածներում, որոնք տպագրված են «Արարատ» և
«Հանդէս Ամսօրեայ» ամսագրերում[2]։

Ինչպես տեսանք, Կորյունը, պատմելով գրերի գյուտի մասին,
հաղորդում է, որ Վռամշապուհի (387/8—շուրջ 413/4) թագավորու-
թյան հինգերորդ տարում Մաշտոցը գնացել էր ասորական Ամիդ և
Եդեսիա քաղաքները, ուր նրան մեծարանքով ընդունել էին տեղական
Ակակիոս և Բաբիլաս եպիսկոպոսները։ Մինչդեռ՝ հակառակ Կորյու-
նի այս վկայության, մեզ հայտնի է, որ Ակակիոսն Ամիդի եպիսկո-
պոս էր սկսած 419/420 թվականից, իսկ Բաբիլասը, կամ ավելի
ճիշտ՝ Ռաբուլասը[3], Եդեսիայի եպիսկոպոս էր 412—435 թվերին[4]։

Արդ՝ ինչպե՞ս բացատրել Կորյունի այս ակներև հակասությու-
նը։ Վերոհիշյալ վերջաբանի մեջ հայկական գրերի գյուտը մատնա-

[1] Հայ և օտար գիտնականները, որոնք հայկական գրերի գյուտը դնում են 404, 405 կամ 407 թվերին, անծանոթ լինելով Դյուլորիեի տոմարական ճշգրիտ հաշվին, մեծ մասամբ, սխալ են որոշել Մաշտոցի մահվան տարեթիվը։

[2] Տե՛ս Գալ. Տեր-Մկրտչյան. Հայ գրերի 1500-ամեակի առթիւ, «Արարատ», 1912, մայիս-հունիս, էջ 499—514. Ն. Ադոնց. Անծանօթ էջեր Մաշթոցի և նրա աշակերտների կեանքից ըստ օտար աղբիւրների, «Հանդէս Ամսօրեայ», 1925, № 5—12։

[3] Կորյունի պատմության բնագրում, ինչպես մատնացույց է արել Գ. Տեր-Մկրտչյանը։ Բաբիլաս անունը պետք է ուղղել և կարդալ Րաբիլաս (=Ռաբուլաս)։ Տե՛ս «Հայ գրերի 1500-ամեակի առթիւ», «Արարատ», 1912, մայիս—հունիս, էջ 508։

[4] Տե՛ս Chabot, Synodicon orient, Paris, 1902, էջ 276 և J. Labourt, Le Christianisme dans l'empire, perse, Paris, 1904, էջ 101։

ցույց է արված 406 թվականին, իսկ բուն բնագրի վկայություններից
կարելի է հետևցնել, որ այդ գյուտը պետք է եղած լիներ 412 կամ
մինչև իսկ 419/420 թվականներից հետո և ոչ ուշ քան 435 թիվը։

Գ. Տեր-Մկրտչյանն իր վերևում նշված հոդվածի մեջ աշխատել
է այդ հակասությունը վերացնել և ենթադրել է, որ վերջաբանում
հիշատակված 406 թվականը ո՛չ թե Մեսրոպյան տառերի գյուտի
թվականն է, այլ Դանիելյան տառերի Վաղարշապատ բերվելու
թվականն է և սկիզբը հայ տառերի գյուտի աշխատությունների[1]։
Նրա կարծիքով, Մեսրոպյան այբուբենը չէր կարող հնարված լինել
412 թվականից, այսինքն՝ Ռաբուլասի Եդեսիայի եպիսկոպոս ձեռ-
նադրվելուց առաջ։ Ուստի նա Մաշտոցի հանդիպումը Ռաբուլասի
հետ և նրա գործունեությունն Ասորիքում ենթադրում է 412—416
թվերին, իսկ Մեսրոպյան գրերի գյուտը՝ այդ քառամյակի սկզբնե-
րում։ Կորյունի բնագրի մեջ, ասում է Տեր-Մկրտչյանը, ներս է
սպրդել գրչագրական ակներև մի սխալ։ Մաշտոցն Ասորիքից վերա-
դարձել էր Վաղարշապատ ո՛չ թե Վռամշապուհի թագավորության
վեցերորդ տարում («ի Զ ամի Վռամշապհոյ արքային»), այլ տասն-
վեցերորդ տարում («ի ԺԶ ամի»)։ Կորյունի բնագրում «վեց» կամ
Զ թիվը նա առաջարկում է ուղղել և կարդալ ԺԶ կամ «տասնվեց»։

Կարծելով, որ հակասությունը Կորյունի մոտ կարելի է վերաց-
նել իր առաջարկած այդ ուղղումով՝ Տեր-Մկրտչյանը հանգում է
բոլորովին նոր եզրակացությունների և տալիս է հետևյալ ժամա-
նակագրությունը.

1. 405 թ.—Սկիզբն հայ տառերի գյուտի աշխատություննե-
րի, այսինքն՝ Դանիելյան տառերի Վաղարշապատ բերվելը.
2. 412—416 թթ.—Մեսրոպյան գրերի գյուտը և կատա-
րելագործումը.
3. 412—416 թվերի սկիզբը—Մեսրոպյան գրերի գյուտը։

Մեջ բերված այս նոր եզրակացությունները, ինչպես դժվար չէ
նկատել, ո՛չ միայն համոզիչ չեն, այլև խիստ վիճելի են։ Նախ և
առաջ՝ դժվար է, իհարկե, ենթադրել, որ իբր Կորյունի աշխատու-
թյան վերջաբանում, որն ամբողջովին նվիրված է Մեսրոպ Մաշտոցի
կենսագրությանը, ժամանակագրական ցուցումները վերաբերում են
ո՛չ թե Մեսրոպ Մաշտոցի այբուբենի գյուտին, այլ Դանիելյան գրե-
րի Վաղարշապատ բերվելուն։ Կասկածելի է, բացի այդ, Տեր-
Մկրտչյանի նաև մի ուրիշ պնդումը, որ իբր թե Մեսրոպ Մաշտոցը
հնարել և կատարելագործել էր այբուբենը Դանիելյան տառերի

[1] Տե՛ս «Արարատ», 1912, մայիս—հունիս, էջ 512։

ստացվելուց 7—11 տարի հետո և վերադարձել էր Վաղարշապատ
Վռամշապուհի թագավորության տասնվեցերորդ տարում։ Անընդու-
նելի է նույնպես Տեր-Մկրտչյանի վերոհիշյալ ուղղումը՝ «ի ԺԶ ամի»
փոխանակ «ի Զ ամի», որովհետև Կորյունի տպագրված բնագրի
ճշտությունը հաստատվում է բոլոր ուշ շրջանի պատմագիրների ու
ժամանակագիրների վկայություններով։ Իսկ ամենամեծ պակասու-
թյունը Տեր-Մկրտչյանի առաջարկած ժամանակագրության այն է,
որ Կորյունի բնագրի մեջ եղած վերոհիշյալ հակասությունները
բնավ չեն վերանում նրա նոր ենթադրություններով։

Ինչպես արդեն հիշված է, Կորյունը պարզ և որոշ վկայում է,
որ Մեսրոպին Ասորիքում օգնել էր ո՛չ միայն Ռաբուլասը, այլև
Ակակիոսը, որը Ամիդ քաղաքի եպիսկոպոս էր ձեռնադրվել մոտա-
վորապես 419/420 թվականին։ Ըստ այսմ, համաձայն Կորյունի
այդ ցուցման, Մեսրոպ-Մաշտոցյան այբուբենի գյուտը և կատա-
րելագործումը հավանական կլիներ ենթադրել ո՛չ թե 412—416
թվականներին, այլ ավելի ուշ՝ 419/420 թվից ոչ առաջ։

Գ. Տեր-Մկրտչյանի հոդվածը Մեսրոպյան տառերի գյուտի
թվականի քննական ուսումնասիրության առաջին փորձն էր և այդ
հոդվածի գլխավոր արժանիքն այն է, որ նրա ականավոր հեղինակը
չէ հետևել ավանդական տեսակետին, որը, ինչպես տեսանք, հա-
մարվում էր հաստատուն ու անառարկելի։

Բոլորովին նոր ու հետաքրքիր լուսաբանություն է տվել նույն
այս խնդրին Ն. Ադոնցը վերոհիշյալ իր հոդվածում, որը տպված է
«Հանդէս Ամսօրեայ» ամսագրում։ Հիմնվելով հունա-հռոմեական
աղբյուրների վրա՝ Ադոնցը մեջ է բերում իր հոդվածում անծանոթ
նոր փաստեր, որոնք վկայում են, որ Մեսրոպ Մաշտոցը մասնակից
է եղել կրոնական պայքարին նեստորականության դեմ։ Նա մատ-
նանշում է, ի միջի այլոց, որ հայ գրերի հորինողը մոտ ծանոթ է
եղել Նեստորիոսի ուսուցիչ Թեոդորոս Մոպսուեստացու կամ Մա-
մուեստացու հետ։ Թեև Ադոնցը նպատակ չէ ունեցել լուսաբանելու
գրերի գյուտի խնդիրը, սակայն նրա հոդվածը զուգընթացորեն տա-
լիս է ցուցումներ, որոնք պարզապես նոր հունի մեջ են դնում նաև
այդ պրոբլեմը։

Ինչպես շատ ճիշտ կռահել է Ադոնցը, հայ գրերի հորինման
ժամանակ Մաշտոցին աջակցել և օգնել էին ոչ թե Ակակիոս և Ռա-
բուլաս եպիսկոպոսները, այլ, հավանորեն, վերոհիշյալ Թեոդորոս
Մոպսուեստացին, որի հերձվածողական գրվածքները դատապարտ-
վել էին Եփեսոսի 431 թվի տիեզերական ժողովում։

«Կորյունը,— ասում է Ադոնցը,— հասարակ կենսագիր չէ, նա
և եկեղեցական գործիչ է և իբր այդպիսին պէտք է իր գրիչը
համակերպէր հեա-եփէսոսեան տրամադրութեան։ Հայոց կա-
պերը Ասորիքի հետ այժմ պիտի խորշելի թվէր»[1]։
Սրանից պարզ հետևում է, որ Կորյունի հաղորդումների մեջ
նկատվող թերասությունները, անորոշությունները և նույնիսկ խե-
ղաթյուրումները կարող են բացատրվել ո՛չ միայն Կորյունի աշխա-
տության խմբագրական վերամշակումով, այլ մասամբ նաև գավա-
նական նկատառումներով հենց իր՝ հեղինակի, որը Մաշտոցի
Վարքը գրել էր համապատասխան փոփոխված կրոնական տրա-
մադրությունների հինգերորդ դարի կեսերում։
Ադոնցը հավանական է համարում, որ հայկական այբուբենը
Մաշտոցը պետք է հորինած լիներ չորրորդ դարի վերջում Թեոդո-
րոս Մոպսուեստացու և սրա աշակերտ՝ Ռուփինոս[2] անունով քահա-
նայի աջակցությամբ, որը 399 թվին Ասորիքից մեկնել էր Հռոմ և
այնտեղ խսկական հիմնադիրը դառել Պելագիական կոչված վարդա-
պետության[3]։ Ըստ Ղազար Փարպեցու, բացատրում է Ադոնցը,
Վռամշապուհին թագավոր էր կարգել Շապուհ Գ-ը (383/4—
388/9 թ.), ուրեմն՝ պարզ է, որ Մեսրոպ-Մաշտոցյան գրերի գյուտը,
որոնք Վաղարշապատ էին բերվել Վռամշապուհի վեցերորդ տարում՝
կարելի է ենթադրել չորրորդ դարի վերջերում Վռամ Դ-ի (388/9—
399 թ.) թագավորության ժամանակ։ Հենց այս ժամանակաշրջանում,
ասում է Ադոնցը, Մեսրոպ Մաշտոցը նամակագրություն էր ունեցել
Թեոդորոս Մոպսուեստացու հետ սրա քահանա եղած ժամանակ
(383—392 թ.), և, հավանորեն, հենց այս վերջինը կարող էր աջակ-
ցություն ցույց տված լինել Մաշտոցին գրերի գյուտի ժամանակ։
«Սրանով,— եզրակացնում է Ադոնցը,— ընդգծվում է գրերի
գյուտի համար որոշ և դրական տարեթիվ՝ 388—392 տարի-
ների տասնամյա միջոցը»[4]։
Ադոնցի դիտողությունները, անշուշտ, խիստ հետաքրքրական
են և արժանի են հատուկ ուշադրության։ Սակայն կարող են թերևս
առարկելի լինել նրա մատնանշած ժամանակագրական տարեթվերը,

[1] «Հանդէս Ամսօրեայ», 1925, սեպտեմբեր—հոկտեմբեր, էջ 439։
[2] Մաշտոցի Վարքի ընդարձակ խմբագրությունը փոխանակ «Ռուփինոսի»
ունի «Հռոփանոս», իսկ համառոտ խմբագրությունը և Խորենացու Պատմու-
թյունն ունեն նաև՝ «Ռուփինոս», «Ռուփանոս» և «Հռուփանոս» ընթերցված-
ները։
[3] «Հանդէս Ամսօրեայ», 1925, թ. 9—10, էջ 441։
[4] Նույնը, 11—12, էջ 531։

որովհետև Մեսրոպ-Մաշտոցյան այբուբենը կարող էր հորինված լի-
նել Թեոդորոս Մոպսուեստացու ո՛չ միայն քահանայության, այլև
նրա եպիսկոպոսության ժամանակ, այսինքն՝ 391/2 թվից հետո։
Մեսրոպ-Մաշտոցյան գրերի գյուտի տարեթիվը, ինչպես ցույց
է տալիս սկզբնաղբյուրների վկայությունների ուշադիր համեմատա-
կան քննությունը, պետք է որոշել ո՛չ թե Կորյունի վերջաբանի, այլ
Կորյունի և Ղազար Փարպեցու վերևում մատնանշված ցուցումների
հիման վրա։ Կորյունի ցուցումներից, ինչպես տեսանք, երևում է, որ
Մեսրոպ Մաշտոցը հայ գրերի գյուտն արել է Վռամշապուհի թագա-
վորության հինգերորդ կամ վեցերորդ տարում։ Ուշագրավ է, որ ուշ
շրջանի հայ մատենագիրները[1] հենվում են հենց այդ վկայության
վրա և բոլորովին անտեսում են Կորյունի վերջաբանը։ Պետք է նաև
նշել, որ նույն այդ հեղինակները Վռամշապուհի թագավորության
հինգերորդ կամ վեցերորդ տարին որոշել են հիմնվելով, գլխավո-
րապես, Մովսես Խորենացու Պատմության սխալ ժամանակագրու-
թյան ու շփոթ սինխրոնիզմների վրա։ Ուստի և հասկանալի է, թե
ինչու նրանք չէին կարող ճշտել գրերի գյուտի տարեթիվը։
Խոսրով Դ-ի, Վռամշապուհի, ինչպես և, ընդհանրապես, վերջին
Հայ Արշակունի թագավորների թվականները, որ քննված ու ճշտ-
ված են մեր այս աշխատության մեջ, ինչպես ասացինք, սխալ ու
քմահաճորեն են որոշված նաև նորագույն ուսումնասիրություննե-
րում։ Պատմագետները և բանասերները, դժբախտաբար, աչքաթող
են արել Ղազար Փարպեցու ժամանակագրական արժանահավատ
ցուցումները, որոնք վճռական նշանակություն ունեն այս խնդրում։
Նրա այդ ցուցումներից մենք արդեն վերև եզրակացրինք, որ թե
Խոսրով Դ-ը (385—387/8) և թե նրա եղբայր Վռամշապուհը
(387/8—շուրջ 413/4 թ.) թագավոր էին կարգվել Պարսկական Հա-
յաստանի՝ Շապուհ Գ-ի (383/4—388/9 թ.) հրամանով։ Սխալ տա-
րեթվերն երկու այս թագավորների, որ շարունակ մեջ են բերվում
պատմագիտական ու բանասիրական ուսումնասիրություններում,
բացատրվում են, ինչպես տեսանք, Խորենացու Պատմության և կամ
Կորյունի վերջաբանի ժամանակագրական սխալ տվյալների ազդե-
ցությամբ, որ, իմ կարծիքով, վճռականորեն պետք է մերժվեն։
Որ Խորենացու մոտ «Հայ Արշակունիների աղյուսակի մեջ ամե-

[1] Տե՛ս «Ստեփաննոսի Տարօնեցւոյ, Ասողկան, Պատմութիւն տիեզերական»,
Ս. Պետ., 1885, II, գլ. Ա, էջ 74. «Սամուէլի Քահանայի Անեցւոյ, Հաւաքմունք
ի գրոց պատմագրաց», հրատ. Ա. Տեր Միքելյանի, էջ 68. «Հաւաքումն պատմու-
թեան Վարդան վարդապետի», Վենետիկ, 1862, էջ 49 (գլ. ԻԴ)։

նախանձակից մասն է Սասանյանների շրջանը և հատկապես Տրդա-
տի թագավորությունից սկսած»՝ այդ խոստովանում է մինչև իսկ
Խորենացու Պատմության ամենաջերմ ջատագով Ստ. Մալխասյանը[1]։
Միանգամայն անվստահելի է նաև Կորյունի ժամանակագրական
վերջաբանը, որի մեջ գրերի գյուտը ենթադրվում է Հազկերտ Ա-ի
(399—420 թ.) ութերորդ տարում, մինչդեռ Կորյունի բուն բնագրից
մեղ հայտնի է, որ այդ գյուտը տեղի էր ունեցել Վռամշապուհի թա-
գավորության հինգերորդ կամ վեցերորդ տարում, այսինքն՝ Պար-
սից Վռամ Դ Կրմանի (388/9—399 թ.) ժամանակ։ Ուշագրավ է, որ
Խորենացու Պատմության մեջ էլ, համապատասխան Կորյունի վեր-
ջաբանի, Մեսրոպյան նշանագրերի բերվելը Հայաստան մատնա-
նշված է Թեոդոսիոս Փոքրի (408—450 թ.) և Հազկերտ Ա-ի (399—
420 թ.) ժամանակ[2]։ Առանձնապես հետաքրքիր է նաև այն, որ հետ-
նագույն ժամանակների հայ մատենագիրներից և ոչ մեկը՝ ո՛չ Ստե-
փանոս Տարոնեցին, ո՛չ Սամուել Անեցին և ո՛չ էլ Վարդան վարդա-
պետը, ըստ երևույթին, ծանոթ չեն եղել Կորյունի վերջաբանին և
գիտեն միայն նրա բուն բնագրի վկայությունները։
Ըստ այսմ՝ աչքի առաջ ունենալով վերոհիշյալ նկատառում-
ները, ինձ թվում է, կարելի է հետևություն անել, որ Կորյունի աշ-
խատության վերջում գտնվող ժամանակագրական վերջաբանն ընդ-
միջարկություն է և չէ կարող վերագրվել իրեն՝ Կորյունին։ Իսկ եթե
այդ այդպես է՝ հայ գրերի գյուտի ժամանակագրական խնդիրը
կարող է ստանալ բոլորովին նոր լուծում։ Ընդունելով ըստ Փար-
պեցու վկայության և համաձայն վերև ճշտված Հայ Արշակունիների
տարեթվերի, որ Վռամշապուհի գահակալության առաջին տարին
388 թվականն է՝ կարելի է վստահ կերպով հետևություն անել, որ
Մեսրոպ-Մաշտոցյան գրերի գյուտը, որ տեղի էր ունեցել Վռամշա-
պուհի թագավորության հինգերորդ կամ վեցերորդ տարում՝ պետք
է ենթադրել ո՛չ թե հինգերորդ դարի սկզբում, 406 թվականին, ինչ-
պես որոշված է գրեթե բոլոր նախկին աշխատություններում, այլ
չորրորդ դարի վերջերում՝ 392 կամ 393 թվականներին։
Հայ նորագյուտ տառերի Վաղարշապատ բերվելուց հետո, ինչ-
պես պատմում է Կորյունը, Հայաստանում ծավալվեց լուսավորա-
կան բուռն ոգևորիչ գործունեություն։ Մեսրոպ Մաշտոցը մի քանի
անգամ շրջեց Հայաստանի զանազան կողմերը, բացեց դպրոցներ և

1 Տե՛ս Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, թարգմ. Ստ. Մալխաս-
յանի, Երևան, 1940, էջ 350։
2 Տե՛ս Խորենացի, III, գլ. ԾԴ։

աշխատեց տարածել ամենուրեք գրագիտություն և ուսում մայրենի
մատչելի լեզվով։
Կորյունն իր աշխատության մեջ մանրամասն պատմում է
նույնպես, որ Մեսրոպ Մաշտոցը, ցանկանալով դպրության ու
գրագիտության բարիքը տարածել նաև հարևան երկրներում,
Վրաստանում ու Աղվանքում, հորինել է նշանագրեր վրացերեն ու
աղվաներեն լեզուների։
Այդ կարևոր ու հետաքրքիր տեղեկությունները, որ գիտնական-
ների ոմանք համարում են վիճելի ու անհավաստի, ավելորդ չեմ
համարում թարգմանաբար մեջ բերել ընդարձակ բովանդակությամբ։
1. Կորյուն, հրատ. Մ. Աբեղյանի, Երևան, 1941 թ., էջ 62—63՝
«Եվ նա [Մաշտոցը] ըստ իրեն տված տիրոջից շնորհքի
սկսեց նշանագրեր հորինել վրացերեն լեզվի համար։ Գրեց.
կարգավորեց և, ինչպես հարկն է, հարդարեց ու, իր լավա-
գույն աշակերտներից մի քանիսին հետը վերցնելով՝ վեր կա-
ցավ, գնաց, իջավ Վրաստանի կողմերը։ Եվ գալով այնտեղ՝
ներկայացավ թագավորին, որի անունն էր Բակուր, և երկրի
եպիսկոպոսին, որի անունը Մովսես էր։ Թագավորը և զոր-
քերը, բոլոր գավառներով միասին խիստ հլու ու հնազանդ
էին նրան ըստ աստվածային օրենքի։
Եվ նա իր արվեստն առաջադրելով՝ խրատեց, հորդորեց
նրանց, և ապա բոլորը հանձն առան նրա խնդրածը կատարել։
Եվ գտնվեց վրացերեն լեզվի թարգման մի մարդ, որն անվան-
վում էր Ջաղա և որը գրագետ ու ճշմարտահավատ մարդ էր։
Այնուհետև վրաց արքան հրամայեց իր իշխանության զա-
նազան կողմերից և խառնաղանջ գավառներից հավաքել
տղաներ և հանձնել վարդապետին»։
[«Եւ առնոյր կարգեալ նշանագիրս վրացերէն լեզուին, ըստ
շնորհեցելոյ նմա ի Տեառնէ։ Գրէր, կարգէր և օրինօք յարդա-
րէր. և առնոյր ընդ իւր զոմանս լաւագոյնս յաշակերտաց իւ-
րոց, յարուցեալ գնայր իջանել ի կողմանս Վրաց։ Եւ երթեալ
յանդիման լինէր թագաւորին, որում անուն էր Բակուր, և
եպիսկոպոսի աշխարհին՝ Մովսէս։ Եւ առաւելագոյն հնազան-
դեալ նմա ըստ օրինացն Աստուծոյ՝ թագաւորին և զօրացն,
հանդերձ ամենայն գաւառօքն։ Եւ նորա զիւր արուեստն առա-
ջի արկեալ՝ խրատէր յորդորելով. յորում և յանձն առեալ ամե-
նեցուն զխնդրելին կատարել։ Եւ գտեալ զայր մի թարգման վրա-
ցերէն լեզուին, որ անուանեալ կոչէր Ջաղայ, այր գրագէտ և
ճշմարտահաւատ. հրաման տայր այնուհետև արքայն Վրաց՝

ի կողմանց կողմանց և ի խառնաղանչ գաւառաց իշխանու-
թեան իւրոյ ժողովել մանկունս և տալ ի ձեռն վարդապետին»]։
2. Նույնը, էջ 68—70՝
«Այդ ժամանակ եկավ, հանդիպեց նրան մի քահանա մարդ,
ազգով աղվան, որի անունը Բենիամին էր։ Եվ նա [Մաշտոցը]
հարցափորձ արեց և քննեց աղվաներեն լեզվի բարբարոս բա-
ռերը, ապա վերնապարգև կոչվի իր սովորությամբ նշանա-
գրեր հորինեց և Քրիստոսի տված շնորհքի ներգործությամբ
կշռադատեց, կարգավորեց և հաստատեց։
Դրանից հետո նա հրաժեշտ տվեց եպիսկոպոսներին, աշ-
խարհի իշխաններին և բոլոր եկեղեցիներին. նրանց մոտ հավա-
տացյալների համար վերակացուներ թողեց իր աշակերտներից
երկուսին, որոնց առաջինի անունը Ենովք էր և երկրորդինը՝
Դանան, կրոնավոր և ավետարանական, սպասավորության մեջ
առաջադեմ մարդիկ, որոնց հանձնարարեց աստուծու շնորհ-
քին և տեղավորեց այնտեղ։ Եվ ինքը շատ աշակերտներով ե-
կավ, անցավ Մեծ Հայաստանի կողմերը և, հասնելով Նոր Քա-
ղաքը՝ ներկայացավ սուրբ եպիսկոպոս Սահակին և Հայոց
թագավորին, որի անունն էր Արտաշես, և բոլոր բանակին։
Եվ նա պատմեց նրանց աստուծու շնորհքի ներգործությամբ
այն կողմերում կատարած գործերը. մի քանի օր նա մնաց
այնտեղ և սիրտ տվեց, որ հոգևոր կարոտալի սեր տարածեն։
Եվ ապա դրանից հետո նրանց հրաժեշտ տվեց, որովհետև
գնալու էր Աղվանքի կողմերը։ Եվ գնաց իջավ նրանց աշխարհը
և, հասնելով թագավորական տեղերը, տեսավ աղվանների
սուրբ եպիսկոպոսին, որի անունը Երեմիա էին ասում, և նը-
րանց թագավորին, որի անունն Արսվաղ էր, որոնք բոլոր
ազատանիների հետ միասին մեծ խոնարհությամբ ընդունե-
ցին նրան Քրիստոսի անվան համար։ Ապա երբ նրանք հար-
ցրին՝ նա բացատրեց, թե ինչու համար է եկել։ Եվ նրանք,
երկուսը միասին, եպիսկոպոսը և թագավորը, հանձն առան
ընդունել դպրությունը։ Նրանք հրաման տվին նաև, որ իրենց
իշխանության գավառներից ու տեղերից դպրության արվեստի
համար բազմաթիվ տղաներ բերեն և հավաքեն, հարմարա-
վոր ու պատեհ տեղերում մաս մաս տեղավորեն դպրոցներում
և նրանց ապրուստի համար կարգեն թոշակներ»։
[«Յայնմ ժամանակի եկեալ դիպէր նմա այր մի երէց աղու-
ան ազգաւ, Բենիամէն անուն, և նորա հարցեալ և քննեալ
զբարբարոս զբանս աղուաներէն լեզուին, առնէր ապա նշանա-

գիրս ըստ վերնապարգև կոչովի սովորութեան իւրում և յաջո-
ղութեամբ Քրիստոսի շնորհացն կարգեալ և հաստատեալ կշռ-
ոէր։ Յետ այնորիկ հրաժարեալ յեպիսկոպոսաց, յիշխանաց
աշխարհին և յամենայն եկեղեցեաց. առ որս թողեալ վերա-
կացուս հաւատացելոցն՝ զերկուս ոմանս յիւրոց աշակեր-
տացն, որոց առաջնոյն Ենովք անուն էր, և երկրորդին Դա-
նան, այր կրօնաւորք և յառաջադէմք յաւետարանական սպա-
սաւորութեանն. զորս յանձն տուեալ շնորհացն Աստուծոյ՝
անդէն զետեղէր։ Եւ ինքն բազում աշակերտօք գայր, անցա-
նէր ի կողմանս Հայոց Մեծաց և հասեալ ի Նոր Քաղաքն՝
յանդիման լինէր սրբոյ եպիսկոպոսին Սահակայ և թագա-
ւորին Հայոց, որում անուն Արտաշէս կոչէին, և ամենայն բա-
նակին։ Եւ պատմեալ նոցա զգործս կողմանցն այնոցիկ ըստ
աջողութեանց շնորհացն Աստուծոյ, զաւուրս ինչ անդ դադարէր
ինչ, մխիթարէր վասն հոգևոր անձուկն սփոփելոյ։
Եւ ապա յետ այնորիկ հրաժարեալ գնալ ի կողմանս Աղուա-
նից։ Եւ երթեալ իջանէր յաշխարհն և հասեալ ի թագաւորա-
կան տեղին, տեսանէր զսուրբ եպիսկոպոսն Աղուանից,
որում անուն Երեմիա կոչէին, և զնոցին թագաւոր, որում Ար-
սվաղ էր անուն, ամենայն ազատօք հանդերձ, որոց առաւել
հպատակութեամբ ընկալեալ վասն անուանն Քրիստոսի։ Ապա
հարցեալ ի նոցանէ, առաջի եդեալ վասն որոյ եկեալն էր։ Եւ
նոցա երկոցունց զուգակցելոց, եպիսկոպոսին և թագաւորին,
յանձն առեալ դպրութեանն հնազանդելոյ. տային եւ հրաման՝
ի գաւառաց և ի տեղեաց իշխանութեանն իւրեանց բազմու-
թիւն մանկանց յարուեստ դպրութեանն ածել և գումարել՝
ըստ արժանաւոր և պատեհ տեղեաց, դասս դասս դպրոցաց
և ռոճիկս կարգել ի դարմանս»]։
Կորյունի պատմական երկի այս տեղեկությունները մեջ են
բերված նաև Մովսես Խորենացու մոտ, որն անում է նաև լրացում-
ներ, որոնք, ըստ երևույթին, քաղված են ուրիշ աղբյուրներից։
3. Խորենացի, III, գլ. 54՝
«Իսկ Մեսրոպը, գնալով Վրաց աշխարհը՝ իրեն վերուստ
տրված շնորհով նրանց համար էլ ստեղծեց նշանագրեր, մի
ոմն Ջաղայի հետ միասին՝ հունարեն և հայերեն լեզուների
թարգմանչի, և աջակցությամբ նրանց Բակուր արքայի ու
Մովսես եպիսկոպոսի։ Նա ընտրեց տղաներ, բաժանեց երկու
խմբի և նրանց համար իբրև ուսուցիչներ թողեց իր աշա-
կերտներից տեր Խորձենացուն և Մուշե Տարոնացուն։

Եվ ինքն իջավ Աղվանք, սրանց Արսվաղեն թագավորի և Երեմիա եպիսկոպոսապետի մոտ, որոնք կամովին հանձն առան նրա ուսումը և տվին նրան ընտիր տղաներ: Եվ նա կանչեց մի ոմն Բենիամին անունով շնորհալի թարգմանչի, որին անհապաղ ուղարկել էր Սյունիքի տեր երիտասարդ Վասակն իր Անանիա եպիսկոպոսի ձեռքով: Նա [Մեսրոպը] նրանց օգնությամբ ստեղծեց նշանագրեր Գարգարացիների այն կոկորդային, կոպիտ, խժական, բեկբեկուն լեզվի համար:

[«Իսկ Մեսրոպայ երթեալ յաշխարհն Վրաց՝ առնէ և նոցա նշանագիրս տուեալն ի վերուստ շնորհաւն, հանդերձ Ջաղայի ումեմն թարգմանաւ հելլէն և հայ լեզուի, ձեռնտու լինելով արքայի նոցա Բակրոյ և եպիսկոպոսին Մովսէսի: Եւ ընտրեալ մանկունս և յերկուս բաժանեալ դասս՝ վարդապետս թողու նոցա յաշակերտաց իւրոց զՏէր Խորձենացի և զՄուշէ Տարօնացի:

Եւ ինքն յԱղուանս իջեալ առ Արսվաղէն թագաւոր նոցա և առ եպիսկոպոսապետն Երեմիայ. որոց կամաւ յանձն առեալ զվարդապետութիւն նորա՝ տուեալ մանկունս ընտիրս: Եւ կոչեալ զԲենիամին ոմն շնորհաւոր թարգման, զոր անդանդաղ արձակեաց մանուկն Վասակ Սիւնեաց տէր, ի ձեռն Անանիայի եպիսկոպոսի իւրոյ. որովք ստեղծ զնշանագիրս կոկորդախօս աղխազուր խժական խեցբեկագունին այնորիկ Գարգարացւոց լեզուին»][1]:

Կորյունի և Մովսես Խորենացու այս վկայությունները, հատկապես Մեսրոպ Մաշտոցի հորինած վրացական այբուբենի մասին, ինչպես հայտնի է, ոմանք համարում են թերի և նույնիսկ անհավաստի, որովհետև այդ հաղորդումները, ինչպես մատնանշում են վրացագետները, չեն համապատասխանում հին վրացական աղբյուրների տվյալներին: Եվ, իրոք, վերոհիշյալ վկայությունների ուշադիր քննարկման ժամանակ, որոնք, ըստ երևույթին, ենթարկվել են խմբագրական վերամշակման՝ ծագում են վարանումների առիթ տվող հարցեր, որոնք պետք է նախապես ուսումնասիրվեն և քննադատորեն լուծվեն: Այդ խնդիրները, որ բարդ են և դժվար, կարոտ են, անշուշտ, հատուկ քննության:

Սակայն, չնայած Կորյունի մի քանի պնդումների վիճելիության՝ ընդհանրապես և ամբողջությամբ առած, նրա պատմածը, ինձ թվում է, տեղիք չի տալիս կասկածանքի: Նրա հաղորդագրու-

[1] Խորենացի, հրատ. Մ. Աբեղյանի և Ս. Հարությունյանի, Տփղիս, 1913, III, գլ. ԾԴ, էջ 328—329:

թյան պատմական արժանահավատությունը, ի միջի այլոց, հաստատվում է նրանով, որ հենց ճիշտ հինգերորդ դարի սկզբում, ինչպես հայտնի է «Պետրոս Իբերի Վարք»-ից[1], Վրաստանում թագավորում էր, իրապես, Կորյունի հիշատակած Բակուրը՝ Պետրոս Իբերի հայրը: Օգտվելով Բակուրի, ինչպես և Աղվանքի թագավոր Արսվաղենի աջակցությունից՝ Մեսրոպ Մաշտոցը, ինչպես ակներև է, տարածելիս է եղել և՛ Վրաստանում, և՛ Աղվանքում դպրություն ու լուսավորություն տեղական լեզուներով:

Կորյունի վկայություններից, ինչպես տեսնում ենք, պարզվում է, որ Հայաստանի հետ սերտ ու եղբայրական ընկերակցությամբ զարգացնում էին իրենց մոտ գրագիտությունն ու գրականությունը և պաշտպանում էին կուլտուրական իրենց անկախությունը նույնպես և անդրկովկասյան պետությունները:

Չորրորդ և հինգերորդ դարերում պայքարը մազդեականության և Սասանյան Պարսկաստանի համաձուլարար ագրեսիայի դեմ, ակներևորեն, ընդհանուր գործ էին համարում Անդրկովկասի բոլոր երեք եղբայրական ժողովուրդները: Այս ժողովուրդները, որոնք իրենց նախնիներից, հավանորեն, նախախեթիերից և ուրարտ-խուրրիներից, ժառանգել էին նրանց հին կուլտուրան և ունեին որոշ չափով և ընդհանուր ծագում, անտարակույս, իրար հետ սերտ կապված էին նաև իրենց պատմական բախտի նույնությամբ կամ նմանակերպությամբ: Ինչպես շատ ճիշտ դիտել է Ն. Մառը, հայերը և վրացիները, չնայած իրենց այլալեզվության, քրիստոնեության սկզբնական շրջանում կազմում էին մի անբաժան ամբողջություն[2]: Նրանց հետ սերտ կապը և կուլտուրական մերձակցությունը, ինչպես տեսնում ենք, որոշակի մատնացույց են արված Կորյունի պատմական երկում, որը դպրության ու լուսավորության տարածումը նրանց մոտ չորրորդ և հինգերորդ դարերում նկարագրում է իբրև մի իրողություն, որն ուներ կարևոր ու ընդհանուր նշանակություն:

Ընդհանուր այդ անդրկովկասյան գործում Մեսրոպ Մաշտոցը կատարել էր, անշուշտ, ականավոր դեր: Կորյունի վկայություններից կարելի է հետևցնել, որ հայ գրերի հանճարեղ հորինողը եղել է միաժամանակ տաղանդավոր քաղաքագետ և խոշոր կազմակերպիչ: Պայքար մղելով Սասանյան Պարսկաստանի և Հռոմեական

[1] Տե՛ս „Житие Петра Ивера", Изд. Н. Марра, Православный Палестинский Сборник, 47 вып., СПб., 1896, էջ 82—85:

[2] Տե՛ս Н. Марр, Кавказ и памятники его духовной культуры, Петроград, 1919, էջ 6:

կայսրության դեմ հայ ժողովրդի կուլտուրական ներքին անկախության համար, Մեսրոպ Մաշտոցն աշխատել էր անվտանգ դարձնել իր երկրի հյուսիսային թիկունքը և, ըստ երևույթին, նպատակ էր ունեցել ստեղծելու պաշտպանության լայն կուլտուրական անդրկովկասյան ճակատ ընդդեմ ընդհանուր արտաքին թշնամիների:

Իբրև Անդրկովկասի եղբայրական ժողովուրդների ընդհանուր շահերի պաշտպան և իբրև նրանց ինքնուրույն գրականության ու կուլտուրայի ազատ զարգացման հոգատար՝ Մեսրոպ Մաշտոցը, անտարակույս, նույնպիսի իմաստուն քաղաքական գործիչ էր, ինչպիսիք էին հետսելջուկյան շրջանի Վրաստանի հեռատես քաղաքագետները, որոնք, վերանվաճելով մահմեդականներից հայկական երկրները, ամեն կերպ աջակցեցին թե ինքնուրույն Հայաստանի վերականգնմանը և թե նրա ազգային կուլտուրայի վերածնությանը:

Մեսրոպ Մաշտոցի լուսավորական գործի հետ ծանոթանալիս աչքի է ընկնում այն փաստը, որ նորաստեղծ հայ տառերի մուտքը և տարածումը Արևմտյան Հայաստանում տեղի ունեցան բավական ուշ՝ գրերի գյուտից մոտավորապես երեսուն տարի հետո: Իմ կարծիքով՝ բացատրվում է այդ նրանով, որ իրենց կուլտուրական-վերանորոգչական գործունեության ժամանակ Պարսկական Հայաստանում Սահակը և Մաշտոցն անհրաժեշտ էին համարել, քաղաքական նկատառումներով, խույս տալ ու երես դարձնել Հռոմեական կայսրությունից:

Նրանք ուզում էին, ըստ երևույթին, ցրել պարսիկների կասկածանքները և համոզել նրանց, որ գրության ստեղծումը հայերեն լեզվով հնարավորություն կտա հայերին խզելու իրենց կապը հույների հետ: Հավանորեն, հենց դրանով պետք է բացատրել և այն, որ հայերեն նշանագրերը հորինված էին Ասորիքում՝ գործակցությամբ ասորիների, որոնք կողմնակիցներ էին Սասանյան Պարսկաստանի:

Երբ Հայաստանի պարսկական մասում ամեն տեղ ստեղծված էին դպրոցներ մայրենի լեզվի ուսուցման համար՝ Մեսրոպ Մաշտոցը,— ասում է Կորյունը[1]

«այնուհետև մտածեց Հայոց կես ազգի համար, որ հռոմների թագավորության իշխանության տակ էր»:

Իր աշակերտների մի մասի հետ նա գնաց հռոմեական կողմերը և այնտեղ մեծ պատվով ընդունեցին նրան աշխարհի եպիսկոպոսները, իշխանները, ժողովուրդը և, մանավանդ, հռոմեական արևելյան զորքերի զորավար Անատոլիոսը[1]:

Արևմտյան կամ Հռոմեական Հայաստանը, ինչպես հայտնի է,
ենթարկված չէր Սահակ կաթողիկոսի իշխանությանը, որի աթոռանիստը գտնվում էր Պարսկական Հայաստանում: Որպեսզի
Հայաստանի նաև այս մասում կարելի լիներ հայկական դպրոցներ բաց անել մայրենի լեզվով գրագիտություն տարածել՝ անհրաժեշտ էր նախապես ստանալ Թեոդոսիոս Բ կայսրի համաձայնությունը: Ուստի և Մեսրոպ Մաշտոցն իր աշակերտների մեծագույն մասը
տարավ Մելիտենե քաղաքը և հանձնեց տեղական Ակակիոս
եպիսկոպոսին, իսկ ինքն իր աշակերտների մի փոքր խմբի հետ
գնաց կայսեր մոտ Կոստանդնուպոլիս:

Կայսերական մայրաքաղաքում նրան անձամբ ընդունեցին
Թեոդոսիոս Բ-ը և Ատտիկոս պատրիարքը (405/6—425), և նրա
խնդիրքը, ինչպես պատմում է Կորյունը, բավարարվեց: Կայսերական հատուկ հրամանով կարգադրվեց Արևմտյան Հայաստանում
ևս բաց անել հայկական դպրոցներ ու դրանց ծախսը հոգալ պետական միջոցներով:

Կորյունի հաղորդած այս տեղեկությունները մեջ են բերված
նաև Խորենացու մոտ: Բայց վերջինս, ըստ երևույթին, օգտվել է
նաև մի ուրիշ մեզ անհայտ աղբյուրից, որի վկայությունները
նա, ըստ իր սովորության, հռետորական վերամշակման ենթարկելով՝ պատմում է իրեն հատուկ եղանակով:

Խորենացին, որ Կորյունից վերցրել էր իր պատմվածքի միայն հենքը՝ շեղվելով նրանից, հաղորդում է, որ սկզբում տեղական հռոմեական իշխանությունները թույլ չէին տվել Մաշտոցին
Արևմտյան Հայաստանում բաց անել հայկական դպրոցներ և նորաստեղծ տառերով հայերեն սովորեցնել հունարենի փոխարեն:
Խորենացու ասելով՝ ինքը՝ Թեոդոսիոս Բ կայսրը նույնպես դժգոհ

---

1 Կորյուն, հրատ. և թարգմ. Մ. Աբեղյանի, էջ 64—65:

1 Կորյունի ձեռագրերն ունեն տարբեր ընթերցվածներ՝ «Անտիոխ, Անատող, Անտիոք, Անտեսիս, Անտեսի» (տե՛ս հրատ. Աբեղյանի, էջ 64): Ես ենթադրել էի, որ Կորյունի բնագրում «Անտիոխ» ընթերցվածը գրիչներն ուղղել են «Անատոլիս»՝ Խորենացու ազդեցությամբ: Իմ այս ենթադրության «Месроп Маштоц» ռուսերեն իմ աշխատության մեջ (էջ 38, ծան. 2) ես ենհիմք էր ծառայել Կուլակովսկու ցուցումը, որը նշում է, որ Անատոլիոսը հռոմեական զորքի հրամանատար էր Արևելքում ոչ թե այս ժամանակ, այլ 438—443 թվերին (տե՛ս Ю. Кулаковский. История Византии, т. I, էջ 272): Ինձ թվում է այժմ, որ այս խնդիրը կարոտ է հատուկ նոր քննության:

էր և մեղադրում էր Սահակ կաթողիկոսին, որ նա, արհամարհելով հույն գիտնականներին՝ «ինչ-որ ասորիների մոտ էր որոնել իմաստության ջուրը»[1]:

Խորենացու այս վկայությունները, իմ կարծիքով, չեն կարող կամայական հերյուրանքներ լինել և, հավանորեն, հիմնված են հավաստի ավանդության վրա: Հռոմայեցիներին, իհարկե, չէր կարող հաճելի լինել, որ Արևմտյան Հայաստանում հունարեն լեզուն իր տեղը պետք է զիջեր հայերենին, ինչպես եկեղեցական արարողությունների ժամանակ, նույնպես և դպրոցներում: Կայսրության եկեղեցական գործունեությունը, անկասկած, սերտ կերպով կապված էր նրա քաղաքական գործունեության հետ: Այն անղերում, ուր հաստատվում էր հունական քրիստոնեությունը, և ամրանում էր կայսրության քաղաքական տիրապետությունը՝ նրա քաղաքական այդ ազդեցությունը հարակցված էին լինում, ինչպես և Սասանյան Պարսկաստանում, նաև նրա բացահայտ ասիմիլյատորական հավակնությունները: Ուստի և հասկանալի է, որ հռոմեական կառավարությունը չէր կարող հեշտությամբ հաշտվել Մեսրոպ Մաշտոցի լուսավորական գործունեության հետ Արևմտյան կամ Հռոմեական Հայաստանում:

Սակայն ագրեսիվ քաղաքականություն նա չէր կարող այն ժամանակ Արևելքում վարել, որովհետև սկսած չորրորդ դարի վերջերից նրան սպառնում էր լուրջ վտանգ հյուսիս-արևմուտքից՝ քոչվոր հոների կողմից: Թեոդոսիոս Բ-ի բարեհաճ ու կարեկից վերաբերմունքը Մեսրոպ Մաշտոցի միջնորդությանը վերագրվելու է, հավանորեն, ո՛չ թե կայսերական կառավարության իմաստուն հեռատեսությանը կամ «հույների ազնիվ նկատառումներին», ինչպես այդ ենթադրում են մի քանի գիտնականներ[2], այլ արտաքին քաղաքական այն պայմաններին, որոնք վտանգում էին կայսրության գոյությունը հինգերորդ դարում:

Մեսրոպ Մաշտոցի կայսերական մայրաքաղաքը գնալու տարեթիվը և Արևմտյան Հայաստանում մայրենի լեզվով դպրության ու լուսավորության հաստատման ժամանակը կարելի է ճշտել, հիմնվելով Կորյունի արժանահավատ վկայությունների վրա[3]:

---

[1] Խորենացի, III, գլ. ԾԷ:

[2] *N. Gelzer*, Abriss der byzantinischen Geschichte, էջ 916, (տե՛ս *K. Krumbacher*, Geschichte des byzantinischen Literatur, München, 1897) և *А. Аннинский*, История Армянской церкви, Кишинев, 1901 էջ 38:

[3] Այդ թվականները ճիշտ են որոշված Ադոնցի վերոհիշյալ հոդվածում. տե՛ս «Հանդէս Ամսօրեայ», 1925, № 9—10. էջ 435—437:

Ինչպես ասացինք, Կոստանդնուպոլիս մեկնելուց առաջ Մեսրոպ Մաշտոցն իր աշակերտներից շատերին թողել էր Մելիտենեում Ակակիոսի խնամակալության տակ, որը եպիսկոպոս էր ձեռնադրվել մոտավորապես 419/420 թվականին: Պարզ է, ուրեմն, որ Մաշտոցի ուղևորությունը Թեոդոսիոս Բ-ի և Ատտիկոս պատրիարքի մոտ պետք է ենթադրել 419/420 թվականից հետո: Մեզ հայտնի է նմանապես, որ Կոստանդնուպոլսի Ատտիկոս պատրիարքը վախճանվել էր 425 թվի հոկտեմբերի 10-ին: Դժվար չէ, ուրեմն, հետևցնել, որ Մաշտոցի ճանապարհորդությունը Կոստանդնուպոլիս պետք է տեղի ունեցած լինի 419/420—425 թվականների ժամանակամիջոցում: Ինձ թվում է, կարելի է նաև վստահորեն ենթադրել, որ Մաշտոցը կարող էր գնացած լինել հռոմեական կողմերը պարսկահռոմեական պատերազմի տարիներում՝ 420—422 թվականներին, երբ Հայաստանի պարսկական մասը, որն ուներ հռոմեական կողմնորոշում, աշխատել էր, հավանորեն, կապեր հաստատել կայսրության հետ, հույս ունենալով ազատագրվելու Պարսկաստանից:

Նախապես ստացած լինելով Թեոդոսիոս Բ-ի թույլտվությունը՝ Մեսրոպ Մաշտոցը եռանդուն կերպով սկսեց տարածել հայկական դպրությունը նաև Արևմտյան Հայաստանում, ուր կայսրի հրամանով բացվել էին հայկական դպրոցներ: Այսպիսով, շնորհիվ հայերեն այբուբենը ստեղծողի անխոնջ ու բեղմնավոր գործունեության, պահպանեցին իրենց լեզուն և իրենց կուլտուրական ինքնուրույնությունը թե Պարսկական և թե Հռոմեական Հայաստանի հայերը:

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՉՈՐՍԵՐՈՐԴ

ԱՐՏԱՇԵՍ ԵՎ ԱՐՇԱԿՈՒՆԻՆԵՐԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՆԿՈՒՄԸ

Հայոց թարգմանական հին գրականությունը։— Կրոնական ազատությունը Հազկերտ Ա-ի թագավորության առաջին շրջանում։— Հռոմեական կայսրության բաժանումը երկու մասերի։— Խոսրով Դ։— Շապուհ՝ որդի Հազկերտ Ա-ի։— Հազկերտ Ա-ի նոր քաղաքականության նպատակը Հայաստանում։— Հալածանքներ Պարսկաստանի քրիստոնեության դեմ։— Պատերազմ կայսրության դեմ։— Պարսկական զորքերի պարտությունն Աղձնիքում։— Խաղաղության դաշնագրի կնքումը և նրա պայմանները։— Եռեքամյա անտերնչությունը Հայաստանում։— Արտաշես՝ որդի Վռամշապուհի։— Նրա գահընկեցությունը հայ նախարարների ամբաստանության պատճառով։— Արշակունյաց թագավորների իշխանության վերացումը Պարսկական Հայաստանում։— Պարսկական Հայաստանի քաղաքական դրությունը 428 թվից հետո։— Արևելյան Հայաստանը Սասանյան Պարսկաստանի մարզ։

Մայրենի լեզվով գրքության ստեղծումն առաջ բերեց Հայաստանում սրտալիր ուրախություն և ցնծալի ոգևորություն։

«Յայնմ ժամանակի,— ասում է Կորյունը,— երանելի և ցանկալի աշխարհս Հայոց անպայման սքանչելի լինէր»[1]։

Եվ այնուհետև, սկսած չորրորդ դարի վերջերից՝ հայերեն գրքության տարածման հենց սկզբնական շրջանում, արագ կերպով սկսեց զարգանալ, նախ և առաջ, Հայոց թարգմանական հին գրականությունը։ Դեռևս Մեսրոպ Մաշտոցի և Սահակ կաթողիկոսի կենդանության ժամանակ թարգմանվեցին հայերեն, բացի Աստվածաշնչից և եկեղեցական պաշտամունքի գրքերից, նաև բազմաթիվ այլ կրոնական երկեր։ Հնագույն այս ժամանակաշրջանի թարգմանություններից առանձնապես կարևոր են եկեղեցա-պատմական և պատմական երկու գրվածքներ՝ Եվսեբիոս Կեսարացու «Եկեղեցապատմական պատմություն»-ը և «Ժամանակագրությունը»-ը, որոնք հիմք ծառայեցին պատմագիտության զարգացմանը Հայաստանում։

Առաջինը, ինչպես վկայում է Մովսես Խորենացին[1], թարգմանել էր տվել Մաշտոցը։ Գ. Տեր-Մկրտչյանը Խորենացու այս վկայությունը համարում է ճիշտ և, հիմնվելով այդ երկի հայերեն թարգմանության կարևոր մի վկայության վրա՝ պարզել է, որ այդ գիրքը թարգմանված է 416—420 քառամյակում[2]։ Պետք է սակայն նշենք, որ թարգմանությունը կատարված է ո՛չ թե գրերի գյուտից անմիջապես հետո, ինչպես ենթադրում է Տեր-Մկրտչյանը, այլ գյուտից մոտ քսանհինգ տարի հետո։

Ուշագրավ է, որ հատկապես Վռամշապուհի թագավորության տարիներում (387/8—413/4 թ.) Պարսկական Հայաստանը հնարավորություն էր ստացել լայն կերպով ծավալելու լուսավորական և գրական-գիտական գործունեություն, որովհետև, ինչպես տեսանք, Վռամ Դ Կրմանի (388/9—399 թ.) ժամանակ և Հազկերտ Ա-ի (399—420 թ.) թագավորության առաջին շրջանում թուլացել էր հալածանքը քրիստոնեության և քրիստոնեական երկրների վերաբերմամբ։ Վռամ Դ-ը հաշտ էր կայսրության հետ, բայց անխնա կռիվ էր մղում Պարսից ազնվականության և հոգևորականության դեմ։ Իսկ նրա որդին և հաջորդը, Հազկերտ Ա-ը, որին պարսիկներն անվանում են «մեղավոր» (bazakar), ինչպես հայտնի է, մինչև իսկ խնամակալն էր դառել անչափահաս Թեոդոսիոս Փոքր կայսրի։ Հազկերտ Ա-ի հրամանով Պարսկաստանի քրիստոնեությանը շնորհվել էր կրոնական ազատություն, նրանց թույլ էր տրվել վերակառուցել քանդված եկեղեցիները և ընտրել իրենց համար կաթողիկոս (410 թ.)։

Վռամշապուհի թագավորության ժամանակ տեղի ունեցան փոփոխություններ նաև Հռոմեական կայսրության մեջ։ 395 թվին վախճանվեց Միլանում Թեոդոսիոս Ա-ը և նրան հաջորդեցին նրա երկու որդիները՝ Արկադիոսը (395—408 թ.), որն ստացավ կայսրության արևելյան մասը, և Հոնորիոսը (395—423 թ.), որն ստացավ արևմտյան մասը։ Կայսրության այս երկու մասերն այնուհետև այլևս հնարավոր չեղավ միացնել իրար հետ, և նրանք մնացին բաժանված։ Պատմագետներից ոմանք, օրինակ՝ Գելցերը[3] և Կուլակով-

---

[1] Կորյուն, Հրատ. և թարգմ. Մ. Աբեղյանի, էջ 56։

---

[1] Խորենացի, II, գլ. Ժ։

[2] Տե՛ս Գ. Տեր-Մկրտչյան, Հայ մատենագրութեան հնագոյն թուականները, «Շողակաթ», էջմիածնի հայագիտական ժողովածու, Վաղարշապատ, 1913, էջ 159—163։

[3] Տե՛ս Krumbacher, Geschichte der byzantinischen Literatur, էջ 911—912։

սկին[1], Արևելյան Հռոմեական կայսրությունը, որի մայրաքաղաքը և տնտեսական ու մտավոր կենտրոնն էր Բյուզանդիոնը կամ Կոստանդնուպոլիսը, չորրորդ դարի վերջերից սկսած անվանում են Բյուզանդական կայսրություն և Արկադիոսի գահակալության 395 թվականը սկիզբն են համարում բյուզանդական պատմության[2]:

Չորրորդ դարի վերջերում և հինգերորդ դարի սկզբներում խաղաղությունն աշխատում էր պահպանել արևելյան իր սահմաններում նույնպես և Հռոմեական Արևելյան կայսրությունը: Սա ևս գրեթե ամբողջովին զբաղված էր իր ներքին, գլխավորապես, կրոնական գործերով: Բայց կրոնական քաղաքականությունը Թեոդոսիոս Ա-ի և Արկադիոսի նման չէր Հազկերտ Ա-ի հանդուրժամիտ քաղաքականության: Թեոդոսիոս Ա-ը պետական պարտադիր կրոն հայտարարեց Նիկիական տիեզերական ժողովի դավանանքը ու անհաշտ կռիվ մղեց հերձվածների և հեթանոսության դեմ, որոնք արգելվեցին և ենթարկվեցին կատաղի հալածանքների: Կրոնական անհամբերատարությունը և մոլեռանդությունը դառան այնուհետև բնորոշ առանձնահատկությունները բյուզանդական եկեղեցու:

Մոտավորապես 414 թվին վախճանվեց Վռամշապուհ թագավորը, որի անվան հետ անջնջելի կերպով կապված են հայ գրերի գյուտը և կուլտուրական մեծ հեղաշրջումը հայկական կյանքում:

Նրա Արտաշես որդին դեռևս փոքր էր, ուստի և նախարարները խնդրեցին Հազկերտ Ա-ին, որ նա կրկին թագավոր կարգե Պարսկական Հայաստանի ծերունի Խոսրով Դ-ին, որը թագավորել էր Վռամշապուհից առաջ: Հազկերտ Ա-ը կատարեց նրանց խնդիրքը, բայց Խոսրով Դ-ը թագավորեց միայն ութ ամիս և մոտավորապես 415 թվին վախճանվեց:

Հազկերտ Ա-ի նպաստավոր ու բարեհաճ քաղաքականությունը քրիստոնեության և, մասնավորապես, Պարսկական Հայաստանի վերաբերմամբ փոփոխություն կրեց նրա թագավորության վերջին տարիներում: Խոսրով Դ-ի մահից հետո Հազկերտ Ա-ը Հայաստանի գահն այլևս չուզեց թողնել Հայ Արշակունիների ձեռքում և Խոսրով Դ-ի հաջորդ նշանակեց իր Շապուհ որդուն (շուրջ 416—420 թ.):

---

[1] *Ю. Кулаковский*, История Византии, т. I, второе издание, Киев 1913, էջ 155 ևն.:

[2] Այս պերիոդիզացիան, ինարկե, պայմանական է և բոլորովին կամայական: Վիճելի այս խնդիրը, որ Հայաստանի պատմության հետ կապ չունի, կարոտ է հատուկ ուսումնասիրության:

Հազկերտ Ա-ը, որ իրազեկ էր, անշուշտ, Պարսկական Հայաստանի ներքին դրության՝ հայ գրության տարածման և քրիստոնեության արմատացման ընդդեմ իրանական կրոնի, ըստ երևույթին, աշխատել էր, հենվելով պարսկական կուսակցության վրա, չեզոքացնել Պարսկաստանի թշնամի տարրերը և մեղմ ու աստիճանաբար ուժեղացնել Հայաստանում իրանական կուլտուրան և պարսկական պետականության կարգերը:

Հազկերտ Ա-ի թաքուն նպատակը պարզաբանված է միանգամայն ճիշտ Ղազար Փարպեցու ընդարձակ մի վկայության մեջ, որը կարևոր եմ համարում մեջ բերել ամբողջությամբ:

«Պարսից թագավոր Վռամի մահից հետո,—պատմում է Փարպեցին,—Պարսից աշխարհում թագավորեց Վռամի եղբայր Հազկերտը, որը Շապուհի որդին էր: Եվ Հազկերտը, չկամենալով Հայոց աշխարհին թագավոր տալ Արշակունիների տոհմից՝ հայերի վրա թագավոր կարգեց իր որդուն, որի անունն էր ըստ իր հոր անվան Շապուհ: Իր մտքում նա չար խորհուրդ էր խորհում՝ նախ այն, որ Հայոց աշխարհը մեծ է և օգտակար, սահմանակից է և հարևան Հունաց իշխանության, որի ձեռքի տակ են և որին հնազանդ են Արշակունիների տոհմից շատերը. գուցե այդ տոհմերը, որ մեր ու Հունաց իշխանության տակ են, սեր ու կարեկցություն զգալով դեպի միմյանց որպես եղբայրներ, երբևիցե համերաշխ կերպով իրար հետ խոսքերը մեկ անեն և, համաձայնության գալով՝ Հունաց թագավորի հետ խաղաղություն անեն և, կամենալով նրան հնազանդվել՝ մեզ դեմ ապստամբվեն: Եվ ինչպես որ շատ անգամ մեզ գլխացավանք են պատճառել՝ ավելի ևս անհանգիստ կանեն մեզ պատերազմով, միանալով նրանց հետ: Բացի այդ, նրանք անբարեհաճ են և ատելությամբ լցված են դեպի մեր կրոնը, իսկ հույների հետ ընդհանուր հավատ ունեն և պաշտամունք: Արդ՝ եթե մեր ազգից մեկը թագավոր լինի Հայոց աշխարհում՝ մեր թագավորությունը բոլոր այդ տեսակ կասկածանքներից ապահով կլինի, և նրանք միշտ կծառայեն մեզ ահով ու դողով և չեն ունենա դեպի մեզ թշնամական ու վնասակար որևէ դիտավորություններ: Եվ հնարավոր է, որ նրանք հետզհետե կընտելանան և կդառնան մեր կրոնին շնորհիվ մշտական իրար հետ խոսակցությունների, ամենօրյա բարեկամության, որսերի զվարճությունների և խաղերի, որ կլինեն իրար հետ: Նաև ազգականություն հաստատելով իրար հետ երկ-

կողմանի ամուսնություններով՝ նրանք այնուհետև կանչատվեն և կհրաժարվեն հույների կրոնից ու բարեկամությունից»:

[«Եւ յետ մահուան Վռամայ արքային Պարսից թագաւորէր Յազկերտ եղբայր Վռամայ որդի Շապհոյ ի վերայ աշխարհին Պարսից: Եւ ոչ կամեցեալ Յազկերտի թագաւորեցուցանել ի վերայ աշխարհիս Հայոց յազգէն Արշակունեաց՝ թագաւորեցուցանէր ի վերայ սոցա զիւր զորդին, որում անուն էր Շապուհ, ըստ անուան հօր իւրոյ. խորհեալ չարաչար իմացմունս անձին ի միտս իւր. առաջին՝ զայս, եթէ աշխարհն Հայոց մեծ է և օգտակար, սահմանակից և դրակից է Յունաց իշխանութեանն, ընդ որոյ ձեռամբ բազումք են հնազանդեալք յազգէն Արշակունեաց. որոց գուցէ գորովեալ առ միմեանս ազգացն, ըստ օրինի եղբարց, որք ընդ մերով և ընդ Յունաց իշխանութեամբն են, և հաւանեալ երբէք սիրով ընդ միմեանս և եկեալք ի միաբանութիւն՝ խօսեսցին ի խաղաղութիւն ընդ թագաւորին Յունաց, և ընդ նորա հնազանդութեամբ յօժարեալք՝ ապստամբեսցին ի մէնջ: Եւ որպէս կարեալ է զմեզ բազում անգամ յաշխատութեան՝ առաւել ևս յաւելուածով նոցա՝ անհանգիստ առնիցեն զմեզ պատերազմաւ: Եւ երկրորդ՝ զի յօրինացս մեր օտար են և ատեցողք, և միահաւան ունին զպաշտօն նոցա և զօրէնս: Արդ՝ ի թագաւորել յազգէս մերմէ ի վերայ աշխարհին Հայոց՝ յամենայն այդպիսի կասկածանաց անհոգացեալ լինի թագաւորութիւնս մեր. և նոքա ցանկ երկիւղիւ և զգուշութեամբ ծառայեն մեզ և օտարոտիս ինչ և վնասակարս ինչ ոչ խորհին: Է զի և սովորութիւն առնուն յանկչել յօրէնս մեր, հանապազ խօսիւք ընդ միմեանս և ընդելական բարեկամութեամբ, ի զբօսմունս որսոց և ի խաղս, որ լինին ի միջի նոցա. այլ և ամուսնութեանց տուրևառիւք հաղորդեալք առ միմեանս՝ զատուցեալք այնուհետև որոշին ի սիրոյ նոցա ի յօրինացն»][1]:

Պարսկաստանի այս փորձն ապարդյուն անցավ, որովհետև 420 թվին սպանվեցին թե Յազկերտ Ա-ը և թե Շապուհը, որը Հայաստանից Տիզբոն էր գնացել իր հոր գահը ժառանգելու:

Հազկերտ Ա-ն իր թագավորության վերջին տարիներում Պարսկաստանի քրիստոնյաների դեմ հարուցեց հալածանքներ, որոնց

[1] Փարպեցի, I, գլ. ԺԲ, էջ 18—19:

առիթ տվողը հենց իրենք՝ քրիստոնյա հոգևորականներն էին: Շոշատանի Հորմիզդ-Արտաշիր քաղաքում Հաշու անունով մի քահանա Աբդավ եպիսկոպոսի համաձայնությամբ քանդել ու ավերել էր եկեղեցու մոտ գտնվող կրակատուն-տաճարը: Հալածանքների պատճառը մոլեռանդական այդ ծանր հանցանքն էր:

Քրիստոնյաներից ոմանք փախան Բյուզանդական կայսրության երկրամասերը, և Պարսկաստանը պատգամավորություն ուղարկեց Թեոդոսիոս Բ կայսրի մոտ և պահանջեց, որ փախստականները ետ ուղարկվեն: Այս պահանջը մերժելուց հետո՝ բյուզանդական կայսրը թույլ տվեց (420 թվի մայիսի 5-ի օրենքով), որ Մերձավոր Արևելքի երկրներն ասպատակություններից ու հարձակումներից պաշտպանվելու համար կառուցեն պարսպապատված ամրություններ:

420 թվի վերջերին Հազկերտ Ա-ին հաջորդեց նրա որդին՝ Վռամ Ե Գուրը (420—438/9 թ.), և հալածանքները Պարսկաստանում քրիստոնյաների դեմ ավելի ևս սաստկացան: 421 թվի գարնանը Վռամ Գուրի զորավար Միհր-Ներսեհը պատերազմ սկսեց կայսրության դեմ: Հարաբերությունները Սասանյան Պարսկաստանի և Բյուզանդական կայսրության միջև չափազանց սրված էին, ինչպես ենթադրում է Նյոլդեկեն, հավանորեն Պարսից մեծամեծների դրդումով, քրիստոնյաների հալածանքներն ավելի շուտ պատերազմի առիթ էին, քան պատճառ:

Պատերազմի գլխավոր բեմը դառավ նախկին հայկական Աղձնիքը և հյուսիսային Միջագետքը: Բյուզանդական զորքերն Արդաբուրիոս զորավարի առաջնորդությամբ ներխուժեցին Աղձնիք, և այստեղ 421 թվի օգոստոս կամ սեպտեմբեր ամսին տեղի ունեցավ մեծ ճակատամարտ: Պարսկական զորքերը այս ճակատամարտում ծանր պարտություն կրեցին, և Միհր-Ներսեհը ստիպված եղավ նահանջել Մծբին քաղաքի կողմերը[1]: Արդաբուրիոսն այնուհետև պաշարեց Մծբինը, սակայն պաշարումը շուտով վերացրեց, որովհետև Մծբինին մեծ զորքով օգնության հասավ ինքը՝ Վռամ Ե Գուրը:

Պատերազմը շարունակվեց նաև 422 թվին, և բյուզանդական զորքերը դարձյալ մի քանի հաջողություններ ունեցան, բայց դրանք վճռական հաղթություններ չէին, և շուտով Թեոդոսիոս Բ-ը խաղաղության բանակցություններ սկսեց: Վռամ Ե-ը, որը նույնպես ցանկանում էր հաշտություն կնքել, ուզեց նախապես որևէ հաջողու-

[1] Տե՛ս Socrates, Hist. Eccles., VII, cap. 18 (համեմատե՛ նաև «Սոկրատայ Սքոլաստիկոսի, Եկեղեցական պատմութիւն», հրատ. Մ. Տեր-Մովսեսյանի, Վաղարշապատ, 1897, էջ 602—609). Theodoretos, Hist. Eccl., V, cap. 37 և ուրիշն.:

թյուն ունենալ, ուստի և, բյուզանդական պատգամավորությունն իր մոտ պահելով՝ կարգադրեց իր անմահների զորամասին, որ բյուզանդական զորքին դարան գործեն։

Բյուզանդացիները, ինչպես վկայում է Սոկրատը[1], հանկարծակիի բերվեցին, սակայն պատահաբար հենց այդ ժամանակ մոտենում էր պարսիկների թիկունքից մի նոր զորամաս Պրոկոպիոս զորավարի առաջնորդությամբ։ Պարսից զորքն այս անգամ ևս պարտության մատնվեց, և Վռամ Ե-ը ստիպված եղավ խաղաղության դաշն կնքել։ Համաձայն այդ դաշնագրի, որը կնքվեց Թեոդոսիոս Բ-ի իշխանության տասնչորսերորդ տարում և երեքհարյուրերորդ Օլիմպիադում (=422 թ.) Պարսկաստանում քրիստոնյաներին կրոնական ազատություն տրվեց, իսկ կայսրությունը պարտավորվեց, ինչպես որոշված էր և նախկին դաշնագրերում, տալ յուրաքանչյուր տարի որոշ գումար Կովկասյան մեծ լեռնանցքի ամրացման ու պաշտպանման համար։ Բայց պետք է ասել, որ դաշնագրի այդ երկու կետն էլ հետագայում շարունակ խախտվում էին և պատճառ էին դառնում դժգոհությունների։

Շապուհ թագավորի Հայաստանից հեռանալուց հետո, ինչպես վկայում է Խորենացին[2], Պարսկական Հայաստանը երեք տարի (հավանորեն, 420—423 թվականներին) մնաց անտերունչ վիճակում։ Այս վկայությունը, իմ կարծիքով, կարելի է համարել հավաստի և արժանահավատ։ Այդ երեքամյա անտերնչության ժամանակ, ինչպես ասացինք, հավանական է ենթադրել Մեսրոպ Մաշտոցի ուղևորությունը Կոստանդնուպոլիս Թեոդոսիոս Բ-ի մոտ։

421—422 թվականների անհաջող պատերազմը Բյուզանդիայի դեմ հարկադրեց Վռամ Ե Գոռին զիջումներ անել Պարսկական Հայաստանում, որը սահմանակից էր հաղթական կայսրության։ Սակայն այս զիջումները ո՛չ անկեղծ էին այժմ, ո՛չ էլ հարատև։ Պատերազմի ընթացքում Պարսկաստանը հասկացել էր արդեն, որ արևմտյան իր սահմանների պաշտպանությունը թույլ է ու անբավարար։ Ուշագրավ է, որ 421 թվին պարտություն էր կրել այստեղ հենց այն Միհր-Ներսեհը, որը Վարդանանց 450—451 թ. ապստամբության ժամանակ գլխավոր խորհրդատուն էր Հազկերտ Բ-ի (438/9—457)[3]։

---

1 Տե՛ս Socrates, Hist. Eccles., VII, cap. 20.

2 Խորենացի, III, գլ. ԾԶ։

3 Ուշադրության արժանի է այս տեսակետից Միհր-Ներսեհի մասին Փարպեցու հետևյալ վկայությունը. «Էր Յազկերտի արքայի հազարապետ մի Միհրներսեհ անուն, այր չարահնար և դժնամիտ որոյ արկեալ ի միտս

423 թվին Վռամ Ե-ը, որը հայերի նկատմամբ սկզբում հարկադրված էր վարել զուսպ ու զգուշավոր քաղաքականություն՝ հայ նախարարների խնդրքով Պարսկական Հայաստանի թագավոր նշանակեց Վռամշապուհի որդուն՝ Արտաշեսին։ Բայց միաժամանակ աջակցելով ու պաշտպանելով պարսկասեր նախարարներին, որոնք կողմնակից էին սերտ մերձեցման Պարսկաստանի հետ՝ աշխատեց սերմանել երկրում գժտություն ու թշնամություն։

Արտաշես թագավորը (423—428 թ.), որը դեռևս անփորձ պատանի էր, շուտով զոհ դառավ նենգ դավադրությունների։ Երիտասարդ թագավորի դեմ խարդավանքների առիթ ծառայեց այն, որ նա ցոփ ու անառակ կյանք էր վարում։ Նախարարները հայտնեցին Սահակ կաթողիկոսին, որ իրենք չեն կարող տանել թագավորի անօրեն ու պիղծ գործերը, և առաջարկեցին իրենց հետ Պարսից թագավորին դիմել և խնդրել, որ Արտաշեսը գահընկեց արվի։

Սահակ կաթողիկոսը, պատմում է Փարպեցին, տեսնելով, որ Արտաշեսի գահընկեցությամբ վտանգվելու է Հայոց թագավորության գոյությունը՝ ամեն կերպ աշխատեց համոզել նրանց, որ ետ կենան իրենց այդ մտադրությունից։ Բայց նրա բոլոր հորդորները զուր եղան։

Նախարարները սպառնալով, որ նրան այլևս կաթողիկոս չեն ճանաչելու՝ գնացին Վռամ Ե-ի մոտ և, ամբաստանելով Արտաշես թագավորին՝ խնդրեցին որ նա գահազուրկ արվի։ Պարսից թագավորը կանչեց իր մոտ Արտաշես թագավորին ու Սահակ կաթողիկոսին և առաջինին զրկեց թագավորական իշխանությունից, իսկ երկրորդին՝ կաթողիկոսությունից։ Հանդիսավոր նրանց դատապարտումը բազմամարդ ատյանում, որ ընդարձակ կերպով նկարագրված է Փարպեցու մոտ, ավելորդ չեմ համարում թարգմանաբար մեջ բերել։

«Թագավորը [Վռամ Ե-ը] գրգռված ու սաստիկ զայրացած,—պատմում է Փարպեցին,—հրաման տվեց այնուհետև, որ նախարարներին և Արտաշեսին հարցաքննեն բազմամարդ ատյանի առջև։ Եվ Հայոց իշխաններն իրենց թագավորի վրա բարդեցին շատ աղտեղաբանություններ ու զանազան անարժան բամբասանքներ։ Նրանք ո՛չ թե այն էին պատմում, որ նա էր արել՝ այլ թշնամաբար նրա վրա բարդում էին շատ մեղադրանքներ ուրիշ ևս ավելացումներով. և թեպետ Արտաշեսը հերքում էր, թե այդպես չէ՝ լսողները նրան չհավատա-

---

ի շատ ամաց զխորհուրդս անօրէնութեան, ի կործանում և ի կորուստ թուլամիտ ոգւոց (II, գլ. Ի, էջ 39)։

ցին, որովհետև նպատակ էին դրել իրենց՝ Արշակունիների ազգի թագավորությունը մեջտեղից վերացնել: Մանավանդ երբ Արյաց թագավորն արքունիքի բոլոր ավագանու հետ միասին Արտաշեսին մեղադրողներից լսեցին՝ թե «Իսկի էլ այլևս թագավոր պետք չէ, այլ ժամանակ առ ժամանակ պարսիկ որևէ իշխան կգա և մեզ վերակացու կլինի. մեզանից ամեն մեկին նա իրազեկ կդառնա և ձեզ կզեկուցե»:

Եվ երբ Վռամն իր արքունիքի ավագանու հետ այս լսեց՝ շատ ուրախացավ: Եվ նա իսկույն այնուհետև հրաման ավեց թագավորությունն Արտաշեսից վերցնել ու նաև հարքունիս գրավել սուրբ Սահակի կաթողիկոսական գույքը, որովհետև նա չէր համաձայնել վկայություն տալ հայ նախարարների հետ միասին: Երբ այսպես դատը վերջացավ՝ Պարսից թագավորի հրամանն ի կատար ածվեց: Դրանից հետո թագավորությունըն Արշակունիների ազգից առնվեց Արտաշեսի իշխանության վեցերորդ տարում, համաձայն աստուծու երանելի մարդու Ներսես մեծ քահանայապետի ասածի. և Հայոց աշխարհն ընկավ Պարսից անօրեն իշխանության ծառայության լծի տակ: Հայոց իշխանները ստացան Պարսից թագավորից Արտաշեսի մատնության համար իրենց վարձը՝ պատիվներ ու մեծարանքներ, նման այն արծաթին, որ ստացել էին եղբայրները Հովսեփի համար, որին մատնել էին իսմայելացի վաճառականների ձեռքը. և նրանք այսպիսով հրաժեշտ տալուց հետո արքունիքին՝ եկան իրենց աշխարհը»:

[«Ի ցասումն զայրացման գրգռեալ թագաւորն՝ հրաման տայ այնուհետև յանդիման բազմամբոխ ատենին հարցանել զնախարարսն Հայոց և զԱրտաշես: Եւ կոչեալ իշխանացն Հայոց բազում աղտեղաբանութիւնս և ազգի ազգի խօսս անարժանութեան ի վերա թագաւորին իւրեանց. քանզի ոչ եթէ ի նմա եղեալ զիրսն խօսէին, այլ ևս յաւելուածովք ըստ օրինի թշնամութեան կուտէին ի վերայ նորա բազում վնաս. որ թէպէտ և յուրաստ եղեալ Արտաշեսի, թէ չէ այդպէս՝ ոչ հաւատացին լսողքն, եղեալ զկամս իւրեանց՝ բառնալ ի միջոյ զթագաւորութիւնն յԱրշակունեաց ազգէն: Մանաւանդ զի լուաւ թագաւորն Արեաց ամենայն աւագանեօք դրանն ի դատախազացն Արտաշեսի, թէ բնաւ զի՞ իսկ ևս պիտոյ է թագաւոր, այլ իշխան պարսիկ ըստ ժամանակի եկեալ վերակացու լիցի մեզ, որ և զիւրաքանչիւր ուրուք ի մէնջ ծանուցեալ զհպատակութիւն և զանհպատակութիւն՝ ցուցցէ ձեզ:

Եւ լուեալ զայս Վռամայ հանդերձ աւագանեաւ դրանն՝ յոյժ ուրախանայր. և այնուհետև հրաման տայր վաղվաղակի ի բաց առնուլ զթագաւորութիւնն յԱրտաշեսէ. ընդ նմին և զտունն կաթողիկոսական ի սրբոյն Սահակայ՝ յարքունիս առնել, փոխանակ զի ոչ միաբանեցաւ տալ վկայութիւն ընդ նախարարսն Հայոց: Եւ այսպէս վճարեալ՝ հրաման Պարսից թագաւորին ի գլուխ ելանէր: Յայնմհետէ բարձաւ թագաւորութիւն յազգէն Արշակունեաց ի վեցերորդ ամի Արտաշեսի, ըստ բանի երանելւոյ առն Աստուծոյ մեծի քահանայապետին Ներսէսի, և անկաւ աշխարհս Հայոց ընդ լծով ծառայութեան անօրէն իշխանութեան Պարսից: Եւ առեալ գինս իշխանացն Հայոց ի թագաւորէն Պարսից, ընդ մատնութեանն Արտաշեսի, պատիւս և մեծութիւնս, նման արծաթոյն զոր առին ընդ Յովսեփայ եղբարքն, ըստ մատնութեանն իսմայէլացի վաճառականացն, և այսպէս հրաժարեալք ի դրանէ՝ եկին յաշխարհն իւրեանց»][1]:

Ինչպես պարզ երևում է Ղազար Փարպեցու այս վկայությունից, հայ նախարարներն իրենք էին հոժարակամ ցանկացել ենթարկվել Սասանյան Պարսկաստանի անմիջական իշխանության և իրենք էին դիմել Պարսից թագավորին ու խնդրել վերջին Հայ Արշակունի թագավորի՝ Արտաշեսի գահընկեցությունը: Արշակունյաց թագավորների իշխանության վերացումը, ինչպես մատնանշված է իմ «Ֆեոդալիզմը Հին Հայաստանում» աշխատության մեջ[2], բնավ չէր շոշափում նրանց իրավունքներն ու արտոնությունները: Կարելի է վստահորեն ենթադրել, որ 428 թվից հետո Պարսկական Հայաստանի ներքին կազմակերպության մեջ գրեթե փոփոխություններ չեղան:

Հայագիտական նորագույն երկերում ենթադրվել է հաճախ, ինչպես, օրինակ, Գյուտերբոկի «Բիզանդիոն և Պարսկաստան» աշխատության մեջ[3], որ 428 թվից հետո Պարսկական Հայաստանը կորցրել էր իր ինքնավարության մնացորդները և միացվել Սասանյան Պարսկաստանին իբրև պարսկական մի նահանգ:

Այս պնդումը ճիշտ չէ: Արշակունի Արտաշեսի անկումից հետո, ինչպես վկայում է Եղիշեն՝ «ի նախարարսն Հայոց անկանէր թագաւորութիւնն»:

«Երբ Արշակունիների ցեղը վերացավ,—պատմում է Եղիշեն,—Հայոց աշխարհին տիրեց պարսիկ Սասանի ցեղը, որ իր իշխանությունը վարում էր մոգերի կրոնի համաձայն և

[1] Փարպեցի, I գլ. ԺԴ, էջ 24—25:

[2] Երևան, 1934, էջ 281—282:

[3] Թարգմ. Հ. Համբարյանի, Վիեննա, 1911, էջ 99:

շատ անգամ կռիվ էր մղում նրանց հետ, ովքեր չէին ընդունում նույն կրոնը. սկսելով Տիրանի որդի Արշակ թագավորի օրերից՝ կռվում էր մինչև Վռամշապուհի որդի Հայոց Արտաշես արքայի վեցերորդ տարին։ Եվ երբ սրան էլ զրկեց թագավորությունից՝ թագավորությունն անցավ Հայոց նախարարներին. որովհետև թեպետև հարկը Պարսից արքունիքն էր գնում, սակայն Հայոց հեծելազորն ամբողջապես նախարարներն էին առաջնորդում պատերազմի ժամանակ»[1]։

[«Քանզի ի բառնալ ազգին Արշակունեաց, տիրեցին աշխարհիս Հայոց ազգն Սասանայ Պարսկի, որ վարէր զիւր իշխանութիւնն օրինօք մոգաց. և բազում անգամ մարտնչէր ընդ այնոսիկ, որ ոչ ընդ նովին օրինօք մտանէին. սկիզբն արարեալ յամացն Արշակայ արքայի որդւոյն Տիրանայ, և կռուէր մինչև յամն վեցերորդ Արտաշիսի արքայի Հայոց, որդւոյն Սռահրաշապհոյ։ Եւ իբրև զնա ևս մերժեաց ի թագաւորութենէն, ի նախարարսն Հայոց անկանէր թագաւորութիւնն, զի թէպէտ և գանձն յարքունիս Պարսից երթայր, սակայն այրուձին Հայոց բովանդակ ի ձեռն նախարարացն առաջնորդէր ի պատերազմի»][2]։

Որ Արշակունյաց վերջին թագավորի գահընկեցությունից հետո հայ նախարարները պահպանել էին անփոփոխ իրենց տիրական ու անգամ «գործակալական» իշխանության գրեթե բոլոր իրավունքները՝ այդ երևում է ո՛չ միայն Եղիշեի, այլ նաև մատենագրական ուրիշ վկայություններից։ Հայտնի է, որ Մամիկոնյանները մնում էին դարձյալ իբրև Պարսկական Հայաստանի սպարապետներ, Վահան Ամատունուն հանձնված է եղել «հազարապետութեան գործակալութիւն»-ը, իսկ դատավարության իշխանությունը, ըստ երևույթին, մնացել էր բարձր հոգևորականության ձեռին։

Ուշադրության արժանի է նույնպես, որ Շահապիվանի 443 թվի ժողովի կանոնադրության մեջ հիշատակված են դարձյալ հետևյալ «գործակալութիւն»-ները՝

«Վասակայ Սիւնւոյ մարզպանութիւն Հայոց, Վահանայ Ամատունւոյ հազարապետութիւն և Վրվայ Խոռխոռունւոյ մաղխազութիւն»[3]։

---

[1] Տե՛ս «Եղիշեի Վարդանանց պատմությունը», թարգմ. Ե. Տեր-Մինասյանի, Երևան, 1946, էջ 101։

[2] Եղիշե, Վենետիկ, 1864, էջ 11։

[3] Տե՛ս «Կանոնագիրք Հայոց», հրատ. Ա. Ղլտճյանի, էջ 59։

Հենց ինքնին այն փաստը, որ Շահապիվանի ժողովում, նախարարների և մանր ազնվականության մասնակցությամբ, սահմանվել էին պարտադիր կանոններ, որոնք վերաբերում էին բացի հոգևորականներից նաև հանցապարտ աշխարհականներին՝ մի ապացույց է Եղիշեի վերոհիշյալ վկայության ճշտության։

Այս բոլորը, ուրեմն, պարզ ցուցումներ են, որ 428 թվից հետո Պարսկական Հայաստանի նախարարական ինքնավար կազմակերպության մեջ զգալի փոփոխություններ չէին եղել։

Եթե Սահակ կաթողիկոսը համառ կերպով հակառակում էր նախարարներին և դեմ էր Արտաշեսի գահընկեցության՝ այդ, ըստ երևույթին, բացատրվում է նրանով, որ նա ու նաև հայ ժողովրդի լուսավորյալ մասը դեռևս հույս ունեին, որ հայերին կարող էր հաջողվել ապագայում վերականգնել իրենց համազգային պետությունը և նախկին անկախությունը։

Արտաշես թագավորին գահից զրկելուց հետո՝ Վռամ Ե Գոռը Հայաստանի բարձրագույն կառավարիչ նշանակեց պարսիկ Վեհ-Միհրշապուհ մարզպանին և Արևելյան Հայաստանը դառավ Սասանյան Պարսկաստանի մարզերից մեկը (428)։ Հայ նախարարների ակնկալությունները վերջ ի վերջո սխալ դուրս եկան։ Հայ Արշակունի թագավորության վերացումից հետո, ինչպես պետք էր սպասել, Սասանյան Պարսկաստանը աշխատեց վերացնել նաև հայ նախարարությունների իրավական արտոնությունները։

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՀԻՆԳԵՐՈՐԴ

ԱՐՇԱԿՈՒՆՅԱՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՏՐԴԱՏ Գ-Ի ԵՎ ՆՐԱ ՀԱՋՈՐԴՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ՄԻՆՉԵՎ 363 ԹԻՎԸ

Արշակունյաց թագավորության սահմանները 298 թվից հետո:— Հարավ-արևելյան սահմանները Ուրմիա լճի կողմերում:— Փավստոսի վկայությունները «Գանձակ Ատրպատականի»-ի մասին:— Արշակունիների Երկրամասն Ատրպատականում:— Փավստոսի վկայությունների սխալ մեկնությունը նորագույն երկերում:— Արշակունյաց Հայաստանի սահմանն էր Ուրմիա լճի արևելակողմում Paresaca կայարանի շրջանը:— Ուրմիա լճի հարավ-արևմտակողմում Արշակունյաց Հայաստանի սահմաններն էին Ձինթա ամրոցի և Զարասպ լեռան շրջանները:— Ձինթա ամրոցի տեղադրության խնդիրը.— Ադոնցի ենթադրությունը:— Ձինթան, հավանորեն, այժմյան Ձիրան է:— Նոր-Շիրական սահմանակալ իշխանության կամ բդեշխության տեղադրությունը:—Նոր-Շիրականի մասին ընդհանրացած սխալ կարծիքները:— «Շիրհանական երկիրը» և «Շիրագանները»:—Նոր-Շիրականը կապ չունի Նոտ-Արտաշիրականի հետ:— «Շիգոոյ» գավառի հիշատակությունը Ղևոնդ պատմիչի մոտ:—Արշակունյաց Հայաստանի մյուս բդեշխությունները հարավում:— Սահմանակալ երկրորդ իշխանությունը կամ բդեշխությունը հարավում:— Մարկվարտի սխալ կարծիքն այս բդեշխության մասին:— Սահմանակալ իշխանությունը «յԱսորեստանեաց կողմանէն» Կորդվաց բդեշխությունն էր:— Երրորդ սահմանակալ իշխանը «յԱրուաստան կողմանէն» Աղձնյաց բդեշխն էր:— Ծայրագավառներ Դասնը, Տմորիքը և Կորդիքը:— Արշակունյաց Հայաստանի սահմանը Կորդուքի. Աղձնիքի և Մեծ Ծոփքի կողմերում:— Արշակունյաց Հայաստանի արևմտյան սահմանները:— Նրա ծայրագավառները Ծովք լճի հարավակողմից մինչև Դատեյրա-Դոստալ:—Դարանաղի, Եկեղիք, Դերջան և Սպեր:— Արշակունյաց Հայաստանի սահմանները Ճորոխ և Կուր գետերի վերին հոսանքի կողմերում:— Գուգարաց սահմանակալ իշխանության գավառները:— Ծոբափոր, Կողբափոր և Ձորոփոր գավառների տեղադրությունը:— Հնարակերտ քաղաքը:—Արշակունյաց թագավորության սահմանները Հնարակերտ քաղաքից դեպի արևելք:— Սահմանագլուխ գավառներ Կողբը, Գարդմանաձորը, Շակաշենը և Ուտի-Առանձնակը:— Ծայրագավառները Ուտի—Առանձնակի արևելակողմում:— Կասպից աշխարհը և Փայտակարան քաղաքը:— Արշակունյաց թագավորության մեջ էին գտնվում Մարանդ գավառը և նրա հյուսիսակողմում ու հյուսիս-արևմտակողմում գտնվող շրջանները մինչև Կասպից ծովը:— Արշակունյաց Հայաստանը իր ընդարձակ սահմաններում գրեթե համապատասխանում էր Արտաշեսյան Հայաստանին:

Պատմական Հայաստանի սահմանները նույնը չեն եղել զանազան դարաշրջաններում և հաճախ ենթարկվել են զգալի փոփոխությունների: Մենք վերև տեսանք, որ Արշակունյաց Հայաստանը վերահաստատվել էր իր ընդարձակ հին սահմաններում Դիոկլետիանոս կայսեր ժամանակ, որի զորավար Գալերիոս Մաքսիմիանոսը 297 թվին հայերի օգնությամբ ծանր պարտության էր մատնել Պարսից թագավոր Ներսեհին: Այս պարտությունից հետո Ներսեհը հարկադրված եղավ զիջել Հռոմեական կայսրությանը Հայաստանի հարավային շրջանները՝ Ծոփքը, Անգեղտունը, Աղձնիքը, Կորդուքը, Մոկքը, Ծավդեքը և Ռեհիմենան, իսկ իբրև Հայաստանի սահման Ատրպատական-Մարաստանի կողմից, համաձայն 298 թվի դաշնադրության, որոշվեց Ձինթա ամրոցը[1]:

Արշակունյաց Հայաստանի սահմանները 298 թվից հետո՝ բազմիցս քննության են ենթարկվել Հյուբշմանի, Ադոնցի և Մարկվարտի աշխատություններում, բայց մինչև վերջին ժամանակները հաստատուն կերպով որոշված չէին և համարվում էին վիճելի:

Այդ սահմաններից, հատկապես, հարավ-արևելյանը, որը գտնվում էր Ուրմիա լճի արևելակողմում և հարավ-արևմտակողմում, մանրամասն լուսաբանված է նաև աշխարհագրական իմ աշխատություններում (տե՛ս «Հայաստանի գլխավոր ճանապարհները ըստ Պևտինգերյան քարտեզի», Երևան, 1936 թ., էջ 165—171, նաև «Պատմական-աշխարհագրական մանր հետազոտություններ», Երևան, 1945 թ., էջ 15—45): Մեր եզրակացությունները անհրաժեշտ ենք համարում համախմբել այստեղ ամփոփ բովանդակությամբ, ավելացնելով նաև մեր նոր դիտողություններն Արշակունյաց թագավորության նույն ժամանակաշրջանի հարավային, արևմտյան և հյուսիսային սահմանների մասին:

Ինչպես հայտնի է, աշխարհագրական բոլոր նորագույն երկերում Արշակունյաց Հայաստանի ու Պարսկաստանի չորրորդ դարի սահմանը ենթադրվում է Ատրպատականի Գանձակ քաղաքի մոտ[2]: Այս խնդիրն այնքան հետաքրքիր է ու կարևոր Հայաստանի պատմական աշխարհագրության համար, որ մենք անհրաժեշտ ենք համարում մեջ բերել Փավստոսի բոլոր համապատասխան վկայությունները, որոնք հիմք են ծառայել այդ ենթադրության:

---

[1] Տե՛ս *Petrus Patricius*, fragm. 14 (Dindorf, Historici graeci minores, I).

[2] Տե՛ս *Markwart*, Eranschahr, Berlin, 1901, էջ 109, Հյուբշման, Հին Հայոց տեղվոյ անունները, թարգմ. Պիլեզիկճյանի, էջ 90—91. *Адонц*, Армения в эпоху Юстиниана, էջ 226 և ուրիշ.:

1. Փավստոս, III, գլ. Է՝

«Եվ նրանք՝ Թափառական ցեղերը եկան, լցվեցին և ծածկեցին Հայոց ամբողջ երկիրը. քանդեցին, գերեցին և բոլորովին ավերեցին. ցրվեցին, տարածվեցին բոլոր սահմաններում ծայրե ի ծայր ծավալվեցին մինչև Սատաղ փոքրիկ քաղաքը և մինչև Գանձակ Ատրպատականի սահմանները»:

[«Եւ եկին լցին ծածկեցին զամենայն երկիրն Հայոց. քանդեցին, գերեցին, առ հասարակ աւերեցին. սփռեցան տարածեցան զսահմանօքն, լի և լի ծաւալեցան մինչև ի փոքր քաղաքին Սատաղու և մինչև ի Գանձակ սահմանս Ատրպատական»][1]:

2. Նույնը, IV, գլ. ԻԱ՝

«Իսկ Հայոց Թագավորի [Արշակ Բ-ի] սահմանապահները, որոնք նստած էին Գանձակ Ատրպատականում՝ վաղօրոք այս բանը իմաց տվին Արշակ Թագավորին, դեռ նա [Շապուհ Բ-ը] Ատրպատականի սահմանները չհասած»:

[«Իսկ սահմանապահքն Թագաւորին Հայոց, որ նստէին ի Գանձակ Ատրպատականի, վաղ ազդ առնէին նմա զիրսն մինչև հասեալ էր նա ի սահմանս Ատրպատականի»][2]:

3. Նույնը, V, գլ. Ա՝

«Երբ առաջապահը եկավ հասավ Հայաստանի միջնաշխարհը՝ Մուշեղը սպանեց Պարսից Կարեն և Զիկ զորավարներին և բոլոր զորքերը սրի անցկացրեց ու ոչ որին կենդանի չթողեց: Եվ մինչև բուն սահմանները, Գանձակ Ատրպատականի նրանց երկիրը դուրս քշելով՝ ամբողջը տիրեց»:

[«Իբրև գայր առաջապահն հասանէր ի միջնաշխարհն Հայոց՝ սպանանէր Մուշեղ զզօրագլուխն Պարսից զԿարէնն և Զիկն, և զամենայն զզօրսն արկանէր ի սուր սուսերի իւրոյ, և ոչ մի զոք ապրեցուցանէր: Եւ մինչև ի բուն ի սահմանսն ի Գանձակ Ատրպատականի զերկիրն յիւր վտարեալ՝ բռնացեալ ունէր»][3]:

4. Նույնը, V, գլ. Դ՝

«Այնուհետև Հայոց զորքերը փախչողներին հետապնդեցին և Պարսից զորքերին հալածեցին մինչև Գանձակ Ատրպատական՝ մինչև Հայաստանի սահմանները»:

[«Ապա զհետ լինէին փախստէիցն զօրքն Հայոց, և մինչև ի

[1] Փավստոս, էջ 16:

[2] Նույնը, էջ 141:

[3] Նույնը, էջ 191:

Գանձակ յԱտրպայական ի սահմանս Հայոց հալածէին զզօրսն Պարսից»][1]:

5. Նույնը, V, գլ. Ե՝

«Այն ժամանակ Հունաց ստրատելատը կազմակերպեց զորքերը, որ իր ձեռքի տակ էին, և շարժեց տարավ ու գնաց Գանձակ կողմի Ատրպատական աշխարհից Հայաստանի սահմանները»:

[«Ապա ստրատն Յունաց կազմեաց զօրս իւր, որ ընդ իւրով ձեռամբ էին, և խաղացոյց տանել գնալ ի սահմանս Հայոց ի Գանձակէ կուսէ յԱտրպայական տանէ»][2]:

6. Նույնը, V, գլ. ԼԴ՝

«Եվ խորհուրդ էր անում [Մուշեղը] Հունաց իշխանների հետ և նրանց միջոցով կայսեր հետ, թե նրանց անհրաժեշտ է Հայոց երկրում քաղաքներ շինել յուրաքանչյուր գավառում՝ տեղ-տեղ մի-մի քաղաք և տեղ-տեղ երկ-երկու, ամուր պարիսպներով պատած, և դարձնել իբրև զորանիստ տեղեր ամբողջ Հայոց երկրում՝ մինչև Գանձակ սահմանային երկիրը, որը Պարսից կողմումն է և Հայոց սահմանն է»:

[«Խորհէր եւ ընդ իշխանսն Յունաց, և նոքօք ընդ կայսերն, թէ պարտ է նոցա քաղաք մի շինել յերկրին Հայոց, ի մի մի գաւառսն, որ մին մի քաղաքս, որ երկուս երկուս ամուր պարսպաւորս՝ զօրանիստս հաստատել ընդ ամենայն երկիրն Հայոց, մինչև ի Գանձակ սահման երկիրն, որ Պարսից կուսէ էր, Հայոց սահման էր»][3]:

Մեջ բերված այս վկայությունները հասկանալու համար պետք է նկատի ունենալ, որ բացի «Գանձակ Ատրպատական»-ից, Փավստոսը հիշում է նաև մյուս Ատրպատականը, որը պատկանել է Արշակ Բ-ին: Հյուսիսային այս Ատրպատականը, որի միջով անցնում էր Պևտինգերյան քարտեզի Gobdi—Paresaca ճանապարհագիծը[4], հիշատակված է նրա հետևյալ վկայության մեջ:

Փավստոս, V, գլ. Ը՝

«Ապա, երբ պատերազմը Պարսից կողմից դադարեց և պատերազմական գործողությունները այն կողմից խափանվեցին՝ այնուհետև Հայոց Մուշեղ սպարապետը սկսեց ջարդել նրանց,

[1] Փավստոս, էջ 202:

[2] Նույնը, էջ 205:

[3] Նույնը, էջ 241:

[4] Տե՛ս Հ. Մանանդյան, Հայաստանի գլխավոր ճանապարհները ըստ Պևտինգերյան քարտեզի, Երևան, 1936, էջ 161—172:

ովքեր ապստամբել էին Արշակունիների թագավորության դեմ: Ամենից առաջ ջարդեց Հայոց թագավորի երկրամասը, որը գտնվում էր Ատրպատականում»:

[«Ապա իբրև գազարեաց պատերազմն ի կողմանցն Պարսից, և յապահովեցան իւր ճակատուն յայնմ կողմանէ, և այնուհետև սկսանէր ապարապեան Հայոց Մուշեղ հարկանէր զայնոսիկ՝ որք ապստամբ եղեն ի թագաւորութենէն Արշակունեաց: Նախ հարկանէր զտուն թագաւորին Հայոց, որ յԱտրպայականին էր»][1]:

Ինչպես տեսնում ենք, Փավստոսի մոտ պարզ կերպով հիշատակված են երկու Ատրպատական՝ մեկն իբրև Արշակունյաց Հայաստանի մաս, իսկ մյուսը, Սասանյան Պարսկաստանի: Միանգամայն պարզ է, բացի այդ, որ հարավային Ատրպատականը, որն անհրաժեշտ էր տարբերել հյուսիսային Ատրպատականից, Փավստոսի վկայություններում անվանված է «Գանձակ Ատրպատական»: Այս վերջինը «Գանձակ Ատրպատական» է կոչվել, անշուշտ, Գանձակ քաղաքի անունով, որը եղել է այս երկրի կենտրոնավայրը:

Որ Փավստոսի Պատմության մեջ «Գանձակ»-ը կամ «Գանձակ Ատրպատական»-ը ոչ թե քաղաքի, այլ հարավային Ատրպատականի անունն է՝ այդ պարզ ու որոշ մատնանշված է վերոհիշյալ գրեթե բոլոր վկայություններում: Հատկապես վեցերորդ վկայության մեջ պարզ շեշտված է, որ «Գանձակ սահման երկիրն» «Պարսից կուսէ» էր:

Այդ՝ կարելի՞ է միթե վերոհիշյալ վկայություններից որևէ կերպ հետևցնել, որ Ատրպատականի Գանձակ քաղաքը գտնվել է Արշակունյաց Հայաստանում, ինչպես ենթադրում են Մարկվարտը, Հյուբշմանը, Ադոնցը և ուրիշները:

Ընդհանրացած ու սովորական այս պնդումը, որը հիմնված է վերոհիշյալ երկրորդ վկայության վրա, անշուշտ, ակներև մի թյուրիմացություն է: Այդ երկրորդ վկայության մեջ, ինչպես և Փավստոսի մյուս հատվածներում, «Գանձակ»-ը պարզապես ո՛չ թե քաղաքի անունն է, այլ այն «Գանձակ սահման երկիրն» է, որի մոտ են գտնվել «սահմանապահքն թագաւորին Հայոց»: «Նստէին ի Գանձակ Ատրպատականի» նշանակում է ըստ իս «նստէին ի [սահմանս] Գանձակ Ատրպատականի»: Իսկ սովորական ու ընդունված մեկնությունը, որ իբր թե «Հայոց թագավորի սահմանապահներ

———

[1] Փավստոս, էջ 213:

կնստեին» Գանձակ քաղաքում, ոչ միայն անհավանական է, այլև պարզապես սխալ:

Որ մեր այս մեկնությունն է ճիշտ՝ այդ անուղղակի կերպով հաստատում են հենց միևնույն հեղինակի երկու ուրիշ վկայությունները, որ վերաբերում են Թավրիզ քաղաքին (IV, գլ. ԻԵ, Վենետիկ, 1889, էջ 149 և IV, գլ. ԼԹ, էջ 157): Այդ երկու վկայությունների մեջ պարզ ասված է, որ Թավրիզը գտնվել է Սասանյան Պարսկաստանում:

Ուրեմն՝ ինքնըստինքյան հետևում է նաև այդ վկայություններից, որ Ատրպատականի Գանձակ քաղաքը, որը գտնվում էր Թավրիզի հարավում և նրանից մի քանի հարյուր կիլոմետր հեռավորության վրա՝ չէր կարող լինել Արշակունյաց Հայաստանում:

Արշակունյաց Հայաստանի սահմանն Ուրմիա լճի արևելակողմում որոշվում է բավական ճշգրիտ կերպով Պետինգերյան քարտեզի Gobdi—Paresaca ճանապարհագծի ուշադիր քննությամբ: Ինչպես մատնանշել ենք «Հայաստանի գլխավոր ճանապարհները» մեր աշխատության մեջ՝ Trispeda կամ Tarspedo կայարանին հաջորդող Paresaca կայարանից հետո, որը գտնվել է այժմյան Դիզա Տավիչից 45 հռոմեական մղոն կամ մոտ 67 կիլոմետր հեռավորության վրա՝ միջկայարանային հեռավորությունները Պետինգերյան քարտեզում նշանակված են պարսկական պարասանգներով[1]:

Ուշադրավ այս փաստից, որով բացատրվում է Հայաստանի պատմական աշխարհագրության կարևորագույն խնդիրներից մեկը՝ մինչև վերջին ժամանակները դեռ չէին արվել համապատասխան ու անհրաժեշտ հետևությունները:

Մղոնաչափերի փոփոխությունը մի պարզ ակնարկ է, որ ճանապարհագիծը մինչև Paresaca գտնվել է Արշակունյաց Հայաստանում, իսկ Paresaca-ից հետո՝ Սասանյան Պարսկաստանում: Կարելի է նույնիսկ ենթադրել, որ հիշյալ կայարանն անվանվել է Paresaca (=հավանորեն, Պարսք), որովհետև նա գտնվել է Պարսկաստանի սահմանում:

Իսկ այս լուսաբանությունից ինքնին արդեն հետևում է, որ ըստ Պետինգերյան քարտեզի, որը կազմված է եղել, ըստ երևույթին, չորրորդ դարի երկրորդ քառորդում, Արշակունյաց Հայաստանի սահմանը որոշվելու է Tarspedo—Տավիչից 45 հռոմեա-

———

[1] Տե՛ս *Miller Konrad.* Itineraria Romana, Röinische Reisewege an der Hand der Tabula Peutingeriana. Stuttgart, 1916, էջ 781—784:

կան մղոն կամ մոտ 67 կիլոմետր դեպի հարավ-արևելք՝ այժմյան Աջի-չայ գետի մոտ:

Արդ՝ ընդունելով Աջի-չայ գետն իբրև սահմանագիծ Արշակունյաց Հայաստանի և Սասանյան Պարսկաստանի միջև՝ Թավրիզի տեղը լինելու էր, իրոք, Պարսկաստանում, ինչպես այդ վկայում է նաև Փավստոսը:

Եվ ինձ թվում է, որ Պետինգերյան քարտեզի և Փավստոսի վկայությունների համերաշխությունն ինքնին արդեն հաստատուն մի նեցուկ է մեր եզրակացությունների հավաստիության և միաժամանակ ուշագրավ մի նոր ապացույց է, որ Փավստոսի վերոհիշյալ վկայությունները սխալ են եղել մեկնված աշխարհագրական նախորդ աշխատություններում:

Համաձայն հռոմեական-պարսկական 298 թվի դաշնագրության՝ Արշակունյաց Հայաստանի սահմանն էր լինելու, ինչպես արդեն հիշված է, Զինթա ամրոցը, որը գտնվում էր Մեդիայի սահմանում: Իսկ հայկական ավանդությունը, որը մեջ է բերված Սեբեոսի և Խորենացու պատմություններում[1], Հայաստանի հարավ-արևելյան հին սահմանը Ատրպատական-Մեդիայի կողմում համարում է Զարասպ լեռը: Այս երկու ցուցումները, ինչպես մանրամասն պարզել եմ իմ «Պատմական-աշխարհագրական մանր հետազոտություններ»[2] աշխատության մեջ, իրար համապատասխան են և իրար լրացնում են:

Զարասպ լեռան տեղը, ինչպես միանգամայն ճիշտ մատնանշել է Ալիշանը[3], հավանական է ենթադրել Զագրոս լեռների շրջանում և այժմյան Ռևանդուզի հյուսիս-արևելակողմում: Նույն կարծիքը հայտնել է նաև Գ. Հոֆմանը[4], որը Զարասպի տեղը մատնանշել է Թուրքիան և Պարսկաստանը իրարից բաժանող այժմյան Քանդիլ-կուհ կամ Քանդիլ-դաղ լեռնաշղթայի շրջանում, ուր Ռևանդուզի և այժմյան Ուշնու գյուղի միջև գտնվում է Կելիշինը:

Ավելի դժվար է որոշվում Զինթա ամրոցի տեղը: Ռ. Կիպերտի ընդարձակ քարտեզում Նինվեից հյուսիս Ակրայի մոտ մատնացույց է արված Զինդու (Zindu) վայրը[5], սակայն այս Զինդուն,

[1] Սեբեոս, Պատմություն, Երևան, 1939, գլ. Բ, էջ 9 և գլ. Թ, էջ 38—39: Խորենացի, Պատմություն, I, գլ. ԺԴ էջ 44:

[2] Երևան, 1945, էջ 9—18:

[3] Ալիշան, Տեղագիր Հայոց Մեծաց, Վենետիկ, 1855, էջ 11:

[4] Տե՛ս G. Hoffmann. Auszüge aus syrischen Akten persischer Märtyrer, Leipzig, 1880, էջ 231 և հետ.,

[5] Տե՛ս R. Kiepert, Atlas von Kleinasien in 24 Blättern, Berlin, 1902.

ինչպես շատ ճիշտ նկատել է Ադոնցը[1], հազիվ թե որևէ կապ ունենա վերոհիշյալ Զինթայի հետ:

Ադոնցը ինքը թեական կերպով ենթադրում է, որ Զինթա ամրոցը կարող է թերևս նույնացվել այժմյան Սիննա քաղաքի հետ, որը գտնվում է Համադանի և Սուլեյմանիայի միջև: Հ. Կիպերտի քարտեզից երևում է, որ սա ևս Սիննայի հին անունը ենթադրում է Sintha[2]: Հնարավոր համարելով Զինթայի և Սիննայի նույնացումը՝ Ադոնցը նկատի է ունեցել Փավստոսի Պատմության ակնարկներն այն մասին, որ իբր թե Պարսից թագավոր Շապուհ Բ-ը խոստացել էր ամբողջ Ատրպատականը տալ կամ նույնիսկ իբր թե տվել էր իբրև նվեր Արշակ Բ-ին[3]: Հիմնվելով Փավստոսի վկայությունների վրա՝ Ադոնցը տրամադիր էր կարծելու, որ այդ վկայությունները, չնայած իրենց հեքիաթային բնույթին, կարծես թե հաստատում են, որ Ատրպատականի կողմից Հայաստանի սահմանը կարող էր լինել, իրապես, Զինթան՝ այժմյան Սիննան:

Ադոնցի այդ ենթադրությունը պարզապես սխալ է և դրա գլխավոր պատճառն այն է, որ նա, համամիտ լինելով Մարկվարտին և Հյուբշմանին, ենթադրել է, որ Ատրպատականի Գանձակ քաղաքը ու նաև Ատրպատականի որոշ մասերը Ուրմիա լճի հարավ-արևելյան ափերի երկարությամբ գտնվել են Արշակունյաց Հայաստանում: Այս ընդումը, ինչպես տեսանք, ակներև մի թյուրիմացություն է: Ըստ Պետինգերյան քարտեզի՝ Արշակունյաց Հայաստանի սահմանը, իրապես, ոչ թե Ատրպատականի Գանձակից հարավ էր ընկնում, այլ Թավրիզից հյուսիս՝ այժմյան Աջի-չայ գետի մոտ: Շատ պարզ է, ուրեմն, որ Զինթա ամրոցի տեղն անկարելի է ենթադրել այժմյան Սիննայում, որը գտնվում է Համադանից Սուլեյմանիա գնացող ճանապարհի վրա:

Զինթա ամրոցի տեղը որոշելիս՝ պետք է նկատի ունենալ, որ Սասանյան Պարսկաստանի 297 թվի պարտությունից հետո Հայաստանը ստացած պիտի լիներ Ատրպատական-Մեդիայի կողմում իր ընդարձակ հին սահմանները: Իսկ մենք տեսանք, որ այդ կողմում Հայաստանի ծայրագույն սահմանն էր Զարասպը, այսինքն՝ Ռևանդուզի արևելակողմում գտնվող լեռնային շրջանը, ուր, ինչպես մանրամասն ցույց է տրված իմ «Պատմական-աշխարհագրական մանր հետազոտություններ»-ում (էջ 4—7), հավանորեն, պետք է

[1] Адонц, Армения в эпоху Юстиниана, էջ 227, ծնթ. 1:

[2] Տե՛ս H. Kiepert, Atlas antiquas, zwölf Karten zur alten Geschichte, Berlin, Tab II:

[3] Փավստոս, IV, գլ. ԺԸ, էջ 128 և Խ, էջ 136:

լիներ Բեհիստունի և ասորեստանյան սեպագիր արձանագրությունների մեջ հիշատակված Izitu կամ Izirtu-ի տեղը:

Հիմնվելով կարևոր այս ցուցումների վրա՝ Զինթայի անվան ու տեղագրության նկատմամբ ես առաջարկել էի մի լուսաբանություն[1], որ համարում էի և համարում եմ հավանական: Zintha անվան ուղիղ ընթերցվածը կարելի է, իմ կարծիքով, ենթադրել Zirtha: Իսկ այս սրբագրությունից հետո Զինթան կարող է համապատասխան լինել և ծագած լինել հին Իզիրտու անունից:

Ասորագետ Շտրեքը վկայում է, որ Իզիրտու քաղաքի անունը ասորեստանյան արձանագրությունների մեջ գրվում է երբեմն Ի հավելվածով, իսկ երբեմն առանց այդ ձայնավորի՝ Զիր-տու կամ Զիրտա: Այդ տեղանվան բուն մասն է Իզիր- կամ Զիր-, իսկ տու կամ տա ասորեստանյան հատուկ վերջավորություն է[2]: Դժվար չէ, ուրեմն, համոզվել, որ Զինթայի նույնացումը Զիրտու կամ Զիրտայի հետ միանգամայն հնարավոր է:

Անհավանական չէ ըստ իս նաև այն, որ այժմյան Զիրան[3], որը գտնվում է Ռևանդուզից Պարսկաստան գնացող ճանապարհի վրա և Զագրոս լեռների այն մասում, որը մենք համապատասխան համարեցինք հայկական աղբյուրներում հիշատակված Զարասպին՝ թե իր անունով և թե իր տեղագրությամբ կարող է նույնպես համապատասխան լինել Զինթա—Զիրտային:

Եթե իմ այս դիտողությունները Զինթայի մասին ընդունելի համարվեն՝ այդ դեպքում կարելի կլինի ենթադրել, որ 298 թվի դաշնագրությունից հետո Արշակունյաց Հայաստանի հարավ-արևելյան սահմանը հասնում էր Ուրմիա լճի հարավ-արևմտակողմում մինչև Զագրոս լեռները Ռևանդուզի արևելակողմում:

Արշակունյաց Հայաստանի հարավ-արևելյան այս սահմանում, ուր, ըստ վերոհիշյալ մեր ենթադրության, գտնվում էին Զարասպ լեռը և Զինթա կամ Զիրթա ամրոցը՝ Փավստոսի ու Ագաթանգեղոսի մոտ մատնացույց է արված Հայաստանի չորս բդեշխություններից մեկը՝ Նոր-Շիրականը, որի իշխանության տակ են եղել ըստ Փավստոսի՝ Նոշիրական (Նորշիրական, Նոր-Շիրական), Մահկերտուն,

[1] Տե՛ս «Պատմական-աշխարհագրական մանր հետազոտությունները», էջ 18:

[2] Տե՛ս Մ. Շտրեք. Հայաստան, Քրդստան և արևմտեան Պարսկաստան բաբելոնական-ասորեստանեայ սեպագրերու համաձայն, թարգմ. Պիլեզիկճյանի. Վիեննա, 1901, էջ 98:

[3] Տե՛ս Карта Главного Управления Геодезии и Картографии при СНК СССР—«Иран и Афганистан»:

Նիհորական և Դասն երկրները[1]: Այս բդեշխության տեղագրության մասին, որը Արշակունյաց Հայաստանի սահմանապահ իշխանություններից մեկն էր՝ պատմագիտական և աշխարհագրական երկերում հայտնված են հակասական կարծիքներ, որոնք մանրամասն քննության են առնված իմ «Պատմական-աշխարհագրական մանր հետազոտություններ»-ում (էջ 19—34):

Հիմնվելով, գլխավորապես, Ագաթանգեղոսի վկայությունների վրա, Նոր-Շիրականի տեղը Հյուբշմանը որոշել է Մծբին-Արվաստանի և Կորդուքի միջև, այն է՝ Մծբինի արևելակողմում[2]: Մոտավորապես նույն կարծիքին է նաև Ադոնցը, որը Նոր-Շիրականի տեղը ենթադրում է Կորդուքից հարավ, Ադիաբենի հյուսիս-արևմտյան ծայրում՝ այժմյան Խուբուր-սու գետի հովտում[3]: Նոր-Շիրականի թե անվան և թե տեղագրության մասին բոլորովին նոր ու արտասովոր կարծիք հայտնել է Մարկվարտն իր վերջին շրջանի աշխատություններում[4]:

Իր նոր աշխատություններում Մարկվարտը վճռական կերպով մերժում է, որ Փավստոսի և Ագաթանգեղոսի վկայությունները, որոնց համաձայն Նոր-Շիրականի բդեշխությունը Արշակունյաց Հայաստանի չորս սահմանակալ իշխանություններից մեկն է համարվում՝ ճիշտ չեն և չունին պատմական արժեք: Նոր-Շիրական է անվանվել, նրա ասելով, ամբողջ Ադիաբենը, որն անանջատ մասն է եղել Սասանյան Պարսկաստանի: Այդ երկիրը Հայաստանի գերիշխանության տակ է եղել միայն Տիգրան Մեծի ժամանակ:

1931 թվին, Մարկվարտի մահից հետո, լույս է տեսել նրա ուշագրավ մի աշխատությունը. «Ցուցակ Էրանշահրի շրջանային մայրաքաղաքների»[5], որի մեջ նա, ինչպես ինձ հայտնի եղավ Մինորսկու հոդվածից, հիմնվելով Տաբարիի և Իբն-Խորդադբիհի վկայությունների վրա՝ Նոր-Շիրականը բացատրել է իբրև կրճատված ձև Not-Artaschirakan անվան, որը, ըստ Տաբարիի, Արտաշիրի հիմնած ութ քաղաքներից մեկն էր և գտնվում էր Մոսուլի շրջանում[6]:

[1] Փավստոս, *IV*, գլ. Ծ, էջ 163:

[2] Տե՛ս Հյուբշման, Հին Հայոց տեղւոյ անունները, թարգմ. Պիլեզիկճյանի, էջ 180—181:

[3] Տե՛ս *Адонц*, Армения в эпоху Юстиниана, էջ 227:

[4] Տե՛ս *Markwart*, Die Entstehung und Wiederherstellung der armenischen Nation, էջ 68—70 և Südarmenien und die Tigrisquellen, էջ 379:

[5] *J. Markwart*, A Catalogue of the provincial capitals of Persia. Anecdota Orientalia, III, Rome, 1931.

[6] Տե՛ս *V. Minorsky*, The Guran, Bulletin of the School of Oriental and African Studies (University of London), vol. XI, Part, 1, 1948, էջ 103.

Ինձ թվում է, որ Նոր-Շիրականի մասին վերոհիշյալ կարծիքները ճիշտ չեն և չեն համապատասխանում սկզբնաղբյուրների վկայությունների ցուցումներին, որ, ինչպես կտեսնենք, կարող են մեկնվել նաև այլ կերպ։

Պետք է ասել, որ Նոտ-Արտաշիրական երկիրը, ինչպես մանրամասն ցույց եմ տվել իմ «Պատմական-աշխարհագրական մանր հետազոտություններ»-ում, հիշատակված է նաև Խորենացու Աշխարհացույցի կարևոր մի վկայության մեջ, որը սխալ է հասկացվել աշխարհագրական բոլոր նոր աշխատություններում։ Իբրև Պարսկաստանի արևմտյան կողմի երկրներ Աշխարհացույցի մեջ հիշատակված են Նոտարտայ և Շիրական[1], որոնց տեղադրությունն աշխատել են որոշել Մարկվարտը և Ադոնցը։

Մարկվարտն իր Eranschahr աշխատության մեջ «Նոտարտայ» և «Շիրական» ենթադրել էր իբրև երկու տարբեր երկրներ[2]։ «Նոտարտայ»-ն նա համապատասխան էր համարել Մոսուլի շրջանում գտնվող Բեթ-Նոհադրեին, իսկ «Շիրական»-ի տեղադրությունը նա ենթադրում է այժմյան Ուշնուի, հին Շնավհ գավառի շրջանում, ուր գտնվում էր Թեոփիլակտոս Սիմոկատտեսի հիշատակած Սիրագանների գյուղը[3]։

Այս եզրակացություններն ընդունելի էր համարել նաև Ադոնցը, որը, ի լրումն Մարկվարտի պնդումների, իր կողմից ավելացնում է, որ Աշխարհացույցում Նոհատրա է անվանվում, հավանորեն, ամբողջ Ադիաբենը, իսկ Շիրականը կարող է լինել Նոհատրա տեղանվան հայկական հոմանիշը[4]։ Իմ կարծիքով, «Նոտարտայ»-ի և «Շիրական»-ի մասին այս ենթադրությունները ճիշտ չեն։

«Նոտարտայ»-ն և «Շիրական»-ը, որ երկու առանձին տեղանուն են համարվում, իրապես, պետք է միացվեն և կարդացվեն «Նոտարտա[յ]շիրական», այսինքն՝ «Նոտ-Արտաշիրական», որը Պարսից աշխարհի երկիր էր։ Ըստ իս Նոր-Շիրականը բնավ կապ չունի Նոտ-Արտաշիրականի հետ, այլ, ինչպես ճիշտ վկայում են իրարից անկախ Փավստոսը և Ագաթանգեղոսը, նա Արշակունյաց Հայաստանի չորս բդեշխություններից մեկն է, որի տեղը, ինչպես կտեսնենք, հնարավոր է հաստատուն կերպով որոշել։

---

[1] Տե՛ս Խորենացի, Աշխարհացոյց, հրատ. Սուքրյանի, Վենետիկ, 1881, էջ 40 և նույնը, Վենետ. հրատ. 1843, էջ 643։

[2] Տե՛ս *Markwart*, Eranschahr, էջ 23։

[3] Տե՛ս Theoph. Sim., 5, 8, 9:

[4] Տ'ես *Адонц*, Армения в эпоху Юстиниана, էջ 228—230։

Հոֆմանը, մատնացույց անելով Թեոփիլակտոսի վերոհիշյալ
վկայությունը «Սիրագանների գյուղի» մասին, որը Ռաուլինսոնը
համադրել է Tepe Sirgân-ի հետ այժմյան Ուշնուի մոտ[1], հարց էր
հարուցել, թե արդյոք չի՞ կարող այս Sirgân-ը նույնացվել հայ-
կական պատմագիրների Նոր-Շիրականի հետ, որի տեղը պետք է
լիներ Ուրմիա լճի մոտերքում[2]։ Ինձ թվում է, որ Հոֆմանի այս
կռահումը հաստատվում է, իրապես, ուշագրավ ավյալներով։

Շատ հետաքրքիր է, որ Նոր-Շիրականի պրոբլեմի լուծման հա-
մար բանալի է ծառայում հենց իր՝ Մարկվարտի հմտալից ուսում-
նասիրությունը «Շիգրիանական երկրի» մասին, որ ընդարձակ կեր-
պով մեջ է բերված նրա աշխատությունների մեջ[3]։ Խիստ տարօրի-
նակ է սակայն, որ ինքը՝ Մարկվարտը չի նկատել, որ հենց Շիգրերն
ու Շիգրիանական երկիրն են, որ Թեոփիլակտոսի մոտ անվանված
են «Շիրագաններ», իսկ հայ պատմիչների մոտ՝ «Նոր-Շիրական»։

Շիգրերի մասին խիստ կարևոր է Պլինիոսի ուշագրավ մի
վկայությունը[4]։ Սիգիկներից վերև այժմյան Ուշնուի կողմերում
կամ թերևս մի փոքր ավելի դեպի հյուսիս-արևմուտք Պլինիոսի
մոտ հիշատակված Sitrae ցեղը, որի անունը Մարկվարտը համա-
րում է աղավաղված և առաջարկում է ուղղել և կարդալ Sigrae։
Այս ուղղումը, որ միանգամայն հավանական է ու ընդունելի, խիստ
կարևոր է այն տեսակետից, որ շնորհիվ այս սրբագրության պարզ
կերպով որոշվում է Sigrae ցեղի «Սիգրիանե» կամ «Սիգրիանիկե»
անվանված երկրի տեղը, որը հիշատակված է Ստրաբոնի մոտ և
Պտղեմեոսի հին քարտեզում։ «Սիգրիանե» երկիրը, ինչպես երևում
է Պլինիոսի վկայությունից, գտնվում էր այժմյան Սիդիկանի և
Ռևանդուզի հյուսիսակողմում և Մեծ Զավ գետի վերին հոսանքի
շրջաններում։

Եվ ինձ թվում է, դժվար չէ կռահել, որ սիգրերի (շիգրերի)
Սիգրիանը, կամ ավելի ճիշտ՝ Շիգրիանը, այն երկիրն է, որ Շիրակ
կոչվող ցեղի անվան ազդեցությամբ և բաղաձայնների գրափոխու-
թյամբ (metathesis) հին հայերենում դառել է Նոր-Շիրական, իսկ
Թեոփիլակտոսի մոտ, որը յոթերորդ դարի առաջին կեսի բյուզան-
դական հեղինակ է՝ Siragan։

---

[1] Տե՛ս Jour. of Roy. Geogr. Soc., X, 18, 19.

[2] Տե՛ս *Hoffmann*, Auszüge aus syrischen Akten persischer Märtyrer, Leipzig, 1880, էջ 249։

[3] Տե՛ս „Untersuchungen zur Geschichte von Eran“, Leipzig, 1905, էջ 25 և-ն., „Eranschahr“, էջ 32 և „Südarmenien“, էջ 337, 393, 399, 401 և-ն.։

[4] *Plin.*, Nat. Hist., VI, էջ 118։

20—340

Առանձնապես ուշագրավ է ու հետաքրքիր, որ հռոմեական-հունական հեղինակների մոտ հիշատակված նույն այս Շիգրիան երկիրը, որը համապատասխան է իմ կարծիքով Նոր-Շիրականին, հիշատակված է նաև Ղևոնդ պատմիչի մոտ։ Վերջինս, խոսելով Գագիկ Արծրունու ասպատակությունների մասին հարևան Ատրպատականի կողմերում հիշատակվում է «Շիգրոյ» գավառը[1], որը պարզապես Պլինիուսի վկայության Sigrae կամ Շիգրերի ցեղի երկիրն է։

Ղևոնդի վկայությունը, ինչպես տեսնում ենք, ցույց է տալիս, որ Նոր-Շիրականի հին Շիգրիան—Շիգռո անունը պահպանվել էր մինչև ութերորդ դարը՝ մինչև Ղևոնդ պատմագրի ժամանակը։

Մեր այս նոր դիտողությունները Նոր-Շիրականի մասին, համաձայն որոնց նրա տեղը որոշվում է Սիգիկանից և Ռևանդուզից հյուսիս գտնվող Շիգրերի երկրում, ուր հիշատակված է վերոհիշյալ «Շիրականների գյուղը»՝ հիմք են տալիս ենթադրելու, որ այս բդեշխությունը, որ սահմանակալ իշխանություն էր՝ Հայաստանի սահմանները պաշտպանելու էր ո՛չ թե Ասորեստանի կողմից, ինչպես այդ մատնացույց է արել Մարկվարտը[2], այլ Մեդիա-Ատրպատականի կողմից, որտեղից թշնամի զորքերը կարող էին ներխուժել Հայաստան Զարասպի վրայով և Կելիշին ու Կելիսիփան լեռնանցքներով։

Մեր այս նոր եզրակացության կռվան է ծառայում Ագաթանգեղոսի վկայությունը Արշակունյաց Հայաստանի չորս բդեշխների մասին, որոնք Տրդատ Մեծի հետ գնացել էին Բյուզանդիա։

«Իսկ զինվորականության կողմից [գնացին նրա հետ],— ասում է Ագաթանգեղոսը,—նրա պալատի չորս գահերեց իշխանները, որոնց անվանում էին բդեշխ. առաջինը՝ սահմանակալը Նոր-Շիրականի կողմերում, երկրորդը՝ սահմանակալը Ասորեստանի կողմերում, երրորդը՝ Արվաստանի կողմերում և չորրորդը՝ Մասքթաց կողմերում»։

[«Եվ ի զինուորական կողմանէն՝ զչորեսին գահերէցսն իւրոյ տաճարին, որ բդեաշխքն կոչին. զառաջին սահմանակալն ի Նոր-Շիրական կողմանէն, և զերկրորդ՝ սահմանակալն յԱսորեստանեայց կողմանէն, և զերրորդն՝ յԱրուաստան կողմանէն, զչորրորդն՝ ի Մասքթաց կողմանէն»][3]։

---

[1] Ղևոնդի վկայության մեջ (Ս.-Պետերբուրգ, 1887, գլ. ԼԲ, էջ 133—134), փոխանակ «ի Բուտակս և ի Շիգռոյ», եղյանի ձեռագիրն ունի «ի Րուզակս և ի Շիգռեց»։ Ուղիղ ընթերցվածը պետք է լինի «ի Րուզակս և ի Շիգրոյ»։

[2] Տե՛ս Markwart, Eranschahr, էջ 165—179։

[3] Ագաթանգեղոս, գլ. ՃԻԶ (873), էջ 440, Թիֆլիս, 1914։

Մեջ բերված այս վկայությունից պարզ երևում է, որ Արշակունյաց Հայաստանի հարավ-արևելյան ու հարավային սահմաններում Ագաթանգեղոսին հայտնի են եղել երեք բդեշխություններ՝ Նոր-Շիրականի, Ասորեստանի և Արվաստանի կողմերում։

Եվ առանձնապես ուշագրավ է, որ նա Նոր-Շիրականի կողմը տարբեր է համարում Ասորեստանի կողմից, որի դիմաց, ինչպես նա մատնանշում է, գտնվել է երկրորդ սահմանակալ իշխանությունը։

Ագաթանգեղոսի այս վկայությունը, ինչպես տեսնում ենք, շատ որոշ է ու պարզ։ Սակայն Մարկվարտի թե հին և թե նոր ենթադրությունները Նոր-Շիրականի մասին հակասում են այս վկայությանը։ Իր նորագույն աշխատություններում Մարկվարտը, ինչպես տեսանք, ենթադրում է, որ Նոր-Շիրական կամ Նոտ-Արտաշիրական Ադիաբենի պաշտոնական անունն էր։ Արդ՝ եթե այս կարծիքը ճիշտ համարվի՝ անհասկանալի կլինի, թե ինչո՛ւ Ագաթանգեղոսը Նոր-Շիրականի և Ադիաբեն-Ասորեստանի կողմերը համարում է իրարից տարբեր և մատնացույց է անում տարբեր շրջաններում։

Ինչպես հայտնի է, Ագաթանգեղոսի վերոհիշյալ վկայությանը Մարկվարտն այլ լուսաբանություն էր տվել իր Eranschahr աշխատության մեջ։ Ընդունելով, որ Նոր-Շիրականն Արշակունյաց Հայաստանի չորս բդեշխություններից մեկն էր՝ Մարկվարտն իր հնագույն այս ուսումնասիրության մեջ այդ բդեշխությունը, հակառակ Ագաթանգեղոսի վերևում բերված վկայության, համարել էր սահմանակալ իշխանություն «յԱսորեստանեայց կողմանէն»։ Իսկ մյուս բդեշխությունը, որն ըստ Ագաթանգեղոսի երկրորդ սահմանակալ իշխանությունն էր, «յԱսորեստանեայց կողմանէն», նա, «յԱսորեստանեայց»-ը ուղղելով «յԱսորւոց», ենթադրել էր ո՛չ թե Ադիաբեն-Ասորեստանի, այլ Ասորիքի կողմում։ Ուստի և նա կարծել է, որ «երկրորդ սահմանակալ»-ը և բդեշխը Ծահունոց Ծոփաց իշխանն էր։

Մարկվարտի այս եզրակացությունները, որ տիրող ու ընդհանրացած են և որ ես էլ ընդունելի էի համարել իմ «Ֆեոդալիզմը Հին Հայաստանում» աշխատության մեջ (էջ 35), ինձ թվում է այժմ, որ ո՛չ միայն վիճելի են, այլև անհավանական։

Այդ եզրակացությունները չեն կարող ընդունելի համարվել, նախ և առաջ, այն պատճառով, որ Մարկվարտը աչքաթող է արել, որ Տրդատ Մեծի և Արշակ Բ-ի ժամանակ, երբ Ծահունոց Ծոփքը և նրա հարևան երկրները գտնվում էին Հռոմի բարձրագույն իշխանության տակ, այս կողմերում կարիք չկար սահմանների պաշտպանության։ Եվ, իհարկե, միանգամայն անհավանական է ենթա-

գրել, որ սահմանապահ բդեշխություն գոյություն է ունեցել նաև այստեղ։ Մարկվարտի դիտողությունը, որ Շահունոց Ծոփքի բդեշխությունը հիմնված է եղել Արշակունյաց Հայաստանի սահմանները Սելևկյանների հարձակումներից պաշտպանելու համար՝ բոլորովին համոզիչ չէ, որովհետև Ագաթանգեղոսի վերոհիշյալ վկայությունը վերաբերում է ո՛չ թե Սելևկյան, այլ Արշակունյաց ժամանակաշրջանին։

Ինձ ավելի հավանական է թվում այժմ, որ Արշակունյաց Հայաստանի չորս բդեշխությունները, որոնք անվանվում են «սահմանապահք», «սահմանակալք», նաև «կողմնապահք» կամ «կողմնակալք», գտնվում էին Հայաստանի հետևյալ սահմանային շրջաններում։ Նոր-Շիրականի բդեշխն իշխում էր այժմյան Ուրմիո լճի ու Սիդիկանի հյուսիսակողմում և պաշտպանելու էր, ուրեմն, Հայաստանի հարավ-արևելյան սահմանները Մեդիա-Ատրպատականի կողմից։ Սրան հարևան մյուս բդեշխը, որն Ագաթանգեղոսի մոտ անվանված է «երկրորդ սահմանակալ», ըստ երևույթին, Կորդվաց իշխանն է, որի իշխանության տակ են եղել, հավանորեն, նաև Տմորիքը և Կորդիքը։ Հասկանալի է դառնում այսպիսով, որ այս բդեշխը, իրապես, «երկրորդ սահմանակալ»-ն էր և պաշտպանելու էր Հայաստանի սահմանները «յԱսորեստանեայց կողմանէն»։ Արշակունյաց Հայաստանի հարավային սահմանում «յԱրուաստան կողմանէն», այսինքն՝ Միջագետքի և Մծբինի հյուսիսակողմում, իշխում էր Աղձնյաց բդեշխը, որն ըստ Ագաթանգեղոսի «երրորդ սահմանակալն» էր։ Իսկ հյուսիսում «ի Մասքթաց կողմանէն», այսինքն՝ Վրաստանի Մեսխեթի շրջանի դիմաց, իշխում էր «չորրորդ սահմանակալ»-ը՝ Գուգարքի բդեշխը։

Բդեշխությունների տեղադրության որոշմամբ մոտավոր կերպով ճշտվում են նաև Արշակունյաց թագավորության սահմանները։

Ուրմիո լճի հարավ-արևմտակողմում Արշակունյաց թագավորության սահմանումն էր գտնվում, ինչպես վերև տեսանք, Նոր-Շիրականը։ Այնուհետև Արշակունյաց Հայաստանի ծայրագավառներն էին այս կողմերում Դասնը, Տմորիքը և Կորդիքը։ Դասնի տեղադրությունը հաստատուն կերպով որոշված է։ Այս երկիրը, ինչպես մանրազնին հետազոտությամբ որոշել է Հոֆմանը, գտնվել է Մեծ Զավ գետի արևմտակողմում և այժմյան Ամադիայի ու Գարա լեռների կողմերում[1]։ Իմ «Պատմական-աշխարհագրական մանր հետազոտություններ»-ում մանրամասն ցույց է տրված, որ Դասնը համա-

[1] Տե՛ս *Hoffmann*, Auszüge, էջ 202—207։

պատասխան է իր տեղադրությամբ Ստրաբոնի հիշատակած Կալաքենեին, որի տեղը ենթադրվում է նույնպես Մեծ Զավ գետի արևմտակողմում, այդ գետի և Խաբուր-սուի միջև։ Ստրաբոնի վկայությամբ՝ հին Կալաքենեն, որը գտնվում էր Ադիաբեն-Ասորեստանի հյուսիսում, արմենների հին գաղթավայրերից մեկն էր։

«Ադիաբենի մեծագույն մասը,— ասում է Ստրաբոնը,— դաշտային է։ Լինելով Բաբելոնիայի մասը՝ սա ունի իր սեփական կառավարիչը. բայց երբեմն միացված է եղել Արմենիային։ Մեդացիները, արմենները և բաբելոնացիները, որոնք ամենամեծ թիվը կազմող ժողովուրդներն էին միշտ այստեղ, սկզբից հենց այնքան էին հակառակ իրար, որ հարմար դեպքում իրար վրա հարձակվում ու նորից հաշտվում էին»[1]։

Ստրաբոնի թե այս և թե այլ վկայություններից երևում է, բացի այդ, որ արմենական այս հնավոր գաղթավայրը շարունակ ձեռքից ձեռք էր անցել և կազմել էր մաս կամ Հայաստանի և կամ Ատրպատականի։

«Մեդիա-Ատրպատականի հզոր հարևաններն են,—ասում է Ստրաբոնը,—արմենները և պարթևները, որոնք հափշտակում էին հաճախ նրա երկրամասերը։ Սակայն սա դիմադրում էր և հետ էր առնում խլվածը»[2]։

Ինչպես տեսնում ենք. Արմենական Կալաքենե հին գաղթավայրը, որը Փավստոսի մոտ անվանված է Դաասընտրե և Նդիշեի մոտ՝ Դասն[3], ծայրամասն էր Արշակունյաց Հայաստանի։ Դասնի հարևան գավառներն ու ծայրամասերն էին Արշակունյաց թագավորության Տմորիքը և Կորդիքը, որոնք գտնվում էին այժմյան Խաբուր-սուի վերին հոսանքի շրջանում՝ հին Ալկի կամ այժմյան Էլք քաղաքի հարավակողմում։

Իսկ ավելի դեպի արևմուտք այժմյան Բոհտան-սուի հարավակողմում գտնվում էր Կորդուքը, որի հարավային սահմանն էր Տիգրիս գետը[4] և նրա ափին, իսկ հարավ-արևմտյանը՝ Խաբուր-սուն, որը նշանավոր բերդ գտնվող հին Բեզաբդեն (այժմյան Ջեզիրեն), որը համաձայն էր «Ծաւդէից աշխարհ»-ում։ Այսպիսով, ընդունելով համաձայն

[1] *Strabo*, XVI, 1, 19.

[2] *Նույնը, XI, 13, 2։*

[3] Տե՛ս Փավստոս. *IV*, գլ. *Ս* և Նդիշե. էջ *80*։

[4] *Պետք է սակայն նշել, որ 359 թվին, ինչպես վկայում է Ամմիանոսը (XVIII. 6, 20). Կորդուքը կամ, հավանորեն, նրա մի մասը, գտնվել է Պարսից իշխանության տակ։*

Փավստոսի Կորդուքն իբրև Հայաստանի ծայրաշխարհ՝ Արշակունյաց թագավորության սահմանը ևս հավանական կլինի ենթադրել Կորդուքի հարավակողմում Խաբուր-սու գետի հոսանքի երկարությամբ:

Արշակունյաց Հայաստանի սահմանը Տիգրիս գետի աջ կողմում, հավանորեն, հասնում էր մինչև Մասիոս լեռնաշղթան և Իզալա լեռները: Հայաստանի ծայրաշխարհներն էին այստեղ, ինչպես կարելի է եզրակացնել Ագաթանգեղոսի, Փավստոսի և Զորանամակի[1] վկայություններից՝ «Ծաղէից աշխարհ»-ը (Zabdıcena)․ Աղձնիքը և Մեծ Ծոփքը, հավանաբար, այժմյան Մարդինից մի քանի կիլոմետր հեռավորության վրա գտնվող Արշակունյաց թագավորների Բնաբեղ բերդը (այժմյան Բինեբիլ Իզալա լեռների շրջանում), որի մեջ պահվում էին արքունի գանձերը:

Ուշագրավ է սակայն, որ Խորենացին, որը լուրջ ու համալից քննությամբ տվել էր իր Աշխարհացույցի մեջ Հայաստանի քաղաքական աշխարհագրությունը նրա բաժանումից առաջ, հակառակ մեր վերոհիշյալ եզրակացության, ենթադրել է, որ «Մարդէ բերդ»-ը և «Բղաբդէ»-ն գտնվել են Հայաստանի հարևան «Միջագետք աշխարհ»-ում[2]:

Արշակունյաց թագավորության սահմանները, սկսած Իզոլա լեռների շրջանից մինչև Եփրատ գետի ծունկը Ծովք լճի հարավակողմում՝ այժմյան Թելեկի մոտ, անորոշ են և կարոտ են հատուկ քննության: Հ. Կիպերտի քարտեզում Հայաստանի սահմանն այս կողմում համարվում է Եփրատ գետը՝ սկսած Սամոսատ քաղաքի հյուսիսակողմերից (Սամոսատից մոտ 50 կիլոմետր դեպի հյուսիս) և Հայաստանի մեջ է ենթադրվում Սևավերակը և Աբարնեն[3], սակայն Հյուբշմանն իրավացի կերպով մատնանշում է, որ Մեծ Ծոփքի հարավ-արևմտյան սահմանները պարզ չեն[4]:

Սկսած Ծովք լճի հարավակողմից մինչև Դատեյրա (այժմյան Դոստալ)[5], որը գտնվում էր Զիմարայի հարավ-արևելակողմում,

[1] Տե՛ս Ագաթանգեղոս, գլ. ՃԺԲ (795). Փավստոս, IV, գլ. Ծ և V, գլ. ԺԶ—ԺԷ. Адонц, Армения в эпоху Юстиниана, էջ 251, 256, 293. Ստ. Կանայանց, Անյայտ դասեր Հին Հայաստանի, Էջմիածին, 1914, էջ 9—16. Հյուբշման, Հին Հայոց տեղւոյ անունները, էջ 182—184:

[2] Տե՛ս «Աշխարհացոյց Մովսէսի Խորենացւոյ», հրատ. Ա. Սուքրյանի, էջ 37:

[3] Տե՛ս H. Kiepert, Atlas antiquas, elfte Auslage, Tab. IV.

[4] Հյուբշման, Հին Հայոց տեղւոյ անունները, էջ 143:

[5] Տե՛ս Манандян, Маршруты Понтийского похода Помпея и путь отступления Митридата в Колхиду, „Вестн. др. ист.“, 1940, № 3—4, էջ 91 և հ.:

Արշակունյաց Հայաստանի սահմանը կազմում էր Եփրատ գետը:
Հայաստանի արևմտյան այս սահմանի վրա գտնվում էին, սկսած
հարավից դեպի հյուսիս՝ հետևյալ հին ու նաև հետնագույն ժամա-
նակի գավառները, որ հիշատակված են Խորենացու Աշխարհացույ-
ցի մեջ՝ ա) Հանձիթ, որի մեջ էին Մաղարան (այժմյան Մեղրեն).
Խարբերդը և Տոմիսան, բ) Գորեք՝ Արածանիի հարավակողմում և
Եփրատի արևելակողմում, գ) Դեգիք՝ Արածանիի հյուսիսակողմում
և դ) Մզուր կամ Մծձուր, որը գտնվում էր Մուզուր լեռների
հարավակողմում և որի մեջն էր Ակնը՝ այժմյան Էգինը:
Սկսած Դատեյրա-Դոստալի կողմերից՝ Եփրատ գետի ամ-
բողջ վերին հոսանքը մինչև նրա ակունքները գտնվում էր Արշա-
կունյաց Հայաստանի մեջ: Դոստալի մոտ գտնվող այժմյան Ղուրու-
չայ գետի արևելակողմում և Մուզուր լեռների հյուսիսակողմերումն
էր Արշակունյաց Հայաստանի պատմական նշանավոր ծայրագա-
վառ Դարանաղին, որը ձգվում էր դեպի հյուսիս-արևելք մինչև
Գոհանամ կամ Սեպուհ լեռը: Այս գավառի մեջ էին Անի-Կամախ
հին բերդաքաղաքը, Թորդան ավանը, ուր գտնվում էին Գրիգոր
Լուսավորչի տոհմի գերեզմանները և Լինչի քարտեզի մեջ նշա-
նակված Մեծ և Փոքր Բագառիչ գյուղերը:
Գոհանամ լեռան արևելակողմում գտնվում էր Արշակունյաց
թագավորության մյուս նշանավոր ծայրաշխարհը՝ Եկեղյաց գավա-
ռը, ուր, ինչպես տեսանք, 384/5 թվականին պատսպարան էր գտել Ար-
շակ Գ թագավորը: Այս գավառի մեջ էին Երեզը կամ Երիզան (այժմ-
յան Երզնկան), Թիլ ավանը՝ Գոհանամ լեռան արևելյան ստորո-
տում, Խախ գյուղը՝ Թիլի հյուսիս-արևմտակողմում, և Վասակերտ
(այժմյան Վաղկերտը)՝ Երեզի հյուսիսակողմում[1]: Արևելյան կողմից
Եկեղյաց գավառը, ինչպես ենթադրում է Ադոնցը, հասնում էր մին-
չև Եփրատ գետի ոլորտը և նրա ափին գտնվող Կոթեր ավանը[2]:
Եկեղյաց գավառին արևելյան կողմից սահմանակից էր Արշա-
կունյաց թագավորության Դերջան ծայրագավառը, որը հասնում
էր մինչև Եփրատ գետի հյուսիսակողմում և Սերչեմե-սուի արև-
մտակողմում գտնվող Խաղտոյառիճ գյուղը (այժմյան Գաղտառիճ):
Այս գավառի մեջն էր հայտնի հին «Բագայառիճ» կամ «Բագառիճ»
գյուղը (այժմյան Պեկերիչը):
Դերջանի հյուսիս-արևելակողմում գտնվում էր Արշակունյաց
Հայաստանի Սպեր ծայրագավառը, որը, ինչպես վկայում է Փա-

[1] Տե՛ս Հյուբշման, Հին Հայոց տեղւոյ անունները, էջ 129—131:

[2] Адонц, Армения в эпоху Юстиниана, էջ 48 և հետ.:

վըստոսը, Արշակունյաց տոհմի թագավորների թագադիրների, Բագրատունիների, երկիրն էր[1]։ Այս գավառի կենտրոնավայրն էր Սպերը (այժմյան Իսպիրը)՝ Ճորոխ գետի վրա։

Վերոհիշյալ հինգ ծայրագավառները՝ Մզուրը, Դարանաղին, Եկեղիքը, Դերջանը և Սպերը՝ Խորենացու Աշխարհացույցը համարում էր Բարձր Հայք աշխարհի գավառներ։

Սպեր գավառի հյուսիս-արևելյան կողմերում Արշակունյաց թագավորության սահմաններն էին համարվում, ինչպես վկայում են հայ պատմագիրները և Խորենացու Աշխարհացույցը, Պարխար լեռները, որոնք Ստրաբոնի մոտ անվանված են Պարիադրես, և, հավանաբար, «Արսեացփոր» գավառը, որի միջով Ճորոխ գետը հոսում էր դեպի Կղարջք[2]։

Պարխար լեռների և Ճորոխ գետի կողմերից Արշակունյաց թագավորության սահմանը թեքվում էր Կղարջքի վրայով դեպի հին Խորձյան (Chorzene) գավառը, որը, ինչպես մանրամասն ցույց է տրված իմ աշխատություններից մեկում[3]՝ միացված էր Մեծ Հայաստանին դեռևս երկրորդ դարի առաջին կեսում մեր թվականությունից առաջ, Արտաշես Ա-ի ժամանակ։ Խորձյան գավառի մեջն էր Կուր գետի վերին ընթացքը։

Արշակունյաց Հայաստանի հետևյալ ծայրագավառն էր Խորձյանից հետո Ջավախքը, որը տարածվում էր Կուր գետի երկարությամբ դեպի հյուսիս-արևելք։ Այս գավառի մեջ կային բազմաթիվ ձկնաշատ լճեր, որոնցից ամենանշանավորն էր Փարվանա լիճը։ Հին Ջավախքում կարևոր կենտրոնավայր է եղել Պետինգերյան քարտեզի Caspiae-ն (այժմյան Խոսպիա), որը գտնվում էր այժմյան Ախալքալաքից մի քանի կիլոմետր դեպի հարավ։

Պոմպեոսի անդրկովկասյան ռազմուղիների լուսաբանությանը վերաբերող ընդարձակ իմ հոդվածում ես մանրամասն ցույց էի տվել, որ Տիգրան Բ-ի (95—55 թ. մեր թվ. առ.) ժամանակ Մեծ Հայաստանի մեջ էին Պետինգերյան քարտեզի ոչ միայն Caspiae

[1] Տե՛ս Փավստոս, V, գլուխ ԽԴ, էջ 263։

[2] Տե՛ս Փարպեցի, II, գլ. ԽԱ, էջ 74—75, Եղիշե, էջ 224, *Brosset*, Description géographique de la Georgie, St-Petersbourg, 1842, I, էջ 41 և 69. «Աշխարհացոյց Մովսէսի Խորենացւոյ», հրատ. Սուքրյանի, էջ 35 և ուրիշ.։ Համեմատե՛ նաև Հյուբշման, Հին Հայոց տեղւոյ անունները, էջ 115—118 և 244. *Markwart*, Südarmenien, էջ 77. *Адонц*, Армения в эпоху Юстиниана, էջ 27, ծան. 1, և-ն.։

[3] Տե՛ս „Маршруты понтийского похода Помпея“, „Вестн. др. ист.“, 1940, № 3—4, էջ 99։

կայարանը, այլ նաև Ad Metcurium-ը, այսինքն՝ «Կուրի գետանցքի մոտ» կայարանը, որը գտնվում էր այժմյան Ախալցխայից մոտ 8 կիլոմետր դեպի հարավ-արևելք[1]։ Հավանորեն, Կուր գետի նույն այս կողմերում պետք է լինեին նույնպես և Արշակունյաց Հայաստանի սահմանները։

Խորենացու Աշխարհացույցի մեջ վերոհիշյալ երեք գավառները՝ Կղարջքը, Խորձյանը (Աշխարհացույցի մեջ անվանված է Արտահան) և Ջավախքը՝ մատնանշված են իբրև գավառներ Գուգարաց աշխարհի, որը, ինչպես տեսանք, Արշակունյաց թագավորության բդեշխություններից մեկն էր և, լինելով սահմանակալ իշխանություն, պահպանում էր Հայաստանի սահմանները հյուսիս-արևմտյան կողմից։

Նույն այս Գուգարաց բդեշխության մեջ էին գտնվում, ըստ Խորենացու Աշխարհացույցի, նաև Հայաստանի հյուսիսային ծայրագավառները, որոնք սահմանակից էին Վրաստանին՝ Թռեղքը (Վրաց Թրիալեթի, այժմյան Ծալկան), որը գտնվում էր Փարվանա լճի հյուսիսակողմում, Ծոբափորը, Կողբափորը, և Ձորոփորը[2]։ Ուշագրավ է սակայն, որ Փավստոսի վերև հիշված վկայության մեջ Արշակ Բ-ի դեմ ապստամբած իշխանների թվում իրարից անկախ հիշատակված են՝ «Գուգարաց բդեաշխն և յետ սորա Ձորայ գաւառին տէրն և Կողբայ գաւառին տէրն»[3]։

Վերոհիշյալ Ծոբափոր, Կողբափոր և Ձորոփոր գավառների տեղադրության խնդիրը դեռևս հաստատուն ու վերջնական կերպով դադրության ... պարզված չէ։ Հյուբշմանը, ընդունելով համաձայն Հովհաննես Դրասխանակերտցու վկայության[4], որ Կայան բերդը, որի տեղը ենթադրվում է Աղստև գետի աջ ափին, գտնվում էր Ձորոփոր կամ Ձորափոր գավառում՝ այս վերջինի տեղը որոշել է Աղստև գետի ավազանում[5]։ Մարկվարտը, համաձայնելով Հյուբշմանի հետ, ենթադրում է նաև, որ Կողբոփորի կամ Կողբափորի տեղադրությունը պետք է լիներ Ձորոփորի արևմտակողմում։ Իսկ Ծոբափորը, որը

[1] Տե՛ս *Манандян Я.*, Круговой путь Помпея в Закавказье, „Вестн. др. ист.“, 1939., № 4, էջ 74—77. Նաև՝ Հայաստանի գլխավոր ճանապարհները ըստ Պետինգերյան քարտեզի, էջ 131։

[2] Տե՛ս «Աշխարհացոյց Մովսէսի Խորենացւոյ», հրատ. Սուքրյանի, էջ 34։

[3] Փավստոս, IV, գլ. Ծ, էջ 163։

[4] Տե՛ս «Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ, Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1912, էջ 310։

[5] Հյուբշման, Հին Հայոց տեղւոյ անունները, էջ 235։

հիշատակված է միայն Խորենացու Աշխարհացույցի մեջ, նա ենթադրում է այժմյան Դեբեդի կամ Ձորագետի հովտում[1]:

Սակայն աշխարհագրական հայկական երկերում, օրինակ՝ Ալիշանի, Լալայանի և ուրիշների մոտ, Դեբեդ գետի հովտում ենթադրվում է ոչ թե Ծոբափորը, այլ Ձորոփորը[2]:

Այս վերջին կարծիքին նեցուկ կարող են ծառայել Գրիգորիս քահանա Երզնկյանցի տեղագրական ցուցումները, ըստ որոնց Կայան բերդի տեղադրությունը ենթադրվում է Ձորագետի արևելակողմում գտնվող Հաղբատի մոտերքում[3]:

Ձորոփորի, Ծոբափորի ու նաև Կայան բերդի տեղադրության մասին, ինչպես տեսնում ենք, հայտնված են տարբեր կարծիքներ, որ կարոտ են հատուկ քննության: Մինչև վճռելը այս խնդրի վերջնական լուծումը՝ Արշակունյաց թագավորության հյուսիսային սահմանը, մենք ենթադրում ենք, իհարկե, որոշ վերապահությամբ, ըստ Խորենացու Աշխարհացույցի, որը վկայում է, որ Կուր գետը, իջնելով Տփղիս քաղաքի կողմից՝ Պարվար գավառն անցնելուց հետո հոսում է այնուհետև

«զԾոփոփոր և զԿողբոփոր և զՁորոփոր հոմանուն գետօք, մինչև ցՀնարակերտ քաղաք. զորս ի Հայոց հանեալ է»[4]:

Այս վկայությունը, որ համապատասխանում է Հյուբշմանի և Մարկվարտի վերոհիշյալ ենթադրություններին, ցույց է տալիս, որ Խռամի գետաբերանից սկսած հյուսիսում Արշակունյաց Հայաստանի սահմանն էր կազմում Կուր գետը:

«Ըստ այսմ,— ասում է Հյուբշմանը,— ստացվում է հետևյալ եզրակացությունը. Ձորոփորը գտնվում էր Աղստև գետի վրա, սրա հյուսիսային կողմումն էր Կողբոփորը, իսկ վերջինիս հյուսիսակողմումն էր Ծոբոփորը[5]: Արևելյան կողմից սրանք երեքն էլ սահմանակից էին Կուր գետին և գտնվում էին Կուրի բազուկների վրա, որոնք իրենց անունները ստա-

¹ Տե՛ս *Markwart*, Das Itinerar von Artaxata nach Armastica auf der römischen Weltkarte, Wien, 1928, էջ 28:

² Տե՛ս Ալիշան, Տեղագիր Հայոց Մեծաց, Վենետիկ, 1855, էջ 62. Ե. Լալայան, «Ազգագրական Հանդէս», Թիֆլիս, 1901. VII—VIII, էջ 275. Ս. Կանայանց. Անյայտ գաւառներ Հին Հայաստանի, Էջմիածին, 1914, էջ 152 և ուրիշ:

³ Տե՛ս Գ. Ե. Երզնկյանց, Կայան բերդ և Կայենո ձոր, «Ազգագրական Հանդէս», Գ գիրք, 1898, էջ 316—328:

⁴ «Աշխարհացոյց Մովսէսի Խորենացւոյ», հրատ. Սուքրյանի, էջ 28:

⁵ Հյուբշմանի թարգմանության բնագրում Ձորոփորից հետո գրված է Ծոբոփորը և ապա Կողբոփորը, որ, անշուշտ, պետք է համարել վրիպակ:

ցել էին նույն այդ գավառների անուններից: Սրանց հյուսիսակողմումն էր գտնվում Պարվար գավառը, որի մեջ էր Տփղիսը»[1]:

Աշխարհացույցի վկայություններից, ինչպես տեսանք, երևում է, որ Հնարակերտ քաղաքը գտնվել է Ծոբոփոր, Կողբոփոր և Ձորոփոր գետերի ու գավառների հարավ-արևելակողմում: Այս քաղաքի տեղագրության մասին ևս հայտնված են հակասական կարծիքներ:

Մակար եպիսկ. Բարխուդարյանը իր «Արցախ» գրքում մատնանշել է, որ Հնարակերտ ամրոցը գտնվում էր Կուր և Խրամ գետերի միջև և նրանց գետախառնուրդի մոտ, ուր կան և այժմ այդ մեծ բերդի ավերակները[2]: Այս կարծիքը, ինչպես ցույց է տվել Մարկվարտը, ճիշտ չէ:

Հիմնվելով արաբական աշխարհագրագետ Իստախրիի վկայությունների վրա[3], որի մոտ տարածությունը Տփղիսից մինչև Գարդման ցույց է տրված 12 փարսախ (մոտ 69 կիլոմետր), իսկ Գարդմանից մինչև Խունան, որը նա համապատասխան է համարում Հին: Հնարակերտին (կամ Հունարակերտին), 10 փարսախ՝ Մարկվարտը միանգամայն ճիշտ եզրակացրել է, որ Բարխուդարյանի մատնանշած բերդը, որն այժմ կոչվում է Ղըզ-Ղալա՝ հին Գարդմանն է, Շամքորից Խունան-Հնարակերտը, որն ըստ Իստախրիի գտնվում էր սրա և Գարդմանի 11 փարսախ հեռավորության վրա՝ պետք է լիներ դրեթե բուն միջանկյալ միջտեղում[4]:

Որ Մարկվարտի այս եզրակացությունը ճիշտ է, այդ պարզ երևում է Խորենացու Աշխարհացույցի վերոհիշյալ վկայությունից, ըստ որի Հնարակերտի տեղադրությունը մատնանշված է Կուր գետի ափին Ծոբոփոր, Կողբոփոր և Ձորոփոր գետերի ու համանուն գավառների հարավ-արևելակողմում, այսինքն՝ Աղվանից աշխարհի արևմտյան ծայրում:

Հնարակերտ քաղաքից հետո Արշակունյաց թագավորության սահմանները, ինչպես վկայում է Փավստոսը, հասնում էին մինչև Կուր գետը և այստեղ սահմանագլուխ գավառներ էին Կողթը, Գարդմանաձորը, Շակաշենը և Ուտի Առանձնակը: Հիշատակելով Արշակ Բ-ի դեմ ապստամբած այս գավառները, որ Պապ թագավորի ժա-

¹ Հյուբշման. Հին Հայոց տեղւոյ անունները, էջ 238:

² Մակար Բարխուդարյանց, Արցախ, Բաքու, 1895, էջ 398—399 և 436: Տե՛ս նաև *Laurent J.*, L'Arménie entre Byzance et l'Islam, Paris, 1919, էջ 29 և նրա քարտեզը:

³ Տե՛ս *al Istachri*, éd de Goeje, էջ 193:

⁴ Տե՛ս *Markwart*, Das Itinerar von Artaxata nach Armastica, Wien, 1928, էջ 30—31:

ժանակ վերանվանել էր Մուշեղ Մամիկոնյանը՝ Փավստոսը դրանց մասին տալիս է հետևյալ կարևոր տեղեկությունները.

«Նա [Մուշեղը] պատերազմեց նաև Աղվանից երկրի դեմ և նրանց սաստիկ ջարդ տվեց։ Նաետ խլեց նրանցից շատ գավառներ, որ վերցրել էին իրենցից՝ Ուտին, Շակաշենը, Գարդմանաձորը, Կողթը և սրանց շուրջը գտնվող սահմանակից գավառները։

Եվ սահման դարձրեց իրենց երկրի և Աղվանքի միջև Կուր գետը, ինչպես որ առաջ էր»։

[«Առնէր պատերազմ ընդ երկիրն Աղուանից. հարկանէր զնոսա ի հարուածս անհնարինս։ Եւ թափէր ի նոցանէ բազում գաւառս, զոր հատեալ էր նոցա ի նոցանէն՝ զՈւտի, զՇակաշէն և զձորն Գարդմանայ, զԿողթ և այլ որ շուրջն էին զնովաւ սահմանք գաւառք։ Եւ զԿուր գետ՝ որպէս և յառաջն լեալ էր, ընդ երկիրն Աղուանից և ընդ երկիրն իւրեանց սահման արարեալ կացուցանէին»][1]։

Ապստամբած Աղվանից գավառների հաջորդականությունը հավանական է ենթադրել արևմուտքից դեպի արևելք հետևյալ կարգով՝ նախ Կողթը, որը լինելով, ըստ Խորենացու Աշխարհացույցի, Արցախի ամենահյուսիսային գավառը՝ սահմանակից է եղել, ըստ երևույթին, Գարդմանաձորին։ Այս վերջինը, հավանաբար, ոչ մի կապ չունի Գարդման բերդի հետ, որը, ինչպես տեսանք, գտնվում էր Կուր և Խրամ գետերի միջև։

Գարդմանաձոր գավառի մեջն էր հին Գարդման ավանը, որի ավերակները հայտնի են այժմ Գրթմանիք անունով և գտնվում են Տամբոր գետի արևելյան մի բազկի վրա՝ այժմյան Գետաբեկի հարավ-արևելակողմում[2]։

Գարդմանին սահմանակից էր Արշակունյաց թագավորության Շակաշեն ծայրագավառը, որի մեջ իններորդ դարում հիմնադրված էր նշանավոր Գանձակ քաղաքը։ Իսկ Շակաշենի արևելակողմումն էր Արշակունյաց Հայաստանի Ուտի ծայրագավառը, որը Խորենացու Աշխարհացույցի մեջ անվանված է Ուտի Առանձնակ։ Այս գավառի մեջն էր Կավատ Ա.-ի (488—531 թ.) վերանորոգած ու ամրացրած Պարտավ կամ Պերող-Կավատ քաղաքը[3], որը հետագայում դառավ Առան-Աղվանքի գլխավոր քաղաքը։

---

[1] Փավստոս, V, գլուխ ԺԴ, էջ 215։

[2] Տե՛ս Մ. Բարխուդարյանց, Արցախ, էջ 301—302։

[3] Տե՛ս Markwart, Eranschahr, Berlin, 1901, էջ 118։

Սկսած Ուտի Առանձնակից՝ Արշակունյաց թագավորության սահմանը ձգվում էր հյուսիս-արևելքից դեպի հարավ-արևելք մինչև Կասպից ծովը Կուր գետի երկարությամբ։

Իբրև Արշակունյաց թագավորության ծայրագավառներ Մ. Բարխուդարյանցը այս կողմերում համարում է «Աղուէ», Ռոգպատյան, Արանռոտ և Մուխանք գավառները[1], որոնցից առաջին
իրեքը Խորենացու Աշխարհացույցի մեջ համարվում են Ուտի աշ-
խարհի գավառներ, իսկ վերջինը՝ Արցախի։ Պետք է սակայն ասել,
որ Աղվանքի հին աշխարհագրությունը դեռևս գրեթե ուսումնա-
սիրված չէ, ուստի և Բարխուդարյանցի կռահումները, որ հիմնավոր-
ված չեն, կարող են հաստատման փաստական ապացույցներով։
Փավստոսի մոտ Արշակունյաց թագավորության հյուսիս-արև-
ելյան կողմերում որպես սահմանագլուխ երկիր հիշատակված է
Կասպից աշխարհը, որի մեջ էր Փայտակարան քաղաքը։
1. Փավստոս, IV, գլ. Ծ, էջ 164, Վենետիկ, 1889՝
«Հայոց թագավորից [Արշակ Բ-ից] անջատվեց նաև Կազբից
աշխարհը»։
[«յետս եկաց յարքայէն Հայոց և աշխարհն Կազբից»]։
2. Փավստոս, V, գլ. ԺԴ, էջ 215՝
«Կասբերի մասին։— Ապա Մուշեղ սպարապետը խստիվ վրեժ
առավ Պարսից երկրից (*), Փայտակարան քաղաքից, որով-
հետև նրանք ևս ապստամբել էին և դավաճանել Հայոց թագա-
վորին։ Սպարապետ Մուշեղ զորավարը, հասնելով այնտեղ՝
նրանցից շատերին պատժեց և գլխատեց, շատերին գերի վեր-
ցրեց, մնացածներին էլ հարկատու դարձրեց ու նրանցից պա-
տանդներ վերցրեց և այնտեղ վերակացու կուսակալներ թողեց»։
[«Յաղագս Կասպից։— Ապա խնդրէր զվրէժն մեծապէս սպա-
րապետն Մուշեղ յերկրէն Պարսից և ի Փայտակարան քաղաքէ,
փոխանակ զի և նոքա նշկահեցին ստեցին արքային Հայոց։
Հասեալ զբազումս ի նոցանէ գլխով պատուհասս առնէր սպա-
րապետն զօրավարն Մուշեղ, զբազումս ի նոցանէ գերէր, և
զմնացորդսն ի հարկի կացուցանէր և առնոյր պանդանդս ի
նոցանէն և անդ ոստիկանս վերակացուս թողոյր»]։
Արշակ Բ-ի դեմ ապստամբած Կասպից երկիրը, որ Արշակուն-
յաց թագավորության հյուսիս-արևելյան ծայրամասն էր՝ Խորենացու
Աշխարհացույցի մեջ անվանված է Կասպից աշխարհի մայրաքաղա-

---

[1] Տե՛ս Մ. Բարխուդարյանց, Պատմութիւն Աղուանից, Վաղարշապատ, 1902, «Աղուանից երկիր» քարտեզը։

քի անունով՝ Փայտակարան աշխարհ։ Համաձայն Աշխարհացույցի՝ Փայտակարանն ունեցել է տասներկու գավառ. մատնանշված այդ գավառների տեղերը, բացի Վարդանակերտից, դեռևս որոշված չեն։

Փավստոսի մոտ հիշատակված հին Փայտակարան քաղաքը, ինչպես մատնացույց է արել Մինորսկին[1], գտնվել է այժմյան Շուշի քաղաքից դեպի հարավ-արևելք ավերակների այն վայրում, որ այժմ անվանվում է Միլ-ի Բայլաքան։ Իսկ Վարդանակերտ քաղաքը, որի անունով է կոչվում Փայտակարանի Վարդանակերտ գավառը, ինչպես ենթադրում է դարձյալ Մինորսկին[2], գտնվել է Արաքս գետի աջ ափին, այժմյան Ալտան կոչվող ավերակների վայրում (մոտավորապես 70—80 կիլոմետր Կուրի և Արաքսի միախառնման տեղից դեպի հարավ-արևմուտք)։ Արաբական աշխարհագրագետ Իստախրիի մոտ տարածությունը Վարսան-Վարդանակերտի և Բայլաքան-Փայտակարանի միջև ցույց է տրված 7 արաբական փարսախ, այսինքն՝ մոտ 40 կիլոմետր[3]։

Որոշվում են մոտավորապես նաև Փայտակարանում գտնվող երեք գավառների՝ Աթշիբագավանի, Սպանդարանպերոժի, Որմըզդպերոժի տեղերը, որոնք Ղևոնդի Պատմության մեջ անվանված են Ըթշիբագուան, Սպատարոմն-Փերոզ և Որմիզդ-Փերոզ[4]։ Ղևոնդ պատմագրի վկայության բովանդակությունից երևում է, որ նաև այս երեք գավառները, ինչպես և վերոհիշյալ Վարդանակերտը, գտնվել են Արաքս գետի ստորին հոսանքի հարավ-արևելյան կողմում։

Մենք տեսանք, որ Արշակունյաց թագավորության սահմանը Ուրմիա լճի արևելակողմում մոտ էր Թավրիզ քաղաքին և հասնում էր մինչև այժմյան Աջի-չայ գետը։ Վստահորեն կարելի է, ուրեմն, ենթադրել, որ Արշակունյաց Հայաստանում գտնվում էին ոչ միայն Մարանդ գավառը, որը Խորենացու Աշխարհացույցի մեջ հիշատակված է իբրև Վասպուրական աշխարհի գավառ, այլև Մարանդ գավառի հյուսիսակողմում գտնվող ամբողջ այժմյան Ղարադաղը և սրանից դեպի արևելք գտնվող շրջանները, ըստ երևույթին, մինչև Կասպից ծովը։

Արշակունյաց թագավորությունը, որը հռոմեական-պարսկական 298 թվի դաշնագրությունից հետո վերահաստատվել էր իր

[1] Տե՛ս Hudud al Atam, The regions of the world. translated and explained by V. Minorsky, London, 1937, էջ 398։

[2] Նույնը, էջ 395։

[3] Տե՛ս al Istachri, éd. de Goeje, էջ 192։

[4] «Պատմութիւն Ղևոնդեայ մեծի վարդապետի Հայոց», Ս.-Պետերբուրգ 1887, գլ. ԺԸ, էջ 101—102։

հին ընդարձակ սահմաններում, ինչպես տեսնում ենք, լայն ու արձակ երկիր էր։ Եվ ուշագրավ ու հետաքրքիր է այն, որ Հայաստանն իր վերոհիշյալ սահմաններում մոտավոր կերպով համապատասխանում է Արտաշեսյան կամ ավելի ճիշտ՝ Տիգրանյան ժամանակաշրջանի Հայաստանին, որի սահմանները նկարագրել է Ստրաբոնը հետևյալ իր վկայության մեջ.

«Հայաստանի հարավային մասերը,—վկայում է Ստրաբոնը,— տարածվում էին մինչև Տավրոսը [=Մասիսը], որը բաժանում էր այն ամբողջ Եփրատի ու Տիգրիսի միջև գտնվող երկրից, որ կոչվում է Միջագետք. նրա արևելյան մասերը հասնում են մինչև Մեդիա և Ատրպատական. հյուսիսում գտնվում են Կասպից ծովի վերևի Պարախոաթրաս լեռները. նաև աղվաններն ու իբերները և Կովկասը, որն ընդգրկում է այդ ժողովուրդները ու հասնում մինչև Հայաստան. նա ձըգվում է նույնպես մինչև Մոսխիկյան ու Կողքիսյան լեռները և կիպ մոտենում է Տիբարանյաններ կոչվող ցեղերին. իսկ արևմտյան կողմից Հայաստանի սահմանն են կազմում նույն այդ ցեղերը և Պարիադրեսն [=Պարխարը] ու Սկյուդիսեսը մինչև Փոքր Հայքը և Եփրատի հունը, որը Հայաստանը բաժանում է Կապադովկիայից և Կոմմագենից»[1]։

Հայաստանի այս նկարագրությունը, ինչպես կարծում են, Ստրաբոնը տվել է, հետևելով Թեոփանես Միտիլենացուն, որը մասնակցած լինելով Պոմպեյոսի արևելյան արշավանքներին՝ նկարագրել է Հայաստանը և Անդրկովկասյան երկրները որպես ականատես։

Աշխարհագրական վերոհիշյալ մեր դիտողությունները ցույց են տալիս, որ Արշակունյաց Հայաստանը 298 թվականից հետո ունեցել է գրեթե նույն սահմանները, ինչ որ Տիգրան Մեծի ու Պոմպեյոսի ժամանակ։ Ավելի ևս ուշագրավ է այն, որ պատմական Հայաստանի աշխարհագրական նկարագրությունը տվել է ճշգրիտ կերպով, գրեթե նույն սահմաններում, Աշխարհացույցի հեղինակ Մովսես Խորենացին, որն իր այդ աշխատությունը գրել էր Արշակունյաց Հայաստանի անկումից մի քանի հարյուր տարի հետո։

[1] Strabo, XI, 14, 1.

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՎԵՑԵՐՈՐԴ

ՖԵՈԴԱԼԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԱՐՇԱԿՈՒՆՅԱՑ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Ֆեոդալիզմի ընդհանուր գաղափարը:— Խոշոր կալվածատիրության և ազնվականության գերակշռող դերը:— Նախարարական իշխանությունները:— «Նախարար» բառի ստուգաբանությունը:— Նախարարների դասի տարբեր շերտերը:— Բդեշխություններն իբրև ամենաբարձր կարգի իշխանություններ:— Բդեշխների և առաջին կարգի մեծամեծ նախարարների «աշխարհակալք» կամ «աշխարհատեարք» տիտղոսը:— «Բիւրաւորք» և «հազարաւորք»:— «Աւագ» և «կրտսեր» նախարարներ:— Նախարարությունների թիվը:— Առանձին նախարարությունների ներքին կազմակերպությունը:— «Տանուտէր», «տէր» կամ «նահապետ»՝ իբրև նախարարական տոհմի գլխավոր:— «Աւագ տանուտէր»:— «Սեպուհ» և «աւագ սեպուհ» իբրև նախարարական տոհմի անդամներ:— «Տանուտէր»-ների կամ «նահապետ»-ների ընտրության կարգը և նրանց իշխանությունը:— Զորանամակ:— Նախարարական երկրների ամրոցները ու բերդերը:— «Դահ» կամ «Դահոյք»:— Նախարարները որպես վասալներ և «արքունի գործակալներ»: Արշակունիների «ոստան»-ը:— Նրանց թագավորական իշխանությունը:— Նախարարական «ծառայութիւն»-ը:— Գլխավոր «գործակալութիւն»-ները.— «մարդպետութիւն».— «մաղխազութիւն.— «հազարապետութիւն».— «սպարապետութիւն.— «մեծ դատաւորութիւն»:— «Մեծի դատաւորութեան գործակալութիւնն» իբրև «ձեռական իշխանութիւն»:— Պալատական այլևայլ պաշտոններ:— «Աշխարհաժողով»-ներ:

Արշակունիների թագավորության ժամանակաշրջանում, ինչպես հայտնի է մեզ հին հայ աղբյուրների հաղորդած տեղեկություններից, Հայաստանում զարգացել և վերջնականապես ձևավորվել էր նախարարական կամ ֆեոդալական կազմակերպությունը:

Տնտեսագիտական նորագույն երկերում մատնանշվում է, սովորաբար, որ ֆեոդալիզմի տնտեսական հիմքը կազմում է արտադրության ֆեոդալական եղանակը՝ բնական կամ նատուրալ տնտեսությունը, որը պետք է հակադրել ո՛չ թե փողային, այլ ապրանքային տնտեսությանը: Ֆեոդալիզմի ժամանակ թեև գոյություն են ունեցել փոխանակություն, փող, քաղաքներ և առևտուր, սակայն սրանց

նշանակությունը եղել է երկրորդական: Արտադրող հիմնական դասակարգը եղել է գյուղացիությունը, որը, մեծ մասամբ, գտնվել է ճորտական վիճակում, և, որոշ չափով, նաև արհեստավորությունը:

Բացի տնտեսական այդ հիմքից, իբրև ֆեոդալիզմի էական ու գլխավոր հատկանիշ մատնացույց է արվում խոշոր կալվածատիրության և ազնվականության գերակշռող դերը՝ թե տնտեսական և թե պետական-իրավական:

Ֆեոդալական պետությունները բաժանված են եղել բազմաթիվ մեծ և փոքր շրջանների, որոնց մեջ պետական իշխանությունը պատկանել է, գլխավորապես, կալվածատեր իշխաններին, որոնք անվանվել են սենյորներ: Հողատիրությունը պարունակել է, ուրեմն, իր մեջ թե մասնավոր և թե հանրային իրավունքի տարրեր, և խոշոր կալվածատերերը եղել են ո՛չ միայն հողատեր, այլև դատավոր, կառավարիչ, իսկ հաճախ լիակատար պետ և իշխան իրենց երկրների սահմաններում: Առանձին ու ինքնիշխան այս շրջաններն անվանվել են Ֆրանսիայում՝ seigneurie, Անգլիայում՝ manor, Գերմանիայում՝ Grundherrschaft և Ռուսաստանում՝ боярщина: Հասկանալի է, իհարկե, որ խոշոր կալվածատեր սենյորը, օժտված լինելով պետական կարգի իրավունքներով, եղել է անմիջական տեր ու տնօրեն այն բնակչության, որը գտնվել է նրա երկրամասում:

Գյուղացիության կախումը նրանից ունեցել է, ինչպես իրավացի կերպով շեշտում են տնտեսագետները, արտատնտեսական բնույթ՝ պայմանավորված անմիջական իշխանությամբ ու հպատակությամբ[1]:

Արդ՝ ֆեոդալական հասարակարգի գլխավոր ու անհրաժեշտ այս հատկանիշներն ուներ Արշակունյաց Հայաստանում նախարարական կազմակերպությունը: Այստեղ ևս իշխող դասը բաղկացած էր խոշոր կալվածատերերից, որոնք իրենց երկրներում ունեին քաղաքական իշխանություն և «տէրական», այսինքն՝ սենյորական, իրավունքներ: Ազնվականների այս բարձր դասը, որ համապատասխանում է միջնադարյան Եվրոպայի սենյորներին, անվանվում է հնագույն հայ աղբյուրներում՝ «նախարարք», «նախարարազունք» և «ազգք», «տոհմք» կամ «տունք նախարարացն», իսկ նրանց պետական կարգի իշխանությունը, նաև այդ իշխանության տակ գտնվող երկրներն անվանվում են «նախարարութիւնք»:

«Նախարար» բառի ստուգաբանությունը և ծագումը երկար ժա-

[1] Տե՛ս Մանանդյան Հ., Ֆեոդալիզմը Հին Հայաստանում (Արշակունիների ու մարզպանության շրջան), Երևան, 1934, էջ 24—25:

մանակ մնում էին մութ և անհասկանալի: Գիտական հնագույն երկերում այդ բառը սովորաբար մեկնել են իբրև նախ-արար և համապատասխան են համարել լատինական prae-fectus բառին: Ինճիճյանն իր հնախոսության մեջ կարծում է, որ

«անունս **նախարար** ինքնին յայտ առնէ ածանցեալ յանուանցըս **նախ** և **արար**. իբր նախկին ի յարարս, կամ նախակարգեալ իշխան, որպիսի էր և առ լատինս անունս prea-fectus, ցուցանելով զյառաջագահութիւն և զնախադասութիւն բան զայլս»[1]:

Էմինը Խորենացու ռուսերեն իր թարգմանության հավելվածում ընդունել էր նույն այս մեկնությունը[2]:

Նախարար բառի այդ հին ստուգաբանությունն առաջին անգամ մերժել է Ն. Մառը և մատնանշել, որ այդ բառի սկզբնական ձևը եղած պիտի լիներ **նահարար**, համապատասխան նահապետ և նահանգ բառերին: Նախարար, այսինքն՝ **նահարար**, նրա կարծիքով, նշանակում է երկրի, շրջանի (=nah) տեր, գլխավոր (=rar=պրս. radh, զնդ. ratu)[3]: Նիկ. Ադոնցը, ընդունելով Մառի այս մեկնությունը՝ կարծում է, որ **նահարար** բառի երկրորդ մասը ծագում է ո՛չ թե ratu, այլ պրսկ. dar արմատից[4]:

Մառի և Ադոնցի ենթադրությունները նախարար բառի ծագման մասին nahadar-ից՝ վերջերս վերջնականապես հաստատվեցին: Ուղիղ մեկնությունը տվել է Մեյեն սողդիերեն լեզվի օգնությամբ, որի մեջ պահպանվել է nâfdâr բառը «ժողովրդի կամ ցեղի պետ» նշանակությամբ: Նույն բառի պարթևական ձևը նա ենթադրում է nâfadâra՝ náfa «պորտ, ցեղ» և dâra՝ «պետ, գլխավոր»:

Պարթևական nâfadára-ն, նրա կարծիքով, հայերենում դառել է նահարար, սակայն ժողովրդական ստուգաբանությամբ **նահ**-ը վերածվել է **նախ**-ի և ստացվել նախարար ձևը[5]: Ուշագրավ է սակայն, որ Benveniste հյուսիս-արևմտյան պահլավերեն բարբառում մատնանշվում է naxva-dâra բառի գոյությունը, որն ըստ հայկական ձայնական օրենքների կարող է դառնալ **նախարար**[6]:

---

[1] Ղ. Ինճիճյան, Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի, հատ. Բ, էջ 77:

[2] *Н. Эмин*, История Армении Моисея Хоренского, М., 1893, էջ 298:

[3] Տե՛ս „Зап. Вост. Отд. Имп. Рус. Арх. Общ.", т. XI, 1898, էջ 170—173:

[4] *Адонц*, Армения в эпоху Юстиниана, էջ 451:

[5] „Revue des études arméniennes", II, fasc. I, Paris, 1922 էջ 1—3:

[6] Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, է հատոր, Երևան, 1935, էջ 170:

Նախարարություններն Արշակունյաց Հայաստանում իրենց մեծությամբ ու նշանակությամբ տարբեր էին իրարից, ինչպես և սենյորիաները միջնադարյան Եվրոպայում:

Ֆեոդալական պետության վերին շերտը կազմում էին Արևմտյան Եվրոպայում խոշոր և առաջնակարգ իշխանությունները, որոնք փաստորեն գրեթե անկախ էին թագավորից կամ կայսրից: ԺԱ դարում սրանք անվանվում էին Ֆրանսիայում դքսություններ (duchés), կամ կոմսություններ (comtés): Սրանցից ներքև գտնվում էին երկրորդ կարգի խոշոր սենյորիաները, որոնք անվանվում էին բարոնություններ (baronnies): Սրանք, մեծ մասամբ, խոշորագույն իշխանությունների ֆեոդալներն էին: Ավելի ցածում էին դերակոմսությունները (vicomtés) և դղեկատերերը (châtellenies), իսկ բոլորովին ներքևում՝ բազմաթիվ մանր սենյորիաները, որոնք վասալներն էին վերոհիշյալ ավելի զորեղ ֆեոդալների:

Այս դասակարգությունը կամ աստիճանավորումը («հիերարխիան»), որ կարևոր մի հատկանիշն էր Արևմտյան Եվրոպայի ֆեոդալիզմի, գոյություն է ունեցել նաև Հին Հայաստանում:

Առաջին կարգի մեծ իշխանություններին համապատասխանում են այստեղ բդեշխությունները: Քաղաքականապես սրանք գրեթե անկախ իշխանություններ էին, բայց գտնվում էին Հայ Արշակունիների գերիշխանության տակ:

Բդեշխների իշխանություններն ընդարձակ երկրներ էին Հայաստանի սահմանային շրջաններում: Նրանց պարտականությունն էր Հայաստանի սահմանների պաշտպանությունն արտաքին թշնամիներից և այդ պատճառով նրանք անվանվում էին «սահմանապահք», «սահմանակալք», նաև «կողմնապահք» և «կողմնակալք»:

Ագաթանգեղոսի և Փավստոսի վկայություններից, ինչպես տեսանք, հայտնի է, որ Արշակունիների ժամանակ Հայաստանում կային չորս բդեշխություններ՝

«առաջինը՝ սահմանակալը Նոր-Շիրականի կողմում, երկրորդը՝ սահմանակալը Ասորեստանյայց կողմում, երրորդը՝ Արվաստանի կողմում և չորրորդը՝ Մասքթաց կողմում»[1]:

Ագաթանգեղոսը և Փավստոսը վկայում են, որ բդեշխները «գահերէց» իշխաններ էին «արքունի տաճարին»: Պարզ է, որ սրանք իբրև «գահերէց» իշխաններ՝ իրենց դիրքով բարձր են եղել մյուս նախարարություններից: Նիկ. Ադոնցը նույնիսկ ենթադրում է, որ նրանք չէին մտցված նախարարությունների համար սահմանված

---

[1] Ագաթանգեղոս, գլուխ ՃԻԶ (873), էջ 459—560, Տփղիս, 1909:

գահակարգի շարքը, որովհետև համարվել են գրեթե հավասար թագավորին: Ադոնցի կարծիքով՝ բդեշխները նախկին փոքր ու ինքնուրույն թագավորությունների միապետներն էին, որոնք Տիգրան Մեծից սկսած ճանաչել էին հայ թագավորների քաղաքական գերիշխանությունը[1]:

Որ բդեշխները, իբրև թագավորներին գրեթե իրավահավասար իշխաններ, նախարարական կազմի շրջանակից դուրս են համարվել՝ այդ երևում է, ի միջի այլոց, նրանից, որ նրանք Արշակունյաց թագավորության մեջ չեն վարել գործակալական պաշտոններ:

Իբրև ամենաբարձր կարգի իշխաններ՝ աղբյուրների մեջ բդեշխներն անվանվում են «աշխարհատերք» կամ «աշխարհակալք»: Այսպես էր անվանվում իշխանական ամենաբարձր խավը նաև Սասանյան Պարսկաստանում: «Աշխարհակալ»-ները (=sathradhâr), լինելով վասալներ Պարսից թագավորների, գրեթե անկախ իշխաններ էին և անվանվում էին նույնիսկ թագավորներ, որովհետև իրենց սյուզերենի պաշտոնական տիտղոսն էր «թագավորների թագավոր»[2]:

Այս լուսաբանությունը հիմնապես տարբեր է Ադոնցի տված բացատրությունից: Ադոնցի կարծիքով՝ šathradhâr Սասանյան Պարսկաստանի ո՛չ թե սատրապների և շրջանների կառավարիչների, այլ ավելի շուտ սոցիալական կամ դասային խմբի անուն է և համարժեք է նախարար գաղափարին[3]: Այս ենթադրությունը, որ հակասում է պատմական աղբյուրների վկայություններին, միանգամայն անհավանական է:

«Աշխարհակալ» և «աշխարհատէր» կամ «դաւառակալ» և «գաւառատէր» Հին Հայաստանում, բացի բդեշխներից, անվանվել են նաև առաջին կարգի մեծամեծ նախարարները: Այդպես են անվանված, օրինակ, Փավստոսի մոտ Մանաճիհր Ռշտունին, «Նահապետն Որդունեաց տոհմին» և «իշխանն Մանաւազեան տոհմին»: Պարզ է, որ վերոհիշյալ հոմանիշները գործ են ածվել առաջնակարգ նախարարական տոհմերի նաև մյուս մեծամեծների համար:

Նկատի ունենալով «աշխարհակալ» կամ «աշխարհատէր» իշխանների զինվորական ուժը՝ աղբյուրները նրանց անվանում են երբեմն «բիւրաւորք» և «հազարաւորք»:

«Բիւրաւորք» են նրանք, որոնց զինվորական ուժը 10.000-ի չափ էր, իսկ «հազարաւորք» նրանք, որոնց զինվորական ուժը հա-

¹ *Адонц*, Армения в эпоху Юстиниана, էջ 283:
² *A. Christensen*, L'Iran sous les Sassanides, Copenhague, 1944, էջ 101:
³ *Адонц*, Армения в эпоху Юстиниана, էջ 442 և 450—451:

զարից պակաս չէր: Այս տերմինների իմաստն ուղիղ է մեկնված
հայագիտական թե հին և թե նոր երկերում:
Սենյորական դասի ստորին կարգերը կազմում էին Հին Հայաս-
տանում «կրտսեր» նախարարները:
Աղբյուրների մեջ հիշվում են «աւագ և կրտսեր նախարարք» և
«մեծամեծ աւագանի»-ն: Ինճիճյանի և Ադոնցի կարծիքով՝ նախա-
րարները համարվել են «աւագ» կամ «կրտսեր» իրենց հզորության
կամ կարևորության համեմատ[1]: Կ. Կոստանյանցն իր «Հիստւածք»-ի
մեջ տալիս է հետևյալ տարբեր լուսաբանությունները, էջ 28—29.
«Երկու կարգի նախարարներ կային՝ ավագ և կրտսեր. ստա-
ցին կարգից էին այն նախարարները, որոնք Հայոց ամենահին
ազնվական կամ նահապետական ցեղերից էին առաջացել. իսկ
երկրորդ կարգից էին նրանք, որոնց նախահայրերը հասարակ
մարդիկ են եղել առանց ազնվածագումի և նախարարություն
են ստացել թագավորներից իրենց մի նշանավոր ծառայու-
թյան կամ հավատարմության համար»[2]:
Մյուս մեկնությունը գտնվում է դարձյալ «Հիստւածք»-ում,
էջ 36՝
«յուրաքանչյուր նախարարության մեջ կար ավագ նախարար՝
տանուտերը, և կրտսեր նախարար՝ սեպուհները»:
Վերոհիշյալ ենթադրություններից անհիմն է և անհավանական
Կոստանյանցի և Էմինի կահումը, որ իբր «կրտսեր» նախարարների
կարգին պատկանել են «հասարակ մարդիկ առանց ազնվական ծա-
գումի», որոնք նախարարություն էին ստացել թագավորից իրենց
ծառայության կամ հավատարմության համար: Այդ մասին աղ-
բյուրների մեջ ո՛չ վկայություններ կան, ո՛չ էլ որևէ ակնարկ:
Նախարարությունների բաժանումն «աւագ» և «կրտսեր» խմբե-
րի, ինչպես մատնանիշ է արել Ջավախովը[3], բավարար կերպով
լուսաբանված է Ղազար Փարպեցու մի վկայության մեջ: Փարպե-
ցու պատմելով, Վարդան Մամիկոնյանը Պարսից արքունիքում արտասանած իր ատենախոսության ժամանակ ի միջի այլոց ասում է.

¹ *Տե՛ս* Ինճիճյան, *Հնախօսութիւն*, *II*, էջ *90*. *Адонц*, Армения в эпоху
Юстиниана, էջ 453:
² Կար. Կոստանեանց, *Հիստւածք*, *գիրք Գ*, *Վիեննա*, *1877*, էջ *29*: *Համե-*
մատե՛ նաև Н. Эмин, История Армении Моисея Хоренского, М., 1893,
էջ 298:
³ *И. Джавахов*, Государственный строй древней Грузии и Армении,
СПб., 1905, էջ 110:

«Բազումք են յայս երից աշխարհաց յաղատորերոյ, որք են ասագ քան զիս և գահու և աւուրբք»[1]։

Այս վկայությունից դժվար չէ հետևցնել, որ «ասագ» են համարվել նախարարները կամ «գահու», կամ «աւուրբք»։ Եվ, իրոք, աղբյուրների վկայություններում, որ բերված են իմ «Ֆեոդալիզմը Հին Հայաստանում» աշխատության մեջ (էջ 43—44), «ասագ» մակդիրը գործ է ածված հենց այդ երկու իմաստով։

Հայտնի է արդեն, որ Արշակունյաց Թագավորության, ինչպես և Սասանյան Պարսկաստանի տիրապետության ժամանակ, հաջորդական կարգով որոշված էին նախարարական տոհմերի գահերն այդ տոհմերի հզորության կամ կարևորության համեմատ։ Գոյություն է ունեցել գահերի կարգը որոշող հատուկ ցուցակ, որն անվանվում էր Գահնամակ։ Ըստ այսմ՝ «ասագ»-ների խմբին են պատկանել այն հզոր ու առաջնակարգ նախարարները, որոնք «գահերէց» էին, իսկ «կրտսեր»՝ նրանք, որոնց գահերը եղել են երկրորդական կարգի։

Բացի այդ՝ վկայությունների մեջ երբեմն «ասագ» նախարար է անվանվում նախարարական տոհմի մեջ տարիքով մեծը, այսինքն՝ նահապետը կամ տանուտերը[2]։

Ազնվականության ամենաստորին շերտը կազմում էին Հին Հայաստանում «ազատ»-ները, որոնք վասալներն էին Արշակունիների կամ «ասագ» և «կրտսեր» նախարարությունների։

Պետք է առանձնապես նշել, որ աղբյուրների մեջ հիշատակվում են նախարարություններ, որոնք ենթարկվում էին բդեշխներին[3], և մանր իշխանություններ, որ խմբված էին մեծ նախարարությունների շուրջը։

Կալվածատեր ազնվականության ստորադաս խավերի վասալական կապը և կախումն ավելի բարձր և զորեղ սյուզերեններից Հին Հայաստանում անվանվել է «ծառայութիւն»։

Հիմնվելով աղբյուրների սխալ հասկացված վկայությունների վրա, պատմագիտական ու բանասիրական աշխատություններում նախարարությունների թիվը Հին Հայաստանում ենթադրում էին 900 կամ 400։ Սակայն Ն. Ադոնցը մանրախույզ կերպով ուսումնասիրել է այս խնդիրը և, օգտվելով աղբյուրների արժանահավատ

---

[1] Ղազար Փարպեցի, Տփղիս, 1904, գլ. ԻԶ, էջ 49։

[2] Խ. Սամվելյանի առարկությունները այս լուսաբանության դեմ (տե՛ս «Հին հայ իրավունքի պատմությունը», Երևան, 1939, էջ 210—211) ճիշտ չեն և հակասում են աղբյուրների վկայություններին։

[3] Տե՛ս Մանանդյան Հ., Ֆեոդալիզմը Հին Հայաստանում, էջ 44—45. նաև Փավստոս, IV, գլ. Ծ և V, գլ. ԺԵ։

տեղեկություններից, պարզել է արդեն, որ Հին Հայաստանում նախարարական տոհմերի թիվը, որոնք այս կամ այն չափով հայտնի
են եղել, պետք է հաշվել մոտավորապես մինչև հիսուն։

* * *

Արշակունյաց Հայաստանի ֆեոդալական կազ-
Ինչպես տեսանք, մակերպության գլխավոր և էական հատկանիշն այն էր, որ նախա-
րարական խոշոր կալվածքները ո՛չ թե սոսկ հողային գույք էին (զե-
մельное имущество, Grundvermögen), այլ պետական կարգի հո-
ղային «տէրութիւն»-ներ (земельное господство, Grundher-
rschaft)։
Ակադ. Ի. Ջավախիշվիլին ենթադրում է, որ Հին Հայաստանում
և Վրաստանում, ինչպես նաև Արևելքի ուրիշ ժողովուրդների մոտ,
պետական ու սոցիալական կազմակերպության վերաբերյալ տեր-
մինները ծագել են, մեծ մասամբ, նախորդ շրջանից[1]։
Եվ իրապես, յուրաքանչյուր նախարարական երկիր, որ ան-
վանվում էր «աշխարհ» կամ «գաւառ», պահպանել էր Հայաստա-
նում նաև տոհմական նախորդ շրջանի «տուն» անունը։ Իշխանու-
թյունն ամեն մի նախարարության մեջ պատկանում էր նախարա-
րական տոհմի ներկայացուցչին, որ կոչվում էր «տանուտէր»,
«տէր» կամ «նահապետ»։
Հոմանիշ այս անուններից «տանուտէր»-ը և «տէր»-ը տոհմա-
կան հնագույն շրջանի և արմենական ցեղթականության անվա-
նումներ են, իսկ «նահապետ»-ը փոխառություն է պարթևերենից և
համապատասխանում է պրթ. nâfapati բառին, որ նշանակում է
տոհմի, ցեղի պետ[2]։
«Տանուտէր»-երի կամ «նահապետ»-ների տիրական իշխա-
նությունը, նաև նրանց իշխանության տակ գտնվող երկրամասը,
անվանվել են «տանուտէրութիւն», «տէրութիւն» կամ «նահապետու-
թիւն»։
Որ «նահապետ»-ները կամ «տանուտէր»-երը իշխանական
իրավունքներ են ունեցել իրենց երկրներում՝ այդ երևում է, ի
միջի այլոց, նրանից, որ աղբյուրների մեջ նրանք անվանվում են
ոչ միայն «տանուտէր», «տէր» կամ «նահապետ», այլև «իշխան»,
իսկ նրանց երկրները՝ նաև «իշխանութիւն»,
Աղբյուրների մեջ հիշատակվում են երբեմն «ասագ տանու-

---

[1] *И. Джавахов*, Государственный строй древней Грузии и древней Армении.

[2] Տե՛ս *A. Meillet*, Revue des études arméniennes, II, fasc. I, էջ 1—3։

տէր»-երը։ Մենք տեսանք, որ նախարարներն «ազատ» են համարվել կամ «կրտսեր» «գահու և ատուրբք»։

Համապատասխան նախարարների այդ բաժանման՝ «ազատ տանուտէր» ևս անվանվել են, ինչպես այդ ուղիղ գիտել է Ջավախիշվիլին[1], այն «տանուտեր»-երը, որոնք իրենց գահով, գիրքով կամ տարիքով ավելի բարձր էին կամ մեծ։

Նախարարական տոհմի անդամները, որոնք գտնվում էին «տանուտէր»-ի կամ «նահապետ»-ի իշխանության տակ, անվանվում էին «սեպուհ»։

Ուշագրավ է առանձնապես «սեպուհ» բառի ստուգաբանությունը, որ առաջարկել է Մառը։ Մառի կարծիքով՝ «սեպուհ»-ը (=սեպուրհ, համեմատե՛ վրց. sazepuro) հայերենում իրանական փոխառություն է և համապատասխանում է զենդ. vīsaputhra բառին, որ նշանակում է տոհմի, ցեղի որդի։ Ուրեմն՝ նախարարական տոհմի առաջնորդն ու գլխավորն անվանվել է «նահապետ»=nâfapati, որ նշանակում է տոհմի, ցեղի պետ, իսկ մյուս անդամները՝ «սեպուհ»=vīsaputhra, այսինքն՝ տոհմի, ցեղի որդի[2]։

Մեր նախորդ աշխատություններից մեկում մենք մատնանշել էինք, որ «սեպուհ» են կոչվել ո՛չ միայն նախարարական տոհմերի, այլև Արշակունյաց թագավորական տոհմի անդամները[3]։ Փավստոսի Պատմության մեջ Գնելը, Արշակ թագավորի եղբոր որդին, անվանված է «մեծ սեպուհ Արշակունի» (IV, գլ. ԺԵ)։

Բացի «սեպուհ»-ից, Ղազար Փարպեցու Պատմության մեջ հիշվում է հաճախ նաև «ազատ սեպուհ» տերմինը։ Այս վերջին անունը քննության է առնված Ջավախիշվիլու և Ադոնցի վերոհիշյալ աշխատություններում։ Ջավախիշվիլու ենթադրությամբ՝ «ազատ սեպուհ» անվանվել են կամ նախարարական տոհմի կարևորության համաձայն և կամ ըստ տարիքի[4], իսկ Ադոնցի կարծիքով՝ «ազատ սեպուհ»-ը տարիքով ավագագույնն էր նախարարական տոհմում,

1 „Государственный строй“, էջ 110։

2 Քրիստենսենը կարծում է, որ Սասանյան Պարսկաստանում vāspuhrān անվանվում էին մեծ տոհմերի գլխավորները կամ, գուցե, ընդհանրապես անդամները։ Ինձ թվում է, որ ճիշտ է ո՛չ թե նրա առաջին, այլ երկրորդ ենթադրությունը։ Տե՛ս A. Christensen, L'Iran sous les Sassanides, Copenhagu, 1944, էջ 100 և 103—110։

3 Մանանդյան Հ., Դիտողություններ Հին Հայաստանի շինականների դրության մասին, Երևան, 1925, էջ 12։

4 „Государственный строй“, էջ 127։

որը «տանուտէր»-ի կամ «նահապետ»-ի մահից հետո ժառանգելու էր նրա իշխանությունը[1]։

Ինձ թվում է, որ այս երկու ենթադրությունն էլ հավանական են։ Փարպեցու վկայություններից, որ մեջ են բերված իմ «Ֆեոդալիզմը Հին Հայաստանում» աշխատության մեջ (էջ 51—52), կարելի է կռահել, որ «ազատ սեպուհ» կոչվել է կամ որևէ ավագ նախարարության «սեպուհ»-ը և կամ նախարարական տոհմի մեջ «սեպուհ»-ներից տարիքով ավագը։

Ուշագրավ է նաև այն, որ «ազատ սեպուհ»-ները մասնակցություն են ունեցել պետական գործերում։ Փարպեցու վկայություններից երևում է, որ նրանք «տանուտէր»-երի հետ միասին հրավիրվում էին Պարսից արքունիք, մասնակցում էին «աշխարհաժողով»-ներում և կնքում էին «մատեանս» կարևոր գրությունները։ Նրանց գործակցությունը և այլ կառավարական խնդիրներում միանգամայն հավանական է, որովհետև «ազատ սեպուհ»-ները՝ որպես տանուտերության գահաժառանգներ, ստանձնելու էին նախարարական երկրի իշխանությունը։

Փավստոսը վկայում է, որ նախարարական շրջաններում Հայ Արշակունիներն իրենք էին կարգում «տանուտէր»-եր կամ «նահապետ»-ներ։ Սակայն Արշակունիների այդ միջամտությունը, ինչպես ցույց են տվել Ջավախիշվիլին և Ադոնցը, եղել է սոսկ ձևական[2]։ Արշակունիները ճանաչում էին միայն կամ հաստատում օրինական ժառանգների իրավունքները։

Յուրաքանչյուր «տանուտէր» կամ «նահապետ»՝ իբրև լիազոր տեր և կառավարիչ նախարարական երկրի, ուներ թե վարչական և թե դատական իշխանություն։ Հպատակ հարկատու բնակչությունից իր գործակալների միջոցով նա ստանում էր հարկեր և տուրքեր, ուներ սեփական զորք և առանձին դրոշ։ Փավստոսը, օրինակ, անվանում է «նահապետ»-ներին «գնդից և դրօշուց տեարք»[3]։

Գլխավոր իշխանությունների և նրանց վասալների զորքերի քանակի մասին պահպանվել է մի հին ցուցակ, որը հրատարակել էր Հ. Շահխաթունյանն իր «Ստորագրութեան» մեջ[4]։ Նույն ցուցակը, որ անվանվում է Զորանամակ, վերահրատարակված է նաև Ալի-

1 „Армения в эпоху Юстиниана“, էջ 472։

2 „Государственный строй“, էջ 101—103 և „Армения в эпоху Юстиниана“, էջ 464—465։

3 Փավստոս, IV, գլ. Գ։

4 «Ստորագրութիւն կաթողիկէ էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ», էջմիածին, 1842, II, էջ 58—59։

շանի «Այրարատ»-ում (էջ 424), Կոստանյանցի «Հիւսուածք»-ում (III, էջ 32) և Ադոնցի «Армения в эпоху Юстиниана» աշխատության մեջ (էջ 251—252):

Համաձայն այդ ցուցակի՝ պատերազմի ժամանակ հազար կամ հազարից ավելի զորք տալիս էին իշխանական 29 խոշոր շրջան, հինգ հարյուր կամ հինգ հարյուրից ավելի՝ 10 շրջան և հիսունից մինչև երեք հարյուր՝ 53 շրջան: Զինվորական ցուցակի այդ տեղեկությունները, դժբախտաբար, վավերական չեն, խիստ աղճատված են և, Ադոնցի կարծիքով (էջ 252—297), հորինված են արվեստորեն VII դարից հետո, հավանաբար, գրավոր հնագույն աղբյուրների օգնությամբ: Այնուամենայնիվ, նախարարական զորքերի թվի մասին հաղորդված վկայությունները, ինչպես ենթադրում է Ադոնցը, կարող են մասամբ ճիշտ լինել, որովհետև այդ տվյալները մոտավորապես համապատասխանում են Խորենացու, Զենոբի և Փավստոսի ցուցումներին:

Նախարարական իշխանություններն ունեին իրենց սեփական ամրոցները և բերդերը, որոնք վտանգի ժամանակ ծառայում էին իբրև ապաստարան: Այդ ամրություններն էին նրանց հենարանը և հույսը պատերազմի և ապստամբությունների ժամանակ:

Ինչպես հայտնի է Փավստոսի վկայություններից, մեծ խռովությունների ընթացքում, որ բռնկվել էին Հայաստանում Տիրան թագավորի ժամանակ, Արտավազդ և Վասակ Մամիկոնյանները պատսպարվել էին իրենց բերդերում, որ գտնվում էին Տայքում[1]: Ղազար Փարպեցին ևս վկայում է, որ Վարդանանց կռիվների ժամանակ

> «սեպուհ մի ուրձացի, որում անուն էր Վարազներսեհ, ... նենգեալ ուխտին սրբոյ՝ երթեալ ամրէր պշահաստանն Բզնունիքի և առեալ զամենայն կարասի շահաստանին՝ դիմեալ ամրանայր ի բերդն, որ անուանեալ կոչի Սագրայ բերդ՝ որ էր բերդ ամուր իշխանութեանն իւրեանց»[2]:

Բազմաթիվ նաև ուրիշ վկայություններից երևում է, որ բերդերը և ամրությունները, լինելով նեցուկ և հենարան ավատական առանձնացման՝ նույնպիսի կարևոր դեր են կատարել Հին Հայաստանում, ինչպես և միջնադարյան Եվրոպայում:

Նախարարական ամեն մի իշխանություն ուներ իր հատուկ

1 Փավստոս, III, գլ. ԺԸ, էջ 47 և IV, գլ. Բ, էջ 67:

2 Փարպեցի, III, ԿԷ, էջ 121:

կենտրոնատեղին, որ կոչվել է «դահ» կամ «դահույք», այսինքն՝ տեղ կամ «դահ»՝ աթոռանիստ կենտրոնի իմաստով:

Փավստոսի մոտ, օրինակ, Մանավազյան տոհմի իշխանի կենտրոնն անվանված է «բուն դահույից գեւղն»[1]:

* * *

Նախարարություններն Արշակունյաց Հայաստանում, լինելով ինքնուրույն իշխանություններ, գտնվում էին միաժամանակ իբրև վասալներ Հայ Արշակունիների իշխանության տակ: Իրենք՝ Արշակունիները նույնպիսի միահեծան «տէր» էին իրենց բնիկ երկրում, ինչպես «տանուտէր»-երը կամ «նահապետ»-ներն իրենց շրջաններում:

Արշակունիների բուն երկիրը, որ իր տարածությամբ շատ ավելի ընդարձակ էր, քան նախարարական «տէրութիւն»-ները, կոչվում էր «ոստան»:

Ն. Ադոնցը կարծում է, որ «ոստան» նշանակում է արքունիք, բառացի՝ շենք, համապատասխանում է միջնադարյան Եվրոպայի curtis dominicalis-ին և իբր թե այդպես են անվանվել նախարաբական և արքունի երկրների կենտրոնները[2]: Նրա ենթադրութիւնը, ըստ երևույթին, հիմնված է Հայկազյան լեզվի նոր բառգրքի վրա, որը «ոստան» բառի դիմաց դրվել է նույնպես «սեամ, դուռն արքունի» բացատրությունը: Սակայն հիմնավոր և համոզիչ է ո՛չ թե այս բացատրությունը, այլ այն մեկնությունը, որ տվել է «ոստան» բառին Հյուբշմանը[3]: Նրա լուսաբանությամբ՝ «ոստան» բառի ծագումն անպայման պարսկական է. չորրորդ դարում «ոստան» անվանվել է այն երկիրը կամ քաղաքը, որ գտնվել է Արշակունի թագավորի (կամ Արշակունյաց թագավորական տան որևէ իշխանի) իշխանության տակ: «Ոստան» էին, ինչպես հայտնի է, Արտաշատը, Վաղարշապատը և հետագայում նաև Դվինը:

Աղբյուրների վկայություններից դժվար չէ նաև հետևցնել, որ ո՛չ թե հին շրջանում, այլ միմիայն հետագա դարերում «ոստանը» գործ է ածվել նաև նախարարական կենտրոնների, օրինակ՝ Նախճավանի, Հադամակերտի և Դարույնքի համար: [«Ոստան» էին սակայն չորրորդ դարում ո՛չ միայն Արշակունիների կենտրոնավայրերը, այլև Արշակունիների «բնիկ սեփական» Այրարատ գա-

1 Փավստոս, III, գլ. Դ, էջ 10:

2 *Адонц*, Армения в эпоху Юстиниана, էջ 463:

3 Հյուբշման, Հին Հայոց տեղւոյ անունները, էջ 393—394:

վառը, նաև նրանց անմիջական իշխանության տակ գտնվող արքունի ամբողջ երկիրը][1]:

Արշակունիները, լինելով անմիջական «տէր» արքունի երկրի կամ «ոստանի», միաժամանակ բարձրագույն սենյորներ էին նախարարական ամբողջ Հայաստանի: Իբրև միապետներ, որոնց ստորադրված էին բդեշխությունները և բոլոր նախարարությունները՝ նրանք անվանվում էին «թագաւոր» կամ «արքայ Հայոց Մեծաց», իսկ նրանց իշխանությունը՝ «տէրութիւն թագաւորութեանն Հայաստան երկրին»[2]:

Նախարարությունները ճանաչում էին Արշակունիներին իրենց «տէր» և «թագաւոր Հայոց Մեծաց» բարձրագույն սենյորի իմաստով, ճիշտ այնպես, ինչպես և ֆեոդալական Եվրոպայում: Նրանք գործակցում էին Արշակունիներին, երբ հարկավոր էր պաշտպանել Հայաստանն արտաքին հարձակումներից: Թագավորը համարվում էր ընդհանուր ներկայացուցիչ միջազգային հարցերում. նա հայտարարում էր պատերազմ, կռում էր դաշինք, ուղարկում ու ընդունում էր դեսպանություններ և պահպանում հարաբերություններ օտար պետությունների հետ: Հավանական է սակայն ենթադրել, որ այս հարցերն անգամ քննվում էին սովորաբար «աշխարհաժողով»-ներում:

Համեմատելով նախարարությունների պարտականությունները Արշակունիների հանդեպ՝ Արևմտյան Եվրոպայի ֆեոդալների համապատասխան պարտականությունների հետ, դժվար չէ համոզվել, որ վասալական այդ հարաբերություններն ունեին ընդհանուր նման գծեր, որ ակներև են և անժխտելի:

Ուշագրավ է ամենից առաջ, որ Արշակունյաց Հայաստանում ևս ֆեոդալական դասակարգության ամեն մի ստորին խավի կապը և կախումն ավելի բարձր շերտից՝ արտահայտվել է նույն տերմիններով, ինչպես և միջնադարյան Եվրոպայում: Հայ նախարարները, ինչպես հայտնի է, անվանվում էին «ծառայ» Հայ Արշակունիների: Այն պարտականությունները, որ նրանք ունեին թագավորի հանդեպ, կոչվում էին «ծառայութիւն»: Այս «ծառայ» և «ծառայութիւն» տերմինները, ինչպես ցույց է տվել Ադոնցը, համապատասխանում են ֆեոդալական Եվրոպայի servus. servitium և Ռուսաստանի слуга, служба բառերին[3]:

Արևմտյան Եվրոպայում ֆեոդալական իշխանությունները

[1] Փավստոս, IV, գլ. ԺԹ և V, գլ. ԺԸ, էջ 133, 217:

[2] Նույնը, IV, գլ. Բ, էջ 67:

[3] *Адонц*, Армения в эпоху Юстиниана, էջ 459:

պարտավոր էին — և այդ նրանց հիմնական պարտականությունն
էր — պատերազմի ժամանակ տրամադրել սենյորին իրենց զին-
վորական ուժերը: Նույն պարտականությունն ունեին Արշակունյաց
Հայաստանում նախարարություններն Արշակունյաց թագավորների
հանդեպ: Ինքնըստինքյան հասկանալի է, որ Հայաստանում ևս,
ինչպես և ֆեոդալական Եվրոպայում, նախարարական իշխանու-
թյունները պարտավոր էին պաշտպանել իրենց սենյորի բերդերը
և հարկավոր դեպքերում նրան տրամադրել իրենց սեփական ամ-
րությունները:

Միջնադարյան Եվրոպայում վասալների գլխավոր պարտակա-
նություններից մեկն էր նաև նրանց պարտադիր ծառայությունն
արքունիքում կամ սենյորական պաշտոնավայրում: Նրանք ո՛չ
միայն իրենց ներկայությամբ առանձին փայլ էին տալիս սենյորի
պետական մեծ հանդեսներին, այլև գործակցում էին նրանց քաղա-
քական ու կառավարական գործերում, մասնակցում էին կարևորա-
գույն հարցերի քննությանը հատուկ ժողովներում և վարում էին
նույնիսկ արքունի որոշ պաշտոններ:

Նույնը մենք տեսնում ենք նաև նախարարական Հայաստա-
նում, գլխավորապես, Արշակունյաց թագավորության ժամանակ:
Նախարարների և «ազատ»-ների մեծ ու փոքր պաշտոններն
արքունիքում և «ոստան»-ում անվանվում էին «գործ» կամ «գործա-
կալութիւն», իսկ նախարարներն ու «ազատ»-ներն իբրև արքունի
պաշտոնյաներ իրենք կոչվում էին «գործակալ»-ներ:

Ամենակարևոր «գործակալութիւն»-ներն Արշակունյաց Հա-
յաստանում, որ հանձնարարված էին ավագ նախարարություններին
և կաթողիկոսությանը, անվանվում էին աղբյուրներում՝ «թագա-
կապ ասպետութիւն», «մարդպետութիւն», «մաղխազութիւն», «սպա-
րապետութիւն», «հազարապետութիւն» և «մեծ դատաւորութիւն»:
«Թագակապ ասպետութեան» իշխանությունը հանձնված էր
Բագրատունիներին: Իբրև «թագադիր» նրանք գահակալության
ժամանակ թագ էին դնում թագավորի գլխին:

Պարթևների թագավորության մեջ, ինչպես և Սասանյան Պարս-
կաստանում, թագադրության այդ իրավունքը տրված է եղել ազնը-
վական ամենաբարձր տներին, որ ազգական էին թագավորական
ընտանիքին: Համաձայն Թեոփիլակտոսի Պատմության վկայու-
թյան՝ թագադրի պաշտոնը հանձնված է եղել Սասանյան Պարս-
կաստանում Արգապետների ընտանիքին[1]:

[1] *Տե՛ս* Theophylaktos Simokattes, III, 8.

Բագրատունիների «ասպետ» տիտղոսի մասին, որ դեռ վերջնական կերպով մեկնված չէ, ուշագրավ է Սեբեոսի (Անանունի) վկայությունը, որը թեև առասպելական բնույթ ունի, սակայն հետաքրքիր լուսաբանություն է տալիս «ասպետության» բարձր պաշտոնին։

«Այն ժամանակ,— ասում է Սեբեոսը,— Արշակը իր որդուն, որի անունն էր Արշակ Փոքր, թագավոր կարգեց Հայոց աշխարհի Մծբին քաղաքում։........ Սրան ընդառաջ եկավ զորքով Արմենակի որդիներից մեծ նախարար Բագարատ Փառայյանը։ Սա մատուցեց նրան իբրև նվեր ոսկի ու արծաթ, զարդարեց նրան սաղավարտով ու վակասով, պսակեց նրան հայրենի թագով, նստեցրեց ոսկիապատ ու ակներով զարդարված գահի վրա և ամուսնացրեց նրան իր աղջկա հետ։

Արշակ թագավորը նրան դարձրեց ասպետ Հայաստան երկրի, և նա եղավ իշխան ու հրամանատար՝ ամբողջ թագավորության հրամանների գլխավոր. և նա տվեց նրան այն տերության վրա իշխանությունը»։

[«Յայնմ ժամանակի թագաւորեցոյց Արշակ զորդի իւր զԱրշակ Փոքր կոչեցեալ ի վերայ աշխարհիս Հայոց ի Մծբին քաղաքի........ Սմա ընդ առաջ ելանէ Բագարատն Փառազեան յորդւոցն Արամենակայ նախարար մեծ հանդերձ զաւրու։ Մատուցանէ նմա պատարագ ոսկի և արծաթ. և զարդարէ զնա ի սնդր և ի վակաս. պսակէ զնա ի թագ հայրենի և նստուցանէ զնա ի վերայ ոսկիապատ ականակուռ գահոյիցն. և տայ նմա զդուստր իւր ի կնութեան։

Զսա արար Արշակ արքայ ասպետ Հայաստան երկրին, որ էր իշխան և հրամանատար, ամենայն թագաւորութեանն հրամանաց գլուխ, և հայր արքայի, և եղբայր. որում ետ իշխանութիւն տէրութեանն այնորիկ»][1]։

«Գործակալ»-ական մեծ իշխանություն էր արքունիքում «մարդպետությունը»։ Ադոնցի ենթադրությամբ՝ «մարդպետ» նշանակել է սկզբում «մարդ» ցեղի պետ, այն հայտնի ցեղի, որ ապրում էր **Մարդաստանում**։ Հետագայում «մարդպետ»-ը դառել է նախարարական տոհմի տիտղոս[2]։ Համաձայն տոհմային այդ տիտղոսի՝ «մարդպետ»-ներին հանձնված արքունի «գործակալութիւն»-ն անվանվել է «մարդպետութիւն»՝ ճիշտ այնպես, ինչպես և Բագրա-

¹ **Սեբեոս**, *հրատ. Ստ. Մալխասյանցի, Երևան, 1939, գլ. Բ, էջ 9—10*։
² *Адонц*, Армения в эпоху Юстиниана, *էջ 3*

տունիների տոհմային «ասպետ» տիտղոսի համաձայն վերոհիշյալ
«գործակալութիւն»-ը կոչվել էր «ասպետութիւն»։
«Մարդպետութեան» մեծ իշխաններին հանձնարարված են եղել
Արշակունիների կանանոցի և արքունիքի վերակացությունը, թագավորական ամրությունների և բերդերի պահպանությունը և արքունի
գանձերի ու կալվածքների վերահսկողությունը։ Նրանց բարձր դիրքը
և բացառիկ հեղինակությունն արքունիքում պարզ երևում է նրանից, որ Փավստոսի մոտ նրանք անվանվում են «հայր» կամ
«հայր թագաւորի», իսկ նրանց պաշտոնը՝ «հայրութիւն»։
«Մարդպետութեան» վերաբերյալ աղբյուրների կարևորագույն
վկայությունները մեջ են բերված իմ «Ֆեոդալիզմը Հին Հայաստանում» աշխատության մեջ (էջ 66—67)։
Իբրև առանձին «գործակալութիւն» աղբյուրների մեջ հիշվում է
նաև «մաղխազութիւն»-ը։ «Մաղխազ», ինչպես ցույց է տվել Ն. Ադոնցը[1], նշանակում է «տէր, իշխան, թագաւոր» (=ասոր. malxazu)։
Մատենագրական վկայություններից հայտնի է, որ «մաղխազ»-ը տոհմային տիտղոսն էր Խորխոռունիների[2]։ Պարզ է, ուրեմն, որ արքունի այս «գործակալութիւն»-ը հանձնված է եղել
Խորխոռունիների նախարարական տոհմին և անվանվել է «մաղխազութիւն» ըստ նրանց տոհմային տիտղոսի՝ միանգամայն համապատասխան վերոհիշյալ «գործակալութիւն»-ներին, որոնց անունները ևս, ինչպես տեսանք, ծագել էին «ասպետ» և «մարդպետ»
տոհմային տիտղոսներից։
«Մաղխազութեան» պաշտոնը, ինչպես ենթադրում են, վերաբերվել է թագավորի անձի պաշտպանությանը։ «Մաղխազ»-ը որպես արքունի «գործակալ», Խորենացու վկայության համաձայն[3],
թիկնապահների գլխավորն էր։
Նույն պաշտոնը Սասանյան Պարսկաստանում անվանվել է
puštighbān-sālār, այսինքն՝ փուշտիպանների կամ թիկնապահների
հրամանատար[4]։
Մեծ «գործակալութիւն» էր նաև «հազարապետութիւն»-ը,
որին, հավանորեն, հանձնարարված է եղել արքունի երկրի տնտեսական բարեկարգման և գյուղացիական ու ելևմտական գործերի
վարչությունը։

¹ „Армения в эпоху Юстиниана“, *էջ 400*։
² **Մանանդյան Հ.**, *Ֆեոդալիզմը Հին Հայաստանում, էջ 68—69*։
³ **Խորենացի**, *II, գլ. է, Տփղիս, 1913, էջ 110*։
⁴ *A. Christensen*, L'Iran sous les Sassanides, 1944, *էջ 132, 395, 400*։

«Հազարապետ»-ի պարտականությունն էր, ըստ երևույթին, աջակցել երկրի շինարարական աշխատանքներին և շինական տընտեսության զարգացմանը։ «Հազարապետութեան» այս պարտականությունները կապված էին հարկահանության գործի հետ։ Հողի մշակությունը, առողման գործը և, ընդհանրապես, երկրի շեն վիճակը նշանակություն ունեին՝ իբրև հիմք և աղբյուր պետական բարեկեցության և պետական եկամուտների։

«Հազարապետ»-ի աշխարհախնամ գործունեության կարևոր այս կողմը շեշտված է, հատկապես, Փավստոսի Պատմության հետևյալ հատվածում.

«Եվ հազարապետության առաջին գործակալությունը տրվեց շինականներին շենացնող Գնունիների տոհմին՝ բոլոր երկրի հազարապետին, որը հոգատարությամբ խնամելու էր աշխարհը, երկիրը շեն պահող ու սնուցանող գյուղացիությունը»։

[«Եւ սկիզբն գործակալութեանն հազարապետութեանն աշխարհատեսն խնամակալութեանն, աշխարհաշէն աշխարհատած դեհկանութեան, շինականաշէն ազգն Գնունեաց՝ հազարապետն երկրին»][1]։

Իսկ նույն պաշտոնի ֆինանսական բնույթը կարելի է ենթադրել Նոր Կտակարանի հայերեն թարգմանությունից, որի մեջ հազարապետ բառը համապատասխանում է հունարեն οἰκονόμος («տնօրեն, տնտես») բառին[2]։

Իբրև մեծ «գործակալութիւն» աղբյուրների մեջ հաճախ հիշատակվում է «սպարապետութիւն»-ը, որը կոչվում է նաև «զորավարութիւն» և «սպարապետութիւն»։

Չորրորդ և հինգերորդ դարերում «սպարապետութեան» պաշտոնը ժառանգաբար վարել են Մամիկոնյանները։ Փավստոսի վկայությամբ՝ նրանք ընդհանուր հրամանատարներ էին։

«Ի վերայ իշխանութեանն բովանդակ՝ ի վերայ ամենայն զօրաց զօրավարութեանն բազմութեանն Հայոց Մեծաց»[3]։

Ալիշանի կարծիքը, որ «սպարապետ»-ը դերագույն առաջնորդն էր հետևակ զորքի, իսկ «ասպետ»-ը հեծելազորքի, սխալ է և անընդունելի[4]։ Աղբյուրների վկայություններից երևում է, որ պատերազմի ժամանակ Հայաստանի ամբողջ զորքը՝ արքունի տան և

[1] Փավստոս, IV, գլ. Բ, էջ 67։
[2] Տե՛ս Ա. Պետ. Դ, 10. Ա. Կորնթ. Դ, 1 և 2։
[3] Փավստոս, IV, գլ. Բ, էջ 68։
[4] Ալիշան, Այրարատ, էջ 423։

թե նախարարական իշխանությունների՝ կովել է «սպարապետ»-ի ընդհանուր հրամանատարության տակ։

«Սպարապետ»-ները, լինելով վերին հրամանատարներ «ի վերայ իշխանութեանն բովանդակ»՝ ունեին, բնականաբար, մեծ կշիռ և բարձր հեղինակություն։

Փավստոսի Պատմության մեջ մի ագամ միայն հիշվում է նաև «գործակալութիւն մեծի դատաւորութեանն» հետևյալ հատվածում.

«Բայց այդ ժամանակ դեռևս կենդանի էր սուրբ և մեծ ծե-
րունի Դանիել քորեպիսկոպոսը, որ սքանչելի մարդ էր։ Սա
եղել էր մեծն Գրիգորի աշակերտ և վերակացու ու գլխավոր
Տարոն նահանգի եկեղեցիների. Գրիգորի ձեռական իշխա-
նության՝ այդ մասի, կողմերի մեծ դատավարության գործա-
կալության իշխանությունը նա ուներ առանձին. բայց, բացի
այդ, նա վերակացու ու հրամանատար էր, տեսուչ ու հոգա-
բարձու էր Մեծ Հայքի բոլոր եկեղեցիների ամեն տեղ»։

[«Բայց յայնժամ դեռ ևս կենդանի էր ծերունի սուրբն մեծն
քորեպիսկոպոսն Դանիէլ, այր սքանչելի։ Աշակերտ եղեալ էր
սա մեծին Գրիգորի, վերակացու և գլխաւոր եկեղեցաց նա-
հանգին Տարօնո, Գրիգորի ձեռական իշխանութեանն՝ կող-
ման մասին գործակալութեանն մեծի դատաւորութեանն՝
ունէր զիշխանութիւնն զայն առանձինն. այլ վերակացու և
հրամանատար, տեսուչ և հոգաբարձու ամենայն եկեղեցեացն
Հայոց Մեծաց ընդ ամենայն տեղիս»][1]։

Այս հատվածից երևում է, որ «մեծի դատաւորութեանն» «գործակալութիւն»-ը համձնված է եղել հոգևորական բարձր իշխանության։ Պետք է սակայն նկատի ունենալ, որ դատական մի շարք հատուկ գործեր, ինչպես դժվար չէ կռահել աղբյուրների վկայություններից, վերաբերվել են, հավանորեն, թագավորի, իշխանների և նրանց ներկայացուցիչների անմիջական իրավասության։

Փավստոսի վկայության մեջ առանձնապես ուշագրավ է, որ
«մեծի դատաւորութեանն» «գործակալութիւն»-ը անվանված է նաև
«Գրիգորի ձեռական իշխանութիւն»։ Արդ՝ եթե «ձեռական» իշխա-
նությունը հոմանիշ է «գործակալական» իշխանության՝ կարող ենք
հաստատապես պնդել, որ «ձեռական իշխանութեան» վերաբերյալ
Փավստոսի մի ուրիշ վկայություն սխալ է մեկնվել և հիմք է ծա-
ռայել շփոթ և անընդունելի ենթադրությունների պատմական և
հայագիտական թե հին և թե նոր աշխատություններում։

[1] Փավստոս, III, գլ. ԺԴ, էջ 35։

Կարևոր այդ մյուս վկայությունը գտնվում է Փավստոսի Պատմության հետևյալ հատվածում.

«Այն ժամանակները սուրբ Ներսեսը շրջում էր իր ձեռական իշխանությունների մեջ. որովհետև տասնևհինգ գավառ ձեռական այն իշխանությանը ունեին իբրև ի բնե սեփական, որ առանձին ու ջոկ էր նրանց հատկացված։ Եվ այն երկրի գլխավոր գավառներն այս էին՝ Այրարատ, Դարանաղի, Եկեղյաց, Տարոն, Բզնունիք, Ծոփք և նրանց մեջ ու նրանց շուրջը եղածները»։

[«Զայնու ժամանակաւ սուրբն Ներսէս շրջէր ընդ իւր ձեռական իշխանութիւնսն. զի հնգետասան գաւառ զայն ձեռական իշխանութեան ունէին իբրև սեպհական ի բնմէ, առանձին առոչոգի նոցա էր կարգեալ։ Եւ յայն գաւառ գլխաւոր գաւառք այս էին՝ Այրարատ, Դարանաղէ, Եկեղեաց, Տարօն, Բզնունիք, Ծոփք և որ ընդ մեջ նոցա և որ շուրջ զնոքօք»][1]։

Հիմնվելով Փավստոսի այս վկայության վրա՝ ենթադրել են, որ վերոհիշյալ 15 գավառները պատկանել են կաթողիկոսներին իբրև տոհմային սեփականություն[2]։ Միանգամայն անժխտելի է, իհարկե, որ Գրիգոր Լուսավորչի տոհմն ունեցել է գյուղեր և կալվածքներ Հայաստանի զանազան մասերում, սակայն ենթադրել, որ հիշյալ 15 գավառները, այսինքն՝ Արշակունիների գրեթե ամբողջ «ոստան»-ը, կաթողիկոսական տան կալվածքներ էին՝ այդ, անշուշտ, չափազանցություն է և ակներև խեղաթյուրում Փավստոսի վկայության։ Խնդիրը շատ պարզ է։ Փավստոսի թե առաջին և թե այս երկրորդ վկայության մեջ «ձեռական իշխանութիւն» է անվանված «մեծի դատաւորութեան» «գործակալութիւն»-ը, որը «սեպհական» էր, այսինքն՝ ժառանգական և տոհմային, իբրև կաթողիկոսական տան հանձնված առանձին կամ «առոչոգի» իշխանություն։

«Հնգետասան գաւառ»-ները, ուրեմն, արքունի երկրի կամ «ոստան»-ի այն շրջաններն էին, որ տրված էին կաթողիկոսներին իբրև «մեծի դատաւորութեան» «գործակալական» իշխանության շրջաններ։

Բացի վերոհիշյալ մեծ «գործակալութիւն»-ներից, Արշակունյաց Հայաստանում գոյություն են ունեցել, նման միջնադարյան Եվրոպային, պալատական զանազան պաշտոններ, որ հանձնված են

[1] Փավստոս, IV, գլ. ԺԴ, էջ 117։

[2] Ինճիճյան, Հնախօսութիւն, Գ, էջ 275—276. Գարագաշյան, Քննական պատմութիւն, Բ, էջ 7. *Markwart*, Südarmenien, էջ 63 և ուրիշներ։

եղել «կրտսեր նախարարութիւն»-ներին, «սեպուհ»-ներին և կամ մանր ազնվականությանը։

Աղբյուրների մեջ այդ պաշտոններից հիշվում են, օրինակ, «սենեկապետ արքային», «շահախոռապետ», «որսապետ», «տակառապետ», «զինակիր», «կարապետ արքայի»։

Նախարարական Հայաստանին վերաբերյալ կարևորագույն ընդհանուր խնդիրները, ինչպես երևում է աղբյուրների վկայությունններից[1], քննվում էին «աշխարհաժողով»-ներում, որոնց սկզբնական ծագումը հավանական է ենթադրել նախկին տոհմային կյանքի հնագույն շրջանում։

Աղբյուրների մեջ հիշատակված ժողովների մեծագույն մասը գումարված է եղել կաթողիկոսի ընտրության համար[2]։

Կաթողիկոսական իշխանությանը, ինչպես հայտնի է, ենթակա էին թե արքունի «ոստան»-ի և թե նախարարական շրջանների եպիսկոպոսները։ Հասկանալի է, ուրեմն, որ կաթողիկոսական ընտրությունն ընդհանուր մի խնդիր էր, որ վերաբերում էր ո՛չ միայն արքունի երկրին, այլև նախարարական ամբողջ Հայաստանին։

Ավելի քան հավանական է ենթադրել, որ նման ընդհանուր ժողովներ, որոնց մասնակցում էին «նախարար»-ները, «ազատ»-ները և «գործակալ»-ները, հատկանշային էին և սովորական Հայաստանում, և, հավանորեն, այդ ժողովներում քննվում էին Հայաստանի նաև ներքին և արտաքին կյանքի կարևորագույն հարցերը։

Ագաթանգեղոսի վկայությունների մեջ (գլ. ԾԸ, էջ 403—404) մատնանշված է, օրինակ, որ հեթանոսության վերացումը Հայաստանում որոշված է եղել «ամենեցուն հաւանութեամբ»։ Փավստոսի կարևոր մի վկայության մեջ (III, գլ. ԻԱ) մատնացույց է արված, որ ժողովի հավաքման նպատակն է եղել խնդրել օգնություն Բյուզանդիայից ընդդեմ Սասանյան Պարսկաստանի։ Համաձայն Փավստոսի մի այլ վկայության (IV, գլ. ԾԱ)՝ նախարարները որոշում են «միաբան, համօրէն, աշխարհօրէն» դադարեցնել կռիվը Պարսկաստանի դեմ[3]։

Ըստ երևույթին, հենց նույն աշխարհաժողովներում մշակվել և ընդունվել են պարտադիր ընդհանուր կանոններ նախարարական

[1] Մանանդյան Հ., Ֆեոդալիզմը Հին Հայաստանում, էջ 80—81։

[2] Փավստոս, III, գլ. ԺԷ, IV, գլ. Գ և-ն.։

[3] Ուշադրավ է առանձնապես, որ թե՛ այս և թե՛ նախորդ վկայության մեջ մատնանշված են, բացի բարձր և ստորին ազնվականությունից, նաև «ռամիկշինականն»-ները և «դասապետք շինականաց», որոնք ներկա են եղել այս աշխարհաժողովներում։

ամբողջ Հայաստանի համար։ Սրան ապացույց կարող է ծառայել Շահապիվանի 443 թվի ժողովը։ Եթե նկատի առնվի, որ Շահապիվանի այս ժողովը տեղի էր ունեցել Արշակունյաց թագավորության անկումից 14 տարի հետո, կարելի է վստահորեն ենթադրել, որ կանոնագիր այս «աշխարհաժողով»-ը չէր կարող լինել մի նորմուծություն. նման ժողովներ սովորական են եղել հավանորեն, նաև Արշակունյաց ժամանակ։

Նախարարների «գործակալական» պաշտոնների մասին արքունիքում, նրանց մասնակցության մասին «աշխարհաժողով»-ներում՝ աղբյուրների հաղորդած տեղեկությունները շատ չեն և իրենց բովանդակությամբ էլ հաճախ անորոշ են։

Ավելի մանրամասն ու ընդարձակ են աղբյուրների վկայությունները հատուկ պարգևների և արտաքին զարդարանքների մասին, որ նախարարները և «գործակալ»-ները ստանում էին թագավորներից։ Այդ պարգևները և զարդարանքները, որ հիշատակված են Ինճիճյանի Հնախոսության մեջ (Բ, էջ 284—287), անվանվում էին «պատիւ» (=honor)։ Բացի այդ՝ ամեն մի պաշտոն ևս կոչվում էր «գործ», «գործակալութիւն» (=office) և կամ «պատիւ»։ «Պատիւ» են անվանվել, ինչպե՛ս երևում է աղբյուրների վկայություններից[1], նմանապես թագավորական և նահապետական բարձրագույն իշխանությունները։

[1] Տե՛ս Մանանդյան Հ., Ֆեոդալիզմը Հին Հայաստանում, էջ 84։

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՅՈԹԵՐՈՐԴ

«ԱԶԱՏ»-ՆԵՐԸ, «ՈՍՏԱՆԻԿ»-ՆԵՐԸ ԵՎ ԵԿԵՂԵՑԱԿԱՆՆԵՐԸ

«Ազատ»-ները՝ իբրև մանր ազնվականներ։— «Ոստանիկ» տերմինի սխալ մեկնությունները։— Նույն բառի ուղիղ մեկնությունը։— «Ոստանիկ»-ների «արքունի» կամ «յարքունի տանէ» մակդիրի Խորենացու սխալ ըմբռնումը։— Ադոնցի կարծիքը, որ «ոստանիկ» են անվանվել Արշակունյաց տոհմի սեպուհները՝ ճիշտ չէ։— «Ազատ»-ների և «ոստանիկ»-ների փաստական դրությունը և դերը։— Մանր ազնվականները իբրև զինվորական դաս կամ «ազատազօրք»։— «Խոստակ»—feod-ի գոյությունը Հին Հայաստանում։— «Թամիկ հեծելազօրք»-ը։— «Ազատ»-ների մասնակցությունը աշխարհաժողովներին։— «Ազատ»-ների «գործակալական» պաշտոնները։— Փավստոսի համապատասխան վկայության նոր մեկնությունը։— «Ազատ»-ների և «շինական»-ների վճարած դրամատուգանքների 2 առ 1 հարաբերությունը։— «Ազատ»-ների և «ոստանիկ»-ների տնտեսական, իրավական և կենցաղային կացությունը։— Եկեղեցականների դասը որպես «ազատաց տոհմ»։— Եկեղեցու նախարարականացումը։— Հոգևոր պաշտոնների ժառանգականությունը։— Հոգևորականների ասպահարկությունը։— Հոգևորականությանը հատկացված «խոստակ»-ները։—«Հող երդոյ» Ագաթանգեղոսի և Փավստոսի վկայություններում։— «Հող երդոյ» որոշ չափի հողաբաժին է։— «Հող երդոյ» իբրև պայմանական «խոստակ»։— Եկեղեցական կալվածատիրությունը։— Եկեղեցական անշարժ գույքերի անընդհատ աճումը։— Եկեղեցու ստացած տուրքերը և այլ եկամուտները։— Պայքարը եկեղեցու տնտեսական և քաղաքական զորեղացման դեմ։— Հայ հոգևորականության զինվորային բարքերը։— Եկեղեցու մաքառումը դրա դեմ։—

Ընդհանուր եզրակացություն։

Նախարարական կազմակերպությունը, ինչպես տեսանք, հիմնված էր Արշակունյաց Հայաստանում կալվածատիրության վրա։ Նախարարական տոհմերը ոչ միայն խոշոր կալվածատերերն էին Հին Հայաստանի, այլև, լինելով տեր ընդարձակ երկրների, ունեին այդ երկրներում քաղաքական իշխանության իրավունքներ։

Աղբյուրների վկայություններից դժվար չէ նաև հետևցնել, որ բացի ազնվական այս բարձր խավից, գոյություն է ունեցել մի մեծ շերտ կալվածատեր մանր ազնվականության, որ անվանվում էր

«ազատ» և «ոստանիկ»: Որ «ազատ»-ները և «նախարար»-ները Արշակունյաց Հայաստանի ազնվականության տարբեր շերտերն էին, այդ երևում է աղբյուրների մի շարք վկայություններից[1], որոնց մեջ նրանք հիշվում են «նախարար»-ներից հետո՝ իբրև բնակչության ինքնուրույն ու առանձին մի խմբակցություն:

Ուշագրավ է, որ «ազատ» բառը ևս, ինչպես և «նախարար» ու «նահապետ», պարթևական բառ է և փոխառություն է հայերենում պարթևերենից (=պհլ. âzât, պրսկ. âzâd):

Պետք է ասել, որ «ազատ» անունն ունեցել է, բացի վերոհիշյալ սովորական իր նշանակությունից, նաև ավելի լայն իմաստ, և «ազատորեար» ու «ազատանի» տերմինները գործ են ածվել նաև «նախարար»-ների նկատմամբ[2]:

Թե մատենագրական մի քանի հին աղբյուրներում և թե բանասիրական ու պատմագիտական նորագույն երկերում, ինչպես մենք մանրամասն ցույց ենք տվել նախորդ աշխատություններից մեկում[3], սխալ է հասկացվել «ոստան» և «ոստանիկ» բառերի նշանակությունը: Այս վերջին բառի նշանակությունն ըստ իս անհաջող է լուսաբանված դեռ Խորենացու մոտ, որն իր Պատմության մեջ «ոստանիկ»-ների դասը համարել է «թագավորական զարմ», որ ծագել է Հայկ նահապետի և Տիգրանի քրոջ Տիգրանուհու սերունդներից[4]:

Ղ. Ինճիճյանը, հետևելով Խորենացուն, «ոստանիկ»-ներին նույնպես համարում է «ի հին զարմից թագաւորացն որ ի Հայկայ» և «ի զարմից Տիգրանուհւոյն», սակայն ենթադրում է իր կողմից, որ «ոստանիկ» կոչվել են «նաև այլ թագաւորազունք Արշակունեաց, սերեալք յարքայորդւոց», որոնց հատկացված են եղել բնակության համար Հաշտյանք, Աղիովիտ և Առբերանի գավառները[5]:

Ն. Ադոնցը ևս այս խնդրում, ընդհանուր առմամբ, համամիտ է Խորենացու հետ: Նա ևս ընդունում է, որ «ոստանիկ»-ները թագավորական սերունդ են, սակայն ծագել են ո՛չ թե հին թագավորներից, այլ Արշակունիներից: Նրա կարծիքով՝ «ոստանիկ»-ների կապը թագավորական ընտանիքի հետ նույնը եղած պիտի լինի,

[1] Տե՛ս Փավստոս, IV, գլ. ժե. Ագաթանգեղոս, ՃԺԱ, էջ 412, Ղազար Փարպեցի, Ա., էջ 2, նույնը I, Է, էջ 10., նույնը, III, ՀԱ, էջ 128. Եղիշե, VIII, էջ 343 (1852):

[2] Տե՛ս Խորենացի, III, գլ. Ի. Փավստոս, III, գլ. Ի և Փարպեցի, II, գլ., ԻԶ և ԾԵ:

[3] «Դիտողություններ Հին Հայաստանի շինականների դրության մասին մարզպանության շրջանում», էջ 7—13:

[4] Խորենացի, II, գլ. Է, էջ 111—112 և I, գլ. Լ, էջ 82—83:

[5] Ղ. Ինճիճյան, Հնախոսություն, II, էջ 132—133 և 160—162:

ինչ որ «սեպուհ»-ների կապը նախարարական ընտանիքների հետ: «Ոստանիկ»-ները, ուրեմն, նրա ենթադրությամբ, թագավորական տոհմի «սեպուհ»-ներն են: Սակայն, բացի այդ, հետագայում, «ոստանիկ»-ներ են համարվել նաև նրանք, որոնք իրենց հատուկ ծառայությունների համար ստացել էին Այրարատում որոշ կալվածքներ Արշակունիներից: Իսկ Արշակունյաց թագավորության անկումից հետո «ոստանիկ» դասի մեջ ներմուծվել են նաև Արշակունիների արքունիքում ծառայող ազատ մարդիկ[1]:

Հիմնական կետում, ինչպես տեսնում ենք, Ադոնցը Խորենացու լուսաբանությունը համարում է ճիշտ և միայն իր կողմից անում է որոշ լրացումներ ու ուղղումներ:

Ինչպես տեսանք, «ոստան» բառի ուղիղ մեկնությունը տվել է Հյուբշմանը, որն այդ բառը համապատասխան է համարում պհլ. ōstān բառին, որ նշանակում է «արքունիքին պատկանող երկիր կամ քաղաք»: Ընդունելով «ոստան»-ի նշանակությունն իբրև «արքունի երկիր», Հյուբշմանը «ոստանիկ» բառը միանգամայն ճիշտ բացատրել է իբրև արքունի կամ թագավորական երկրից ծագող ազնվականներ կամ զորագնդեր[2]:

Կարևոր են «ոստանիկ»-ի իմաստը որոշելու համար Եղիշեի ու Փարպեցու հետևյալ վկայությունները.

1. Եղիշե, Վասն պատերազմին Վարդանանց, I, էջ 18 (Վենետիկ, 1864)՝

«Գունդ կազմէր [Հազկերտ Բ] ի Հայոց Մեծաց զազատ և զազատորդի և յարքունի տանէ զոստանիկ մարդիկ»:

2. Նույնը, IV, էջ 160՝

«Բազում և այլ ազատ մարդիկ, զոր ոստանիկան անուանին յարքունի տանէ»:

3. Փարպեցի, II, ԽԱ, էջ 73 (Տփղիս, 1904)՝

«Քանզի բազմութիւն փախստէիցն Հայոց, նախարարք և սեպուհք, ոստանիկք և ռամիկք, դիմեալ ի յերկիրն Տայոց՝ ժողովէին առ Համայակ եղբայր սրբոյ զօրավարին Վարդանայ»:

4. Եղիշե, III, էջ 126՝

«Թէպէտ և ոչ ունէին թագաւոր առաջնորդ, և ոչ յարտաքուստ օգնական զօրք յօտարաց, սակայն անձանց առաքինութեամբ և սուրբ վարդապետաց մխիթարութեամբ համագունդ ամենայն զօրօք նախարարացն յիւրաքանչիւր տանէ ի

[1] Адонц, Армения в эпоху Юстиниана, էջ 477—479:

[2] H. Hübschmann, Armenische Grammatik, Leipzig, 1895, էջ 215:

մի վայր գային հասանէին վաղվաղակի. բազում և այլ այրուձի, որ յարքունի տանէ անտի էր[1]»:

Այս վկայությունների մեջ ամենից կարևորը երկրորդն է, որի մեջ պարզ ասված է, որ «ոստանիկ» են անվանվել «ազատ մարդիկ.... յարքունի տանէ»: Ուշագրավ է և այն, որ «ոստանիկ»-ների «յարքունի տանէ» զորագունդը հակադրվում է առաջին և չորրորդ վկայությունների մեջ մյուս զորքին, որն անվանված է «գունդ.... ի Հայոց Մեծաց ազատ և ազատորդի» կամ «զորք նախարարացն յիւրաքանչիւր տանէ»:

Շատ պարզ է, որ «արքունի տուն» չի նշանակում վերոհիշյալ վկայություններում արքայական ընտանիք, այլ գործ է ածված արքունի երկրի համար, որը եղել է ոչ թե նախարարական սեփականություն, այլ թագավորական:

«Ոստանիկ»-ները Փարպեցու վկայության մեջ հակադրվում են նաև «սեպուհ»-ներին, որոնք ծագում էին նախարարական տոհմից:

Այս վերջին փաստը, որ «ոստանիկ»-ների դասը չի ծագել նախարարական տոհմերից, ըստ երևույթին, հայտնի է եղել նաև Խորենացուն: Խորենացին ևս, ինչպես երևում է նրա վկայություններից, գիտեր, որ «ոստանիկ»-ները եղել են «ազատ մարդիկ», բնակություն են ունեցել ո՛չ թե նախարարական շրջաններում, այլ արքունի երկրում, որ նրանցից կազմված է եղել այն հատուկ զորագունդը, որ կոչվել է «արքունի» կամ «յարքունի տանէ», սակայն իրական ու պատմական ծագումն այդ դասի Խորենացու ժամանակ եղել է մութ և անհասկանալի:

Նրա բացատրությունը, որ «ոստան ազատութիւն»-ը ծագում է թագավորական հին զարմերից, հավանորեն, հիմնված է ո՛չ թե պատմական հաստատ ու որոշ փաստերի վրա, այլ, մոտավորապես, նույն տվյալների վրա, որ հայտնի են և մեզ: Անհավանական չէ, որ Խորենացին կարող էր արքայական ընտանիքի հետ իմաստով հասկացած լինել «ոստանիկ»-ների «արքունի» մակդիրը և նրանց ծագումը «յարքունի տանէ»:

Այսպես է մեկնել «արքունի տուն»-ը և Ղ. Ինճիճյանն իր «Հնախօսութեան» մեջ: Հենվելով Եղիշեի վկայությունների վրա՝ նա ևս վստահաբար հետևցրել է, իբր թե «ոստանիկ»-ներին «այլ պատմագիրք յայտնի յարքունի տանէ լեալ յիշեն, սովիմբ իմանամք զբնիկ հայկական զարմն արքայական, որպէս էր ցեղն առաջին»[1]:

Եթե «յարքունի տանէ» իմաստի այս վերջին հասկացողությունն է եղել Խորենացու ենթադրության հիմքը, պարզ է, որ այդ ապացույցն ավելի քան թույլ է, որովհետև «յարքունի տանէ», ինչպես տեսանք, գործ է ածված «ոստանիկ»-ների նկատմամբ արքունի երկրի և ոչ արքունական ընտանիքի նշանակությամբ:

Համոզիչ չեն կարող համարվել և Ադոնցի եզրակացությունները, որովհետև նրա պնդումների միակ ու գլխավոր կռվանը Խորենացու վկայություններն են, որ նա հիմնական կետերում համարել է ընդունելի և արժանահավատ:

Նրա այն պնդումը, որ «ոստանիկ» են անվանվել ո՛չ թե հնագույն թագավորական սերունդները, այլ Արշակունյաց տոհմի «սեպուհ»-ները և իբր թե «սեպուհ» անունը գործ է ածվել միմիայն նախարարական ընտանիքների անդամների համար՝ ճիշտ չէ[2]: Մենք տեսանք, որ Փավստոսի Պատմության մեջ Գնելը, Արշակ Բ-ի եղբոր որդին, անվանված է «մեծ սեպուհն Արշակունի»:

Ինչպես տեսնում ենք, «ոստանիկ»-ների թագավորական զարմ լինելը՝ հին թագավորների կամ Արշակունիների, հավանական չէ: Իրապես, «ոստանիկ» են անվանվել Արշակունյաց բուն երկրի՝ «ոստան»-ի «ազատ»-ները, որոնցից կազմված գունդն անվանվել է «արքունի» կամ «յարքունի տանէ»:

«Ազատ» և «ոստանիկ» տերմինների նշանակությունը որոշելուց հետո՝ պետք է պարզել մանրամասնորեն նրանց սոցիալական դրությունը և փաստական դերը Արշակունյաց Հայաստանում:

Կարևոր այս խնդրի քննությունը ևս ցույց է տալիս, որ Արշակունյաց Հայաստանի նախարարական կազմակերպության նմանությունն ու համապատասխանությունն Արևմտյան Եվրոպայի ֆեոդալիզմին շատ ավելի մեծ է և ակնհայտ, քան մինչև այժմ ենթադրել են:

Արևմտյան Եվրոպայում սենյորների իշխանությանը ենթարկված էին մանր ազնվականները, որոնք, ստացած լինելով սենյորներից որոշ հողաբաժիններ և համարվելով նրանց վասալները, պարտավոր էին ստանձնել հողատու իրենց «տէր»-երի հանդեպ զինվորական և այլ պատվավոր ծառայության պարտականություններ: Այս մանր ազնվականությունը, որոնցից կազմված էր

---

[1] Մատենագրական վկայությունները մանրամասն մեջ են բերված «Ֆեոդալիզմը Հին Հայաստանում» իմ աշխատության մեջ, էջ 97—98:

[1] Ինճիճյան. Հնախօսութիւն, II, Վենետիկ, 1835, էջ 161—162:

[2] Տե՛ս Адонц, Армения в эпоху Юстиниана, էջ 451:

սենյորների զորքը, անվանվում էին հեծյալներ կամ ձիավորներ (chevaliers, Ritter)։

Ճիշտ և ճիշտ նույնը մենք գտնում ենք նաև Արշակունյաց Հայաստանում։

Այստեղ ևս «ազատ»-ներից և «ոստանիկ»-ներից, որ գտնվում էին բդեշխությունների, նախարարությունների կամ Արշակունիների իշխանության տակ՝ կազմված էր նախարարական և արքունի շրջանների հեծելազորքը։ Մատենագրական աղբյուրների մեջ այդ զորքն անվանվում է «ազատազորք», «ազատագունդ զորք», «ազատագունդ բանակ» կամ «ազատախումբ բանակ»։

Քրիստենսենը մատնացույց է արել, որ Սասանյան Պարսկաստանում ևս «ազատ»-ների դասին պատկանել են ձիավորները (chevaliers), որոնք զորքի լավագույն մասն էին։ Այս ձիավորների մեծագույն մասը խաղաղ ժամանակ ապրում էին սեփական կալվածքներում, մշակում իրենց հողերը և զբաղվում իրենց գյուղացիական գործերով[1]։

Նույն դրությունը, հավանորեն, եղած պիտի լիներ նաև Արշակունյաց Հայաստանում։

Հայաստանի նախարարական կազմակերպության առանձնահատկությունների ուսումնասիրելիս՝ առանձնապես կարևոր էր պարզել «ազատ»-ների և «ոստանիկ»-ների հողատիրության խնդիրը և մանավանդ, պայմանական հողատիրության՝ feod-ի կամ Lehn-ի գոյությունը Հին Հայաստանում։ Արևմտյան Եվրոպայում, ինչպես հայտնի է, feod-ը կամ Lehn-ը կազմում էր միջնադարյան ֆեոդալիզմի հիմնական հատկանիշներից մեկը։ Հարկավոր էր, ուրեմն, որոշել, թե արդյոք գոյություն չե՞ն ունեցել նախարարական Հայաստանում ևս արևմտյան feod-ը կամ նման հողատիրական կարգեր։

Այս խնդիրը մանրամասն քննված է իմ «Նյութեր Հին Հայաստանի տնտեսական կյանքի պատմության» աշխատության մեջ[2]։ Ինչպես մանրամասն ցույց եմ տվել այդ աշխատության մեջ, Ստեփանոս Օրբելյանի Պատմության մեջ բերված նվիրագրերի բովանդակությունների ուշադիր քննությամբ ո՛չ միայն որոշվում է պայմանական հողատիրության գոյությունը նախարարական Հայաստանում, այլև պարզվում է, որ միջնադարյան feod (ֆրանս. fief, գերմ. Lehn) տերմինին Հայաստանում համապատասխանում

[1] Տե՛ս *Christensen*. L'Iran sous les Sassanides, էջ 111—113։

[2] Տե՛ս «Տեղեկագիր» պետ. համալսարանի, Երևան, 1928, № 4, էջ 43—52. նաև՝ «Ֆեոդալիզմը Հին Հայաստանում», էջ 104—118։

էր «խոստակ» բառը, իսկ feudatarius-ին (գերմ. Lehnshalter)՝ «խոստակդար»-ը։ Բացի այդ, հիմնվելով մեր ստացած ուշագրավ ու կարևոր եզրակացությունների վրա՝ կարելի էր միանգամայն հավանական համարել, որ նախարարական Հայաստանում «ազատ»-ների և «ոստանիկ»-ների մեծագույն մասը եղել են «խոստակդար»-ներ, այսինքն՝ ստացած են եղել նախարարական շրջաններում և արքունի երկրում որոշ հողաբաժիններ կամ անշարժ գույք օգտատիրության իրավունքով (dominium utile) և հատուկ պայմանով, որ հողատու իրենց «տէր»-երի հանդեպ ստանձնելու էին զինվորական և այլ պատվավոր «ծառայութեան» պարտականություններ։ «Ազատ»-ներին և «ոստանիկ»-ներին տրված «խոստակ»-ները, ինչպես մենք ենթադրել էինք, համարվել են ժառանգական և «հայրենի»։

Պետք է սակայն մատնանշել, որ Սասանյան Պարսկաստանի տիրապետության ժամանակ, բացի «ազատազորք»-ի, մարզպանական Հայաստանում գոյություն է ունեցել նաև հատուկ հեծելազորք, որ կազմված է եղել «ռամիկ»-ներից[1]։

Ինձ թվում է, որ այս «ռամիկ այրուձին», որը կարող է որևէ առնչություն ունենալ Փավստոսի հիշատակած «կարճազատ»-ների հետ, առանձնապես կարևոր նշանակություն էր ստացել, գլխավորապես, այս ժամանակաշրջանում։ Սասանյան Պարսկաստանը, ինչպես հայտնի է, հայկական հեծելազորքն ուղարկում էր հաճախ պատերազմելու իր հեռավոր արևելյան սահմանները։ Ինքնըստինքյան հասկանալի է, որ հայ ազնվականությունն ամեն կերպ աշխատելու էր խուսափել ու ազատվել այդ նոր ու խիստ ծանր պարտականությունից։ Հայ «ազատազորք»-ը հենց ինքը, հավանորեն, շահագրգռված էր, որ այդ ծանր զինապարտությանը մեծ չափերով մասնակից լինեն նաև «ռամիկ»-ները։

Այս «ռամիկ» զինվորները, ըստ երևույթին, սոցիալական ավելի բարձր դիրք են ունեցել, քան հասարակ «շինական»-ները։ Այդ կարելի է կռահել Ատովմի, նրա որդու ու ընկերների վկայաբանության վրացերեն թարգմանությունից, որի մեջ հիշված են այս «ռամիկ հեծեալ»-ները և «ռամիկ» բառը թարգմանված է «չիններուլի», որ նշանակում է «ականաւոր»[2]։

Միջնադարյան Եվրոպայում վասալները, ստանալով սենյոր-

[1] Տե՛ս Փարպեցի, III, գլ. ՀԸ, էջ 144 և «Կանոնք Դունայ ժողովոյն», Վաղարշապատ, 1905, էջ 23։

[2] Տե՛ս *Джавахов*, Государственный строй древней Грузии и древней Армении, էջ 133։

ներից օգտատիրության իրավունքով հատուկ հողաբաժիններ կամ անշարժ գույք՝ ոչ միայն ստանձնում էին իրենց «տէր»-երի հանդեպ զինվորական պարտականություններ, այլև պարտավոր էին օգնել նրանց խորհուրդով (consilio) ժողովներում, նաև մասնակցելու էին սենյորիայի վարչական ու դատական գործերին։ Ավատառուների այս պարտականությունները, որ տարբեր էին գյուղացիության ու ռամիկ ժողովրդի պարտականություններից, համարվում էին ազնիվ «ծառայութիւն»։

Արդ՝ ուշագրավ է խիստ ու հետաքրքիր, որ նախարարական Հայաստանում ևս նման պարտականություններ ունեցել են «ազատ»-ները և «ոստանիկ»-ներն իրենց «տէր»-երի հանդեպ։

Վերև մենք տեսանք, որ ընդհանուր աշխարհաժողովներին նախարարների հետ միասին մասնակցում էին նաև «ազատ»-ները։ Պետք է ենթադրել, որ նախարարական երկրներում ևս գումարվել են նույնպես տեղական ժողովներ՝ մասնակցությամբ «ազատ»-ների։

Մենք հիշել էինք նույնպես, որ Արշակունյաց արքունի ամենակարևոր «գործակալութիւն»-ները հանձնարարված են եղել «աւագ նախարարութիւն»-ներին և կաթողիկոսությանը, իսկ «գործակալական» մանր պաշտոնները՝ մանր ազնվականությանը։ Ինքնըստինքյան հասկանալի է, որ նախարարական երկրները ևս ունեցել են իրենց «գործակալութիւն»-ները, որոնք, հավանորեն, հանձնված են եղել, գլխավորապես, «սեպուհ»-ներին և «ազատ»-ներին։

Փավստոսը, նկարագրելով Արշակունյաց թագավորության վերանորոգումն Արշակ Բ-ի ժամանակ՝ արքունի «գործակալ»-ների մասին տալիս է հետևյալ կարևոր վկայությունը.

> «Եվ Հայաստան երկրի թագավորությունը,— ասում է Փավստոսը,— նորոգվեց ու զվարթացավ ինչպես առաջ՝ մեծամեծներն իրենց գահերում, գործակալներն իրենց աստիճաններում։.... Նաև ուրիշներն այս տոհմերից ու ավելի ցածրերից, որոնք, գործակալ անունը կրելով՝ բազմում էին բարձերի վրա թագավորի առջև պատիվները գլուխներին,— բացի մեծամեծ նահապետներից ու տանուտերերից՝ միայն նրանք, որոնք գործակալ էին՝ կազմում էին ինը հարյուր բարձ, որ նրա էին բերվում պալատական ուրախության հրավիրախնջույքների ժամանակ՝ առանց հաշվելու այն անձերին, որոնք ոտնկա սպասավորության գործակալներ էին»։
>
> [«Եւ նորոգեցաւ զուարթացաւ տէրութիւնն թագաւորութեանն Հայաստան երկրին որպէս և զառաջինն՝ մեծամեծքն յիւրաքանչիւր գահու և գործակալքն յիւրաքանչիւր չափու։.... Եւ այլ յայսմ ազգաց և ի խոնարհ, որ գործակալս անուն բարձիւք առաջի արքային պատիւ ի գլուխ բազմէին, թող ինահապետս մեծամեծս և զտանուտեարս՝ որք գործակալք միայն էին, ինն հարեւր բարձ, որ մտանէր ի ժամ տաճարին ուրախութեանն բազմակալացն կարգելոց. թող զոտնկայս գործակալութեանն սպասու»][1]։

Հիմնվելով այս վկայության վրա՝ բանասերներից ոմանք ենթադրել են, որ Արշակունիների ժամանակ գոյություն է ունեցել Հայաստանում մոտ 900 նախարարական ընտանիք։

Ադոնցը թեև ընդունում է նույնպես, որ Փավստոսի այս տեղեկությունը վերաբերում է բացառապես նախարարական դասին, սակայն չափազանցություն է համարում Փավստոսի 900 թիվը և միաժամանակ մատնացույց է անում, որ նախարարական միևնույն տոհմից կարող էին լինել մի քանի «գործակալ»-ներ[2]։

Արդ՝ ճի՞շտ է արդյոք, որ Փավստոսի վկայությունը վերաբերում է բացառապես նախարարական տոհմերին և նրանց թվին։ Հավանակա՞ն է արդյոք, որ վերոհիշյալ արքունի «գործակալ»-ները եղել են, անպայման, նախարարական դասից։

Ենթադրել, որ պալատում ներկա գտնվող բոլոր «գործակալ»-ները նախարարներ էին, այդ, անշուշտ, բռնազբոսիկ մի բացատրություն է, որ բնավ չի հետևում Փավստոսի վկայության բովանդակությունից։ Ըստ իս՝ Արշակունյաց արքունիքում և արքունի երկրում Հայաստանի ավագ նախարարներին հանձնված են եղել միմիայն ամենաբարձր «գործակալութիւն»-ները, իսկ երկրորդական կարգի պաշտոնները վարել են, գլխավորապես, «ազատ»-ները կամ «ոստանիկ»-ները։

Հավանական է, ուրեմն, որ Փավստոսի հիշած «գործակալ»-ների մեծագույն մասը ո՛չ թե նախարարներ էին, այլ մանր ազնվականներ։ Հետաքրքիր է առանձնապես, որ Սասանյան Պարսկաստանում ևս, ինչպես մատնացույց է արել Խրիստենսենը, վարչական ստորին պաշտոնները վարում էին «ազատ»-ները[3]։

Շահապիվանի ԺԶ կանոնում ասված է, որ
«առանց գաւառի եպիսկոպոսին չ'իշխէ լինել եպիսկոպոս
կամ երէց, կամ ազատ ոք դատաւորաց»[4]։

---

1 Փավստոս, IV գլ. Բ, էջ 67—68։
2 Տե՛ս Адонц. Армения в эпоху Юстиниана, էջ 239 և 467—468։
3 Տե՛ս Christensen, L'Iran sous les Sassanides, էջ 111—113։
4 Տե՛ս «Կանոնագիրք Հայոց», հրատ. Ա. Ղլտճյանի, Թիֆլիս, 1913, էջ 76։

Այս հատվածում, ինչպես տեսնում ենք, իբրև դատավորներ հիշվում են, հատկապես, «ազատ»-ները:

«Ազատ»-ների և «ոստանիկ»-ների սոցիալական ու տնտեսական դրությունը պարզելու համար կարող են իբրև կռվան ծառայել Շահապիվանի կանոնները տուգանքների մասին, որ վճարելու էին հանցապարտ «ազատ»-ները և «շինական»-ները:

Համաձայն այդ ժողովի կանոնների՝ սահմանված էին դրամատուգանքներ հետևյալ հարաբերությամբ.

1. Ամուսնությունը պոռնկությամբ պղծող «ազատ»-ից 200 դրամ, իսկ «շինական»-ից՝ 100 դրամ, որ տրվելու էր կարոտյալներին (կանոն Գ):

2. Ամուսնությունից բաժանվող «ազատ»-ից 1200 դրամ, իսկ «շինական»-ից՝ 600 դրամ, որ տրվում էին կնոջը (կանոն Ե):

3. Աղջիկ առևանգող «ազատ»-ից 1200 դրամ («փոխանակ անարգանացն»), իսկ «շինական»-ից՝ 600 դրամ (կանոն Է):

4. Հարցուկներին դիմող «ազատ»-ից 200 դրամ, իսկ «շինական»-ից՝ 100 դրամ, որ տրվելու էին կարոտյալներին (կանոն Թ):

5. Մեռելների վրա կոծ դնող «ազատ»-ից 100 դրամ, իսկ «շինական»-ից՝ 50 դրամ, որ բաշխվելու էին աղքատներին (կանոն ԺԱ):

Բոլոր հիշյալ դեպքերում տուգանքների հարաբերությունն է 2 առ 1: Այս հարաբերությունը կարող է, անշուշտ, ուշադրավ մի նշան համարվել, որ հինգերորդ դարի առաջին կեսում, երբ սահմանված էին այդ կանոնները, «ազատ»-ների սոցիալ-տնտեսական դրությունը թեև տարբեր է եղել «շինական»-ների դրությունից, սակայն այդ տարբերությունը մեծ չէ եղել:

«Ազատ»-ների և «ոստանիկ-ների մեծագույն մասը, որոնցից կազմված է եղել Արշակունյաց Հայաստանի հեծելազորքը և ստորին պաշտոնեությունը՝ ունեցել է, ըստ երևույթին, համեմատաբար փոքր «խոստակ»-ներ կամ կալվածքներ: Տնտեսական իր հզորությամբ այս դասը կարող է մոտավորապես համեմատվել միջնադարյան Անգլիայի eorl-երի հետ, որոնց վճարում էին արնագին երկու անգամ ավելի շատ, քան գյուղացիներին կամ eorl-երին:

«Ազատ»-ների ու «շինական»-ների իրավական ու կենցաղային տարբեր կացության մասին մատենագրական աղբյուրների մեջ կան միայն մի քանի միջանկյալ, բայց հետաքրքրական ցուցումներ:

Հանցավոր «ազատ»-ները, ինչպես պարզ վկայում են Շահապիվանի կանոնները, չեն ենթարկվել մարմնական պատիժների:

Նմանապես՝ նրանց չէր կարելի ուղարկել աշխատանքի գողենոց կամ ուրկանոց: Հանցանք գործելիս՝ նրանք վճարում էին միայն դրամատուգանքներ[1]:

Ուշադրության արժանի է նաև, որ Փարպեցու ու Եղիշեի մոտ «ազատ»-ներն անվանվում են «որսատենչ»[2], «փափկացեալ»[3]: Իրենց արտաքին տեսքով, ինչպես վկայում է գարձյալ Փարպեցին, «ազատ»-ները տարբերվել են «շինական»-ներից[4]:

* * *

Միջնադարյան Եվրոպայում ֆեոդալական աշխարհիկ կարգերը և ֆեոդալականացման զորեղ հոսանքը խորապես ազդել էին քրիստոնեական եկեղեցու զարգացման վրա, տալով նրա վարչական ու տնտեսական կազմակերպությանը ֆեոդալական ձևակերպում և հատուկ գունավորում:

Նույնը, բնականաբար, մենք տեսնում ենք նաև Հին Հայաստանում:

Այստեղ ևս, ինչպես մատնացույց է արել Ադոնցը[5], հայ եկեղեցին, գտնվելով նախարարական Հայաստանի միջավայրում, մեծ չափերով ենթարկվել էր նախարարական կարգերի ազդեցության:

«Եկեղեցու ազգայնացումը,— ասում է Ադոնցը,— համազոր էր նրա նախարարականացման կամ ֆեոդալականացման, որովհետև քաղաքական վարչակարգը Հայաստանում ուներ ֆեոդալական բնույթ և իշխանությունը բաժանված էր բազմաթիվ իշխանական տոհմերի մեջ, բնականաբար, նաև եկեղեցական իշխանությունը պետք է համակերպվեր ներգործող միջավայրին և ընդուներ նույն միջավայրի պատրաստի ձևերը»[6]:

Եվ իրոք՝ ինչպես քաղաքական իշխանությունը, նույնպես և եկեղեցականը Հին Հայաստանում ապակենտրոնացած և բաժանված են եղել ըստ նախարարությունների, և, բացի արքունի երկրից ու «ոստան»-ից, նաև մյուս մեծ ու առաջնակարգ «տէրութիւն»-ներում գոյություն են ունեցել առանձին եպիսկոպոսություններ:

Համաձայն Ադոնցի քննության՝ այդ եպիսկոպոսներից արքու-

---

1 Տե՛ս «Կանոնագիրք Հայոց», հրատ. Ղլտճյանի, էջ 63, 65, 68, 70, (կանոն Գ, Ե, Ժ, ԺԲ):

2 Փարպեցի, I, Է, էջ 10:

3 Եղիշե, III, էջ 115, Վենետիկ, 1864:

4 Փարպեցի, ՀԷ, էջ 142:

5 *Адонц*. Армения в эпоху Юстиниана, էջ 322—370:

6 Նույնը, էջ 361:

մեզ հայտնի է, որ Մաշտոցը եկել էր Վաղարշապատ Խոսրով Դ-ի թագավորության ժամանակ և ծառայում էր այստեղ արքունի դիվանում իբրև «դպիր» Առավան հազարապետի ձեռքի տակ։ Կորյունի և Ղազար Փարպեցու համապատասխան վկայությունները, որ սխալ են մեկնված պատմագիտական ու բանասիրական երկերում, ավելորդ չեմ համարում թարգմանաբար մեջ բերել մանրամասն կերպով։

1. Կորյուն (Գ), էջ 36—37, հրատար. Մ. Աբեղյանի (Երևան, 1941)՝

«Այս (Մաշտոցը) եկավ, հասավ Մեծ Հայաստանի Արշակունի թագավորների արքունիքը, մնաց արքունի դիվանում և եղավ արքայի տված հրամանների սպասարկող՝ հայոց մեր աշխարհում ոմն Առավանի հազարապետության ժամանակ։ Նա տեղյակ ու հմուտ դառավ աշխարհական կարգերին և իր զինվորական արվեստով հաճելի եղավ իր զորականներին։ Եվ այնտեղ ուշիուշով հետևեց աստվածային գրքերի ընթերցանությանը, որով կարճ ժամանակում լուսավորվեց և համակվեց, խորամուխ եղավ աստվածային հրամանների էությանը, նաև ամեն նախապատրաստություններով զարդարեց իր անձը և պաշտոնավարեց իշխանների մոտ»։

(«Եկեալ հասեալ ի դուռն Արշակունեաց թագաւորաց Հայոց Մեծաց, կացեալ յարքունական դիւանին. լինել սպասաւոր արքայատուր հրամանացն առ հազարապետութեամբն՝ աշխարհիս Հայոց՝ Առաւանայ ուրումն։ Տեղեկացեալ և հմուտ եղեալ աշխարհական կարգաց, ցանկալի եղեալ զինուորական արուեստին իւրոց զօրականացն։ Եւ անդէն ուշ եղեալ փութով ընթերցուածոց աստուածեղէն գրոց, որով առ ժամայն լուսաւորեալ և թեամուխ միջամուխ եղեալ յաստուածատուր հրամանացն հանգամանս, և ամենայն պատրաստութեամբ զանձն զարդարեալ, հարկանէր զիշխանացն սպասաւորութիւնն»)։

2. Ղազար Փարպեցի, I, գլ, Ժ, էջ 13 (Տփղիս, 1904)՝

«Իր մանկության օրերում նա (Մաշտոցը) ուսում ստացավ հույն դպրությամբ. նա զինվորություն արեց հայոց Խոսրով թագավորի արքունիքում, կարգվելով արքունի գրագիր դպիրների խմբում. այդ ժամանակ արքունի դպիրները ասորի և հույն գրով էին վարում Հայոց թագավորների գործերը՝ վճիռներն ու հրովարտակները»։

(«Ի տիս մանկութեան իւրոյ ուսեալ դպրութիւն յոյն. զինուորեալ ի դուռն Հայոց արքային Խոսրովայ, կարգեալ յեզինուորեալ ի դուռն Հայոց արքային Խոսրովայ, կարգեալ յեբամ մատենագիր արքունի դպրացն. վասն զի ասորի և յոյն գրով վճարէին յայնժամ զգործ թագաւորացն Հայոց՝ արքունի դպիրքն, զվճռոցն և զհրովարտակացն»)։

Ոմանք կարծում են, որ Կորյունի ու Ղազար Փարպեցու այս վկայություններում կա մի որոշ հակասություն։ Ըստ Կորյունի՝ Մաշտոցը պաշտոն էր վարել արքունի դիվանում Առավանի հազարապետության ժամանակ, իսկ համաձայն Փարպեցու՝ հայոց Խոսրով Դ թագավորի ժամանակ։ Այս հակասությունը մատնանշել է Մարկվարտը և սխալ ենթադրություն է արել, որ իբր թե Խոսրով Դ-ից հետո և Վռամշապուհից առաջ Հայաստանում իշխել է հազարապետ Առավանը[1]։ Մարկվարտի այս կարծիքը պարզապես թյուրիմացության արդյունք է։ Առավանը, ինչպես դժվար չէ տեսնել, հայոց աշխարհի հազարապետ էր Խոսրով Դ-ի ժամանակ, ուստի և կարելի է վստահորեն ենթադրել, որ Կորյունի նախնական բնագրում, որից օգտվել է Փարպեցին, մատնանշված է եղել, որ Մաշտոցը ծառայել էր հայոց Խոսրով թագավորի արքունիքում Առավան հազարապետի ձեռքի տակ[2]։

Կորյունի և Ղազար Փարպեցու՝ վերևում բերված վկայություններից երևում է նաև, որ Մաշտոցը, ընդունված լինելով «մատենագիր դպիր»-ների խմբի մեջ, ծառայել էր արքունի դիվանում իբրև զինվոր ու հասարակ գրագիր։ Ինչպես հայտնի է, հայագետ բանասերները[3], գրեթե բոլորն առանց բացառության, հիմնվելով Խորենացու սխալ վկայության վրա՝ կարծել են, որ Մաշտոցը թագավորական պալատում վարել էր դիվանապետի կամ քարտուղարի բարձր պաշտոնը։ Այս պնդումը, որ հակասում է Կորյունի և Փարպեցու վկայություններին, ճիշտ չէ։ Մաշտոցի պաշտոնը, ինչպես դժվար չէ համոզվել, համապատասխանում է այն զինվորգրագիրների պաշտոնին, որոնք ստորին ծառայողներ էին հռոմեական բարձր պաշտոնյաների դիվաններում և անվանվում էին

[1] *Տե՛ս Markwart, Պատմութիւն հայերէն նշանագրերու, էջ 12—13 և 58։*

[2] *Տե՛ս իմ աշխատությունը* «Месроп Маштоц», *էջ 12 (տե՛ս սույն հատորի 447-րդ էջում. խմբ.)։*

[3] *Տե՛ս* Исследования и статьи Н. О. Эмина, *էջ 206.* K. Aslan.. Etudes historiques, *էջ 212. Լեո, Հայոց պատմություն, Ա. էջ 679. Մ. Աբեղյան, Հայոց հին գրականության պատմություն, Երևան, 1944, Ա, էջ 72 և ուրիշները։*

գրասենյակայիններ» officiales կամ scrinarii)[1]: Այս զինվորագրագիրները, ինչպես մատնացույց է արել Ադոնցը, զինվորական շորերով էին և համարվում էին զինվորական ծառայության մեջ, թեև չէին կցված գործող զորաբանակին[2]: Ինքնըստինքյան հասկանալի է, որ Մեսրոպ-Մաշտոցը, լինելով «կարճազատների» Հացեկաց գյուղից, պետք է վարած լիներ արքունիքում գործակալական ստորին պաշտոն[3]: Նա ոչ թե մանր ազնվական «ազատ» էր, ինչպես ոմանք հայ բանասերներից կարծում են, այլ, ըստ երևույթին, արտոնյալ այն ազատ գյուղացիների դասից էր, որոնք պարտավոր էին ծառայել ռամիկ հեծելազորի շարքերում:

Պատմագիտական երկերում, ինչպես, վերև ասացինք, սխալ են որոշված, բացի Մաշտոցի արքունի ծառայության ու կրոնավորության թվականներից, նաև Վռամշապուհի թագավորության տարիները: Վերև մենք տեսանք, որ Վռամշապուհը, ինչպես պարզ երևում է Ղազար Փարպեցու արժանահավատ ցուցումներից, հաջորդել էր իր եղբորը՝ Խոսրով Դ-ին 387-8 թվականին:

Ինչպես հայտնի է, Վռամշապուհի թագավորության սկիզբը բոլոր պատմագիտական երկերում, բացի Օրմանյանի և Լեոյի աշխատություններից[4] դրվում է կամ չորրորդ դարի իննսունական թվականներին և կամ հինգերորդ դարի սկզբներին: Մենք ասացինք վերև, որ սխալ այդ ժամանակագրությունը բացատրվում է նրանով, որ Վռամշապուհի՝ թագավորության տարիները պատմագիտական երկերում աշխատել են համաձայնեցնել ժամանակագրական տվյալների հետ Կորյունի վերջաբանում, որն իր այժմյան խմբագրությամբ պարզապես ընդմիջարկություն է ուշ ժամանակաշրջանի:

Օրմանյանը, իմ կարծիքով, ճիշտ է որոշել Վռամշապուհի թագավորության երկար տևողությունը, որ նա ենթադրում է 389

---

[1] Տե՛ս П. Виллемс Римское государственное право, перевод Бодянского, Киев, 1888, էջ 510, 663–667. E. Kuhn, Die städtische und bürgerliche Verfassung des Romischen Reiches. Erster Teil, Leipzig, 1864. էջ 156 և հետ.:

[2] Տե՛ս Адонц, Армения в эпоху Юстиниана, էջ 137:

[3] Տե՛ս իմ աշխատությունը «Ֆեոդալիզմը հին Հայաստանում», Երևան, 1934, էջ 120–122:

[4] Օրմանյանը, ինչպես և Լեոն, Վռամշապուհի թագավորության սկիզբը համարում են 389 թվականը, տես Մ. Ա. Օ., Տրդատէ Արտաշէս ժամանակագրական դիտողութիւններ, «Հանդ. Ամս.», 1909, № 8, էջ 243 և 245: Լեո, Հայոց պատմություն, Ա, էջ 674, ծան. 3:

թվականից մինչև 414 թվականը: Նրա այս եզրակացությանը հիմք է ծառայել Ղազար Փարպեցու ցուցումը[1]: Վռամշապուհը, ինչպես վկայում է Փարպեցին, հասել էր խորին ծերության և գրերի գյուտից հետո, որ տեղի էր ունեցել, ինչպես տեսանք, 391-2 թվականին՝ ապրել էր քանի մեկ տարի: Ըստ այսմ Վռամշապուհի թագավորության տևողությունը հավանական կլիներ ենթադրել ոչ թե 25 տարի, ինչպես մատնացույց է արել Օրմանյանը, այլ 26 տարի (387-8—շուրջ 413-4):

Ստացվում է, այսպիսով, չորրորդ դարի վերջերի և հինգերորդ դարի սկզբների համար նոր ու հաստատուն ժամանակագրություն, որ բոլորովին տարբեր է Մարկվարտի տված ժամանակագրությունից:

---

[1] Փարպեցի, Ι, գլ. ԺԱ, էջ 18, ծան. 10 (Տփղիս, 1904):

ԱՐԱԲԱԿԱՆ ԱՐՇԱՎԱՆՔՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ[1]

(Ժամանակագրական դիտողություններ)

Արաբական արշավանքների և արաբական տիրապետության ժամանակ Հայաստանում տեղի ունեցած անցքերի մասին կարևոր տեղեկություններ են հաղորդվում ոչ միայն հայկական, այլև արաբական, ասորական և բյուզանդական աղբյուրներում. սակայն այդ տեղեկությունները խիստ հակասական են և ժամանակագրական իրենց տվյալներով՝ խառնաշփոթ ու անհաշտելի, չնայած որ Հայաստանի պատմության այս շրջանը քննության է առնված բանասիրական ու պատմագիտական բազմաթիվ աշխատություններում, սակայն ժամանակագրության վիճելի հարցերից շատերը մնում են մինչև այժմ շփոթ ու անորոշ վիճակում։

Ուշագրավ է նաև, որ ժամանակագրական ակնբախ այդ սխալները, մանավանդ, արաբական առաջին արշավանքների մասին Հայաստանում, կրկնվում են շարունակ ոչ միայն հայագիտական, այլև եվրոպական ու ռուսական նորագույն ուսումնասիրություններում, որ վերաբերվում են Բյուզանդական կայսրության և արաբական խալիֆայության պատմության։ Արդ՝ աչքի առաջ ունենալով ճշտված ու հաստատուն ժամանակագրության կարևորությունը, նաև ժամանակագրական այն անճշտությունները, որ հանդիպում են վերոհիշյալ աշխատություններում, առաջ ենք բերում ներքև մեր մի քանի դիտողությունները արաբական առաջին արշավանքների ժամանակագրության մասին, որ թվում են մեզ հիմնավոր ու հավանական։

---

[1] *Տե՛ս* Հ. Մանանդյան, *Մանր հետազոտություններ, Երևան, 1932 թ., էջ 22—64։*

1. ԱՐԱԲՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ՄՈՒՏՔԸ ՀԱՅԱՍՏԱՆ 640 ԹՎԻՆ

Հայկական և արաբական աղբյուրների վկայություններից հայտնի է, որ արաբներն առաջին անգամ մտել են Հայաստան հարավից՝ հյուսիսային Միջագետքը նվաճելուց հետո։ Թեև այդ վկայությունները որոշ կետերում իրենց բովանդակությամբ տարբերվում են, սակայն արշավանքի ժամանակի նկատմամբ նրանք, ինչպես կտեսնենք, միանգամայն համերաշխ են։

Առաջին այս մեծ արշավանքի մասին հայկական աղբյուրները տալիս են հետևյալ տեղեկությունները.

1. «Յովհաննու Մամիկոնեանի եպիսկոպոսի, Պատմութիւն Տարօնոյ», Վենետիկ, 1832, էջ 57—58։

«Այս ի սոյն ամի ելանէ, Հերակլ, և սպանանէ զԽոսրով. և յիշեաց զերդումն՝ զոր ընդ Տիրան և ընդ ինքն, և կացուցեալ մարզպան ամենայն Հայոց, և ինքն գնաց ի Կոստանդինուպոլիս։ Եւ յետ ութ ամի *եկն Աբդռահիմ քեռորդի Մահմետի բազում ազխիւ, ութևտասն հազար առնեձիոյ ընդ իւր բերեալ, խնդրէր հարկս ի Հայոց։ Իսկ Տիրան արձակեաց ժողով լինել համօրէն զօրու ի պատերազմ։ ...Իսկ Աբդռահիմ անցանէ ի Հայք և ի Բասեան, ի Վիրք և ի Ջաւախս և ի Վանանդ. և առեալ հարկս, դառնայ ի Տաճկաստան»։*

2. «Պատմութիւն սրբոյն Ներսիսի և գիւտ նշխարաց», Սոփերք հայկականք, է, Վենետիկ, 1853, էջ 43—44։

«Քանզի Հերակլ արքայն Յունաց յետ ութսուն ամի թուականին Հայոց *ելանէ ի պատերազմ ընդ Խոսրով արքային Պարսից և սպանանէ զնա. և* յետ ութ ամի այսմ լինելոյ՝ *Աբդլռահիմ քեռորդին Մահմետի՝ ելանէ ութևտասն հազարաւ ի Հայս, խնդրել հարկս և կոտորել զզօրս քրիստոնէիցն որ ի Տարաւն գաւառի. և անցանէր ի Հարք և ի Բասեն, ի Վիրք և ի Ջաւախս և ի Վանանդ. և առեալ հարկս դառնայ ի Տաճկաստան»։*

Վերոհիշյալ վկայությունները, ինչպես տեսնում ենք, գրեթե նույնն են։ Երկրորդ վկայությունը քաղված է, հավանորեն, Հովհան Մամիկոնյանի Պատմությունից. հնարավոր է սակայն, որ իրար համապատասխանող այս վկայությունները ծագում են մի երրորդ՝ մեզ մի անհայտ աղբյուրից։

Երկրորդ վկայության այն տեղեկությունը, թե իբր Խոսրով Բ-ին սպանել է Հերակլը «յետ ութսուն ամի թուականին Հայոց»,

ճիշտ չէ։ Ինչպես հայտնի է, Խոսրով Բ-ի սպանությունը Կավատի հրամանով տեղի էր ունեցել փետր. 25-ին 628 թվին, այսինքն՝ Հայոց ՀԶ թվին (=23 հունիս 627—22 հունիս 628 թ.)։ Սակայն մեր հաշիվների համար այդ սխալը կարևոր չէ. կարևոր է այն, որ արաբական այս արշավանքի տարեթիվը որոշված է «յետ ութսուն» և «ութ ամի» թվականության Հայոց։

Հիմնվելով վերոհիշյալ վկայությունների վրա՝ պատմաբանները և բանասերները ենթադրել են արշավանքի ժամանակը 636 կամ 639 թվականներին։

636 թվին—Չամչյան (Պատմություն Հայոց, Բ, Վենետիկ 1785, էջ 342), Բասմաջյան (Իսկական պատմություն Հայոց, Պոլիս, 1914, էջ 295) և ուրիշները, իսկ 639 թվին — Dulaurier, [Rehcerches sur la chronologie arménienne, Paris, 1859, էջ 225]. Tournebize [Histoire politique et religieuse de l'Arménie, Paris, 1900, էջ 96]. Arslan Kevork [Etudes historiques sur le peuple arménien, Paris, 1909, էջ 275] և Morgan [Histoire du peuple arménien, Paris, 1919, էջ 115]։

Բանասերների առաջին խումբը արշավանքի թվականը հաշվել է Խոսրով Բ-ի մահից ութը տարի հետո (628—8) 636 թվին, իսկ երկրորդ խումբը հենվել է, ըստ երևույթին, Dulaurier-ի հաշվի վրա (Recherches, էջ 225), որը երկրորդ վկայության համաձայն արշավանքի թվականը ենթադրել էր հայոց 88 թվականին, այսինքն՝ 551—88=639 թվին։

Ինձ թվում է, որ թե առաջին և թե երկրորդ հաշիվը չեն համապատասխանում վերոհիշյալ վկայություններին։ «Յետ ութ ամի» Խոսրով Բ-ի մահից, այսինքն՝ 628—8=636 թվից հետո՝ կստանանք ոչ թե 636, այլ 637 թիվը, իսկ «յետ ութսուն ամի թուականին Հայոց» և «յետ ութ ամի այսմ լինելոյ», այսինքն՝ 551+88=639 թվից հետո՝ արշավանքի թվականը կլինի դարձյալ ոչ թե 639, այլ 640 թվին։

Ի նկատի ունենալով, որ վերոհիշյալ երկրորդ վկայության մեջ ժամանակագրական տեղեկություններն ավելի լրիվ են և ծագում են, հավանորեն, սկզբնական աղբյուրից, պետք է ենթադրել, որ Հովհան Մամիկոնյանի Պատմության այժմյան բնագրում ժամանակագրական նույն տեղեկությունները համառոտված են, ուստի և չեն կարող հիմք ծառայել արշավանքի թվականի որոշման։ Եթե այդ այդպես է, ուրեմն, առաջին այս արշավանքի ժամանակը դրվելու է ըստ վերոհիշյալ վկայության, ոչ թե 639, այլ 640 թվականին։

Արաբական նույն այս արշավանքին են վերաբերում, ինչպես ճիշտ դիտել է Մկրտիչ Ղազարյանն իր «Armenien unter der arabischen Herrschaft» աշխատության մեջ (Marburg, 1903, էջ 16—17), արաբական աղբյուրների հետևյալ վկայությունները.

1. Բելազորի, հրատ. de Goeje, Leiben 1870, էջ 176. Հայերեն թարգմանությունն առաջ ենք բերում Բագրատ Խալաթյանցի աշխատությունից՝ «Արաբացի մատենագրեր Հայաստանի մասին», Վիեննա, 1919, էջ 74—75։

«Իյադ նվաճեց Ամիդ առանց ճակատամարտի՝ Ուռհայի խաղաղության հիման վրա, նույն օրինակ և Մայաֆարեկին, իսկ Կաֆարտութ ամրոցը և Մծբին՝ կռվով, նույն պայմանների հիման վրա. նույն կերպ Տուր Աբդին, Մարդին ամրոցը և Դարա, իսկ Քարդա և Բազարդա՝ Մծբինի դաշին հիման վրա։

Նորա մոտ եկավ Ջավազանի իշխանը և խաղաղություն կապեց նորա հետ՝ յուր հողից նորան հարկ տալու պայմանով։ Այս բոլորը կատարեցավ 19 թ. և Մուհառրամի օրերից (հաշված)՝ 20 թ.։ Իյադ նվաճեց Արզն Մծբինի խաղաղության հիման վրա և՝ անցնելով կիրճից՝ հասավ Բիթլիս, եկավ Խլաթ և հաշտություն կապեց քաղաքի իշխանի հետ։ Գալով Աղի ջուրք (Ղազարյան, Armenien unter der arabischen Herrschaft, էջ 16՝ «Zu den saueren Quellen»=«թթու ջուրք»), որ Հայաստանումն է, նա չանցավ այն, այլ վերադարձավ և դրեց Բիթլիսի տիրոջ վրա նույն հարկը, որ նա Խլաթի (բնակչաց) մեծամեծաց և իշխանի վրա էր դրած։ Այստեղից Իյադ անցավ Ռաքքա, ապա Հիմս, ուր նորան Օմար կառավարիչ նշանակեց. վախճանեցավ 20 թ.»։

2. Տաբարի. հրատ. de Goeje, Leiben 1879/93, 1, 2506. Հայերեն թարգմանությունը տես «Արաբացի մատենագրեր Հայաստանի մասին», էջ 80։

«Իյադ ուղարկեց Օսման ի Աբի-լ-Ասսին Չորրորդ Հայք. այստեղ Սաֆֆան ի Մուաթթալ Սուլամին նահատակեցավ տեղի ունեցած մի ճակատամարտի մեջ։ Բնակիչք խաղաղություն հաստատեցին Օսման ի Աբի-լ-Ասսի հետ՝ յուրաքանչյուր ընտանիքից մի դենար վճարելու պայմանով»։

3. Տաբարիի հիշյալ վկայությունը մեջ է բերված նաև Իբն-ալ-Աթիրի մոտ, հմմտ. «Արաբացի մատենագրեր Հայաստանի մասին», էջ 127։

Արաբական աղբյուրների տեղեկությունները, ինչպես տեսնում

ենք, տարբեր են մի քանի կետերում թե իրարից և թե վերոհիշյալ հայկական վկայություններից: Այդ շեղումները և տարաձայնությունները բացատրվում են մասամբ նրանով, որ յոթերորդ դարի անցքերի պատմությունը հիմնված է արաբական աղբյուրներում, գլխավորապես, բանավոր հիշողությունների և ավանդությունների վրա: Բացի այդ՝ պետք է նաև ի նկատի ունենալ, որ հայկական վկայություններում հիշատակված են արաբական արշավանքները Տարոնում և Հայաստանի հյուսիսային շրջաններում, իսկ արաբական աղբյուրների մեջ՝ հյուսիսային Միջագետքում և Չորրորդ Հայքում: Հնարավոր է նույնպես, որ արաբական զորքերը կարող էին ներս խուժած լինել զանազան ուղղությամբ տարբեր զորավարների առաջնորդությամբ:

Տաբարին և Իբն-ալ-Աթիրն արշավանքի ժամանակը դնում են Հեջիրի 19-ին, այսինքն՝ 640 թվին (Հեջիրի 19 թիվը=640 թվին, մինչև դեկտեմբերի 20-ը), իսկ Բելաղորին՝ Հեջիրի 19-ին և 20 թվի «Մուհառամի» օրերին, այսինքն՝ 640 թվին մինչև 641 թվի հունվար ամսի կեսերը: 20 թվին Մուհառամ ամսի սկիզբն ընկնում է դեկտեմբերի 21-ին 640 թվի: Ինչպես տեսանք, արշավանքի նույն այս 640 թվականը մատնանիշ է արված նաև «Պատմութիւն սբ. Ներսիսի» գրվածքում: Ուրեմն՝ վերոհիշյալ արշավանքի ժամանակի նկատմամբ հայկական և արաբական աղբյուրների վկայությունները միմյանց հետ համերաշխ են և համաձայն:

Որ արաբների մուտքը Հայաստան չէր կարող լինել 636 կամ 637 թ.[1], այդ միանգամայն որոշ է ու անվիճելի: Արաբները չէին կարող Հայաստան մտնել Միջագետքը և նրա գլխավոր քաղաքները գրավելուց առաջ: Իսկ Միջագետքի նվաճումը, ինչպես հայտնի է արաբական, ասորական և բյուզանդական աղբյուրների վկայություններից, տեղի էր ունեցել 639—640 թ.:

Ասորական աղբյուրներից Միքայել Ասորին, օրինակ՝ պարզ վկայում է, որ արաբներն առաջին անգամ անցել են Եփրատ գետը և շարժվել դեպի հյուսիս «951 թվին հունաց, 29 Հերակլի, 18 արաբների, 6 Օմարի» այսինքն՝ 639—640 թ. (տես Chronique de Michel le Syrien, ed. par Chabot, T. II, էջ 426):

Ինձ թվում է՝ հիմնվելով բոլոր այս ուշադրավ դիտողությունների վրա՝ կարող ենք վստահորեն եզրակացնել, որ արաբներն առաջին անգամ մտել են Հայաստան հյուսիսային Միջագետքի

[1] Նույն այս թվականն ունի նաև Ասողիկը [Պետերբ. 1885], էջ 98՝ «Յաւուրս յայսոսիկ և յիշխանութեանն Թէոդորոսի Ռշտունւոյ յՂԶ թուականին եղև առաջին ելք ի Հայս Տաճկաց, հրամանաւ Օմարայ»:

կողմից ոչ թե 636, 637 կամ 639 թվականներին, ինչպես այդ մատնացույց է արվում հայ և օտար ուսումնասիրություններում, այլ 640 թվին:

2. ԴՎԻՆԻ ԱՌՈՒՄԸ՝ 640 Թ., ՀՈԿՏԵՄԲ. 6-ԻՆ, ՈՒՐԲԱԹ

Որ արաբներն առաջին անգամ մտել են Հայաստան Միջագետքի կողմից 640 թվին, այդ դժվար չէ եզրակացնել նաև Սեբեոսի վկայությունից, որ ժամանակակից է եղել յոթերորդ դարի անցքերին:

Ներքև մենք կտեսնենք, որ Դվինի առումը, համաձայն Սեբեոսի վկայության, տեղի էր ունեցել 640 թվի հոկտեմբերի 6-ին: Արաբական զորքերը եկել էին Դվին «յԱսորեստան կողմանէ»՝ Տարոնը, Բզնունիքը և Աղիովիտը նվաճելուց հետո: Պարզ է, ուրեմն, որ Սեբեոսի վկայությունը ևս վերաբերում է արաբական առաջին արշավանքին, որ հիշված է նաև Հովհան Մամիկոնյանի և «Պատմութիւն սբ. Ներսիսի» վերոհիշյալ երկերում:

Կարևոր այս հետևությունը, որ անտարակուսելի է, աչքաթող է արված բանասիրական ու պատմական հայ և օտար աշխատություններում. ուստի անհրաժեշտ է նորից կանգ առնել այս խնդրի վրա և ուշադիր կերպով քննել հայկական, ասորական և արաբական աղբյուրների տեղեկությունները, որ հիմք են ծառայել Դվինի առման թվականի որոշման:

Վկայությունները Դվինի առման թվականի մասին բաժանվում են երեք խմբի, որ մեջ ենք բերում տեղ-տեղ հապավումներով:

Առաջին խումբ (հնագույն)

1. «Պատմութիւն Սեբէոսի եպիսկոպոսի ի Հերակլն», Թիֆլիս, 1912, էջ 175, գլ. Լ՝

«Եւ եկ զաւր ապականիչ յԱսորեստան կողմանէ ընդ ճանապարհս ձորոյ յաշխարհն Տարօնոյ. առին զնա և զԲզնունիս և զԱղիովիտ: Եւ ճանապարհ կալեալ ի Բերկրոյ ձորն ընդ Որդսպոյ և ընդ Գոգովիտ՝ թափեցան յԱյրարատ: Եւ ոչ ոք կարաց ի զաւրացն Հայոց արկանել գոյժ ի Դըւին աւան. բայց երեք յիշխանացն, որք երթային ժողովել զզաւրն ճա-
արք
պաղական՝ Թէոդորոս Վահեւունի, և խաչեան Առաւեղեան, և Շապուհ Ամատունի: Որք գնացեալ փախստական ի Դւին, և հասեալ ի կամուրջն Մեծամաւրի, ի բաց աւերեցին, և ինքե-

անք անցեալք գոյժ արկանել ի յաւանին: Եւ ի բերդն ժողովեցին զամենայն մարդիկ աշխարհին՝ որ եկեալ էին ի կուբս այգեստանին:

Բայց Թէոդորոսն գնացեալ ի Նախճաւան քաղաք: Եւ հասեալ թշնամին Բուշայն ի կամուրջն Մեծամաւրի ոչ կարաց անցանել. բայց ունէին առաջնորդ իւրեանց զՎարդիկ իշխան Մոկաց, որ կոչէր Ակնիկ: Ապա անցեալ ընդ կամուրջն Մեծամաւրի, հարին ասպատակաւ զամենայն երկիրն, և ժողովեալ զաւար և զգերութիւն բազում յոյժ, և եկեալ բանակեցան ի յեզր մայրւոյն Խոսրովակերտի:

Եւ եղև յաւուրն հինգերորդի դիմեցին ի վերայ քաղաքին. մատնեցաւ քաղաքն ի ձեռն նոցա. քանզի արկին մուխ շուրջանակի, մերժեցին ծխովն և նետաձգութեամբն զպահապանս պարսպին և կանգնեալ սանդուխս՝ ելին ի պարիսպն և անկեալ ի ներքս բացին զդուռն քաղաքին: Եւ դիմեալ ի ներքս զաւրք թշնամեացն սատակեցին սրով զբազմութիւն քաղաքին… ելին և բանակեցան ի նմին բանակատեղն. որ աւր Ի էր տրէ ամսոյն՝ յաւուր ուրբաթի: Եւ դադարեալ աւուրս ինչ ելին և գնացին ընդ նոյն ճանապարհ՝ ընդ որ եկեալն էին: Եւ խաղացուցին զբազմութիւն գերւոյն՝ ԼԵ հազար ոգի: Իսկ իշխանն Հայոց Ռշտունեաց տէրն դարանակալ եղեալ ի Գոգովիտ գաւառի՝ դիմէ ի վերայ նոցա սակաւուք: Եւ ոչ կարաց զդէմ ունել նոցա. փախստական լինի առաջի նոցա. և նոքա զհետ մտեալ նոցա՝ սատակէին զբազումս ի նոցանէն. և ինքեանք չոքան անցին յԱսորեստան: Եւ եղեւ այս յամս Եզրի կաթուղիկոսի: Իսկ ի ձեռն այնր պատերազմի ի կայսերէ հրաման հասեալ զաւրավարութեանն Թէոդորոսի Ռշտունեաց տեառն՝ հանդերձ պատրկութեան պատուով:

Այս ամենայն լինի ի ձեռն կաթուղիկոսին Ներսիսի՝ որ յաջորդեցաւ ի նմին ամի յաթոռ կաթուղիկոսութեան՝ փոխանակ Եզրի կաթուղիկոսի»:

«ի Ղ թուականին». և եղև համար գերելոցն ԼԵՌ»:

էջ 77՝

«Կոստանդին՝ որդի Կոստանդիանի, թոռն Հերակլի, ամս քաններնն: Ի սորա երկրորդ ամին առաւ Դուին ի Տաճկաց «ի Ղ թուականին». և եղև համար գերելոցն ԼԵՌ»:

3. Chronique de Denys de Tel e-Mahré, pub. et trad. par Chabot, Paris, 1895, էջ 6՝

«952 թ. (640—641), արաբները պաշարեցին Դարան և հարձակվեցին այդ քաղաքի վրա… Նույն այս թվին արաբները պաշարեցին Դվինը (Adabin), ուր սպանվածների թիվը խիստ մեծ էր մինչև 12 000 հայ»:

Հմմտ «Պատմութիւն հայոց արարեալ Կիրակոսի վարդապետի Գանձակեցւոյ», Թիֆլիս, 1910, էջ 58՝ «ի կոտորելն Իսմայէլի զքաղաքն Դուին երկոտասան հազար»[1]:

Երկրորդ խումբ (ըստ արաբական ավանդության)

4. Բելաձորի, տե՛ս «Արաբացի մատենագրեր Հայաստանի մասին», էջ 40՝

«Ինձ պատմել է Մահմեդ Ի. Սադ, որ լսած էր ալ-Վակի-
դից, իսկ սա՝ Աբդուլ Համիդ Ի. Ջաֆարից և սա՝ յուր հորից,
թե Հաբիբ Ի. Մասլամա պաշարեց Դվին և մնաց այնտեղ,
մինչև պատահեցավ նորան Մավրիան հույնը. նա հարձակվե-
ցավ նորա վերա գիշերը, սպանեց նորան և ավարի առավ
նորա բանակը: Դորանից հետո Սալման շտապեց Հաբիբի
մոտ և պատահեցավ նորան Կարինում, ինչպես ճիշտ տեղե-
կություն ունեն պատմողները»:

Տես նաև էջ 43՝

«Այնտեղից (Արճեշից և Բաջունայսից) Հաբիբ եկավ Արտաշատ, որ է ալ-Քիրմիզ, անցավ Ակրատ գետը և բանակեցավ Դվինի դաշտում, ուղարկելով հեծելազորը քաղաքի վերա. ինքն ևս կամաց-կամաց առաջ գնաց, մինչև որ քաղաքի դռների առջև կանգ առավ: Բնակիչք կպաշտպանվեին, նետահարելով նորա զորքը: Հաբիբ դնել տվեց մանջալիք և սկսեց քարկոծել նոցա, մինչև որ նոքա խնդրեցին խնայել նոցա և պարգևել խաղաղություն: Հաբիբ համաձայնեցավ»:

Բելաձորի պատմելով՝ Հաբիբի և Սալմանի այս արշավանքների ժամանակ, որ տեղի էին ունեցել Օթման խալիֆի (644—656) հրամանով, արաբները նվաճել են Հայաստանը, Վրաստանը և Ատրպատականը (տես «Արաբացի մատենագրեր Հայաստանի

[1] Տե՛ս նաև «Սամուէլի քահանայի Անեցւոյ, Հավաքմունք ի գրոց պատմագրաց», Վաղարշապատ, 1893, էջ 80՝

«Արդ՝ յաւուրս Կոստանդի որդւոյ Հերակլեայ՝ առաւ Դուին ի Տաճկաց, սաէ պատմագիրն, և սպանին յաւուր սրբոյ յայտնութեան, ի ս. վկայարանի ս. Սարգսի Բժ-ան Ռ և արեամբ կոտորելոցն ծածկեցաւ սեղանն սուրբ և աւազանն. և զայլսն գերեցին՝ աւելի քան զԼՌ»:

մասին», էջ 36—53): Հաբիբի արշավանքը Միքայել Ասորին (Chronique, II, f. 3, էջ 440—441) դնում է Հեջիրի 25 թվին (28 հոկտ. 645—17 հոկտ. 646): Տաբարին (տես «Արաբացի մատենագրեր Հայաստանի մասին», էջ 89) նույն արշավանքը հիշում է Հեջիրի 24 թվին (644/645 թ.), սակայն վկայում է նաև՝ որ ըստ Վակիդիի ավանդության Հաբիբ Ի Մասլամա Ֆիհրին նվաճել է Հայաստանը Հեջիրի 31 թվին (24 օգոստ. 651—12 օգոստ. 652 թ.): Այս վերջին թվականն ունի նաև Յակուբին հետևյալ հատվածում՝

5. Յակուբի, տես Բ. Խալաթյանց, «Արաբացի մատենագրեր», էջ 104՝

«31 թ. Օսման ուղարկեց Հաբիբ Ի. Մասլամա Ֆիհրիին Հայաստան և ապա Սալման Ի. Ռաբիա Բահլիին՝ նորան օգնության»:

Իբն-ալ-Աթիրը ևս վկայում է, որ «31 թ. ըստ ոմանց Հայաստան նվաճեց Հաբիբ Ի. Մասլամա» (տես «Արաբացի մատենագրեր», էջ 129):

Ինչպես տեսնում ենք, արաբական աղբյուրները Հաբիբ Ի. Մասլամայի արշավանքի նկատմամբ տալիս են տարբեր թվականներ:

Երրորդ խումբ (խառն և շփոթ)

6. «Պատմութիւն Ղևոնդեայ մեծի վարդապետի հայոց», Ս. Պետերբ. 1887, էջ 8—9, գլ. Բ. և Գ՝

«Ապա ի քսան եւ վեցերորդ ամի նոցին (Աբու-Բաքրայ, Ամրայ եւ Օթմանայ) իշխանութեանն դարձեալ յարձակէին եղանել ի վերայ աշխարհիս Հայոց զօրու ծանու:... Յերկրորդ ամի Կոստանդնու կայսեր Հոռոմոց, որ էր թոռն Հերակղի՝ ազդ եղև առ իշխանն Թէոդորոս, եթէ հէն զարթուցեալ գայ ի վերայ աշխարհիս: Իսկ նորա առեալ զզօրս իւր՝ կամէր ունել զկիրճս ճանապարհին Ձորայոյ, այլ ոչ կարաց ժամանել յաղագս նոցա. քանզի ըստ օդաթեն արագութեան յարձակեալք իբրև օձք թևաւորք յառաջեցին թշնամիքն, և զկնի իւրեանց թողեալ զզօրսն Հայոց՝ դէմ եդեալ ընթացան ի մայրաքաղաքն Դուին: Եւ վասն զի թափուր գտին զքաղաքն յարանց պատերազմողաց, զի ամենեքեան ընդ Թէոդորոսի իշխանին գնացեալ էին, բայց միայն զկանայս և զմանկտիս և զայլ խառնիճաղանճս, որք ոչ էին արք պատերազմի՝ հասին ի վերայ քաղաքին և վաղվաղակի առին զամրոցն, և զգտեալ

արսն ի նմա կոտորեցին, և զկանայս և զմանկտիս վարեցին ի գերութիւն՝ ոգիս ԼԵՌ»:

7. «Ստեփաննոսի Տարօնեցւոյ Ասողկան, Պատմութիւն տիեզերական», Ս. Պետերբ., 1885, էջ 98, 2, գլ. Բ՝

«Ի ՂԵ[1] ամի թուականութեան դարձեալ սաստիկ զօրու եկեալ Տաճկաց՝ առին զԴուին քաղաք, և եղև համար գերութեան ԼԵՌ և ապա տիրեցին Հայոց, Վրաց և Աղուանից»:

Նոյնը, էջ 120, 2, գլ. Դ՝

«Ապա ի ԻԶ ամի նոցին (Աբուբաքրայ, Ամրայ և Օթմանայ) իշխանութեան և յերկրորդն[2] Կոստանդնի թոռին Հերակլէսի՝ ել զօրն Իսմայելի յԱսորեստանէ ընդ ճանապարհ Ձորոյ յերկիրն Տարօնոյ. ընդ Բզնունիս, ընդ Բերկրոյ ձորն յԱյրարատ թափեցան: Եւ առին զԴուին քաղաք և զգտեալ արսն ի նմա կոտորեցին, և զկանայս և զմանկունս ի գերութիւն վարեցին ոգիս ԼԵՌ, որ օր ի էր տրէի ամսոյ, ի կութս այգեստանի: Իսկ իշխանն Հայոց Թէոդորոս Ռշտունեաց տէր, որ շինեաց զԱղթամարայ կղզին՝ պատերազմեցաւ ընդ նոսա ի Կոգովիտ և ոչ կարաց յաղթել: Եւ եղեւ այս յամս Եզրի կաթողիկոսի»: Նոյնը, էջ 142, 2, գլ. Զ՝

«Կոստանդին որդի Կոստանդնու, թոռն Հերակլի, ամս ԺԹ. ի սորա երկրորդ ամին առաւ Դուին ի Տաճկաց»:

8. «Մովսեսի Կաղանկատուացւոյ, Պատմութիւն Աղուանից աշխարհի», Թիֆլիս, 1913, էջ 363, 3, գլ. ԺԵ՝

«Իսկ Կոստաս սորին (Կոստանդնի) որդի՝ ամս քսան և ինն ի սորա հինգ ամին յԱրաբիա կոխին եղև, և ի վեցին Տաճիկք եկին ի Հայս եւ առին զԴուին, և որք գերեցանն երեսուն և հինգ հազար թուեցան»:

Երրորդ խմբի հեղինակներից Ղևոնդը՝ Դվինի առման թվականը 'որոշելիս' օգտվել է թե առաջին խմբի «Անանուն ժամանակագրութիւն»-ից և թե երկրորդ խմբի արաբական կամ ասորական մեզ անհայտ ինչ որ աղբյուրից: Ասողիկը քաղել է ժամանակագրական իր տեղեկությունները, գլխավորապես, Ղևոնդից: Իսկ Մովսես Կաղանկատվացու հաշիվը համապատասխանում է երկրորդ խմբի ժամանակագրության: Ուրեմն, աղբյուրների այս

---

1 Եզյանցի ձեռագիրը (Ը) ունի «ի Ղ ամի» համապատասխան «Անանուն ժամանակագրութեան» վերոհիշյալ վկայության. տե՛ս «Պատմութիւն տիեզերական», էջ 98, ծան. 9:

2 Բնագրում «յերրորդն», որ, հավանորեն, սխալ է: Նույն հեղինակը (էջ 142) վկայում է, որ «ի սորա (Կոստանդնի) երկրորդ ամին առաւ Դուին ի Տաճկաց»:

երրորդ խումբը Դվինի առման թվականի մասին չի տալիս որևէ նոր տեղեկություն, այլ մեջ է բերում նախորդ խմբերի ժամանակագրական վկայությունները, աչքաթող անելով, որ այդ վկայությունները իրար հետ անհաշտելի են և հակասական:

Վերոհիշյալ երեք խումբ վկայությունների մեջ Դվինի առումը դրվում է, ինչպես տեսնում ենք, հետևյալ թվականներին՝

1. Եզրի կաթողիկոսության վերջին տարում=640 թ.՝ Սեբեոս.
2. Հունաց կամ ասորոց 952 թ.=1 հոկտ. 640—641 թ. Դիոնիսիոս Տելմահարցի.
3. Հերակլ կայսեր թոռան Կոստանդնի երկրորդ տարում=642/643 թ. «Անանուն ժամանակագրութիւն», Ղևոնդ և Ասողիկ.
4. Հեջիրի 24 թվին=644/645 թ.՝ Տաբարի.
5. Հեջիրի 25 թվին=645/646 թ.՝ Բելաղորի (°), Միքայել Ասորի և Եղիա Մծբնեցի, և կամ Աբու Բաքրի, Ամրի ու Օթմանի իշխանության 26 տարում=645/646 թ.՝ Ղևոնդ, Ասողիկ: Աբու-Բաքրի, Ամրի և Օթմանի իշխանության սկիզբը Ղևոնդը ենթադրում է Հերակլ կայսեր 11-րդ տարում (620/621 թ.) ուրեմն՝ այս խալիֆների իշխանության 26-րդ տարին ընկնում է 645—646 թ.:
6. Հայոց 95 թվին=646 հունիս 18-647 հունիս 17՝ Ասողիկ, և կամ Հերակլ կայսեր թոռան Կոստանդնի վեցերորդ տարում =646/647 թ.՝ Մովսես Կաղանկատվացի:

Այսպիսով՝ Դվինի առման թվականը վերոհիշյալ վկայությունների համաձայն ստացվում է՝ 640, 640/641, 642/643, 644/645, 645/646 և 646/647 թվերին:

Այս խառն ու հակասական տեղեկությունները հիմք են ծառայել, բնականաբար, անհաշտելի տարաձայնությունների նաև բանասիրական և պատմական թե հայ և թե օտար աշխատություններում:

Դվինի առումը դնում են այս աշխատություններում հետևյալ թվականներին (հիշում ենք միայն այն երկերը, որ ունեցել ենք ձեռքի տակ)՝

1. 640 թ. հունվարի 6-ին՝ Չամչյան, Պատմութ., Բ, էջ 343[1].

---

[1] Մ. Օրմանյանը («Ազգապատում», Կոստանդնուպոլիս, 1912—1913, էջ 704—705), հիմնվելով Սեբեոսի և Սամուել Անեցու վկայությունների վրա, ենթադրում է, որ «արաբական բանակը Դուինի առջև կհասնի և Խոսրովակերտի անտառին մոտ բանակ կզարնէ տրէ ամսոյ 20-ին, 640 հոկտեմբեր 6-ին շարժական տոմարով, որ ճիշտ ալ կըպատասխանէ պատմութեան յիշած յաւուր ուրբաթի և ի կուրս այգեստանին պարագաներուն: Երեք ամիս կը տևէ Դուինի պաշարումը, և վերջապես 641 յունուար 6-ին յաւուր սրբոյ Յայտնութեան (Սամ. 80), Արաբացիք

2. 640 թ. հոկտեմբերի 6-ին՝ Ալիշան, Այրարատ, էջ 407 և 495, նաև Հ. Համբարյան, Հուշարձան, 1911, էջ 244.
3. 642 թ. հունվարի 6-ին՝ Tournebize Histoire, էջ 96 և Morgan, Histoire du peuple arménien, էջ 116.
4. 622 թ. հոկտեմբերի 6-ին՝ Dulaurier, Recherches, էջ 227—231, Thopdschian, Zeitschrift für armenische Philologie, II, erstes Heft, էջ 64 և А. Мюллер, История ислама, перевод Медникова, I, էջ 290.
5. 645/646 թ.՝ Laurent, L'Arménie entre Byzance et l'Islam, Paris, 1919, էջ 90. Նույնը՝ 646 թ., էջ 180, նույնը 642 թ., էջ 371.
6. 647 թ. հոկտ. 6-ին՝ Кулаковский, История Визант., III, 1915, էջ 202.

Ժամանակագրական այս հակասությունները վերացնելու համար անհրաժեշտ էր, անշուշտ, պարզել աղբյուրների համեմատական արժեքը և որոշել, թե որը վերոհիշյալ վկայություններից կարող է համարվել վավերական ու ընդունելի: Կարևոր այդ խնդիրը քննության է առնված երկրորդ խմբի աղբյուրների նկատմամբ Մկր. Ղազարյանի «Armenien unter der arabischen herrschaft» ուսումնասիրության մեջ: Սակայն Ղազարյանի հիմնավոր ու համոզիչ դիտողությունները անուշադիր են թողնված գիտական հետագա աշխատություններում:

Ինչպես շատ ճիշտ դիտել է Ղազարյանը, Բելաղորին, որ առաջին անգամ գրի է առել Հայաստանի նվաճման վերոհիշյալ պատմությունը, ապրել է իններորդ դարում (+892) և նրա տեղեկությունները հիմնված են բանավոր ավանդությունների վրա, մինչդեռ Սեբեոսն ականատես է եղել յոթերորդ դարի անցքերին: Երկրորդ՝ այն անցքերը, որ ըստ արաբական աղբյուրների տեղի են ունեցել Հաբիբի արշավանքի ժամանակ Հեջիրի 24/25 թվին, ինչպես՝ Կարին քաղաքի առումը, Դվինի անձնատուր լինելն առանց դիմադրության, Հաբիբի և Մավրիանոս զորավարի կռիվը և Հայաստանի, Վրաստանի և Աղվանքի նվաճումը՝ հիշում է նաև Սեբեոսը, բայց ոչ 644—647 թվականներին, այլ յոթերորդ դարի հի-

---

քաղաքը կըգրաւեն, և անխնայ կըկոտորեն 12.000 հոգի, 35.000 հոգի ալ գերի կըտանին վաճառելու, և եկեղեցի ու ապարանք կապուտ կողոպուտ ընելով կըմեկնին»: Նոր այս ենթադրությամբ Օրմանյանը փորձում է հաշտեցնել Սեբեոսի և Սամուել Անեցու հակասական վկայությունները: Սակայն բնագրորեն այս կռահումը, անշուշտ, սխալ է, որովհետև Սեբեոսի մոտ պարզ ասված է, որ արաբացիները «յաւուրն հինգերորդի դիմեցին ի վերայ քաղաքին» և «մատնեցաւ քաղաքն ի ձեռն նոցա»:

սոնական թվերին։ Մկր. Ղազարյանի այս դիտողություններին կարելի է ավելացնել և այն, որ հենց արաբական աղբյուրների մեջ՝ Տաբարիի, Յաքուբիի և Իբն-ալ-Աթիրի երկերում՝ առաջ է բերված, ինչպես վերև տեսանք, նաև մի երկրորդ ավանդություն ըստ Վակիդիի, որը Հաբիբի և Սալմանի վերոհիշյալ արշավանքները դնում է յոթներորդ դարի հիսունական թվերին, այն է՝ Հեջիրի 31 թվականին (24 օգոստ. 651—12 օգոստ. 652 թ.)։ Արաբական այս երկրորդ ավանդությունը համապատասխանում է մոտավորապես ոչ միայն Սեբեոսի ժամանակագրությանը, այլև բյուզանդական պատմիչ Թեոֆանի վկայությանը, որն իր «Ժամանակագրության» մեջ Հաբիբի արշավանքը Հայաստան և նրա կռիվը Մավրիանոս զորավարի դեմ դնում է նույնպես Կոստանդին կայսեր 12-րդ տարում, այսինքն՝ 652/653 թ. (տե՛ս Chronographia, ed. de Boor, Lips, 1883, էջ 345)։

Կարևոր այս դիտողությունները, որ աչքաթող են արված, իրավունք են տալիս եզրակացնելու, որ Հաբիբի արշավանքի արաբական այն թվականները, որոնք մեջ են բերված Բելաձորիի, Տաբարիի, Միքայել Ասորու, Եղիա Մծբնեցու, Ղևոնդի, Ասողիկի և Մովսես Կաղանկատվացու երկերում՝ ավելի քան կասկածելի են և չեն կարող հավանական համարվել ու ընդունվել։ Արաբական այդ վկայությունները վերաբերվում են ոչ թե Դվինի առաջին առմանը, որ հիշատակված է առաջին խմբի հնագույն աղբյուրներում, այլ Դվինի առմանը և Հայաստանի, Վրաստանի ու Աղվանքի նվաճմանը յոթներորդ դարի հիսունական թվականների սկզբներին։ Այսպիսով՝ ինքնըստինքյան հասկանալի են դառնում և այն անհաշտելի տարաձայնությունները, որ կան Սեբեոսի և Բելաձորու վկայություններում Դվինի առման մասին։ Համաձայն Սեբեոսի՝ «դիմեալ ի ներքս զաւրք Իշմայելացւոց՝ սատակեցին սրով զբազմութիւն քաղաքին՝ ելին և բանակեցան ի նմին բանակատեղն... և խաղաղացուցին զբազմութիւն գերւոյն՝ ԼԵ հազար», իսկ ըստ Բելաձորու՝ «(բնակիչք) խնդրեցին խնայել նոցա և պարգևել խաղաղութիւն. Հաբիբ համաձայնեցաւ»։

Ինչպես տեսնում ենք, ավելի քան պարզ է, որ Բելաձորու վկայությունը չի վերաբերվում Դվինի առաջին առմանը, որ մանրամասն նկարագրված է Սեբեոսի պատմության մեջ։ Միանգամայն պարզ է նմանապես, որ Դվինի առաջին առման թվականը որոշելիս՝ կարող ենք անտես առնել թե երկրորդ խմբի արաբական և ասորական աղբյուրները և թե երրորդ խմբի հայկական աղբյուրները։

Իբրև միակ վստահելի աղբյուր մնում են, հետևապես, առա-
ջին խմբի վերոհիշյալ վկայությունները, որոնք Դվինի առաջին
առման մասին տալիս են հետևյալ թվականները.
1. Եզրի կաթողիկոսության վերջին տարին՝ Սեբեոս.
2. Հունաց կամ ասորաց 952 թ. (=640/641)՝ Դիոնիսիոս
Տելմահարցի.
3. Կոստաս-Կոստանդինի երկրորդ տարին (=642/643 թ.) և
կամ «ի Ղ թուականին» (=641/642 թ.)՝ «Անանուն ժամանակա-
գրութիւն» (նաև Ղևոնդ և Ասողիկ)։
Հայկական և ասորական այս վկայությունների համաձայն՝
Դվինի առաջին առումը, ինչպես տեսնում ենք, ընկնում է 640—
643 թվականների շրջանում, և ուրեմն՝ Դվինի առման տարեթիվը
մնում է դարձյալ անորոշ։
Չնայած սակայն նաև այս վերջին աղբյուրների տարաձայ-
նություններին՝ մի խիստ կարևոր հանգամանք, որ մատնանիշ են
արել Ալիշանը (Այրարատ, էջ 407 և 495) և Համբարյանը (Հու-
շարձան, էջ 244), կովան է ծառայում ճշտիվ որոշելու Դվինի առ-
ման թվականը տոմարական պարզ ու անվիճելի հաշիվների օգ-
նությամբ։
Սեբեոսի վերև մեջ բերված վկայության մեջ մատնանշված
է, ինչպես տեսանք, Դվինի առման ամսաթիվը և օրը՝ «որ աւր Ի
էր տրէ ամսոյն, յաւուր ուրբաթի»։
Արդ, հայկական տոմարը լինելով շարժական՝ 640—643 քա-
ռամյակին նավասարդի 1-ը գալիս է, ինչպես հայտնի է Դյուլոր-
յեյի ժամանակագրական հաշիվներից, հունիսի 19-ին (տե՛ս
Dulaurier, Recherches, էջ 385). սրա համեմատ էլ նույն տարի-
ներում տրե ամսի քսանը (նավասարդի 1-ից մինչև տրե ամսի
20-ը լինում է 110 օր) համապատասխանում է հոկտեմբերի
6-ին։ Սակայն 640—643 թվերին այս վերջին ամսաթիվն ընկնում
է զանազան օրեր՝
1. 640 թվին—ուրբաթ (Զատիկը՝ ապրիլի 16-ին),
2. 641 թվին—շաբաթ (Զատիկը՝ ապրիլի 8-ին),
3. 642 թվին—կիրակի (Զատիկը՝ մարտի 24-ին),
4. 643 թվին—երկուշաբթի (Զատիկը՝ ապրիլի 13-ին)։
Ուրեմն՝ հիմնվելով տոմարական պարզ ու հասկանալի այս
հաշվի վրա՝ կարելի է ապահովապես եզրակացնել, որ Դվինի
առումը տեղի է ունեցել ոչ թե 641, 642 կամ 643 թվականներին,
այլ 640 թվի հոկտեմբերի 6-ին, ուրբաթ։
Այս ուղիղ հաշիվը թեև արել են, ինչպես վերև տեսանք, Ալի-

շանը և Համբարյանը, սակայն մենք հարկ համարեցինք հանգամանորեն կանգ առնել նույն խնդրի վրա, որովհետև թռուցիկ ու համառոտ կերպով առաջադրված նրանց լուսաբանությունները անտես են առնվել գիտական հետագա աշխատություններում։ Մանրախույզ այս քննությամբ ստացվում են արաբական այս արշավանքի և Դվինի առաջին առման մասին հետևյալ ուշագրավ հետևությունները.

1. Ինչպես Հովհան Մամիկոնյանի, «Պատմութիւն սբ. Ներսիսի» գրվածքի, նույնպես և Սեբեոսի վերոհիշյալ վկայությունները վերաբերվում են 640 թվի արաբական առաջին մեծ արշավանքին, որը տեղի էր ունեցել Օմարի խալիֆայության ժամանակ։

2. Արաբներն այս արշավանքի ժամանակ մտել են Հայաստան Միջագետքի կողմից, նվաճել Չորրորդ Հայքը, Տարոնը, Բզնունիքը, Աղիովիտը և արշավել, հավանորեն, հյուսիս-արևմտյան ուղղությամբ Բասեն, Վանանդ, Ջավախք և Վիրք, իսկ հյուսիս-արևելյան ուղղությամբ՝ անցել են Բերկրիի ձորով Կոգովիտ ու հասել մինչև Դվին, որի առաջին առումը տեղի է ունեցել 640 թվի հոկտեմբերի 6-ին, ուրբաթ։

3. Դվինի առման տարին, ամսաթիվը և օրը ճշտիվ որոշվում են ժամանակագրական այն կարևոր տվյալների օգնությամբ, որ առաջ են բերված Սեբեոսի և Դիոնիսիոս Տելմահարցու վկայություններում.

4. Վերոհիշյալ երկրորդ խմբի աղբյուրների վկայությունները վերաբերվում են ոչ թե Դվինի առաջին առմանը, այլ Հաբիբի արշավանքին, Դվինի գրավմանը և Հայաստանի, Վրաստանի ու Աղվանքի նվաճմանը յոթերորդ դարի հիսունական թվականների սկզբներին.

5. Հայաստանում պատահած անցքերը Հաբիբի այս արշավանքի ժամանակ հիշատակված են հենց 652/653 թվերին Սեբեոսի մոտ, որը ժամանակակից էր այդ անցքերին.

6. Աղբյուրների երրորդ խմբի ժամանակագրական տեղեկությունները կարելի է անտես առնել, որովհետև այդ տեղեկությունները քաղված են առաջին և երկրորդ խմբի աղբյուրներից։

3. ԱՐԱԲԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԱՐՇԱՎԱՆՔՆ ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ԿՈՂՄԻՑ՝ 642/643 ԹՎԻՆ

Համաձայն Սեբեոսի վկայության՝ արաբական առաջին մեծ արշավանքից հետո՝ Ներսես կաթողիկոսի միջնորդությամբ և Կոս-

*տաս-Կոստանդին կայսր հրամանով Հայաստանում զորավար է
կարգվել և ստացել պատրիկության պատիվ Թեոդորոս Ռշտունին։
Սեբեոսի վկայությունից երևում է, որ այդ տեղի ունեցած պիտի
լիներ Դվինի առաջին առումից հետո, հավանորեն, 641 թվին։
Արաբական երկրորդ արշավանքի ժամանակ Հայաստանի սահ-
մանների պաշտպանությունը հանձնարարված է եղել Թեոդորոս
Ռշտունուն և Բյուզանդական զորավար Պռոկոպին։*

*Արաբական երկրորդ արշավանքի մասին ունի ընդարձակ մի
վկայություն միմիայն Ղևոնդը։*

*1. «Պատմութիւն Ղևոնդեայ մեծի վարդապետի հայոց», Ս.
Պետերբ. 1887, էջ 7, գլ. Բ՝*

*«Եւ մեծ մասն զօրուն հատեալ ասպատակէին յաշխարհս
Հայոց ընդ կողմն Պարսից. և առնուին ի գերութիւն զաւանս
Մարաց և զգաւառն Գողթն և զգաստակերտն Նախջաւանու.
և զբազումս յարանց ընդ սուր անցուցանէին, և զայլս գերի
վարեալ կանամբք և մանկտեաւ՝ անցուցանէին, ընդ գետն
Երասխ ընդ հունն Ջուղայոյ։ Եւ ընդ երկուս բաժանեալ զօր-
քըն՝ ոմանք զգերեալսն դարձուցանէին յաշխարհն իւրեանց։
Եւ գունդ մի հատեալ ասպատակէին ընդ գաւառն Արտազ ի
վերայ զօրավարին Յունաց, որում անուն էր Պռոկոպ, որ էր
բանակեալ ի գաւառին Կոգովտի և սահմանս Բագուձորոյ և
Մարդուցայից. որում իրազեկ եղեալ իշխանն Թէոդորոս,
որ էր յազգէն Ռշտունեաց՝ ազդէր զօրավարին Պռոկոպայ,
«Եթէ զօր հինին Իսմայելի զարթուցեալ գայ ի վերայ մեր»։
«Իսկ նորա ի բազմութիւն զօրացն ապաստանեալ և ոչ
յՍստուած, որ յաջողէ զպատերազմ՝ ոչ ինչ գրէր զբանս իշ-
խանին Հայոց։ Եւ նա մոռմոքեալ ընդ կորուստ աշխարհիս
Հայոց և ընդ ծուլութիւն զօրավարին՝ ոչ ունէր ժոյժ, այլ
մտեալ երկրորդէր և երրորդէր զբանն։ Եւ բարկացեալ զօրա-
վարին ի վերայ իշխանին՝ ձգէր զվարզն որ ի ձեռին զհետ
նորա։ Եւ սրտմտեալ Թէոդորոս՝ ելանէր յերեսաց նորա, և
նոյնժամայն հրամայէր զօրացն, որ ընդ իւրով իշխանու-
թեամբն էին, «վառեցարուք, ասէ, և ելէք ընդդեմ Իսմայելի»։
Եւ նոքա հեծեալ յերիվարս իւրեանց՝ դարանամուտ եղեն ի
սարակն, որում Եղբարսն կոչէին. և կալեալ զառաջս կրճիցն՝
զբազումս ի նոցանէ սատակէին և առեալ զկապուտ անկե-
լոցն՝ հատուածեալ ի զօրավարէն գնացին ի գաւառն Գառնի։
Հրաման ետ ապա և Պռոկոպն իւրում զօրուն ելանել ի վերայ*

թշնամեացն. յորոց վերայ հեղեալ զօրն Իսմայելի՝ հարկանէին զմեծ մասն Յունաց, և զայլսն փախստական արարեալ անցուցանէին ընդ բանակն իւրեանց. և ինքեանք դարձեալ ի բանակն նոցա հանգչէին: Եւ ասեն լինել զթիւ զօրացն Յունաց աւելի քան զվեց բիւր արանց, և զիսմայելացիսն նուազ քան զբիւր մի արանց: Եւ ի վաղիւն ժողովեալ զկապուտ բանակին, դարձեալ ընդ կրունկն գնացին յաշխարհն իւրեանց:

Եւ եղև այս ի Խաճ եւ Երկրորդ ամի Աբու-Բաքրայ և Օթմանայ եւ Ամրի, իշխանացն Իսմայելի»:

2. Նույն արշավանքի մասին Ասողիկի համառոտ վկայությունը («Պատմութիւն տիեզերական», 1885, 2, գլ. Դ, էջ 120) առնված է Ղևոնդից:

Վերև մենք ասացինք, որ ըստ Ղևոնդի Աբու-Բեքրի, Ամրի և Օթմանի իշխանությունը սկսվել է Հերակլ կայսեր 11-րդ տարում (=620/621 թ., Հերակլը գահ է բարձրացել 610 թվի հոկտեմբերի 5-ին): Ղևոնդի այս վկայությունից կարելի է ըստ իս ենթադրել, որ նրա ժամանակագրական հաշիվը վերաբերվում է, հավանորեն, արաբական Հեջիրին, որի սկիզբն ընկնում է սակայն ոչ թե 620/621, այլ 622 թվին:

Բանասերների այն կարծիքը, որ իբր Ղևոնդի ժամանակագրական ցուցումներն անլուծելի են, որովհետև նրա մոտ անորոշ է Աբու-Բեքրի, Ամրի և Օթմանի իշխանության սկիզբը, ինչպես տեսնում ենք, պարզ մի թյուրիմացություն է: Արաբական այս արշավանքի թվականը որոշվում է առանց դժվարության՝ համաձայն Ղևոնդի վերոհիշյալ ցուցման և ընկնում է Աբու-Բեքրի, Ամրի և Օթմանի իշխանության 22-րդ տարում, այսինքն՝ 641/642 թվականին, և կամ, հավանորեն, Հեջիրի 22 թվին, այսինքն՝ 642/643 թվականին:

Հակառակ Ղևոնդի այս ժամանակագրության բանասիրական և պատմական նորագույն աշխատություններում նույն արշավանքի թվականի մասին հայտնված են տարբեր կարծիքներ: Ղևոնդի հրատարակության իր առաջաբանում Կ. Եզյանցն ասում է, որ «չէ յայտնի ստուգիւ ժամանակ այսր ասպատակի, զի ամն քան երկրորդ իշխանութեանն Աբու-Բէքրի, Օմարայ և Օթմանայ, յորում զայն դնեն Ղևոնդ և Ասողիկ՝ չէ մեկին և իմանալի մինչև ցայսօր, զի ոչ գիտեմք թէ զոր ամն թուականութեանս մերոյ համարի Ղևոնդ առաջին ամ իշխանութեան նորա»: Նույն կարծիքին է նաև

Մկրտիչ Ղազարյանը (տե՛ս Armenien unter der arabischen Herrschaft էջ 19, ծան. 1): Պրոֆ. Մարկվարտը Աբու-Բեքրի, Ամրի և Օթմանի 22-րդ տարին համապատասխան է համարում 653, 654 թ. (տե՛ս Osteuropäische und Ostasiatische Streifzüge, 1903, էջ 441): Ալիշանը (Այրարատ, էջ 495) և Համբարյանը (Հուշարձան, էջ 244) նույն արշավանքի թվականը ենթադրում են 637 թվին՝ Դվինի առումից երեք տարի առաջ, իսկ Tournebize-ը [Histoire, էջ 354]՝ 644 թվին:

Ինչպես տեսնում ենք, բանասերների և պատմաբանների կարծիքները ժամանակագրական այս խնդրի նկատմամբ նույնքան խառն են և հակասական, ինչպես և Դվինի առման թվականի մասին:

Ինձ թվում է սակայն, որ ուշադիր քննությամբ հնարավոր է ճշտիվ որոշել նաև այս արշավանքի տարեթիվը. անհրաժեշտ է միայն ի նկատի ունենալ անուղղակի մի շարք ցուցումներ, որ ուշադրության չեն առնվել:

Վերոհիշյալ արշավանքն Ատրպատականի կողմից անկարելի է ենթադրել 637 թվին, ինչպես այդ արել են Ալիշանը, Համբարյանը և ուրիշները, որովհետև 637 թվին արաբները դեռ նոր էին սկսել Պարսկաստանի նվաճումը և նրանք դեռևս չէին հասել Ատրպատականի կողմերը: Հայտնի է արդեն արաբական և ուրիշ աղբյուրներից, որ արևմտյան Պարսկաստանում վճռական կռիվը պարսիկների դեմ տեղի է ունեցել Նեհավենդում, յոթերորդ դարի քառասնական թվականների սկզբներին (տե՛ս Ph. Nöldeke, Aufsätze zur persischen Geschichte, Leipzig, 1887, էջ 133, նաև Horn, Geschichte Irans in islamitischer Zeit, Grundriss den iranischen Philologie, II. 5, էջ 553):

Սեբեոսը, որ ժամանակակից էր արաբական արշավանքներին, այս մեծ կռիվը «Մարաց գաւառում» դնում է «յառաջնում ամի Կոստանդեայ թագաւորին յունաց և յամի տասներորդի Յազկերտի արքային Պարսից» (Թիֆլիս, 1913, էջ 181, գլ. ԼԲ), այսինքն՝ 641/642 թ.:

Պարզ է, որ վճռական կռվից հետո միայն արաբները կարող էին ներս խուժել Ատրպատական և այստեղից նաև Պարսկական Հայաստան: Եվ, իրոք, արաբական մատենագիրները՝ Տաբարին և Յակուբին, որ այս կետում համերաշխ են միմյանց հետ, Ատրպատականի նվաճումը Մուղեյրա Ի. Շոբայի առաջնորդությամբ դնում են Հեջիրի 21/22 թվին, այսինքն՝ 642/643 թվականներին (տե՛ս «Արաբացի մատենագիրներ Հայաստանի մասին», էջ 82 ևն, 104):

Կարևոր այս դիտողություններից դժվար չէ հետևցնել, որ Ղևոնդի նկարագրած Մարդուցայքի վերոհիշյալ կոտորածը չէր կարող պատահած լինել յոթերորդ դարի քառասնական թվականներից առաջ:

Ինչպես հայտնի է, Մարդուցայքի դեպքը թռուցիկ կերպով հիշատակված է նաև Սեբեոսի մոտ: Սեբեոսի պատմելով՝ երբ Կոստաս-Կոստանդին կայսրն արշավելու էր Հայաստան՝ հույն զորքերն ամբաստանում էին Թեոդորոս Ռշտունուն, համարելով նրան պատճառ Մարդուցայքի[1] կոտորածի և պահանջում էին պատժել հայերին:

«Եւ ամբաստանութիւն ամենայն զաւրացն Հոռոմին և տրտունջ,—ասում է Սեբեոսը,—Ռշտունեաց տեառնէն լինէին, և զՀայոց՝ առաջի թագաւորին խիբեանց վասն հարուածոց՝ որ եղեն ի Մարդոցէսն: Զի ասացին՝ թէ «միաբանեցան ընդ Իսմայէլացիսն. զմեզ վատահացուցին. զզաւրսն ձապաղել եոուն յասպատակ յԱտրպատական, և զնոսա ածին ի վերայ մեր յանկարծակի, և հարկանել ետուն զմեզ, և մեր ամենայն ինչ անդ անկաւ. բայց թող երթամք ի Հայս և մեր իրացն խնդիր առնեմք» (Թիֆլիս, 1912, էջ 225, գլ. ԼԵ):

Սեբեոսի այս վկայությունը, որ ժամանակակից պատմիչ է՝ մենք մեջ բերինք ցույց տալու համար, որ Ղևոնդի տեղեկությունը Մարդուցայքի կոտորածի մասին ստույգ է և պատմական:

Այդ կոտորածը, ինչպես վերև ասացինք, չէր կարող պատահած լինել յոթերորդ դարի քառասնական թվականներից առաջ: Եվ իրավի, բացի վերոհիշյալ դիտողություններից՝ ի նպաստ մեր եզրակացության կարելի է մատնանշել նաև մի ուրիշ կարևոր ցուցում:

Այդ դեպքի ժամանակը որոշելու համար ուշագրավ է առանձնապես Դիոնիսիոս Տելմահարցու կարևոր մի վկայությունը, որ ուշադրության չէ առնվել: Տելմահարցին իր ժամանակագրության մեջ հիշում է Պռոկոպ զորավարին և Թեոդորոսին, որոնք արշավել էին միասին մինչև Բատնա-Սառուգ: Այդ տեղեկությունն անհրաժեշտ ենք համարում ամբողջությամբ մեջ բերել:

«955 թվին (643—644) պատրիկ Վաղենտինը՝ Հռոմայեցոց զորավարը, եկավ կռվելու արաբների դեմ: Անհաբեկված նրանց ներկայությունից՝ նա փախավ և թողեց իր հետ եղած բոլոր հարստությունները, որ ընկան արաբների ձեռքը:

Նույն թվին Պռոկոպը և Թեոդորոսը մի խիստ ուժեղ հար-

[1] Սեբեոսը փոխանակ «Մարդուցայք»-ի՝ ունի «Մարդոցէք»:

ձակում գործեցին և հասան մինչև Բատնա-Սառուգ: Նրանք ավերեցին և կողոպտեցին այդ քաղաքը. վերջին ինչ որ ցանկանում էին և վերադարձան իրենց երկիրը» (տես Chronique, publ. et trad. par Chabot, էջ 6—7):

Տելմահարցու այս հատվածն ուշադրության արժանի է այն տեսակետից, որ այստեղ ևս, ինչպես և Ղևոնդի վկայության մեջ, Պռոկոպ զորավարը և Թեոդորոս Ռշտունին հիշատակվում են իբրև զորապետներ, որ գործել են միասին արշավող արաբների դեմ: Դժվար չէ կռահել, որ Մարդուցայքի դեպքը եղած պիտի լինի արշավանքից հետո:

Ղևոնդի վերոհիշյալ վկայությունից հայտնի է, որ Մարդուցայքի կոտորածից առաջ Թեոդորոս Ռշտունին, թշնամանալով Պռոկոպին՝ հեռացել էր Գառնի գավառը, որը գտնվում էր Կոգովտի հարավակողմում: Իսկ Սեբեոսը, ինչպես վերև տեսանք, հաղորդում է, որ հունական զորքերը գանգատվում էին կայսեր և մեղադրում Թեոդորոս Ռշտունուն, համարելով նրան ու հայերին պատճառ Մարդուցայքի կոտորածի: Շատ պարզ է, ուրեմն, որ բյուզանդական զորքերի կոտորածից հետո Թեոդորոս Ռշտունին չէր կարող Պռոկոպի հետ միասին մասնակցած լինել վերոհիշյալ արշավանքին Բատնա-Սառուգի ուղղությամբ:

Ըստ Սեբեոսի՝ 646 թվին նա իբրև ծանր հանցագործ շղթայակապ ուղարկված է եղել Կոստանդնուպոլիս և արդարանալուց հետո միայն՝ նորից ստացել է զորավարության իր նախկին իշխանությունը:

Այսպիսով, Բատնայի առումը դրվելու է, ինչպես տեսնում ենք, Մարդուցայքի կոտորածից առաջ: Ճշտվում է նաև, որ այս երկու ժամանակամերձ դեպքերը տեղի են ունեցել յոթերորդ դարի քառասնական թվականների առաջին տարիներում:

Ինձ թվում է, հիմնվելով վերև մեջ բերված ժամանակագրական տեղեկությունների և կարևոր այլ ցուցումների վրա, կարելի է այս անցքերի ժամանակը որոշել ավելի ճշգրիտ կերպով: Տելմահարցու վկայությամբ՝ Պռոկոպի և Թեոդորի արշավանքը Բատնա-Սառուգ և պատրիկ Վաղենտինի փախուստն Արևելքից տեղի են ունեցել միևնույն թվին, այն է՝ 955—643/644 թվականին: Արդ՝ պատմական աղբյուրների տեղեկություններից հայտնի է, որ 641 թվի նոյեմբեր ամսին Կոստաս-Կոստանդինը գահ էր բարձրացել Վաղենտինի աջակցությամբ: Այնուհետև՝ Վաղենտինի արշավանքն ու փախուստն Արևելքից պետք է դնել համաձայն

Սեբեոսի, որ ժամանակակից պատմիչ է, ոչ թե 643/644 թվին, այլ 642/643 թվականին։ Դարձյալ ըստ Սեբեոսի՝ Կոստասի կայսրության երկրորդ տարում, այսինքն՝ 643 թվին, Վաղենտինը վերադարձել էր արդեն Կոստանդնուպոլիս և «խորհէր... համբառնալ զինքն ի պատիւ թագաւորութեան»։ Թեոփանը Վաղենտինի վերադարձը և սպանությունը դնում է 644 թվին (an.m. 6136, տե՛ս Chronographia)։

Ժամանակագրական այս ցուցումներից կարելի է հետևցնել, որ Պռոկոպի և Թեոդորոսի արշավանքն ևս Բասնա-Սառուզ պետք է ենթադրել 642/643 թվականին և ոչ 643/644 թվին, ինչպես հաշվում է Տեյմահարցին։

Ի նկատի առնելով այս ցուցումները՝ կարող ենք դարձյալ հաստատապես եզրակացնել, որ վերոհիշյալ արաբական արշավանքի և Մարդուցայքի կոտորածի նկատմամբ terminus ante quem non պետք է ընդունել 642/643 թվականը։

Արդ՝ Ղևոնդի մոտ արաբական այս արշավանքի ժամանակը ցույց է տված, ինչպես տեսանք, Աբու-Բաքրի, Ամրի և Օթմանի իշխանության 22-րդ տարում, հավանորեն, Հեջիրի 22 թվին, այսինքն՝ 642/643 թվականին։ Եվ որովհետև մեծ կռիվը «Մարաց գավառում» (Նեհավենդում) հիշվում է Սեբեոսի մոտ 641/642 թվին, իսկ արաբական արշավանքներն Ատրպատականում և Պարսկահայաստանում, ինչպես վկայում են արաբական աղբյուրները, տեղի էին ունեցել 642/643 թվականներին, ուստի Ղևոնդի ժամանակագրական վկայությունը կարող ենք համարել հավանական և ընդունել։

Ըստ այսմ՝ Պռոկոպի և Թեոդորոսի արշավանքը Բասնա-Սառուզ, ինչպես և Մարդուցայքի կոտորածը, դրվելու են 642/643 թվականին։

4. ԱՐԾԱՓ ԲԵՐԴԻ ԱՌՈՒՄԸ՝ 650 ԹՎԻ ՕԳՈՍՏ. 8-ԻՆ, ԿԻՐ.

Արծափ բերդի առումը, որ տեղի է ունեցել արաբական մի նոր արշավանքի ժամանակ Ատրպատականի կողմից, ենթադրվում է սովորաբար 643 թվի օգոստոսի 10-ին, կիրակի։ Այս տարեթիվը և ամսաթիվը, որ հիմնված են Սեբեոսի վկայության և Dulaurier-ի տոմարագիտական հաշվի վրա (Recherches, էջ 231—232), համարել են ստույգ գրեթե բոլոր բանասերները և պատմագետները[1]

[1] Ալիշանն Այրարատում (էջ 509) Արծափի առումը դնում է 643 թվի օգոստոսի 11-ին, իսկ Բասմաճյանը (Իսկական պատմութիւն Հայոց, էջ 296)—652 թվին։

(տե՛ս Chazarian, Armenien unter der arabischen Herrschaft, էջ 29. Tournebize, Histoire politique et religieuse de l'Arménie էջ 354. Morgan, Histoire du penple arménien էջ 116. Marquart, Streifzüge էջ 440. Համբարյան, Հուշարձան, էջ 245)։ Սակայն այդ տարեթիվը, որ համարվել է մինչև այժմ անվիճելի, միանգամայն անհավանական է և անընդունելի։

Որպեսզի պարզ և հասկանալի լինեն մեր առարկությունները՝ մեջ ենք բերում նախ այն բոլոր վկայությունները, որ վերաբերվում են արաբական այս մեծ արշավանքին։

1. «Պատմութիւն Սեբէոսի եպիսկոպոսի ի Հերակլն», Թիֆլիս 1913, էջ 188—191, գլ. ԼԲ—ԼԳ՝

Եւ եղև ի գալ միւսում ամի եկն զաւրն Իսմայէլի յԱտըր-
պատական, և բաժանեցան յերիս։ Առաջ մի յԱրարատ, և
առաջ մի ի սեփհական գնդին կողմանս. և առաջ մի յԱղու-
անս։ Արդ՝ որք ի կողմանս սեփհական գնդին, արշաւեալ
սփռեցան և հարեալ զամենայն կողմանսն զայնոսիկ սրով
սուսերի, առին զաւար և զգերութիւն։ Եւ եկին ժողովեցան ի
յԵրևան՝ և մարտեան ընդ բերդին, և ոչ կարացին առնուլ։
Եկին ի յՈրդսպու, և ոչ նմա ինչ կարացին առնել։ Գնացին
անտի և բանակեցան յԱրծափս՝ հանդէպ բերդին առ ջրովն։
...Եւ եղև յամին երկրորդի Կոստանդնի, յամսեանն նոռի, որ
աւր ԻԳ էր ամսոյն յաւուր կիւրակէի ընդ առաւաւտս՝ ճչեցին
Իսմայելացիքն ի բերդին վերջոյ և առաջոյ, և հարին զնոսա
սրով սուսերի։ Եւ բազումք զահավէժ լեալ սատակէին։ Եւ
զկանայս և զմանկունս իջուցին ի բերդէն՝ կամէին սատակել.
և ոչ գոյր թիւ գերւոյն, և անասուն պաճարացն բազում յոյժ։
Եւ եղև ի վաղիւ առաւաւտուն՝ եկն եհաս ի վերայ նոցա զաւ-
րավարն Հայոց, և եհար զնոսա անհուն կոտորածով։ Եւ էին
նոքա երեք հազար ընտիր սպառազէնս յամենայն զաւրացն
Իսմայէլի, և ոչ ոք զերծաւ ի նոցանէ. բայց սակաւ ճողոպ-
րեալք հետևակք երթեալ ամրացան ի Շամբին։ Եւ ապրեցոյց
տէր յաւուր յայնմիկ զբազմութիւն գերւոյն ի ձեռաց Իսմա-
յէլացւոցն. և զԻսմայէլ խորտակեաց կործանմամբ մեծաւ. և
մեռան Բ իշխանքըն Իսմայէլի՝ Աւթման և Ոզոմայ։ Եւ եղև
յաղթութիւն մեծ զաւրավարին Հայոց, և ետ տանել զաւրա-
վարն Հայոց զընծայս Կոստանդնի ի պատերազմէն՝ զընտիր
ընտիր երիվարացն Ճ ձի, զոր առեալ արքայի ուրախ եղև ինքն
և ամենայն պաղատն, և արձակեաց անդրէն շնորհակալու-
թիւն մեծ»։

2. «Պատմութիւն Ղեւոնդեայ մեծի վարդապետի Հայոց», Ս. Պետերբ. 1887, էջ 11, գլ. Գ՝

«Այս յետ այնորիկ յերեսուն եւ վեցերորդ ամի իշխանութեանն նոցա (Աբու-Բաքրայ, Օթմանայ և Ամրի) զօր ժողովեալ դարձեալ յարձակեցան ի վերայ աշխարհիս Հայոց. որոց էին գլխաւորք Օթման և Օգբայ։ Եւ իբրև հասին ի սահմանս Հայոց՝ յերիս բաժանեալ առաջս՝ սփռեցան յասպատակս իւրեանց։ Առաջ մի հատեալ ընդ կողմն Վասպուրական աշխարհին, առին զաւանս և զամրոցս որ մինչև ի Նախջաւան քաղաք. և առաջ մի ընդ կողմն Տարօնոյ։ Եւ միւս առաջն հասեալ ի Կոգովիտ՝ պաշարէին զամրոցն Արծափաց» եւ այլն։ (Արծափի առման մանրամասնությունները համապատասխանում են Սեբեոսի հաղորդած տեղեկություններին):

3. «Ստեփաննոսի Տարօնեցւոյ Ասողկան, Պատմութիւն տիեզերական», Ս. Պետերբ. 1885, էջ 122՝

Ասողիկի աղբյուրն է Ղևոնդը և թվական ցույց է տրված դարձյալ՝ «յԼԶ ամի իշխանութեան Աբու Բաքրայ, Օթմանայ եւ Ամրայ»։

Ինչպես վերև ասացինք, Արծափի առման թվականը որոշելիս՝ Dulaurier-ն հենվել է Սեբեոսի վերոհիշյալ վկայության վրա՝ «յամին երկրորդի Կոստանդնի, յամսեանն հոռի, որ աւր ԻԳ էր ամսոյն, յաւուր կիւրակէի»։ Ենթադրելով արաբական այս մեծ արշավանքը և բերդի առումը «յամին երկրորդի Կոստանդնի», այսինքն՝ 643 թվին, նա հաշվել է, որ այս թվականին նավասարդի 1-ը գալիս է հունիսի 19-ին, իսկ հոռի 23-ը (նավասարդի 1-ից մինչև հոռի 23-ը լինում է 53 օր) համապատասխանում է օգոստոսի 10-ին։ Արդ՝ 643 թվի օգոստոսի 10-ը, ինչպես իրավամբ մատնանշել է Dulaurier-ն եղել է իրոք կիրակի։ Dulaurier-ի այս պարզ ու համոզիչ դիտողություններից հետո՝ ժամանակագրական այս խնդիրը համարվել է բավարար կերպով լուծված և Արծափի առումը դրվել է 643 թվի օգոստոսի 10-ին, կիրակի։

Ուղի՞ղ է արդյոք այս թվականը, որ կրկնվում է գրեթե անընդհատ բանասիրական և պատմական ուսումնասիրություններում։

Ընդունելով հանդերձ, որ Dulaurier-ի տոմարական հաշիվները միանգամայն հիմնավոր են և անվիճելի, ինձ թվում է, կարելի է հաստատապես պնդել, որ նրա մատնանշած տոմարական զուգադիպությունները պատահական են և չեն կարող հիմք ընդունվել ժամանակագրական այս խնդրի լուծման։

Արծափի առման թվականը որոշելիս՝ անհրաժեշտ է նախ և
առաջ նկատի ունենալ, որ Սեբեոսի «Պատմության» մեջ պատ-
մական անցքերը դասավորված են ժամանակագրական կարգով և
անցքերի այդ հաջորդականությունը հիմնովին խախտվում է
նրա մոտ հենց Արծափի առման վերաբերյալ վերոհիշյալ վկա-
յությամբ։ Ժամանակագրական այս անհերդաշնակությունը Սե-
բեոսի գրվածքում վրիպել է բանասերների և պատմաբանների
ուշադրությունից։

Արծափի առման վերաբերյալ վկայությունից առաջ Սեբեոսի
մոտ հիշված են հաջորդական կարգով պատմական նախընթաց
անցքերը, որ տեղի էին ունեցել Կոստաս-Կոստանդինի կայսրու-
թյան երկրորդ, հինգերորդ և հետագա մի քանի տարիներում.
օրինակ՝ պատրիկ Վաղենտինի դավադրությունը (643 թվին),
Վարազտիրոցի աքսորից վերադառնալը (645/646 թվին), Թեո-
դորոս Ռշտունու դատը Կոստանդնուպոլսում և արդարացումը,
Վարազտիրոցի փախուստը, Հայաստանի իշխան և կյուրապաղատ
նշանակվելը և մահը, Թեոդորոս Ռշտունու արձակումը Հայաս-
տան և նրա վերահաստատումը զորավարության նախկին իր
պաշտոնում. և այս անցքերից հետո միայն հիշվում է արաբական
մեծ արշավանքն Ատրպատականի կողմից և Արծափի առումը։

Հայ բանասերներից Զամչյանը, Համբարյանը և ուրիշները,
ժամանակագրական այս անտեղությունը վերացնելու համար,
ենթադրել են, որ իբր Սեբեոսի մոտ հիշված նախընթաց դեպքերը
տեղի են ունեցել Արծափի առումից առաջ՝ 642 կամ 642—644
թվականներին։ Վարազտիրոցի վերադարձն աքսորից և նրա կյու-
րապաղատ նշանակվելը Զամչյանը դնում է 642 թվին, իսկ Թեո-
դորոս Ռշտունու հաստատվելը զորավարության պաշտոնում և
Արծափի առումը՝ 642 թվին («Պատմութիւն Հայոց», հ. 2, էջ 344—
345)։ Համբարյանը, որ Արծափի առումը ենթադրում է 643 թվի
օգոստոսի 10-ին, Վարազտիրոցի աքսորից ազատվելը և հարա-
կից մյուս դեպքերը դնում է 642 թվին (Հուշարձան, էջ 245)։ Թե
այս և թե նման ենթադրությունները, իհարկե, անընդունելի են,
որովհետև Սեբեոսը պարզ ու որոշ վկայում է, որ Վարազտիրոցը
վերադարձել էր աքսորից «յամին հինգերորդի թագաւորութեան»
Կոստանդնի, այսինքն՝ 645/646 թվականին։ Համբարյանի առար-
կությունը, իբր այդ թվականը հայտնի սխալ է, անշուշտ, հիմ-
նավոր չէ։ Վաղենտինի դավադրությունը, ինչպես հայտնի է
պատմական աղբյուրներից, տեղի էր ունեցել 643 թվին. այդ

դավադրությունից հետո, ինչպես վկայում է Սեբեոսը, «արաբին զաւրավար զԹէոդորոս զոմն[1] հաւատարիմ իշխանացն Հայաստանեայց, յայնց՝ որ ի յունաց կողմանէ»․ այնուհետև՝ սրա բարեխոսությամբ ազատված է եղել աքսորից Վարազտիրոցը և հաստատված իր նախկին աստիճանում։ Ինչպես տեսնում ենք, Վարազտիրոցի վերադարձն աքսորից պետք է եղած լիներ 645/646 թվին, և ոչ երբեք 642 թվականին, ինչպես այդ ենթադրել են Չամչյանը, Համբարյանը և ուրիշները։

Ինձ թվում է, Սեբեոսի «Պատմութեան» ԼԲ և ԼԳ գլուխներում անցքերի ժամանակագրական հաջորդականությունը կարելի է վերականգնել ոչ թե վերոհիշյալ բանագրասիկ լուսաբանությամբ, այլ Սեբեոսի բնագրի հավանական մի նոր ուղղումով, որը կատարելապես հաստատվում է, ինչպես կտեսնենք, հենց նույն ինքն Սեբեոսի մի քանի կարևոր այլ վկայություններով։ Բացի այդ՝ բոլոր անտեղությունները Սեբեոսի մոտ վերանում են դարձյալ հենց այն ստույգ համարված թվականի սրբագրությամբ, որ վերաբերվում է Արծափի առման։

Սեբեոսի պատմության բնագիրը, որ հասել է մեզ 16-րդ դարի միայն մի աղճատ ձեռագրում, ինչպես հայտնի է, ունի բազմաթիվ աղավաղություններ։

Այդպիսի մի աղավաղություն է, իմ կարծիքով, նաև Արծափի առման վերաբերյալ «յամին երկրորդի Կոստանդնի» ընթերցվածը։ Սկզբնական բնագրում եղած պիտի լինի «յամին Ը երորդի Կոստանդնի» կամ «յամին Թ երորդի Կոստանդնի» և աղավաղումն առաջ է եկել Ը կամ Թ և Բ տառերի նմանությունից։

Թե որն է այս ուղղումներից գերադասելի, այդ կարելի է որոշել տոմարական հաշիվների օգնությամբ։

Սեբեոսի վկայությունից գիտենք, որ Արծափի առումը տեղի էր ունեցել «յամսեանն հոռի, որ աւր ԻԳ էր ամսոյն, յաւուր կիւրակէի ընդ առաւաւտս»։ Արդ՝ Կոստաս-Կոստանդինը թագավորած է 641 թվի նոյեմբերին, ուստի նրա կայսրության իններորդ տարին ընկնում է 649 թվի նոյեմբերից մինչև 650 թվի նոյեմբերը։ Այս թվականներին Նավասարդի 1-ը գալիս է հունիսի 17-ին և որովհետև Նավասարդի 1-ից մինչև Հոռի ամսի 23-ը լինում է 53-օր՝ ուստի Հոռի ամսի 23-ը համապատասխան կլինի

[1] Այս Թեոդորոսին սխալմամբ շփոթում են Մարկվարտը և Կուլակովսկին Թեոդորոս Ռշտունու հետ, տե՛ս Marguart, Strelfzüge, էջ 440 և Кулаковский, История Византии., III, 191.

օգոստոսի 8-ին։ Եւ հենց ճիշտ 650 թվին զատիկն ընկնում է մարտի 28-ին և Հոռի 23-ը կամ օգոստոսի 8-ը գալիս է իրոք կիրակի օր, ինչպես և ունի Սեբեոսը։

«Յամին Ը երորդի Կոստանդնի» ուղղումը չի համարվում, որովհետև 649 թվին Հոռի 23-ը կամ օգոստոսի 8-ը գալիս է ոչ թե կիրակի, այլ շաբաթ։ Սակայն նույն այդ ուղղումը կարող էր ընդունելի համարվել, եթե հնարավոր լիներ ապացուցանել, որ Սեբեոսի մոտ աղճատված է նաև ամսաթիվը՝ «որ աւր ԻԳ էր ամսոյն» փոխանակ «որ աւր ԻԴ էր ամսոյն»։ Այդ դեպքում՝ Արծափի առումը կընկներ 649 թվի օգոստոսի 9-ին, որովհետև այս թվին Հոռի 24-ը կամ օգոստոսի 9-ը գալիս է դարձյալ կիրակի օր՝ համապատասխան Սեբեոսի վկայության։

Նախադասելի համարելով առաջին ուղղումը՝ Արծափի առման թվականը մենք ենթադրում ենք 650 թվի օգոստոսի 8-ին, կիրակի։

Մենք ընդունում ենք իհարկե, որ ամսաթվի և կիրակիի այս զուգադիպումը կարող է այստեղ էլ պատահական լինել, ինչպես Dulaurier-ի հաշվի մեջ. համաձայն ենք նաև, որ Արծափի առման թվականը որոշելու համար տոմարական մեր հաշիվն ինքնին բավական չէ։ Սակայն մեր առաջարկած ուղղումը հիմնված է և ուրիշ կարևոր ցուցմունքների վրա, որ հաստատում են դարձյալ նույն այս ենթադրությունը։

Մեջ ենք բերում մեր ենթադրությունը հաստատող նաև մի ուրիշ ապացույց։

Ղևոնդ երեցը, ինչպես վերև տեսանք, Արծափի առումը դնում է Դվինի առումից տասը տարի հետո։ Դվինի առումը նա ենթադրում է «ի քսան և վեցերորդ ամի Նոցին (Աբու-Բաքրայ, Ամրի և Օթմանայ) իշխանութեանն»։ Այդ մեծ արշավանքը նկարագրելուց հետո՝ նա վկայում է այնուհետև, որ արաբները «դադարեցին յելանելոյ ի վերայ աշխարհիս Հայոց ամս Ժ», ուստի և Արծափի առումը նա ենթադրում է «յերեսուն և վեցերորդ ամի իշխանութեանն նոցա»։ Ըստ Ղևոնդի Դվինի առումն ընկնում է, ինչպես վերև հաշվեցինք, 645/646 թվին, ուրեմն՝ Արծափի առումը կընկնի նույն հաշվով 655/656 թվին։ Այս թվականները, անշուշտ, սխալ են։ Համաձայն Սեբեոսի և Տելմահարցու վկայությունների Դվինի առումը, ինչպես վերև տեսանք, ճշտիվ որոշվում է 640 թվի հոկտեմբերի 6-ին, ուրբաթ։ Ղևոնդի սխալ ժամանակագրությունը ծագել է, ինչպես ասացինք, արաբական կամ այլ օտար

աղբյուրների ազդեցությամբ, որոնց մեջ Դվինի առումը ենթա-
դրըված է Հեջիրի 24 կամ 25 թվին: Հասկանալի է, որ այս սխալ
թվականը հիմք էր ծառայելու նաև Արծափի առման թվականի
սխալ որոշման: Սակայն ժամանակագրական այս սխալ հաշիվ-
ները բնավ իրավունք չեն տալիս մեզ մերժելու Ղևոնդի պարզ ու
կարևոր այն տեղեկությունը, որ Արծափի առումը տեղի է ունեցել
Դվինի առումից տասը տարի հետո: Այս տեղեկությունը, որ հիմ-
նըված է, հավանորեն, կամ ավանդության կամ թերևս գրավոր
որևէ աղբյուրի վրա, կատարելապես համապատասխանում է մեր
ենթադրության, և վերոհիշյալ մեր սրբագրությունը հաստատվում
է այսպիսով ոչ միայն տոմարական հաշվով, այլև պատմական
այլ վկայությամբ: Ենթադրելով Արծափի առումը Դվինի առումից
(640 թ. հոկտ. 6) տասը տարի հետո՝ Արծափի առման թվականը
ստանում ենք ճիշտ և ճիշտ 650 թվին կամ «յամին Թ երրորդի
Կոստանդնի»՝ համաձայն վերոհիշյալ մեր սրբագրության:

Կարելի է մատնանշել մեր ենթադրությունը հաստատող նաև
մի երրորդ ապացույց:

Որ Սեբեոսի բնագրում «յամին երկրորդի Կոստանդնի» ըն-
թերցվածն ակներև մի սխալ է և մեր ուղղումը միանգամայն
հիմնավոր՝ այդ պարզ երևում է արաբական նույն այս արշա-
վանքներին վերաբերող Սեբեոսի պարզ ու որոշ տեղեկություն-
ներից: Բանասերների ուշադրությունից վրիպել է, որ հենց ինքը
Սեբեոսն Արծափի առումը և արաբական այս արշավանքներն
Ատրպատականի կողմից ենթադրել է Դամասկոսում կնքված
երեքամյա զինադադարի դաշինքից առաջ՝ ծովային այն պատե-
րազմների ժամանակ, որոնք տեղի էին ունեցել 649 և 650 թվա-
կաններին: Արծափի առումը նկարագրելուց հետո՝ Սեբեոսը
շարունակում է.

տես էջ 191, գլ. ԼԳ (Թիֆլիս 1913)՝

«Իսկ այն զաւրն՝ որի կողմանս Այրարատեան, եհար սրով
մինչև ի կողմանս Տայոց, Վրաց և Աղուանից՝ առ վաւար և
զգերութիւն, և եկն էանց ի Նախճաւան առ այն զաւր, որ
մարտ եդեալ կռուէին ընդ բերդին Նախճաւանի: Բայց սա-
կայն ոչ կարացին առնուլ զնա: Աւրին զբերդն Խրամայ, և
սատակէին զնոսա սրով, և զկանայս և զմանկունս գերի
վարեցին:

Իսկ որ ի կողմանս Պաղեստինացւոց, հրամայեաց կազմել
նաւատորմիղս բազում և եմուտ ի նաւ, և կալաւ գործ պատե-

րազմի ընդ Կոստանդնուպալիս. և ոչ յաջողեցաւ նմա նաւա-
մարտութիւնն. քանզի ելին ընդդէմ նորա զաւրացն բազմու-
թիւն նաւուց. և կործանեցին զնոսա ի խորս ծովուն, և զբա-
զումս վանեցին հրով. և զբազումս փախստական արարեալ
հալածեցին: Բայց սակայն զարհուրեցաւ արքայն Կոստանդին.
լաւ համարեցաւ տալ սակ, և առնել հաշտութիւն պատգամա-
ւորաւք. և փութացուցանէին Իսմայէլացիք զկոյսն՝ զի կատա-
րեսցեն զբան հաշտութեանն: Իսկ թագաւորն յունաց Կոս-
տանդին՝ քանզի մանուկ էր, ոչ իշխեաց կատարել առանց
կամաց զաւրուն, և գրէ առ Պռոկոպ զի երթիցէ ընդ նմա
Դամասկոս առ Մաւիաւ իշխանն զաւրուն Իսմայէլի, և կա-
տարեսցէ զպայման հաշտութեան ըստ զաւրուն կամացն:
Արդ՝ իբրև եւտես Պռոկոպ զհրամանն արքունի, և լուաւ բանս
ի զաւրացն, գնաց զհետ նոցա ի Դամասկոս առ Մաւիաւ
իշխան զաւրուն Իսմայէլի. և յայտնեաց զչափ սակին և
սասց սահմանն և առ զհաշտութիւնն, և գնաց»:
Խնդիրը, ուրեմն, շատ պարզ է: Արծափի առումը դրվելու է,
ինչպես տեսնում ենք, Պռոկոպի կնքած զինադադարից առաջ,
որի տարեթիվը Թեոփանի մոտ ևս ցույց է տրված 650 թվակա-
նին (an. m. 6142, տե՛ս Chronographia ed. de Boor).
Արծափի առման թվականի ճշտմամբ վերականգնվում է Սե-
բեոսի ԼԲ և ԼԳ գլուխներում պատմական անցքերի ժամանակա-
գրական հաջորդականությունը: 646 թվին Թեոդորոս Ռշտունին
շղթայակապ տարվել էր Կոստանդնուպոլիս. արդարանալուց և
զորավարության իր նախկին պաշտոնում վերահաստատվելուց
հետո՝ նա վերադարձել էր Հայաստան, հավանորեն, 649 թվին.
այնուհետև, ինչպես վկայում է Սեբեոսը, «ի գալ միւսում ամի»,
այսինքն՝ 650 թվին, տեղի էին ունեցել արաբական մեծ արշա-
վանքներն Ատրպատականի կողմից և Արծափի առումը:
Ինչպես տեսնում ենք, Արծափի առման տարեթվի մեր նոր
լուսաբանությամբ վերանում են ժամանակագրական այն անտե-
ղությունները և թյուրիմացությունները, որ անվերջ կրկնվում են
հայագիտական ուսումնասիրություններում, ինչպես և այն օտար
երկերում, որ վերաբերում են բյուզանդական կայսրության և
արաբական խալիֆայության պատմություններին:
Արաբական թե այս և թե վերոհիշյալ արշավանքների թվա-
կանների ճշտմամբ ոչ միայն փոխվում է արշավանքների նախ-
կին ժամանակագրական դասավորությունը, այլև խախտվում են

այն ընդհանրացումները, որ հիմնված են ժամանակագրական հին սխալների վրա։

Laurent-ի „L'Arménie enfre Byzance et l'Islam" նորագույն ուսումնասիրության մեջ սրբագրվելու են, օրինակ, հետևյալ սխալ ենթադրությունները.

1. 640 թվից մինչև 651 թիվը մատնանշված են Լոռանի մոտ վեց արշավանք՝ Բյուզանդահայաստան կամ Պարսկահայաստան (տես էջ 90 և 371), մինչդեռ այդ ընդումը հիմնապես ժխտվում է նոր այս ուսումնասիրությամբ.

2. Ըստ Լոռանի՝ Հայաստանն այդ արշավանքների ժամանակ շարունակ անցել է մերթ արաբների ձեռքը և մերթ բյուզանդացիների (տես էջ 199—200 և 371). այս ենթադրությունը ևս ճիշտ չէ։

Իրապես, ինչպես վերև տեսանք, մինչև 650 թիվը տեղի են ունեցել միայն երեք արշավանք հետևյալ հաջորդականությամբ՝

1. 640 թվին՝ արաբական առաջին մեծ արշավանքը Միջագետքի կողմից և Դվինի առումը (640 թվի հոկտեմբերի 6-ին, ուրբաթ).

2. 642/643 թվին՝ արաբական երկրորդ արշավանքը Ատրպատականի կողմից Պարսկահայաստան և Մարդուցայքի կոտորածը.

3. 650 թվին՝ արաբական երրորդ մեծ արշավանքը դարձյալ Ատրպատականի կողմից և Արծափի առումը (650 թ., օգոստ. 8-ին, կիր.)։

Այս երեք արշավանքն էլ ունեցել են ասպատակության բնույթ. արաբական զորքերը վերցրել են ավար և գերիներ ու վերադարձել։ Արաբական տիրապետությունը Հայաստանում հաստատվել է ոչ թե այդ արշավանքների ժամանակ, այլ յոթերորդ դարի հիսունական թվականների սկզբներին։

5. ԹԵՈԴՈՐՈՍ ՌՇՏՈՒՆԻ ԵՎ ԹԵՈԴՈՐՈՍ «ԶԱՒՐԱՎԱՐ ՅՈՒՆԱՑ».

Պատմագիտական նորագույն ուսումնասիրություններում շփոթել են, ինչպես ներքև կտեսնենք, Թեոդորոս Ռշտունուն մի այլ Թեոդորոսի հետ, որը պատրիկ Վաղենտինի սպանությունից հետո (643 թ.) նշանակված է եղել «զաւրավար յունաց»։

Թյուրիմացությունն առաջ է եկել նրանից, որ պատմագետները սխալ են հասկացել Սեբեոսի վկայությունները նրա պատմության ԼԲ գլխում։

Սեբեոսը՝ Վաղենտինի դավադրությունը և նրա գլխատումը նկարագրելուց հետո՝ տալիս է «ումն Թէոդորոսի» մասին հետևյալ տեղեկությունը.

1. «Պատմութիւն ի Հերակլն», Թիֆլիս 1913, էջ 184, գլ. ԼԲ՝

«Եւ զԿոստանդին հաստատեցին յաթոռ թագաւորութեանն։ Եւ արարին զաւրավար զԹէոդորոս զումն հաւատարիմ յիշխանացն Հայաստանեայց, յայնց՝ որ ի յունաց կողմանէ։ Սա իբրև առ զաւրավարութիւնն՝ աղաչեաց զթագաւորն և խնդրեաց պարգևս՝ առնել ողորմութիւն այնոցիկ, զորս էր աքսորեալ յԱփրիկէ։ Եւ մանաւանդ վասն Ասպետի՝ որդւոյ Սմբատայ Խոսրով Շում կոչեցելոյ։ Եւ քաղցրացոյց Աստուած զսիրտ թագաւորին և հրամայեաց ածել զնոսա ի քաղաքն թագաւորական։ Եւ ընկալաւ զնոսա իբրև զսիրելիս թագաւորութեանն և զորդի նորա առաջին սպաթար զՍմբատ ի մէջ ամենայն սպաթարացն, և կանտիտատ։ Եւ անդէն կարգեաց ի կարգն առաջի յամին հինգերորդի թագաւորութեան իւրոյ։ Նոյնպէս և զՎահանն Խոռխոռունի, և զայլ ևս»։

Նույն այս ժամանակ, ինչպես հաղորդում է Սեբեոսը, Կոստանդինն ուղարկում է Հայաստան Թումա իշխանին, որը հանկարծակի հարձակվում է Կոտայքում Թեոդորոս Ռշտունու վրա, կալանավորում նրան և ուղարկում Կոստանդնուպոլիս։ Ինչպես տեսնում ենք, Սեբեոսի վկայություններից պարզ հետևում է, որ Թեոդորոս Ռշտունին և հունաց զորավար Թեոդորոսը տարբեր անձնավորություններ են։

Սեբեոսի մոտ հունաց զորավար Թեոդորոսը հիշվում է նաև մի ուրիշ հատվածում։

Վարազտիրոցը, որ փախել էր Կոստանդնուպոլսից ու ամրացել Տայքում, կյուրապաղատ է կարգվել Հայաստանում դարձյալ այս զորավարի ու Ներսես կաթողիկոսի միջնորդությամբ։

«Յանժամ հրաման ետ զաւրավարն յունաց Թէոդորոս, վկայում է Սեբեոսը (էջ 187), հանդերձ իշխանաւքն զաւրուն և նախարարաւքն Հայոց՝ արձակել զՆերսէս կաթուղիկոս առ Ասպետ, և տանել նմա երդումն հաւատարմութեան ի խնդրել նմա զիշխանութիւն աշխարհին, և ածել նմա զկին իւր և զորդիսն»։

Թեոդորոս «յունաց զաւրավար»-ը, ինչպես երևում է այս հատվածի բովանդակությունից, Վարազտիրոցի փախուստի ժամանակ գտնվել է Հայաստանում, մինչդեռ Թեոդորոս Ռշտունին՝

համաձայն նույն այս ԼԲ գլխի շարունակության՝ ստացել էր նորից զորավարության իր նախկին իշխանությունը և արձակվել Կոստանդնուպոլսից Հայաստան ոչ թե Վարազտիրոցի փախուստից առաջ, այլ նրա մահից հետո:

Ուրեմն՝ ավելի քան պարզ է, որ այս երկրորդ վկայությունը ևս վերաբերվում է Թեոդորոս հունաց զորավարին և ոչ Թեոդորոս Ռշտունուն:

Սեբեոսի պարզ ու որոշ վկայությունները սխալ են հասկացված ոչ միայն գիտական հին երկերում, այլև պատմական ու բանասիրական նորագույն աշխատություններում, օրինակ՝

1. Юл. Кулаковский, История Византии, т. III, Киев. 1915, стр. 191—

«Вступив в сношения с императором при посредстве католикоса Феодор Рыштуни ходатайствал о смягчении участи своих соплеменников, членов армянской знати, которые томились в ссылке по делу о заговоре на жизнь Ираклия в 638 г. То были Вараз-Тироц, сын Смбата Багратуни и Ваган Хорхоруни. С первым из них он был связан воспоминаниями юности, проведенной при дворе Хозроя. Предоставляя Феодору Рыштуни высшие полномочия в Армении, император внял его просьбе, вернул из ссылки обоих и возвратил им их придворные саны».

2. Marquart, Osteuropäische und Ostasiatische Streifzüge, Leipzig, *1903, էջ 440. տես նաև «Հայ Բագրատունեաց ճիւղագրութիւնը», թարգմ. Հ. Մ. Հապոզյանի, Վիեննա 1913, էջ 4:*

«Հերակղ մահուընէն յառաջ կերդուընցնէ իր որդին՝ որ ետ կանչէ Ասպետը եւ իր նախկին աստիճանին մեջ հաստատէ, Սեբ. 108 (641-ին): Կոստանդին Հերակղի եղբորորդին՝ Թէոդորոս Ռշտունւոյ աղաչանաց վրայ կըկատարէ զայս, Սեբ. 114»:

Փաստական նույն այս սխալը հանդիպում է նաև ուրիշ աշխատություններում, որ անհրաժեշտ է իհարկե ուղղել:

Տուրնեբիզը (Histoire, *էջ 355) և Մկր. Ղազարյանը* (Armenien unter der arabischen Herrschaft, *էջ 29) ենթադրում են, որ վերոհիշյալ հունաց զորավար Թեոդորոսը Թեոդորոս Վահեունին է և ոչ Թեոդորոս Ռշտունին: Սակայն Համբարյանը Հուշարձանում լույս տեսած իր հոդվածում (էջ 245) իրավամբ առարկում է, որ «Սեբէոս երկիցս կըյիշէ զԹեոդորոս Վահեւնի, զոր նոյն իսկ պատմութիւնը կներկայացնէ, մինչ հոս յիշուած Թէոդորոսը հաւատարիմ կը կոչէ կայսեր»:*

Ուշագրավ է նաև այն, որ ինքը՝ Սեբեոսը տարբերում է այս երկու Թեոդորոսներին՝ մեկին նա անվանում է Թեոդորոս Վահեվունի իսկ մյուսին՝ «Թէոդորոս ումն հաւատարիմ յիշխանացն Հայաստանեայց, յայնց՝ որ ի յունաց կողմանէ»:

Կարող ենք ուրեմն վստահորեն եզրակացնել, որ Սեբեոսի հիշած Թեոդորոսները՝ Թեոդորոս Ռշտունին, հունաց զորավար Թեոդորոսը և Թեոդորոս Վահեունին՝ տարբեր անձնավորություններ են:

6. ՍՄԲԱՏ ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆ՝ ԴՐՈՒՆԳԱՐ ԵՎ ՈՉ ԿՅՈՒՐԱՊԱՂԱՏ.

Պատմական և բանասիրական գրեթե բոլոր աշխատություններում Վարազտիրոցի որդին Սմբատը հիշատակված է իբրև կյուրապաղատ և իշխան հայոց: Ընդհանուր այս կարծիքը, որ հիմնված է Սեբեոսի, Ղևոնդի և Հովհաննես կաթողիկոսի ցուցմունքների վրա, ավելի քան վիճելի է:

Մեջ բերենք նախ Սմբատի՝ իշխան կարգվելու մասին աղբյուրների վկայությունները.

1. «Պատմութիւն Սեբէոսի ի Հերակլն», Թիֆլիս 1913, էջ 188, գլ. ԼԲ՝

«Արդ՝ մինչդեռ գայր հրովարտակն և պատիւ առնել զնա (զՎարազտիրոց) կիւրապաղատ, յանկարծակի եհաս նմա հիւանդութիւն և մեռաւ. եւ բարձին զմարմին նորա և տարան թաղեցին առ հաւրն իւրում ի Դարինս: Եւ զորդի նորա զանդրանիկ, որում անունն էր Սմբատ, կարգեաց արքայ ի պատիւ հաւր իւրոյ, տուեալ նման զիշխանութիւնն ընիկ տանուտէրութեանն ասպետութեան, և արար զնա դրունգար զաւրաց իւրոց: Ետ նմա կին ի տանէն Արշակունեաց և յիւրոց մերձաւորաց, և արձակեաց ի բանակն առ զաւրս իւր»:

2. «Պատմութիւն Ղևոնդեայ մեծի վարդապետի Հայոց», Ս. Պետերբ. 1887, էջ 12, գլ. Դ՝

«Ի սորա (Մուաւիայի) յառաջնում ամի իշխանութեանն և ի ԻԵ ամի Կոստանդնի կայսեր, որ էր թոռն Հերակլի, սկսաւ Տաճկաց: Ազդ եղև առ թագաւորն Կոստանդին բանն. և հրամայեաց զօրու գումարել ի վերայ աշխարհիս Հայոց իշխանն ... յէր զօրավարին որ ի կողմանս Կիլիկեցւոց՝ ելանել ընդդէմ նոցա: Ընկենոյր և զիշխանն Թէոդորոս յիշխանութենէն վասն

նինգութեանն, զոր արար առ զօրավորին Պռոկոպայ, և փոխանակ նորա կացուցանէր զՍմբատ ումն ի տոհմէ Բագրատունեաց, և առաքէր ընդ զօրավարին իւրում»։

3. «Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ, Պատմութիւն Հայոց», Թիֆլիս 1912, էջ 85՝

«Իսկ նա (Վարազտիրոց) յանուղ գիշխանութեան պատիւն՝ վաղվաղակի վախճանի. զոր և տարեալ եդին ի Դարօն առ հօր իւրում քաջին Սմբատայ։ Այա Ներսէս զորդի նորա զՍմբատ ի պատիւ հօրն խնդրէ կացուցանել, և հայցէ ես զԹէոդորոս Ռշտունեաց տէր ի զօրավարութիւն հաստատել։ Եւ այսպէս պայազատեալ՝ ապահովանայր առ ժամանակ մի ի չար հինից Հագարու աշխարհիս մեր»։

Աղբյուրների այս վկայությունները բավական անկապ են և հակասական։ Պատմաբանները և բանասերները, անուշադիր թողնելով ակներև այդ հակասությունները, օգտվել են անխտիր բոլոր աղբյուրներից առանց այդ վկայությունների համեմատական և քննական ստուգման։ Հենվելով մեջ բերված վկայությունների վրա՝ նրանք ընդունել են, որ Սմբատը կարգված է եղել կյուրապաղատ և հայոց իշխան իր հոր մահից հետո (տե՛ս Չամչյան, Պատմութիւն Հայոց, Բ, էջ 345, 347, 349 և 356. Saint-Martin, Mémoires, 1, էջ 337, Tournebize, Histoire, էջ 96—97. K. Arslan, Etudes historiques էջ 276. Chazarian, Armenien unter der arabischen Herrschaft, էջ 30. Morgan, Histoire, էջ 116. Laurent, L'Arménie entre Byzance et l'Islam, էջ 85, 333։

Չամչյանը, Սեն-Մարտենը և Տուրնեբիզը որոշել են անգամ նրա պաշտոնավարության տարեթիվը՝ 644—654 թ.։

Համապատասխանո՞ւմ են արդյոք այս եզրակացությունները աղբյուրների հաղորդած տեղեկություններին։

Ինձ թվում է, դժվար չէ համոզվել՝ որ այդ եզրակացությունները ոչ միայն հիմնավորված չեն, այլև բոլորովին հակառակ են ժամանակակից պատմագրի՝ Սեբեոսի վկայության։

Քննենք մի առ մի աղբյուրների վերոհիշյալ վկայությունները։

Ղևոնդի պատմելով՝ Կոստաս-Կոստանդինը Սմբատին իշխան էր կարգել փոխանակ Թեոդորոս Ռշտունու Մարդուցայքի դեպքից հետո։ Այդ դիտողությունը ճիշտ չէ։ Սեբեոսի պատմությունից մենք գիտենք, որ Թեոդորոս Ռշտունին Մարդուցայքի դեպքից մի քանի տարի հետո (646 թվին) դատի է տրվել Կոստանդնուպոլսում, արդար է ճանաչվել և վերահաստատվել զորավարության իր նախկին պաշտոնում և վերադարձել Հայաստան, հավանորեն

649 թվին։ Ժամանակակից նույն պատմիչի վկայություններից
հայտնի է, որ Թեոդորոս Ռշտունուց հետո Կոստանդինը նշանա-
կել էր «իշխան հայոց հեծելոցն» (էջ 228, գլ. ԼԵ) Մուշեղ Մամի-
կոնյանին և այնուհետև կյուրապաղատ էր կարգել Համազասպ
Մամիկոնյանին (էջ 246, գլ. ԼԸ)։ Ղևոնդի վկայությունը, ինչպես
տեսնում ենք, կարելի է անտես առնել իբրև անհավանական և
անվավեր։
Հովհաննես կաթողիկոսի ամբողջ հատվածը համառոտություն
է, անտարակույս, Սեբեոսի ընդարձակ վկայության։ Այդ հատ-
վածի վրա ևս հարկ չկա կանգ առնել։
Մնում է, ուրեմն, Սեբեոսի վկայությունը, որը ժամանակա-
կից լինելով Սմբատին՝ միակ արժանահավատ աղբյուրն է և ամե-
նից ավելի մանրամասն ու ճշմարտապատում տեղեկություններ
է հաղորդում նրա մասին։ Եվ հենց Սեբեոսի վկայությունը, ինչ-
պես և Հովհաննես կաթողիկոսի անհաջող համառոտությունը, որ
ուշադրությամբ չեն կարդացվել և բաղդատվել իրար հետ, հիմք
են ծառայել վերոհիշյալ թյուրիմացության, որ իբր Սմբատը հոր
մահից հետո նշանակվել է կյուրապաղատ և հայոց իշխան։ Սխալ
են հասկացվել Սեբեոսի հատվածում Սմբատի մասին հետևյալ
տողերը.
«Եւ զորդի նորա կանդրանիկ՝ որում անունն էր Սմբատ,
կարգեաց արքայ ի պատիւ հաւր իւրոյ, տուեալ նմա զիշխա-
նութիւնն ընիկ տանուտէրութեանն ասպետութեան»։
Հատվածի երկրորդ մասից պարզ երևում է, որ «պատիւն»
այստեղ ոչ թե Սմբատի հոր կյուրապաղատության «պատիւն» է,
այլ «ընիկ տանուտէրութեանն ասպետութեան»։ Սեբեոսի վկա-
յության իմաստն այն է, որ Սմբատը լինելով Վարազտիրոցի
անդրանիկ որդին՝ ճանաչվել է կայսեր կողմից իբրև Բագրատուն-
յաց տանուտեր։ Նա չէր կարող կարգված լինել կյուրապաղատ և
հայոց իշխան, որովհետև Սեբեոսն իր վկայության շարունակու-
թյան մեջ որոշ կերպով վկայում է, որ Սմբատը ստացել էր կայ-
սրից դրունգարի պաշտոն և ուղարկվել բանակ։ Իսկ դրունգա-
րությունը կամ գնդապետությունը, ինչպես հայտնի է, զորական
հասարակ պաշտոն էր. ուստի միանգամայն հասկանալի է, որ
Հայաստանի կյուրապաղատին չէր կարելի կարգել դրունգար և
ուղարկել բանակ։
Այսպիսով, ինչպես տեսնում ենք, հերքվում է Սմբատի
մասին վերոհիշյալ կարծիքը, որ մինչև այժմ կրկնվել է գրեթե
բոլոր երկերում։

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՐԱԲԱԿԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՄ[1]

Եվրոպական պատմագիտության մեջ այն կարծիքն է սովորաբար տիրում, որ իբր թե արևելյան ժողովուրդները միշտ հլու և հնազանդ են լինում ճնշող բռնակալների հանդեպ։ Հռչակավոր գերմանական պատմաբան Թ. Մոմզենը, օրինակ, իր «Հռոմեական պատմության» մեջ մատնանշում է, որ ասիացիներն անսահման հակում ունեն անգործության և ընդունակ չեն ինքնաբերաբար ոտքի ելնելու շահագործող իշխանությունների դեմ[2]։

Այս կարծիքը, ինչպես կտեսնենք, բացարձակապես սխալ է։ Նորագույն ուսումնասիրությունները, գլխավորապես ռուս արևելագետների՝ ակադեմ. Բարտոլդի, պրոֆ. Յակուբովսկու և ուրիշների, ինչպես և իմ այսօրվա դասախոսությունը, պարզ ապացուցում են, որ ժողովրդական շարժումները և ապստամբությունները տեղի են ունեցել պարբերաբար ոչ միայն միջնադարյան Ռուսաստանում և Արևմտյան Եվրոպայում, այլև Հայաստանում ու Մերձավոր Արևելքում։ Հատկապես արաբական տիրապետության շրջանում գյուղացիների, արհեստավորների ու անգամ ստրուկների ըմբոստացումներն ու ապստամբությունները, ինչպես ցույց են տվել վերոհիշյալ ռուս գիտնականները, IX-X դարերում դարձել էին գրեթե անընդհատ։

Երբ խոսք է լինում այդ շարժումների մասին՝ պետք է նախ և առաջ ի նկատի ունենալ, որ մատնանշված ապստամբություններն ունեցել են կամ սոցիալական ու դասակարգային բնույթ և կամ եղել են ժողովրդական-ազատագրական շարժումներ ընդդեմ ճնշող ու կեղեքող օտար տիրապետողների։

---

[1] Դասախոսություն՝ կարդացված պետհամալսարանի լեկտորիումում 1939 թ. մարտի 18-ին, «Սասունցի Դավթի» հազարամյակի կապակցությամբ։

[2] *Моммзен,*, Римская история, I. II, М., 1887, стр. 269.

Սոցիալական-դասակարգային բնույթի շարժումները Մերձավոր Արևելքում, ինչպես այժմ պարզված է, գտնվել են, մեծ մասամբ, մազդակյանների ուսմունքի ազդեցության տակ։ Սասանյան Պարսկաստանի Կավատ թագավորի ժամանակ (488-531 թթ.), այս ուսմունքը, ինչպես հայտնի է, անարգել տարածվել էր Պարսկաստանում և ունեցել էր ժողովրդական ստորին խավերի մեջ հսկայական հաջողություն։ Իր կրոնական մասում այս աղանդը պարզապես խառնուրդ էր զրադաշտական դուալիզմի և պարսկաքրիստոնեական մանիքեյական աղանդի։ Իսկ սոցիալական իր մասում նա քարոզում էր ֆեոդալական դասային արտոնությունների վերացում, ընդհանուր հավասարություն և գույքերի ու հարստությունների, ինչպես և կանանց, հավասար բաշխում բոլոր մարդկանց մեջ։ Մազդակի և նրա հետևորդների ասելով, անհավասարությունը չար ու դիվային մի երևույթ է, իսկ հավասարության հաստատումն արդար մի պահանջ է և համապատասխանում է բարի աստծու կամքին։

Կրոնական-սոցիալական այս աղանդի վրա ես հարկավոր համարեցի առանձնապես կանգ առնել, որովհետև մազդակյանները, ենթարկվելով հետագայում, վերոհիշյալ Կավատի թագավորության վերջին տարիներում, սոսկալի հալածանքների՝ փախել էին մասամբ նաև Ատրպատական ու իրենց ուսմունքը տարածել էին Անդրկովկասում և, ըստ երևույթին, նաև Հայաստանում։ Հայտնի է արդեն, որ IX դարի առաջին կեսում Ատրպատականում տարածված պարսիկ Բաբեկի և նրա հետևորդների «խուրրամյան» անվանվող աղանդի մեջ ևս կային գույքային հավասարության պահանջներ, որ պետք է վերագրել, անշուշտ, մազդակյանների ազդեցության։ Միանգամայն հնարավոր է նույնպես, որ հայ պավլիկյան ու թոնդրակյան աղանդների վրա ևս կարող էին որոշ ազդեցություն գործած լինել պարսկական այդ աղանդավորները։ Սակայն այս խնդիրը կարոտ է դեռ ուշադիր ու լուրջ քննության և փաստական հիմնավորման ու ապացուցման մատենագրական համոզիչ վկայությունների օգնությամբ։

Տարբեր բնույթի շարժումներ էին, ինչպես վերև ասացի, ժողովրդական-ազատագրական շարժումներն ընդդեմ օտար տիրապետության։ Եվ հենց այս կարգի՝ VIII—IX դարերի երկու հայկական մեծ ապստամբություններն ընդդեմ արաբական տիրապետության գլխավոր նյութն են կազմելու իմ այսօրվա դասախոսության։ Իսկ հատկապես կրոնական-սոցիալական բնույթ ունե-

ցող դասակարգային շարժումների մասին Հայաստանում ես խոսելու եմ հաջորդ իմ դասախոսության ընթացքում, որի թեման է լինելու «Քաղաքները Հայաստանում 10—11-րդ դարերում»:

• •
•

*Արաբական տիրապետությունը հաստատվել էր Հայաստանում,
ինչպես գիտեք, յոթերորդ դարի հիսունական թվականների
սկզբներին: Նոր նվաճողների տիրապետության առաջին շրջանում,
սկսած մոտ 650 թվից մինչև 750 թիվը, ուրեմն՝ գրեթե ճիշտ հարյուր տարի՝ Հայաստանը գտնվում էր Օմայան խալիֆների իշխանության տակ, իսկ 750 թվից սկսած մինչև 887 թիվը, այսինքն՝
մինչև Բագրատունյաց թագավորության հաստատումը՝ նա ենթարկվում էր Աբբասյան տոհմի խալիֆներին: Արաբական տիրապետության առաջին շրջանում խալիֆայության կենտրոնը գտնվում
էր Դամասկոսում և գերիշխող դեր էին կատարում նոր աշխարհակալ պետության մեջ Ասորիքի արաբները, իսկ երկրորդ շրջանում կենտրոնը դառել էր 762 թվին հիմնված Բաղդադ քաղաքը և
գերակշիռ դեր էին խաղում Իրաքի արաբները և մահմեդականություն ընդունած պարսիկ ազնվականությունը:*

*Արաբական նվաճումների և աշխարհակալ ծավալման մասին
առանձնապես հետաքրքիր է արաբական մատենագիր Յակուբիի
վկայությունը նրա «Գիրք խարաջի մասին» երկում, որի մեջ նա
Օմար խալիֆին վերագրում է հետևյալ ուշագրավ խոսքերը.*

*«Մահմեդականներն ատում են նրանց (նվաճվածներին), քանի
իրենք կենդանի են, իսկ երբ մենք ու նրանք մեռնենք՝ մեր
որդիները կուտեն նրանց (նվաճվածների) որդիներին՝ իրենց կենդանության ժամանակ»:*

*Այս «ուտողներն» ու շահագործողները, իհարկե, առավելապես
Օմայան և Աբբասյան խալիֆներն էին և իշխող դասերը, մինչդեռ
արաբական ու մահմեդական ժողովրդի ստորին խավերը, որոնք
ես գտնվում էին տնտեսական ծանր դրության մեջ:
Օմայյանների ժամանակ արաբների տիրապետությունը Հայաստանում ինչպես և բնակչության,— իհարկե գլխավորապես
ստորին խավերի,—տնտեսական ու հարկային շահագործումն
օտար այս աշխարհակալության կողմից եղել է, մանավանդ
սկզբնական շրջանում, համեմատաբար մեղմ ու տանելի: Նրանց
մեղմ ու զգուշավոր այդ քաղաքականությունը բացատրվում է
պարզապես նրանով, որ Օմայյաններն ի նկատի են ունեցել Հայաստանի ստրատեգիական ու ռազմական մեծ նշանակությունը և նատաղեցել են, պահպանելով նրա ներքին ինքնուրույնությունը և նա-*

•

*խարարական նախկին կարգերը՝ օգտագործել նրա զինվորական
ուժերն իրենց նոր սահմանների պաշտպանության համար, ընդդեմ
Բյուզանդիայի ու խազարների: Օմայյանների այս քաղաքականությանը կամովին ընդառաջել էին և իրենք հայկական նախարարությունները: Տեսնելով, որ Բյուզանդական կայսրության զորքերը
գրեթե անընդհատ պարտություն են կրում, և հույս չունենալով օգնություն ստանալու հույներից՝ նրանք հպատակել էին խալիֆայությանը կնքելով նրա հետ հատուկ պայմանագիր:
Այդ դաշինքը, որով տրվել էր նախարարություններին ներքին
ինքնուրույնություն՝ կնքված էր 653[1] թվին Մուավիայի հետ: Թե
ինչպիսի մեծ արտոնություններ էին նրանք ստացել՝ այդ երևում է
դաշինքի բովանդակությունից:
«Այս թող լինի,— պայման է կապում Մուավիան,—
հաշտության ուխտն իմ և ձեր մեջ՝ որքան ժամանակ դուք
կամենաք: Երեք տարի ես ձեզանից հարկ չեմ առնելու. իսկ
հետո կտաք, ձեր երդման համաձայն, որքան դուք կկամենաք: Ձեր երկրի մեջ պետք է ունենաք 15.000 հեծելազոր և
նրանց պետք է պարենավորեք ինքներդ. արժեքը ես դուրս
կգամ հարկից: Հեծելազորը ես Ասորիք չեմ տանի, սակայն
ուրիշ տեղ, ուր որ հրամայեմ՝ պետք է պատրաստ լինին գնալու: Ձեր բերդերը ոչ ամիրաներ կուղարկեմ, ոչ արաբ սպա
և ոչ նույնիսկ մեկ հատ հեծյալ: Թշնամին չպիտի մտնի Հայաստան. իսկ եթե հույները ձեզ վրա հարձակվեն՝ կուղարկեմ
ձեզ օգնական զորք, որքան որ ուզենաք: Երդվում եմ մեծ
աստծու անունով, որ սուտ չեմ խոսում» (Սեբեոս, գլ. ԼԵ):
(«Այս լիցի ուխտ հաշտութեան իմոյ ընդ իս և ընդ ձեզ
որչափ ամաց և դուք կամիցիք. և ոչ առնում ի ձէնջ սակ զերբեամ մի. ապա յայնժամ տացիք երդմամբ, որչափ և դուք
կամիցիք. և հեծեալ կալջիք յաշխարհիդ ԺԵ հազար: Եւ հաց
յաշխարհէն տուք, և ես ի սակն արքունի անգարեմ, և զհեծեալսն յԱսորիս ոչ խնդրեմ. բայց այլուր և հրամայեմ,
պատրաստ լիցին ի գործ. և ոչ արձակեմ ի բերդորայն ամիրայս, և ոչ տաճիկ սպայ՝ ի բազմաց մինչև ցմի հեծեալ:
Թշնամի մի մտցէ ի Հայս. և եթէ գայ Հոռոմ ի վերայ ձեր՝
արձակեմ ձեզ զաւրս յաւգնականութիւն որչափ և դուք կամիջիք: Եւ երդնում ի մեծն Աստուած՝ եթէ ոչ ստեմ»)[1]:*

[1] *«Պատմութիւն Սեբէոսի եպիսկոպոսի ի Հերակլն», Ս. Պետերբուրգ, 1879,
էջ 138:*

Այս դաշնագրությամբ, ինչպես տեսնում ենք, հայկական նախարարություններին տրվել էին ինքնավար իրավունքներ ու բացառիկ արտոնություններ: Սակայն չնայած դրան՝ արաբական տիրապետությունը, անգամ այս սկզբնական շրջանում, Հայաստանի համար եղավ աղետալի ու կորստաբեր: Նա պարբերաբար կրկնվող պատերազմների ընթացքում շարունակ հարձակման ու ավերածությունների ենթարկվեց: Եթե նա հավատարիմ էր մնում խալիֆայությանը՝ նրան անխնա պատժում էին հույները: Իսկ եթե անցնում էր Բյուզանդիայի կողմը՝ վրեժ էին առնում արաբները:

Հայաստանի ամայացումը և տնտեսական քայքայումը Օմայանների տիրապետության շրջանում պարզ ու որոշ մատնանշված է ասորական մատենագիր Դիոնիսիոս Տելմահրեցու ժամանակագրության մեջ: Նկարագրելով արաբական Մասլամա հրամանատարի ռազմերթը (716/7 թ.) դեպի Բյուզանդիա և նրա գալը Արածանի գետի հովիտներն ու Ներքին Հայաստան՝ Տելմահրեցին վկայում է, որ՝

> «Այս ամբողջ երկիրն աչքի էր ընկնում և ուներ առաջ բազմաթիվ բնակչություն, խաղողի շատ այգիներ, հացացանքեր և ամեն տեսակ սքանչելի ծառեր: Սակայն այնուհետև նա ավերվել էր և նրա շրջանները չունեին այլևս բնակչություն»[1]:

* *
*

Եթե խալիֆների տիրապետության առաջին շրջանում Հայաստանն ավերվում էր բյուզանդա-արաբական կռիվների պատճառով, որոնք հաճախ տեղի էին ունենում Հայաստանի տերիտորիայի վրա, նրանց տիրապետության երկրորդ շրջանում, գլխավորապես ութերորդ դարում, նա արյունաքամ էր լինում ոչ այնքան այդ կռիվների, որքան ծանր և տաժանելի հարկերի պատճառով:

Օմայանների իշխանության ժամանակ, մանավանդ սկզբնական ժամանակաշրջանում, Հայաստանի արքունի հարկերը համեմատաբար ծանր չէին: Այդ երևում է ոչ միայն վերոհիշյալ դաշինքի պայմաններից, այլև XII դարի հայ մատենագիր Սամուել Անեցու ուշագրավ մի վկայությունից: Սրա ասելով, երբ արաբական իշխանությունը հաստատվեց Հայաստանում, խալիֆայությունը՝

> «վերցնում էր յուրաքանչյուր տնից չորս դրամ, երեք

1 Տե՛ս Chronique de denys de Tele-Mahré, pybl. et trad. par Chabot, Paris, 1895, էջ 12:

> մոդ խորբալ (այսինքն՝ մաղած ցորեն), մեկ ձիատոպրակ, մեկ մազե պարան և մեկ ձեռնոց. իսկ քահանաներից, ազատներից և հեծելազորից հրաման տվեց հարկ չառնել»:

(«Յամենայն տանէ առնալ Դ դրամ և Գ մոթ խորբալ, և ձիատօպրակ մի, և պարան մի մազէ, և ձեռնարար մի. իսկ ի քահանայից և յազատաց, և ի հեծելոց՝ ոչ հրամայեաց առնուլ զհարկն»)[1]:

Մեջբերված այս վկայության մեջ ի նկատի է առնված VII դարում Հայաստանում գործածվող մոդը կամ գրիվը, որի կշռորդը, ինչպես ցույց եմ տվել իմ «Կշիռները և չափերը» աշխատության մեջ (էջ 75—79), հավասար էր 9 կիլ. 792 գր, իսկ դրամը նույն այդ դարում Մերձավոր Արևելքում տարածված Սասանյան արծաթ դրամն է, որը համապատասխան է ըստ դրամական իր արժեքի մոտավորապես այժմյան 50 ոսկի կոպեկի[2]: Ուրեմն, ըստ մեր այս հաշվի՝ 3 մոդ մաղած ցորենը, որը խալիֆայությունն առնում էր յուրաքանչյուր տնից՝ համապատասխան կլինի 29 կիլ. 376 գր. կամ մոտ 2 փթի, իսկ վերոհիշյալ 4 դրամը հավասար կլինի մոտ 2 ոսկի ռուբլու: Այս գումարի իրական արժեքը յոթերորդ դարում բավական բարձր էր: Այդ ժամանակաշրջանում մեկ փութ ցորենըն արժեր մոտավորապես 25.50 ոսկի կոպեկ:

Ավելորդ չի լինի նույնպես մատնանշել, որ վերոհիշյալ վկայության մեջ «ազատ»-ներից հետո հիշատակված հեծելազորը, հավանորեն, ռամիկներից կազմված «այրուձին» է, որ գոյություն ուներ արդեն մարզպանության շրջանում: Ուշագրավ է, որ այս հեծելազորը, որն ազատ էր հարկերից, ինչպես և «ազատ»-ներն ու քահանաները, ստանում էր Օմայաններից հատուկ ռոճիկ՝ տարեկան հարյուր հազար դահեկան[3] (մոտ 550.000 ոսկի ռուբլի): Միանգամայն պարզ է, ուրեմն, որ Օմայանների ժամանակ ոչ միայն ծանր չեն եղել Հայաստանից ստացվող հարկերը, այլ զգալի մասը հարկերի տրվել է որպես ռոճիկ հայկական հեծելազորին:

1 Տե՛ս «Սամուէլ քահանայի Անեցւոյ, Հաւաքմունք ի գրոց պատմագրաց», Վաղարշապատ, 1893, էջ 82:

2 Տե՛ս Հ. Մանանդյան, Նյութեր հին Հայաստանի տնտեսական կյանքի պատմության, Երևան, 1928, էջ 29, ծան. 6:

3 Հմմտ. «Հաւաքումն պատմութեան Վարդան Վարդապետի», Վենետիկ, 1862, էջ 74 (գլ. ԼԹ): Վերոհիշյալ 100.000-ի գումարը ոմանք հայ բանասերներից ենթադրել են դրամ կամ դիրհեմ: Այդ կարծիքը պարզապես սխալ է:

* * *

Արաբական հարկային քաղաքականությունը հիմնական փոփոխման ենթարկվեց Հայաստանում Օմայանների իշխանության վերջին շրջանում Հեշմ խալիֆի ժամանակ (724—743 թթ.): Իր թագավորության առաջին կամ երկրորդ տարում այս խալիֆը կարգադրել էր իր Հերթ զորավարին աշխարհագիր անել Հայաստանում և ավելացնել նրա հարկերը: Այդ մասին կարևոր տեղեկություններ են հաղորդում Ղևոնդ պատմագիրը և Մովսես Կաղանկատվացին, որ կարևոր եմ համարում մեջ բերել ամբողջությամբ:

1. «Պատմութիւն Ղևոնդեայ մեծի վարդապետի Հայոց», գլ. ժէ, էջ 100 (հրատ. 1887 թ.)՝

«Եվ սա (Հեշմը) իր իշխանության առաջին տարում հղացավ մի վատ խորհուրդ՝ ուղարկեց մի ոմն զորավար, որի անունը Հերթ էր, աշխարհագիր անել Հայոց աշխարհում և ծանրացնել նրա հարկատվության ծառայության լուծը տեսակ տեսակ չարիքներով:... Եւ բազում վտանգ հասցրեց մեր աշխարհին մինչ այն աստիճան, որ բոլորը հառաչում էին ծանր նեղության պատճառով և ոչ ոք չէր կարող ազատվել անհնարին վտանգից»:

(«Եւ սա յառաջնում ամի իշխանութեանն իւրոյ խորհուրդ վատ ի մէջ առեալ՝ առաքէր զոմն զօրավար, որում անուն էր Հերթ՝ աշխարհագիր առնել ընդ աշխարհս Հայոց վասն ծանրացուցանելոյ զանուր լծոյ ծառայութեան հարկատրութեան ազգի ազգի չարեօք... Եւ բազում վտանգ հասուցանէր աշխարհիս, մինչ զի ամենեցուն հառաչել ի վերայ անհանգիստ նեղութեանցն, յորմէ ոչ գոյր ապրել ումեք յանհնարին վտանգիցն»):

2. «Մովսեսի Կաղանկատուացւոյ, Պատմութիւն Աղուանից աշխարհի», III, ժէ, Մոսկվա, 1860, էջ 258՝

«Իսկ հարյուր յոթանասուն և չորս թվին Հայոց (մեր թվ. 725 թ.) ամառը անասունների կոտորածը եղավ և ձմեռը՝ Հերթի աշխարհագիրը, որն անթիվ պարտավորությունների հարկի տակ առավ մարդկանց, անասուններին և հողերի տարածությունները»:

(«Իսկ ի հարիւր եօթանասուն և չորս թուականութեանն Հայոց (ամ տեառն 725), յամառն մահ անասնոց եղև, և ի ձմերան՝ աշխարհագիրն Հերթի, որ էարկ զմարդ և զանասուն և զսահմանս երկրի ընդ հարկաւ անթիւ ծառայութեան»):

Մեջբերված այս վկայություններից տեսնում ենք, որ 725 թվին հաշվառման էին ենթարկվել Հայաստանում մարդիկ, անասունները և հողերը: Այս աշխարհագրից հետո վերանում էին պարզապես ֆեոդալական Հայաստանի հարկային նախկին արտոնությունները: Հարկերը գանձվելու էին այնուհետև ոչ թե առաջվա նըման տներից կամ երդերից, այլ մարդկանց ու անասունների թվի համեմատ և ըստ հողերի տարածության ու, հավանորեն, նաև որակի: Նախկին երդահարկի բնույթը հիմնովին այժմ փոխվում էր և սկիզբ էր դրվում գլխահարկի, անասնահարկի և հողահարկի նոր սիստեմի, որը շուտով կատարյալ աղետ դառավ ամբողջ երկրի և, մանավանդ, հարկատու ռամիկ ժողովրդի համար:

Արաբական հարկային այս ծանր լուծն էր, որ 8-րդ դարում ոտքի հանեց հարստահարված երկիրը և հիմնական պատճառը եղավ ժողովրդական կատաղի ապստամբությունների ընդդեմ խալիֆայության:

* * *

Ութերորդ դարի կեսերին արաբական խալիֆայության մեջ տեղի ունեցավ քաղաքական մեծ հեղաշրջում: 748 թվին սկսվեցին նրա մեջ ներքին խռովություններ և 750 թվին, համառ ու արյունահեղ երկարատև կռիվներից հետո, սպանվեց Օմայան տոհմի վերջին խալիֆը, Մրվանը, և իշխանությունն անցավ Աբբասյանների և Իրաքի արաբների ձեռքը:

Այս խռովությունների ժամանակ հայկական նախարարությունններն ուզեցին թոթափել արաբական լուծը և ապստամբեցին Գրիգոր Մամիկոնյանի առաջնորդությամբ, հույս ունենալով օգնություն ստանալու Բյուզանդիայից: Սակայն ապստամբությունը գլուխ չեկավ: Աշոտ Բագրատունին, Հայաստանի իշխանն ու պատրիկը, որին ստիպել էին մասնակից լինել ապստամբության, ինչպես և նախարարների մի մասը, բաժանվեցին շուտով Գրիգոր Մամիկոնյանից ու նրա կողմնակիցներից և հպատակվեցին հոժարակամ արաբներին:

Աբբասյանների իշխանության հաստատումից հետո դրությունը Հայաստանում դառավ անտանելի: Աբբասյան հարստության հիմնադիրը՝ Աբուլաբաս ալ-Սաֆֆահը (750—754 թթ.) Հայաստան ուղարկեց որպես կառավարիչ իր եղբորը՝ Աբու-Ջաֆար ալ-Մանսուրին: Սրա կառավարման ժամանակ Հայաստանի հարկատու ժողովրդի մեծագույն մասը մատնվեցին հետին ծայր չքավո-

րության։ Ոչ միայն չափազանց ավելացրին հարկերը, այլ պահանջում էին այժմ նաև նախկին երեք տարվա հարկերը, որոնք խալիֆայությանը չէին վճարված նախարարական ապստամբության ամբողջ տևողության ընթացքում։

Ղևոնդ պատմագիրը վկայում է, որ ալ-Մանսուրը պահանջում էր հարկ մինչև իսկ մեռելներից, ուստի և հրամայել էր քահանաներին ներկայացնել վախճանվածների ու նրանց ընտանիքների ցուցակները։ Այս վկայությունը, որ լավ չէ հասկացվել, իմ կարծիքով, պարզ է ու հասկանալի։ Ալ-Մանսուրը կարգադրել էր ըստ իս գանձել ժառանգներից մեռածների գլխահարկը, որը ապստամբության պատճառով խալիֆայությունը չէր ստացել նրանց կենդանության ժամանակ։ Փախչել մի այլ շրջան և ազատվել հարկերից անկարելի էր, որովհետև Աբբասյանները հնարել էին ստուգման ու վերահսկողության հատուկ մի միջոց։ Որպեսզի կարողանան հայտնաբերել հարկ չվճարողներին՝ ալ-Մանսուրը հրամայել էր խարանել բոլորի վզերը, որոնք վճարել էին գլխահարկը՝ կապարե կնիքներով։ Ութերորդ դարի ասորական ժամանակագիր Դիոնիսիոս Տելմահրեցու վկայությամբ՝ Միջագետքում կառավարչական հատուկ պաշտոնյաները խարանում էին երբեմն, ստրուկների նման, հարկահատույցների ոչ միայն վզերը, այլ նաև երկու ձեռքերը, և կրծքերը և կոնակները[1]։

Հարկային ծանր այդ լուծը, ինչպես և հարկահանների հալածանքներն ու բռնությունները, ցայտուն կերպով նկարագրված են Ղևոնդի Պատմության հետևյալ վկայության մեջ։

«Եվ տիրեց նրա (Մրվանի) տեղ Աբդլան, որն ուղարկեց եղբորը, մյուս Աբդլային, իր տերության բոլոր երկրները։ Սա, գալով նախ Հայոց աշխարհը՝ բազում վշտով ու նեղությամբ վտանգեց ամենքին և հասցրեց չքավորության ու տնանկության, մինչև իսկ պահանջեց հարկեր նաև մեռելներից։ Նմանապես և որբերի ու այրիների ամբողջ բազմությունը նա չարաչար տառապեցրեց։ Տանջեց նույնպես աստվածային խորանի քահանաներին ու պաշտոնյաներին, ենթարկելով նրանց խոշտանգանքների, ծեծի ու խայտառակ ճիպոտահարության և պահանջելով, որ նրանք հայտնեն վախճանվածների ու նրանց ընտանիքների անունները։ Խոշտանգում էր նաև երկրի բնակիչներին ամենաբռնի ու դաժան հարկապահանջությամբ և, առնելով ամեն մի գլխից բազում դրամ արծաթի՝ դնում էր բոլորի պարանոցներին կապարե կնիք»։

(«Եւ տիրէ նորա Աբդլայ, և առաքէ զեղբայր իւր զՄիւս Աբդլա շրջել ընդ ամենայն աշխարհս իշխանութեանն իւրոյ։ Որ նախ եկեալ յաշխարհս Հայոց՝ բազում վշտօք և նեղութեամբ վտանգէր զամենեսին և հասուցանէր ի չքաւորութիւն տնանկութեան, մինչև պահանջել հարկս և ի մեռելոցն։ Եւ զամենայն բազմութիւն որբոց և այրեաց չարալլուկ տառապեցուցանէր զքահանայս և զպաշտօնեայս աստուածային խորանին խոշտանգանօք և քքօք այպանութեան և գանիւք՝ ի յայտ ածել զանուանս վախճանելոցն և զընտանիս նոցուն։ Խոշտանգէր և զբնակիչս աշխարհիս բռնագոյն և դառն հարկապահանջութեամբ, առնուլ ըստ գլխոյ բազում զուզէս արծաթոյ, և դնել կնիք կապարեայս յամենեցուն պարանոցս»)[1]։

Միայն Հայաստանը չէր, որ հարկապահանջության տաժանելի օրեր ապրեց այս ժամանակաշրջանում։ Ալ-Մանսուրը, ինչպես հաղորդում է Ղևոնդը, Հայաստանից անցավ խալիֆայության մյուս երկրները և, ծանրացնելով ամենուրեք հարկային լուծը, այնտեղ ևս նույն դաժանությամբ հավաքեց հարկերը։ Նրա անսահման արծաթասիրության ու ագահության պատճառով էր, որ անգամ յուր ազգը նրան անվանում էր «հայր» կամ «Աբդուլ դանգի», այսինքն՝ ծառա ու մեծարող միմիայն դրամի։

Ալ-Մանսուրի Հայաստանից հեռանալուց հետո, նրան հաջորդող Եզիտ, Բագար ու Հասան կառավարիչների ժամանակ՝ հարկային լուծը Հայաստանում ոչ միայն չթեթևացավ, այլ ավելի ևս ծանրացավ։ Աբբասյանները կարիք ունեին դրամական մեծ միջոցների իրենց շռայլ ու շվայտ ապրուստի համար։ Մեծ գումարներ էին հարկավոր նաև նոր հիմնված Բաղդադ քաղաքի շինության համար։ Հասկանալի է, ուրեմն, որ այս պայմաններում, ծանրանալու էր օրավուր ինչպես Հայաստանի, նույնպես և խալիֆայության մյուս երկրների, գլխավորապես, աշխատավոր բնակչության դրությունը։ Աբբասյանները վստահություն չունեին անգամ իրենց արաբական ու պարսկական հպատակների վրա։ Սրանք պետության զանազան մասերում շարունակ ոտքի էին ելնում ու ապստամբում։ Խալիֆների իշխանության գլխավոր հենարանը ոչ թե իրենց

¹ Տե՛ս Chronique de denys de Tell-Mahré, էջ 104։

¹ Տե՛ս «Պատմութիւն Ղևոնդեայ», Ս. Պետերբուրգ, 1887, գլ. ԻԸ, էջ 127։

սեփական ժողովուրդն էր, այլ Խորասանից բերված վարձկան թուրք զորքերը, որոնց նույնպես անհրաժեշտ էր տալ սնունդ և ռոճիկ:

* *
*

Ալ-Մանսուրի անմիջական հաջորդ՝ Եզիտ ոստիկանի իշխանության ժամանակ դրությունը Հայաստանում դառել էր ծայրահեղորեն աղետալի: Դառն ու բռնի հարկապահանջության պատճառով երկիրը բոլորովին ուժասպառ էր եղել ու արյունաքամ: Ինչպես վկայում է Ղևոնդը (գլ. ԼԲ), Հայաստանում նվազել էր և դրեթե վերացել դրամն ու արծաթը:

Հնչյուն փողի այս հատնումը, ինչպես մատնացույց է արված «Հայաստանի առևտուրը և քաղաքները» ռուսերեն իմ աշխատության մեջ[1], չպետք է վերագրել միայն չափազանց հարկատվության, այլ, գլխավորապես, պետք է բացատրել նաև նրանով, որ արաբական տիրապետության ժամանակ Հայաստանի տնտեսական կյանքը զգալի չափով հետադիմել էր և զարգանում էր բնական տնտեսության հետադարձ հիմքերի վրա:

Դրամի և թանկարժեք մետաղների պակասման ու հատնումի հետևանքով անսահման բարձրանալու էր, իհարկե, նրանց արժեքը: Նույն այս ժամանակ, ինչպես վկայում է իր ժամանակագրության մեջ Միքայել Ասորին[2], Միջագետքում՝

«Ջափրի (այսինքն՝ ալ-Մանսուրի) չարաչար ագահության պատճառով այն աստիճան պակասեց արծաթը, որ եզն ու էշը ծախում էին մեկ դրամի և տղաները տալիս էին պահանջողներին 5 դրամի»[3]:

(«Իսկ ի չարաչար ագահութենէն Ջափրի այնչափ պակասեաց արծաթն, զի զեզն և զէշ դրամի միոյ վաճառէին, և զտղայն հինգ դրամի տային պահանջողացն»):

Շատերը, ասում է նա (էջ 352), փորում էին գերեզմանները և փնտրում ոսկի ու արծաթ, որպեսզի վճարեն իրենց հարկերը:

---

[1] Տե՛ս О торговле и городах Армении, էջ 133—136:

[2] Տե՛ս «Ժամանակագրութիւն տեառն Միխայէլի Ասորւոց պատրիարքի», Երուսաղեմ, 1871, էջ 352:

[3] Ուշագրավ է, որ արաբական տիրապետության ժամանակ ստրուկների թիվը խիստ մեծ էր: Խալիֆ Մուավիան ունեցել է, օրինակ, միմիայն Արաբիայի իր կալվածներում 4000 ստրուկ: Ոմանք ունեցել են մինչև իսկ ավելի քան 10.000 ստրուկ: Մեծ գին ունեին, մանավանդ, ստրուկ արհեստավորները:

Նման դրություն, ինչպես երևում է նաև հայ մատենագիրների վկայություններից, ստեղծվել էր նաև Հայաստանում:

«Հատեցրեց (Եզիտը),— ասում է Ղևոնդը[1],— արծաթի գյուտը երկրից և հնարավոր չէր որևէ մեկին, տալով յուր գույքը և կարողությունը, ձեռք բերել իր անձի փրկության գինը: Չարաչար չարչարանքով, գելոցով, կախաղանով և դառն տանջանքներով կեղում էին մարդկանց կյանքը: Ուստի և շատերը, փախչելով այրերը և երկրի փապարները՝ գաղվում էին ու թաքնվում: Ոմանք էլ ձյունախեղդ էին լինում և գետն էին իրենց ձգում անտանելի աղետի պատճառով»:

(«Զի վախճանեաց զգիւտ արծաթոյ ի յերկրէս, և ամենայն որ տալով զպաճարանս ընչից իւրեանց՝ ոչ գտանէին զգինս փրկանաց անձին իւրեանց. և չար կտտանօք, գելարանօք, և կախաղանօք և դառն տանջանօք կեղէին զկեանս մարդկան: Յորմէ փախստեայ եղեալ բազումք յայրս և ի փապարս երկրի՝ զօղեալ թագչէին. և ոմանք ձիւնահեղձ և գետավէժ լինէին վասն անտանելի աղետիցն»):

Անհրաժեշտ է նույնպես մատնանշել, որ առաջին Աբբասյանների ժամանակ ոչ միայն անչափ ծանրացել էին Հայաստանի հարկերը, այլև սկիզբ էր դրվել նաև նախարարական ինքնավար կարգերի ու նախկին արտոնությունների ոչնչացման: Ղևոնդի վկայությամբ (գլ. ԻԸ)՝ Աբբասյանները կարգադրել էին, որ հայկական հեծելազորի ռոճիկը պետք է վճարե ոչ թե խալիֆայությունը, ինչպես այդ սահմանել էին Օմայանները, այլ իրենք հայ իշխանները: Այսպիսով, ասում է Ղևոնդը, հեծելազորի պարտադիր ծառայությունը դառել էր «զրավաստակ աշխատութիւն»:

Պարզ է, որ հալածանքի նոր այս պայմաններում՝ խալիֆ ալ-Մանսուրը այլևս չէր կարող վստահություն ունենալ հայ նախարարների վրա: 770 թվին նա Հասան ոստիկանի հետ թուրքական զորքեր ուղարկեց Հայաստան:

Այս վայրագ ու արյունարբու վարձկանները, որոնք ավերածությունների ու թալանի առիթ էին փնտրում՝ զազրելի բռնություններ գործեցին Հայաստանի բնակչության անխտիր բոլոր խավերի վերաբերմամբ: Երկիրը մատնվեց այժմ սովի, սրի ու սարսափի:

Եվ շուտով արաբական տիրապետության դեմ բռնկվեց ընդ-

---

[1] Տե՛ս Մալխասյանցի և Եզյանցի հրատարակությունը, Ս. Պետերբուրգ, 1887, գլ. ԼԳ, էջ 135:

Հանուր ապստամբություն, որին մեծ չափով մասնակցում էին նաև
ռամիկները։

* *
*

Այս ապստամբությունը, որի մասին մանրամասն տեղեկու-
թյուններ է հաղորդում Ղևոնդը, ուներ պարզապես ազատագրական
բնույթ։ Նրա ճիշտ տարին, որը պատմագիտական երկերում, մեծ
մասամբ, սխալ է տրվում, որոշվում է, ինչպես ցույց է տվել Ալի-
շանը[1], 774 թվին։ Հուսահատված նախարարները, վկայում է
Ղևոնդը՝

«Երբ տեսան որ մեծ վտանգ է իրենց վրա հասել՝ մահն
աչքի առաջ ունեցան և ձեռնամուխ եղան մի գործի, որը չէր
կարող հաջողություն ունենալ, որովհետև իրենք քիչ էին
թվով։ Սակայն նրանք լավ համարեցին քաջությամբ մեռնել,
քան ապրել տաժանալից»։

(«Իբրև տեսին նախարարք Հայոց զվտանգ տարակուսա-
նացն հասեալ ի վերայ ինքեանց՝ եդին զոգի ի ձեռին իւրե-
անց և ձեռնամուխ եղեն յիրս, զոր ոչ կարէին վճարել վասն
ղի նուազունք էին։ Այլ սակայն լաւ համարեալ զմահ քաջու-
թեամբ քան զկեանս վտանգաւոր՝ ձեռնամուխ եղեն յիրս
ապստամբութեան»)[2]։

Ինչպես և գրեթե միշտ շարժման դրդողը և ղեկավարը եղան
Մամիկոնյանները։ Ազատագրական ապստամբությունների առաջ-
նորդ լինելը նրանք կարծես թե համարում էին իրենց տոհմային
պարտականությունը։

Առաջինը գլուխ բարձրացրեց արաբական բռնությունների դեմ
Արտավազդ Մամիկոնյանը։ Նա եկավ Դվին, որը արաբական իշ-
խանության վարչական կենտրոնն էր, արտաքուստ ցույց տվեց
իրեն մտերիմ ու հավատարիմ և զինեց ու հանդերձեց այստեղ իր
զորքը, պատրվակ բռնելով, որ նախապատրաստություններ է տես-
նում կռվի համար խալիֆայության թշնամիների դեմ։ Դվինից Ար-
տավազդը շտապեց գնալ Կումայրի (Լենինական), սպանեց այն-
տեղ հարկերի հրամանատարին և, վերցնելով նրա հավաքած հար-
կերը՝ գնաց իր ընտանիքի ու այլ նախարարների հետ Եգերացոց
աշխարհը, որը գտնվում էր Բյուզանդիայի գերիշխանության տակ։

---

1 «Այրարատ», Վենետիկ, 1890, էջ 525։
2 Տե՛ս Հրատարակություն Մալխասյանցի և Եզյանցի, Ս. Պետերբուրգ, 1887,
էջ 137—138։

Չորս տարի հետո, 778 թվին, նույն այս Արտավազդը, որին
բյուզանդական կայսրը նշանակել էր ստրատեգ և կառավարիչ
Անատոլիկոն թեմի՝ կարողացավ սոսկալի վրեժ առնել արաբներից
և, գործակցությամբ բյուզանդական երեք նշանավոր հայ զորա-
վարների՝ Տաճատ Անձևացու, Վարազտիրոցի և Գրիգորիոսի՝ մեծ
ջարդ տվեց և սաստիկ հարված հասցրեց նրանց Գերմանիկե քա-
ղաքի մոտ՝ Կոմագենեում։

Շուտով Արտավազդի օրինակին հետևեց Մուշեղ Մամիկոնյա-
նը, որը կոտորեց արաբներին, որոնք գտնվում էին նրա գավա-
ռում, և, գաղթելով ամբողջ իր տնով Կաղզվանի շրջանը՝ ամրացավ
Արտագերս բերդում։ Այստեղից նա ասպատակեց Բագրևանդ գա-
վառը, կոտորեց հարկահավաքներին ու արաբական զորամասերը
և դադարեցրեց հարկերի պահանջումը և բռնությունները։ Մուշեղի
մոտ, ինչպես վկայում է Ղևոնդը (գլ. ԼԴ, էջ 139), հավաքվեցին բո-
լոր ճնշվածներն ու հարստահարվածները։ Արաբական զորքերը,
որոնց ուղարկել էին նրա դեմ Կարինից և Դվինից, ոչ միայն հաջո-
ղություն չունեցան, այլև մեծ ջարդ կրեցին ու մատնվեցին փա-
խուստի։

Այնուհետև գրեթե բոլոր մյուս նախարարները ևս, Մուշեղի
հաջողություններից սիրտ առած՝ միացան նրան իրենց զորքերով
և ապստամբությունը դառավ համատարած ու ընդհանուր։ Ազա-
տագրական այս շարժմանը մասնակցում էր նույնպես ռամիկ ժո-
ղովրդի բազմությունը։

Ահաբեկված արաբները, որոնց գլխավոր հենակետը Հայաս-
տանի քաղաքներն էին՝ Դվինը, Կարինը, Արճեշը և այլ քաղաքա-
վայրերը, ստիպված եղան պատսպարվել այդ ամրություններում։
Եվ հայերը, արաբական ծանր լծից ազատվելու համար՝ պետք է
աշխատեին, բնականաբար, գրավել թշնամու այդ կայաններից մեկի՝
Նրանք հարձակվեցին նախ գլխավոր ռազմակայաններից մեկի՝
Կարին քաղաքի վրա, որը սահմանամերձ էր Բյուզանդիային, և,
շրջապատելով քաղաքը, սկսեցին պաշարողական կանոնավոր ու
երկարատև գործողություններ՝ փորեցին խրամատներ ու աշխա-
տեցին պարիսպների տակ ականներ անցկացնել։

775 թվի գարնան սկզբին ոտքի կանգնեցին արաբների դեմ
Վասպուրականում Արծրունյաց ու Ամատունյաց նախարարները և
ուզեցին հարձակվել արաբական նաև մի այլ մեծ կենտրոնավայ-
րի՝ Արճեշ քաղաքի վրա։ Նրանք հավաքել էին իրենց հեծյալ ջո-
կատները, որոնց ուղեկցում էին նաև հետիոտն ռամիկները, Բերկ-

րի գյուղի մոտ։ Սակայն հարձակումը դեռ չսկսված՝ Հայաստան խուժեցին Հարավից, Խլաթ քաղաքի վրայով, խալիֆայության 30.000 ընտիր խորասանյան զորքերը Ամր զորավարի առաջնորդությամբ։

Աշոտ Բագրատունին, որը չէր միացել ապստամբությանը, նախազգուշացրեց նախարարներին վերահաս վտանգի մասին։ Սակայն ապստամբները համարելով այդ նախազգուշացումը նենգություն՝ վճռեցին հարձակվել Արճեշի վրա։ Բայց այստեղ Ամրի զորքերը, որոնք դարան էին մտել, գրոհեցին նրանց վրա և, մտնելով հեծելազորը փախուստի, կոտորեցին, գլխավորապես, անզեն ու կռվի անվարժ հետիոտն ռամիկներին։ Նախարարներից սպանվեցին, ինչպես վկայում է Ղևոնդը, միայն չորս հոգի՝ երեքը Տրունյաց տոհմից և մեկը Ուրծայ գյուղից։

Ղևոնդ պատմագրի մոտ մատնանշված է Արճեշի կռվի ամսաթիվը և օրը՝ «յամսեանն հրոտից, որ օր չորրորդ էր ամսոյն յաւուր շաբաթու» (գլ ԼԴ, էջ 147)։ Համաձայն այս վկայության՝ կռվի թվականը, ամսաթիվը և օրը տոմարական հաշիվների օգնությամբ ճշտիվ որոշվում է 775 թվի ապրիլի 15-ին, շաբաթ։

Մինչդեռ այս անցքերը կատարվում էին Արճեշի մոտ, պաշարված Կարինը, որի մեջ սաստկացել էր սովը, արդեն մոտ էր անկման։ Սակայն Ամր զորավարի հաղթության լուրը վհատեցրեց ու լքում առաջ բերեց քաղաքը պաշարողների շարքերում։ Ապստամբության ձախողումը և հետահաս տխուր վախճանը ակներև էին։ Հայերն ունեին Կարինի մոտ ընդամենը 5000 կռվողորոնց մեծ մասը կազմում էին հետևակ ու թեթև զինված ռամիկները, մինչդեռ Ամրը գալիս էր նրանց դեմ, ունենալով իր հետ 30.000 լավ զինված հեծելազոր։

Հայկական փոքրաթիվ զորքը, ինչպես վկայում է Ղևոնդը, կարող էր հեշտությամբ խույս տալ թշնամու հետ ընդհարվելուց, որը վեց անգամ ավելի զորավոր էր։ Բյուզանդիայի արևելյան սահմանները, ինչպես հայտնի է, հեռու չէին Կարին քաղաքից։ Սակայն ապստամբները, ասում է Ղևոնդը,—

> «լավ համարեցին մեռնել, քան տեսնել իրենց երկրի կորուստը... և թեպետ իրենք թշնամիների թվից ավելի քիչ էին՝ ինքնակամ հոժարությամբ ենթարկեցին իրենց կյանքը վտանգի և, ժողովելով իրենց զորագնդերը, մոտ 5000 հոգի՝ գնացին Կարին քաղաքից և անցան Բասենի վրայով Բագրևանդ գավառը»։

> («սակայն լաւ համարեցան զմահ անձանց քան տեսանել զկորուստ աշխարհիս... թէպէտև նուազունք էին քան զթիւ թշնամեացն՝ ինքնակամ յօժարութեամբ դիմեցին ի վիշտն. և ժողովեալ զգունդս իւրեանց իբրև արս ՑՌ՝ գնացին ի քաղաքէն Կարնոյ, անցանէին ընդ սահմանս Բասենոյ ի գաւառն Բագրևանդ»)[1]։

Երկու բանակների ճակատամարտը տեղի ունեցավ Բագրևանդ գավառում, Արածանի գետից դեպի հարավ, Արձնի գյուղի մոտ։ Սկզբում հայկական զորքը կատաղի կերպով հարձակվեց թշնամու գերազանց ուժերի վրա և կարողացավ շփոթություն առաջ բերել նրա շարքերում։ Սակայն շուտով Ամրի զորքերը վրա ընկան հայերի աննշան ուժերի վրա և, մտնելով նրանց փախուստի՝ կոտորեցին մեծ մասը, գլխավորապես ռամիկ ժողովրդի։ Անվանի նախարարներից ընկան պատերազմի դաշտում Սմբատ Բագրատունի սպարապետը, նրա բարձակիցը և նիզակակիցը՝ Սահակ Բագրատունին, Մամիկոնյաններից՝ Մուշեղ զորավարը և Սամուելը, նաև Վահան Գնունին և ուրիշներ։ Ապստամբությունը ճնշելուց հետո՝ արաբական զորավարն ասպատակներ սփռեց Բագրևանդի ու նրա սահմանակից գավառների շրջաններում և ենթարկեց այդ երկրներն ավերածության ու կողոպուտի։

Ղևոնդի վկայությամբ՝ ճակատամարտը Բագրևանդում Արձնի գյուղի մոտ տեղի էր ունեցել, ինչպես և Արճեշի կռիվը՝ հայկական հրոտից ամսում՝ «ի նոյն ամսեանն ի հրոտից ի ԺԴ յաւուր երկուշաբաթւոջ»[2]։ Համաձայն տոմարական պարզ հաշիվների՝ այս վկայության մեջ պետք է ուղղել ԺԴ (14) թիվը և կարդալ «ի հրոտից ԺԳ (13)»։ Այսպիսով ստացվում է ճշտիվ այս ճակատամարտի տարեթիվը, ամսաթիվը և օրը՝ 775 թվի ապրիլի 24-ին, երկուշաբթի»[3]։

775 թվի ընդհանուր ազատագրական ապստամբությունը Հայաստանում պետք է համարել, անշուշտ, հայ ժողովրդի ամենամեծ հերոսամարտերից մեկը։ Մեռնել քաջությամբ և չթողնել իր

---

1 Տե՛ս Հրատ. Մալխասյանցի և Եզյանցի, Ս. Պետերբուրգ, 1887, գլ. ԼԴ, էջ 148։

2 Նույն տեղը, էջ 151։

3 Արճեշի և Արձնի կռիվների թվականը պատմագիտական երկերում, մեծ մասամբ, սխալ է որոշված։ Տարեթիվը ճիշտ է ցույց տրված Ալիշանի «Այրարատ»-ում (էջ 525)։ Սակայն նրա մոտ ամսաթիվը որոշված է սխալմամբ ապրիլի 25-ին։

հայրենի երկիրը՝ այդ եղել է միշտ նշանաբան հերոս ու քաջարի ժողովուրդների։

* *
*

775 թվի ապստամբության ճնշումից հետո՝ Հայաստանի պատմությունը ութերորդ դարի վերջին քառորդում անընդհատ մի ժամանակագրություն է պարբերական կոտորածների ու գաղթի, ծանր հարկապահանջության ու ավազակային կողոպուտների և ամեն տեսակ բռնությունների ու հալածանքների։

Արճեշի ու Արձնի ճակատամարտերից հետո՝ ապստամբած հայ նախարարների ընտանիքները, գլխավորապես Բագրատունիները և Մամիկոնյանները, ստիպված եղան լքել ու թողնել իրենց կալվածները Բագրևանդում ու հարավ-արևմտյան Հայաստանում և փախչել կամ Բյուզանդիա և կամ Հայաստանի լեռնային ամուր ու անմատչելի արևմտյան շրջանները, որոնք մոտ էին կամ սահմանակից Բյուզանդական կայսրության։

Լքված վայրերում նախարարական կալվածներն անցան հետզհետե, գլխավորապես, մահմեդական ու արաբ էմիրների և կալվածատերերի ձեռքը, որոնք իրենց նոր կալվածներում բնակեցնում էին, մեծ մասամբ, Հայաստան ներգաղթած արաբական ցեղեր։ Ութերորդ դարի վերջում և իններորդ դարի սկզբներում Հայաստանի այս մասերում կազմվեցին մահմեդական երկու մեծ ու հզոր իշխանություններ՝ Մանազկերտի ու Արզնի ամիրայությունները։ Այժմ արդեն սկսել էին աստիճանաբար քայքայվել նախարարական նաև այլ շրջանները, և Հայաստանի մեծագույն մասի մեջ հետզհետե տեր ու տնօրեն էին դառել մահմեդական ու արաբ իշխանավորները։

Նկարագրելով այս ժամանակաշրջանի պատմական անցքերը՝ Հովհաննես Դրասխանակերտցին տալիս է հայ նախարարությունների քայքայման մասին հետևյալ կարևոր վկայությունը.

«Եվ որովհետև,— ասում է Դրասխանակերտցին,— հագարացիները վերցրին ու բոլորովին տեր դառան Հայաստանին, իսկ երկրի մեծամեծները պակասեցին և մնացածները թաքնվել էին, ծառայելով նրանց լծի տակ՝ դրա համար էլ մեր պատմության այս մասում քիչ են զրույցները մեր իշխանների մասին։ Եվ եթե թերևս որևէ մի բան գտնվի՝ թող քեզ բավական լինի այն, ինչ որ ինձնից առաջ պատմել է Շապուհ պատմագիրը»։

(«Եւ վասն զի սպառապուռ Հագարացիքն տիրեցին կալան զՀայաստանեայսս և մեծամեծք աշխարհիս նուազեցան, և մնացեալք ղօղեալ դադարեալ կային ընդ լծով ծառայութեան նոցա. սակս այսորիկ իսկ յայսմ վայրի պակասեաց ի Պատմութենէ աստի զրոյցք իշխանաց մերոց, բայց եթէ գուցէ գտցի ինչ՝ բաւական քեզ բերցի նախ քան զմեզ պատմեալն ի Շապհոյ պատմագրէ»)[1]։

Ուշագրավ տեղեկություն է հաղորդում նմանապես Ղևոնդ պատմագիրը հայ ռամիկ ժողովրդի ողորմելի վիճակի մասին ութերորդ դարի վերջերում։ Նշելով մոտ 12.000 հայերի, գլխավորապես ազնվականների ու հեծյալների, գաղթը Հայաստանից Բյուզանդիա Շապուհ Ամատունու առաջնորդությամբ (հավանորեն 791 թվ.)՝ Ղևոնդը պատմում է, որ՝

«Ժողովրդի կեսը, որ մնացել էին երկրում՝ սաստիկ կարոտության պատճառով անձնատուր եղան ստրկական ծառայության և դառան նման գաբավոնացիներին փայտ կտրողներ և ջուր բերողներ»։

(«Իսկ կէսք ժողովրդեանն որք մնացին՝ առ սաստիկ կարօտութեանն անձնատուրք եղեն ի ծառայութիւն ստրկի, կարօտութեանն ... փայտակոտորք և ջրաբերք ըստ նմանութեան Գաբաւոնացւոց»)[2]։

Ինչպես տեսնում ենք վերոհիշյալ և նման վկայություններից, 775 թվի անհաջող ապստամբությունից հետո հայկական նախարարությունները ոչ միայն մեծ չափերով զրկվել էին իրենց ինքնավարական իրավունքներից ու արտոնություններից, այլև, կորցնելով ռազմական ու դիմադրական նախկին իրենց ուժը, սկսել էին արդեն նվազել ու քայքայվել։

Գտնվելով ծանր կացության մեջ՝ հայկական բարձր ազնվականությունը, պահպանելու համար իր կալվածներն ու արտոնված դրությունը՝ հարկադրված էր այժմ հարմարվել ու համակերպվել տիրողներին։ Ոմանք նրանցից, ինչպես, օրինակ, Մեհրուժան Արծրունին՝ ընդունել էին մահմեդական կրոնը։ Ութերորդ դարի վերջին հենց քառորդից սկսած հայկական բարձր ազնվականությունն աշխատում էր բարեկամանալ ու խնամիանալ արաբական էմիրների ու իշխանավորների հետ խառն ամուսնությունների միջոցով։

[1] Տե՛ս «Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ «Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1912, էջ 111։

[2] Տե՛ս վերոհիշյալ 1887 թվի հրատ., գլ. ԽԲ, էջ 169։

Համակերպման որոշակի նշաններ կարելի է համարել նաև այն, որ այս ժամանակներից սկսած հետզհետե սովորական էին դառնում հայ ազնվականների շրջանում նրանց արաբականացրած անունները, ինչպես՝ Աբուլ-Աբաս, Աբու-Մրվան, Աբու-Սահակ, Աբու-Մուսե և այլն։

Հայկական ֆեոդալիզմն ապրում էր ըստ իս ութերորդ դարի վերջերում՝ ավերումների, փախուստի, մեծ գաղթերի ու երկրի ամայացման վերահիշյալ խռովահույզ շրջանում՝ իր ծանր հոգեվարքը։ Թվում էր, որ նրա վերջնական քայքայումն անխուսափելի է։ Սակայն շուտով, իններորդ դարի առաջին հենց կեսում, նրա վերակենդանացման համար ստեղծվեցին անսպասելիորեն քաղաքական միանգամայն նպաստավոր ու նոր պայմաններ։ Իններորդ դարում նա հետզհետե ոչ միայն նորից ուժեղացավ, այլև ապրեց Բագրատունյաց թագավորության շրջանում անտեսական ու քաղաքական բուռն ու աննախընթաց վերելքի շրջան։

* *
*

Նախարարական Հայաստանի վերստին զորեղացմանը մեծապես նպաստեցին խալիֆայության մեջ ծայր առած խռովություններն ու ներքին պատերազմները, որոնք գրեթե անընդհատ էին դառել իններորդ դարից սկսած։

Բագրատունիները, որոնք 775 թվի ապստամբությունից հետո ապավինել էին Հայաստանի լեռնային արևմտյան շրջանները և գտնվում էին այստեղ Բյուզանդիայի հովանավորության տակ, ուշի-ուշով հետևում էին քաղաքական անցքերին խալիֆայության սահմաններում։

793—794 թվականներին Պարտավում և Փայտակարանում բռնկվեց պարսիկ աղանդավորների մեծ ապստամբություն Աստել-Մոկաննայի առաջնորդությամբ։ Ապստամբները ոչ միայն կարողացան մի քանի անգամ պարտության մատնել իրենց դեմ ուղարկված արաբական ոստիկաններին, այլև իրենք հարձակման դիմեցին ու մոտ չորս ամիս պաշարեցին Հայաստանում Դվին քաղաքը։ Նկարագրելով այս անցքերը՝ արաբական մատենագիր Յակուբին իր «Պատմության» մեջ առանձնապես մատնանշում է, որ այնուհետև «Հայաստանի ուժը զորացավ»[1]։

Ներքին մեծ խռովություններին զուգընթաց վերսկսվեցին այս

[1] Տե՛ս Մարկվարտ, Բագրատունիների ծագումը, Վիեննա, 1915, էջ 38։

ժամանակ կատաղի ու անվերջ պատերազմները խալիֆայության
ու Բյուզանդիայի և խալիֆայության ու խազարների միջև։ Այս
պայմաններում հայկական նախարարությունների մինչև իսկ հյուծ-
ված ու թուլացած մնացորդներն ստանում էին, բնականաբար,
քաղաքական որոշ կշիռ ու նշանակություն։ Բագրատունիները, մա-
նավանդ նրանք, որոնք ապաստան էին գտել Բյուզանդիայի սահ-
մանամերձ լեռնային շրջաններում—Սպերում, Տայքում ու Կղարջ-
քում— և բարեկամություն էին հաստատել կայսրության հետ, կա-
րող էին այժմ առանձնապես վտանգավոր լինել խալիֆայության
համար։ Ուստի և խալիֆ Հարուն ալ-Ռաշիդը (785—809 թթ.) հար-
կադրված եղավ վարել նրանց հանդեպ մեղմ ու զիջող քաղաքակա-
նություն։
Հենց այս Հարուն ալ-Ռաշիդի ժամանակ Բագրատունի Աշոտ
Մսակերը, Արծնիի կռվում սպանված Սմբատ սպարապետի որդին,
կարողացավ մասամբ դրամով և մասամբ զենքով հաստատել իր
իշխանությունը Տայքում, Արշարունիքում, Շիրակում և Աշոցքում։
Նոր գրավված այս շրջաններում Բագրատունի այս ճյուղի կենտրոնը
դառավ նախ Բագարանը, Ախուրյան գետի վրա, իսկ հետո՝ «Երազ-
գավորք-Շիրակավանը»։ 806 թվին Հարուն ալ-Ռաշիդը կարգեց
Աշոտ Մսակերին իշխան Հայաստանի, և այնուհետև Աշոտն իր
նվաճումները շարունակեց ավելի մեծ հաջողությամբ։
Հայաստանում խիստ ուժեղացել էր այդ ժամանակ Մանազ-
կերտի ամիրայությունը, որը գրավել էր Հայաստանի զգալի մասը
և նպատակ էր դրել իրեն հիմնել առանձին, խալիֆայությունից ան-
կախ, մի մեծ պետություն և միացնել իր իշխանության տակ նա-
խարարական հայ երկրները Վանա լճից մինչև Արաքս գետը։ Մա-
նազկերտի ամիրաները, որոնք ծագում էին Ասորիքի կայսիտների
արաբական ցեղից և հայ մատենագրության մեջ անվանված են
«Կայսիկք», ըստ երևույթին, անհաշտելի հակառակորդներ էին Իրա-
քի իշխող արաբական ցեղերին և Աբբասյաններին։ Իններորդ դա-
րի առաջին քառորդում սրանք մի քանի անգամ ապստամբեցին
Դվինի ու Պարտավի ոստիկանի դեմ, և Աշոտ Մսակերն ու նրա
եղբայրը, Շապուհը, օգտվելով նաև այս խռովություններից, կա-
րողացան եւ գրավել նրանցից ամբողջ Տարոնը։
Բագրատունիների և հայկական նախարարությունների զորե-
ղացման համար նպաստավոր եղան նմանապես և գահակալական
համառ կռիվները խալիֆայության մեջ Հարուն ալ-Ռաշիդի որդի-
ների՝ Մամունի և Էմինի միջև 809—813 թվերին։ Հայ նախարար-

36—340

ները ժամանակին կարողացան անցնել Մամունի կողմը և օգուտ քաղեցին և այս երկպառակություններից։

Ներքին այս խռովություններից մի քանի տարի հետո, 817 թվին, բռնկվեց արևելյան Անդրկովկասում պարսիկ աղանդավորների մեծ ապստամբությունը Բաբեկի առաջնորդությամբ, որն իրեն հռչակեց «Մահդի», այսինքն՝ աստվածային էության մարմնացում։ Այդ ահավոր շարժումն ուներ միաժամանակ թե սոցիալական և թե ազատագրական բնույթ։ Ապստամբները պահանջում էին, նման մազդակյաններին, գույքերի, հարստությունների և կանանց հավասար բաշխում և միևնույն ժամանակ նպատակ էին դրել իրենց տապալել արաբական իշխանությունը և վերահաստատել պարսկական նախկին աշխարհակալությունը։ Բաբեկը, որին հայ պատմագիրներն անվանում են Բաբան, մոտ քսան տարի ահ ու սարսափի մեջ պահեց արաբներին և, ջարդ տալով անընդհատ նրանց զորքերին, տիրեց Արևմտյան Մարաստանին, Համադանին, Աղվանքին և Արևելյան Հայաստանին։ Ապստամբությունը վերջնականապես ճնշվեց միայն 837 թվին, և Բաբեկը, որին կենդանի բռնել էր Աղվանքի և Շաքիի իշխան Սահլը, գլխատվեց Բաղդադում 838 թվին։

Բաբեկի ապստամբության ճնշման ժամանակ խալիֆայության զորքերի հետ միասին կռիվներին մասնակցել էին նաև հայ նախարարներն ու նրանց զորքերը։ Եվ այսպիսով՝ նրանք օգտվեցին մեծ չափով նաև այս երկպառակություններից՝ ամրացրին իրենց քաղաքական դիրքերը և հնարավորություն ունեցան գրավելու նոր ու նոր շրջաններ և կալվածներ։

Ութերորդ դարի վերջերում Բագրատունիները և հայկական այլ նախարարությունները, 775 թվի մեծ ապստամբությունից հետո, ինչպես տեսանք, սկսել էին արդեն քայքայվել և գրեթե մահամերձ էին։ Սակայն իններորդ դարի քառասնական թվականներին հատկապես Բագրատունիները ոչ միայն կարողացել էին վերականգնել իրենց նախկին հզորությունը, այլև ավելի էին զորեղ, քան ութերորդ դարում՝ նախքան ապստամբությունը։

Աշոտ Մսակերի մահից հետո (826 թ.) Բագրատունյաց տոհմի տարբեր ճյուղերը տեր էին դառել և իշխում էին թե իրենց հին կալվածների մեծագույն մասում և թե համարյա ամբողջ արևմտյան Անդրկովկասում։

Հիշատակության արժանի են մասնավորապես, բացի Բագրատունիների Շիրակի ճյուղից, նաև Կղարջքի ու Արտանուշի Բագ-

րատունիները։ Աշոտ Մսակերի հորեղբայրը՝ Վասակը, որը 775 թվի
ապստամբությունից հետո ստիպված էր փախչել Կղարջք՝ հիմնել
էր այստեղ Արտանուշի իշխանությունը։ Սրա հաջորդները կարո-
ղացել էին նույնպես ընդարձակել իրենց իշխանության սահման-
ները և գրավել էին Քուլավերը և Արդահանը։ Հետագայում նրանք,
տարածվելով Կուր գետի հովիտներով դեպի հյուսիս-արևելք և
տիրելով հետզհետե ամբողջ Վրաստանին՝ հիմնադիր եղան նոր
հարստության Վրաստանում։

Իններորդ դարի առաջին կեսի վերջերին հայկական նախա-
րարությունները, գլխավորապես Բագրատունիները և Արծրունի-
ները, այնքան էին ուժեղացել, որ ձգտում էին արդեն վերականգնել
ամբողջությամբ իրենց արտոնությունները և ընդլայնել ըստ հնա-
րավորության քաղաքական իրենց իրավունքները և ներքին ան-
կախությունը։

* *
*

Աշոտ Մսակերի մահից հետո (826 թ.) Հայաստանի սպարա-
պետ կարգվեց նրա որդին՝ Սմբատ Աբլաբասը, իսկ «հրամանա-
տար» և «իշխանաց իշխան» նշանակվեց Բագարատ Բագրատու-
նին՝ Տարոնի իշխանը։ Հայկական նախարարությունները, օգտվե-
լով այժմ արաբական իշխանության թուլությունից՝ այլևս չէին
հանդուրժում Հայաստան ուղարկված կառավարիչների խստությու-
ններն ու բռնությունները։ Նրանք դիմում էին հաճախ խալիֆներին
և պահանջում, որ Հայաստան ուղարկվեն իրենց ցանկացած մար-
դիկ։ 840 թվին, օրինակ, հայ նախարարները Սմբատ սպարապե-
տի գլխավորությամբ ստիպեցին խալիֆ ալ-Մուտասիմին ետ
կանչել նոր նշանակված Խալիդ ոստիկանին և թողնել այդ պաշ-
տոնի մեջ Ալիին։ Այս վերջինը, որին նրանք անվանում էին «եթիմ»,
այսինքն՝ որբ, ցանկալի էր նրանց իր թուլության և մեղմության
պատճառով։

842—847 թվականներին, ալ-Վաթիկի խալիֆայության ժա-
մանակ, ամբողջ Հայաստանը, ինչպես վկայում են արաբական
աղբյուրները, գտնվել է շարունակ խառնակ ու ապստամբական
վիճակում։ Այդ աղբյուրների վկայություններից դժվար չէ նաև
կռահել, որ Բագրատունիները, ինչպես և Արծրունիները, տեսնե-
լով խալիֆայության ռազմական ու քաղաքական տկարությունը՝
ուզեցել են, ըստ երևույթին, հետևել հարևան մահմեդական ամի-
րայությունների օրինակին և աշխատել են ազատագրվել արաբա-

կան տիրապետությունից: Սակայն շուտով երևաց, որ նրանց այս հույսերը վաղաժամ էին:

847 թվին խալիֆայության գահը բարձրացավ Մութավաքիլը (847—861 թթ.), որը, վարում էր վճռական ու հաստատակամ քաղաքականություն: Իր իշխանության հենց առաջին տարիներում նա նպատակ էր դրել իրեն, ինչպես վկայում է Թովմա Արծրունին (Դպր. 2, գլ. Ե), ճնշել և պատժել ըմբոստ հայ նախարարներին:

849 թվին նա ուղարկեց Հայաստան Աբուսեթին իբրև վերակացու և հարկահավաքման գլխավոր: Երբ սա մոտեցավ Տարոնի սահմաններին՝ իշխանաց իշխան Բագարատը տեսնելով, որ Աբուսեթն ունի իր հետ հզոր զորաբանակ՝ շտապեց վճարել նրան ամբողջ հարկագումարը և խնդրեց, որ նա ներս չմտնի իր զորքերով Հայաստան: Թովմա Արծրունին վկայում է, որ Մութավաքիլը և Աբուսեթն ուզեցել են զրկել իշխանությունից հատկապես Բագարատին և Աշոտ Արծրունուն: Սակայն, երբ Աբուսեթը տեղեկություն ստացավ, որ Բագարատն ու Աշոտը դաշինք են կնքել և գործում են միասին՝ նա խուսափեց կռվից և վերադարձավ Բաղդադ: Նախքան հեռանալը՝ նա թողեց որպես փոխանորդ և Հայաստանի կառավարիչ ու հարկահավաք Մուսեյին, որը սորին Աղձնիքի և Արղն քաղաքի ամիրան էր և Բագարատի քրոջ ամուսինն էր:

850 թվին Մուսե ամիրան, որը կռված էր իր աներձագի հետ՝ մտավ իր զորքերով Տարոն իբր հարկահավաքման համար: Բայց Բագարատին օգնության հասավ անմիջապես Աշոտ Արծրունին, և Բագարատը Վասպուրականի զորքերի օգնությամբ այնպիսի ջարդ տվեց արաբներին, որ Մուսեն հազիվ կարողացավ իր գլուխն ազատել: Տարոնի այս կռվից դեռ առաջ Աբուսեթն ուղարկել էր նաև Վասպուրական հարկահավաքման հազարապետ Ալա Ծովափին, որը Մանազկերտի «Կայսիկք» կոչվող ամիրաների տոհմից էր: Սա, հաստատվելով Աղբակում, ասպատակել էր Վասպուրականի զանազան շրջանները, մատնելով երկիրն ավերածության և կողոպուտի: Բայց Աշոտ Արծրունին մեծ ջարդ տալով նրան՝ դուրս էր քշել Վասպուրականից:

Զայրացավ Մութավաքիլն այս անցքերը լսելով և նորից ուղարկեց Հայաստան Աբուսեթին, հանձնարարելով նրան ձերբակալել Բագարատին և Աշոտին: Արաբական զորքերը, ներխուժելով Տարոն և Վասպուրական՝ պետք է վերացնեին առաջին հերթին հայկական այս իշխանությունները: Արշավանքի ժամանակ, դեռ Հայաստան չհասած՝ ճանապարհին մեռել էր Աբուսեթը: Ուստի

և ոստիկանության սրա պաշտոնը և վերոհիշյալ հանձնարարությունները տրվեցին որդուն՝ Յուսուֆին:

851 թվին Յուսուֆը մեծ ու ընտիր զորքով եկավ նախ Վասպուրական և բանակեց Արծրունիների Ադամակերտ ոստանում: Այստեղից նա ուղարկեց երկրի զանազան կողմերն ասպատակներ և միաժամանակ հրավիրեց իր մոտ Աշոտին ու ուզեց նրան խաբեությամբ ձերբակալել: Բայց Արծրունյաց իշխանը, որին հայտնել էին այդ մասին, վերցրեց իր ազատազորքը և հեռացավ Մարդաստան:

Շուտով Յուսուֆը հաշտություն և խաղաղություն հաստատեց Աշոտի հետ և, վերցնելով նրանից պատանդներ ու ապահովելով իր թիկունքը՝ եկավ Խլաթ: Բագարատն այժմ ինքն իրեն էր թողնված: Ինչպես վկայում է Թովմա Արծրունին (Դպր. 2, գլ. Զ), Յուսուֆը հայտնեց Բագարատին, որ ձմեռվա ցրտերի պատճառով ինքը շտապում է վերադառնալ արքունիք և ուզում է Հայաստանի իշխանությունը նրան հանձնել: Տարոնի իշխանը, որ խաբվել ու եկել էր նրա մոտ, շղթայվեց և ուղարկվեց Սամառա, ուր գտնվում էր Մութավաքիլը:

Այնուհետև Հայաստանի զանազան կողմերն ուղարկվեցին կուսակալներ, որոնք ամեն տեղ մեծ անգթություններ գործեցին: Իսկ Տարոնում արաբական զորքերը մեծ թվով գերիներ վերցրին և նրանց մի մասը չնչին գներով ծախեցին Ասորիքում ու այլ երկրներում, իսկ մյուս մասը պահեցին Մուշ քաղաքում, ոստիկանի ու իրենց ձմեռանոցում՝ որպես ծառաներ: Գարնանը նրանք մտադիր էին սրի ու ավերածության մատնել ամբողջ Հայաստանը, և վճռել էին, վերացնելով հայկական իշխանությունները՝ հաստատել երկրում իրենց անմիջական տիրապետությունը:

Հայաստանի դրությունը դառնում էր այժմ նույնքան աղետալի, ինչպես և ութերորդ դարի վերջերին: Վտանգը սպառնում էր դարձյալ ոչ միայն նախարարական իշխանական դասին, այլ ամբողջ հայ ժողովրդին: Ուստի և այժմ ևս տարերային կերպով բռնկվեց ընդհանուր ապստամբություն, որն ուներ, ինչպես և 775 թվին, ազատագրական բնույթ: Այս մեծ ապստամբությունը, հատկապես Տարոնում տեղի ունեցած անցքերը 852 թվին՝ մանրամասն նկարագրված են Թովմա Արծրունու մոտ և հիշատակված են նաև արաբական աղբյուրներում:

Թովմա Արծրունու համապատասխան այդ վկայությունը մեջ եմ բերում առանց կրճատումների:

«Այն ժամանակ,— պատմում է Թովման,— լեռան բնակիչները, տեսնելով որ իշխանին գերի տարան և որ իրենց ևս նույնը պիտի վիճակվի, ինչ որ դաշտեցիներին՝ եկան միասին խույթի մեկնակազենների բազմությունն արվեստագիտության իրենց ռազմամիջոցներով, որ ձեռք էին բերել ժմեռային ինքնապաշտպանության կարիքների համար։ Նրանք վերցրել էին իրենց նիզակները, որ միշտ կրում էին, զգուշանալով անտառների որջերում գտնվող գազաններից կամ իրենց վրա հարձակվող թշնամիներից։ Գրոհ տալով քաղաքի (Մուշի) վրա ու պաշարելով նրան՝ նրանք սրի մատնեցին և կոտորեցին զորքերը, ազատեցին բանտից Վասպուրականի պատանդներին, արձակեցին գերիներին և բաժանեցին իրենց մեջ թշնամու թալանը»։

(«Յայնժամ բնակիչք լերինն իբրև տեսին, թէ վարեցաւ իշխանն ի գերութիւն, ինքեանք պատրաստեալ են զնոյն փարշմանն կրել զոր դաշտայինքն կրեցին՝ հասին միաբան բազմութիւնն մեկնակազէնքն խութայ ի հնարս արուեստագիտութեանն իւրեանց, զոր ի պէտս օժանդակութեան ձմեռայնոյ հնարաւորեալ էին։ Եւ բարձեալ աշտեայս հանապազակիրս ի պատրաստութիւն գազանացն որ ի մայրիսն որջանան, կամ թշնամեաց ի վերայ հասելոց, և եկեալ ի վերայ քաղաքին պաշարեն զնա, և զզօրսն մատնեն ի սատակումն սրոյ, և զպատանդսն Վասպուրականի հանեն յարգելանէն, և գերեացն ընդարձակեն, զկապուտ նոցա բաժանեն յինքեանս»)[1]։

Իր այս վկայության շարունակության մեջ Թովմա Արծրունին նմանապես հաղորդում է, որ Սասունի լեռնականները, որոնք հարձակվել էին արաբական զորքի վրա խութեցի Հովնանի առաջնորդությամբ, այս կռվում սպանել էին նաև իրեն՝ Յուսուֆ ոստիկանին։

Առանձնապես ուշագրավ է, որ ապստամբած սասունցիները, ինչպես երևում է Թովմայի վկայություններից, ոչ թե «ազատ»-ներ կամ ազնվականներ էին, այլ պարզապես ռամիկ գյուղացիներ։

Նրա հաղորդած տեղեկությունները խութեցիների մասին այնքան կարևոր են ու հետաքրքիր, որ կարևոր եմ համարում մեջ բերել ամբողջությամբ։

---

[1] «Թովմայի վարդապետի Արծրունւոյ, Պատմութիւն տանն Արծրունեաց» հրատ. Պատկանյանի, Ս. Պետերբուրգ, 1887, Դպր., գլ. է, էջ 119—120։

«Այստեղ համառոտ կերպով կտամ,—ասում է Թովմա Արծրունին,—լեռան բնակիչների նկարագիրը՝ թե ինչպիսիք են կամ ովքեր են, կամ ինչ կերպ նրանք ծանր աշխատանքով և սաստիկ տառապանքներով հայթայթում են իրենց ապ- ... րուստը և բավարարում իրենց կարևոր պետքերը։ Նրանց բնակությունները գտնվում են խոր ձորերում, լեռների փապարներում, անտառների թավուտներում և լեռների գագաթներում։ Ապրում են ազգատոհմերով և այնքան միմյանցից հեռու են, որ եթե զորավոր տղամարդկանցից մեկը բարձր տեղից ուժեղ բղավե, նրա ձայնի բոմբյունը հազիվ կարող է որևէ տեղ լսվել, և տպավորություն է գործում, իբր թե արձագանք է ժայռերի միջից։ Նրանց կես մասը խոտորել է հայրենի բնական լեզվից, որովհետև հեռու տեղեր են բնակվում և միմյանց հետ շփում չունեն. խոսում են իրար հետ կցկտուր ու օտարոտի լեզվով։ Եվ այնքան խրթնախոս են և իրար անծանոթ, որ մինչև իսկ պետք ունեն թարգմանների։ Իբրև սնունդ գործածում են զանազան ընդեղեններ, գլխավորապես կորեկ կոչվող բույսը, որը սովի տարիներին, ոմանք ... ոտքերով (˚) անվանում են հաց։ Կորեկը նրանք ոռոգում են երկմատանի անտառների բաց տեղերում կամ ցանում են հագ- ... ծածկելու համար փայտատներով։ Իրենց մերկությունը ... պատրաստում են ... նում են բրդեղեն շորեր. ոտնամանները ... Թե ամառը և թե ձմեռը կոշիկների ձևով այծերի մորթերից։ ... միևնույն սնունդով և միևնույն հագուստով բավարարվում են ... զորպիսութիւն տով»։

(«Աստանօր սակաւուք բացայայտեցից զորպիսութիւն բնակչաց լերինն. թէ զիարդ որպիսի ոք են, և որպէս հնարաւորեալ յապրուստ վճարեն զկարևոր պէտս իւրեանց լի աշխատութեամբ և սաստիկ տառապանօք և բնակութիւն նոցա ի խորաձորս և ի փապարս լերանց և ի պրակս մայրեաց, ի գագաթունս լերանց։ Եւ բնակեն առանձին ըստ տունս ազգաց, և այնչափ ի բացեայ են ի միմեանց՝ մինչև թէ ոք յարանց զօրաւորաց ի բարձրաբերձ տեղեաց ուժգին խանչիցէ՝ հազիւ թէ ուրեք կարիցէ առնուլ զբոմբիւն ձայնին, իբրև ի վիմաց ինչ արձագան լինելոյ կարծիս բերելով. և կէսքն վրիպեալք ի բնական հայրենի լեզուէն, յաղագս հեռաբնակ լինելոյ և անհամբոյրք միմեանց հանդիպեալք, և խօսս միմեանց եղեալ կարկատուն մուրացածի բանիւք։ Եւ այնքան

խրթնի անծանօթք պատահեն առ միմեանս, մինչև թարգմանաց անգամ կարօտանան. և զպէտս կերակրոցն վճարեն ի սերմանց ինչ, առաւել ի կորեակ կոչեցեալ սերմանէն, զոր ոմանք ի սով ժամանակի հաց անուանեն. և զնոյն ռոդեալ ոտիւք ի միջոցս պրակացն, կամ երկմտանի փայտատովք սերմանեալ. և է զգեստ նոցա սուխս ի ծածկոյթ մերկութեանն, և օդ ոտիցն հնարաւորեն զձև կաշկաց, ի մորթոց այծից կազմեալ, և միով կերակրով և միով հանդերձիւ բաւականան զամառն և զձմեռն»)[1]:

Թովմա Արծրունու այս վկայության մեջ, ինչպես տեսնում ենք, խիստ հետաքրքիր տեղեկություններ են հաղորդված Սասունի բնակչության մասին: Այդ տեղեկություններից երևում է, որ մինչև իսկ իններորդ դարում խութեցիները գտնվում էին դեռ տնտեսական ու սոցիալական նախնական վիճակում՝ ապրում էին ազգատոհմերով և ունեին երկրագործական հետամնաց տնտեսություն:

Ուշագրավ է մասնավորապես, որ խութեցիների մի մասը խոսել է, ըստ երևույթին, ոչ թե հայերեն, այլ ինչ որ խրթին ու անհասկանալի լեզվով: Թովմա Արծրունին մեջ բերված վկայության շարունակության մեջ այդ լեզուն համարում է «խրթնի և անհետազոտելի» և այդ լեզվով խոսող ապստամբներին անվանում է· «գռեահք Ասորոց»: Հենվելով, սակայն, նորագույն ուսումնասիրությունների վրա՝ կարելի է ըստ իս ամենայն հավանականությամբ հետևցնել, որ դրանք ոչ թե ասորի գռեհիկներ էին, այլ, հավանորեն, խալդեր կամ ուրարտացիներ, որոնք, ինչպես հայտնի է, ձուլվել էին հետզհետե եկվոր արմենների հետ և համարվում են, ինչպես և արմենները, հայերի նախնիքները: Թովմա Արծրունու վկայությունը խիստ արժեքավոր է, որովհետև ցույց է տալիս, որ հին խալդերի մնացորդները պահպանվել էին մինչև իններորդ դարը լեռնային Սասունում:

852 թվի ընդհանուր մեծ ապստամբությունը, որը պարզապես ժողովրդական-ազատագրական բնույթ ուներ, ճնշվեց դաժան ու անողոք խստությամբ: Մութավաքիլն ուղարկեց Հայաստան մոտ երկու հարյուր հազար թրքական և արաբական զորք Բուղայի առաջնորդությամբ, որը սրի, գերության ու ավերածության մատնեց ամբողջ երկիրը և, ամենից առաջ, չարաչար պատժեց Տարոնի և Սասունի բնակիչներին: Հայ նախարարները և գլխավորները կա-

1 Տե՛ս «Թովմայի վարդապետի Արծրունւոյ, Պատմութիւն տանն Արծրունեաց», Դպր. 2, գլ. է, էջ 120—121:

լանավորվեցին և ուղարկվեցին Սամառա, ուր նրանք, փրկելու համար իրենց կյանքը և գույքը՝ գրեթե բոլորն ընդունեցին մահմեդականություն:

Բուղայի արշավանքից հետո՝ նախարարական Հայաստանը, որը սոսկալի հարված էր ստացել, թվում էր, որ անկարող կլինի ուշքի գալ և վերակենդանանալ: Սակայն շուտով, ինչպես և 775 թվի ապստամբությունից հետո, նա ոչ միայն կարողացավ վերականգնել իր նախկին հզորությունը, այլև ունեցավ տնտեսական, քաղաքական և կուլտուրական բուռն և անօրինակ վերելքի շրջան:

Իններորդ դարի երկրորդ կեսին սկսվեցին Բյուզանդական կայսրության հաղթական արշավանքները Հայաստանի սահմանամերձ հարավ-արևմտյան շրջաններում, և խալիֆայությունը, որը շարունակ պարտություն էր կրում, հետզհետե թուլացավ և դիմեց դեպի անկում:

867 թվին գահ բարձրացավ Բյուզանդիայում Մակեդոնիայից Պոլիս եկած Բարսեղ անունով մի հայ: Սա մինչ այդ բյուզանդական արքունիքում ախոռապան էր և իր գեղեցկության պատճառով պալատական կանանց առաջին սիրելին էր: Գերմանական գիտնական Հ. Գելցերը իր «Բյուզանդական կայսրների պատմության մեջ» ասում է, որ Բարսեղ Ա կայսրը (867—886 թթ.)՝ Մակեդոնական դինաստիայի հիմնադիրը՝ «այն հանճարեղ ու անսահման ուժեղ բնավորություններից էր, ինչպես Սուլլան, Թեոդորիխը, Կլոդովիխը և Նապոլեոն Ա-ը»[1]: Հենց այս Բարսեղն էր, որ քայլ առ քայլ ջախջախիչ հարվածներով ոչնչացրեց արաբների պաշտպանողական ամրացրած դիրքերն արևելյան սահմաններում և կարողացավ ներխուժել Միջագետք: Հաղթական այս առաջխաղացման ժամանակ նախարարական Հայաստանի կողմնորոշումը ստանում էր, բնականաբար, խիստ կարևոր նշանակություն: Ֆրանսիական գիտնական Լորանի կարծիքով[2] Բարսեղ Ա-ի հաղթությունը կլիներ լիակատար, եթե հայերը ևս հարձակվեին արաբների աջ թևի վրա և օգնեին նրան մտնելու խալիֆայության կենտրոնական երկրները: Հայաստանի ստրատեգիական սպառնական այդ դիրքային դրությամբ է բացատրվում, Լորանի կարծիքով, խալիֆայության

1 Տե՛ս Մեսրոպ Տեր-Մովսիսյանի հայերեն թարգմանությունը, Էջմիածին, 1897, էջ 194:

2 Տե՛ս «Հայաստանը Բյուզանդիայի և խալիֆայության միջև» (ֆրանսերեն), Փարիզ, 1919, էջ 260 և այլն:

քաղաքականության կտրուկ փոփոխությունը հայ նախարարների և հատկապես Բագրատունիների հանդեպ։ 885/6 թվին Աշոտ Բագրատունին ստացավ խալիֆ Մուտամիդից (870—892 թթ.) թագ և թագավորական տիտղոս։ Սկսվեց ֆեոդալական Հայաստանի արագ վերածնության ու զորեղացման մի նոր շրջան, որ տևեց մինչև սելջուկյան արշավանքները։

ՀԱՄԱՌՈՏ ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԸՆԴՀԱՆՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻՑ ՔԱՂՎԱԾ ԿԱՐԵՎՈՐ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՄԱՐԶՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՄԻՆՉԵՎ ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՆԿՈՒՄԸ

Արշակունյաց թագավորության վերացումից հետո Սասան-
յան Պարսկաստանը նպատակ է ունեցել և աշխատել է կուլտու-
րապես անջատել Հայաստանը արևմտյան ազդեցությունից։
Պարսկաստանի այդ ձգտումը պարզ կերպով արտահայտված
է Հազկերտ II-ի [438/9—457] հրովարտակում, որ բերված է
Ղազար Փարպեցու հետևյալ վկայության մեջ՝ Փարպեցի, ԻԱ,
էջ 119՝

«Վասն զի դուք ինքնին գիտէք և ամենայն Արիք՝ զաշ-
խարհն Հայոց, թէ որպէս մեծ է և պիտանի, և մօտ և սահ-
մանակից է կայսեր իշխանութեանն. և զօրէնս և պաշտօն
զնոյն ունի, զի կայսր զիշխանութիւն նոցա ունի։ Եւ եթէ և
մերոց օրինաց ընտանեցուցանէք զնոսա, և ընդելնուն, և
կարեն ճանաչել, եթէ ցայժմ մոլորեալք էին, և արդ ի ճա-
նապարհ եկեսցեն, այնուհետև զձեզ սիրեն և զԱրեաց աշ-
խարհս, և ի կայսերէ և յօրինաց նորա և յաշխարհէն մերժին
և հեռանան ի բաց։ Եւ լինի այնուհետև աշխարհն ընդ մեր
սերտ սիրով և միաբանութեամբ։ Եւ յորժամ Հայք սերտիւ
մեր լինին, Վիրք և Աղուանք այնուհետև մեր իսկ են»։

Հայաստանը Արևմուտքից անջատելու իր ձգտումը Հազկերտ
II-ը ուզեցել է կատարել նախարարական տոհմերի կրոնափո-
խության միջոցով։ Մազդեության կրոնը ընդունողներին նա պատ-
վում էր, տալիս էր պարգևներ, կալվածքներ և իշխանություն։
Ինչպես Եղիշեն վկայում է՝ [էջ 29]

«Սկսաւ այնուհետև յառաջ կոչել զկրտսերս ուսացաց և զանարգս ի պատուականաց, զողէտս ի ցիտնոց և զանարխս ի քաջ արանց»:
Այնուհետև Հայաստան է ուղարկվում Դենշապուհը՝
«Աշխարհագիր առնել»
1. «զազատութիւն եկեղեցւոյ արկանէր ի ծառայութիւն».
2. «միայնակեացք—ընդ աշխարհագրաւ».
3. «զհարկ աշխարհին ծանրացոյց».
4. «յամենայն տան արար խռովութիւն».
5. «հաղարապետ աշխարհին—պարսիկ».
6. «մոգպետ—դատաւոր աշխարհին»:
Տվեց հրաման՝ «Կամաւ և սիրով յանձն առնել մազդէական կրօնն»:
Ըստ Փարպեցու վկայության [էջ 123]՝ «Եւ ընկալեալ զայսպիսի հրովարտակ ամենայն Հայոց աւագանոյն»:
Այնուհետև նախարարները և սեպուհները կարգադրություն են ստանում անմիջապես գնալ արքունիք, որտեղ նրքա ընդունում են մազդեական կրոնը և վերադառնում:
Իսկ Հայաստանում, ինչպես վկայում է Եղիշեն՝
«Յետ աւուրց քսան և հնգից գալստեան մոգուց ի Հայս՝ մոգպետն ինքնին հասանէր քակել զդրունս եկեղեցւոյն. իսկ սուրբն Ղեւոնդ երէց ոչ ետ թոյլ»:
Փարպեցի՝ «մոգուցն գունդք բռնադատէին տանել զկրակս ի տաճար սրբութեանց Տեառն»:
Մեջ բերված վկայություններում հիշվող քաղաքական և կրոնական խստությունների հետևանքը եղել է Վարդանանց ապստամբությունը [450—451 թ.] և Ավարայրի կռիվը 451 թվի մայիսի 26-ին, որը թեև վերջացել էր ապստամբության մասնակցող նախարարների պարտությամբ, սակայն ունեցել է որոշ դրական արդյունքներ: Ավարայրի կռվից հետո Հայաստան է ուղարկվել Վասակ մարզպանի փոխարեն Ատրորմիզդը և, ինչպես վկայում է Փարպեցին, տեղի է ունեցել երկրում պարսից քաղաքականության որոշ մեղմացում:
Փարպեցի, 216—[Ատրորմիզդ] «որում յանձն առնէր հրովարտակով զմարդիկն Հայոց՝ չընդոստուցանել, այլ սիրով նուաճել և զպաշտօն քրիստոնէութեանն համարձակապէս ունել ամենեցուն»:
Փարպեցի, 216—[Ատրորմիզդ] «Բազում թուղթս խաղաղութեան առնէր ի տեղիս տեղիս Հայոց աշխարհին. թէ եկայք

շինեցարուք աներկիւղութեամբ, և մի՛ ինչ զարհուրիք. …յորս գրէր և կնքէր ակնատւոր բանս, շնորհել ամենեցուն զկարգ քրիստոնէութեան, որպէս և կամիցի ըստ իւրաքանչիւր կամաց»:
Ինչպես պատմիչների վկայություններից երևում է, Պարսկաստանը ուզեցել է մազդեական կրոնը մտցնել Հայաստան նախարարների աջակցությամբ, բայց ոչ բռնությամբ: Եվ նախարարական տոհմերի վերաբերմամբ հետագայում ևս, ինչպես վկայում է Փարպեցին, շարունակվում էր նույն անարդարամիտ ու դաժան քաղաքականությունը:
Փարպեցի— «Ի ժամանակն յայնմիկ և Պարսկաց զտանու տէրութիւնն գնեալ էին ուրացութեամբ ըստ անարժանութեանն, և ոչ տիրացեալք աստուածպաշտութեամբ իբրև զարժանաւորս. «Եւ էր տեարք անմիտք և վնասակարք, վատք և ոչ քաջք»… «Եւ էր տեսանել այնուհետև յաշխարհիս Հայոց զլաւութիւն հնացեալ, զիմաստութիւն կորուսեալ, զքաջութիւն հնացեալ և մեռեալ, զքրիստոնէութիւն թագուցեալ»…
Փարպեցի, 340 —«Իսկ լաւ ոք այր յանկարծ և կամ արժանաւոր թէպէտ և էր ի ժամանակին, որպէս լաւ այր Բաբիկն Սիւնի և կամ սքանչելին Առնակն Ամատունի, և կամ այլ ոք նման նոցին, ի հոգէսպանութենէ մոլեկան թագաւորին և ի կատաղութենէ ամբարշտեալ ժամանակին իշխանացն՝ որպէս նապաստակք ի սլացմանէ գիշակեր արծուեաց ի ծերպս վիմաց և կամ ի մացառոտ տեղիս ղօղեալք թաքչէին»:
Ջախված Հայաստանի դժգոհ նախարարները և հոգևորականությունը հարմար առիթի կպասեին, որ նորից ապստամբեն: Այդ երկրորդ ապստամբությունը բռնկվեց 481 թվին Վահան Մամիկոնյանի ղեկավարությամբ և տևեց մինչև 484 թիվը:
Ապստամբությունն ուներ պարտիզանական կռիվների բնույթ, որի ընթացքում պարսից Ատրվշնասպ մարզպանը ստիպված էր փախչել և նրա տեղը մարզպան էր կարգվել Սահակ Բագրատունին: Ապստամբներին խոստացել էր օգնել նաև վրաց Վախտանգ Գորգասալ թագավորը [446—499]: Վերջապես 484 թվին՝ պարսից Պերոզ թագավորի հեփթաղներից կրած սոսկալի պարտությունից հետո, Պարսկաստանը հարկադրված էր փոխել Հայաստանում իր քաղաքական գիծը, և անհայտ կորած Պերոզ թագավորի հաջորդ Վաղարշ թագավորը [484—488] ստիպված էր ընդունել Վահան Մամիկոնյանի կողմից առաջադրված հաշտության հետևյալ պայմանները՝

Ղազար Փարպեցի—1. «զհայրենի և զբնիկ օրէնս մեր ի մեզ թողուք, և զհայ այր զոք մի՝ մոգ ոչ առնէք, և ումեք յաղագս մոգութեան գահ և պատիւ չտայք, և զկրակարանն յաշխարհէս Հայոց ի բաց տանիք, զեկեղեցւոյ թշնամանս յաղտեղի և յանպիտան մարդկանէ, որ ցայժմ լինէր, յայսմ հետէ մեզ չտայք տեսանել. քրիստոնեայ մարդկան և քահանայից զկարգ և պաշտօն քրիստոնէութեան համարձակութեամբ և աներկիւղ տայք պաշտել՝ ուր և կամին.

2. զմարդ ոչ իշխանաբար ճանաչէք, այլ իրաւաբար գիտել զլաւն և զվատթարն, ընտրել զպիտանին և զանպիտանն, իմանալ զտոհմիկն և զանտոհմիկն, ունել առ լաւսն զպատուականն և զքաջն և զօգտակարն, արհամարել և առ ոչինչ համարել զվատն և զանպիտանն. սիրել զվաստակաւորսն և տալ զանվաստակն, ունել ի մօտ զիմաստունս և խորհուրդս առնել, և զանմիտն ոչ մօտեցուցանել, այլ ի հրապարակէ ևս հալածել.

3. որ տէրն է Արեաց աշխարհի թագաւորն՝ կամիմք զի ինքն լուիցէ իւրովք ականջօք և ինքն տեսցէ իւրովք աչօք, և ինքն գիտասցէ զմարդ լաւ և զանլաւ, և ոչ այլոյ բերանոյ խօսեսցի զպէտսն»:

Վաղարշ թագավորի պատասխանը եղել է հետևյալը՝

«Զամենայն զոր ինչ խորհեալ է ձեր՝ տուեալ եղիցի ձեզ մեր գրով և կնքով զամենայն խնդիրդ ձեր մինչև հաւիտեան»:

Այնուհետև Վահան Մամիկոնյանը ստանում է նախ Մամիկոնեից տերությունը և ապա հայոց սպարապետությունը. մյուս նախարարներին էլ տրվում են իրենց նախկին իրավունքները:

VI դարում վերսկսվում են համառ ու պարբերաբար կրկնվող կռիվները Բյուզանդական կայսրության և Սասանյան Պարսկաստանի միջև, որոնք V դարում ընդհատվել էին շնորհիվ հոների և ուրիշ արևելյան ցեղերի արշավանքների, և այդ շրջանում պատմական անցքերը ունեցել են հետևյալ ընդհանուր բնույթը՝

1. Կրոնամոլության սաստկացում՝ կատաղի կրոնական վեճեր թե Բյուզանդիայում և թե Սասանյան Պարսկաստանում.

2. Պարսկաստանը Կավատ I թագավորի ժամանակ [488—531 թ.] նորից զորեղանալով, վերսկսում է Մարզպանական Հայաստանում կրոնական իր հին քաղաքականությունը:

3. Կրոնական փոփոխություն Պարսկաստանում և Մազդակյան

կրոնական նոր ուսմունքի տարածումը Մարզպանական Հայաստանում[1], որին կողմնակից է եղել ինքը Կավատ I-ը:

4. Բյուզանդական կայսրության զորեղացումը Յուստինիանոս կայսեր ժամանակ [527—565] և ձգտում ու միջոցառումներ՝

ա) վերականգնելու հռոմեական զորեղ ու միաձույլ կայսրությունը.

բ) միաձուլել Բյուզանդական Հայաստանը կայսրության հետ, վերացնելով այնտեղ տեղական առանձնահատկությունները և կարգերը, ինչպես, օրինակ, նախարարական իշխանության հաջորդականությունը և թե ցկյանս սատրապությունը:

5. Բյուզանդական Հայաստանի քաղաքական վերակազմությունը, որի նպատակը եղել է հետևյալը՝ որ հայերը ոչ մի բանում չտարբերվեն կայսրության մեջ ընդունված կարգերից և ամեն բանում հետևեն հռոմեական օրենքներին:

6. Բյուզանդական Հայաստանի վարչական վերակազմությունը. համաձայն Յուստինիանոսի նոր օրենքի, Բյուզանդական Հայաստանը բաժանված է եղել չորս կառավարչության[2]:

7. Յուստինիանոս կայսեր կողմից Բյուզանդական Հայաստանում ձեռնարկված խստությունների պատճառով առաջացել էր՝ արդարադատության բացակայություն, ապօրեն տուրքեր, ժողովրդի վճարունակության նվազում, երկրի աղքատացում, հուսահատ վիճակ, խռովահույզ դրություն ու ապստամբական շարժումներ ընդդեմ իշխանության:

8. Մայր երկրում [Հայաստանում] ներքին անհամաձայնություններ, ազնվականության տարբեր կողմնորոշման պատճառով:

9. Նոր ավերիչ պատերազմներ Բյուզանդիայի և Պարսկաստանի միջև, որոնց ...

[1] Մազդակյան նոր կրոնի բովանդակությունը եղել է հետևյալը՝ Բոլոր մարդիկ նման են ստեղծված. անարդարացի է, եթե մեկն ավելի գույք ունի և կին, քան մյուսը:

Պետք է դասային և գույքային տարբերությունները վերացնել և կատարել կանանց հավասար բաշխում:

Գույքային հավասարությունը հնարավոր է, եթե անձնական սեփականությունը վերացվի և գույքերը լինին ընդհանուր սեփականություն:

Միս ուտելը, արյուն թափելը արգելվում է:

Ենթադրում են, որ Կավատն օգտվել է այդ ուսմունքից ազնվականության դեմ պայքարելու համար:

[2] ա. Ներքին Հայք—կենտրոնը՝ Թեոդոսուպոլիս

բ. Հայք—կենտրոնը՝ Սեբաստիա

գ. Հայք—կենտրոնը՝ Մելիտենե

դ. Հայք—կենտրոնը՝ Մարտիրոպոլ. բերդը՝ Կթրիճ:

նի միջև փոփոխակի հաջողությամբ՝ Յուստինիանոս կայսեր ու իր հաջորդների ժամանակ, երբեմնակի ընդհատումներով, որոնց ընթացքում տեղի են ունեցել՝ հայկական շրջանների ավերում և բնակչության փախուստ։

10. Նախարարներից շատերի գաղթը Պոլիս և նրանց բյուրոկրատացումը։ Ուշագրավ տեղեկություն է տալիս Պրոկոպիոս Կեսարացի պատմիչը Պոլսում Արտավան Արշակունու վարած անվայել ու ցնխ կյանքի մասին։

Proc. Goth. III, 32, p. 409.

«Ուրիշների գժրախտությունների գնով, Արտավանը ձեռք բերեց հերոսի, բանակալի, չախչախողի համբավ, սպանելով առանց որևէ հիմքի իր ընկերոջն ու սեղանակցին՝ Գոնթարիսին։ Իսկ այժմ կորցնելով իր արիությունը, նա նստել է այստեղ թուլամորթաբար, մինչդեռ նրա հայրենի երկիրը, գրավված միշտ զորքերով, ուժասպառ է լինում ապօրեն հարկերի ծանրության տակ։ Նրա հորը սպանել էին խաղաղության բանակցության պատճառով, իսկ նրա ազգը լիովին ստրկացրել են և անընդհատ ցրում են հռոմեական կայսրության զանազան մասերում»։

Պրոկոպիոսը տալիս է նաև ուշագրավ վկայություն հայ նախարարների հուսահատ դրության մասին՝ Բյուզանդիայի կողմից հայերի դեմ ձեռնարկված ծանր խստությունների պատճառով և Պարսից Խոսրով Անուշիրվան թագավորի [531—578/9] օգնությունը դիմելու մասին։

Procop., II, 3՝

Նրանց ճառը— Հայտնում է [Խոսրովին], որ իրանցից շատերը Արշակունիներ են. բայց այժմ եկել են նրա մոտ, իբրև ստրուկներ և փախստականներ—ոչ հոժար կամքով, այլ հարկադրված։

«Մեր նախնիներից վերջին թագավորը՝ Արշակը զիջել էր իր թագավորությունը Հռոմեական կայսեր Թեոդոսին հոժարակամ, այն պայմանով, որ բոլոր տոհմով իրա մերձավորները մնան միշտ ազատ և ոչ մի հարկ չվճարեն։ Այդ կարգադրությունը ուժի մեջ էր մնում, մինչև որ դուք կնքեցիք խաղաղության այն նշանավոր դաշինքը, որ, մեր կարծիքով, առանց սխալվելու կարելի է անվանել համաշխարհային աղետ, որովհետև այնուհետև, անտես առնելով իր բարեկամներին ու թշնամիներին, ամեն ինչ իրար է խառնել ու քայքայել նա, որ անունով քեզ բարեկամ է, բայց իրոք— քո իսկական թշնա-

մին է։ Այդ բանը ինքդ կիմանաս, հենց որ նվաճե արևմտյան
ազգերը։ Եվ իրոք, ի՞նչ բան նա չէ արել, որ արգելված է եղել.
ի՞նչ բան նա չէ խանգարել, որ շինված է եղել։ Նա չէ՞ որ մեղ
վրա հարկ է դրել, որ առաջ մենք չգիտեինք։ Նա չէ՞ որ նվաճեց մեզ հարևան ճաներին, որոնք մինչ այդ անկախ էին։ Նա
չէ՞ որ հռոմեական իշխան է կարգել դժբախտ լազերի թագավորի վրա։ Նա չէ՞ որ բոսպորյանների մոտ, որոնք ենթարկված էին հոների իշխանության, ուղարկել է իր զորավարներին։
Նա չէ՞ որ նվաճել է այդ քաղաքը առանց որևէ իրավունքի։
Նա դաշն է կնքել եթովպիացիների հետ, որոնց մասին առաջ
հռոմայեցիները նույնիսկ լսած չէին։ Նա շրջապատում է արդեն Ոմերիտների հողերը և...

Ամբողջ աշխարհը քիչ է այդ մարդուն.... Աչքերը ուղղել
է այժմ եթերին.... Ի՞նչ ես դանդաղում.... Եթե ուզում ես
իմանալ, թե ինչպես է վարվում Յուստինիանոսը նրանց հետ,
որոնք նրան հանձնվում են, մենք և լազերը քեզ օրինակ......
Նվաճման համար մնացել է միայն Պարսկաստանը......
Հռոմեական ուժերի մեծագույն մասը դեռ հեռավոր երկրներում են.....

Ցիտային մենք սպանել ենք, Վելիսարը այլևս չի գա.
մենք կլինենք առաջնորդներ»։

541 թվին բյուզանդական զորքերը մտել էին Լազիստան և լազերը ևս, դժգոհ լինելով բյուզանդացիներից, դիմել էին Պարսից
Խոսրով թագավորի օգնությանը։ Լազերի դեսպանությունը գնացել
էր Խոսրովի մոտ և հայտնել էր՝

1. որ բյուզանդացիները իրենց ձեռքն են առել երկրի իշխանությունը, թողնելով թագավորին նրա արժանավորության միայն
արտաքին տեսքը։

2. առևտրի մեջ մտցրել են մենաշնորհ [մոնոպոլիա]. ծախում
են ինչ որ իրանց ավելորդ է և անպետք. գնում են և իրանք են
նշանակում գները։ Դուրս են տանում երկրից ամենաանհրաժեշտ
բաները, նաև ոսկին։

Հռոմեական զորավարը արգելել էր ազատ առևտուրը. ինքն էր
ծախում և առնում, և նշանակում գները։

543 թվին բյուզանդացիները իրենց ուժերը ուղղել էին դեպի
Պարսկական Հայաստան, սակայն Դվինի մոտ տեղի ունեցած
կռվում Բյուզանդիայի զորքերը պարտվել էին։

Այնուհետև մինչև 562 թիվը պարբերաբար կրկնվող կռիվնե-

րից հետո տեղի է ունենում Դարայի մոտ հիսնամյա խաղաղության կնքում Բյուզանդիայի և Պարսկաստանի միջև:

Մինչ այդ, տեղի ունեցող անընդհատ կռիվների և Յուստինիանոսի իշխանության ընթացքում կայսրության ուժերի չափազանց լարման հետևանքով, Բյուզանդական կայսրության վիճակը, չնայած նրա արտաքին փայլին, խախտվել էր:

Յուստինիանոսի մահվանից հետո Յուստինոս II-ի [565—578] ժամանակ Պարսկաստանը խիստ զորեղացել էր:

Ինչպես վկայում է Միխայել Ասորին՝

«Յայսմ ժամանակի հպարտացաւ թագաւորն Պարսից յաղթութեամբ, որ եղև նմա ի Միջագետս»:

564 թվին Հայաստան էր եկել Պարսից Սուրեն մարզպանը, որը Պարսկական Հայաստանում նորից մտցրել էր խստություններ:

Ասողիկ, գլ. Բ, էջ 84՝ «Դենշապուհ —զորմզդական հուրն հարկէր զնախարարս Հայոց, զի շնայր ընդ կանայս ազատաց, ոչ առնելով զայրն տէր կնոջ իւրոյ»:

Միխայել Ասորի՝ «Եվ խոսրով թագաւորն Պարսից սկսաւ նեղել զՀայս՝ երկրպագել կրակի».

«առաքեաց ի Հայս շինել անդ տուն կրակի»:

Ասողիկ, գլ. Բ, էջ 84՝ «Դենշապուհ —զորմզդական հուրն վառեաց ի Ոշտունիս»:

Հիշված խստությունների հետևանքով 572 թվին բռնկվեց հայերի երրորդ ապստամբությունը Վարդան Մամիկոնյանի առաջնորդությամբ՝

«Հանդերձ միաբանութեամբ ամենայն նախարարաց», որոնց խոստացել էր օգնել Բյուզանդական Յուստինոս II կայսրը: Ապստամբները 572 թվի փետրվարի 22-ին գրավեցին Դվինը և կոտորեցին պարսկական զորքն ու մոգերին, և Սուրեն մարզպանը սպանվեց:

Այնուհետև բռնկվեց նոր պատերազմ Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև, որը տևեց ընդհատումներով 20 տարի և որի ընթացքում ապստամբ նախարարների երկրամասերը ենթարկվեցին ավերածության:

Ինչպես վկայում է Ասողիկը, էջ 85՝ «Եւ այս են ժամանակք մարտից երկպառակութեան, անթիւ սպանմանց, գերութեան առից, խռովից, կապանաց, նեղութեանց, պակասութեանց, խիստ սովու, սրոյ և մարդամահու, աւերելոյ աւանից, հրդեհից շինուածոց, և ամենայն վնասուց բազում աշխար-

հաց, յերկուց կողմանց հասանէր՝ մոռացեալ աստուածպաշտութիւն»:

Այդ կռիվների հետևանքով Բյուզանդիան ստանում է՝ Դարան, Աղձնիքը, Տուրուբերանը, Գուգարքը, Տայքը, Այրարատի մեծ մասը:

Իսկ Պարսկաստանին մնում է՝ Մոկքը, Կորճեքը, Վասպուրականը, Այրարատի փոքր մասը, Սյունիքը, Արցախը, Փայտակարանը, Ուտին:

Այդ 20 տարվա աշխարհավեր պատերազմների հետևանքը եղավ Մավրիկիոս բյուզանդական կայսեր [582—602] նոր քաղաքականությունը, որի մասին Սեբեոսը տալիս է հետևյալ վկայությունը՝

Սեբեոս, գլ. Զ, էջ 75—«Յայնմ ժամանակի թագաւոր յունաց Մաւրիկ հրամայէ գրել առ թագաւորն Պարսից գիր ամբաստան վասն իշխանացն ամենայն Հայաստանեաց և զաւրաց նոցա»:

«Ազգ մի խոտոր և անհնազանդ են, ասէ, կան ի միջի մերում և պղտորեն: Բայց եկ՝ ասէ, ես զիմս ժողովեմ և ի Թրակէ գումարեմ. և դու զքոյդ ժողովէ և հրամայէ յԱրևելս տանել: Զի եթե մեռանին՝ թշնամիք մեռանին. և եթէ սպանանեն՝ զթշնամիս սպանանեն. և մեք կեցցուք խաղաղութեամբ: Զի եթէ դոքա յերկրի իւրեանց լինիցին մեզ հանգչել ոչ լինի»:

«Միաբանեցան երկոքին»....

Բյուզանդական կայսրության այս նոր քաղաքականությունը առաջ է բերել նախարարական տոհմերի մեջ հուսահատ դրություն: Բյուզանդական մասի նախարարները փախչում էին պարսից կողմը, որտեղ նրանց դրությունը քաղաքական և տնտեսական տեսակետից ավելի նպաստավոր էր: Սակայն նոքա գտնվում էին երկուստեք սպառնալիքի տակ և որոշեցին՝

Սեբեոս գլ. Զ էջ 77 —«Պատերազմեսցուք ընդ երկոսին թագաւորսդ, և բռնութեամբ զերկիրդ մեր ի մեզ դարձուսցուք»:

Այնուհետև մի քանի անհաջող ապստամբական փորձերից հետո հայ նախարարները սկսեցին նոր զորահավաք —Սահակ Մամիկոնյանի և Սմբատ Բագրատունու առաջնորդությամբ՝

Սեբեոս, գլ. Ժ, էջ 86 —«Դարձեալ սկսան միաբանել մնացեալ նախարարքն Հայոց, և խնդրէին ի բաց կալ ի ծառայութենէն Յունաց թագաւորին. և նստուցանել իւրեանց թագավոր, զի մի ևս նոցա հասցէ մեռանել ի կողմանս Թրակացւոց, այլ կեալ և մեռանել ի վերայ աշխարհին իւրեանց»:

Այս ապստամբության լուրը հասնում է թագավորին և Սմբատին ու ուրիշ յոթը հոգու բանտարկում են:

Հետագայում, շնորհիվ իր բացառիկ քաջության, Սմբատ Բագրատունին ներումն է ստանում և դառնում է մարզպան Վրկանի [607—616/617 թ.]: Այդ ժամանակները, Աբրահամի կաթողիկոսության օրով [607—610/611] տեղի ունեցավ վրաց և հայոց եկեղեցիների բաժանումը: Հայերը մնացին ասորական եկեղեցու հետ համերաշխ, իսկ վրացիները՝ հույն-հռոմեական եկեղեցու հետ, և ստեղծվեց թշնամական տրամադրություն:

Գիրք թղթոց —«Վասն որոյ և զյառաջագոյն սահմանն վարդապետացն մերոց, զոր ի վերայ Հոռոմին հատին, և կացցէ մինչև ցբուն՝ թէ ոչ դարձցին ի ճշմարիտն, մեք զնոյն ի վերայ Վրաց հրամայեցաք, ամենեիմբ մի՛ հաղորդել ընդ նոսա, մի՛ յաղօթս և մի՛ ի կերակուրս, և մի յըմպելիս, մի՛ ի բարեկամութիւն, մի՛ ի դաեկութիւն, մի՛ աղաւթիւք երթալով ի խաչն որ ի Մցխիթայի տեղաւքն համբաւի, մի՛ ի Մանգղեաց խաչն և մի՛ ի մեր եկեղեցիս զնոսա ընդունել. այլ և ամուսնութեամբ ամենեիմբ հեռանալ. բայց միայն գնել ինչ, և կամ գնոյ տալ որպէս Հրէից»:

«Նոյն հրաման և վասն Աղուանից»:

Հայ և վրաց եկեղեցիների բաժանումից հետո տեղի է ունենում քաղկեդոնական հայերի քայլ առ քայլ ապազգայնացումը և ձուլումը հույների և վրացիների հետ:

602 թվին Թրակիայում տեղի ունեցավ ապստամբություն. Մավրիկիոս կայսրը և իր որդիները սպանվեցին, և նրա հաջորդ Փոկաս կայսեր ու պարսից Խոսրով II թագավորի [590—628] ժամանակ վերսկսվեց պատերազմը Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև, որը տևեց 24 տարի: 18 տարի շարունակ, գրեթե անընդհատ, բյուզանդական զորքերը պարտություն էին կրում: Տեղի էր ունենում բնակչության կոտորած առանց սեռի ու հասակի խտրության և Փոքր Ասիայի ավերումը մինչև Բոսֆոր:

Կռիվների վերջին տարիները, թեև Բյուզանդիան 627 թվին Մոսուլի մոտ տարած վճռական հաղթության շնորհիվ վերականգնեց իր դիրքերը և կողմերը կնքեցին մշտական խաղաղության դաշնագիր, սակայն նոքա երկարատև կռիվների պատճառով ուժասպառ էին եղել, և 636 թվից սկսած հանդես եկավ արաբական աշխարհակալությունը:

ԱՐԱԲԱԿԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Արաբական աշխարհակալության արագ ծավալմանը նպաստել են հետևյալ պայմանները՝

1. Բյուզանդիայի և Սասանյան Պարսկաստանի թուլացումը հաճախակի կրկնվող աշխարհավեր կռիվների պատճառով.

2. Հայաստանի բնակչության դժգոհությունը. Բյուզանդական կայսրությունից՝ վարչական դաժան սիստեմի, կրոնական հալածանքների, դրամական ծանր տուրքերի և միաձուլման քաղաքականության պատճառով.

3. Երկու մեծ պետությունների իշխանության տակ գտնվող արաբական և սեմական ժողովուրդների համակրանքը և օգնությունը նոր աշխարհակալությանը.

4. Օգնում էին նաև հրեաները, որոնց դրությունը Պաղեստինում ծանր էր.

5. Արաբների մեղմ և բարյացակամ վերաբերմունքը դեպի անձնատուր եղող թշնամիները և քաղաքները: Հոժարակամ հանձնվող քաղաքներին տրվում էին արտոնություններ.

6. Համբերատար վերաբերմունք եկեղեցու նկատմամբ.

7. Նախարարական շահերը արաբների իշխանության տակ եղել են ավելի ապահովված.

8. Տուրքերը և հարկապահանջությունը սկզբնական շրջանում եղել են չափավոր.

9. Արաբները կատարում էին իրենց խոստումները.

10. Իրենց տիրապետության առաջին շրջանում՝ Օմայան դինաստիայի խալիֆները եղել են ընդհանուր առմամբ մատչելի և ժողովրդին մոտ:

Արաբական տիրապետության բնույթը զգալի չափով փոխվել է 750 թվից հետո, Աբբասյան դինաստիայի գերիշխանության օրով, շնորհիվ ստեղծված նոր պայմանների՝

ա. Աբբասյանների պետական կազմակերպությունը և մշակույթը եղել են նախկին Սասանյան Պարսկաստանի պետականության ազդեցության տակ:

բ. Աբբասյանները հին աշխարհակալների նման վարել են շռայլ կյանք, կատարել են մեծ ծախսեր և եղել են ժողովրդից ավելի կտրված:

Արաբական տիրապետության առանձնահատուկ երևույթներից են՝ խառն ամուսնությունները, որոնք տեղի են ունեցել, գլխավորապես, VIII դարում և IX դարի առաջին կեսում՝ հալածանքներից խուսափելու համար:

Արաբական աշխարհակալության հիմնական նպատակը սկզբնական շրջանում եղել է՝ աշխարհագիր կատարել նվաճված շրջան-

ներում և հարկեր ստանալ, որի վճարման համար պատասխանատու է եղել ամբողջ համայնքը:

Իրենց տիրապետության առաջին շրջանում արաբները նպատակ ունենալով պահպանել իրենց զինվորական գերազանցությունը եղել են իշխողներ և զինվորականներ: Քաղաքացիական զբաղմունքները և վարչական աշխատանքները թողնված են եղել նվաճվածներին:

Վարչական պաշտոնեությունը սկզբնական շրջանում եղել են՝ պարսիկներ և քրիստոնյաներ: Քաղաքացիական և վարչական գործերում իրենք արաբները ոչ մի միջամտություն չեն ունեցել: Մինչդեռ հետագայում, Հաջիջի ժամանակ տեղի է ունեցել պաշտոնեության մահմեդականացում:

Օմայան դինաստիայի ժամանակ մշտական զորք չի եղել. եղել են զինվորական զաղութներ որոշ գլխավոր կայաններում: Մինչդեռ հետագայում Աբասյանները ունեցել են մշտական վարձկան զորք, որը բաղկացած է եղել՝ արաբներից, պարսիկներից և թուրքական ցերգանի ժողովուրդներից:

Համաձայն ֆրանսիական գիտնական Լոռանի եզրակացության՝

«Հայաստանը եղել է Հռոմի և Բյուզանդիայի ու Իրանի և ապա արաբների աշխարհակալական մրցակցության զոհը: Նա ստանում էր հարվածներ թե մեկի և թե մյուսի կողմից: Օգտվում էր այդ մրցակցությունից և օգտագործում նրանց հակամարտությունը ու խուսափում վերջնական անկումից: Սակայն, հայերը չկարողացան այդ հակամարտությունը օգտագործել և իրենց ինքնուրույնությունը վերածել անկախության և պետական միության»:

* *
*

Արաբական տիրապետության շրջանի մասին Սեբեոսը տալիս է հետևյալ պատկերավոր վկայությունը, որտեղ նա արաբներին նմանեցնում է չորրորդ գազանին՝

Սեբեոս, գլ. ԼԲ, էջ 182 —«Բայց երանելին Դանիէլ կանխաւ գուշակէ մարգարէութիւնն զայսպիսի նեղութեանս, որ եկն եհաս ի վերայ երկրի, որ չորս գազանաւք նշանակէ զչորս թագաւորութիւնսն, որ յառնելոցն էին ի վերայ երկրի. Եւ նախ առաջին զԱրևմտից թագաւորութիւն զմարդացեալ գազանն, որ է Յունաց...: Եվ ահա գազանն երկրորդ նման

արջոյ, և եկաց ի կողմն մի՝ յարևելից կողմանէ՝ Սասանականին ասէ զԹագաւորութիւն...: Իսկ գազանն երրորդ, իբրև զինձ և չորք թևք թռչնոց ի վերայ նորա և չորք գլուխ գազանին՝ զՀիւսիսային ասէ զԹագաւորութիւն՝ Գոգ և Մագոգ...

Իսկ գազանն չորրորդ, ահեղ և զարմանալի, և ժանիք նորա երկաթիք, և մագիլք նորա պղնձիք, ուտէր և մանրէր և զմնացածսն առ ոտն կոտորէր: Այս չորս յարուցեալ ի հարաւոյ կողմանէ Իսմայէլեան թագաւորութիւնն, որպէս հրեշտակապետն մեկնեաց եթէ՝ «գազանն չորրորդ թագաւորութեանն կայցէ որ առավել իցէ քան զամենայն թագաւորութիւնս, ն կերիցէ զամենայն երկիր»...

Արաբական առաջին արշավանքների մասին պատմիչների վկայությունները հակասական են և իրար հետ չեն համաձայնում: Արշավանքները տեղի են ունեցել երկու ուղղությամբ՝ Միջագետքից և ապա Ատրպատականից:

Արաբական առաջին արշավանքի մասին, որ տեղի է ունեցել Միջագետքից 640 թվի հոկտեմբերի 6-ին, ուրբաթ օրը, Սեբեոսը տալիս է հետևյալ վկայությունը՝

Սեբեոս, գլ. Լ, էջ 175 —«Եւ ել զաւր ապականիչ յԱսորեստան կողմանէ ընդ ճանապարհս ձորոյ յաշխարհն Տարօնոյ, առին զնա և զԲզնունիս և զԱղիովիտ: Եվ ճանապարհ կալեալ և Բերկրոյ ձորն ընդ Որդսպոյ և ընդ Գոգովիտ՝ թափեցան յԱյրարատ...: Հարին ասպատակաւ զամենայն երկիրն, և ժողովեալ զաւար և զգերութիւն բազում յոյժ...: Յաւուրն հինգերորդի դիմեցին ի վերայ քաղաքին... արկին մուխ շուրջանակի, մերժեցին ծխովն և նետաձգութեամբն զպահապանս պարսպին, և կանգնեալ սանդուխս՝ ելին ի պարիսպն և անկեալ ի ներքս..... զաւրք թշնամացն սատակեցին սրով զբազմութիւն քաղաքին՝ ելին և բնակեցան ի նմին բանակատեղն. որ աւր ի էր արէ ամսոյն՝ յաւուր ուրբաթի...»:

Այդ նույն արշավանքի մասին Հովհան Մամիկոնյանը տալիս է հետևյալ վկայությունը՝

«Յովհաննու Մամիկոնեանի պատմութիւն Տարօնոյ», Վենետիկ, 1832, էջ 57—58—«Եւ յետ ութ ամի եկն Աբդռահիմ, քեռորդի Մահմետի բազում աղխիւ, ութևտասն հազար առնեձիոյ ընդ իւր բերեալ, խնդրէր հարկս ի Հայոց:... անցանէ ի Հարք և ի Բասեան, ի Վիրք և ի Ջաւախս Է ի Վանանդ և առեալ հարկս, դառնայ ի Տաճկաստան»:

Նման վկայություն բերված է նաև

«Պատմութիւն սրբոյն Ներսիսի և գիտ նշխարաց» պատմական երկի մեջ. տես՝ Սոփերք Հայկականք, Է, Վենետիկ, էջ 43—44։ Դվին քաղաքի գրավման մասին, որ տեղի է ունեցել հետագա արշավանքների ժամանակ, արաբական պատմիչները տալիս են հետևյալ վկայությունը՝ Belâdhori. 200, Zâkût, II, 549—

Հանձնման գրություն.

«Յանուն Աստուծոյ Ողորմածի. այս մի գրություն է Հաբիբ իբն Մասլամայի Դվինի բնակչությանը՝ քրիստոնյա, մոգ և հրեա, ներկա և բացակա։ Ես ապահովում եմ ձեր կյանքը, գույքը, ձեր եկեղեցիները, աղոթարանները և ձեր քաղաքի պարիսպները։ Դուք ապահով եք։ Մեր պարտականությունն է մեր խոսքը պահել, քանի որ դուք հավատարիմ կմնաք և կվճարեք գլխահարկ ու հողահարկ։ Աստված վկա է. նրա վկայությունը բավական է։ Կնքված իբն Մասլամայի կողմից»։

Արաբների երկրորդ արշավանքը տեղի էր ունեցել Աբդրրահմանի կողմից 642/643 թվերին, և երրորդ մեծ Արշավանքը 650 թվի օգոստոսի 8-ին։ Այդ արշավանքներից հետո, երբ նրքա վերադառնում էին ավարով և գերիներով, Թեոդորոս Ռշտունի հայ զորավարը հարձակվել է վերադարձող արաբների վրա, կոտորել է նրանց և ետ է վերցրել ավարը և գերիներին։ Այնուհետև Թեոդորոս Ռշտունին համաձայնություն է եկել արաբների հետ, իբրև նրանց կողմնակից, և արաբները պարտավորություն են վերցրել օգնություն տալ հայերին բյուզանդացիների հարձակման դեպքում։ Այդ համաձայնության մասին Սեբեոսը տալիս է հետևյալ վկայությունը՝

Սեբեոս, ԼԵ, էջ 224 —«Արդ՝ խաւսէր ընդ նոսա իշխանն Իսմայէլի և ասէր. «Այս լիցի ուխտ հաշտութեան իմոյ ընդ իս և ընդ ձեզ, որչափ ամաց և դուք կամիցիք. և ոչ առնում ի ձենջ սակ զերեամ մի. ապա յայնժամ տաջիք երդմամբ, որչափ և դուք կամիցիք, և հեծեալ կալէք յաշխարհէդ ԺԵ հազար։ Եւ հաց յաշխարհէն տուք, և ես ի սակն արքունի անգարեմ, և զհեծեալսն յԱսորիս ոչ խնդրեմ. բայց այլուր և հրամայեմ, պատրաստ լիցին ի գործ. և ոչ արձակեմ ի բերդորայն ամիրայս, և ոչ տաճիկ սպա՝ ի բազմաց մինչև ցմի հեծյալ։ Թըշնամի մի՛ մտցէ ի Հայս, և եթէ գայ Հոռոմ ի վերայ ձեր՝ արձակեմ ձեզ զաւրս յաւգնականութիւն որչափ և դուք կամիցիք։ Եվ երդնում ի մեծն Աստուած՝ եթէ ոչ ստեմ»։

654 թվին Բյուզանդիայի կայսր Կոստանդինը մտել էր Հայաստան և գրավել էր Կարինը, Տայքը, Սպերը և մի շարք այլ շրջաններ, որոնց նախարարների մի մասը հնազանդվել էին։ Թեոդորոս Ռշտունին, վրացիք, Աղվանքը և Սյունիքը կողմնակից էին արաբներին։ 655 թվին, Կոստանդին կայսեր վերադառնալուց հետո Թեոդորոս Ռշտունին, ստանալով արաբներից օգնություն, վերագրավում է երկիրը և բյուզանդացիներին հալածում ու առնում է Տրապիզոնը, որից հետո Մուավիան տալիս է նրան երկրի իշխանությունը։

Սեբեոս, ԼԵ, էջ 233 —«Իշխանութիւն ետ նմա զՀայս և զՎիրս, զԱղուանս և զՍիւնիս, մինչև ցԿապկոհ և ցՊարհակն Ծորայ»։

Ինչպես վկայում են հայ պատմիչները, արաբները Հայաստանում իրենց հաստատվելու առաջին շրջանում դեպի հայերը ունեցել են բարյացակամ վերաբերմունք։

Ղևոնդ, գլ. Դ, 14[Ս. ՊԲ. 1887]—«Իսկ յերկրորդում ամի իշխանութեանն [662 թ.] Մուավիա կոչէ զԳրիգոր և զՍմբատ, որ էին պատանդք ի դրանն արքունի. և տայր Գրիգորի զպատիւ իշխանութեանն Հայոց [662—685]. և առաքէ զնոսա բազում մեծարանօք յաշխարհս Հայոց»։

Ասողիկ, գլ. Դ, էջ 122 —«Եւ Մաւիա զԳրիգոր՝ իշխան հաստատեաց Հայոց և Վրաց»։

Ղևոնդ, գլ. Դ, էջ 15—«Իսկ Գրիգոր իշխան Հայոց յաւուրս իւրոյ իշխանութեան խաղաղացոյց զաշխարհս Հայոց յամենայն հինից և յարձակմանց»։

Գրիգորի իշխանության օրով Հայաստանում ստեղծված խաղաղությունը խանգարվեց խազարների արշավանքի պատճառով։ Ինչպես վկայում է

Ղևոնդը, գլ. Դ, էջ 16 —«Տիրեցին ի վերայ աշխարհիս Հայոց հիւսիսային ազգն, որ ասին Խազիրք, և սպանին ի պատերազմին զիշխանն Գրիգոր և զբազումս ի նախարարացն և զիշխանսն Վրաց և Աղուանից...... առեալ զաւար և զգերութիւն՝ գնացին յաշխարհն իւրեանց»։

Գրիգորի մահվանից հետո Բյուզանդիայի Յուստինիանոս II կայսրը [685—695] իր թագավորության սկզբում ուզեցել է նվաճել հայերին։ Ինչպես վկայում է Թեոփանեսը, հայերը տվել են հետևյալ պատասխանը՝

«Այս քանի անգամ է, որ հնազանդեցանք ձեզ, և չգտանք օգնություն ձեզանից մեր նեղության մեջ. այլ, գլխավորապես, զրկանք ու լլկանք, եթե այժմ էս մտնենք ձեր իշխանության ներքո, դարձյալ մատնվելու ենք սրի ու գերության օտար ազգերի կողմից։ Եվ երբ ձեռք քաշեք մեզանից, ինչպես արել եք և ուրիշ անգամներ, ո՞րտեղից մենք օգնություն ստանանք։ Ուստի աղաչում ենք ձեզ, թույլ տվեք, որ մնանք մեր այս վիճակում»։

Հայերի հիշված դիմումին Բյուզանդիայի կողմից ձեռնարկված են եղել պատժիչ գործողություններ, որի մասին Ղևոնդը տալիս է հետևյալ վկայությունը՝

Ղևոնդ, գլ. Ե, էջ 17 —«Եւ յերկրորդում ամի թագաւորութեանն Յուստինոսի կայսեր [686 թ.] և յիշխանութեանն Աշոտի պատրկի առաքէ զօր բազում ի վերայ աշխարհիս Հայոց, որք եկեալ աւերեցին զաշխարհս աւարառութեամբ և բազում գեղեցկահարմար շինուածս հրձիգ արարին յաւեր դարձուցանելով, և ինքեանք դառնային յաշխարհն իւրեանց»։

Ասողիկ, էջ 100 —«Հրով և գերութեամբ քանդեցին գաւառս ԻԵ և ԸՌ երդ գերեալ վաճառեցին»։

Համաձայն Ղևոնդի վկայության, հենց նույն ժամանակը, երբ բյուզանդացիք ավերում էին հայկական շրջանները՝ գլ. Դ, էջ 15—«Ի յերկրորդում ամի իշխանութեան նորա [Աբդլ-Մելիքի, 686 թ.] եղև խառնակումն սաստիկ ի մէջ Տաճկաց և պատերազմ»։

Միաժամանակ Ղևոնդը վկայում է, որ տեղի է ունեցել հայերի ապստամբություն՝

Ղևոնդ, գլ. Դ, 15—«Եւ ի ժամանակի պատերազմին, որ ի մէջ Տաճկաց՝ դադարեցին ի հարկատուութենէ նոցա Հայք, Վիրք, Աղուանք... Եւ եղեն աւուրք ապստամբութեան նոցա ամք Գ»։

Արաբական պատմիչները՝ Բելազորին, Յակուբին և Իբն ալ-Աթիրը Բյուզանդացիների հաջողությունները վերագրում են հայերի ապստամբությանը։

692/93 թվերին բյուզանդացիները Փոքր Ասիայում Սեբաստոպոլսի մոտ պարտություն են կրում արաբներից և Հայաստանը նորից ամբողջությամբ ընկնում է արաբների ձեռքը։ Սմբատ Բագրատունին և հայ նախարարները ընդունում են արաբների իշխանությունը և կռվում բյուզանդացիների դեմ։ Սակայն արաբները վստահություն չունեին հայ նախարարությունների հանդեպ։ Նրանք վա-

րում են նոր քաղաքականություն՝ աշխատում են նախարարներին ճնշել, խստացնում են իրենց վերաբերմունքը և ավերածություններ են կատարում Հայաստանում։ Կաթողիկոսին, Սմբատ Բագրատունուն և նախարարներից շատերին գերում և տանում են Դամասկոս՝ ինչպես վկայում է Հովհաննես Կաթողիկոսը՝ «մարտ ընդ ամրոցս. աւերումն»։

Սմբատ Բագրատունին Դամասկոսից փախչում է. նախարարները ապստամբում են արաբների դեմ. տեղի են ունենում կռիվներ արաբների հետ բյուզանդական զորքի օգնությամբ և 705 թվին՝ հայերի և բյուզանդացիների պարտությունից հետո, Վլիթ խալիֆի [705—715] կարգադրությամբ Հայաստան է գալիս Հեշմ արաբական զորավարը նախարարական տոհմերի բնաջնջման ծրագրով. արաբները հարձակվում են նրանց ընտանիքների վրա՝ կոտորում, կոտորում և գերի են տանում։

Ղևոնդ, գլ. Ժ, էջ 35—«Յայնմ ժամանակի Թափուր եղեալ աշխարհս Հայոց ի տոհմէ նախարարաց՝ մատնէին որպէս զոչխարս ի մէջ գայլոց։ Եվ Թշնամեացն ամենօրինակ չարեաց յարձակեալ ի վերայ՝ յանհուն աղէտս վտանգի պահէին զբնակիչս աշխարհիս Հայոց»։

Այս պատժիչ գործողություններից հետո Վլիթն ուղարկում է Հայաստան Աբդլ-Ազիզին մեղմացրած ծրագրով, և ինչպես վկայում է Ղևոնդը,

գլ. Ժ, էջ 35 —«Գրէր հրովարտակ առ նախարարս Հայոց, և հաւանեցուցանէր զնոսա դառնալ յիւրեանցական աշխարհս. և տայր նոցա գիր երդմամբ չափ ըստ սովորութեանն իւրեանց»։

Փախած հայերը վերադառնում և վերաշինում են Դվինը։ Համաձայն Ղևոնդի վկայության, գլ. Ժ, էջ 36 —«Շինէր վերստին զքաղաքն Դուին հզօրագոյն և ընդարձակագոյն մեծութեամբ, քան զառաջինն»։

Այնուհետև Օմար խալիֆը [717—720 թ.] ունեցել է բարյացակամ և մեղմ վերաբերմունք դեպի հայերը և, ինչպես վկայում է Ղևոնդը,

գլ. ԺԳ, էջ 42—«Զսա ասեն ազնուականագոյն քան զամենայն արս ազգատոհմին իւրոյ։ Սա արար դարձ գերութեանն, զոր գերեաց Մահմետ յաշխարհէս Հայոց..... և խաղաղացոյց զաշխարհս, որ ընդ իւրով իշխանութեամբ»։

Օմարի ժամանակ տեղի է ունեցել՝

1. Հաջիջի կարգադրության վերացումը, որով նորադարձ մահմեդականները պետք է վճարեին գլխահարկ.

2. Հողերի նոր գնումների և անշարժ գույք ձեռք բերելու արգելում.

3. Խարաջի պակասեցում մահմեդականների անշարժ գույքից.

4. Ապօրինի տուրքերի վերադարձը։

Օմարի քաղաքականության հետևանքը եղել է խալիֆատի ֆինանսական դրության քայքայումը։

Օմարից հետո, Հեշամ խալիֆի ժամանակ [724—743] խալիֆատի ֆինանսական քաղաքականությունը փոխվում է, ինչպես վկայում է Ղևոնդը՝

գլ. ԺԷ, էջ 100—«Եւ սա յառաջնում ամի իշխանութեան իւրոյ [725 թ.] խորհուրդ վատ ի մէջ առեալ՝ առաքէր զոմն զօրավար, որում անուն էր Հերթ՝ աշխարհագիր առնել ընդ աշխարհս Հայոց վասն ծանրացուցանելոյ զանուր լծոյ ծառայութեան հարկատրութեան ազգի ազգի չարեօք, որպէս թէ դժուարելով ընդ բարեմտութիւնն Օմարայ, եթէ անիրաւութեամբ ծախեաց զմթերս գանձուցն, զորս համբարեալ էր իշխանացն, որ յառաջ քան զնա։ Եւ բազում վտանգ հասուցանէր աշխարհիս, մինչ զի ամենեցուն հառաչել ի վերայ անհանգիստ նեղութեանցն, յորմէ ոչ գոյր ապրել ումեք յանհնարին վտանգիցն։ Եւ յայնմ հետէ առաւել ծանրացաւ ձեռն նորա ի վերայ աշխարհիս Հայոց»։

Մովսէս Կաղանկատվացի, էջ 368—«յԱմուն [725 թ.] մահ անասնոց եղև, և ի ձմերան աշխարհագիրն Հերթի, որ էարկ զմարդ և զանասուն և զսահմանս երկրի ընդ հարկաւ անթիւ ծառայութեան»։

Ասողիկը ևս վկայում է, որ 725 թվի աշխարհագրից հետո՝ Բ. գլ. Դ, էջ 128—«Սա [Հեշամը] ծանրացոյց զսակ հարկի աշխարհիս Հայոց»։

Հարկերի ավելացումը որոշ չափով տեղի էր ունեցել դեռևս 662 թվին։ Համաձայն Ասողիկի վկայության՝ Բ, գլ. Դ, էջ 122—«Գրեն հրովարտակ ի Հայս՝ հարկել նոցա. և յանձն առին իշխանքն, նախարարօքն և կաթողիկոսն Ներսէն Շ դահեկան յամենայն ամի հատուցանել»։

Մինչդեռ, ինչպես վկայում է Սամուել Անեցին, արաբների տիրապետության սկզբնական շրջանում հարկերը եղել են համեմատաբար շատ փոքր.

Սամուել Անեցի, էջ 82—«մուրհակ Հայոց աշխարհին... յամենայն տանէ առեալ Դ դրամ, և Գ մոթ խորբալ, և ձիատօպրակ մի և պարան մի մազէ և ձեռնարար մի. իսկ ի քահանայից և յազատաց և ի հեծելոց ոչ հրամայեաց առնուլ զհարկն»։

Ինչպես վկայում են հայ պատմիչները, 725 թվի աշխարհագրից հետո երկրում ստեղծվել էր ծանր դրություն, որի հետևանքով 747—750 թվերին բռնկվեց ապստամբական շարժում, Գրիգոր Մամիկոնյանի առաջնորդությամբ։

Աշոտ Բագրատունին եղել է դեմ և ասել է՝

Ղևոնդ, գլ. ԻՁ, 122—«ո՞վ եղբարք, ոչ տեսանեմ խոհական մտաց զգործ անզգայութեանդ, այլ անուղղայ խորհուրդ և բանս տարապարտս. քանզի ահա նուաղունք են զօրքս մեր ի մէջ բռնութեանն Իսմայէլի, և ոչ կարեմք զդէմ անել զօրաց նոցա, և ոչ զերկիր մեր հանել ի բերանոյ վիշապացն։ Եւ միայն աշխատութիւն և վտանգ հասուցանեմք ի մտածմունս մեր. այլ եթէ կամեսջիք ընդունել զխրատ իմ՝ ոչ արասցուք զբանդ, զայդ, և հարկեսցուք նոցա որպէս ցարդ ևս, և կալցուք զստացուածս մեր, զայգիս, զանտառս և զանդաստանս մեր»։

Աշոտ Բագրատունու հիշված խորհրդի պատասխանը եղել է հետևյալը՝

Ղևոնդ, ԻՁ, 122—«Եթէ ոչ միաբանեսցիս ի խորհուրդս մեր՝ ոչ մնասցէ առ քեզ և ոչ մի ոք ի զօրաց քոց. չկարեմք ժուժկալել տագնապիս յորում կայ երկիրս Հայոց»։

Այնուհետև ապստամբ նախարարները կնքում են «դաշինք ուխտի». սակայն այդ դաշինքը մի տարի էլ չտևեց։ Աշոտ Բագրատունին և նախարարների մի մասը բաժանվում են ապստամբներից և գալիս են Բագրևանդ [ի գիւղն Հացր] ու կամենում են միաբանել «ընդ որդիսն Իսմայէլի»։

Գրիգոր Մամիկոնյանը հետամուտ է լինում նրանց՝ «պաշարէր զկայս հանգստեան նորա, գիտացեալ զերկմտութիւն զօրաց նորա, զի ոչ եկին և թիկունս օգնականութեան»։

Ապստամբները Աշոտ Բագրատունուն կուրացնում են։ Գրիգորը Կարինում շուտով վախճանվում է. իսկ նրա փոխարեն «կացուցին իշխան զՄուշեղ սակաւ ինչ ժամանակս» [750 թ.]։

750 թվին խալիֆատում տեղի են ունեցել մեծ փոփոխություններ։ Սիրիայի Օմայան դինաստիան ընկնում է և իշխանությունը անցնում է Իրաքի արաբների Աբասյան դինաստիային։ Փոխվում է

նաև խալիֆատի քաղաքական գիծը: Աբասյանները [750—1258 թ.] ծանրացնում են հարկերը, որի հետևանքով VIII դարի երկրորդ կեսում տեղի են ունենում պարբերաբար կրկնվող ապստամբություններ:

Աբասյան Աբուլաբաս Աբդլա խալիֆը [750—754 թ.] Հայաստան է ուղարկում իր եղբորը Աբու Ջաֆար Աբդլային [Ալ-Մանսուր՝ 754—775], որը, ինչպես վկայում են հայ պատմիչները, դրել էր երկիրը ծանր ու դաժան պայմանների մեջ: Ինչպես պատմում է

Ղևոնդը, գլ. ԻԸ, էջ 127—«Բազում վշտօք և նեղութեամբ վտանգէր զամենեսին և հասուցանէր ի չքաւորութիւն տնանկութեան, մինչև պահանջել հարկս ի մեռելոցն: Եւ զամենայն բազմութիւն որբոց և այրեաց չարալլուկ տառապեցուցանէր. վտանգէր զքահանայս և զպաշտօնեայս աստուածային խորանին՝ ի յայտ ածել զանուանս վախճանելոցն և զընտանիս նոցուն: Խոշտանգէր և զբնակիչս աշխարհիս բռնագոյն և դառն հարկապահանջութեամբ, առնուլ ըստ գլխոյ բազում զուզէս արծաթոց, և դնել կնիք և կապարեայ յամենեցուն պարանոցս»:

Մխիթար Այրիվանեցի Ը—«Աբդլայ զերեք տարուայ մեռածին հարկն ի կենդանւոյն խնդրէր բռնութեամբ. և հատաւ յամենայն աշխարհէ ոսկի և արծաթ»:

Ասողիկ, գլ. Դ, էջ 133—«Այլ յիշխանութեանն Աբդլայի միւսոյ և ի հրամանատարութեան Իզիտի յոյժ ծանրացաւ անուր լծոյ հարկապահանջութեան երկրիս Հայոց. զի ոչ ըստ երդ պահանջումն, այլ ըստ գլուխս արանցն. մինչև նախարարքըն և մեծամեծքն ի չքաւորութիւն աղքատութեան անկան»:

Ղևոնդ, գլ. ԻԸ, էջ 128 —«Հատաւ սակ արծաթոյն, որ գայր ամի ամի յարքունուստ զօրացն Հայոց: Եվ զհամար հեծելոցն պահանջէին յիշխանացն. և հարկ լինէր ի տանց իւրեանց հանդերձել զգունդս զօրացն և զընթացսն զրավաստակ աշխատութեանցն ողջ պահել»:

Ղևոնդ, գլ. ԼԳ, էջ 135—«Ծանրացաւ անուր լծոյ հարկապահանջութիւն...: Վախճանեաց զգիւտ արծաթոյ յերկրէս, և ամենայն ոք տալով զպաճարանս ընչից իւրեանց՝ ոչ գտանէին զգինս փրկանաց անձին իւրեանց. և զար կոտանօք, գելարանօք և կախաղանօք. և դառն տանջանօք կեղէին զկեանս մարդկան: Յորմէ փախստեայ եղեալ բազումք յայրս և ի փապարս երկրի ղօղեալ թագչէին. և ոմանք ձիմահեղձ և գետավէժ լինէին վասն անտանելի աղետիցն»:

Միքայել Ասորի—«Ջեզն և զէշ դրամի միոյ վաճառէին և զուղայն հինգ դրամի տային պահանչողացն»:

Նախարարական տոհմերը տալիս էին ընծա՝ ձի, ջորի պատվական հանդերձներ, ոսկի, արծաթ—«զի կարասցեն լնուլ զբերան վիշապին, որ յարձակեալ էր ապականել զերկիրս»:

Հարկ չվճարողներին չարչարում էին, տանջում և նույնիսկ կախում: Սեղմված ծանր դրության պատճառով ժողովուրդը և նախարարներից ոմանք գաղթում էին և գնում Բյուզանդիա: 752 թվից հետո Կոստանդին V կայսեր զորքերի հետ գաղթել էին Կարնո շրջանի հայերից շատերը:

«էին ոմանք ի նախարարացն Հայոց, որք մերժեալ լքին զժառանգութիւս իւրեանց և փախստեայ անկան յաշխարհն Յունաց, ապաւինեալն առ կայսրն Կոստանդին»:

Հայաստանի ավագանու, Սահակ Բագրատունու և Տրդատ կաթողիկոսի [741—764] գանգատները մնում էին անհետևանք: Երկրի դրությունը հետզհետե ավելի վատանում էր:

Ըստ Ղևոնդի վկայության՝ գլ. ԼԳ, էջ 137—«Եւ ես առ այսօքիւք արհամարհութիւնք հայրապետաց, այպանութիւնք եպիսկոպոսաց, դառն և խոշտանգանք քահանայից, իշխանաց և նախարարաց քարշանք և քայքայութիւնք...: Ռամիկ բազմութիւն մարդկան խոշտանգէին ազգի ազգի տանջանօք... Փոխահարութեամբ լկէին վասն հարկապահանջութեան»:

Արաբական խալիֆատի կողմից ձեռնարկված հալածանքների հետևանքը եղել է 774 թվին բռնկված հայերի ապստամբությունը Արտավազդ Մամիկոնյանի ձեռներեցությամբ, որին մասնակից են եղել նաև ռամիկները:

Ղևոնդ, էջ 137—138—«Իբրև տեսին նախարարք Հայոց զվտանգն տարակուսանացն հասեալ ի վերայ ինքեանց՝ եդին զոգի ի ձեռին իւրեանց և ձեռնամուխ եղեն յիրս, զոր ոչ կարէին վճարել, վասնզի նուազունք էին: Այլ սակայն լաւ համարեալ զմահ քաջութեամբ քան զկեանս վտանգաւոր՝ ձեռնամուխ եղեն յիրս ապստամբութեան»:

Այնուհետև Արտավազդը գնում է Դվին և սպառազինում զորքերը, բարեկամ ցույց տալով իրեն խմայելական զորքերին: Սպանում է Կումայրիում [Շիրակում] «զհրամանատար հարկին» և ձեռքից առնում հավաքած հարկերը: Գնում է իր ընտանիքով Վրաստանի կողմերը և այնտեղից ստիպված է լինում փախչել Եգերացոց երկիրը: Արաբները կարգադրում են ավելի ևս խիստ միջոցների դիմել և բռնությամբ հավաքել հարկերը:

Արտավազդից հետո ապստամբության գլուխ է անցնում Մուշեղ Մամիկոնյանը, որին միանում են մի քանի ուրիշ նախարարներ:

Ապստամբները Բագրևանդում սպանում են հարկահավաքներին՝

Ղևոնդ, գլ. ԼԴ, էջ 139 —«Լռեցուցանէր զպահանջումն հարկին յերկրէս»..... «Ժողովէին առ նա վշտատեսք և վտանգեալք հոգով»:

Ապստամբների դեմ արաբները ուղարկել էին պատժիչ զորք, սակայն Մուշեղը Բագավանում նրանց ևս հաղթում և հալածում է մինչև Առուճ, որտեղ սպանվում է նրանց զորավարը:

Այս հաղթությունից հետո բռնկում է ընդհանուր ապստամբություն: Ապստամբությանը դեմ է եղել Սահակ Բագրատունու որդին Աշոտը, որը ասել է՝

Ղևոնդ, գլ. ԼԴ, էջ 142—143 —«Մանկունք էք և կրտսերագոյնք հասակաւ. և գիտեմ եթէ ոչ կարէք զդէմ ունել զօրութեան բազմագլուխ վիշապին, զի հզօր է զօրութիւն նորա և անթիւ բազմութիւն ընդ ձեռամբ նորա, և անչափ պատրաստութիւն զինուց ի գանձս նորա և ամենայն թագաւորութիւնք որք հակառակ կացին իշխանութեան նորա՝ փշրեցան որպէս զանօթ բրտի. զի թէ Հռովմայեցւոց թագաւորութիւնն ոչ կարաց համբառնալ զձեռս և վեր, այլ սարսեալ դողաց յերեսաց նորա»..... «Կամ հնազանդեցէք, կամ փախէք»:

Աշոտի խորհուրդը ապստամբները համարեցին «խրատ նենգութեան» և Վասպուրականի ապստամբները որոշեցին հարձակվել Արճեշի վրա, որը արաբական կենտրոնատեղերից մեկն էր: Սակայն խալիֆատի կարգադրությամբ Հայաստան ուղարկված և դարան մտած արաբական զորքերը Ամր զորավարի առաջնորդությամբ գրոհեցին ապստամբների վրա և պարտության մատնեցին [775 թ.].

Ղևոնդ, գլ. ԼԴ, էջ 147 —«կոտորեցին զմեծ մասն հետևակ զօրուն, որ յաշխարհաբնակ մարդկանէն էին. քանզի էին մերկք և առանց զինուց և անհմուտք պատերազմի»:

Կարինը պաշարող ապստամբները ստանալով Արճեշի մոտ տեղի ունեցած ապստամբների պարտության լուրը, ստիպված են լինում վերացնել քաղաքի պաշարումը, որը արդեն անձնատուր էր լինելու սովի պատճառով և, ինչպես վկայում է Ղևոնդը, գլ. ԼԴ, էջ 148—«Թէպէտ կարող էին մեկնել ի կողմն Յունաց...... սակայն լաւ համարեցան զմահ անձանց, քան զկորուստ աշխարհիս»...

Նոքա՝ թվով 5000 հոգի գալիս են Բագրևանդ, անցնում են Արածանի գետը և ասում էին՝ Ղևոնդ, ԼԴ, էջ 149—«Քաջութեամբ մեռցուք ի վերայ աշխարհիս մեր և ի վերայ ազգիս՝ և մի տեսցեն աչք մեր կոխան առից լեալ պղծալից արանց»:

Տեղի է ունենում խալիֆատի զորքերի հետ անհավասար կռիվ, որտեղ հայերը ծանր պարտություն են կրում: Զոհվում են նախարարները և ռամիկներից 3000 հոգի:

Այնուհետև տեղի են ունենում հարձակումներ երկրի զանազան կողմերում: Խաչերի ոչնչացում, եկեղեցիների կողոպտում: Հարձակում ամրոցների վրա:

«Տային գիր երդման և իջեցուցանէին»:

775 թվին խալիֆատում Աբու Ջաֆար Աբդլա ալ Մանսուրից հետո գահ է բարձրանում Մահադի՝ [Մահդի՝ 775—785 թ.] խալիֆը, որը, ինչպես վկայում է

Ղևոնդը՝ ԼԷ, էջ 154—155 «էր ազնուական... և լաւագոյն բարուք: եբաց զամենայն տունս գանձուց... և բաշխեաց պարգևս զօրաց իւրոց... և եղև առատութիւն երկրի, և գիւտ արծաթոյ ընդարձակեցաւ. և բնակչաց երկրի անդորրութիւն եղև ի հարկապահանջ բռնութենէն. զի թէպէտև զանուր լծոյ հարկին ծանրացոյց, սակայն վասն գիւտի արծաթոյն հանգեաւ երկիրս... լերինք արծաթոյ յայտնեցան յաշխարհիս Հայոց առ ի հանել ի նոցունց խանութս արծաթոյ զտոյ ի պէտս մարդկան»:

778 թվին Բյուզանդական զորքերը՝ Տաճատ, Վարազտիրոց, Գրիգորիոս և Արտավազդ հայ զորավարների առաջնորդությամբ գալիս են Հայաստան և Գերմանիկեի մոտ [Կոմագեննեում]տեղի է ունենում արաբների դեմ մեծ ճակատամարտ, որտեղ արաբները ծանր պարտություն են կրում:

Տաճատը, որ հաղթական կռիվներ էր վարել բուլղարների դեմ, կայսրությունից ստանում է «պատիւ իշխանութեան ի վերայ Հայաստանի»:

Մահադից հետո նրան հաջորդում է նրա որդին Մուսե խալիֆը [785—786 թ.]: Հայաստան է գալիս Խազմը, իբրև արաբական զորքերի հրամանատար, որի մասին Ղևոնդը ասում է [գլ. Խ, 162]՝ «Արդարև ըստ անուան իւրոյ խազմ արար և դժոխաձև»: Խազմի ժամանակը հալածանքները Հայաստանում և Վրաստանում սաստկանում են: Դվինում նրան հանդիպում են նախարարներից մի քանիսը, որոնցից Մեհրուժան Արծրունին ընդունում է մահմեդական կրոնը, իսկ մյուսները բանտարկվում և գլխատվում են:

786 թվին խալիֆատի գահը բարձրանում է Մուսեի եղբայրը՝ Ահարոնը, Հարուն-ալ Ռաշիդը [786—809], որին հայ պատմիչները բնութագրում են իբրև ագահ և արծաթասեր:

Ատրպատականը, Հայաստանը, Վրաստանը և Աղվանքը ստանում է նրա եղբայրը՝ Ովբեդլան, որը ինչպես վկայում է Կաղանկատվացին՝ «Նեղութիւն անչափ հասուցց աշխարհի և վասն այնր բազում գաւառի Հայոց փախեալ ի Հոռոմս»:

786 թվին տեղի է ունենում մահմեդական ցեղերի գաղթը Հայաստան: Միաժամանակ ծանրանում է տեղական բնակչության դրությունը:

Ղևոնդ, գլ. ԽԲ, էջ 168 —«Ոչ ոք էր տէր ընչից իւրոց,այլ առ հասարակ վարէին յաւարի»:

Շնորհիվ ստեղծված ծանր դրության շատերն ինքնակամ թողնում էին իրենց ունեցվածքը և փախչում: Այսպես՝ 791 թվին տեղի է ունեցել 12000 հայերի գաղթը Շապուհ և Համամ Ամատունիների առաջնորդությամբ:

Ինչպես Ղևոնդը վկայում է՝ գլ. ԽԲ, էջ 169—«Իսկ կէսք ժողովրդեան, որք մնացին, առ սաստիկ կարօտութեան անձնատուրք եղեն ի ծառայութիւն սորկի, փայտակոտորք և ջրաբերք»:

Հարուն ալ Ռաշիդի ժամանակը տեղի է ունեցել Հագարացիների արշավանքը Հայաստան. այդ արշավանքի մասին Հովհաննես կաթողիկոսը տալիս է հետևյալ վկայությունը՝

«Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ, Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1912, էջ III—«Եւ վասնզի սպառըսպուռ Հագարացիքն տիրեցին կալան զՀայաստանեայսս և մեծամեծք աշխարհիս նուաղեցան, և մնացեալք զօղեալ գադարեալ կային ընդ լծով ծառայութեան նոցա. սակս այսորիկ իսկ յայսմ վայրի պակասեաց ի պատմութենէ աստի զրոյցք իշխանաց մերոց»....

Նախարարական Հայաստանը կործանվում էր, ռազմական ուժի, գաղթի ու կոտորածների միջոցով ստանում էր սոսկալի հարվածներ, եկեղեցին կորցնում էր իր հարստությունները և ազդեցությունը, բնակչությունը խիստ պակասում էր և երկրում բնակություն էր հաստատում մահմեդական գաղթականությունը: Նախարարական Հայաստանի կործանման ու այլասերման ահեղ այդ պրոցեսը, որ մեծ չափերով առաջ էր տարվում 775 թվի ապստամբությունից հետո, հետզհետե կանգ է առնում սկսած IX դարի սկզբներից:

Նախարարական Հայաստանի քաղաքական այդ նոր իրադրության պատճառները եղել են՝

1. Գահակալական կռիվները խալիֆատում.

2. Մահմեդական ամիրաների ապստամբությունները Հայաստանում.

3. Պարսկական խմբավորումների ապստամբությունները խալիֆատի դեմ: Ինչպես վկայում է

Վարդան վարդապետը [էջ 77]՝

«Յայնմ ժամանակի ադմկեալ Իսմայէլի ընդ միմեանս, հանգչէր երկիրս Հայոց, և սկսան զօրանալ իշխանքն մեր յիւրաքանչիւր տեղիս»:

Կռվող կողմերը դիմում էին և օգնություն խնդրում հայկական նախարարություններից, որոնց քաղաքական դրությունը այդ ներքին խռովությունների պատճառով հետզհետե նորից զորեղանում է:

Դեռևս 792—793 թվերին Հարուն ալ-Ռաշիդի խալիֆայության օրով տեղի էր ունեցել Բայլաքանում [Փայտակարանում] և Պարթավում պարսիկ աղանդավորների ապստամբությունը Աբու-Մուսլիմի [Ատա ալ Մոկկանա] առաջնորդությամբ: Ապստամբները պարտության էին մատնել Հայաստանի երեք կառավարիչներին, մինչև որ խալիֆատի զորքերին հաջողվել էր ճնշել ապստամբությունը:

809—813 թիվը, Հարուն ալ-Ռաշիդի մահվանից հետո, տեղի էին ունեցել գահակալական կռիվներ նրա որդիների մեջ: Այդ ներքին երկպառակություններից օգտվելով, 809 թվին ապստամբել էր Թիֆլիսի ամիրա Իսմայիլը [809—819]:

Այնուհետև խալիֆատի դեմ ապստամբել էին Մանազկերտի ամիրաները՝ Ջահապը և նրա հաջորդները՝ Աբդել-Մելիքը [813—820] և Սևադան [820—830]: Համաձայն Հովհաննես կաթողիկոսի վկայության՝ նրանք գրավել էին Հայաստանի մեծագույն մասը, և նպատակ էին դրել ամբողջ երկիրը՝ Վանա լճից մինչև Արաքս գետը անկախ դարձնել: Նրանք Հայաստանի իշխանությունը իրանցն էին համարում և կռիվներ են ունեցել արաբական կառավարիչների հետ:

813 թվին ապստամբել էին Դվինում հայերի օգնությամբ կայսիկները:

Նույն ժամանակները տեղի է ունեցել Եդեսիայի և Մարաշի ամիրա Նասրի [812—825] ապստամբությունը:

816 թվին արաբական իշխանության դեմ ապստամբել էր Հայաստանի կառավարիչ Հատիմը:

Իսկ 817 թվին տեղի ունեցավ պարսից աղանդավոր խուրամիտների ահեղ շարժումը Բաբեկի առաջնորդությամբ, որը ունեցել է ազատագրական և սոցիալական բնույթ։ Ապստամբները նպատակ են ունեցել վերականգնել նախկին պարսկական տիրապետությունը և պահանջում էին գույքի և ունեցվածքի հավասար բաշխում։

Ապստամբները գրավել էին Ատրպատականը, Փայտակարանը. Աղվանքը և Արևելյան Հայաստանը։ Խալիֆատի զորքերը շարունակ պարտություն էին կրում։ Միայն 833—834 թվերին, Համադանի մոտ Բաբեկի կրած պարտությունից հետո, խալիֆայությանը հաջողվում է 835 թվին խեղդել ապստամբական այդ մեծ շարժումը. իսկ 836 թվին Աֆշինը գրավում է Բաբեկի մայրաքաղաք Պարթավը և ավերում։

Այս ներքին խռովությունների և քաղաքական դրության փոփոխման հետևանքով հայ ազնվականությունը հետզհետե նորից սկսում է վերականգնել իր ուժերը։ Հատկապես ուժեղանում են Բագրատունիները, որոնք 774 և 775 թվին ապստամբություններից հետո ապավինել էին Հայաստանի արևմտյան լեռնային շրջանները և օգնություն էին ստանում Բյուզանդիայից։

Մայր երկրում տեղի ունեցող երկպառակություններից ու կռիվներից օգտվում էին Բագրատունիները, բռնելով խալիֆատի կողմը, և հետզհետե ընդարձակում էին իրենց երկրի սահմանները։

ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆԵՐԻ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԸ

Բագրատունյաց թագավորության առաջնակարգ նշանակությունը Հայոց պատմության մեջ, որ առանձնապես շեշտված է պատմական երկերում — սխալ է։

Բագրատունյաց թագավորության բնույթը եղել է՝

1. թագավորական տիտղոս, և ոչ իրական թագավորական իշխանություն.

2. իշխանությունը և իրավունքները եղել են նույնը, ինչպես և նախընթաց շրջանում.

3. պարտականությունները եղել են՝ հարկերի հավաքումը և զորքերի առաջնորդությունը.

4. ֆեոդալական անիշխանությունը մնում էր.

5. Արծրունիները և մյուս ականավոր նախարարությունները ևս ձգտում էին ձեռք բերել թագավորական տիտղոս.

6. Խալիֆայության և Բյուզանդական կայսրության քաղաքա-

կանությունը եղել է նպաստավոր ֆեոդալական անջատողականության և ոչ միացման։

7. որքան իշխաններ, նույնքան թագավորներ։ Բագրատունիների ժամանակաշրջանում 7 անջատ իշխաններ հետզհետե ստացել են թագավորի տիտղոս։

Բագրատունյաց ժամանակաշրջանի Հայաստանի քաղաքական կազմակերպությունը ֆրանսիական ականավոր գիտնական Լոռանը բնութագրում է հետևյալ կերպով՝

«Նախարարները եղել են ինքնիշխան, ինչպես և առաջ. հեղինակությունը եղել է անձնական և ոչ իրական։ Նոքա չէին կարող տարածել իրենց իշխանությունը, Բյուզանդիայի և խալիֆատի դիմադրության պատճառով։ Աշոտին 862 թվին տրվում է «իշխանաց իշխան»-ի տիտղոս. բայց տիտղոսը միայն բավական չէր. Աշոտը ինքը պետք է իր հեղինակությունը հաստատեր և նախարարներին ենթարկեր իր իշխանությանը. որը խիստ դժվար էր։ Հայաստանը կարող էր միանալ, բայց չմիացավ։ Աշոտի զորքը քիչ էր խալիֆատի պաշտոնյաներից և տեղական ամիրաներից պաշտպանվելու համար»։

* * *

Դեռևս 775 թվի ապստամբությունից հետո Վասակ Բագրատունին փախել էր Բյուզանդիայի հարևան շրջանը՝ Կղարջք և այնտեղ հիմք էր դրել Արտանուջի Բագրատունյաց ճյուղին։ Նրա որդին Ատրներսեհը և թոռը՝ Աշոտը գրավում են Արտահանը և մերձակա տեղերը և ընդարձակում են իրենց տիրապետության սահմանները Բյուզանդիայի գերիշխանության տակ։ Հետզհետե Աշոտը զորեղանում է և ինչպես վկայում է Վարդան վարդապետը՝

«Տայր իշխանն իսմայէլի Աշոտի, որդւոյ Ատրներսեհի, որդւոյ Վասակայ՝ զերկիրն Վրաց, որոյ երդեալ հնազանդեցուցանէ ինքեան. և կայսրն առաքէ նմա պատիւ կիւրապաղատութեան» [810—833, ըստ Լոռանի]։

Նույն ժամանակաշրջանում զգալի չափով զորեղանում է, 775 թվի ապստամբության ժամանակ զոհված, Բագրատունի Սմբատ սպարապետի որդին՝ Աշոտ Մսակերը [806—825/6], որը գրավել և հաստատել էր իր իշխանությունը Հայաստանի հյուսիս-արևմտյան շրջաններում՝ Տայքում, Արշարունիքում, Շիրակում և Աշոցքում։

806 թվին նա Հարուն ալ-Ռաշիդից կարգվել էր Հայաստանի իշխան և այնուհետև հնարավորություն ստացավ ընդարձակելու իր երկիրը։

Աշոտ Մսակերը եղել է իր ժամանակվա հայ իշխաններից ամենից զորեղը, քաջը և ժողովրդականը։ Նա հավաքում և բերում է իր շրջանը ցիր ու ցան եղած հայերին՝

Վարդան Վարդապետը վկայում է.—«Բողոք կալեալ ազգին Գնունեաց թափել նոցա յԻսմայէլացւոցն, որոյ երթեալ հազար արամբք յԱղիովիտ գաւառ, և առ ինքն գումարեալ զամենայն ազգն աղխին իւրեանց տանի բնակեցուցանէ ի Տայս»։

Աշոտ Մսակերի որդին Բագրատը, իբրև Տարոնի իշխան, 830 թվին ստացել էր «իշխանաց իշխանի» կոչում և նրա իշխանության տակ էին գտնվում՝ Տարոնը, Խոյթը, Սասունը։

Բագրատի եղբայրը՝ Սմբատ Աբլաբասը երեսուն տարի [826—855] եղել է մեծ սպարապետ։ 850 թվին Բագրատունիների իշխանության տակ են եղել Մոկքը, Տարոնը, Սպերը, Արաքս և Կուր գետերի վերին հոսանքի շրջանները, Սյունիքը, Աղվանքի մի մասը։

Հայկական նախարարությունները նորից զորեղանալով և օգտվելով խալիֆատում տեղի ունեցող ներքին խռովություններից, հարևան մահմեդական ամիրայություններին հետևելով, իրենք ևս ձգտում էին հարկատու դրությունից ազատվել։

Մամուն խալիֆայի մահվանից հետո ապստամբել էին խալիֆայության զորքերը։ Մամունի հաջորդ Մուտասիմ խալիֆը [833—842 թ.] կազմակերպում է վարձկան թուրք զորքեր, որոնց ապրուստի, հանդերձելու ու պահելու համար պահանջվում էին հսկայական ծախքեր։ Պաշտոնները ծախում էին փողով։ Ծախքերը ծածկելու համար ժողովրդին կողոպտում էին։ Խալիֆ ալ-Վաթիկի [842—847] ժամանակ Հայաստանը նորից գտնվում էր խառնակ դրության մեջ։ 847 թվին խալիֆայության գահն է բարձրանում Մութավաքիլը [Ջաֆրը՝ 847—862], որը միջոցներ է ձեռնարկում խալիֆայության խախտված դրությունը ամրապնդել և սանձահարել ուժեղացող նախարարություններին։ 849 թվին Մութավաքիլը Հայաստան է ուղարկում Աբուսեթ ոստիկանին մեծ զորքով։ Բագրատը և Աշոտ Արծրունին ուղարկում են պահանջվող հարկերը և դիմում են նրան, որ նա Հայաստան չմտնի և հեռանա։

850 թվին Արզնի ամիրա՝ Մուսեն, իբրև հարկահավաք, մտնում է Տարոն։ Բագրատը և Աշոտը միացյալ ուժերով դիմադրում ու դուրս են քշում նրան։ Մութավաքիլը կատաղած Հայաստան է ու-

ղարկում Աբուսեթի որդուն՝ Յուսուֆին, որը հրավիրում է իր մոտ Բագրատին, խոստանալով երկրի իշխանությունը նրան հանձնել։ Բագրատը գնում է, և Յուսուֆը նրան շղթայված ուղարկում է Սամարա, Մութավաքիլի աթոռանիստը։

Այնուհետև, ինչպես վկայում է Թովմա Արծրունին, գլ. Է՝

«Յովսէփ [Յուսուֆ] զօրավարն Տաճկաց մնայր անցանել ձմերանն, զի եղցէ ի վերայ աշխարհիս Հայոց սրով և գերութեամբ և մեծամեծ հարուածովք և մեծամեծս աշխարհիս խաղացուցանէ ի գերութիւն և կացուսցէ ի վերայ աշխարհիս գործավարս, որ ըստ իւրեանց հրամանի զկարգս աշխարհիս յօրինեսցեն, և իւրեանք հանդերձ ընտանեօք իւրեանց նստցին յամուրս Հայոց»։

Այս իրադարձությունների հետևանքով բռնկում է ուժեղ ազատագրական շարժում։ Ապստամբում է Սասունի ժողովուրդը Հովնան Խութեցու առաջնորդությամբ՝

Թովմա Արծրունի, գլ. Է, էջ 119—120—«Յայնժամ բնակիչք լերինն իբրև տեսին, թէ վարեցաւ իշխանն ի գերութիւն ինքեանք պատրաստեալ են զնոյն փարշմանն կրել, զոր դաշտայինքն կրեցին՝ հասին միաբան բազմութիւնն մեկնակաղէքն Խութայ... և եկեալ ի վերայ քաղաքին պաշարեն զնա, և զզօրսն մատնեն ի սատակումն սրոյ, և զպատանդսն Վասպուրականի հանեն յարգելանէն, և գերեացն ընդարձակեն, զկապուտ նոցա բաժանեն յինքեանս»։

852 թվին Հայաստան է ուղարկվում Բուղան 200.000 զորքով վրեժ առնելու, ազատազորքը ոչնչացնելու և նախարարներին շղթայակապ տանելու Սամարա։

Բուղան սասունցիներին անողոք կերպով պատժում է, գրավում է Տարոնը, Վասպուրականը, Արաքսի և Կուր գետի դաշտային մասերը, Աղվանքը, Վրաստանը։ Նախարարական տոհմերից շատերը ապավինում են ամուր տեղեր։ Ամենուրեք ավերածություններ է կատարում, ազատներին կոտորում։ Բուղային օգնում են նաև երկրում բնակություն հաստատած մահմեդականները։ 855/56 թվին Բուղան վերադառնում է Սամարա և իր հետ տանում բանտարկված նախարարներին ու գերի բռնած ազնվականներին։

Մութավաքիլի ժամանակ սաստկանում են նաև կրոնական հալածանքներ։ Յակուբի վկայությամբ Ջաֆրը [Մութավաքիլը] գահ բարձրանալուց հետո հրաման է տվել՝ որ

«Ոչ մի քրիստոնյա կամ հրեա չպետք է պետական պաշ-

տոն վարեն։ Նոր եկեղեցիները և տաճարները պետք է քանդվեն և նրանք իրավունք չպիտի ունենան վերաշինելու։

Արգելվում են վեճերը ղուրանի մասին. հալածվում են ազատամիտ աստվածաբանները, շիաները և հերետիկոսները։

Սամարայում 991 ազնվականներ ստիպված ընդունում են մահմեդական կրոնը։

858 թվին տեղի է ունեցել Դվինի մեծ երկրաշարժը, որի մասին Հովհաննես կաթողիկոսը տալիս է հետևյալ վկայությունը [էջ 133]՝

«Յամս Զաքարիայի կաթողիկոսի յետ է ամի գերութեան Հայոց...։ Ահագին իմն շարժմանց եղելոց ի Դուին քաղաքի բազում սասանութիւնս և փլուզմունս տանց և պարսպաց և ապարանից լինէր, և առ հասարակ քանդումն և դղրդումն առնոյր քաղաքն, այլև մահ յոլովից մարդկան ի վերայ հասանէր և այնպէս ահագին իմն լինէր վտանգ տագնապին, մինչև ոչ ոք մնալ ընդ յարկաւ, այլ ի հրապարակս և ի փողոցս ելեալ հաշեալ հառաչէին։ Իսկ ցրտաշունչ սառնամանիք ձմեռայնոյն առաւել բերէր զլքացումն հեծութեան, զի յոլովք մեռեալք և ծայրատեալք լինէին»։

Մութավաքիլի մահվանից հետո [862 թ.] խալիֆաթում նորից առաջ են գալիս գահակալական կռիվներ ու ներքին խռովություններ և ստեղծվում են նպաստավոր պայմաններ հայ նախարարության դիրքերի վերականգնման համար։ 862 թվից հետո Սամարայից վերադառնում են կենդանի մնացած նախարարները և վերահաստատվում են իրենց տոհմական կալվածքներում։

862 թվին Աշոտ Բագրատունին [Սմբատ Բագրատունու որդին], որ Բուղայի արշավանքների ժամանակը հավատարիմ էր մնացել խալիֆայությանը, ստանում է «իշխանաց իշխան»-ի կոչում։

Ինչպես վկայում է Թովմա Արծրունին

«Հաւատացեալ էր վերակացութիւն աշխարհիս Հայոց Աշոտի, որ իշխանաց իշխան՝ ձեռն ի գործ արկեալ նուաճել զիշխանս Հայոց, զՎրաց և զԱղուանից, որ եղև իսկ» (էջ 206)։

Աշոտ Բագրատունին աշխատում է թե զենքի ուժով և թե դիվանագիտական խաղաղ միջոցներով իր գերիշխանությանը ենթարկել նախարարական և մյուս երկրները՝ Հայաստանում, Վրաստանում, Աղվանքում և այլուր։

Ըստ Վարդանի վկայության՝ «ընդարձակեալ մեծին Աշոտի ի Վիրս և յԱղուանս զԿաւկասայինս հնազանդեալ»։

Իր հեղինակությունը բարձրացնելու համար նա աշխատում է

բարեկամություն հաստատել զորեղ նախարարությունների հետ խնամիության կապերի միջոցով։ Իսկ Աշոտի եղբայրը՝ Աբասը ստանում է սպարապետի աստիճան։

Բուղայի արշավանքներից հետո զորեղանում են մահմեդական ամիրայությունները։ 863 թվին տեղի է ունենում կայսիկների արշավանքը՝ Սևադայի որդի Ջահապի առաջնորդությամբ։ Այդ արշավանքի մասին Ասողիկը տալիս է հետևյալ վկայությունը՝ Բ., բ, էջ 110՝

«Շահապ որդի Սևադայի ամբոխաստատ զօրու գայ յերկիրս Հայոց՝ աւերել գերել զերկիրս կամելով։ Եւ եկեալ յԱրշարունիս գաւառ՝ իջանէ յեզերս Երասխայ ըստ հարաւոյ կուսէ ի տեղին, որ այժմ ասի Քառասունք։ Իսկ մանուկն Աբաս սպարապետն Հայոց, ... ելեալ ի Կաղզուան աւանէ ԽՌ. արամբք ամենայն Հայոց զօրուն, քաջօք և մրցողօք՝ գայ հասանէ ի վերայ նոցա. զբոլոր բանակն ցիր և ցան վայրացն ընկեցեալ՝ սրախողխող և գետավէժ զամենեսեան առնելով։ ...Իսկ Շահապայ ԻՋ արամբք մազապուր պրծեալ՝ անցեալ գնայր ամօթալից»։

Այս պարտությունից հետո կայսիկները կորցնում են իրենց երկրների որոշ մասերը։ Այնուհետև Աշոտ իշխանաց իշխանի տիրապետության տակ են եղել հետևյալ մարզերը և երկրամասերը՝ Բագարան, Շիրակ, Արշարունիք, Աշոցք, Արևելյան Տայք, Վանանդ, Սուրմալի, Արագածոտն —մինչև Երևանի կողմերը և Կուրտիկ Մամիկոնյանի մահվանից հետո, նաև Բագրևանդը։

Դվինում եղել է արաբական կառավարիչ։

867 թվին Բյուզանդիայում հանդես եկավ հայկական դինաստիան, հանձինս Բարսեղ Ա-ի, որը տևեց մոտ երկու դար։

Բարսեղ Ա-ն [867—886] համաձայն բյուզանդագետ Գելցերի բնութագրման, «պատկանում էր այն հանճարեղ, բայց խիստ ուժեղ բնավորություններին, ինչպես էին Սուլլան, Թեոդորիխը, Նապոլեոն Ա-ը»։

Համաձայն Լոռանի բնութագրման՝

«Բարսեղի ժամանակը հայերի համար բախտավոր շրջան էր. արաբական ոստիկանները ուղարկվում էին հայերի ընտրությամբ. նոքա կարող էին ազատ շնչել, իրենց իրավունքները և ուժը ավելացնել. կատարել ճանապարհների շինություն, շենքերի կառուցում. նպաստավոր էր երկրագործության և առևտրի զարգացման համար»։

880 թվից հետո, երբ մահմեդական ամիրաները միացել էին ընդդեմ զորեղահայ նախարարների, Աշոտ Բագրատունին արշավում է Մանազկերտ և գրավում է Բերկրին, Խլաթը և Արճեշը:

Նախարարական Հայաստանի այս հաջողությունները պետք է վերագրել խալիֆատի թուլացմանը և Բյուզանդական կայսրության հաղթական արշավանքներին Հայաստանի սահմանամերձ շրջաններում՝ 871—882 թվերին:

Կործանիչ հարվածներ էր հասցնում խալիֆայությանը Բարսեղ Ա-ը, որը քայլ առ քայլ առաջ էր գալիս և ավերում էր խալիֆայության լեռնային ամրությունները: Բարսեղի հաջողությունները կլինեին կատարեալ, եթե նախարարական Հայաստանը հարձակվեր արաբների աջ թևի վրա:

Նախարարական Հայաստանի դիրքը դեպի կռվող կողմերը ստանում էր մեծ կարևորություն: Սակայն նախարարական Հայաստանը չեզոք դիրք էր բռնել, որի շնորհիվ ստեղծվել էին նպաստավոր պայմաններ երկրի խաղաղ զարգացման համար:

887/888 թ. նախարարները վճռում են Աշոտին թագավոր դարձնել: Դիմում են Ահմեդ խալիֆին, որը ուղարկում է իշխանաց իշխան Աշոտին թագ և թագավորական զգեստներ: Աշոտ Ա-ի պետական կազմակերպչական գործունեության մասին Հովհաննես կաթողիկոսը տալիս է հետևյալ վկայությունը [էջ 139]՝

«Եւ այնուհետև բազում և երևելի կարգս յարդարէր աշխարհի տէրութեան իւրոյ, յօրինուածս տանց, ազգաց, քաղաքաց, շինից, դաստակերտաց և հարթհաւասար ըստ իւրաքանչիւրոցն կատարէր կարգս լեռնականաց և ջերմահովիտ բարեխառն դաշտականաց, և զամենայն տափարակ տեղիս ագարակս և գոմս դնէր. և զմարմանդս յայգիս և ի բուրաստանս զարդարէր».....

890/91 թվին Աշոտ Ա-ին հաջորդում է Սմբատ Ա-ն: Գահակալության առթիվ տեղի են ունենում ներքին խռովություններ: Աշոտի եղբայրը՝ Աբաս սպարապետը ուզեցել է ինքը ժառանգել գահը, ինչպես վկայում է Հովհաննես կաթողիկոսը՝ «յինքն զթագաւորութիւնն հնարէր նուաճել», սակայն այդ նրան չի հաջողվում. նա հաշտվում է Սմբատի հետ և մնում է սպարապետ:

Ինչպես վկայում է Ասողիկը, էջ 161 —Սմբատ Ա-ի և նրա հոր Աշոտ Ա-ի ժամանակ

«էր շինութիւն և խաղաղութիւն յաշխարհիս Հայոց ըստ մարգարէութեանն՝ հանգչել իւրաքանչիւր ուրուք ընդ որթով

իւրով և ընդ թզենեաւ. և այսպէս ագարակք աւանացեալ և աւանք քաղաքացեալ բազմամարդութեամբ և ընչեղութեամբ, մինչև հովուաց և անդէորդաց մետաքսեայս զգենուլ պատմուճանս»:

Ընդհանրապես այս շրջանում մեծ թափ ու ծավալ է ստացել շինարարությունը նախարարական բոլոր երկրներում:

Արծրունիների երկրի շինարարության մասին Թովմա Արծրունին տալիս է հետևյալ վկայությունները՝

Թովմա Արծրունի, էջ 252—«Շինեաց Գագիկ[887—936] պարսպաւոր ամրափակութեամբ զըլուրն յՈստանին Ռշտունեաց զաւերեալն ի բազում ամաց»:

Թովմա Արծրունի, III, 29—«Շինեաց [Վան Տոսպում] ի վերայ ամրական քարանձաւին յելս և ի մուտս կոյս տունս խրախճից ոսկեզօծս պատշգամբեաւ, յաւելլով ի յառաջագոյն ի հօրէ նորա Դերանկէն շինեալ»:

Թովմա Արծրունի, Թ. IV, է —վկայություն Աղթամարի շինարարության մասին—«ապաստան լինել աշխարհի ի հինից թշնամեաց».

«Հրաման տուեալ բազում արուեստաւորաց և անթիւ մարդկան զհատեալ վէմս ծանունս հասել ընկենուլ յատակս ծովուն անհնարին խորութեանն...: Քարահատակն ամբարտակ կանգունս հինգ...: Եւ պարիսպն է հրաշակերտ, ահեղակերպ, բարձրաբերձ, լայնանիստ բրգամբք և բարձրացեալ աշտարակօք զարդարեալ, անկինաւոր խորանանման տախտակաձև յինքեան ունելով դահոյք զբօսանաց, յորում հանդերձ որդւովք և ազատակոյտ զօրօք միշտ ուրախանայր արքա: Ի շրթունս խորայատակ հիմանց ծովուն դնէ դրունս ահաւորատեսս, հաստահեղույս, բևեռապինդս. որով և զմասն ինչ ծովուն ի կղզին կոյս հատանելով՝ հրաշալիս իմն ներգործեաց, բազում նաւաց յօրինեալ խաղաղ և անքոյթ նաւահանգիստ: Ժողովեալ ի դուռն արքայի իշխանաց և տէրանց, ազատաց և ռամկաց, եպիսկոպոսաց և կրօնաւորաց, զի ամենեքեան օն անդր փութապէս շինուածս և ձեռակերտս հաստատեսցեն, հրաման տայցէ, զի լինիցի տեղի ապաստանի ամենայն հինից ի թշնամեաց եկելոց...: Զկնի հնգից ամաց յորմէ հետէ սկսան շինել՝ պայծառացեալ բարձրացաւ շինութիւն քաղաքին առաւել քան զառաւել»:

Մեծ քանակությամբ շինված են եկեղեցիներ՝ Անիում, Կար-

սում. 40-ի չափ եկեղեցիներ ու վանքեր շինված են այդ ժամանակաշրջանում Սյունիքում:

Հայաստանի շինարարության զարգացման այս շրջանում, Սմբատ Ա-ի թագավորության երրորդ տարում տեղի է ունեցել 893 թվին Դվինի մեծ ու ավերիչ երկրաշարժը, որի մասին Հովհաննես կաթողիկոսը [էջ 162] տալիս է հետևյալ վկայությունը՝

«Զայսու ժամանակաւ ահագին իմն յեղակարծումն ժամու սաստիկ շարժմանց եղելոց ի գիշերի ի Դուին քաղաքի՝ բազում սասանումն և սարսափումն և դղրդումն և կործանումն զբնակչօք քաղաքին ղեղեալ, հիմն ի վեր տապալէր: Վասն զի առ հասարակ ի վայր փլուզեալ զպատուար պարսպացն և զապարանս գլխաւորացն և զտունս ռամկաց՝ իբրև զերիզուտ վայրս առապարաց յական թօթափել տեսանէր... Իսկ զբազմութիւնան դիականցն ոչ բաւեալ տալ գերեզմանաց՝ զբազումս ի վիհս և ի խորափիտս և ի դարափլակս ընկեցեալ ծածկէին»:

Նույն երկրաշարժի մասին Թովմա Արծրունին տալիս է հետևյալ վկայությունը՝ «Պարսպաւոր պատնիշօք պատուարեալ և տուրևառիկ վաճառականութեամբ և ազգի ազգի պըրծութեամբ յափրացեալ յղփացեալ՝ զնա ի հիմանց տապալեալ...: Ասի լինել թիւ մարդկանն ապականելոց ի շարժմանէ՝ ոգի առաւել քան ՀՌ: Այս շարժումն սաստկագոյն քան որ եղև յամս Զաքարիայի Հայոց կաթողիկոսի, յետ է ամի գերութեանն Հայոց» (էջ 230—237):

Բագրատունյաց Սմբատ Ա-ն, իր թագավորության ընթացքում նպատակ է ունեցել և ձգտել է ազատվել հարկատվությունից, իրական դարձնել իր թագավորական իշխանությունը, հնազանդեցնելով իրան նախարարներին: Նա իր իշխանությանն է ենթարկում այն երկրները, որոնք գտնվում էին, ինչպես վկայում է Հովհաննես կաթողիկոսը, էջ 161՝

«յԱրևմտից հիւսիսոյ մինչև ցԿարնոյ քաղաք, և անդր ևս քան զԿղարջս քերեալ մինչև առ ափն ծովուն մեծի, և մինչև ցսահմանս Եգերացւոց և մինչև ցտորատ մեծի լերինն Կովկասու, զԳուգարացիս, և զԾանարս մինչև ցդուռն Ալանաց... և անտի ի հարաւակողմն կոյս զԿուր գետով մինչև ի քաղաքն Տփխիս. և զՈւտի գաւառ մինչև ի քաղաքն Հունարակերտ և մինչև ի Տուս և ի Շամքոր:

Եւ այսպէս ընդարձակեալ զսահման տէրութեան իւրոյ,

որ ընդ լծով արքունի սակից և բեկարաց և մաքսից կացուցեալ՝ զզէն քաջութեան մարտի իւրոյ նշան յաղթութեան կանգնէր»:

Սմբատի թագավորության օրով Ադրբեջանում հանդես եկավ Սաջյան զորեղ ամիրայությունը [879—930], որը Սաջյան Աֆշինի 898 թվի հաղթական արշավանքից հետո հարկատու դարձրեց գրավված հայկական շրջանները Սաջյան ամիրայությանը: Իսկ Բագրատունյաց Հայաստանի ենթարկումը խալիֆայությանը դառնում էր անվանական:

Հետագայում Սմբատը աշխատել է ազատվել այդ հարկատվությունից, սակայն նրան ամիրապետը և Աֆշինի հաջորդը՝ Յուսուֆ ամիրան պարտադրել են վճարել պահանջվող հարկը: Ինչպես վկայում է Հովհաննես կաթողիկոսը, էջ 204—205՝ «Իսկ Սմբատ վասն զի ընդդիմութեամբ զդէմ չ՛կարէր ունել», վճռում է տալ մի տարվա հարկը:

«Եւ ապա ընդ բոլոր աշխարհս տէրութեան իւրոյ հինգեբորդել հրամայէ զամենայն երամակս ձիոց և զանդեայս արջառոց և զհօտս ոչխարաց և տալ ի զբաղատ տուգանս սակին...: Եվ զայս ապա արարեալ զվճար՝ առնոյր այնմ ամի սակ: Իսկ այսոքիկ ապա յաչս նախարարացն արքայի յաւէտ իմն ծանր համարեալ թուէր»:

Այնուհետև դժգոհ նախարարները զժտվում են Սմբատի հետ և Յուսուֆը գրավելով իր կողմը Գագիկ Արծրունուն, որը 908 թվին Յուսուֆից ստացել էր արքայական թագ և արքունական պատիվներ, ավերածության է մատնում Բագրատունյաց Հայաստանը, իսկ Սմբատ թագավորին Երնջակի ամրոցի պաշարման ժամանակ ենթարկում է տանջանքների և խաչում [914 թվին]:

Այս ծանր ու ավերիչ իրադարձություններից հետո Բագրատունյաց Հայաստանում ստեղծվել էր լիակատար անիշխանություն: Ինչպես ասում է Չամչյանը՝ էջ 762 «Զայս ամենայն տեսեալ ռամիկ ժողովրդոց և ծառայից և գեղջկաց՝ նոքա ևս գրեթէ առհասարակ ապստամբեցան ի տեարց իւրեանց. և յարուցեալ ի վերայ նոցա՝ հարին զբազումս ի նոցանէ և ինքեանք տիրեցին փոխանակ նոցա»:

Այս ժողովրդական ապստամբության մասին Հովհաննես կաթողիկոսը տալիս է հետևյալ վկայությունը՝ էջ 258—261.

«Վասնզի նուաղունքն քան զմեծամեծսն ձեռներէց լինել ջանային, և ծառայքն ըստ Սողոմոնի հնարէին, զի զտեարս

տրեխաւորեալ՝ ի գետնի գնացուցեն և ինքեանք նըցեն յերի-վարս աՀիպարանոցս և առաՋնոր Հարըզս՝ խրոխտացեալք և սնքացեալք մեծաւ ապստամբութեամբ: Իսկ Թագաւորք մեր և պետք և իշխանք, զորս ի բնէ նախարարութիւնքն էին՝ ջա-նային վարատել և խլել յիւրաքանչիւրոցն բնակութեանց, և բառ ախորժից իմն ձեռական և նոր ստեղծանել պայազատս և սպասալարս...:

«Եւ այսպէս ի յիշատակութենէ թշնամեաց և յանարգիւ անպտղութեանց՝ ապա և սովն ևս ի վերայ սաստկացեալ զօ-րանայր ուժգնապէս: Վասն զի Հուրն կայծակնացայտ որ տե-ղեացն ի մեզ, և սուրն անողորմ պատերազմացն որ միշտ ի մեզ բղխէր զՀոտ մաՀու՝ մինչև յեօթն ամ ձգեալ ընդերկարե-ցաւ. և վասն այսորիկ մնացեալքս պանդխտեցաք ի վրանս Կեդարու. և թափրացաք և ունայնացաք ի ստացուածոց և ի բոլոր պարենի ռոճկաց և ի չգոյէ կերակրոց»:

Այդ սոսկալի սովի, աղետալի ու խռովաՀույզ շրջանում Բագ-րատունյաց թագավորության գաՀն է բարձրանում Սմբատի որդին՝ Աշոտ Երկաթը [913/14—928/29]: Բռնկում են պարտիզանական կռիվներ ընդդեմ Յուսուֆի զորախմբերի:

Բագրևանդում, Շիրակում, Գուգարքում, Տփխիսում, Աղստևում, Արշարունիքում անողոք ջարդ են տալիս արաբական զորքերին:

«զԳլխաւոր երէցս նոցա ձերբակալ արարեալ՝ Հրամայէր տիկ ձևացուցանել և կախել զպարսպաց ամրոցացն առ ի տե-սիլ և յաՀաբեկութիւն բազմաց»:

Կռիվներ են տեղի ունենում նաև Արծրունյաց և Սյունյաց շըր-ջանում ընդդեմ Յուսուֆի զորքերի:

Աշոտը գնում է Բյուզանդիա Կոստանդին VII կայսեր [912—959] մոտ. թագ է ստանում կայսրից և վերադառնում է բյուզանդա-կան զորքերով [921 թվին]: ԱյնուՀետև Յուսուֆը աշխատում է Հը-րաՀրել երկպառակությունը և խռովությունները նախարարական Հայաստանում: Նա թագավոր է կարգում Սմբատ Ա-ի եղբորորդի Աշոտ սպարապետին [Դվինում]: Տեղի են ունենում ներքին խռովու-թյուններ. սակայն Աշոտ սպարապետը Հաշտվում է Աշոտ Երկաթի Հետ: Աշոտ Երկաթը բարեկամություն է Հաստատում նաև խալիֆա-յության Հետ և ստանում է շաՀնշաՀի կոչում՝ «Ըստ որում վերնագոյն էր նա քան զայլ արքայս Հայոց, քան զԳագիկ, քան զմիւս Աշոտ, քան զթագաւորս Վրաց և Ափխազաց, Աղուանից և Եգերացւոց»:

Յուսուֆը, որ ապստամբության պատճառով 919 թվին խալիֆա-յության կողմից ձերբակալված և բանտարկված է եղել, ազատվե-լով բանտից նորից տիրում է Ատրպատականին և զորքեր է ուղար-կում Հայաստան, սակայն նրա ուղարկած զորքերը պարտվում են և Աշոտ Երկաթի թագավորության վերջին տարիներում Հայաստանը խաղաղվում է:

Բագրատունյաց առաջին թագավորների ջանքերը Հայաստանը միացնելու իրանց իշխանության տակ, ոչ միայն Հաջողություն չեն ունենում, այլ պատճառ են դառնում աղետների, երկպառակության և թշնամությունների:

Աշոտ Երկաթի Հաջորդները Հրաժարվեցին նախորդների այդ քաղաքականությունից, բավականացան տոՀմական իրենց երկրնե-րով և աշխատեցին տարածել երկրի իշխանությունների վրա իրենց բարոյական Հեղինակությունը:

Խալիֆայության քայքայումը, որ սկսվել էր IX դարում, Հե-տըզՀետե ավելի ևս մեծ չափեր է ստանում: Խալիֆայության զա-նազան շրջաններում ստեղծվում են անկախ ամիրայություններ:

935 թվին տեղի էր ունեցել Ասորիքի և Եգիպտոսի վերջնական անջատումը խալիֆայությունից: Արաբական Հայաստանի ոստի-կանները և Պարսից, Միջագետքի, Փոքր Ասիայի, Դվինի, Մանազ-կերտի ու Խլաթի կուսակալները դառել էին ինքնագլուխ վարիչներ:

Մյուս կողմից զգալի չափով զորեղացել էր Բյուզանդիան, և ՀովՀաննես Կուրկուաս բյուզանդական Հայ զորավարը Հաղթական կռիվներ էր մղում խալիֆայության երկրամասերում: 934 թվից սկսած՝ Շիմշատը, Մալաթիան և Արևմտյան Հայաստանը վերջնա-կանապես մտել էին Բյուզանդական կայսրության գերիշխանու-թյան տակ:

Հայաստանի նախարարական գլխավոր տոՀմերը ևս դառել էին ինքնագլուխ՝

1. Արծրունյաց թագավորությունը, որի ինքնիշխան տերն էր Գագիկ թագավորը [904—908—937], և որը թագ էր ստացել Յուսու-ֆից 908 թվին: Նրա գերիշխանության տակն էին գտնվում Վասպու-րականի մյուս իշխանությունները: Կենտրոնը եղել է Ոստանը: Գա-գիկին Հաջորդել է Աշոտ Դերենիկը [937—953], որի մաՀվանից Հետո՝ նրա որդիները իրարից բաժանվել և կազմել էին երեք նոր թագավորություն՝ Վասպուրականի, Անձևացյաց և Ռշտունիքի:

2. Աղվանից թագավորությունը.

3. Սյունյաց թագավորությունը.

4 և 5. Ավելի ուշ նաև Կարսի և Կյուրիկյան թագավորություն-ները:

Բագրատունյաց Հայաստանում Աշոտ Երկաթին հաջորդեց նրա եղբայրը՝ Աբասը [928/29—953]: Ինչպես վկայում է Ասողիկը [էջ 171]՝ Աբասը եղել է—«խաղաղութեան և շինութեան պատճառ». «յաղթող շուրջանակի»: Կարսը, որի ռազմական դիրքը խիստ հարմար էր պաշտպանության տեսակետից, իբրև կենտրոն, Աբասը ավելի ևս ամրացնում է, կառուցում է մի գեղեցիկ եկեղեցի և ուրիշ շինություններ:

Միևնույն ժամանակ Աբասը սիրով ու խոնարհությամբ էր վերաբերվում դեպի Նսըր վերակացուն, որ նստում էր Դվինում:

Ինչպես վկայում է Ասողիկը [էջ 196]— «Երարձ նա յաշխարհէն յիւրմէ զաւաղակութիւն և զմարդասպանութիւն»:

Աբասին հաջորդեց նրա որդին՝ Աշոտ Գ-ն, կամ, ինչպես նրան կոչում էին՝ Աշոտ Ողորմածը [953—977]:

Ասողիկ III, Ը, էջ 180— «Եւ զկնի Աբասայ թագաւորեաց Աշոտ որդի նորա, որ և շահնշահ կոչիւր ամս ԻԵ»: «Այս Աշոտ խաղաղասէր բարուք կալեալ զաշխարհս Հայոց խոնարհութեամբ և ողորմածութեամբ»:

Նա թագավոր է օծվել Անիում 961 թվին և կենտրոնը Կարսից տեղափոխել է Անի. իսկ նրա փոխարեն Կարսում գահ է բարձրանում նրա եղբայրը՝ Մուշեղը [962 թ.]:

Աշոտ Ողորմածը եղել է ժողովրդին մոտիկ: Նա հավաքում էր իր շուրջը հիվանդներին և կարոտյալներին, խնամում էր և նրանց հետ միասին ճաշում: Եղել է աստվածեռն՝ «Մինչ և ի մահուն ոչ լինել դրամ մի ի գանձատուն նորա»: Իր թագավորության առաջին տարիներում նա կռիվներ է ունեցել թշնամիների հետ և ահաբեկել է նրանց:

Աշոտ Գ-ի ժամանակ՝ 964—969 թվերին տեղի են ունեցել կռիվներ Բյուզանդական կայսրության և խալիֆատի միջև: Այդ ընդհարումների մասին Ասողիկը տալիս է հետևյալ վկայությունները՝

Ասողիկ, III, Ը, էջ 183— «Սա [Նիկեփոռ կայսրը] քաջապէս յաղթեաց Իսմայելական զօրուն, յոլով քաղաքս հանեալ ի նոցանէ՝ զՄսիս ի ՆԺԳ, զՏարոն ի ՆԺԴ թուականին»:

Ասողիկ, III, Ը, էջ 183— «Վարդ եղբօրորդի Նիկեփոռայ զօրու ծանու գայ յԱպահունիս, պաշարէ զՄանազկերտ քաղաք. և առեալ զնա ի հիմանց բրեալ խրամատեաց զպարիսպ նորա [968]: Եվ ապա ի ՆԺԸ թուականին առնու զԱնտիոք մեծ քաղաք Ասորւոց» [969]:

Հետզհետե Բյուզանդական կայսրությունը հնազանդում են և հարկ են վճարում՝

ա. ազգն Տաճկաց ըստ հարաւոյ, բ. Սարմատացւոց ըստ հիւսիսոյ. գ. Վրաց ըստ արևելից:

967—969 թվերին, Տարոնի իշխան Աշոտ պատրիկի մահվանից հետո բյուզանդացիները գրավել էին Տարոնը. իսկ 973 թվին գրավել էին նաև Մծբինը:

974 թվին ինքը Հովհաննես Չմշկիկ կայսրը [969—976] նվաճել է Ամիդը և Ֆարկինը և հարկատու է դարձրել ամիրաներին. Հարկատու է դարձրել նաև Ասորիքը մինչև Երուսաղեմ:

Հիշված քաղաքական իրադարձությունների ժամանակաշրջանում հայերը մնում էին չեզոք և չէին մասնակցում կռիվներին: Երկրի խաղաղ պայմաններում Հայաստանը շինվում էր և տնտեսապես բարգավաճում:

Աշոտ Ողորմածի մահվանից հետո հաջորդում է նրա որդին՝ Սմբատ Բ-ը [977—989]: Սմբատ Բ-ի օրով խաղաղությունը և երկրի շինարար գործունեությունը շարունակվում է:

Ասողիկ, գլ. ԺԱ, էջ 187— «Պարսպափակ առնէ զպարիսպն Անւոյ, յԱխուրյան գետոյ մինչև ցձորն Ծաղկոցաց, կրով և վիմով ձածուցեալ, մահարձանօք և աշտարակօք բրգանց, բարձրաբերձ պարսպեալ բացագոյն քան զհին պարիսպն յընդարձակութիւն քաղաքին, և մայրագերան դրամբք՝ երկաթագամ հաստահեղույս բևեռապինդ ամրացուցեալ»:

Սմբատ Բ-ի կրտսեր եղբայրը՝ Գուրգենը, հավատարիմ լինելով նրան՝ ժառանգում է նրա հրամանով 982 թվին Տաշիրը, Տավուշը, Կայանը և մերձակա շրջանները, ու հիմք է դնում Կորիկյան թագավորության: Այսպիսով առաջանում են Բագրատունյաց երեք թագավորություն՝ Անիի, Կարսի և Կորիկյան թագավորությունները:

988 թվին Տայքում իշխանության գլուխ է անցնում վրաց Դավիթ Կյուրոպաղատը, որը Բյուզանդիայի Բարսեղ Բ կայսեր ժամանակ դառնում է թագավոր [988—1001 թ.]: Ինչպես վկայում է Ասողիկը, էջ 275՝

«Եղև նա պատճառ խաղաղութեան և շինութեան ամենայն արևելեայց, մանաւանդ Հայոց և Վրաց, զի զգոռ պատերազմաց յամենայն կողմանց դադարեցոյց նա, յաղթող եղեալ ամենայն շուրջանակի ազգաց և ամենայն թագաւորք կամաւ հնազանդեցան նմա»:

Բյուզանդական Բարսեղ Բ կայսեր ժամանակ հայերը մեծ դեր են խաղացել Բյուզանդիայի՝ բուլղարների դեմ մղած երկարատև կռիվներում: Ինչպես վկայում է

Ասողիկը, էջ 201— Վասիլ [987 թ.] «Կամեցաւ յաղթել Հայոց, որ ընդ իւրով թագաւորութեամբն՝ անցուցանել ի Մակեդոնիա ընդդէմ Բուլղարացն, զի շինեսցեն զերկիրն։ Որ և տարեալ բնակեցոյց գլուխս յաշխարհն այն»։

Ինչպես պատմիչների վկայություններից երևում է, Բարսեղ Բ-ի կռիվների ժամանակ «հեռևազունդ»-ի զինվորները եղել են հայերը։

987—989 թվերին Բյուզանդիայում տեղի են ունենում քաղաքացիական կռիվներ, որի ժամանակ նորից հանդես են գալիս մահմեդական ամիրաները։ Ատրպատականի Աբլհաճ ամիրան գալիս է Դվին և պահանջում է անցյալ տարիների հարկերը՝ «զոր ընդդէմ յուղարկեալ զհարկսն թագաւորն Սմբատ մեծամեծ ընչիւք դարձոյց»։

Սմբատ Բ-ի մահվանից հետո Անիի Բագրատունյաց գահը ժառանգում է նրա եղբայրը՝ Գագիկ Բագրատունին [989—1020]— «ի նոյն աւուր թագաւոր, շահնշահ»։

Ըստ Ասողիկի վկայության, էջ 256— Գագիկը եղել է «սրամիտ, վարժ ի պատերազմի և առատաձեռն ի բաշխելն».

«զԲաժ հարկաց յոլովից տեղեաց աղատեաց.
«տիրեաց յոլով բերդից և գաւառաց ի սահմանացն Վայոց ձորոյ, Խաչենոյ և Փառեսսոյ՝ առավել քան զեղբայր իւր.
«ոչ ոք էր որ զարհուրեցուցանէր զՀայաստանեայսս»։

Գագիկ թագավորի օրով զգալի կերպով ուժեղացել էր նրա եղբոր Գուրգենի որդի Դավիթը՝ «ունի զկողմանս Տաշրաց և Վրաց դաշտի», որի կենտրոնը եղել է մեծ քաղաքանիստ «Շամշուլտե» գյուղը։ Նա նվաճում է Դմանիսը.

«Հնազանդեցուցանէ զամիրայն Տփխեաց քաղաքաւն իւրով»։

Այնուհետև նա կռվում և հաղթում է Գանձակի Փատլուն ամիրային։ 1000 թվին Բարսեղ Բ-ը Տայքի կողմերը գալու ժամանակ նրա մոտ են գալիս Աբխազաց և Վրաց թագավորները, գալիս են նաև Կարսի թագավոր Բագրատունի Աբասը և Վասպուրականի Սենեքերիմ թագավորը իր եղբոր Գուրգենի հետ՝ նրա օժանդակությունը ձեռք բերելու նպատակով, և ինչպես վկայում է Ասողիկը, էջ 277— «պատուեաց զնոսա արքունատուր պատուով և... դարձոյց զնոսա յիւրաքանչիւր տեղիս»։

Բարսեղ Բ-ն Վաղարշակերտի մոտ սպասում է Գագիկին, բայց նա, ինչպես ասում է Ասողիկը, էջ 278—

«Իբրև փոքրութիւն համարեալ զգնալն իւր առ նա, իսկ քեռորդին Գագկայ Ապուսահլ չարախօս եղև ի նմանէ առ Վասիլ։ Վասն որոյ Գագիկ հրաման տուեալ որդւոյ իւրոյ Յով-

հաննիսի և յաւաղ էառ զգաւառն Ապուսահլի զԿոզոյովիտն և Մաղկոյատն»։

Գագիկին անհնազանդ է գտնվել նաև իր եղբորորդի Դավիթը, որի դեմ նա կռվում է և հետո հաշտվում են։

1020 թվին մեռնում է Անիի Գագիկ թագավորը, և նրա որդիների՝ Աշոտի ու Հովհաննես-Սմբատի մեջ տեղի են ունենում ներքին արյունահեղ երկպառակություններ, որ համընկնում էին Բյուզանդական կայսրության կողմից տարվող քաղաքական նպատակներին[1]։

Բարսեղ Բ կայսրը Արևելքում շարունակում էր իր աշխարհակալ գործունեությունը։ Նա գնում է «ի քաղաքն Ուխտեաց».— Տայոց բերդերն ու ամրոցները գրավում է. պաշտոնյաներ է նշանակում. Տայոց ազատներին տանում է իր հետ և բնակեցնում Բյուզանդական կայսրության այլ վայրերում։

Բարսեղ երկրորդի ժամանակ Բյուզանդական կայսրությունը խիստ ուժեղացել էր և իր ուշադրությունը կենտրոնացրել իր արևելյան սահմանների վրա։ Կայսրության քաղաքականությունը իր արևմտյան և արևելյան սահմանակից շրջաններում եղել է.

1. Պետության կենտրոնացումը և սահմանակից մանր թագավորությունների նվաճումը.

2. Կռիվ խոշոր կալվածատիրության դեմ.

3. Կրոնական և ազգային միաձուլում՝ բռնի գաղթեցման և մայրենի երկրից կտրելու միջոցով։

Այդ քաղաքականությունը Բյուզանդիան համառությամբ վարել է՝ ինչպես բուլղարների և սլավոնների վերաբերմամբ, որոնց հետ մոտ 40 տարի [981—1018 թ.] կռիվներ է ունեցել, մինչև որ հաջողվել է նրանց ընկճել։

Նույն քաղաքականությունը Բյուզանդիան կիրառել է նաև նախարարական Հայաստանի վերաբերմամբ։

---

[1] Այդ և հետագա պատմական իրադարձությունների նկարագրությունը տրրված է ակադ. Մանանդյանի «Քննական պատմության» Գ հատորի առաջին գլխում։

Ց Ա Ն Կ Ե Ր

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Աբաս Բագրատունի, Կարսի թագավոր 610
Աբաս Բագրատունի, Հայոց թագավոր 608
Աբաս Բագրատունի, սպարապետ 601, 602
Աբասյաններ 544, 549—551, 553, 561, 581, 582, 589
Աբգար, Եդեսիայի թագավոր 32
Աբգար Թ, Օսրոյեն-Եդեսիայի թագավոր 56, 57
Աբգար Ժ, Օսրոյեն-Եդեսիայի թագավոր 64
Աբգար ԺԱ, Օսրոյեն-Եդեսիայի թագավոր 86
Աբգավ եպիսկոպոս 258, 261, 287
Աբդել-Մելիք, Մանազկերտի ամիրա 595
Աբդլ-Ազիզ, արաբ ոստիկան 587
Աբդլ-Մելիք խալիֆ 586
Աբդլա, խալիֆ 550, 551, տե՛ս նաև Աբուլաբաս ալ-Սաֆֆահ
Աբդռահիմ, արաբ զորավար 509, 583
Աբդուլ-Համիդ իբն Ջաֆար 515
Աբել քահանա 451
Աբեղյան Մ. 54, 79, 80, 122, 255, 273, 495, 496, 504
Աբլաբիոս, պրետորիանների պրեֆեկտ 164, 177
Աբլհաճ, Ատրպատականի ամիրա 610
Աբրահամ Խոստովանող 386
Աբրահամ կաթողիկոս 580
Աբրահամյան Ա. 492
Աբու-Բաքր, խալիֆ 516—518, 524, 525, 528, 529, 533
Աբուլաբաս Աբդալա, խալիֆ 590
Աբուլաբաս ալ-Սաֆֆահ, խալիֆ 549
Աբու-Մուսլիմ, պարսիկ աղանդավոր 595, տե՛ս նաև Ատա ալ-Մոկաննա
Աբու Ջաֆար Աբդալա ալ-Մանսուր, խալիֆ 549—553, 590, 593
Աբուսեթ, արաբ ոստիկան 564, 598, 599
Ագաթանգեղոս 77, 79, 80, 88, 92, 93, 106, 108, 109, 118, 121—124, 127, 129—131, 135, 138, 139, 214, 302—304, 306—308, 310, 323, 339, 353—357, 385
Ագաթիաս, պատմագիր 73
Ադոնց Ն. 69, 94, 99, 158, 179, 234, 247, 253, 267, 269, 270, 295, 301, 303, 304, 311, 322—332, 334, 335, 342—345, 349, 351, 371, 381—383, 385—387, 448, 459, 461—463, 488, 490, 491, 492, 506

Ադե, հռոմեական պաշտոնյա 223, 224, տե՛ս նաև Արինթեոս
Աթանագինես, Ներսես Ա կաթողիկոսի հայր 359
Ալա Սոլամի, կայսիկ ամիրա 564
Ալբիանոս, հռոմեական պաշտոնյա Բրիտանիայում 56, 57
Ալի, արաբ ոստիկան 563
Ալիշան Ղ. 97, 300, 314, 329, 336, 354, 519, 521, 525, 554
Ալ-Վաթիկ, խալիֆ 563, 598
Ալ-Վակիդ 515, 516, 520
Ակակիոս, Ամիդի եպիսկոպոս 259, 267, 269, 452, 459, 461, 462, 488, 490
Ակակիոս, Մելիտենի եպիսկոպոս 279, 281, 475, 476
Ակակիոս, Ներքին Հայքի եպիսկոպոս 482
Ակինյան Ն. 24
Ահմեդ, խալիֆ 602
Ադան (Տեր Ադան), Վահան Մամիկոնյանի քեռի 367, 379
Ադրիանոս եպիսկոպոս 146, 352, 357
Ադրիանոսներ 217
Աղեքսանդր Մակեդոնացի 63, 72, 79
Աղեքսանդր Սևերոս, կայսր 78—80, 82—85
Աճառյան Հ. 259, 262
Ամատունիներ 555
Ամմիանոս Մարկելլինոս, ժամանագիր 157, 170—172, 175—179, 182, 185, 187, 191, 195, 197, 198, 203—205, 207—209, 211, 213, 216—219, 221, 222, 226, 229, 237, 424, 427, 430, 444
Ամր, արաբ զորավար (VIII դ.) 556, 557, 592
Ամր, արաբ զորավար (VII դ.) 516—518, 524, 525, 528
Ամր, խալիֆ 529, 533
Անակ Պարթև 107, 108, 112, 127, տես նաև Գրիգոր Լուսավորիչ
Անանիա Շիրակացի 413, 415, 492, 496
Անանիա, Սյունյաց եպիսկոպոս 276, 467
Անանուն Ռավեննացի 399
Անատոլիոս, հռոմեական զորավար 279
Անգովկ, հայ ազնվական Դիոկլետիանոսի բանակում 112, 113
Անգովկ, Սյունյաց նահապետ 167
Աննիբալիանոս, Կոստանդիանոս Մեծի ազգակից 149, 150
Աննինսկի Ա. 97, 99, 103, 104, 108, 118, 124, 215
Անոնիմուս Վալեզիանուս, ժամանագիր 150
Անտիոքոս, բյուզանդական բանակի հրամանատար 475
Անտիոքոս փիլիսոփա 63
Անտոնինոս Կարակալա, կայսր 62—64, 76
Անտոնինոս Պիոս, կայսր 39, 42, 43, 44, 46, 49, 52
Անտոնինոս, Սևերոս կայսեր որդի 61
Անտոնիոս, հռոմեական սպա 170
Անտոնիոս 26, 36
Անքիալոս, Հենիոքների թագավոր 28
Աշխադար, Հայոց թագավոր 23—26, 421
Աշոտ Ա Բագրատունի, Հայոց թագավոր 570, 597, 600—602

Աշոտ Բ Երկաթ Բագրատունի, Հայոց թագավոր 606—608
Աշոտ Գ Ողորմած, Հայոց թագավոր 608, 609
Աշոտ Դ, որդի Գագիկ Ա-ի, 611
Աշոտ Արծրունի (IX դ.) 564, 656, 598
Աշոտ Բագրատունի, որդի Սահակ Բագրատունու 592
Աշոտ Բագրատունի, որդի Վասակ Բագրատունու 597
Աշոտ Բագրատունի (Կույր) 589
Աշոտ Բագրատունի 556
Աշոտ Մսակեր, Հայոց իշխան 561—563, 597, 598
Աշոտ Շապուհյան, սպարապետ 606
Աշոտ Պատրիկ (VII դ.) 586
Աշոտ-Դերենիկ Արծրունի, Վասպուրականի թագավոր 607
Աշուշա, Գուգարքի բդեշխ 367
Ապպիոս Մաքսիմոս, հռոմեական զորավար 33
Ապուսահլ Արծրունի 610, 611
Առավան, հազարապետ 255, 256, 450, 504, 505
Առնակ Ամատունի 573
Ասլան Գ. 54, 55, 62, 93, 97, 99, 103
Ասողիկ 250, 530, 588, 590, 601, 602, 608—610
Ասպակուրաս, Իբերիայի կառավարիչ 188
Աստուրյան Հ 35, 41—43, 54, 92, 105, 134, 243
Ավիդիոս Կասսիոս, հռոմեական զորավար 45, 69
Ավրելիանոս, կայսր 101—105
Ավրելիոս Վիկտոր, մատենագիր 150, 423, 424
Ատա էլ Մոկաննա, պարսիկ աղանդավոր 560
Ատոմ, ամն 347
Ատտիկոս Կոռնելիանոս, Ասորիքի զորավար 44
Ատտիկոս, Կ. Պոլսի պատրիարք 279, 281, 475, 477
Ատրներսեհ Բագրատունի, Վասակ Բագրատունու որդի 597
Ատրորմիզդ, պարսիկ մարզպան 572
Ատրվշնասպ, պարսիկ մարզպան 573
Արգաբուրիոս, բյուզանդական զորավար 287
Արինթեոս, հռոմեական կոմս 207, 209
Արիստակես, Գրիգոր Լուսավորչի որդի 142, 356
Արիստիդես, մատենագիր 474
Արիստոտել 480
Արկադիոս, կայսր 283, 284, 496
Արծրունիներ 159, 160, 596, 603
Արշակ Արշակունի (VI դ.) 482
Արշակ Ա, Հայոց թագավոր 79, 80
Արշակ Բ, Հայոց թագավոր 134, 158, 162—172, 176—193, 195, 196, 198—201, 206, 207, 209, 227, 240, 292, 296, 297, 301, 307, 313, 315, 317, 328, 345, 348, 430
Արշակ Գ, Հայոց թագավոր 236, 240—245, 248, 311, 498, 576
Արշակ Փոքր, Հայոց թագավոր 334
Արշակունիներ հայ 9, 22, 62, 72—76, 79, 97, 103, 116, 119, 125, 144, 169, 173, 174, 187, 197, 200, 202, 204, 230—233, 240, 242, 247, 255, 275, 284—286, 289—291, 312, 323, 326, 328, 329, 331—333, 338, 342, 343, 345, 346, 349, 352, 376, 381—384, 389, 396, 399, 412, 444, 463, 470, 471, 482, 498, 499, 500, 576

Արշակունիներ պարթև 25, 26, 32, 33, 44, 67—70, 73, 74, 79, 93, 94
Արշավիր Կամսարական 413, 414
Արշավիր ամն, պարթև 112, 113
Ասվաղեն, աղվանների թագավոր 274—277, 466—468
Արտաշես Մամիկոնյան 204, 235
Արտաշես Ա, Հայոց թագավոր 16, 312, 412, 413, 415
Արտաշես Բ, Հայոց թագավոր 23
Արտաշես, Արշակունի վերջին թագավոր 274, 275, 284, 289—293, 472, 473
Արտաշեսյաններ 9, 10
Արտաշիր, Սասանյան դինաստիայի հիմնադիր և թագավոր 70—74, 78, 80—82, 85, 86, 89, 90—92, 107, 108, 117, 303, 424
Արտաշիր Բ, սասանյան թագավոր 238, 261, 454, 493, 494, 497, 498
Արտավազդ, Հայոց թագավոր 23, 24, 80
Արտավազդ Ե, Հայոց թագավոր 94, 99, 103, 424
Արտավազդ Մամիկոնյան (IV դ.) 204, 330
Արտավազդ Մամիկոնյան (VII դ.) 541
Արտավազդ Մամիկոնյան, հայ զորավար Բյուզանդիայում (VIII դ.) 593
Արտավազդ Մամիկոնյան, ապստամբության ղեկավար (VIII դ.) 554, 555, 591, 592
Արտավան Դ, պարթևաց թագավոր 67
Արտավան Ե, պարթևաց թագավոր 63—67, 70, 71, 73, 74, 78, 79, 89, 91, 93
Արտավան, Շապուհ Բ-ի հայ զորավար 195—198, 203—205, 208, 209, 217
Արտավան Արշակունի 482, 576
Արրիան, պատմիչ 19, 23, 39, տե՛ս նաև Փլավիոս Արրիանոս
Արրիանոս Փլավիոս, Կապադովկիայի կուսակալ 41, տե՛ս նաև նախորդը
Ափթոնիոս, հռետոր 480
Ափշին, արաբ զորավար (IX դ.) 596
Ափշին, Սաջյան ամիրա 605
Աքեմենյաններ 70, 72, 73

Բաբեկ, ապստամբության ղեկավար 543, 562, 596
Բաբիլաս, Եդեսիայի եպիսկոպոս 259, 267, 452, 459, 460, 488, տե՛ս նաև Ռաբուլաս
Բաբիկ Սյունեցի 573
Բազար, արաբ ոստիկան 551
Բագարատ Փառազյան 534
Բագարատ Բագրատունի, իշխանաց իշխան 563—565, 598, 599
Բագրատ Բագրատունի 149
Բագրատունիներ 312, 333, 334, 558, 560—563, 570, 596—598
Բալլիստա, պրետորիանների պրեֆեկտ 96, 98
Բակուր, Աղձնիքի բդեշխ 151, 153
Բակուր, Հայոց թագավոր 44, 47, 49
Բակուր, Մեդիայի թագավոր 13

Բակուր Բ, պարթևաց թագավոր 24, 25, 27, 28
Բակուր, եղբայր Վաղարշ Ա-ի 15
Բակուր, Վրաց թագավոր 273, 275—277, 465, 467, 468
Բասմաջյան Կ. 510
Բատ Սահառունի 233, 235
Բարդածան Եդեսացի 52, 55, 59, 61, 63, 128, 421
Բարզիմեր, հռոմեական տրիբուն 218, 219
Բարխուդարյան Ս. 315, 318
Բարսեղ Ա, կայսր 569, 601, 602
Բարսեղ Բ, կայսր 609—611
Բարսեղ, Կեսարիայի մետրոպոլիտ 217
Բարսեմիոս, Հադրայի իշխան 56
Բարտոլդ Վ. 542
Բենիամին, ալվան քահանա 274, 276, 466, 467
Բելաձորի, պատմիչ 511, 512, 515, 518—520, 586
Բորյան Բ. 416
Բրյուսով Վ. 74, 75, 406
Բուղա, արաբ ոստիկան 568, 569, 599, 600, 601

Գագիկ, Արծրունյաց տոհմից 306
Գագիկ Արծրունի, Վասպուրականի թագավոր 603, 605—607
Գագիկ Ա Բագրատունի, Հայոց թագավոր 610, 611
Գաթրճյան Հ. 25, 55, 99, 129, 133, 179, 180
Գալերիոս Մաքսիմիանոս, հռոմեական զորավար 109—111, 118, 130, 295, 443
Գալլիենոս, կայսր 98—100
Գալլոս, կայսր 88
Գարագաշյան Ա. 16, 23, 54, 55, 85, 99, 165, 171, 179, 180
Գարեգին Ռշտունի 149
Գելցեր Հ. 134, 283, 352, 569, 601
Գղակ ներքինի 195—198, 203—205, 208, 209, 217, 291, 400
Գյուտերբոկ Կ. 239, 243, 246, 291, 400
Գնել Անձևացի 224, 225
Գնել, Արշակ Բ-ի եղբորորդի 164, 167, 208, 328, 345
Գնթունիներ 126
Գնունիներ 336, 598
Գորդիանոս Գ, կայսր 85—87
Գրատիանոս, կայսր 234
Գրիգոր Լուսավորիչ (քահանայապետ) 127, 128, 130, 131, 137, 142, 215, 311, 337, 338, 352—354, 356, 357
Գրիգոր Մամիկոնյան, Հայոց իշխան (VII դ.) 585
Գրիգոր Մամիկոնյան (VIII դ.) 549, 589
Գրիգորիս Երզնկյանց 314
Գրիգորիս, հայ զորավար Բյուզանդիայում 555
Գրումբատես, խիոնիտների թագավոր 170, 171
Գուտշմիդ 14, 15, 22, 23, 38, 48, 92
Գուրգեն Արծրունի (IX դ.) 610

Գուրգեն, Կյուրիկյան թագավոր 609, 610

Դալմատիոս, Կոստանդիանոս Մեծի եղբայր 149, 150
Դանան, Մաշտոցի աշակերտ 274, 275
Դանիել Ասորի, եպիսկոպոս 258, 261, 262, 451, 453—455, 457, 492, 494, 495
Դանիել, հռոմեական կոմս 218, 219
Դանիել քորեպիսկոպոս 337
Դավիթ Կյուրապաղատ (Տայքում) 609
Դավիթ, Կյուրիկյան թագավոր 610, 611
Դավիթ Հարքացի 262, 454
Դավիթ մեկնիչ 480
Դատ, Հաշտենիքի իշխան 152, 153
Դատաբե Բզնունի 151—153
Դարեհ, աքեմենյան թագավոր 72
Դարիկոլետ 413, 414
Դեկեբալ, դակերի թագավոր 25
Դեկոս, կայսր 88
Դենշապուհ, պարսից զորավար 169, 572, 578
Դիդիոս Յուլիանոս, կայսր 55
Դիոկղետիանոս կայսր 103, 105, 107, 109, 111, 114, 117—119, 130, 131, 149, 162, 295, 424
Դիոնիսիոս, Ալեքսանդրիայի եպիսկոպոս 128
Դիոնիսիոս Թելմահարցի, մատենագիր 518, 521, 522, 526—528, 533, 546, 550
Դիոնիսիոս Թրակացի, քերական 480
Դիոսկորիդ, բժիշկ 405
Դիոման 458, տե՛ս Վռամ Դ Կրման
Դյուլորիե Էդ. 250, 266, 459, 485, 487, 521, 530, 533
Դոմետիանոս կայսր 15, 421
Դրաստամատ, Արշակ Բ-ի ներքինի 191

Եզանդուխտ 386
Եզյանց Կ. 524
Եզիտ, արաբ ոստիկան 551—553
Եզնիկ Կողբացի 240, 449, 474
Եզր, Հայոց կաթողիկոս 514, 518, 521
Եղիաս Մծբինեցի, մատենագիր 520
Եղիշե 108, 291—293, 309, 343, 344, 351, 372, 373, 386, 388, 404, 408, 413, 434, 473, 478, 571, 572
Ենովք, Մաշտոցի աշակերտ 274, 275
Եվագրիոս, մատենագիր 86, 87
Եվնապիոս, մատենագիր 234, 430
Եվսեբիոս Կեսարացի 129, 130, 282, 474
Եվստաթիոս, Սեբաստիայի եպիսկոպոս 164, 165
Եվստաթիոս, Թեսաղոնիկեի մետրոպոլիտ 405
Եվտաղիոս, Բասենի եպիսկոպոս 146
Եվտրոպիոս, մատենագիր 37, 118, 421, 424
Երեմիա, աղվանների եպիսկոպոս 274—276, 466, 467

Երվանդ Սակավակյաց 40

Զաբդաս, Պալմիրայի զորավար 100
Զավեն կաթողիկոս 359
Զարբանալյան Գ. 366
Զարմանդուխտ, Պապ թագավորի կին 235, 236
Զաքարիա, Հայոց կաթողիկոս 600, 604
Զենոբ Գլակ 78, 118
Զենոբիա, Պալմիրայի թագուհի 99—102
Զիկ, պարսից զորավար 197, 199, 201, 205, 296
Զոնարաս, պատմիչ 82, 83, 86, 88, 424
Զոսիմոս, պատմիչ 86, 103, 234, 424, 430
Զրվանդուխտ, Խոսրով Դ-ի կին 241

Էլիոս Սեվերիանոս, Կապադովկիայի կուսակալ 44
Էլիուս Լամպրիդիուս, մատենագիր 421, 423
Էլիուս Սպարտիանուս, մատենագիր 421
Էմին, Հարուն ալ-Ռաշիդի որդի 561
Էմին Մ. 254, 322, 325, 369, 448
Էնսլին 88

Թեմիստիոս, հույն ճարտարապետ և փիլիսոփա 238
Թեմիստիոս, մատենագիր 421, 430
Թեոկրիտես, հռոմեական զորավար 64
Թեոդոս Ա, կայսր 108, 445
Թեոդոս Բ, կայսր 470, 475—477
Թեոդոսիոս Ա, կայսր 283, 284
Թեոդոսիոս Բ, կայսր 279—281, 287, 288
Թեոդոսիոս Մեծ, կայսր 397
Թեոդոսիոս Փոքր, կայսր 272, 283, 492, 496
Թեոդորիխ 569, 601
Թեոդորոս, «Հունաց զորավար» 536—539
Թեոդորոս Մոպսուեստացի, Նեստորիոսի ուսուցիչ 269—271, 461—463, 490—492
Թեոդորոս Ռշտունի, Հայոց իշխան 514, 516, 517, 523, 526, 527, 528, 531, 532, 535—541, 584, 585
Թեոդորոս Վահևունի 513, 538, 539
Թեոն Հռետոր 480
Թեոփան (Թեոփանես), պատմիչ 147, 520, 528, 535
Թեոփանես Միտիլենացի 319
Թեոփիլակտոս, մատենագիր 305, 333
Թովմա Արծրունի 126, 427, 564—568, 599, 600, 603
Թուկիդիդես, հռոմեական զորավար 47
Թումա, բյուզանդական իշխան 537

Իբն-ալ-Աթիր, պատմիչ 511, 512, 516, 520, 586
Իյադ 511
Ինճիճյան Ղ. 143, 325, 340, 342, 344

Իսիդոր Խարաքսացի 69
Իսմայիլ, Թիֆլիսի արաբ ամիրա 595
Իստախրի, արաբ աշխարհագիր 315, 318

Լալայան Ե. 314
Լամպրիդիոս, մատենագիր 84
Լեման-Հաուպտ Կ. 124, 125
Լեո 55, 102, 166, 245, 250, 506
Լետոս, հռոմեական զորավար 57, 58
Լիկինիոս Լիկինիանոս 109, 118, 131
Լինչ Հ. 311
Լոնգդեն 30
Լոռան Ժ (Լորան) 536, 569, 582, 597, 601
Լուկիանոս, մատենագիր 421
Լուկիոս Վերոս, կայսր 45, 46, 49, 50, 52
Լուսիոս Կուիետոս, հռոմեական զորավար 31, 33

Խազմ, արաբ զորավար 593
Խալաթյանց Գ. 43, 52, 54, 55, 61, 68, 87, 99, 102, 106, 140, 254, 367, 405, 406, 449, 511, 516
Խալիդ, արաբ ոստիկան 563
Խաչեան Առավաղյան, հայ նախարար 513
Խլոդվիգ 569
Խոսրով Ա, Հայոց թագավոր 55, 59, 61—65, 79, 80, 81, 89, 90, 92, 103, 421
Խոսրով Բ, Հայոց թագավոր 80, 103—109, 116, 119
Խոսրով Գ Կոտակ, Հայոց թագավոր 104, 110, 141, 142, 144—146, 148, 149, 151, 153—155, 157, 357, 427, 450, 463, 464, 470
Խոսրով Դ, Հայոց թագավոր 240—245, 249, 250, 255, 256, 271, 284, 498, 499, 503—506
Խոսրով Մեծ, Հայոց թագավոր 55, 77, 78, 80, 108, 423, 424
Խոսրով, պարթևաց թագավոր 24—27, 29, 32—34, 39, 44
Խոսրով Անուշիրվան, սասանյան թագավոր 368, 576—578
Խոսրով Բ, սասանյան թագավոր 509, 510, 580
Խոսրովանդուխտ, Տրդատ Գ-ի քույր 138, 139
Խորավարան, սպայապետ 414
Խրիստեննսեն 74, 85, 88, 206, 346, 349, 368, 369, 401, 436
Խութեցի Հովնան 566, 599

Կամսար Կամսարական 94
Կամսարականներ 93, 94, 168
Կասսիոս, հռոմեական զորավար 47
Կասսիոս Դիոն, մատենագիր 15, 18, 19, 26, 29, 35, 40, 41, 45—48, 57, 64, 65, 71, 72, 93, 420, 421
Կավատ, սասանյան թագավոր 316, 510, 543, 574, 575
Կատիլիուս Սևերոս, կոնսուլ 30, 35, 76
Կարակալլա կայսր 63—66
Կարեն, պարսից զորավար 197, 199, 201, 205, 296

Կարլ Մարտել 358
Կարոս կայսր 105, 106
Կարստ 352, 390
Կիպերտ Հ. 300, 301, 310
Կլավդիանոս, բանաստեղծ 239
Կլավդիոս Բ կայսր 100
Կոգյան Ս. 93, 94
Կոմմոդոս կայսր 55
Կյուրոս Մեծ 72
Կոնակ, Մամիկոնյանների նախնի 93
Կոնրադ Կելտես, հումանիստ 396
Կոնրադ Միլլեր 397
Կոստանդիան կայսր, որդի Հերակլ կայսեր 514, 517
Կոստանդիանոս Մեծ, կայսր 31, 106, 131, 133—135, 147, 149, 150, 154, 155, 192, 196, 397, 424
Կոստանդիանոս Բ, Գալլիայի կառավարիչ 150
Կոստանդինա, Կոստանդիանոս Մեծ կայսեր դուստր 150
Կոստանդին V կայսր 591
Կոստանդին VII կայսր 606
Կոստանդիոս կայսր 107, 108, 147, 150, 155, 157, 162, 163, 169, 170
Կոստաս-Կոստանդին կայսր 150, 164, 170, 177, 514, 516—518, 520, 521, 523, 525, 526—535, 537—541, 585
Կոստանյան Կ. 50, 325, 330
Կվետոս կայսր 98
Կորյուն 253—256, 258—261, 265—268, 270—2:3, 265—268, 270—273, 275—280, 282, 359, 431, 434, 447—453, 458—469, 474—476, 486—492, 495, 497—506
Կրասոս 26, 36
Կուլակովսկի Յու. 283
Կուրտիկ Մամիկոնյան 601

Հաբիբ իբն Մասլամա Ֆիհրի 515, 516, 519, 520, 522
Հադրիանոս կայսր 35, 37—39, 42, 43, 396, 421
Հազկերտ Ա, սասանյան թագավոր 251, 265—267, 272, 283—287, 458, 462, 469—472, 486—499, 501, 502
Հազկերտ Բ, սասանյան թագավոր 288, 458, 473—479, 486, 501, 502, 571
Հազկերտ, սասանյան թագավոր (VII դ.) 525
Համազասպ Մամիկոնյան 358
Համբարյան Հ. 519, 521, 522, 525, 529, 531, 538
Համբրիքոս, մեկնիչ 480
Հայր մարդպետ 167, 168, 200, 202, 204, 209
Հաշու քահանա 287
Հակոբյան Հ. 538
Հասան, արաբ ոստիկան 551, 553
Հարնակ 129
Հելիոս-Տիրիդատես 137, տես Տրդատ Գ

Հեշամ, զորավար և խալիֆ 548, 58[illegible], 588
Հերակլ կայսր 509, 512, 514, 516—518, 524, 538, 539
Հերթ, արաբ ոստիկան 548, 588
Հերմես Եռամեծ 480
Հերոդիանոս, մատենագիր 56, 71, 82, 84, 421, 424
Հիպպոլիտոս 485
Հյուբշման Հ. 295, 298, 301, 303, 310, 313, 314, 331, 343, 361
Հոնիգման Է. 176
Հոնորիոս կայսր 283
Հովիանոս կայսր 175, 182, 184, 185, 197, 209, 230, 444
Հովհան Եկեղեցացի, Մաշտոցի աշակերտ 295, 452
Հովհան Եպիսկոպոս (IV դ.) 257
Հովհան Մայրագոմեցի 436
Հովհան Մանդակունի 415, 435, 436
Հովհան Մամիկոնյան 509, 510, 513, 522, 583
Հովհաննես Դրասխանակերտցի, պատմիչ և կաթողիկոս 313, 356, 410, 493, 495, 497, 499, 539, 541, 558, 587, 594, 595, 600, 602, 604, 605
Հովսեփ Պաղնացի, Մաշտոցի աշակերտ 259, 452
Հովհաննես Կուրկուաս, բյուզանդական զորավար 607
Հովհաննես Չմշկիկ, կայսր 609
Հովհաննես-Սմբատ, Հայոց թագավոր 611
Հովսեպոս Փլավիոս, պատմիչ 13, 122, 420
Հատիմ, արաբ ոստիկան 595
Հարությունյան Ս. 496
Հարուն ալ-Ռաշիդ 561, 594, 595, 598
Հորմիզդ Ա, սասանյան թագավոր 103, 104, 110
Հոֆման Գ. 300, 305, 308
Հռոփանոս, գեղագիր 259, 452, 462, 500, տես Ռուփինոս
Հրահատ Կամսարական 366, 414
Հուլիանոս կայսր 176, 178—183, 187, 427, 428, 444
Հուլիանոս, Կոստանդիանոս Մեծի եղբորորդի 155, 157
Հուսիկ, Հայոց կաթողիկոս 157, 163, 217
Հուստինոս կայսր 482, 483

Ղազար Փարպեցի, պատմիչ 239, 240, 242, 246, 250, 251, 253—256, 260, 261, 267, 270—272, 285, 289, 291, 325, 328—330, 343, 344, 351, 358, 366, 367, 373, 379, 386, 406, 407, 430, 431, 434, 447, 448—450, 452, 453, 459, 462—464, 470, 478, 479, 488, 491, 492, 497—500, 503—507, 571—574
Ղազարյան Մ. 511, 519, 520, 525, 538
Ղևոնդ 306, 318, 517, 518, 520, 521, 523, 524, 526—528, 530, 533, 534, 539—541, 548, 550—557, 559, 572, 585—594
Ղևոնդիոս, Կեսարիայի մետրոպոլիտ 131

Մագնենտիոս, հռոմեական զորավար 157, 162, 163
Մազդակ, աղանդավոր 543

Մալխասյան Ս. 129, 272, 499
Մակրինոս կայսր 65, 66, 77, 89
Մահադի (Մահդի), խալիֆ 593
Մահմեդ իբն Սադ 515, 587
Մամիկ, Մամիկոնյանների նախնի 93
Մամիկոնյաններ 93, 94, 151, 158, 254, 292, 336, 367, 449, 554, 557, 558
Մամուն, խալիֆ 561, 562, 598
Մանակ, Բասենի իշխան 152, 153
Մանաճիհր Ռշտունի 324
Մանավազյան տոհմ 145—147, 324, 331, 357
Մանիխար, Կորդուքի իշխան 31
Մանուել Մամիկոնյան, սպարապետ 204, 235—238, 240, 241, 243, 357, 498
Մառ Ն. 262, 322, 328, 371, 407, 408, 455, 481
Մասլամա, արաբ զորավար 546, 584
Մասուդի, արաբ աշխարհագիր 73
Մավրիա, զորավար 515, 519
Մավրիկոս, կայսր 579, 580
Մար, Ծոփքի իշխան 152, 153
Մարկոս Ավրելիոս կայսր 45, 46, 48, 49, 50
Մարկիանոս, հռոմեական զորավար 96, 98
Մարկվարտ Հ. 21, 23, 35, 43, 47, 53, 61, 87, 125, 126, 147, 148—150, 153, 160, 164—167, 171, 172, 175, 179, 203—205, 207, 217, 220, 230, 239, 252, 256, 259, 277, 295, 298, 301, 303—307, 313—315, 397, 399, 447, 450, 464, 468, 507, 525
Մարտիոս Վերոս, հռոմեական զորավար 41, 45, 47, 48
Մաքսիմինոս Դայա, կայսր 129, 131, 134
Մաքսիմինոս Թրակացի կայսր 84, 85
Մերարսապես, Ադիաբենի թագավոր 32
Մելիք-Օհանջանյան Կ. 136
Մեհունդակ Ռշտունի 149
Մեյե 322
Մենանդր 400
Մեսրոպ Մաշտոց 252—263, 265, 266, 268—270, 272—283, 288, 359, 443, 446—455, 458—467, 469, 470, 474—477, 479, 481, 483, 486—497, 500—506
Մերիբանես (Միրիան), Իբերիայի թագավոր 178
Մերուժան Արծրունի 21, 172, 175, 187, 195, 237, 445
Մէրուժան (Մեհրուժան) Արծրունի (VIII դ.) 559, 593
Միհր-Ներսեհ, պարսից զորավար 287, 288
Միհրդատ, Իբերիայի թագավոր 15, 18
Միհրդատ, Հայոց Բակուր թագավորի եղբայր 49
Միհրդատ Զ, պարթևաց թագավոր 33
Մինորսկի Վ. 303, 314
Միքայել Ասորի 512, 516, 518, 520, 552, 578, 590
Մխիթար Գոշ 387, 389

Մխիթար Այրիվանեցի 590
Մոմզեն Թ. 11, 14, 40, 41, 67, 68, 73, 88, 99, 102, 105, 106, 542
Մովսես Խորենացի 9, 16, 18, 20, 22, 23, 39, 50, 53, 55, 58, 60—63, 80, 93, 94, 97, 103, 104, 109, 117—119, 122, 128, 129, 135—139, 156, 165, 166, 207, 211, 227, 272, 249, 250, 253, 254, 260, 261, 271, 272, 275, 276, 279, 280, 283, 288, 300, 304, 310—319, 322, 335, 342, 344, 345, 362, 369, 370, 381—385, 402, 410, 412, 415, 421, 424, 426, 431, 433, 445, 447, 449, 450, 452, 453, 463, 467, 475, 476, 495—499, 501, 503
Մովսես Կաղանկատվացի 363, 407, 517, 518, 520, 548, 588, 594
Մովսես, Վրաստանի եպիսկոպոս 273, 275, 276, 465, 467
Մորգան 102
Մորիկ կայսր 579, տես նաև Մավրիկիոս կայսր
Մրջունիկ քահանա 179
Մրվան, խալիֆ 549, 550
Մուավիա (Մոավիա), խալիֆ 539, 545, 585
Մութավաքիլ, խալիֆ 564, 565, 568, 598—600
Մուհամեդ 509
Մուղեյրա իբն Շոբա, արաբ զորավար 525
Մուշե Տարոնացի, Մաշտոցի աշակերտ 275, 276, 467
Մուշեղ Բագրատունի, Կարսի թագավոր 608
Մուշեղ Մամիկոնյան, սպարապետ 200, 201, 204, 209, 210, 213, 220, 226—228, 230—233, 235, 296, 297, 316, 317, 364, 404
Մուշեղ Մամիկոնյան (VII դ.) 541
Մուշեղ Մամիկոնյան (VIII դ.) 555, 557, 592
Մուշկան Նյուսալավուրտ, պարսից զորավար 413
Մուսե ամիրա, արաբ հարկահան 564
Մուսե, Արզնի ամիրա 598
Մուսե, խալիֆ 593, 594
Մուսոնիանոս, պրետորիանների պրեֆեկտ 168
Մուտամիդ, խալիֆ 569
Մուտասիմ, խալիֆ 563, 598

Յակուբի, պատմիչ 516, 520, 525, 544, 560, 565, 566, 586, 599
Յակուբովսկի 542
Յամբլիքոս 42, 43
Յուլիուս Կապիտոլինոս, ժամանագիր 44—46, 85, 421
Յուստինիանոս կայսր (VI դ.) 575, 577, 578
Յուստինիանոս կայսր (VII դ.) 585, 586
Յուստինոս կայսր 578
Յունիոս Պալմատուս, հռոմեական զորավար 81
Յուսուֆ, Սաջյան ամիրա 605—607
Յուսուֆ, արաբ ոստիկան 565, 566, 599

Նապոլեոն Ա. 569, 601
Նասր, Եգեսիայի ամիրա 595
Նեստոր, Նեստորիոս 269, 461, 490

Ներշապուհ, Մամիկոնյան եպիսկոպոս 435
Ներոն կայսր 10, 12, 26, 39, 395
Ներսեհ, սասանյան թագավոր 110—112, 114, 118, 124, 147, 156, 196, 295
Ներսեհ Կամսարական 413, 414
Ներսեհ, Շահունյաց Ծոփքի իշխան 152, 153
Ներսես Ա, Հայոց կաթողիկոս 163—166, 168, 209, 214, 216, 217, 250, 254, 338, 356, 359, 364, 411, 449
Ներսես Բ, Հայոց կաթողիկոս 435
Ներսես Գ, Հայոց կաթողիկոս 410, 514, 522, 537, 540, 588
Ներվա 427
Նըսր, արաբ վերակացու 608
Նիգեր, Ասորիքի կառավարիչ 56
Նիկեփոռ կայսր 608
Նյոլդեկե 70, 87, 195, 239, 287
Նոննա, մեկնիչ 430
Նումերիանոս կայսր 105, 421

Շահխաթունյանց Հ. 329
Շապուհ, Հայոց թագավոր, որդի Հազկերտ Ա-ի 284—286, 288, 470—472
Շապուհ Ամատունի 513, 559
Շապուհ, Պարսքի թագավոր 70
Շապուհ, Արտաշիր Ա-ի որդի 73
Շապուհ Ա, սասանյան թագավոր 85—89, 92—94, 96—98, 100—103, 104, 108, 110, 424
Շապուհ Բ, սասանյան թագավոր 150, 151, 154, 156, 157, 162, 168—172, 175—178, 181—185, 187—193, 195, 197—199, 201, 203, 205, 206, 208, 210, 211, 229, 233—235, 238, 243, 296, 301, 402, 444, 445
Շապուհ Գ, սասանյան թագավոր 238—240, 242, 243, 250, 251, 261, 270, 285, 286, 445 491, 494, 497—499
Շապուհ, Արտաշիրի հայր 454, 462—464, 479
Շապուհ Բագրատունի, Աշոտ Մսակերի եղբայր 561
Շապուհ Բագրատունի, պատմիչ 558, 559
Շիգար, Արտավազդ թագավորի որդի 24
Շտրեկ Մ. 302
Շուր Վ. 11

Ոգոմա, արաբ զորավար 529
Ոլիմպիա, Արշակ Բ-ի կին 164, 170, 177, 179, 207
Ովբեդլա, Ատրպատականի և Անդրկովկասի արաբ կառավարիչ 594
Որդունի տոհմ 145—147

Չամչյան Մ. 50, 125, 265, 457, 485, 500, 503, 510, 518, 531, 532, 540, 605
Չունակ կաթողիկոս 412

Պապ, Հայոց թագավոր 125, 195—197, 200—202, 207—209, 212, 214—223, 225, 226, 228, 229, 231—233, 235, 236, 240, 315, 353, 354, 358, 364, 401, 430

Պապ, Ներսես Ա կաթողիկոսի հորեղբայր 359
Պակոր, Պարսքի թագավոր 70
Պարթամասիր, Հայոց թագավոր 24—31, 421
Պարթամասպատ, պարթևաց, Օսրոյեն-Եդեսիայի, ապա Հայոց թագավոր 33, 34, 38, 39
Պետրոս Իբեր 277, 468
Պետրոս Պատրիկիոս, մատենագիր 115, 424
Պերոզ, սասանյան թագավոր 50—52, 364, 389, 480, 573
Պերտինաքս կայսր 55
Պիպին, գերմաններեն այբուբենի ստեղծող 252, 447
Պլինիոս 68, 305, 306, 394, 404, 434
Պողեմիոս Սիլվիոս 121
Պողեմոն Բ, Պոնտոսի թագավոր 10
Պոմպեոս 312, 319
Պորփյուր 480
Պտղեմեոս 305, 434
Պրիսկոս, Փոքր Հայքի կառավարիչ 88
Պրոբոս կայսր 104, 105, 118
Պրոկոպ, բյուզանդական զորավար 523, 526—528, 535, 540
Պրոկոպիոս, մատենագիր 78—80, 176, 246, 482, 576
Պրոկոպիոս, հռոմեական զորավար 180, 181, 183, 196, 288
Պետինգեր 396

Ջահապ, կայսիկ ամիրա 595, 601
Ջաղա, թարգման 273, 275, 276, 465, 467
Ջավախիշվիլի Ի. 325, 327—329, 365, 384
Ջաֆր, արաբ ոստիկան 552
Ջաֆր, խալիֆ 598, 599, տես Մութավաքիլ խալիֆ
Ջոն, Կորդուքի իշխան 152, 153

Ռաբուլաս եպիսկոպոս 267—269, 460—462, 488—490, տես նաև Բաբիլաս եպիսկոպոս
Ռոուլինսոն Գ. 30, 305
Ռոստովցև Մ. 13, 53, 126
Ռշտունիներ 159, 160
Ռոփի, Սոհեմոս-Տիգրանի կին 51, 52
Ռուփինոս քահանա 270, 462, 491
Ռուփոս Ֆեստոս, մատենագիր 421, 424

Սաթենիկ, Արտաշես Ա-ի կին 17
Սալման, արաբ զորավար 515, 516
Սահակ Բագրատունի (V դ.) 573
Սահակ Բագրատունի (VIII դ.) 557, 591, 592
Սահակ Կամսարական 414
Սահակ Մամիկոնյան 579
Սահակ Պարթև, Հայոց կաթողիկոս 250—252, 258—261, 266, 274, 275, 278, 279,

280, 282, 289—291, 293, 358, 377, 435, 451—453, 458, 459, 470—473, 479, 481, 487, 492—496
Սահլ, Աղվանքի և Շաքիի իշխան 562
Սաղամոտ, Անձիտի իշխան 192, 193
Սամվել Անեցի 272, 494, 497, 499, 500, 546, 588, 589
Սամվելյան Խ. 165
Սամուել Մամիկոնյան 557
Սանատրուկ, Հայոց թագավոր 18—22, 39, 54, 55, 61, 421
Սանատրուկ, պարթևաց թագավոր 33—35
Սանդուխտ, Սանատրուկ թագավորի դուստր 22, 23
Սանեսան, մազքութների թագավոր 148, 149
Սանտալճյան Հ 54, 55, 85, 99, 102
Սասան, Սասանյան դինաստիայի հիմնադիր 70, 108
Սասանյաններ 66, 70, 72, 74, 272, 420, 472, 473, 499
Սավրոմակես, Իբերիայի կառավարիչ 188
Սաֆֆան Մուաթալ Սուլամի, արաբ զորավար 511
Սեբաստիանոս, հռոմեական զորավար 181
Սեբեոս 20, 21, 80, 93, 103, 106—108, 117, 137, 139, 250, 300, 334, 421, 424, 433, 483, 484, 497, 499, 513, 518—528, 530—541, 545, 579, 582—585
Սելևկյաններ 69, 308
Սեն-Մարտեն 129, 175, 180, 239, 540
Սենեքերիմ, Վասպուրականի թագավոր 610
Սեպտիմիոս Ոդենատոս, Պալմիրայի իշխան 98—100, 102
Սեպտիմիոս Սևերոս, կայսր 19, 53, 56—58, 61—63, 65, 69
Սեադա, Մանազկերտի ամիրա 595
Սևերիանոս, զորավար 46
Սերգեևիչ Վ. 378
Սիկորիոս Պռոբոս, հռոմեական պաշտոնյա 114, 118
Սիմոկատես, մատենագիր 304
Սմբատ Աբլաբաս, Հայոց սպարապետ 563, 598, 600
Սմբատ, Արտաշես Ա-ի ժամանակ 17, 413, 415
Սմբատ Խոսրով Շում 537, 539—541, 579, 580
Սմբատ Բագրատունի 585—587
Սմբատ Բագրատունի, Հայոց սպարապետ (VIII դ.) 557, 561, 597
Սմբատ Ա Բագրատունի, Հայոց թագավոր 602, 604—606
Սմբատ Բ Բագրատունի, Հայոց թագավոր 609, 610
Սոկրատ, մատենագիր 288, 472
Սոհեմոս, Հայոց թագավոր 42—44, 47, 48, 50, 52, 53, 55, 59, 60, 421
Սոզոմենոս, մատենագիր 130, 164, 180
Սպարտիանոս, մատենագիր 38
Սվետոնիուս, մատենագիր 15, 421
Ստատիոս Պրիսկոս, հռոմեական զորավար 40, 41, 45—48
Ստեփանե 369
Ստեփանոս Տարոնեցի Ասողիկ 272, 493, 497—500, 517, 520, 521, 524, տե՛ս նաև Ասողիկ

Ստեփանոս Օրբելյան 126, 346, 427
Ստիլիկոն, Թեոդոսիոս կայսեր դեսպան 239
Ստրաբոն, աշխարհագիր 305, 309, 312, 319, 384, 395, 396, 433, 434
Սուիդաս, պատմագիր 19, 40, 420, 421
Սուլլա 569, 601
Սուրեն, պարսիկ մարզպան 230, 234, 237, 578
Սուրմակ, Իբերիայի թագավոր 206, 210, 229
Սուքրյան Ա. 433

Վաբալլաթ, Պալմիրայի թագավոր 99, 100
Վաղամար, ալամանների իշխան 210, 211
Վալենտինոս կայսր 184, 196
Վալերիանոս կայսր 96—98, 108, 424
Վախտանգ Գորգասալ, Վրաց թագավոր 573
Վահան Ամատունի 149, 151—154, 292
Վահան Գնունի 557
Վահան Խորխոռունի 537
Վահան Մամիկոնյան (V դ.) 366, 367, 379, 479, 480, 573
Վահան Մամիկոնյան (IV դ.) 187, 195, 204, 445
Վահրամ Ա, սասանյան թագավոր 103
Վահրամ Բ, սասանյան թագավոր 105, 106, 109
Վահրիճ, Վռամշապուհ թագավորի պատվիրակ 258, 261, 453
Վաղարշ Ա, Հայոց թագավոր 19, 34, 35, 38—43, 61, 421
Վաղարշ Ա, պարթևաց թագավոր 12, 15, 62, 68
Վաղարշ Բ, Հայոց թագավոր 54, 56, 58—60, 61—63, 421
Վաղարշ Բ, պարթևաց թագավոր 44, 52
Վաղարշ Գ, պարթևաց թագավոր 44—47, 50, 52, 68
Վաղարշ Դ, պարթևաց թագավոր 55—57, 61, 63, 79
Վաղարշ Ե, պարթև թագավոր 63
Վաղարշ, սասանյան թագավոր 480, 573, 574
Վաղարշակ, Հայոց թագավոր (իմա՝ Տրդատ Ա) 18, 410
Վաղարշակ, Հայոց թագավոր, Արշակ Գ-ի իշխանակից 236
Վաղենտին, բյուզանդական զորավար 526—528, 531, 536, 537, 538
Վաղես կայսր 184, 196, 204, 207, 208, 210, 217, 221, 222, 228—230, 233, 234, 243, 427
Վաղինակ, Սյունիքի իշխան 152, 153
Վաչե Մամիկոնյան 143, 144, 146, 149, 151—154, 204, 235
Վաչե, Աղվանից թագավոր 363, 435
Վասակ Բագրատունի 563, 597
Վասակ, Սյունիքի տեր 276, 292, 467, 572
Վասակ Մամիկոնյան, սպարապետ 163, 174, 175, 185—187, 189—191, 195, 200, 201, 204, 209, 330, 413
Վասիլ կայսր 610, տե՛ս նաև Բարսեղ Բ կայսր
Վարազ Կամինական 149
Վարազ-Բակուր, Վրաց թագավոր 206, 210, 229
Վարազդատ, Հայոց թագավոր 228, 231—233, 235, 240, 243, 430

Վարազներսեհ սեպուհ (V դ.) 330
Վարազշապուհ, Սյունիքի իշխան 124
Վարազտիրոց կյուրապաղատ (VII դ.) 531, 532, 537, 538—541
Վարազտիրոց, հայ զորավար Բյուզանդիայում (VIII դ.) 555, 593
Վարդ, Նիկեփոր կայսեր եղբորորդի 608
Վարդան, պատմագիր 261, 272, 454, 494, 498, 499, 595, 597, 598, 600
Վարդան, Մեսրոպ Մաշտոցի հայր 254, 448
Վարդան Մամիկոնյան (V դ.) 325, 479
Վարդան Մամիկոնյան (VI դ.) 578
Վարդգես 40
Վարդիկ Մոկացի 514
Վելիսար 577
Վեհմիհրշապուհ, մարզպան 293
Վեսպասիանոս կայսր 10, 12, 15
Վիկտոր, հռոմեական զորավար 229, 234
Վինֆրիդ, գերմաներեն այբուբենի ստեղծող 252, 447
Վլիթ խալիֆ 587
Վնասեպ Սուրհապ, հյուսիսականների թագավոր 59, 60
Վռամ Դ Կրման, սասանյան թագավոր 238, 251, 265, 266, 270, 272, 283, 285, 286, 457, 462, 469, 470, 486, 491, 493, 497, 498, 501, 502
Վռամ Ե Գոռ, սասանյան թագավոր 287—291, 293, 472, 473, 477, 486, 487, 502
Վռամշապուհ, Հայոց թագավոր 249—252, 256, 258—261, 267, 268, 270—272, 283, 284, 289, 451, 452, 454, 460—464, 472, 488—503, 505—507
Վրթանես եպիսկոպոսապետ 142, 144, 145, 146, 149, 151, 157
Վրվեն Խոռխոռունի 292
Վուլկատիուս Գալլիկանուս, պատմիչ 421

Տաբարի 303, 369, 389, 511, 512, 516, 518, 520, 525
Տակիտոս, պատմիչ 12, 139, 427
Տաճատ Անձևացի 555
Տանսար 368, 373
Տաշյան Հ. 54, 92, 106, 134
Տերինտիոս, հռոմեական զորավար 196, 210, 217, 218, 221—226
Տեր-Խորձենացի, Մաշտոցի աշակերտ 275, 276, 467
Տեր-Մկրտչյան Գ. 267—269, 283, 369, 370, 459—461, 488—490, 494
Տեր-Մովսեսյան Մ. 263, 456
Տիգրան Բ Մեծ, Հայոց թագավոր 9, 303, 312, 319, 324, 342, 401, 402
Տիգրան Միջին 40
Տիգրան Վերջին 50, 51, 53, տես Սոհեմոս
Տիգրանուհի, քույր Տիգրան թագավորի 342
Տիմեսիթեոս, պրետորյանների պրեֆեկտ 86
Տիտոս կայսր 84, 85
Տիտոս Բ, կայսր (=Անտոնիոս Օգոստոս) 50
Տիտոս, Վեսպասիանոս կայսեր կառավարչակից 15
Տիրան, Հայոց թագավոր 111, 155—162, 167, 292, 330, 381
Տիրիթ, Արշակ Բ-ի եղբորորդի 154, 167

Տրայանոս կայսր 19, 24—27, 29—38, 43, 69
Տրայանոս, հռոմեական կոմս 210, 211
Տրայանոս, հռոմեական զորավար 221, 222, 226
Տրդատ Ա, Հայոց թագավոր 10, 12—18, 23, 24, 29, 62, 94, 122, 135, 137, 394, 420, 421, 426
Տրդատ Բ, Հայոց թագավոր 65, 66, 77, 80, 81, 88, 89, 92—94, 97, 112, 424, 426
Տրդատ Գ Մեծ, Հայոց թագավոր 80, 94, 103, 104, 106—110, 116—131, 133—141, 156, 170, 214, 215, 306, 353, 354, 356, 401, 423, 424, 426, 427, 499
Տրդատ, Հայոց կաթողիկոս 591
Տրդատ, հայ նախարար 48
Տրդատ Արշակունի, ոմն պարթև (III դ.) 63
Տրեբելլիոս Պոլլիոն, ժամանագիր 84, 97, 100, 421, 424
Տրունյաց տոհմ 556
Տուրներիդ 102, 128, 129, 171, 245, 538, 540

Ցիտտա 577

Ուխտանես 117, 118, 424
Ունայր, Աղվանքի թագավոր 170
Ուրբիկուս, Միջագետքի դուքս 229, 234

Փայլուն, Գանձակի ամիրա 610
Փառանձեմ, Հայոց թագուհի 167, 179, 195—197, 199—205, 207—209, 216
Փառեն Աշտիշատեցի, Հայոց կաթողիկոս 157, 357
Փավստոս Բյուզանդ 19—21, 111, 112, 114, 133, 136, 141, 142, 145—149, 151, 153—158, 160, 163, 165—172, 174, 182, 185, 187—189, 191, 192, 197, 202—207, 209, 211, 213—217, 220—223, 226—228, 230—232, 235—238, 240, 241, 243—245, 254, 257, 264, 295—298, 300—304, 309, 310, 312, 313, 315—317, 323, 324, 328—331, 335, 336, 337—339, 345, 347—349, 352—358, 362, 364, 370, 382, 401, 402, 404, 412, 421, 424, 427, 430, 433, 434, 444, 445, 451, 456, 474, 498
Փարսման Ա, Իբերիայի թագավոր 18
Փարսման Բ, Իբերիայի թագավոր 41, 42
Փիլիպպոս Արաբացի, կայսր 86—88
Փիլոն Աղեքսանդրացի 480
Փիրմիլիանոս, ժամանագիր 55, 59, 60, 63
Փլավիաններ 12, 395
Փլավիոս Արրիանոս, պատմիչ 420, 421, տե՛ս նաև Արրիան
Փլավիոս Հովսեպոս, պատմիչ 14, 18
Փլավիոս Վոպիսկոս, պատմիչ 101, 102, 104, 421
Փոկաս կայսր 580
Փոտիոս, ժամանագիր և պատրիարք 42, 421, 490
Փրոնտո, ժամանագիր 47

Օդրա, արաբ զորավար 530
Օգոստոս կայսր 394

Օթման, խալիֆ 515—518, 524, 528—530, 533
Օլիմպիադորոս, մեկնիչ 480
Օլիմպիան, առակագիր 480
Օմայյաններ 544—549, 553, 531, 583
Օմար խալիֆ 511, 512, 522, 544, 587, 588
Օսման, արաբ զորավար 511, 516
Օրմանյան Մ. 207, 251, 506, 507

Ֆեստոս Ռուփոս, մատենագիր 37
Ֆրոնտոն, մատենագիր 421

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Աբաստուման 11, 398
Աբարնե 310
Աբուլ 398
Ագարանա բերդ 188, 191
Ագամակերտ 565
Ադիաբեն 23, 32, 33, 69, 80, 92, 160, 181, 303, 304, 307, 309
Ադրբեջան 605
Ադրիանուպոլիս 231
Աթենք 26, 51, 52
Աթշիբագավան գավառ 318
Ալանաց դուռ 89, 91, 604
Ալբանիա 39
Ալբիստան 126
Ալտան, վայր 318
Ալ-Քիրմիզ 515, տե՛ս Արտաշատ
Ախալցխա 11, 313, 398
Ախալքալաք 11, 312
Ախթամար 603
Ախուրյան գետ 561, 609
Ակն քաղաք 309, 311
Ակրա, վայր 300
Ակրատ գետ 515
Աղբակ գավառ 247, 564
Աղեքսանդրիա քաղաք 128, 394
Աղթամար 517
Աղիովիտ 342, 381, 383, 513, 522, 583, 598
Աղձնիք 114, 115, 151, 152, 173, 174, 182, 185, 192, 213, 247, 287, 295, 310, 564, 579
Աղձք գյուղ 174, 175
Աղստև գետ 313, 314, 399, 606
Աղվանից թագավորություն 607
Աղվանք 41, 122, 170, 210, 247, 273—277, 315—317, 407, 435, 465—479, 517, 519, 520, 522, 529, 534, 562, 571, 580, 585, 586, 594, 596, 598—600, 606

Աղրի-դաղ 398
«Աղուէ» գավառ 317
Ամադիա, վայր 308
Ամիդ քաղաք 28, 147, 171, 172, 176, 259, 267, 269, 452, 459, 461, 488, 495, 500, 511, 609
Ամմանե ամրոց 172
Ամոք գյուղ 356, 357
Այրարատ, գավառ, նահանգ 59, 60, 90, 92, 148, 174, 175, 241, 242, 246, 258, 331, 338, 343, 406, 408, 450, 451, 495, 496, 513, 517, 534, 579, 583
Այրարատյան դաշտ 406
Անաթոլիկոն թեմ 555
Անգեղ բերդ 172
Անգեղտուն 114, 173, 174, 175, 185, 213, 230, 243, 295
Անգլիա 147, 321, 350, 378
Անդրկովկաս 14, 15, 277, 278, 469, 478, 543, 562
Անի ամրոց (Դարանաղամ) 21, 155, 173, 174, 311
Անի (Շիրակում) 603, 608—611
Անիի թագավորություն 609
Անհուշ բերդ (Անդմըշն) 190, 191
Անձիտ 172, 175, 185, 192, 193, 213, 481
Անձևացիք. Անձևացյաց գավառ 224, 247
Անձևացյաց թագավորություն 607
Անտառ 398
Անտիոք քաղաք 32, 45, 46, 63, 81, 85, 86, 96, 98, 100, 109, 177, 179, 184, 196, 210, 234, 397, 463, 608
Աշոցք գավառ 561, 597, 601
Աշտարակ 398
Աշտիշատ 20, 164, 168, 356, 357
Ապահունիք գավառ 608
Ապարան (Աբարան) 126, 136, 427
Աջի-չայ 300, 301, 318, 399
Առան 316
Առաջավոր Ասիա 26, 64, 75, 81, 96
Առաջին Հայք 121
Առբերան գավառ 342, 381, 383
Առեստ ավան 151, 152
Ասուճ 592
Ասիա 397
Ասորեստան 34, 37, 90—92, 122, 181, 206, 306—309, 323, 513, 514, 517, 583
Ասորիք 26, 27, 32, 34, 44—47, 51, 56, 57, 65, 71, 81, 96, 98, 99, 104, 170, 258, 260, 268—270, 278, 307, 394, 396, 452, 459—461, 474, 489, 491—493, 500, 544, 545, 561, 565, 584, 607, 608
Ասսիրիա, հռոմեական նահանգ 32
Ավարայր 479, 572
Ատրպատական 13, 41, 48, 49, 71, 97, 115, 148, 160, 172, 185, 186, 192, 193, 212, 213, 295, 298, 300, 301, 306, 308, 309, 319, 515, 525, 526, 528, 529, 531, 535, 536, 543, 583, 584, 594, 596, 607, 610

Արաբական խալիֆայություն 483
Արաբիա 99, 394, 517
Արագած լեռ 174, 175
Արագածոտն գավառ 601
Արախոսիա (երկիր) 69
Արածանի գետ 20, 21, 234, 246, 311, 398, 546, 557, 592
Արամանա 398
Արամոնք գյուղ 356, 357
Արանոստ գավառ 317
Արաբիա, վայր 398
Արաքս գետ 143, 318, 561, 599
Արգն քաղաք 511, 564, 598
Արգնի ամիրայություն 558
Արձնի գյուղ 557, 561
Արծափ բերդ 528—536
Արծրունյաց թագավորություն 607
Արզանա-սու 172
Արճեշ քաղաք 515, 555—558, 592, 602
Արմաստիկա (Արմոզիկե) քաղաք 397, 399
Արմենիա 309
«Արմենիա» նահանգ 35
Արշակավան քաղաք 165—167
Արշակունիների թագավորություն (Պարթև) 10
Արշակունյաց, Արշակունիների թագավորություն (Հայ) 9, 10, 180, 182, 184, 186, 191, 192, 196, 208, 209, 213, 226, 227, 230, 232, 233, 242, 247, 248, 251, 293, 295, 298, 308—320, 324, 326, 333, 340, 343, 348, 381, 382, 385, 390, 393, 395, 400, 401, 403, 411, 433, 434, 436, 443, 445, 571
Արշամաշատ քաղաք 28
Արշարունիք 168, 195, 199, 201, 561, 597, 601, 606
Արսեաց փոր գավառ 312
Արվաստան 171, 184, 303, 306—308, 323
Արտագերք բերդ 195, 197—199, 201—205, 208, 209
Արտազ գավառ 399, 523
Արտահան (Արդահան) 313, 563, 597
Արտանուջ 562, 597
Արտանուջի իշխանություն 563
Արտաշատ 21, 40, 45—47, 85, 86, 127, 143, 165, 183, 205, 331, 356, 394, 396—400, 409, 515
Արտիմեդ քաղաք 40, 61
Արցախ 192, 193, 213, 247, 316, 317, 579
Արուճ 398
Արևելյան Հռոմեական կայսրություն 443—445
Աուգսբուրգ քաղաք 396
Ափխազիա 606
Աֆրիկա (Ափրիկա) 97, 397, 537
Բաբելոն քաղաք 57, 58

Բաբելոնիա 32, 33, 45, 57, 69, 70, 86, 309, 395
Բագառիճ ավան 311, 356
Բագավան ավան 21, 210—213, 398, 592
Բագարան ավան 415, 561, 601
Բագրատունյաց թագավորություն 544, 560, 596, 606
Բագրևանդ գավառ 211, 223, 224, 555—558, 589, 592, 601, 606
Բաղաբերդ բերդավան 517
Բաղուձոր 523
Բալահովիտ 234, 243, 246, 48[illegible]
Բալթյան ծով 393
Բալու 21, 27
Բալու լեռ 494, 495
Բախիշ, վայր 212
Բակտրիա 11
Բաղդադ 544, 551, 562, 564
Բայլաքան 595
Բաջունայիս 515
Բասեն 56, 66, 112, 114, 146, 147, 152, 153, 357, 509, 522, 556, 557, 585
Բաստավան 398
Բատման-սու 21, 176
Բասրա-Վասող, քաղաք 526—528
Բարձր Հայք 27, 31, 312
Բեգարգե ամրոց 175—178, 309
Բեթ-Նուհադրե, վայր 304
Բեհիստան 302
Բերկրի 513, 517, 522, 555, 583, 602
Բզնունիք 338, 513, 517, 522, 583
Բզնունյաց ծով 151, 152
Բիթանիա 184, 196
Բիթլիս 511
Բիրթոն բերդ 176
Բյուզանդական կայսրություն, Բյուզանդիա 10, 107, 108, 247, 252, 284, 287, 288, 366, 374, 379, 400, 445, 469, 472, 474, 476, 480, 481, 483, 508, 545, 546, 549, 554—556, 558, 560, 561, 569, 574, 577—582, 585, 591, 593, 596, 597, 601, 602, 606—611
Բյուզանդիոն քաղաք 284, տե՛ս նաև Կոստանդնուպոլիս
Բնաբեղ (Բինեբիլ) գյուղ, բերդ 157, 310
Բոհտան-սու 309
Բոսֆոր 580
Բրիտանիա 48, 56, 397
Բուլաղդաղ, վայր 398
Գալատիա 30
Գալլիա 97, 150, 176
Գանյիճա (Ղանյիճա) 398
Գաղտառիճ 311, 398, տե՛ս նաև Խաղտոյառիճ
Գանձակ 148, 231, 232, 295, 299, 301, 316, 610

Գանձակ Ատրպատականի 212, 213, 231, 232, 296—299
Գառնի 136—139, 143, 427
Գառնի գավառ 523, 527
Գարա լեռներ 308
Գարդման բերդ և ավան 315, 316
Գարդման գավառ 315
Գարդմանաձոր 192, 193, 213, 315, 316
Գետաբեկ 316
Գերմանիա 84, 321, 375
Գերմանիկե քաղաք 555, 593
Գոգովիտ 513, 514, 583, տե՛ս Կոգովիտ
Գոհանամ լեռ 311
Գողթն գավառ 16, 257, 258, 450, 523
Գուրեք գավառ 311
Գրիմանիք ավան 316, տես Գարդման
Գուգարք 192, 193, 213, 247, 308, 313, 367, 579, 604, 606
Դաղաստանիա քաղաք 184
Դամասկոս 98, 534, 535, 544
Դանուբ գետ 26
Դասնորե 192, 309, տես նաև Դասն գավառ
Դասն գավառ 247, 303, 308, 309
Դաստեյրա (Դոստալ) 310, 311
Դարա քաղաք 511, 515, 578, 579
Դարաբկերտ քաղաք 70
Դարանաղ գավառ 21, 155, 172—174, 246, 311, 312, 338
Դարյալի կիրճ 11
Դարոյնք բերդ 149, 331, 539, 540
Դափնե քաղաք 46
Դեբեդ գետ 314, 399
Դեգիք գավառ 311
Դերբենտ 14, 61
Դերբենտի կիրճ 11, 14
Դերջան գավառ 243, 216, 311, 312
Դիարբեկիր 28
Դիբենե գետ 172
Դիդիմա գյուղ 398
Դիզա Տավիզ, վայր 299
Դիլիջան 399
Դմանիս 610
Դոնեվանք 398
Դվին 143, 331, 363, 378, 389, 390, 400, 435, 483, 513, 515—518, 520—523, 525, 533, 534, 536, 554, 555, 560, 561, 577, 578, 584, 587, 591, 593, 595, 600, 601, 604, 606—608
Դուրա-Եվրոպոս, վայր 86
Եգերացոց աշխարհ 554
Եգիպտոս 62, 100, 105, 607

Եդեսիա քաղաք 23, 32, 33, 45, 61, 65, 97, 98, 128, 177, 180, 259, 267, 452, 459, 488, 489, 495, 500, 595
Եկբատանա 399
Եկեղյաց գավառ 127, 140, 172, 216, 241—243, 246, 311, 312, 338, 356
Եղեգական 398
Եմեսիա քաղաք (Հոմս) 42, 100, 101
Եռանդ, վայր 212
Եվրոպա 144, 147, 321, 323, 330—333, 338, 345—347, 351, 358, 359, 366, 373, 375, 376, 380, 387, 388, 390, 397, 403, 409, 415, 542
Եվրոպոս քաղաք 45
Երազգավորք 561
Երան-Խվարե-Շապուհ, քաղաք, 206, տե՛ս Սուզա քաղաք
Երասխ գետ 59, 60, 246, 523, 601
Երզնկա 311
Երիզա (Երեզ) ավան 127, 311, 356
Երկրորդ Հայք 121
Երնջակ ամրոց 605
Երվանդաշատ քաղաք 205, 396
Երուսաղեմ քաղաք 609
Եփեսոս քաղաք 269, 462, 491
Եփրատ գետ 20, 31, 32, 34, 36, 37, 44, 57, 58, 69, 81, 83, 86, 98, 146, 170, 181, 212, 218, 246, 259, 310, 311, 319, 452, 512
Երևան 392, 529, 601
Զագրոս լեռ 300, 302
Զաիթա, վայր 86
Զավազան, վայր 511
Զարասպ լեռ 300—302, 306
Զարեհավան քաղաք 205, 396
Զարիշատ 205, 396
Զարևանդ գավառ 246, 247
Զիատա ամրոց 172
Զիմարա, վայր 310
Զինդու, վայր 300
Զինթա ամրոց 115, 295, 300—302
Զիրա 302
Զիրտա (Զիրտու) ամրոց 115, 302
Զեգմա, վայր 45
Էգիլ 172, տե՛ս նաև Անգեղ բերդ
Էլեգիա, վայր 28, 29, 31, 44
Էլք քաղաք 309, տե՛ս նաև Ակն քաղաք
Էկբատանա 69
Էջմիածին 460
Էրզրում 21, 28, 44
Ըմշիրագուն գավառ 318
Թադմոր 98, տես Պալմիրա
Թավրիզ 185, 186, 299—301, 318

Թեբե քաղաք 62
Թելեկ, վայր 310
Թեոդոսուպոլիս 396
Թեսսալոնիկե 405
Թիլ ավան 311, 356, 357
Թիֆլիս 595, տես նաև Տփղիս
Թորգոմայ տուն 401
Թորդան ավան 311, 356
Թուեղր գավառ 313
Թրակիա 234, 560
Թուրքիա 300
Իբերիա 14—16, 28, 39, 41, 42, 115, 178, 188, 229, 384, 399
Իգալյա լեռներ 310
Իզիրտու քաղաք 115, 302, տե՛ս նաև Զիրտա
Իլիչա 28, 44, տես Էլեգիա
Իլլիրիա 56
Իլլիրիկում 97, 110
Ինգիլենե 115
Իսկուրիա, վայր 398
Իսպահան 70
Իսպիր ավան 312, տե՛ս Սպեր ավան
Իսսոս 56
Իտալիա 97, 394
Իրան 67, 72, 74, 582
Իրաք 544, 549, 561
Լազիկա (Լազիստան) 197, 208, 210, 577
Լեհաստան 375
Լենինական 554
Լյուկիա, երկիր 27
Խաբուր գետ 49, 181, 309, 310
Խաղգա, վայր 398
Խաղգար 398
Խախ գյուղ 216, 356
Խաղտոյառիճ 311, 398
Խաչեն 610
Խառան քաղաք 49, 61, 65, 85, 86, 96, 98, 109, 180
Խաստուր, վայր 398
Խարբերդ 21, 311
Խարբերդի դաշտ 27, 28
Խարաքս Սպասինու, քաղաք 32
Խիլխոկոմ, երկիր 181, 183, 185
Խլաթ 511, 556, 565, 602, 607
Խնուս 21, 31
Խոյ 398, 399
Խոսպիա, վայր 11, 312, 398
Խորովակերտ 143, 144

Խորասան 552
Խորձյան գավառ 243, 246, 312, 313
Խոր-Վիրապ 127
Խրամ գետ 314—316
Խու, վայր Բագրևանդում 223, 224
Խուրուր-սու 303
Խույթ, վայր 566, 598, 599
Խունան 315
Խուժաստան 191, 206
Ծալկա 313
Ծաղկոյոտն գավառ 611
Ծանարք 604
Ծավդեք 114, 115, 175, 176, 182, 295, 309, 310
Ծոբոփոր գավառ 314—315
Ծովք լիճ 310
Ծոփաց թագավորություն 35
Ծոփք (Ծոփք Մեծ, Շահունյաց) 35, 43, 87, 114, 115, 128, 152, 153, 157, 170, 172, 173, 175, 185, 192, 193, 213, 230, 243, 246, 295, 307, 308, 310, 338, 356, 481
Ծումբ գյուղ 398
Կաչաբենե 309
Կալլինիկոն քաղաք 400
Կալլինիկում, վայր 109
Կաղզվան 195, 555, 601
Կայան բերդ 313, 314, 609
Կայնեպոլիս (Նոր քաղաք) 40, 41
Կանգարք գավառ 247
Կապադովկիա 12, 30, 35, 39, 41, 43—45, 65, 66, 81, 85, 96, 98, 99, 128, 150, 165, 176, 196, 210, 319, 396
Կապկո պահակ 585
Կասպից աշխարհ, երկիր (Կազբից) 192, 193, 213, 317
Կասպից դուռ 14
Կասպից ծով 11, 14, 317—319
Կասպյան անցք 62
Կատարա-Մավրորում, վայր 182, 183
Կարա-սու 21
Կարավան-սարայ 398
Կարին 235, 243, 246, 515, 555—557, 589, 591, 592, 604
Կարս 603, 608, 610
Կարսի թագավորություն 607, 609
Կաֆարտութ ամրոց 511
Կեղիշին լեռնանցք 300, 306
Կելիսիփան լեռնանցք 306
Կեսարիա քաղաք 98, 128, 131, 149, 150, 157, 163, 165, 176, 177, 217, 220, 221
Կիլզիզ 398
Կիլիկիա 26, 34, 56, 85, 86, 96, 98, 99, 178, 218, 539

Կիրկեսիում, վայր 181
Կիրովական 399
Կղարջք 312, 313, 561—563, 597, 604
Կյուրիկյան (Կորիկյան) թագավորություն 607, 609
Կոգովիտ 149, 165, 517, 522, 523, 527, 530, 611
Կոթեր ավան 311.
Կողբ (Կողբոփոր) գավառ 192, 193, 313—315
Կողթ գավառ 213, 315, 316
Կողքիս 10, 11, 18, 96
Կողքիսյան լեռներ 319
Կոմանա քաղաք 395, 396
Կոմագենե 33, 42, 319, 555, 593
Կոմագենի թագավորություն 12
Կոնդախսաղ 398
Կոստանդնուպոլիս 184, 196, 210, 234, 239, 279, 281, 284, 288, 397, 400, 475—477, 509, 510, 527, 528, 535, 537, 538, 540, 569, 576
Կովկաս (Կովկաս Հյուսիսային) 11, 13, 14, 41, 319, 604
Կոտայք 356, 537
Կորդիք գավառ 213, 247, 308, 309, 415
Կորդվաց թագավորություն 35
Կորդվաց լեռներ 32
Կորդուք գավառ 31, 32, 35, 43, 87, 114, 115, 152, 153, 175, 181, 182, 192, 193, 213, 247, 295, 303, 308—310
Կորճեք 51, 52, 247, 579
Կրման քաղաք 70
Կումայրի 55, 591
Կուջախի լեռնանցք 398
Կուր գետ 16, 17, 59, 60, 312—318, 398, 399, 563, 599, 604
Հադամակերտ 331
Հադրա, երկիր 56
Հադրա գյուղ 589
Հաղբատ 314
Համադան քաղաք 69, 71, 301, 397, 399, 562, 596
Հայաստան passine
Հայկական պար 398
Հանձիթ գավառ 243, 311
Հաշտյանք (Հաշտենիք) գավառ 152, 153, 234, 243, 246, 342, 381, 383, 481
Հառիճ 398
Հասանղալա 21
Հատրա քաղաք 34, 71
Հարք գավառ 398, 583
Հացեկաց գյուղ 254, 370, 448, 449, 492, 493
Հեր գավառ 246, 247
Հերակլեա 99
Հերատ քաղաք 69
Հիլեյա, վայր 157

Հյուսիսային ծով 393
Հյուրկանիա 11, 14
Հնարակերտ (Հունարակերտ) քաղաք 314, 315
Հնդկաստան 32, 102, 394, 395
Հոնաց աշխարհ 122
Հորմիզդ-Արտաշիր, քաղաք 287
Հորմիզդյան դաշտ 70
Հռոմ, Հռոմեական կայսրություն 10—12, 16, 23—26, 30—34, 36, 38, 39, 41—47, 49, 55, 58, 62—65, 71—75, 81, 82, 84, 86, 88, 95, 98, 99, 100—104, 105, 106, 109, 114—116, 120, 121, 131—135, 145, 147, 157, 162, 163, 168—170, 176—178, 184, 196, 197, 207, 209, 210, 214, 217, 220, 221, 226, 230, 233—235, 238, 243, 245, 246, 248, 270, 277, 278, 281, 283, 284, 295, 307, 387, 393—397, 416, 417, 430, 582
Հրեաստան 132
Հունաստան 387
Հունարակերտ 604
Ձեգամի լեռնանցք 398
Ձիրավի դաշտ 211
Ձյունակերտ 398
Ձրղկերտ 398
Ձոր 193
Ձորագետ 314
Ձորոփոր գավառ 192, 193, 313—315
Ղարաբաղ 318, 399
Ղըզ-Ղալա բերդ 315
Ղուրուչայ գետ 311
Ճենաստան 93
Ճորա դուռ 59, 60
Ճորա կապան 59, 60
Ճորա պահակ 89, 91, 585
Ճորոխ գետ 312
Մագարա (Մեզիրե), վայր 311
Մալաթիա 126, 607
Մակեդոնիա 569, 610
Մակու 479
Մահկերտուն, երկիր 192, 247, 302
Մայաֆարկին 511
Մայնց, քաղաք 84
Մանազկերտ 21, 31, 217, 561, 564, 595, 602, 607, 608
Մանազկերտի ամիրայություն 558
Մանանաղ գավառ 246
Մանավազակերտ գյուղ 146, 357
Մասիոս լեռնաշղթա 310, 319
Մասիս լեռ 135, 165, 415
Մասքթաց երկիր 306, 323
Մարանդ գավառ 318

Մարաշ 595
Մարաստան, Մարաց աշխարհ 31, 115, 192, 193, 213, 295, 562
Մարաց ավան 523
«Մարաց գավառ» 525, 528, տե՛ս Նեհավենդ
Մարգաստան 334, 565
Մարդին քաղաք 310, 511
Մարդուցայք 526—528, 536, 540
Մեդիա 11, 13—15, 18, 48, 65, 71, 80, 81, 83, 92, 306, 308, 319, 395, 405
Մելիտենե 12, 21, 27, 28, 128, 475, 476
Մեծ Զավ գետ 305, 308, 309
Մեծ Հայք 110, 111, 121, 154, 337, 443, 482
Մեծամոր 513, 514
Մեծամորի դաշտ 143
Մեղ գետ 21
Մեոտիս 11
Մեոտիդայի ծով 13
Մեսենե 32, 70
Մեսոպոտամիա 32, 35, տե՛ս նաև Միջագետք
Մեսխեթ 308
Մերձավոր Արևելք 39, 57, 176, 210, 235, 238, 251, 279, 281, 287, 393, 394, 411, 542, 543, 547
Մզուր (Մծձուր) գավառ 246, 311, 312
Միդիա, վայր 110
Միլան 131, 132, 283
Միլ ի Բայլաքան 318
Միխանք գավառ 317
Միջագետք 20, 31—37, 45, 49, 56—58, 61, 65, 66, 71, 81, 82, 85—88, 96, 97, 99, 102—106, 109, 111, 114, 147, 151, 162, 163, 169—171, 175, 178, 179, 184, 196, 287, 308, 310, 319, 509, 512, 513, 522, 536, 550, 552, 569, 578, 583, 607
Միջերկրական ծով 393
Միջին Ասիա 395
Մծբին 20, 31—33, 45, 57, 58, 65, 81, 85, 86, 96, 98, 128, 154, 162, 170, 171, 180, 182, 184, 287, 303, 308, 334, 400, 511, 609
Մծձուր, տես Մզուր
Մծուրն քաղաք 19—21, 396
Մշո դաշտ 21, 31, 398
Մոկք գավառ 114, 160, 181, 182, 247, 295, 598, 599
Մոպսուկրենե քաղաք 178
Մոսխիկա 319, տես նաև Մեսխեթ
Մոսուլ քաղաք 303, 304, 580
Մսիս, վայր 608
Մտկուարի գետ 398, տե՛ս Կուր գետ
Մուզուր լեռներ 311
Մուշ քաղաք 565, 566
Մուրսալ, վայր 157
Մուրց գետ 59, 60
Մցխեթ 15, 580
Նախճավան (Նախիջևան) 205, 206, 331, 514, 523, 530, 534
Նեկրա, վայր 126
Նեհավենդ, վայր 525
Նեոկեսարիա 196, 396
Ներքին Հայք 482
Նիգ գավառ 126
Նիկոմեդիա քաղաք 105, 150, 166
Նիկեպոլիս 396
Նիհորական, երկիր 192, 247, 303
Նինվե 300
Նոհատրա, վայր 304
Նոր-Արտաշիրական, երկիր 304, 307
Նոտարտայ, երկիր 304
Նոր-Շիրական (Նոշիրական) 192, 213, 247, 302—308, 323
Նոր քաղաք 48, 274, 275, 408, 409, 495, 496, տես նաև Վաղարշապատ
Նպատ լեռ 211, 212
Նուարսակ 399
Շակաշեն 213, 315, 316
Շահապիվան 167, 292, 293, 340, 349, 350, 377, 379, 390, 403
Շամբի 529
Շամշուլտե դղյակ 610
Շամքոր 315, 604
Շամքոր գետ 316
Շաքի 562
Շիգրեր, երկիր 305
Շիգրիանական երկիր 305, 306
«Շիգրոյ» գավառ 306
Շիմշատ 607
Շիրակ 168, 561, 591, 597, 601, 606
Շիրական երկիր 304
Շնավհ գավառ 304
Շոշ (Սուզա) քաղաք 206
Շոշաստան 70, 287
Շուշի 318
Ողական ամրոց 209
Ոսխ գյուղ 112, 114
Ոստան քաղաք 603, 607
Որդորու գյուղ 146, 357
Որդսպու, վայր 399, 529, 583
Որմըզդպերոժ (Որմիզդ-Փերոզ) գավառ 318
Չինաստան 394, 395
Չորրորդ Հայք 511, 512, 522
Պալմիրա 98—102
Պաղեստին 99, 104, 581

Պաննոնիա 150, 155, 157, 162
Պատրանսավան 398
Պարախոաթրաս լեռներ 319
Պարթևական թագավորություն 31, 33, 38, 44, 64, 66—69, 79, 394
Պարթևստան 16, 26, 45, 69, 71, 75
Պարեսակա 398, 399
Պարխար լեռներ 312, տե՛ս նաև Պարխադրես
Պարխադրես լեռներ 312, 319
Պարսից ծով 32
Պարսկահայք 181
Պարսկաստան (Աքեմենյան, Սասանյան) 10, 21, 72, 76, 81, 88, 94, 97, 100—106, 110, 111, 114, 120, 124, 145, 147, 151, 162—171, 175, 176, 179, 182, 184, 185, 187, 195—197, 204—210, 213, 214, 221, 229, 230, 234, 235, 237, 238, 240, 245, 246—248, 251, 252, 277, 278, 280, 281, 283, 285—289, 291, 293, 295, 299—300, 303, 304, 324, 326, 333, 335, 339, 346, 347, 349, 368—370, 373, 379, 380, 389, 398, 400, 401, 402, 406, 420, 424, 430, 436, 444—446, 464, 468—470, 472, 473, 474, 476—483, 498, 499, 525, 543, 571, 573—575, 577—581
Պարսք 68, 70, 72, 83, 299, 399
Պարվառ գավառ 314, 315
Պարտավ քաղաք 316, 560, 561, 595, 596
Պափլագոնիա 164
Պեկերիչ ավան 311, տե՛ս Բագառիճ
Պերոզ-Կավատ քաղաք 316, տե՛ս Պարտավ
Պերսեպոլիս 70
Պոնտոս 10, 97, 164, 156, 196, 222, 246, 395
Ջավախք 312, 313, 509, 522, 583
Ջեզիրե բերդ 309, տե՛ս Բեզարդե բերդ
Ջուղա 450, 523
Ռագա քաղաք 14
Ռաքքա, վայր 511
Ռեյ քաղաք 14
Ռեշայնա, վայր 86
Ռեիմենե գավառ 114, 182, 295
Ռիոն գետ 398
Ռշտունիք 603
Ռշտունիքի թագավորություն 607
Ռոցպատյան գավառ 317
Ռուսաստան 321, 332, 366, 375, 378, 387, 391, 415, 449, 542
Ռևանդուզ 115, 300—302, 305, 306, 308
Սագրայ բերդ 330
Սաճյան ամիրայություն 605
Սամառա քաղաք 565, 569, 599, 600
Սամոսատ քաղաք 259, 310, 452, 500
Սասուն 566, 568, 598, 599
Սատաղ քաղաք 12, 27, 112, 113, 148, 296, 396—398
Սեբաստապոլիս 397, 498, 586
Սեբաստիա 164, 396
Սելինում քաղաք 34
Սելևկիա քաղաք 27, 33, 45, 47, 57. 58, 69. 105, 181
Սեպուհ լեռ 311
Սերչեմե-սու 311
Սիգրիանե երկիր 305
Սիդիկան, վայր 305, 306, 308
Սինա լեռ 494, 495
Սինգարա 32, 158, 160, 175, 182
Սիննա քաղաք 301
Սիրիա 589
Սկյուդիսես 319
Սյունիք 124, 140, 152, 153, 167, 276, 366, 467, 579, 585, 604
Սյունյաց թագավորություն 607
Սոլի-Պոմպեյոպոլիս, քաղաք 98
Սպանդարանպերոժ (Սպանդարամն-Փերոզ), գավառ 318
Սպեր գավառ և ավան 311, 312, 561, 585, 598
Ստահր քաղաք 70
Սուզա քաղաք 206
Սուլեյմանիա քաղաք 301
Սումերե, վայր 181
Սուրմալի 601
Սև ծով 39, 246, 393, 395, 396
Սևանա լիճ 247, 399
Սևավերակ, վայր 310
Վաղարշակերտ 610
Վաղարշապատ 39, 40, 53, 58—61, 90, 92, 135, 149, 205, 255, 257, 260, 268—270, 272, 331, 396, 408, 409, 414, 450, 452, 460, 461, 489, 490, 494
Վայոց ձոր 610
Վան 205, 603
Վանա լիճ 31, 561, 595
Վանանդ 509, 522, 583, 601
Վասակերտ (Վազկերտ) 311
Վասպուրական 318, 530, 555, 564—566, 592, 599, 607, 610
Վասպուրականի թագավորություն 607
Վարդանակերտ քաղաք, գավառ 318
Վարսան 318
Վիրտա բերդ 176
Վիրք 14, 509, 522, 571, 583, 586, տես նաև Վրաստան
Վրաստան, Վրաց աշխարհ 14, 16, 17, 149, 206, 207, 210, 273, 275—278, 308, 313, 327, 378, 384, 465, 467—469, 515, 517, 519, 520, 522, 534, 563, 591, 593, 594, 597, 599, 600, 606
Վրաց դաշտ 610
Վրկանա երկիր 580
Տաբարիստան 368

Տայք 94, 247, 330, 534, 537, 561, 579, 585, 597, 598, 601, 609, 610, 611
Տանայիս 13, 395
Տաշիր 609, 610
Տավրոսյան լեռներ 21, 28, 234, 319
Տավուշ 609
Տարոն 128, 144, 209, 254, 337, 338, 448, 449, 492, 493, 509, 512, 513, 517, 522, 530, 561, 563—565, 568, 583, 598, 599, 608, 609
Տարսոն (Տարսուս) 98, 218, 220, 221
Տարվիչ (Տերսուչ) 399
Տիգրանակերտ 21, 27, 28, 31, 125, 136, 147, 157, 173, 174, 397, 398, 427
Տիգրիս գետ 31—34, 45, 57, 58, 65, 79, 83, 170, 172, 175, 176, 181, 182, 309, 310, 319
Տիզբոն 32, 34, 35, 47, 57, 58, 64, 71, 81, 86, 89, 91, 99, 100, 105, 106, 170, 179, 181, 239, 286, 400, 472, 478
Տմորիք 192, 193, 213, 247, 308, 309, 415
Տոմիսա, վայր 311
Տրապիզոն 396, 585
Տրուլլ 352
Տուս գավառ 604
Տուր Աբդին ամրոց 511
Տուրուբերան 579
Տփղիս 314, 315, 399, 604, 606, 610
Ցոլակերտ 398
Ուխտեաց քաղաք 611
Ուշնու գյուղ 30, 304, 305
Ուչքիլիսե 398
Ուռհա քաղաք 220, 221, 511
Ուտի, Ուտիք 213, 247, 315—317, 579, 604
Ուրծայ գյուղ 556
Ուրմիա լիճ 295, 299, 301, 302, 305, 308, 318
Փայտակարան, աշխարհ, քաղաք 247, 317, 318, 560, 579, 595, 596
Փառախոտ, վայր 398
Փասիսու 610
Փարպի գյուղ 254, 367
Փարվանա լիճ 312, 313
Փյունիկիա 104
Փոգա 398
Փոթի 398
Փոքր Ասիա 26, 96, 98, 100, 166, 483, 580, 586, 607
Փոքր Հայք 12, 30, 35, 87, 88, 102, 121, 128, 161, 246, 319, 396, 443
Քանդիլ-կուհ (Քանդիլ-դաղ) լեռ 300
Քառասունք, վայր Արշարունիքում 601
Քասաղ գետ 40, 59
Քարգա ամրոց 511
Քեոփրիքեոյ, վայր 398
Քոլավեր 563

Օշական 148, 460
Օսրոյեն-Եդեսիա 39, 56—58, 63—65, 86
Օսրոյեն-Եդեսիայի թագավորություն 22, 32, 35, 49, 85
Օրդուբադ 451
Ֆարկին 124—126, 135, 427, 609
Ֆրանսիա 321, 323, 375, 386, 387
Ֆերգանա 582

ՑԵՂԵՐ ԵՎ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐ

Աղխարբենցիներ 57
Ալաններ 11—18, 41, 62, 122, 185, 210, 211
Աղվաններ 11, 89, 219, 466
Աղվարներ 148
Ասորիներ 278, 280, 474
Արաբներ 100, 309, 509, 513, 515, 522, 525, 581, 586, 587, 591—593
Բաբելոնացիներ 309
Բաղասիճներ 148
Բասիլներ 59, 60, 122
Բյուզանդացիներ 288, 577, 586, 587
Բուլղարներ 593, 609—611
Գաթեր 148
Գաղղիացիներ 180
Գարգարացիներ 276, 277
Գերմանացիներ 49, 84
Գոթեր 96, 99, 107, 116, 118
Գուգարներ 148
Գակեր 25
Եգերացիներ 604, 606
Եգերսվաններ 148
Եթովպիացիներ 577
Թավասպարներ 148
Իբերներ 16, 18, 319
Իժմախներ 148
Իտալացիներ 180
Լազեր 28, 576
Լփիններ 19
Խազարներ 545, 561, 585
Խաղիրներ 59, 60
Խրոնիաններ 170, 171
Կայսիկներ 561, 564, 601
Կասպեր 89
Հագրացիներ 57
Հայեր passine
Հեճմատակներ 148
Հենիոքներ 11, 28

Հոներ 148, 185, 476, 577
Հռոմայեցիներ 24, 26, 27, 29, 32, 33—35, 37, 49, 50, 60, 74, 79, 81—88, 91, 97, 100, 105, 109, 115, 150, 169, 170, 175—177, 182, 183, 197, 198, 206, 210, 221, 234, 239, 280, 395, 396, 444
Հույներ 473, 476
Ճաներ 94
Ճիղպեր (Ճղբեր) 89, 148
Մազքութներ 148
Մակեդոնացիներ 79
Մարդեր 31
Մեդացիներ 13, 71, 309
Նախախեթեր 277, 468
Շղբեր 148
Պաղեստինցիներ 51
Պարթևներ 10, 16, 24, 26, 27, 29, 31, 32, 37, 39, 40, 44, 46, 49, 57, 58, 65, 69, 71, 74, 75, 79, 80, 84, 179, 309, 333
Պարսիկներ 79, 86, 96—101, 105, 110, 122, 158, 171, 182—186, 191, 197, 200, 204, 207, 209, 211, 278, 283, 444, 470, 473, 525
Սասունի ցեղ 291
Սավրոմատներ 28
Սարակինոսներ 100, 101
Սարմատացիներ 609
Սիգրեր 305, 306
Սլավոններ 611
Սուբար-խուրիներ 277, 468
Վեսթգոթեր 196, 234, 238
Վրացիներ 277, 585
Տիբարանյաններ 319
Փոխեր 148
Քուշաններ 90, 91
Օսրոյենցիներ 84
Ֆրանկներ 180

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Խմբագրական հանձնաժողովի կողմից 5
Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, Բ հատոր, Ա մաս . 7
Գլուխ առաջին—Տրդատ Ա-ը և նրա հաջորդները 9
Գլուխ երկրորդ—Տրայանոսի հայկական և պարթևական արշավանքները և ապստամբությունները հռոմայեցիների դեմ . . . 25
Գլուխ երրորդ—Վաղարշ Ա, Սոհեմոս, Բակուր և հռոմեա-պարթևական պատերազմը Մարկոս Ավրելիոսի ժամանակ . . . 37
Գլուխ չորրորդ—Հայաստանը Սեպտիմիոս Սեվերոսի և Անտոնինոս Կարակալլայի արշավանքների ժամանակ 54
Գլուխ հինգերորդ—Սասանյան Պարսկաստանը և Հայաստանի համար ստեղծված նոր կացությունը 67
Գլուխ վեցերորդ—Տրդատ Բ-ը և նրա մասնակցությունը հռոմեական-սասանյան կռիվներին 77
Գլուխ յոթերորդ—Հայաստանի քաղաքական դրությունը Տրդատ Բ-ից հետո մինչև Տրդատ Գ-ի գահակալությունը 95
Գլուխ ութերորդ—Տրդատ Գ և քրիստոնեության տարածումը Հայաստանում 120
Գլուխ իններորդ—Խոսրով Գ. Տիրան և Պարսկա-հռոմեական կռիվների վերսկսումը 141
Գլուխ տասներորդ—Պարսկա-հռոմեական կռիվներն Արշակ Բ-ի ժամանակ և Հայաստանի ծանր պարտությունն ու ավերումը 161
Գլուխ տասնմեկերորդ—Հայաստանի դրությունը Պապի թագավորության ժամանակ և սրա վարած արտաքին ու ներքին քաղաքականությունը 194
Գլուխ տասներկուերորդ—Վարազդատ, Արշակ Գ, Խոսրով Դ և Հայաստանի բաժանումը 228
Գլուխ տասներեքերորդ—Վռամշապուհ և հայ գրերի գյուտը . . 249
Գլուխ տասնչորսերորդ—Արտաշես և Արշակունիների թագավորության վերջնական անկումը 282
Գլուխ տասնհինգերորդ—Արշակունյաց Հայաստանի սահմանները Տրդատ Գ-ի և նրա հաջորդների ժամանակ մինչև 363 թիվը . . . 294
Գլուխ տասնվեցերորդ—Ֆեոդալական հարաբերությունների զարգացումը Արշակունյաց Հայաստանում 320
Գլուխ տասնյոթերորդ—«Ազատ»-ները, «Ոստանիկ»-ները և եկեղեցականները 341
Գլուխ տասնութերորդ—«Ռամիկ»-ները և «Շինական»-ները . . . 360
Գլուխ տասնիններորդ—Առևտուրը, քաղաքները, արհեստավորները և ստրուկները 392
Համառոտ տեսություն աղբյուրների և ցանկ գրականության . . . 418
Ժամանակագրական աղյուսակ 440
Մեսրոպ Մաշտոցը և հայ ժողովրդի պայքարը մշակութային ինքնուրույնության համար 443
Հայ գրերի գյուտի տարեթվի հարցի շուրջը 485
Արաբական արշավանքները Հայաստանում 508
Ժողովրդական ապստամբությունները Հայաստանում արաբական տիրապետության դեմ 542
Համառոտ պատմական տեղեկություններ, ընդհանրացումներ և սկզբնաղբյուրներից քաղված կարևոր վկայություններ . . . 571
Ցանկեր 612

ՀԱԿՈԲ ՀԱՄԱԶԱՍՊԻ ՄԱՆԱՆԴՅԱՆ
ЯКОВ АМАЗАСПОВИЧ МАНАНДЯН

ԵՐԿԵՐ
Բ

Տպագրվում է Հայկական ՍՍՀ ԳԱ
պատմության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Հրատարակչական խմբագիր
Փ. Հ. ՄԱԴԱՆՅԱՆ
Նկարիչ
Լ. Ա. ՍԱԴՈՅԱՆ
Գեղարվեստական խմբագիր
Հ. Ն. ԳՈՐԾԱԿԱԼՅԱՆ
Տեխնիկական խմբագիր
Ս. Կ. ՉԱՔԱՐՅԱՆ
Սրբագրիչ
Զ. Խ. ՕՐՄԱՆՅԱՆ

Պատվեր 340 Հրատ. 4544 Տպաքանակ 5000

Հանձնված է շարվածքի 5/5. 1977 թ.: Ստորագրված է տպագրության 5/5. 1978 թ.: Տպագրական 40.5 մամուլ, հրատ. 35,1 մամուլ: Թուղթ № 1, $60 \times 90^{1}/_{16}$, գինը 3 ռ. 75 կ.:

Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 19, Բարեկամության 24 գ.
Издательство АН Армянской ССР, Ереван, 375019 Барекамутян, 24-г.
Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչության էջմիածնի տպարան
Типография Издательства АН Арм. ССР, г. Эчмиадзин